Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

М. Ю. ЛЕРМОНТОВ

Избранные произведения

ИЗДАТЕЛЬСТВО
«СОВЕТАКАН ГРОХ», ЕРЕВАН — 1982

Մ. ՅՈՒ. ԼԵՐՄՈՆՏՈՎ

Ընտիր գրքեր

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ—1982

ԳՄԴ 84Ռ1
Լ51

Կազմեց Վազգեն Գևորգյանը

Լերմոնտով, Մ. Յու.
Լ461 Ընտիր երկեր. թարգմ. ռուս. (կազմ. Վ. Գևորգյանը.— Եր.: Սովետ. գրող. 1983. 576 էջ:

Ժողովածուն ներկայացնում է ռուս մեծ բանաստեղծի ընտիր բանաստեղծությունները, պոեմները, «Մեր ժամանակի հերոսը» վեպը և «Դիմակահանդես» դրաման։

Գրքում տեղ գտած բանաստեղծությունների մի մասը տրվում է նոր թարգմանությամբ։

Լ 7502010100 (898) / 705 (01) 83 — 83 «Տ»

ԳՄԴ 84Ռ1
Ռ1

© «Սովետական գրող» հրատարակչություն, թարգմանված է հայերեն, 1982

Մ. ՅՈՒ. ԼԵՐՄՈՆՏՈՎ

Լերմոնտով... Սերունդների գիտակցության մեջ այս անունը կապված է գեղարվեստական խոսքի բացառիկ զորության, անբիծ կատարելության և կախարդիչ գեղեցկության պատկերացման հետ։ Ամեն ինչ զարմացնում է նրա ստեղծագործական դիմանկարի մեջ, ոտիպում է սրտի աննկարագրելի թրթիռով բացել նրա դրքերը, ամեն անգամ վերապրել իսկական արվեստի սրբազան հուզումն ու թովչանքը։ Զարմացնում է ստեղծագործական հանճարի թափը, որն ասեք հորդել և արտահայտություն է գտել չափածո, արձակ ու ֆատերգական գրեթե բոլոր ժանրերի, ամենատարբեր թեմաների հազվադյուտ ուժն ու ինքնատիպությունը, վերլուծական հզոր մտքի և վարակիչ զգացմունքի, Դենսական կոնկրետության ու երևակայության թռիչքների, պարզության և խորության, կրքոտության և մեղմության բնական միաձուլումը։ Մի թարմ ու թանկագին կորստի նման այրում ու կսկիծ է պատճառում 27 տարեկան հասակում ստոր դավերի զոհ դարձած, իր հետ այնքա՞ն շատ հոյակապ մտահղացումներ գերեզման տարած բանաստեղծի ողբերգական ճակատագիրը...

XIX դարի ռուս գրականության բուռն և փարթամ ծաղկման մեջ, որն այդ գրականությանը համաշխարհային նշանակություն և ճանաչում բերեց, Լերմոնտովին պատկանում է առաջին տեղերից մեկը։ Լինելով Պուշկինի և դեկաբրիստների բանաստեղծական ավանդների անմիջական ժառանգորդը, Լերմոնտովը դարձավ ռուսական հեղափոխական ռոմանտիզմի վերջին խոշորագույն ներկայացուցիչը։ Լերմոնտովյան ռոմանտիզմը տարբեր ձևերով արձագանք գտավ հետագայում հանդես եկած ռուս բանաստեղծների մոտ՝ մինչև երիտասարդ Գորկու հերոսական լեգենդներն ու բանաստեղծությունները, Բլոկի ողբերգական ու լուսատենչ հրգները, մինչև սովետական գարաշրջանի շատ պոետներ։ Լերմոնտովի ստեղծագործությունը, հատկապես նրա արձակը, առաջնակարգ դեր խաղաց ռուսական ռեալիստա-

կան վեպի ու պատմվածքի զարգացման մեջ, դարձավ այն հիմքերից մեկը, որոնց վրա պետք է խարսխվեին Տոլստոյի, Դոստոևսկու, Չեխովի՝ ամբողջ աշխարհը հիացրած երկերը։

Վիթխարի է Լերմոնտովն իբրև ստեղծագործող, բայց նույնքան հետաքրքիր է իբրև անձնավորություն։ Լերմոնտովի ստեղծագործության հմայքը ճաշակած յուրաքանչյուր ընթերցող հարատև սիրով է կապվում այդ խռովահույզ հանճարի հետ, քայլ առ քայլ վերապրում է սխրանքով ու ողբերգությամբ լեցուն նրա կյանքի էջերը։

* * *

1814 թ. հոկտեմբերի 3(15)-ին Մոսկվայում, պաշտոնաթող կապիտան Յուրի Պետրովիչ Լերմոնտովի և Մարիա Միխայլովնայի ընտանիքում ծնվեց նրանց առաջին և միակ որդին՝ Միխայիլը։ Մի քանի ամիս անց ծնողները երեխային տեղափոխեցին Պենզայի նահանգի Տարխանի գյուղը, որն ապագա բանաստեղծի մոր հայրական կալվածքն էր, և ուր անցան նրա մանկական տարիները։

Միխայիլ Յուրևիչ Լերմոնտովի կյանքը հենց սկզբից անցավ բարդ ու ողբերգական հանգամանքներում, որոնք, անշուշտ, իրենց կնիքը դրեցին նրա բնավորության վրա և հետագայում արտացոլվեցին ստեղծագործության մեջ։ Նա դեռ երեք տարեկան չկար, երբ հոգեկան ու ֆիզիկական ցնցումներից հյուծված՝ մահացավ նրա մայրը։ Բանաստեղծի հոր և տատի՝ Ելիզավետա Ալեքսեևնա Արսենևայի միջև սկսվեց մի երկարամյա պայքար փոքրիկ Միխայիլի համար։ Արսենևան՝ խիստ և ինքնակամ այդ կինը, որն սկզբից ևեթ դեմ էր եղել իր աղջկա ամուսնությանը մի աղքատ, վերնախավերում կապեր չունեցող պաշտոնաթող սպայի հետ և դստեր մահվան մեջ մեղադրում էր նրան, ոչ մի կերպ չէր ուզում բաժանվել սիրելի թոռից կամ նրա դաստիարակությունը հանձնել փեսային։ Հակառակ դեպքում նա սպառնում էր զրկել թոռանը ամեն մի ժառանգությունից։ Եվ հայրը զիջեց, որդու ապագային չվնասելու համար նա հեռացավ Տարխանից, ապրում էր որդուց հեռու և միայն հազվադեպ էր հանդիպում նրան։ Ճիշտ է, Արսենևան ոչինչ չխնայեց թոռան դաստիարակության, նրան հոգատարությամբ շրջապատելու համար։ Բայց զգայուն երեխան, որը հոգեպես կապված էր և՛ հոր, և՛ տատի հետ, շատ ծանր էր վերապրում ծնողների մշտական անհամաձայնությունը։ Այդ մերթ խուլ, մերթ բացահայտ պայքարի հարուցած տագնապալի ապրումները, մանկական տարիներին անցկացրած ծանր հիվանդությունները սովորեցրին նրան հաճախ թաքցնել իր խոհերն ու զգացմունքները շրջապատից, հանձնվել երևակայության մռայլ ու վարդագույն խաղերին և, ինչպես գրել է նա հետագայում, «գուշակել մարմնի տանջանքները, հրապուրվելով հոգու անուրջներով»։ Այդ տարիներին արդեն ձևավորվում էին ապագա բանաստեղծի բնավորության մի քանի էական կողմերը՝ անսասան կամք, փոթորկոտ երևակայություն, բուռն կրքերի և ձգտումների մշտական լարում։

Մանուկ Լերմոնտովի ամենաուժեղ տպավորություններն ու ապրումները կապված էին դեպի Կովկաս կատարած ուղևորությունների հետ, ուր տանում էր նրան տատը՝ հանքային ջրերում բուժվելու համար։ Երրորդ անգամ Լերմոնտովը Կովկասում եղավ 1825 թվին, երբ 11 տարեկան էր։ Կովկասի դաժան ու վեհաքանչ բնության տեսարանները, տեղի մարդկանց վարքն ու բարքը մեկընդմիշտ մնացին պատանու հիշողության մեջ, բազմակողմանիորեն արտացոլվեցին նրա պոեմներում և բանաստեղծություններում։ «Կովկասի կապո՞ւյտ լեռներ, ողջունում եմ ձեզ,— տարիներ անց մի արձակ բանաստեղծության մեջ գրում էր նա,— դուք գուրգուրել եք իմ մանկությունը, դուք թևածել եք ինձ ձեր վայրի լեռնաշղթաների վրա, պարուրել եք ինձ ամպերով, դուք ինձ ընտելացրել եք երկնքին, և ես այդ ժամանակից միշտ երազում եմ ձեր և երկնքի մասին»։

Ապագա բանաստեղծի վրա ուժեղ ներգործություն ունեցան նաև ժամանակի քաղաքական իրադարձությունները, հատկապես 1825 թ. դեկտեմբերի 14-ի ազնվական հեղափոխականների զինված ելույթը Պետերբուրգի Սենատի հրապարակում։ Դեկաբրիստական շարժման գործիչների հետ տարբեր ուղիներով առնչվում էին Լերմոնտովի մի շարք ազգականներ, հատկապես տատի եղբայրները։ Խոսակցությունները այդ ապստամբության, մահապատժի ենթարկված ու Սիբիր աքսորված նրա մասնակիցների մասին վաղ հասան պատանու գիտակցությանը, ազատության մարտիկների կերպարները բորբոքեցին նրա երևակայությունը։

1827 թ. աշնանը Լերմոնտովը տատի հետ տեղափոխվում է Մոսկվա, ուր ապրում է հինգ տարի, մինչև 1832 թ.։ Այդ տարիները դարձան նրա գեղարվեստական ըմբռնումների և քաղաքական հայացքների ձևավորման շատ կարևոր մի ժամանակաշրջան։ Ուսումը համալսարանական պանսիոնում (1828—1830) և ապա՝ Մոսկվայի համալսարանում (1830—1832) հնարավորություն տվեց ոչ միայն խորացնելու լեզուների, գրականության, բնական գիտությունների բնագավառում նախկինում ձեռք բերած գիտելիքները, այլև շփվելու առաջավոր մտածողությամբ տոգորված շատ երիտասարդների հետ, ավելի լավ հասկանալու ժամանակի հասարակական հարաբերությունների բնույթը։ Այն տարիներին, երբ Լերմոնտովը սովորում էր Մոսկվայի համալսարանում, այնտեղ ուսանել են նաև Բելինսկին ու Ստանկևիչը, Գերցենն ու Օգարյովը, Գոնչարովն ու Պիրոգովը՝ ռուսական մշակույթի և հասարակական մտքի այդ ապագա մեծ գործիչները։ Անկախ այն բանից, անձամբ ծանոթ էր Լերմոնտովը նրանց հետ, թե ոչ (ըստ երևույթին, նշված անձանց մեծ մասի հետ նա ծանոթ չի եղել) հասարակական և փիլիսոփայական մեծ հետաքրքրություններով ապրող համալսարանական երիտասարդության միջավայրը չէր կարող չազդել նրա հայացքների ձևավորման վրա։

Իսկ դրանք այն տարիներն էին, երբ դեկաբրիստական շարժման ձախողումից հետո ռուսական հեղափոխական միտքը նոր ուղիներ էր որոնում։ Սկսվել էր ռուսական պատմության ամենադաժան ու երկարատև ռեակցիայի շրջաններից մեկը, անողոքաբար հալածվում էր ամեն մի ազատ միտք, մամուլն ու գրականությունը զսպվում էին գրաքննության և Երրորդ

բաժանմունքի կապանքների մեջ։ Ժողովրդի լավագույն զավակները զրկված էին հայրենիքի բարօրության համար աշխատելու հնարավորությունից, դատապարտված էին ակամա անգործության, «ավելորդ մարդիկ» դառնալու ծանր ճակատագրին։ Դա անցումային մի ժամանակամիջոց էր, երբ դեկարբրիստների շարժման հետ ծնունդ առած հասարակական առաջավոր տրամադրություններն արդեն սպառվել էին, իսկ հեղափոխական նոր իրադրության ծագումը դեռ հեռու էր։ Այդպիսի հանգամանքներում անցավ Լերմոնտովի գիտակցական ամբողջ կյանքը, և դա էլ պայմանավորեց նրա սերնդի վիճակի բարդությունն ու դրամատիզմը, իդեալի և իրականության հակադրության սուր զգացողությունը, զայրույթի, բողոքի, հուսահատության և հիասթափության տրամադրությունները։ Պատահական չէ, որ խոսելով Լերմոնտովի մասին, Գերցենը նրա ստեղծագործության հիմնական առանձնահատկությունները կապում էր դարաշրջանի այդ անցումային բնույթի հետ։ Լերմոնտովի մասին նա գրել է. «Նա ամբողջովին պատկանում է մեր սերնդին։ Մենք բոլորս շատ փոքր էինք, որպեսզի մասնակցեինք դեկտեմբերի 14-ին։ Այդ մեծ օրվա կողմից արթնացած՝ մենք տեսանք միայն մահապատիժներ և աքսոր։ Ստիպված լինելով լռել, զսպելով արցունքները, մենք սովորեցինք կենտրոնանալ, թաքցնել մեր խոհերը, և ինչպիսի՞ խոհեր...»։

Մոսկվայում ապրած տարիները դարձան Լերմոնտովի ստեղծագործական վիթխարի ուժերի արթնացման ժամանակաշրջան։ Տասնչորսամյա հասակից նա սկսեց ստեղծագործել, աշակերտական տետրերին հանձնելով իր անհանգիստ ու փոթորկոտ հոգու խոհերը, կրակոտ ու մռայլ զգացմունքները, կյանքից ստացած բազմազան տպավորությունները։ Թե ինչպիսի թափով ու եռանդով է աշխատել պատանի Լերմոնտովը, երևում է թեկուզ այն բանից, որ 1828—32 թթ. ընթացքում նա գրում է շուրջ երեք հարյուր բանաստեղծություն, երկու տասնյակ մեծ ու փոքր պոեմներ, երեք դրամա, ձեռնարկում է վեպ գրելու աշխատանքին... Եվ այս ամենի վրա դրոշմված է գեղարվեստական ինքնատիպ տաղանդի անջնջելի կնիքը։ Ավելացնենք, որ վաղ տարիներից Լերմոնտովն զբաղվում է նաև նկարչությամբ, ցուցաբերելով անուրանալի ձիրք, հաջողությամբ շուքակ և դաշնամուր է նվագում, աչքի է ընկնում մաթեմատիկական փայլուն ունակություններով։

Պատանի Լերմոնտովի բանաստեղծությունները մի յուրօրինակ օրագիր են, կրքոտ հոգու խոստովանություններ, հասարակական մեծ հետաքրքրություններով ապրող քաղաքացի-բանաստեղծի խորհրդածություններ։ Մտքի և արտահայտության զարմանալի ներդաշնակությամբ փայլող իսկական գոհարներ է կերտել նա առաջին իսկ քայլերից (օրինակ՝ «Հրեշտակ», «Մուրացկան», «Առաջաստ», «Հավերժահարա», «Ո՛չ, ես Բայրոն չեմ...» և այլ բանաստեղծություններ)։ Սիրո մասին գրած նրա ոտանավորները խորապես ապրված տրամադրության արդյունք են, արտահայտում են քնարական հերոսի մտավոր և հուզական աշխարհի զարմանալի հարստությունը։ Ոգեբեղգական երանգներով է գունավորված այդ հերոսի և՛ սերը, որը մեծ մասամբ անպատասխան, հոգու իսկական փոթորիկներ հարուցող զգացմունք է, և՛ նրա քաղաքացիական խոհերը։ Այդ խոհերը բացահայտված են առաջավոր ռոմանտիզմի սկզբունքներով՝ հերոսի և շրջապատի, իդեալի և իրականության խոր հակադրության, պայքարող, ակտիվ ու գործունյա բնավորությունների հաստատման ոգով։ Պատանի բանաստեղծն ապրում է ներկայի մեծ հարցերով և գալիքի խռովահույզ սպասումներով։ Բանաստեղծական կրքոտ տողերով նա ողջունում է 1830 թ. հուլիսյան հեղափոխության հաղթանակը Փարիզում, կանխագուշակում է հայրենի երկրում ցարական իշխանության տապալման անխուսափելիությունը («Կգա՞ տարին, Ռուսիայի սև տարին, երբ կխորտակվեն թագավորների թագերը»)։ Հիշողությունը հին սլավոնական ազատ քաղաքի՝ Նովգորոդի մասին նրան հավատ է ներշնչում, որ «բոլոր բռնակալների նման» կտապալվեն նաև ժամանակակից բռնապետները։

Առավել բնորոշ տրամադրությունը Լերմոնտովի այս և հետագա տարիների քնարերգության մեջ անհատի ու հասարակության ազատագրման բուռն երազանքն է, դրա իրագործման համար ակտիվ պայքարի ու գործունեության ծարավը, հերոսական բնավորությունների փառաբանումը։ Ցարական-ճորտատիրական կյանքի խեղդիչ մթնոլորտում տառապող բանաստեղծի հոգին ամբողջովին կլանված է հրաշալի պատկերների երազանքով («Իմ հոգին, ես հիշում եմ, դեռ մանկական տարիներից հրաշալին էր որոնում»,— գրել է նա 1831 թ. բանաստեղծություններից մեկում)։ Նա երազում է «հզոր մարդու» և հեղափոխիչ գործունեության մասին, մեծ նպատակի համար անձնազոհաբար մարտնչելու մասին («Ի՞նչ ձանձրալի է կյանքը, երբ որ պայքար չկա»,— գրում էր նա նույն բանաստեղծության մեջ)։ Լերմոնտովի քնարական հերոսի համար բնորոշ մենակության, շրջապատի կողմից չհասկացվելու ծանր շեշտերը ծնվում են հենց այն բանից, որ նա չի տեսնում իր մեծ ուժերը գործադրելու ուղիները։ Հիասթափության և հուսահատության տրամադրությունները ոչ թե թույլ հոգու անզորության արտահայտություններ են, այլ հզոր երազների և շրջապատող կյանքի հակադրության հետևանք։

Հենց սկզբից Լերմոնտովը ռուս գրականության մեջ ներմուծում էր իր ինքնատիպ թեման և գաղափարը՝ մարդու ձգտումների տիտանականության, երկրային ու երկնային բոլոր կապանքների դեմ նրա ընդվզման իրավունքի հաստատումը։ Դրա մեջ է այնպիսի մի բանաստեղծական մարտարվեստի ներքին իմաստը, որպիսին է Լերմոնտովյան «Առաջաստը»։ Ցավի խաղաղ հարթության վրա լողացող, բայց փոթորկոտ ալիքներ երազող առագաստի պատկերը դառնում է մարդկային խիզախ բնավորության խորհրդանիշ, որի միջոցով փառաբանվում է ճգճիմ բարեկեցությունից ու հանգստությունից ազատաբեր պայքարի մեջ նետվող մարդը։

Ուժեղ բնավորությունների, բուռն գործունեության ձգտող հերոսների մի ամբողջ շարք ենք տեսնում Լերմոնտովի պատանեկան պոեմներում։ Ռոմանտիկ երազանքի թևերով բանաստեղծը ճախրում է մերթ Կովկասի ծյունապատ գագաթների ու հովիտների վրա («Կովկասի գերին», «Իզմայիլ-բեյ», «Բաստունջի աուլը»), մերթ իսպանական գետերի ափերին («Խոստովանություն») կամ Լիտվայի սահմանների մոտ («Լիտվուհին»), մերթ

տեղափոխվում է ալավոնների ազատասեր նախնիների միջավայրը («Ազատության վերջին որդին») և կամ գծագրում է ֆանտաստիկ, ազատ ոգիների թռիչքը անեզր տարածություններում («Մահվան հրեշտակ», «Դեմ» նախնական տարբերակները)։ Եվ ամենուրեք նա որոնում է անհաշտ, ըմբոստ բնավորություններ, բուռն կրքեր, հերոսական արարքներ, հավատարմության և անձնազոհության զգացմունքներ։ Պատմական, ազգային ու կենցաղային բազմազան իրադրությունները բոլոր դեպքերում ծառայում են ժամանակակից հարցերին պատասխանելու, բանաստեղծի հոգին փոթորկող ազատատենչ հույզերն արտահայտելու համար։

1830—31 թթ. Լերմոնտովը գրում է նաև իր ռոմանտիկական առաջին դրամաները։ Միջնադարյան Իսպանիայի հավատաքննության սարսափելի տեսարանները, բռնության դեմ ապստամբող ու կործանվող խիզախ մարդկանց կերպարները «Իսպանացիներ» դրամայում անուղղակիորեն տալիս էին ժամանակակից ռուսական իրականության գեղարվեստական գնահատականը։ Իսկ «Մարդիկ և կրքեր», «Տարօրինակ մարդը» դրամաներում պատանի բանաստեղծը սիրո, խանդի, ընտանեկան անհամաձայնությունների պատմությունները զուգակցել է տիրող իրականության հետ չհաշտվող անհատների ողբերգությանը։ Այդ դրամաների գլխավոր հերոսները (Ցուրի Վոլին, Վլադիմիր Արբենին) բանաստեղծի խոհերի ու ապրումների անմիջական կրողներն են, նրա յուրօրինակ «երկվորյակները»։ Շրջապատի անհոգի վերաբերմունքը, խարդավանքն ու անազնվությունը, ճորտատիրական կյանքի սարսափները ամենուր ուղեկցում են նրանց և ի վերջո հասցրնում կործանման։ Լսելով ճորտ գյուղացու պատմությունը իրենց կրած տառապանքների մասին, Վլադիմիր Արբենինը բացականչում է. «Մարդի՜կ, մարդի՜կ... Օ՜, անիծում եմ ձեր ժպիտները, ձեր երջանկությունը, ձեր հարստությունը,— ամեն ինչ գնված է արյունոտ արցունքներով։ Ջարդել ձեռքերը, ծակծկել, ծեծել, կտրել, փետտել մորուքը մազ առ մազ... Օ՜, աստվա՜ծ... Միայն մտածելով այդ մասին, ես ցավ եմ զգում իմ բոլոր երակներում... Օ՜, իմ հայրենի՜ք, իմ հայրենի՜ք»։

Նշված դրամաներում պատմված դեպքերն զգալի չափով իրական, ինքնակենսագրական հիմքեր ունեին։ «Տարօրինակ մարդը» դրամայի նախաբանում Լերմոնտովը գրում էր. «Իմ պատկերած դեմքերը բոլորն էլ վերցված են իրականությունից, և ես կուզեի, որ նրանք ճանաչվեին»։

Մոսկվայի համալսարանում հավաքված խելացի, ազատասեր երիտասարդները, ռեակցիոն դասախոսների դեմ նրանց կազմակերպած ցույցերը, որոնց ակտիվորեն մասնակցել է նաև Լերմոնտովը, չէին կարող անկասա մնալ ցարական կառավարությունից։ Եվ ահա զանազան պատրվակներով ուսանողներին համալսարանից հեռացնել տանչյակ լավագույն ուսանողների։ 1832 թ. ամառը Լերմոնտովին ևս «խորհուրդ տրվեց հեռանալ» համալսարանից։ Դա երեսպաշտորեն մտածված միջոց էր, որը հավասարազոր էր ուղղակի հեռացման։ Հիշեցնենք, որ նույն թվականին ապագա հանճարեղ քննադատ Բելինսկին ևս հեռացվեց համալսարանից՝ «սահմանափակ ընդունակությունների պատճառով»։

Լերմոնտովը տեղափոխվեց Պետերբուրգ։ Սկզբում նա ուզում էր շարունակել ուսումը մայրաքաղաքում, բայց երբ պարզվեց, որ Մոսկվայի համալսարանում սովորած տարիները չեն հաշվելու, նա հրաժարվեց այդ մտքից։ Երկար մտորումներից հետո Լերմոնտովը որոշեց անցնել զինվորական ծառայության, ընդունվել Պետերբուրգի յունկերական հեծելազորային դպրոցը։ Ի՞նչը դրդեց բանաստեղծին դիմելու այդ ճակատագրական քայլին։ Թերևս, որքան կարելի է շուտ կյանքում ազատ և ինքնուրույն դիրք նվաճելու ձգտումը, կամ ձանձրույթի, անգործության տրամադրությունները զինվորական ծառայության մեջ հաղթահարելու ցանկությունը։ Գուցե դա տուրք էր սպայական կարիերայի վերաբերյալ իշխող հայացքներին։ Ինչ էլ լինի, Լերմոնտովն ստիպված էր ամբողջ երկու տարի անցկացնել յունկերական դպրոցում, ենթարկվել անհիթեթության աստիճան խիստ ու դաժան զինվորական օրենքներին, իր ժամանակը վատնել արշավանքներում, զորահանդեսներում և վարժություններում։ Իզուր չէ, որ նա հետագայում այդ տարիներն անվանում էր «տանջալից դատարկ ու սարսափելի»։

1833—34 թթ. նա շատ քիչ բանաստեղծություններ է գրում, բայց ստեղծագործական աշխատանքն ընդհանուր առմամբ չի դադարեցնում։ Ընկերների համար նա գրում և զինվորական դպրոցի ձեռագիր ամսագրում հրապարակում է թեթև ու սրամիտ, երբեմն անվայելուչ «յունկերական պոեմներ», իսկ «իր համար» շարունակում է ստեղծագործական համառ աշխատանքը։ Հայրենի Պենզայի նահանգում պահպանված հիշողությունների և ավանդությունների հիման վրա նա վեպ է գրում Պուգաչովի ապստամբության ժամանակներից, ցույց է տալիս ժողովրդի տարերային վրիժառության բռնկման հանգամանքները։ Դա «Զադիմ» վեպն էր, որը մնացել է անավարտ։ «Մտքերը նախազգում էին հեղաշրջումը և հուզվում,— գրել է պատանի վիպասանը XVIII դարի վերջի ժողովրդական շարժումների մասին։— Տիրող ամեն մի հին ու նոր դաժանությունը նրա ստրուկները գրանցում էին վրեժխնդրության գրքում, և միայն նրանց արյունը կարող էր լվանալ այդ ամոթալի տարեգրությունը»։ Վեպի հերոսը՝ աղքատացած ազնվական Վադիմն օժտված է ռոմանտիկ վրիժառուի բոլոր հատկանիշներով։ Խորհրդավորություն և ինչ-որ «դեմոնական» բան կա նրա ամբողջ էության մեջ՝ սկսած այլանդակ արտաքինից մինչև վրեժով ու ատելությամբ համակված հոգին։ Դա է դրդում նրան անցնելու ապստամբ գյուղացիների գլուխը, որպեսզի նրանց օգնությամբ պատժի իր ընտանիքի դժբախտության պատճառը դարձած կալվածատեր Պոլիցինին։

1834 թ. Լերմոնտովն ավարտեց յունկերական դպրոցը և կոռնետի աստիճանով սկսեց ծառայել գվարդիական հուսարական գնդում, որը տեղավորված էր Պետերբուրգից ոչ հեռու։ Երիտասարդ սպայի առջև բացվեցին արիստոկրատական սալոնների, պարահանդես-դիմակահանդեսների դռները։ Բայց Լերմոնտովը, որը կողմնակի մարդկանց թվում էր աշխարհիկ վայելքներով տարված, անհոգ մի երիտասարդ, իրականում կլանված էր ստեղծագործական մեծ աշխատանքով։ Նա գրեց այնպիսի երկեր, ինչպես «Սաշկա» մեծ պոեմը, «Իշխանուհի Լիգովսկայա» վեպը։ 1835—36 թթ. գրած այդ գործերը, որոնք երկուսն էլ, ի դեպ, մնացել են անավարտ, գե-

պի ժամանակակից կյանքի ռեալիստական պատկերումը կատարվող շրջադարձի առաջին լուրջ նշաններն էին։ Արտասովոր մարդկանց և բուռն կրքերի աշխարհից Լերմոնտովը տեղափոխվում էր Պետերբուրգի առօրյա իրականության ոլորտը, ցույց էր տալիս տարբեր մարդկային ճակատագրեր՝ մայրաքաղաքի խայտաբղետ կյանքի հոսանքում։

Սակայն այդ տարիների ամենանշանավոր ստեղծագործությունը «Դիմակահանդես» չափածո դրաման էր, որը որոշ իմաստով կարելի է անվանել նաև Լերմոնտովի ամբողջ նախընթաց ստեղծագործության հանրագումար։ Դրամատիկական լարված վիճակների, սրընթաց զարգացող գործողության, կրքոտ ուժով և դաժան հեգնանքով հագեցած խոսակցությունների միջոցով բանաստեղծը ցուցադրում էր «փայլուն, բայց չնչին դարը», արիստոկրատական վերնախավի կյանքը, հոգևոր ստրկության ու երեսպաշտության մթնոլորտը։ Լերմոնտովն, ըստ էության, ազնվական հասարակության ամբողջ կյանքն էր համարում մի դիմակահանդես, ուր մարդկանց իսկական խոհերն ու զգացմունքները ծածկված են անթափանց վարագույրով։ Եվ միայն դեմքերին դիմակ դրած ժամանակ է, որ նրանք «հանում են դիմակը զգացմունքների վրայից» ու մեր առջև կանգնում իրենց մտքերի և գործերի ամբողջ ողորմելիությամբ։ Այդ միջավայրում է ապրում, տառապում և կործանվում դրամայի գլխավոր հերոսը՝ Եվգենի Արբենինը։ Շատ փորձությունների միջով անցած, բայց «չարիքի առջև երբեք գլուխը չթեքած», «հրաբխի նման եռացող հոգով» այդ մարդը շատ լավ է հասկանում իր շուրջը տիրող կեղծիքը, զայրույթով ու թույնով լեցուն խոսքեր է նետում շրջապատի մարդկանց երեսին։ Բայց Արբենինն ինքը վարակված է այդ հասարակության արատներով, դաժան է ու եսապաշտ, որի հետևանքով կործանում է և՛ սիրած կնոջը, և՛ իրեն։ Միայնակ «հպարտ հոգու» ողբերգությունը Լերմոնտովը ցուցադրել է արվեստագետի անողոք ճշմարտացիությամբ, բացահայտելով ինչպես հերոսի ուժը, այնպես էլ նրա թուլությունը։

Այն, ինչ Լերմոնտովը գրել էր մինչև 1837 թվականը, արդեն բավական էր ժամանակի ռուս գրականության մեջ աչքի ընկնող տեղ գրավելու համար։ Բայց այնքան մեծ էր բանաստեղծի պատասխանատվությունը գեղարվեստական խոսքի հանդեպ, որ այդ բոլորը նա, ըստ երևույթին, համարում էր նախնական փորձեր և տպագրության չէր ներկայացնում (բացառություն է կազմում «Հաջի Աբրեք» պոեմը, որը տպագրվեց հեղինակի կամքին հակառակ, ընկերների ջանքերով)։ Առաջին ստեղծագործությունը, որով Լերմոնտովը վճռեց հանդես գալ հասարակության առջև, «Դիմակահանդեսն» էր։ 1835—36 թթ. նա ապարդյուն փորձեր կատարեց իր դրաման բեմադրելու իրավունք ստանալու համար, մի քանի անգամ վերամշակեց այն, ստեղծեց նոր տարբերակներ։ Եվ, այնուամենայնիվ, Երրորդ բաժանմունքի գրաքննությունը վերջնականապես արգելեց «Դիմակահանդեսի» բեմադրությունը։

Սակայն շուտով վրա հասան դեպքեր, որոնք միանգամից պետք է հրուշակեին Լերմոնտովին, պետք է նրա անունը դնեին ռուս գրականության առաջին մեծության անունների կողքին։

* * *

1837 թվականի ձմեռային օրերին Ռուսաստանի առաջավոր հասարակությունը ցնցվեց Ա. Ս. Պուշկինի մենամարտի ու մահվան լուրերից։ «Ռուսական պոեզիայի արևը» զոհ էր դարձել պալատական-արիստոկրատական շրջանների խարդավանքի ու դավերի։ Հայրենասիրաբար տրամադրված շրջանները վրդովված էին մինչև հոգու խորքը և տեղի ունեցածի մեջ տեսնում էին ցարական բռնակալության նոր ոճրագործությունը։ Բայց ոչ ոք այնպես խոր և ճշմարտացի չարտահայտեց համաժողովրդական զայրույթի տրամադրությունները, ինչպես գրական աշխարհին դեռ անծանոթ երիտասարդ սպա Միխայիլ Լերմոնտովը։ Այդ օրերին նա գրեց «Պոետի մահը»՝ այդ առնական ու հզոր, ցասման ու վրեժի զգացումով տոգորված բանաստեղծությունը, որը, արտագրվելով հազարավոր օրինակներով, անմիջապես տարածվեց ամբողջ Պետերբուրգում։ Ազգային մեծ վշտի այրող գիտակցությամբ, Պուշկինի ողբերգության համար հանցավորների անողոք մերկացման կրքով էր հնչում այդ բանաստեղծության յուրաքանչյուր տողը։ Լերմոնտովը բացահայտում էր Պուշկինի սպանության քաղաքական իմաստը, ցույց էր տալիս նրա իսկական հեղինակներին՝ «Ազատության, Հանճարի ու Փառքի դահիճներին», որոնք «ագահ խմբերով կանգնած են գահի մոտ»։ Այդ նրանց դիմելով էր, որ Լերմոնտովն ասում էր իր մարգարեական խոսքերը.

Բայց, աչակիցներ անառակության, կա՛ մի դատ վերին,
Կա՛ անեղ մի դատ, նա կգա՛, կգա՛,
Անողոք այն դատն անմատչելի է ոսկու ճնշյունին,
Եվ մտքի, գործի կանխատես վկա։
Այնժամ ձեր թունոտ, շարանենգ լեզուն տամիշտ կգոցվի,
Բանսարկությունը կլռի խպտոտ,
Եվ դուք ձեր ամբողջ սև արյունով է՛լ չեք ճատուցանի
Ջոհված գրեթի արյունը արդար։

(Թարգմ. Հ. Մազմանյանի)

Կառավարական շրջաններում այդ բանաստեղծությունը գնահատվեց իբրև «հեղափոխության կոչ», և երիտասարդ պոետը ձերբակալվեց ու աքսորվեց Կովկաս, ուր նա պետք է մասնակցեր լեռնցիների դեմ մղվող ռազմական գործողություններին։ Բայց Լերմոնտովի անունն արդեն հայտնի էր դարձել ամբողջ ընթերցող Ռուսաստանին, և առաջավոր հասարակության մեջ հաստատվել էր այն համոզմունքը, որ Պուշկինն առանց ժառանգորդի չի մեռել։ Այդ ժամանակից էլ սկսվեց Լերմոնտովի ստեղծագործության ամենաարդյունավետ շրջանը, որը թեև կարճ տևեց (ընդամենը չորս տարի), բայց իր նշանակությամբ մի ամբողջ դարաշրջան կազմեց ռուս գրականության պատմության մեջ։

«Պոետի մահի» հետ միաժամանակ Լերմոնտովը գրեց նաև մի ուրիշ բանաստեղծություն՝ «Բորոդինոն», որով կարծես ուզում էր ասել, թե ինքը

կարող է ոչ միայն նշավակել շարքը, այլև փառաբանել հայրենիքի պատմության հերոսական էջերը։ Հասարակ զինվորի շուրթերով Լերմոնտովը վերակենդանացնում է 1812 թ. Հայրենական պատերազմի անմոռանալի դրվագները։ Նա ստեղծել է մի իսկական ժողովրդական դյուցազներգություն, որը հնչում էր և՛ իբրև փառավոր անցյալի բանաստեղծական պատմություն, և՛ որպես հիշեցում ժամանակակից սերնդին իր հայրենասիրական պարտքի մասին։ Լերմոնտովի «Բորոդինոն» և Տոլստոյն անվանել է այն հատիկը, որից ծնվել է իր «Պատերազմ և խաղաղություն» վեպը։

Դրեթե մի ամբողջ տարի Լերմոնտովն անցկացրեց Հյուսիսային Կովկասում և Անդրկովկասում, երկրի մի ծայրից մյուսը ձգվող երկարատև ճանապարհորդությունների մեջ։ Կովկասյան հանդիպումները հարստացրին նրա կենսական տպավորությունները, ստեղծագործական նոր ծրագրերի խթան հանդիսացան։ Լերմոնտովը ծանոթացավ կովկասյան ժողովուրդների մշակույթի մի շարք գործիչների հետ, գրի առավ տեղական ավանդություններ ու հեքիաթներ։ Այստեղ նա հանդիպեց նաև աքսորյալ դեկաբրիստների, օրինակ, հայտնի բանաստեղծ Ա. Օդոևսկուն, որի հիշատակին նա հետագայում նվիրել է իր ամենաուժեղ բանաստեղծություններից մեկը։

1838 թ. սկզբին Լերմոնտովը նորից Պետերբուրգում էր. տատի համառ ջանքերն ու խնդրանքները հնարավորություն տվեցին վերադառնալու մայրաքաղաք։ Եվ նորից Լերմոնտովը հանձնվում է ստեղծագործական բուռն աշխատանքի, կերտում է մեկը մյուսից գեղեցիկ բանաստեղծություններ, պոեմներ, արձակ էջեր։ Պարբերական մամուլում հրապարակվում են նրա նորանոր գործերը, իսկ 1840 թ. լույս է տեսնում նրա բանաստեղծությունների ու պոեմների առաջին և միակ ժողովածուն։ Նա ծանոթանում է ժամանակի գրական շարժման նշանավոր գործիչների՝ Բելինսկու, Գոգոլի, Ժուկովսկու, Կրաևսկու և ուրիշների հետ։

Լերմոնտովի քնարերգությունն այդ տարիներին նշանավորվեց քաղաքացիական մոտիվների ընդլայնմամբ, փիլիսոփայական բովանդակության խորացումով։ Նրա «երկաթյա ոտանավորը» հնչեց նոր ուժով ու գեղեցկությամբ։ Զայրույթով ու դառնությամբ ողողված տողերում նա դատապարտում է ժամանակակից սերնդի անգործությունը, «ամոթալի անտարբերությունը բարու և չարի նկատմամբ» («Խոհ»)։ Բանաստեղծական խոսքն այժմ նա համեմատում է մերկացված դաշույնի հետ։ Այդ խոսքը պետք է «ոգեշնչի մարտիկին կռվի համար», պետք է հնչի «ժողովրդական ցնծության ու դժբախտության օրերին» («Բանաստեղծ»)։ Լերմոնտովը գրականությունից պահանջում է մերկացնող և անհաշտ ոգի, որոնցով զինված գրողը պետք է «համարձակորեն անարգանքի ենթարկի բարեպաշտությամբ դիմազարդված արատը» («Ժուռնալիստը, ընթերցողը և գրողը»)։ Բանաստեղծը վճռականորեն մերժում է հասարակական մեծ հարցերից հեռու կանգնած, հոգեկան մանր ապրումներ փորփրող պոեզիան («Քեզ մի՛ հավատա»)։

Ընթերցող հասարակության վրա հսկայական տպավորություն գործեց «Երգ Կալաշնիկովի մասին» պոեմը, որը լույս տեսավ 1838 թ.։ Ռուսական ժողովրդական պատմական երգերի հետևությամբ Լերմոնտովն ստեղծել էր Իվան Ահեղի ժամանակներին վերաբերող մի հերոսական պատմություն, հզոր բնավորություններ, բուռն կրքերի բախումներ։ Ստեպան Կալաշնիկովի խիզախ արարքը՝ իր ընտանիքի արժանապատվությունը պաշտպանելու համար բանաստեղծը բարձրացնում էր կենցաղային դրվագի աստիճանից, դիտում իբրև մարդու ճակատագրի մեծ հարցի արտահայտություն։ Պատմական ատաղձ ունեցող ստեղծագործությունը հնչում էր խորապես արդիական շեշտերով, մանավանդ որ ընթերցողը չէր կարող նմանություն չտեսնել Կալաշնիկովի պատմության և ընդամենը մեկ տարի առաջ զոհված Պուշկինի ճակատագրի միջև։ Ենթադրում են, որ հենց Պուշկինի սպանությունն է դրդել Լերմոնտովին գրելու մարդկային արժանապատվության և իրավունքների կրքոտ պաշտպանությամբ շնչող այդ պոեմը։ Բայց դա անցյալը մոդեռնացնող կամ այլաբանական երկ չէր, այլ իսկական ռեալիստական ստեղծագործություն, որի մեջ հարազատորեն վերարտադրված են պատմական դարաշրջանի ոգին, բնավորությունները, ժողովրդական երգերի ոճը, կառուցվածքը։ Այդ պոեմով, ինչպես ասում էր Բելինսկին, «բանաստեղծը մտավ ժողովրդայնության թագավորությունը, իբրև նրա լիիրավ տիրակալ»։

Աքսորից վերադառնալուց հետո Լերմոնտովը գրեց նաև «Մծիրին» ու «Դեմը»։ Իրենց հզոր մղումների մեջ տիտանական ուժի հասնող կերպարներով, իրականության բուռն ժխտմամբ և մարդկային գեղեցիկ իդեալի հաստատումով այդ պոեմները դարձան Լերմոնտովի հեղափոխական ռոմանտիզմի ամենաբարձր արտահայտությունը։

1833 թ. գրած «Մծիրի» պոեմի գաղափարն ու թեման,— կենդանի կյանքից կտրված և վանքի խցերը նետված պատանու ճակատագիրը, նրա տառապանքը, իղձերն ու կարոտը, ազատության հասնելու հերոսական ջանքերը,— Լերմոնտովի ստեղծագործության մեջ երևան էին եկել դեռ մի տասնամյակ առաջ գրված «Խոստովանություն», հետո նաև «Բոյար Օրշա» պոեմներում։ Երրորդ անգամ դիմելով այդ նյութին, բանաստեղծն Իսպանիայից և Լիտվայի սահմաններից գործողությունը տեղափոխեց լավ ծանոթ կովկասյան միջավայր։ Հերոսը դարձավ շատ ավելի ավարտուն, ամբողջական մի կերպար, թերևս ամենամիաձուլը Լերմոնտովի կերտած բոլոր հերոսներից։ Պոեմը գրեթե ամբողջությամբ զարգանում է իբրև պատանի վանականի մենախոսություն-խոստովանություն։ Ինչպիսի՜ անկեղծությամբ, համոզմունքով ու կրքով է հնչում նրա խոսքը, թերու և առելության ի՜նչ բոցաշունչ լեզվով է նա պատմում իր կարճ կյանքի և մեծ երազների, երեք օր տևած իր ազատության, փորձությունների և Հուսախաբությունների մասին։ Ամբողջ խոստովանության վրա թևածում է հայրենիքի անմար կարոտը, ազատության համար՝ ամեն մի արգելք հաղթահարելու կամքը, և այժմ արդեն հյուծված, գերեզմանի եզրին հասած պատանի վանականը մեր աչքում դառնում է իսկական դյուցազուն-հերոս, ազատասիրության հավերժ գեղեցիկ խորհրդանիշ։ Ինչքա՜ն պերճախոս են հնչում նրա ամբողջ էությունը կլանած ազատության երազների այս տողերը.

Ես լակ մի մոմի ուժ եմ իմացել.
Մի, բայց բոցավառ կիրք եմ ունեցել,
Նա ինչպես մի որդ ապրել է իմ մեջ,
Կրծել է հոգիս, մաշել մինչև վերջ:
Իմ ցնորքները բոցրել, տարել է
Այս նեղ խցերից անդոր աղոթքի
Այն վեհ աշխարհը կռվի, աղմուկի,
Ուր որ ժայռերը թափչում ամպերում,
Ու մարդիկ այնպե՞ս ազատ են ապրում...

(Թարգմ. Հ. Թումանյանի)

Աղատության կրակոտ փառաբանմամբ բանաստեղծն արտահայտում էր նաև իր հոգու «բոցավառ կիրքը», իր նվիրական տենչերը։

Սկսած 1829 թվականից բանաստեղծի երևակայությունն զբաղված էր Դևի կերպարով, որին նվիրված պոեմը մոտ տասն անգամ արմատական վերամշակման ենթարկվեց։ «Դևի» վերջին տարբերակը Լերմոնտովն ստեղծել է 1841 թ., մահից մի քանի ամիս առաջ։ Տիեզերական անվերջ տարածության և ժամանակի հավերժության մեջ ճախրող, երկնքի կողմից անիծված ու երկրից մերժված Դևի կերպարը համաշխարհային գրականության ամենաբարդ և խորիմաստ կերպարներից է, հպարտ ընդվզման մեջ աստվածամարտության հասնող հերոսներից մեկը։ Դա ամեն կարգի իշխանության և բռնակալ հեղինակության դեմ ապստամբող, ամեն ինչ կասկածի և քննության ենթարկող ոգին է։ Նրան հավասարապես ատելի են աստծու բռնությունն ու մարդկանց աշխարհում տիրող մանր կրքերը։ «Ես իմացության և աղատության արքան եմ»,— ասում է Դևն իր մասին։ Նա ոչ մի քարացած ճշմարտություն չի ընդունում, ամեն ինչ դիտում է շարժման, ներքին հակասության, վերափոխման մեջ։ Չարն ու բարին, ատելությունն ու սերը, կործանման կիրքն ու ստեղծագործման մղումը Դևի կերպարում հանդես են գալիս միասնաբար, դիալեկտիկ համադրությամբ։

«Դևն» անկրկնելի ուժով ցուցադրեց մենակության տառապանքները, հմայիչ իդեալին ձգտելու վեհությունն ու նրան հասնելու անհնարինության տքնջանքը։ Տեսնելով ու սիրահարվելով Թամարային, Դևը մի պահ «նորից ճանաչեց սիրո, բարու և գեղեցկության սրբությունը», ցանկացավ հրաժարվել ամեն ինչ պրհամարհողի և ատողի դաժան դերից, ուզեց իր գոյության տիեզերական հավերժությունը փոխարինել երկրային կյանքի վայելքներով։ Բայց անհատապաշտությունը, չարության կիրքը մտել են Դևի էության մեջ, և նրա առաջին իսկ համբույրը թունավորեց գեղեցկուհի Թամարային։ Զախողվեց Դևի փորձը՝ «հաշտվելու երկնքի հետ, հավատալու բարուն», և նա մնաց «առաջվա պես միայնակ, տիեզերքի մեջ առանց հույսի ու սիրո»։ Այսպես, ռոմանտիկական պոեմի պայմանական, ֆանտաստիկ ձևի մեջ բանաստեղծը ցույց էր տալիս անհատապաշտության կործանիչ հետևանքները։

Լերմոնտովին զբաղեցնում էր նաև մի ուրիշ խնդիր՝ ժամանակակից մարդու տիպական կերպարի ստեղծումը։ Այդ խնդիրը նա իրագործեց

1838—39 թթ. գրած «Մեր ժամանակի հերոսը» վեպում։ Ստվալով ոչ-մեծ այդ գիրքը համաշխարհային գրականության ամենակատարյալ ու բովանդակալից վեպերից մեկն է։ «Մեր ժամանակի հերոսը» դարձավ Լերմոնտովի ստեղծագործության մեջ ռեալիստական գծի ամենաբարձր արտահայտությունը և ցույց տվեց, որ կյանքի վերջին շրջանում նա հավասար ուժով տիրապետում էր ինչպես ռոմանտիկական, այնպես էլ ռեալիստական մեթոդին։ Ռեալիզմն այս վեպում հանդես եկավ մարդկային բնավորությունների օբյեկտիվ ու բազմակողմանի պատկերման, կերպարի և նրան շրջապատող հանգամանքների իրական կապերի բացահայտման մեջ։

Առաջին հերթին սա վերաբերում է Պեչորինի կերպարին, որն իր մտածողությամբ ու վարքագծով անցումային ժամանակաշրջանի մարդկանց տիպական ներկայացուցիչն է («Այդ մի պատկեր է, որ կազմված է մեր ամբողջ սերնդի արատներից՝ իրենց լրիվ զարգացմամբ առած»,— ասում է նրա մասին հեղինակը վեպի առաջաբանում)։ Ընթերցողին Պեչորինը գրավում է շատ կողմերով՝ մտավոր բարձր ունակություններով և «հոգու անընդգրկելի ուժերով», ինքնուրույնությամբ և ուժեղ կամքով, խորաթափանցությամբ և անկեղծությամբ։ Բայց այս կերպարի մեջ ևս անխնա ճշմարտացիությամբ ցույց են տրված ժամանակի հանգամանքներով պայմանավորված արատները։ Ստիպյալ անգործունեությունը Պեչորինին մղում է մխիթարություն որոնելու չար ու դատարկ արարքների կամ ուրիշներին տանջանք պատճառելու մեջ։ Նա ամեն ինչի նայում է սառը հիասթափությամբ, կասկածով ու եսասիրորեն, նրա սիրտն ասեք փակված է շատ գեղեցիկ մղումների առաջ։

Պեչորինի կերպարը վեպում դիտվում ու վերլուծվում է տարբեր դիրքերից ու կողմերից։ Մերթ նրա մասին պատմում է հին զինվորական, բարի և ազնիվ Մաքսիմ Մաքսիմիչը, մերթ նրան մենք տեսնում ենք հեղինակի աչքերով և մերթ էլ ինքը՝ Պեչորինն է օրագրի ձևով նկարագրում իր խոհերն ու արարքները։ «Պեչորինի օրագիրը», որը վեպի մեծ մասն է կազմում, հերոսի անկեղծ ինքնավերլուծության և ինքնաճանաչման եզակի օրինակ է։ Նա մեր առջև բացում է իր ամբողջ ներաշխարհը՝ առանց շինծու ամոթի, կեղծ պաթոսի կամ սեփական անձը գունազարդելու ճիգերի։ Լերմոնտովի սոցիալ-հոգեբանական վեպում ռեալիստական արվեստի հիանալի նմուշներ են նաև մյուս կերպարները՝ Մաքսիմ Մաքսիմիչն ու Բելան, Վերան ու Մերին, Գրուշնիցկին ու Վուլիչը և ուրիշներ, ինչպես նաև միջավայրի, կենցաղի և կովկասյան բնության անզուգական տեսարանները։

Լերմոնտովի արձակն ասեք մրցում է նրա պոեզիայի հետ և նույնքան հմայիչ է ու խոր։ Իզուր չէ, որ Ն. Վ. Գոգոլը 1840 թ. նույնիսկ ասել է, թե «Լերմոնտով-արձակագիրն ավելի բարձր կլինի Լերմոնտով-բանաստեղծից»։ Իսկ հարյուր տարի անց Ալեքսեյ Տոլստոյն ասում էր. «Լերմոնտով-արձակագիրը մի հրաշք է։ Ռուսական վեպի ամբողջ մեծ գետը արտահոսում է այդ վեհիտ աղբյուրից, որն սկիզբ է առել Կովկասի ձյունապատ բարձունքներում»։

Դեռևս Լերմոնտովի կենդանության ժամանակ նրա ստեղծագործության շուրջ ծավալվեց մի բուռն պայքար, որի ընթացքում բախվում էին հասարակական հակադիր ուժերը։

Առաջին մարդը, որն ըմբռնեց և գնահատեց Լերմոնտովի նշանակությունն ու հմայքը, մեծ քննադատ Վ. Գ. Բելինսկին էր։ Մի շարք հոդվածներում Բելինսկին տվեց Լերմոնտովի հիմնական երկերի այն ամենախոր և ճշմարիտ գնահատականը, որի վրա հենվել են առաջավոր հասարակական մտքի և միլիոնավոր ընթերցողների ըմբռնումները բանաստեղծի մասին։ Նա առաջինը բացահայտեց Լերմոնտովի պոեզիայի իսկական ժողովրդային ոգին, բնութագրեց նրան իբրև «ռուսական, ժողովրդական բանաստեղծի՝ այս բառի ամենաբարձր և ամենաազնիվ նշանակությամբ, մի բանաստեղծի, որի մեջ արտահայտվել է ռուսական հասարակության պատմական մոմենտը»։ Այդ նոր «պատմական մոմենտի» արտահայտությունը այն առաջընթաց քայլն էր, որ հանձին Լերմոնտովի կատարում էր ռուս գրականությունը, արտացոլելով Պուշկինից հետո կյանքում ծագած նոր պահանջներն ու հարցերը։ Բելինսկու կարծիքով, հենց դա է Լերմոնտովի անկրկնելի ինքնատիպության աղբյուրը, ինքնատիպություն, որ քննադատը տեսնում էր ամենից առաջ «վերլուծական ոգու, հետազոտության անզուսպ ձգտման, կրքոտ, թշնամանքով ու սիրով լեցուն մտածողության մեջ»։ Իսկ Լերմոնտովի ստեղծագործության պաթոսը, Բելինսկու կարծիքով, «մարդկային անհատականության ճակատագրի և իրավունքների» պաշտպանությունն է։

Մեծ է Բելինսկու դերը Լերմոնտովի մեկնաբանման և գնահատման գործում, բայց իր հերթին բանաստեղծն էլ խոշոր դեր խաղաց քննադատի գաղափարական զարգացման մեջ։ Իր կրքոտ և բուռն ոգով, բանաստեղծության անհաշտ ժխտմամբ նրա պոեզիան օգնեց Բելինսկուն՝ հաղթահարելու «իրականության հետ հաշտվելու» ժամանակավոր տրամադրությունները։

Հակառակ Բելինսկու, ռեակցիոն մամուլն ու քննադատությունը աշխատում էր ամեն կերպ նսեմացնել Լերմոնտովին և նրա ստեղծագործությունը։ Հաճախ նրա երկերը գնահատվում էին իբրև ինքնուրույնությունից զուրկ «փոքրիկ աշակերտական էսքիզներ», նույնիսկ իբրև վնասակար և «անտանելի» մի բան։ Հատկանշական է, որ Լերմոնտովի ստեղծագործության մասին այդ կարծիքն Ուներ նաև ռեակցիայի պարագլուխը՝ Նիկոլայ առաջինը։ Պահպանվել է նրա մի նամակը, որի մեջ նա «Մեր ժամանակի հերոսը» գնահատում է որպես մի վեպ, որն իբր թե «փչացնում է բարքերն ու բնավորությունը»։ «Իմ համոզմունքով,— շարունակում է թագավոր-դահիճը,— այս ողորմելի գիրքը ցույց է տալիս հեզինակի մեծ փչացածությունը. Բարի ճանապա՛րհ, պարոն Լերմոնտով...»։

Նիկոլայ առաջինի հեգնական խոսքերը շարագուշակ իմաստ ունեին։ Ճիշտ այդ օրերին (նամակը գրված է 1840 թ. հունիսին) Լերմոնտովը, իրոք, գտնվում էր ճանապարհի վրա։ «Նորին մեծության» հրամանով նա երկրորդ անգամ աքսորվում էր Կովկաս։ Նոր աքսորի առիթ դարձավ Լերմոնտովի մենամարտը Պետերբուրգում ֆրանսիական դեսպանի որդու՝ Էռնեստ Բարանտի հետ, 1840 թ. փետրվարին։ Այդ մենամարտին Լերմոնտովը կանչվել էր այն ընդհարումից հետո, որի ժամանակ բանաստեղծը պաշտպանել էր հայրենի երկրի ազգային արժանապատվությունը։ Ընդհարումն արհեստականորեն բորբոքել էին արիստոկրատական շրջանները, որոնք միջոց էին որոնում բանաստեղծին վարկաբեկելու, նրա հետ որևէ կերպ դատաստան տեսնելու համար։ Թեև մենամարտն անարյուն էր վերջացել, կողմերից ոչ մեկը լրջորեն չէր տուժել, բայց Նիկոլայ առաջինն ու Երրորդ բաժանմունքի պետ Բենկենդորֆը որոշեցին հարմար առիթը բաց չթողնել։ Իհարկե, ընդսմին նրանք հիշում էին և՛ Լերմոնտովի բանաստեղծությունը Պուշկինի մահվան առթիվ, և՛ նրա հանդուգն վարքագիծը բարձրաշխարհիկ շրջաններում։ Լերմոնտովին Պետերբուրգից հեռացնելով, նրանք, թերևս, նպատակ ունեին նաև ցրել առաջավոր երիտասարդության այն խմբակը, որի ակտիվ անդամներից էր նաև բանաստեղծը (մասնակիցների թվի համապատասխան՝ այդ խմբակը կոչվում էր «16-ի խմբակ»)։

Ցարն ընդունել էր արտաքուստ մեղմ, բայց իրականում դաժան որոշում. պորուչիկ Լերմոնտովին տեղափոխել Կովկասում գտնվող Տենգինյան գունդը։ Այդ գունդը մասնակցում էր 1840 թվականի ամենաարյունահեղ մարտերին, և բանաստեղծի կյանքը ամեն րոպե մահացու վտանգի տակ կլիներ։ Հենց դա էլ ուզում էր թագավորը։ Պատահական չէ, որ հետագայում էլ նա հատուկ կարգադրությամբ պահանջում էր Լերմոնտովին միշտ պահել ռազմաճակատում։

Լերմոնտովը Կովկաս էր մեկնում տխուր տրամադրությամբ։ Այդ օրերին գրած մի բանաստեղծության մեջ («Ամպեր») նա իր վիճակը համեմատել է թափառական ամպերի հետ, որոնք քամուց հալածված քշվում են հարավ։ Մի քանի ամիս նա մասնակցեց Կովկասի նախալեռներում մղվող կռիվներին, աչքի ընկնելով իր քաջությամբ, պարզ ու մարդամոտ բնավորությամբ, ռազմական կյանքի վտանգներն ու զրկանքները հասարակ զինվորների հետ բաժանելու պատրաստակամությամբ։ Ցուցաբերած խիզախության համար հրամանատարությունը նրան երեք անգամ պարգևի ներկայացրեց, բայց ամեն անգամ թագավորը մերժում էր այդ առաջարկը։ Պատերազմից ստացած իր տպավորությունները Լերմոնտովն արտահայտել է «Վաչերիկ» ծավալուն բանաստեղծական երկում, որը ռուս գրականության մեջ պատերազմն իր ամբողջ չգունազարդված ճշմարտությամբ պատկերելու առաջին հոյակապ նմուշն է, ասես նախօրինակը Լև Տոլստոյի ապագա կովկասյան և սևաստոպոլյան պատմվածքների։

1841 թ. սկզբին Լերմոնտովը կարճատև արձակուրդով վերջին անգամ ժամանեց Պետերբուրգ։ Բանաստեղծն այժմ երազում էր զինվորական ծառայությունից ազատվելու, ամբողջովին գրական աշխատանքին նվիրվելու մասին։ Նա ծրագրում էր հրատարակել իր ամսագիրը։ Բայց կառավարությունը ոչ միայն մերժեց հրաժարականի խնդրանքը, այլև կոպիտ կերպով հրամայեց նրան անմիջապես վերադառնալ Կովկաս, իր գունդը։

Հեռանալով Պետերբուրգից, Լերմոնտովը գրեց ազնիվ վրդովմունքով և անսահման թախիծով հագեցած այն ութ տողերը, որոնց մեջ նա «մեռա

բարով» էր ասում «անլվա Ռուսաստանին», այդ «ստրուկների և տերերի երկրին»։ Բանաստեղծի խոսքերը վերաբերում էին, իհարկե, «պաշտոնական Ռուսաստանին» և ոչ թե հասարակ ժողովրդին, որի կյանքն ու հոգեբանությունը խորապես հասկանալու ձգտումը վերջին շրջանում հատկապես ուժեղացել էր նրա մոտ։ Դրա լավագույն ապացույցը մահվանից քիչ առաջ գրած «Հայրենիք» բանաստեղծությունն է։ Հայրենիքի նկատմամբ իր սերը Լերմոնտովը «տարօրինակ սեր» էր անվանում, որովհետև այն հեռու էր «պաշտոնական հայրենասիրության» կեղծ ըմբռնումներից, «արյամբ գընված փառքի» կամ «մութ անցյալի նվիրական ավանդների» կույր փառաբանումից։ Բանաստեղծն իր իդեալը որոնում էր հասարակ ժողովրդի կյանքում, հայրենիքի ու ժողովրդի հասկացությունները նրա գիտակցության մեջ նույնանում էին։ Այժմ Լերմոնտովը եկել էր այն համոզմանը, որ փրկության խարիսխը ժողովուրդն է, ոչ թե միայն առանձին նշանավոր անհատները, որքան էլ որ նրանք անձնվիրաբար պայքարեն ազատության համար։ Պետք է կապվել ժողովրդի հետ, արթնացնել նրա գիտակցությունը, ներշնչել նրան այն միտքը, որ կյանքի ընթացքն անհրաժեշտ է փոխել։ Լերմոնտովի ողբերգությունն այն էր, որ նա կյանքում այդպիսի շարժում դեռ չէր տեսնում։ Բնորոշ է, որ այդ օրերին մի զրույցի ժամանակ նա ասել է. «Ամենից վատն այն չէ, որ մի որոշ քանակությամբ մարդիկ համբերությամբ տանջվում են, այլ այն, որ վիթխարի քանակությամբ մարդիկ տանջվում են, չգիտակցելով այդ բանը»։

Լերմոնտովի ոտքն նորից ձգվեցին անծայր տափաստաններով ու դաշտերով անցնող ճանապարհները, և նորից, ուղևորության վերջում, կանգնեցին մանկությունից ծանոթ ու սիրելի Կովկասյան լեռների վեհափառ շարքերը։ Բանաստեղծը կանգ առավ Պյատիգորսկում, Մաշուկ լեռան ստորոտում գտնվող մի փոքրիկ տնակում և իրավունք ստացավ բուժվել հանքային ջրերում։ Այստեղ անցան նրա կյանքի վերջին երկու ամիսները։ Այստեղ նա գրեց իր վերջին բանաստեղծությունները։ Դրանց մեջ արտահայտվել են այն դաժան խոհերն ու ողբերգական ապրումները, որոնցով կլանված էր նա այդ օրերին և որոնք, երիտասարդ սպայի արտաքուստ անհոգ կյանքի, ուրախ կատակների ետև թաքնված, անմատչելի և անհասկանալի էին շրջապատի մարդկանց։ Նա մերթ իրեն համեմատում է հարազատ ճյուղից պոկված, քամու շնչից աննպատակ քշվող միայնակ տերևի հետ («Տերև»), մերթ իդեալի և իրականության ողբերգական հակասությունը մարմնավորում է խորիմաստ ավանդությունների մեջ («Ծովի արքայադուստրը», «Թամարա»), մերթ էլ ստեղծում է ճշմարտության և սիրո պատգամներ կարդալու համար հալածվող մարգարե-բանաստեղծի կերպարը («Մարգարե»)։ Մոտալուտ, անխուսափելի մահվան նախազգացումը գնալով ուժգնանում էր նրա գիտակցության մեջ։ Այդ մասին են խոսում «Երազ», «Ես դուրս եմ գալիս...» և այլ բանաստեղծություններ։ Բայց, անգամ մահվան մասին խորհելիս, բանաստեղծի էությունը լի է կյանքի տենչանքով, և մահը նա չի պատկերացնում այլ կերպ, քան իբրև կյանքի և սիրո ուժերով ալեցուն մի վիճակ.

Ես կյանքից արդեն հուսալիք չունեմ,
Եվ չե՛մ ափսոսում օրերս անցյալ,
Ես ազատություն և ճանգիստ կուզեմ,
Ես կուզեմ բնել և ինձ մոռանալ։

Սակայն ո՛չ երբեք ցուրտ բնով շիրմի,
Կուզեի ճավերժ ես այնպե՛ս ննջել,
Ու կյանքի ուժը նիրճեր իմ սրտում
Եվ կուրծքս մեղմով բարձրանար, իջներ։

Ու գիշեր-ցերեկ ինձ սիրո մասին
Սրտաբուխ մի երգ բազդրանայն ննջեր.
Եվ սաղարթախիտ, մթագին կաղնին
Հավերժ դալարուն՝ վրաս շառաչեր։

(Թարգմ. Ավ. Խանաքյանի)

Լերմոնտովի շուրջը նորից հյուսվում էին մութ դավեր, որոնք զանազան ուղիներով կապված էին Երրորդ բաժանմունքի և ցարական պալատի հետ։ Պյատիգորսկի արիստոկրատական վերնախավը, գոռոզ սպաներն ու ոստիկանությունը ատելությամբ էին նայում կեղծիք չհանդուրժող, սրամիտ, անկախ բնավորության տեր բանաստեղծին, մանավանդ որ լավ գիտեին թագավորի թշնամական վերաբերմունքը նրա նկատմամբ։ Որոնում էին այնպիսի մեկին, որի ձեռքով հնարավոր լիներ դատաստան տեսնել նրա հետ։ Եվ այդպիսի մարդ գտնվեց. դա դեռ զվարդիական դպրոցից Լերմոնտովին լավ ճանաչող, նրա նախկին ընկեր, պաշտոնաթող մայոր Նիկոլայ Մարտինովն էր։ Այդ փառասեր, արտաքին էֆեկտներով տարված, ինքնասիրահար մարդը մահացու վիրավորվեց բանաստեղծի անմեղ էպիգրամներից ու ծաղրանկարներից և, ուրիշների կողմից գրգռված, Լերմոնտովին մենամարտի հրավիրեց։ Մենամարտը տեղի ունեցավ 1841 թ. հուլիսի 15(27)-ին, Մաշուկ լեռան լանջին։

... Լերմոնտովի մենամարտի և մահվան մասին ժամանակակիցների հուշերում, նամակներում և օրագրերում պահպանված բազմաթիվ, երբեմն հակասական վկայությունների մեջ կա մեկը, որը մի հատուկ կսկիծով է համակում։ Մարտավարներից մեկը (Գլեբովը) հետագայում պատմել է, որ ձիերով դեպի մենամարտի վայրը գնալիս Լերմոնտովը խոսում էր միայն ապագա գրական աշխատանքի, իր ծրագրած վեպերի մասին, որոնք պետք է պատկերեին ռուսական հասարակության կյանքի տարբեր շրջանները՝ XVIII դարի վերջերից մինչև կովկասյան պատերազմները։ Պետք է ինչպիսի՞ սեր տածել գեղարվեստական խոսքը, հոգու ինչպիսի՞ արիություն պետք է ունենալ, որպեսզի այդ բոլորի մասին խոսես այն ժամանակ, երբ կրծքիդ է ուղղված ատրճանակի փողը...

Բանաստեղծի հաշտության բոլոր առաջարկներն իզուր անցան։ Լերմոնտովը, որին պատկանում էր առաջին կրակոցի իրավունքը, այս ան-

գամ էլ (ինչպես և Բարանտի հետ մենամարտելիս) իր գնդակը մեծահոգաբար պարպեց օդում։ Իսկ նրա տմարդի հակառակորդը սրտին ուղղած գնդակով տեղն ու տեղը սպանեց բանաստեղծին։ Նույն պահին ուժեղ ամպրոպ ճայթեց և սպանված բանաստեղծը մի քանի ժամ մնաց հորդառատ անձրևի տակ։ Կարծես բնությունն էլ ողբում էր հանճարի և պոեզիայի սպանությունը...

Լերմոնտովի մահով ռուս և համաշխարհային գրականությունը կորցրեց իր խոշորագույն դեմքերից մեկին, կորցրեց այն պահին, երբ նա պատրաստվում էր ստեղծագործական նոր, ավելի հոյակապ թռիչքների։

Բանաստեղծի մահից հետո չդադարեց պայքարը նրա անվան շուրջ, նրա ստեղծագործության ճշմարիտ մեկնաբանության համար։ Արիստոկրատական և լիբերալ-բուրժուական քննադատությունը, նույնիսկ այն դեպքում, երբ խոստովանում էր Լերմոնտովի գեղարվեստական տաղանդ-ու նշանակությունը, ամենից հաճախ հակված էր նրա ստեղծագործության էական առանձնահատկությունները բացատրելու սոսկ անձնական կենսագրության կամ գրական նախորդներին նմանվելու հանգամանքով, կտրելով դարաշրջանի սոցիալ-քաղաքական բովանդակությունից։ Այնինչ հեղափոխական վաթսունականների սերունդը, այս հարցում ևս շարունակելով Բելինսկու ավանդները, Լերմոնտովի ստեղծագործությունը դիտում էր իբրև գեղարվեստական և հասարակական մեծագույն նշանակություն ունեցող մի հուշարձան։ Նրա պոեզիայում Դոբրոլյուբովը տեսնում էր ռուս գրականության մեջ ժողովրդայնության սկզբունքի հետագա խորացման ազացույցներից մեկը, դեմոկրատական հայրենասիրության և հումանիզմի «ճշմարիտ, սուրբ, բանական» ըմբռնման մի փայլուն օրինակ։ Իսկ Չերնիշևսկին խորաթափանց կերպով գրում էր. «Լերմոնտովը՝ արվեստի, լուսավորության և մարդասիրության ասպարեզում մեր ժողովրդի ապագա հաղթանակների գրավականն է»։

Բելինսկու և նրա հետևորդների ավանդների վրա է հիմնվել Լերմոնտովի ժառանգության ուսումնասիրությունը սովետական գրականագիտության մեջ։ Վերջին տասնամյակների ընթացքում ճշտվեցին Լերմոնտովի կյանքի և ստեղծագործության հարյուրավոր փաստեր, բացահայտվեցին նրա գրական ժառանգության բազմակողմանի կապերը դարաշրջանի սոցիալական իրադրության և ժողովրդական բանահյուսության հետ։ Իրագործվեց բանաստեղծի երկերի գիտական հրատարակության խնդիրը։ Նրա մասին գրվել են անհամար քանակությամբ գրքեր, ուսումնասիրություններ, հոդվածներ։ Լույս տեսավ «Լերմոնտովյան հանրագիտարանի» փառահեղ հատորը։ Լերմոնտովը կանգնեց ընթերցողի առջև իր ամբողջ մեծությամբ ու հմայքով։ Ստեղծագործության ներքին էությամբ ու ձևերով նա այսօր էլ մնում է ամենաարդիական գրվեստագետներից մեկը, որի ժառանգության մեջ ոչինչ չի հնացել, չի դարձել սոսկ ակադեմիական հետաքրքրության առարկա։ Լերմոնտովի յուրաքանչյուր տողի, նրա կերտած ամեն մի պատկերի մեջ բաբախում է պոեզիայի հավերժ երիտասարդ ու կրակոտ սիրտը։

• • •

Լերմոնտովի ստեղծագործության նշանակությունը վաղուց դուրս է եկել ռուս գրականության շրջանակներից, այն ձեռք է բերել համաշխարհային ճանաչում։ Տասնյակ ժողովուրդների գրականության պատմության մեջ նրա երկերն ապրել ու ապրում են մշտական հետաքրքրության և գեղագիտական ակտիվ ներգործության բազմահարուստ կյանքով։ Դա վառ կերպով երևում է նաև հայ գրականության օրինակով։

Լերմոնտովի բանաստեղծությունների առաջին հայերեն թարգմանությունները կատարվեցին այն ժամանակ, երբ դեռ խոտով չէր ծածկվել բանաստեղծի հողաթումբը։ Լազարյան ճեմարանի սան Հ. Համազասպյանը 1843 թ. Մոսկվայում հրատարակված ռուսական պոեզիայի ժողովածուում զետեղել է նաև Լերմոնտովի երկու բանաստեղծության («Հրեշտակ», «Եղևնի») թարգմանությունը։ Իսկ Մ. Էմինը նույն տարիներին ճեմարանի աշակերտներին, ինչպես վկայում է Ռ. Պատկանյանը, կարդում և բացատրում էր Պուշկինի և Լերմոնտովի երկերը, «սեր և ճաշակ էր ձգում այդ և ուրիշ ռուս հեղինակների մասին»։

Սակայն հետաքրքրությունը Լերմոնտովի նկատմամբ շատ ավելի ուժեղացավ հաջորդ տասնամյակներում։ Այսպես, 50—60-ական թվականների գաղափարական լարված պայքարում Լերմոնտովի քաղաքացիական պոեզիան որոշակի տեղ է գրավում, մտքեր է կազմակերպում, թեմաներ ու պատկերներ է տալիս մեր բանաստեղծներին։ Միքայել Նալբանդյանը ոչ միայն թարգմանում է նրա գործերը, («Մարգարե», «Պաղեստինու ոստ», «Վեճ»), այլև իր հրապարակախոսության մեջ օգտագործում է «ճշմարտության պաշտոնյա» լերմոնտովյան մարգարեի կերպարը։ Կարծես ուղղակի արձագանքելով Լերմոնտովի վեպի առաջաբանի հայտնի խոսքերին («Մարդկանց բավական կերակրել են քաղցրավենիներով. դրանից նրանց ստամոքսը փչացել է. հարկավոր են դառն դեղեր, կծու ճշմարտություններ»), Նալբանդյանն իր «Կրիտիկայում» գրում էր, որ պետք է «գրգռել այդ թոքերի գործունեությունը (խոսքը ազգության կյանքի մասին է — Էդ. Ջ.) առողջ օդ ներս շնչելով. հերիք է, որքան թմրեցուցիչ թույն մտել է նոքա մեջ, մեզ մնում է այժմ դեղթափներ գործ դնել»։

Ի դեպ, Լերմոնտովի վեպի այդ խոսքերը նույն ժամանակ օգտագործել է նաև Սմբատ Շահազիզն իբրև «վեպի վշտի» բնաբան։ Լերմոնտովի երկերը, Շահազիզի խոստովանությամբ, ազդել են նրա վրա «իրենց ներքին բովանդակությամբ», «տվել են հայտնի մոտիվներ ու թեմաներ»։ Իրոք, Լերմոնտովյան երանգներ էին հանդես գալիս, երբ Շահազիզը «Ազգային վիճակ» բանաստեղծության մեջ «խավարի որդոց» սպառնում էր «ահեղ գատաստանով» կամ երբ կերտում էր մարգարե-բանաստեղծի կերպարը «Ճշմարտախոս», «Ոռեստ» և այլ ստանավորներում։

Այդ տարիներին Լերմոնտովի բանաստեղծությունները թարգմանել են նաև Ռ. Պատկանյանը, Ստ. Նազարյանը և «Հյուսիսափայլում» հանդես եկող մի շարք բանաստեղծներ, իսկ Ղ. Աղայանը Մոսկվայում եղած ժամանակ հափշտակվել է նրա պոեզիայով և այդ մասին հետագայում պատ-

մել իր հուշերում։ Սակայն ամենից նշանակալից փաստը, անշուշտ, Մանուկ Սաղաթյանի կատարած «Դևի» թարգմանությունն էր, որը լույս տեսավ «Հյուսիսափայլում» 1863—64 թթ.՝ պոեմի բնագրի առաջին հրապարակումից ընդամենը յոթ տարի անց։ Թարգմանիչը հարազատորեն արտահայտել էր պոեմի բոցաշունչ ռոմանտիզմը, գույների ապշեցուցիչ հարստությունը։ Չնայած լեզվական հնաբանության շատ տարրերին, հարյուրամյա հասակ ունեցող այդ թարգմանությունը այսօր էլ պահպանում է գեղարվեստական ներգործության ուժը։

Սաղաթյանի թարգմանությանը կցված առաջաբանը, որ գրել էր Ստեփանոս Նազարյանը, Լերմոնտովին գնահատելու առաջին փորձն էր հայ իրականության մեջ։ Անվանելով նրան «Ալեքսանդր Պուշկինի հավասարակշիռ հաջորդը», Նազարյանը բնութագրում է Լերմոնտովի պոեզիան իբրև «առավել ազատ, առավել ինքնիշխան և առավել այրական խոսքը, որ Ռուսաստանը խոսել է մինչև այսօր աշխարհի հրապարակում»։ Հիրավի, դժվար է պատկերացնել ավելի բարձր մի գնահատական, քան այն, որ տվել է Նազարյանը հարյուր տարի առաջ։ Լերմոնտովի ստեղծագործության էությունը տեսնելով «անողոքելի ինքնակալության», «ցարի բռնակալության» դեմ «մի ազատ, առանձնավոր, բարձրագահ հոգու պատերազմի» մեջ, Նազարյանը հիացմունքով էր խոսում «Մծիրի» և մանավանդ «Կալաշնիկովի երգը» պոեմների մասին։

Հետագա տասնամյակներում կատարվում են Լերմոնտովի երկերի բազմաթիվ նոր թարգմանություններ՝ ոչ միայն մեր գրականության արևելահայ, այլև արևմտահայ հատվածում։ «Դասալիքն» («Փախստականը») պոեմի թարգմանության առթիվ արևմտահայ նշանավոր հրապարակախոս-քննադատ Արփիար Արփիարյանը 1887 թ. մի ամբողջ հոդվածաշար գրեց Լերմոնտովի մասին։ «Օտար բանաստեղծներեն ամենեն ավելի մեզ ընտանի պետք էր եղած լիներ Կովկասու երգիչը»,— գրել է Արփիարյանը Լերմոնտովի մասին, նշելով նաև, որ «նորա արձանի վրա ամենեն փառավոր պսակներեն մին կը դնեին հայք»։

Երբ մեր դարի սկզբին ռուս գրականագետ Յու. Վեսելովսկին դիմեց հայ հեղինակներին այն հարցով, թե ո՞ր ռուս գրողներն են ազդել նրանց վրա, ստացված պատասխանների մեջ ամենից շատ թերևս Լերմոնտովի անունն էր հիշատակվում։ Նրա պոեզիայի հմայքի և ազդեցության մասին գրում էին Շահազիզն ու Հովհաննիսյանը, Սատուրյանն ու Լ. Մանվելյանը, Թումանյանը, Իսահակյանը և ուրիշներ։

«Ռուս բանաստեղծներից ես առանձին ջերմությամբ սիրեցի Լերմոնտովին... Իմ համեստ քնարը միշտ ակնածանքով և սրբազան թրթիռով է նայել այդ վեհորեն թախծոտ, բանաստեղծական կերպարին»,— գրում էր Ալեքսանդր Սատուրյանը։ Այդ մշտական սիրո և ակնածանքի արտահայտությունն էր այն մի քանի տասնյակ լերմոնտովյան բանաստեղծությունների թարգմանությունը, որ կատարել է Սատուրյանը։ Նա հայ ընթերցողին ներկայացրել է Լերմոնտովի նշանավոր քնարական գործերից շատերը (այդ թվում՝ «Հրեշտակ», «Առագաստ», «Մարգարեն», «Պաղեստինի ճամբա», «Ժայռ», «Տխուր եմ, տրտում...»)։

Բազմազան ու խորն են եղել Հովհաննես Թումանյանի ստեղծագործական կապերը Լերմոնտովի հետ։ Սկսած այն պահից, երբ Ներսիսյան դպրոցի 15-ամյա աշակերտի՝ ընդամենը երեք գրքից բաղկացած գրադարանում երևաց ռուս պոետի երկերի ժողովածուն, և այնուհետև մինչև մահ, Լերմոնտովը Թումանյանի համար մշտապես մնաց իբրև հարազատ անուն, առաջին սիրո նման հրապուրիչ և անկրկնելի։ Որոշակի են լերմոնտովյան որոշ թեմաների ու պատկերների արձագանքները նրա վաղ շրջանի երկերում։ Դա մեխանիկական փոխառում չէր, այլ հետևանք այն բանի, որ եղել է մի ժամանակ, երբ, ինչպես Թումանյանն ինքն էր ասում, նա կյանքում ունեցել է «բայրոնա-լերմոնտովյան» հոգեվիճակ։ «Ռուս բանաստեղծներից ամենից շատ ինձ վրա ազդել է Լերմոնտովը, ապա Պուշկինը»,— գրել է Թումանյանը 1902 թ.։ Այդ ազդեցության արտահայտությունն է, օրինակ, վաղ շրջանի գործերից «Մերժած օրենք» պոեմը, որը գրված է «Մծիրիի» ուժեղ տպավորության տակ։ Բայց ամենից կարևորն այն է, որ ինչպես վկայել է Թումանյանը, Պուշկինն ու Լերմոնտովն իրենց կովկասյան պոեմներով ու բանաստեղծություններով ասես արթնացրին հայ բանաստեղծի սեփական ուժերը, օգնեցին նրան գտնելու պոեմի այն ձևը, որով նա պիտի կերտեր իր անմահ գործերը։

Թումանյանը թարգմանել է Լերմոնտովի մի քանի բանաստեղծություն և «Մծիրի» պոեմը, որն առանձին գրքով լույս տեսավ 1896 թ.։ Դա հայ թարգմանական գրականության բարձր նվաճումներից է, բնագրի ներքին ոգին խորապես կռահելու և պատկերների համակարգը հարազատորեն վերարտադրելու հիանալի օրինակ։ Թումանյանի գրչին է պատկանում նաև հայ իրականության մեջ Լերմոնտովի մասին գրված ամենախոր և ոգեշունչ հոդվածներից մեկը, որը լույս տեսավ 1914 թ., բանաստեղծի ծննդյան 100-ամյակի առթիվ։ «Կովկասի մեծ որդեգիրը»,— այսպես է վերնագրված այդ հոդվածը։ Խոսելով Պուշկինի և Լերմոնտովի մասին, Թումանյանը ցույց էր տալիս «պաշտոնական Ռուսաստանի» հետ նրանց բախման, նրանց կրած հալածանքների իրական հիմքը՝ ժողովրդային և ազատասեր ոգին, որը չէր կարող հաշտվել բռնության և ստրկության հետ։ «Լերմոնտովը,— գրել է Թումանյանը,— ծնվեց հրեղեն ու վերասլաց մի հոգով, որ դեռ մանկուց չնաշխարհիկն էր որոնում հարյուր տարի առաջ եղած Ռուսաստանի միջավայրում, չինովնիկական մունդիրի մեջ ամուր սեղմված ու շորացած մի կյանքում...»։ Ռուս բանաստեղծների կովկասյան երգերի մեջ Թումանյանը տեսնում է իրականությունից նրանց խոր դժգոհության և տեղական ժողովուրդների նկատմամբ ցուցաբերած հետաքրքրության ու համակրանքի արտահայտությունը։ Այդ պատճառով էլ, ասում է Թումանյանը, հանձին Լերմոնտովի մենք մեծարում ենք «մի բանաստեղծի, որ հոգով հարազատ է մեզ, որ մեր ընդհանուր մոր — Կովկասի անմոռանալի որդեգիրն է, որ դեռ մանուկ օրից երկինքն ու Կովկասի կապույտ սարերը միասին է երազել»։

Լերմոնտովը եղել է նաև Ավետիք Իսահակյանի խոհերի ու ապրումների մշտական ուղեկիցը։ «Ես չեմ կարող չխոստովանել,— գրում էր նա Յու. Վեսելովսկուն,— որ դեռ մանկական տարիներից իմ սիրած բանաս-

տեղծն էր Կազբեկի նման վեհ և Դարյալի նման խոր Լերմոնտովը, որի ստեղծագործությամբ ես հաճախ ոգեշնչվել եմ...»։ Սա Լերմոնտովի ամենադիպուկ-պատկերավոր բնութագրումներից մեկն է, որ երբևէ տրվել է նրան։ Իսկ կես դար անց Իսահակյանը, Ն. Ս. Տիխոնովի վկայությամբ, ասում էր. «Ես չեմ կարող առանց արցունքի հիշել Լերմոնտովի անունը, մի մարդու, որը քսանհինգ տարեկան հասակում դարձավ համաշխարհային պոետ»։ Իսահակյանի կերտած բանաստեղծական աշխարհում մենք հստակորեն նկատում ենք նաև «Լերմոնտովյան տարրեր», վերագտնված և իմաստավորված հայ բանաստեղծի ինքնատիպ հայացքով (հիշենք, օրինակ, հայ պոետի բազմակի դիմումները Լերմոնտովի «Երազ» բանաստեղծության մոտիվներին)։ Լերմոնտովի, ինչպես նաև Հայնեի ու Բայրոնի «արձագանքները» երևան են եկել հատկապես այն ժամանակ, երբ Իսահակյանը գրել է դաժան շրջապատից հիասթափված ու փոթորկված հոգեվիճակի, անհատի մենակության մասին և կամ մեծ սիրուց ծնված ատելության խոսքեր է նետել հասարակության երեսին։ Այդ դեպքերում նա հանդես էր գալիս իբրև անցյալի առաջավոր ռոմանտիզմի լավագույն ավանդների ժառանգորդ ու շարունակող։

Լերմոնտովի նկատմամբ ստեղծագործական ակտիվ հետաքրքրություն է ցուցաբերել Վահան Տերյանը։ Նրա նախաձեռնությամբ՝ Լերմոնտովի ծննդյան 100-ամյակի առթիվ գործնական քայլեր են արվել նրա երկերի ժողովածուն հայերեն հրատարակելու համար, բայց այդ ծրագիրը չի իրագործվել վերահաս համաշխարհային պատերազմի պատճառով։ «Երկիր Նաիրի» հայրենասիրական բանաստեղծությունների շարքի համար իբրև բնաբան Տերյանն ընտրել է Լերմոնտովի «Հայրենիք» բանաստեղծության առաջին տողը («люблю отчизну я, но странною любовью»), որը որոշ իմաստով բանալի է այդ շարքը հասկանալու համար։ Տերյանն ընդգծել է հայրենասիրության իր ըմբռնման հոգեհարազատությունը Լերմոնտովյան ըմբռնման հետ։ Դա նույնպես «տարօրինակ սեր» է, որովհետև ինքը ոչ թե տարված է հայրենիքի «խնդուն փառքի անցյալ ու հին փայլով», այլ հարազատ ժողովրդի վշտաբեր ներկայով և ապագայի սպասումներով։ Բանաստեղծը սիրում է իր երկրի ու ժողովրդի «հեզ, անքեն հոգին», «երգերը մեզմ ու բեկբեկ», վերջապես՝ «զանգակների զանգը տխուր և խուղերի լույսերն աղոտ» (մի պատկեր, որն ուղղակի հիշեցնում է Լերմոնտովի բանաստեղծության խոսքերը՝ «տխուր գյուղերի դողդողացող լույսերը»)։

Շատ փաստեր կարելի է բերել նաև այն մասին, թե սովետական տարիներին հայ գրականության գործիչներն ինչպիսի սիրով են վերաբերվել Լերմոնտովին, ինչքան շատ բան են արել նրա ժառանգությունը մատչելիանացնելու համար։ Սովետահայ գրեթե բոլոր ականավոր բանաստեղծները յուրովսանն մասնակցել են այդ շնորհակալ գործին։ Հայերեն թարգմանվել են Լերմոնտովի չափածո, արձակ և թատերգական հիմնական երկերը, ընդ որում դրանցից շատերը՝ մի քանի անգամ։ Լույս են տեսել նրա ստեղծագործություններն առանձին հրատարակություններով և երկերի ժողովածուները երկու և երեք հատորով, բանաստեղծի մասին գրվել են գրքեր ու բազմաթիվ հոդվածներ պարբերական մամուլում։ Լերմոնտովի կերպարը

ոգեշնչել է հայ գրողներին, որոնք նրա մասին մի շարք գեղարվեստական գործեր են ստեղծել։

Մի առանձին և մեծ թեմա է հայ գեղարվեստի մյուս բնագավառներում Լերմոնտովի երկերի թողած հետքերի լուսաբանությունը։ Չէ՞ որ հայկական թատրոնը առաջիններից էր, որն իրագործեց «Դիմակահանդեսի» բեմական մարմնավորման բարդ և դժվարին խնդիրը դեռ անցյալ դարի 80-ական թվականներին։ Այդ բեմականացման պատմությունը բացվում է մեծ ողբերգակ Պետրոս Ադամյանի անվամբ, որն Անդրկովկասի և Ռուսաստանի շատ քաղաքների բեմահարթակներում ցուցադրել է Արբենինի տառապանքն ու ողբերգությունը, հիացմունք պատճառել բազմազգ հանդիսականին։ Ժամանակի ռուսական թերթերն ու թատերական գործիչները նրա խաղը գերադասել են Արբենինի դերում անուն հանած ուրիշ արտիստների խաղից։ «Դիմակահանդեսի» բեմական պատմության մեջ հետագա տարիներին իրենց փայլուն ավանդը մտցրին Վահրամ Փափազյանը, Վաղարշ Վաղարշյանը, Հրաչյա Ներսիսյանը և սովետահայ թատրոնի ուրիշ նշանավոր գործիչներ։

Իսկ հայ կերպարվե՞ստը։ Այստեղ ևս Լերմոնտովը ոգեշնչման աղբյուր է եղել։ Հովհաննես Այվազովսկին «Թամարա» ավանդության հիման վրա ստեղծել է իր նույնանուն նկարը՝ Դարյալի անգնդախոր կիրճի և բուռն Թերեքի գեղեցիկ պատկերը։ Գևորգ Բաշինջաղյանը հայնեական-լերմոնտովյան «Եղևնուց» ներշնչված՝ կերտել է «Վայրի հյուսիսում...» բանկարը, որի մեջ զգում ես և՛ հյուսիսի շունչը, և՛ մենակության տառապանքը։ Վարդգես Սուրենյանցը նկարել է Պեչորինի և իշխանադուստր Մերիի պատկերները, նկարազարդել է «Աշուղ Ղարիբ» հեքիաթը, ձևավորել «Դև» օպերայի բեմադրությունը Պետերբուրգում։ Մարտիրոս Սարյանն ստեղծել է «Բաստունջի աուլ» բանկարը՝ Լերմոնտովի համանուն պոեմի թեմայով։

Երաժշտական արվեստի մեջ պետք է նշել Ալեքսանդր Սպենդիարյանի «Երեք արմավենի» սիմֆոնիկ պոեմը, որն անկրկնելի հարազատությամբ հնչյունների լեզվով վերարտադրում է Լերմոնտովի բանաստեղծության հուզական բովանդակությունն ու ներքին ռիթմը, կործանված գեղեցկության թախիծը։ Իսկ «Դիմակահանդեսի» բեմադրության համար Արամ Խաչատրյանի գրած սքանչելի երաժշտությունն օգնում է ավելի խոր հասկանալու ստեղծագործության լարված տրագիզմը, տագնապի և խորհրդավորության մթնոլորտը։ Ա. Խաչատրյանի տարբեր երկերի հիման վրա եռմահու ստեղծված «Դիմակահանդես» բալետն արդեն մի քանի անգամ բեմ է բարձրացել, և ապագայում, անշուշտ, նրան սպասում է երկարատև կյանք։

Այսպես, ամենուր զգում ես Լերմոնտովի ներկայությունը, նրա պոեզիայի հզոր և մաքուր շունչը։ Լերմոնտովի երկերի հայերեն այս՝ նոր ժողովածուն այդ չմուլացող սիրո և հետաքրքրության նոր արտահայտությունն է։

Է. ՋՐԲԱՇԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ
1837—1841

1837

ՊՈԵՏԻ ՄԱՀԸ

Ընկավ պոետը—պատվի ջատագով,
Ամբաստանության զոհ հանմեղապարտ,
Խոցված կուրծքը լի վրեժի տենչով
Ու խոնարհելով գլուխը հպարտ...
Էլ չհանդուրժեց պոետի հոգին
Լուտանքը ստոր, բամբասանքը գարշ,
Ըմբոստ դեմ ելավ զրպարտանքներին
Եվ ընկավ որպես մի զոհ աղեխարշ։
Ընկավ... էլ ինչո՞ւ իզուր հեկեկալ,
Տարափներ թափել դատարկ գովեստի,
Ջղման եղկելի խոսքեր քրթմնչալ,
Երբ կատարվել է վճիռը բախտի։
Դուք չէի՞ք հապա, որ այնքան երկար
Վանեցիք նրա քանքարը գերող,
Եվ ձեր նողկալի հրճվանքի համար
Հրահրում էիք հրդեհը մարող։
Դեհ, էլ ի՞նչ արած... հրճվեցե՛ք հիմա,
Նա չդիմացավ տանջանքին մաշող,
Ջահի պես մարեց հանճարը անմահ,
Թոշնեց պսակը այն արևաշող։
Բիրտ մարդասպանը սառնասրտորեն
Ուղղեց հարվածը, չկա փրկություն։
Ու ոչինչ, ոչինչ չհուզեց իրեն,
Ջղողաց անգամ ղենքը իր ձեռքում։

Եվ էլ ի՞նչ զարմանք... հեռավոր երկրից
Նա, շատերի պես մի փախստական,
Եկել է կամքով ճակատագրի,
Որ այստեղ որսա փառք ու աստիճան։

Հանդուգն ծաղրով նա երկար, երկար
Քամահրեց լեզուն ու բարքերն օտար
Ու չխնայեց մեր փառքը պայծառ։
Արնոտ այս ժամին չէր էլ ըմբռնում,
Թե ինչի դեմ էր ձեռքը բարձրացնում...

Ընկավ պոետը, մտավ գերեզման,
Անհայտ, բայց սիրված այն երգչի նման,
Որը դարձել էր խուլ խանդի ավար,
Երգվել տողերում նրա հրավառ,
Խոցվել նրա պես, հարվածով դաժան։
Ինչո՞ւ խաղաղ գրգանքներից, երազանքից գեղահրաշ
Նա ոսոք դրեց այս աշխարհը նախանձոտ ու ապառաժ,
Մի՞թե ապատ պիտի հնչեր խոսքը նրա զմայլիչ։
Ինչո՞ւ, ինչո՞ւ նա ձեռք տվեց գծուծներին զրպարտիչ
Ու հավատաց կեղծ խոսքերին, շոյանքներին թունալից,
Նա, որ մարդկանց ըմբռնել էր դեռ մանկության օրերից։
Պսակազերծ արին նրան, գլխին պսակ դրին նոր,
Որ հյուսված էր գափնիներից և փշերից բյուրավոր,
Եվ փշերը դառնագին
Վեհ ճակատը խոցեցին։
Նրա վերջին վայրկյանները թունավորված են այսօր
Խենթ ու խարդախ տգետների փսփսոցով նենգավոր,
Եվ նա մեռավ վրիժառման հուր ծարավով տոչորված,
Սրտնեղելով տարավ իր հետ երազները խորտակված։

Լռեց երգերի ձայնը մոգական,
Այլևս երբեք նորից չի հնչի։
Շուրթերը նրա փակ են հավիտյան,
Լուռ է և անձուկ օթևանն երգչի։
Իսկ դուք, սինլքոր ու ամբարտավան, անարգ սերունդներ
Ստոր գործերով հայտնի հայրերի,

Որ տրորել եք ձեր եղեռնական գարշապարի տակ
Այն բեկորները զրկված տոհմերի,
Դուք, ագահ խմբով գահույքին կառչած դաժա՛ն դահիճներ
Փառքի, հանճարի և ազատության,
Պատսպարվել եք ձեզ հովանավոր օրենքի ներքո,
Ձեզ համար ի՞նչ դատ և ի՞նչ դատաստան...
Բայց, աջակիցներ անառակության, կա՛ մի դատ վերին,
Կա՛ ահեղ մի դատ, նա կգա՛, կգա՛,
Անողոք այն դատն անմատչելի է ոսկու հնչյունին,
Եվ մտքի, գործի կանխատես վկա։
Այնժամ ձեր թունոտ, չարանենգ լեզուն առմիշտ կգոցվի,
Բանսարկությունը կլռի իսպառ,
Եվ դուք ձեր ամբողջ սև արյունով է՛լ չեք հատուցանի
Ջոհված պոետի արյունը արդար։

ԲՈՐՈԴԻՆՈ

«Ասա՛, քեռի՝ էդ ո՞նց եղավ, ախար,
Ֆրանսիացուն տվինք՝ հրին ավար,
Հրդեհ տված Մոսկվան.
Չէ՞ որ տուրուդմփոց եղավ այնտեղ,
Եվ դեռ ասում են՝ ի՞նչ արյունահեղ,
Ախար՝ հիշում է Ռուսիան ողջ՝ ահեղ
Մարտը բորոդինյան»։

— Այո, կայի՛ն մարդիկ մեր ժամանակ,
Բոգատիրնե՛ր, այլ ոչ ձեզ նմանակ,
Դուք էն ցեղիցը չե՛ք։
Բախտը եղավ նրանց համար դաժան,
Քչերն արյան դաշտից վերադարձան...
Եթե չլիներ այդ երկնքի հրամանը,
Մոսկվան չէինք տա մենք։

Նահանջեցինք երդվար, չէինք խոսում։
Հաճելի չէր, կռիվ էինք ուզում։
Մերերն ասին խռով.

«Ի՞նչ է։ Ձմեռանոց հո չե՞ն տանում,
Կոմանդիրները, ի՞նչ, սիրտ չե՞ն անում
Պատառոտել մունդիրը թշնամու՝
Ռուսաց սվիններով»։

Եվ ահա լայն մի դաշտ բացվեց մեր դեմ։
Ազատ զբոսնելու տեղ կար արդեն։
Բեդուտ ենք ամրացնում։
Մերոնք իրենց աչքերը չորս արին։
Հազիվ արևն առավ մեր թոփերին
Եվ անտառի կապույտ կատարներին,—
Տեսանք ֆրանսիացուն։

Ես թոփը լիք լցրի միանգամից,
Ասի. հյուրասիրե՛մ բարեկամիս։
Սպասի՛ր, մուսյո-եղբայր։
Խաղի տեղ չէ՛. շնորհ արա, կռվենք,
Պատնեշի պես կգանք, որ ձեզ ճզմենք,
Մեր սեփական գլխով կանգնած ենք մենք
Հայրենիքի համար։

Մեկ-երկու օր կրակեցինք իրար։
Բայց այդ պարապ խաղից օգուտ չկա՛ր։
Անգործ ենք երրորդ օր։
Ամեն կողմից տղերք պահանջեցին.
«Հասել է ժամը, զո՛ռ տալ կարտեչին»։
Եվ ահավոր, արնոտ կռվի դաշտին
Իջավ գիշերը խոր։

Ես մրափում եմ քիչ՝ լաֆետի մոտ
Ու պարզ լսում, ինչպես մինչ առավոտ
Հրճվում են ֆրանսիացիք։
Բայց լուռ է մեր բանակատեղը բաց,
Մեկը մաքրում է իր փեղուլրը թաց,
Մեկը սվին սրում ու բարկացած
Կրծում է բեղը ձիգ։

Եվ հենց երկինքը որ լուսավորվեց,
Ամեն ինչ աղմուկով մեկեն շարժվեց,
Շողաց շարքի հետ շարք։
Ճարպիկ էր շատ մեր գնդապետը հին,
Ցարին ծառա ու հայր էր զինվորին,
Հազար ափսոս, նա զոհ գնաց սրին,
Ննջում է հողի տակ։

Եվ նա գոչեց՝ փայլակը աչքերում.
«Տղերք, Մոսկվան է, չէ՞, մեր ետևում,
Մեռնե՛նք նրա տակին,
Ինչպես մեր եղբայրները քաջ՝ մեռան»։
Մենք մեռնելու խոստում տվինք նրան,
Ու պահեցինք երդումը սրբազան
Բորոդինյան մարտին։

Ա՜յ, օր էր, հա՜։ Դխում քամահալած
Գալիս է ֆրանսիացին՝ սև ամպ կապած
Ընդդեմ մեր ամրոցին։
Ուլանները նախշուն նշաններով,
Դրագունները ձիու պոչիկներով,
Մեր առջևից անցան փայլակելով,
Այնտեղ կուտակվեցին։

Ո՜չ, չե՛ք տեսել մարտեր գուք այդքան տաք,
Դրոշներն էին անցնում ոնց որ շվաք,
Ծխի մեջ բոց էր, տոթ։
Թուրն էր զնգում, կարտեչը կազկանձում,
Մերոնց բազուկը խոցելուց հոգնում,
Արկի ահեղ թռիչքի դեմ փակում
Դիերի լեռն արնոտ։

Այդ օր, տեսավ ոսոխն իր աչքերով,
Թե ի՜նչ ասել է ռուսական գրոհ,
Բռնցքամարտը մեր։
Տնքում էր հողը մեր կրծքերի պես,

Մարդիկ, ձիեր մի կույտ էին դարձել,
Թեժ համազարկը արկերի՝ կարծես
Երկար ոռնոց լիներ։

Ու հանդարտվեց։ Բոլորս էինք պատրաստ
Առավոտյան սկսելու նոր մարտ,
Մինչ վե՛րջը դիմադրել։
Ահա մեր թմբուկները թնդացին,
Անօրեններն ահա նահանջեցին,
Մերոնք վերքերն համբել սկսեցին,
Ընկերներին համբել։

Այո, մեր ժամանակ մարդիկ կային,
Ո՜չ ինչպես դուք, զորեղ ու քաջ էին,
Դուք էն ցեղիցը չեք։
Բախտը եղավ նրանց համար դաժան,
Քչերն արյան դաշտից վերադարձան,
Եթե չըլներ այդ աստծու հրաման,
Մոսկվան չէինք տա մենք։

ՊԱՂԵՍՏԻՆԻ ՈՍՏԸ

Պաղեստինի՛ ո՞ստ, ասա՛ ինձ գու,
Որտե՞ղ ես աճել, ծագիկ արդյոք.
Ո՞ր բլուրներն ու հովիտն հեռու
Զուգել ես կանաչ քո սաղարթով։

Ջինջ Հորդանանի ափերի մոտ
Քեզ արևելքի շո՞ղն է շոյել,
Թե՞ Լիբանանի երկրում լեռնոտ
Գիշերվա հողմն է քեզ օրորել։

Աղոթո՞ւմ էին թախանձանքով,
Թե՞ երգեր երգում հնամենի,
Երբ հյուսում էին սաղարթը քո
Ճգքատ գավակները Սազեմի։

Եվ արմավենին մնո՞ւմ է դեռ,
Որն անապատում, շոգին կիզող,
Փարթամ կատարով լայնատերև
Կանչում էր մարդուն գիրկը իր զով։

Թե՞ անմխիթար անջատման մեջ
Արդեն թոշնել է քեզ պես և՛ նա.
Ու լոկ փոշին է նստում անվերջ
Իր տերևներին չոր ու դեղնած։

Ասա՛ ինձ. ձեռքով աստվածավախ
Քեզ այս երկիրը ո՞վ է բերել.
Նա արտասվե՞լ է վրադ հաճախ,
Այրող հետքերը մնո՞ւմ են դեռ։

Թե՞ նա, բարձրյալի զինվորն ընտիր,
Ուներ մի ճակատ անամպ ու վեհ,
Որ արժանի էր լույս երկնքին
Աստծո ու մարդու առջև՝ քեզ պես։

Սրբապատկերի դեմ ոսկեձույլ,
Պահպանված սիրով ու գաղտնաբար,
Երուսաղեմցի՛, կանգնած ես դու,
Իբրև սրբության մի ժամապահ։

Վճիտ մթնշա՛ղ, լո՛ւյս կանթեղի,
Խաչ ու տապանա՛կ, սուրբ խորհուրդնե՛ր...
Խաղաղությամբ ու խինդով է լի
Ամե՛ն ինչ՝ շուրջդ ու քեզնից վեր։

ԿԱԼԱՆԱՎՈՐԸ

Բացե՛ք դռներն իմ զնդանի,
Ցվե՛ք ինձ լույս ցերեկվա,
Սեաչյա կույս մի գեղանի
Եվ նժույգ մի սևաթաշ։

Գեղեցկուհուն, նախ, դեռատի
Կհամբուրեմ տիրակեզ,
Ապա թռած իմ նժույգին
Դաշտ կսուրամ հողմի պես։

Պատուհանը բարձր է, սակայն,
Ծանր դռան կա կողպեք.
Շատ հեռու է իմ սևաչյան
Ապարանքում իր շքեղ.
Նժույգն ազնիվ դաշտում կանաչ
Անսանձ, մենակ, իր կամքին
Սլանում է կայտառուն, ուրախ՝
Պոչն իր տված զով սյուքին...

Մենակ եմ ես, անմխիթար.
Մերկ պատեր են չորսբոլոր.
Առկայծում է ազոտաբար
Ճրագն արդեն մարմրող.
Լսվում է լոկ դռան եռև,
Անարձագանք, համաքայլ,
Գիշերային անդորրի մեջ
Շրջում է մի ժամապահ։

ՀԱՐԵՎԱՆ

Ով էլ որ լինես դու, իմ տխո՛ւր հարևան,
Սիրում եմ մանկության բարեկամի նման
Քեզ, իմ բախտի ընկեր պատահմունքով,
Թեև ճակատագրի խաղերով չարաճենգ
Մենք իրարից հավետ բաժանված կլինենք՝
Այժմ պատով, խակ հետո գաղտնիքով։

Երբ որ մթնշաղի կիսալույսը բոսոր
Բանտի պատուհանից, մարմրելով անշող,
Հղում է ինձ ողջույնն իր հրաժեշտի.
Եվ ժամապահը մեր հրացանին հենված,

Իր վաղեմի կյանքի երազներին տրված,
Ոտքի վրա ննջում է լուռ, հանգիստ.

Այնժամ, ճակատը իմ հակած խոնավ պատին,
Ունկնդրում եմ — և խուլ անդորրի մեջ բանտի
Երգիդ մեղեդիներն են մեղմ լսվում։
Ինչի՞ մասին են, այդ ես չգիտեմ, միայն
Հնչյունները նրանց թախծալի՝ միալաբ
Արցունքի պես հոսում են ու հոսում։

Ե՛վ հույսերն ու սերը անցած տարիներիս
Հառնում են իմ կրծքում, փոթորկում են նորից,
Ե՛վ մաքերս են թռչում հեռո՜ւ, հեռո՜ւ,
Ե՛վ հոգիս է լցվում կրքով ու ցանկությամբ,
Ե՛վ արյունս է եռում, և արցունքներս են տաք
Հնչյուններիդ նման հոսում անդուլ։

• • •

Երբ ոսկեշաղ արտն է անրջծրոր ծփում,
Զովաշունչ անտառն է շրշում հովի հեքով,
Եվ այգում թաքչում է սալորը մորեգույն
Կանաչ տերևների գողտր հովանու ներքո։

Երբ հոտեան ցողով շաղված՝ թփի տակից,
Ոսկի արշալույսին, մայրամուտին բոսոր,
Արծաթափայլ քնքուշ հովտաշուշանն է ինձ
Ողջունում սիրալիր գլխիկն օրորելով.

Երբ ձորում սառնորակ աղբյուրն է խոխոջում,
Աղոտ մի երազով պարուրելով հոգիս,
Խորհրդավոր ինչ-որ պատմություն քչփչում
Ճանապարհին թողած խաղաղ երկրի մասին,—

Տագնապներից սիրտս հանդարտվում է այնժամ,
Հարթվում են ճակատիս կնճիռները խսկույն.
Ե՛վ հասու եմ դառնում երկրի երջանկության,
Ե՛վ երկնքում տեսնում եմ աստծուն...

ԱՂՈԹՔ

Ո՞վ սուրբ աստվածամայր, այժմ այս աղոթքով
Քո պատկերի առաջ, պայծառափայլ, անեղծ,
Իմ փրկության համար չէ, որ դիմում եմ քեզ,
Շնորհակալությամբ կամ ապաշխարանքով,

Ո՛չ թե աղերսում եմ ունայն հոգուս համար,
Երկրում հայրենամերժ հալածական հոգուս,
Այլ ուզում եմ հանձնել անմեղունակ մի կույս
Հովանավորուհուդ գթոտ հոգածության։

Շրջապատի՛ր արդար հոգին երջանկությամբ
Եվ տո՛ւր ուղեկիցներ, համակ ուշադրություն,
Ջահելություն պայծառ ու հանգիստ ծերություն,
Անչար ու հեզ սրտին վառ հույսերի աշխարհ։

Տխուր հրաժեշտի ժամն էլ երբ մոտենա,
Խաղաղ գիշեր լինի, թե ցերեկ աղմկոտ,
Ընտիր հրեշտակիդ առաքի՛ր մահճի մոտ
Հրաշագեղ հոգին ընդունելու համար։

• • •

Մենք բաժանվեցինք բայց նկարը քո
Ես մինչև հիմա կրծքիս եմ կրում.
Իմ հոգին նա է լցնում բերկրանքով՝
Լավ տարիներիս այդ դալուկ ուրուն։

Նրան չսիրել չեմ կարողանում՝
Ես նոր կրքերից գերված ու սաստված։
Լքված տաճարն է այսպես սուրբ մնում,
Տապալված կուռքը՝ վերստին աստված։

• • •

Ո՛չ, չեմ ցանկանում աշխարհին հայտնել
Ես պատմությունը իմ խորհրդավոր.
Ինչպես եմ սիրել, ինչից եմ տանջվել.
Աստված ու խիղճս են միայն դատավոր...

Սիրտս իր հաշիվը նրանց պիտի տա,
Նրանցից էլ լոկ կարեկցանք հայցի.
Եվ թող ինձ միայն դատապարտի նա,
Ով ստեղծել է տանջանքներն անձիս։

Լուտանքները բիրտ, անհոգի մարդկանց
Ձեն վշտացնի վսեմ, վեհ հոգուն.
Որքան էլ ոռնա ծովը մոլագար,
Գրանիտ-ժայռը կմնա կանգուն։

Ամպերի մեջ է ճակատը հպարտ
Զույգ տարերքների մռայլ բնակչի,
Եվ փոթորկից ու ամպրոպից բացի,
Ոչ ոքի խոհեր չի վստահի նա։

• • •

Ոչ ոք չի լսի խոսքերն իմ, գիտեմ... Միայնակ եմ ես։
Հանգչում է օրը... զարդարված կարմիր, վառ երանգներով,
Ամպերն են թեքվել դեպի արևմուտք, բուխարին այնպես
Ճարճատում է թեժ։ Ու ես լեցուն եմ անրջանքներով
Գալիք օրերի... Եվ իմ օրերը խառնիխուռ շարքով
Անցնում են ահա աչքիս առջևով այնպես միալար,
Ու ես իզուր եմ փնտրում նրանց մեջ շփոթ հայացքով
Գեթ մի օր, մի օր, որ վրան բախտի կնիքն ունենար։

• • •

Դու մի՛ ծիծաղիր իմ թախծի վրա մարգարեական,
Օ՜, ես գիտեի, բախտի հարվածն ինձ շնորհ չի անի,
Օ՜, ես գիտեի, գլուխն իմ, որ դու սիրել ես այնքան,
Կրծքիդ վրայից կսահի կրծքին կառափնարանի։
Ասում էի քեզ՝ երջանկությունն ու փառքն իմ երազած
Ձեմ գտնի բնավ, ու կգա մի օր ժամն այն արնամած,
Ու ես վայր կընկնեմ, և թշնամական դավը խորամանկ
Սևացնի պիտի հանճարն իմ, որ դեռ չի ծաղկել լրիվ,
Կընկնեմ, չի մնա հետք ու հիշատակ

Իմ տանջանքներից ու իմ հույսերից,
Բայց ես անահ եմ սպասում մահին իմ անժամանակ։
Վաղուց է հասել ժամն այն, որ տեսնեմ ես աշխարհ մի նորը,
Ու թող ամբոխը անի ոտնատակ
Պսակն իմ փշոտ, պսակը երգչի...
Թո՛ղ, նա ինձ համար բնավ էլ թանկ չի։

. . . . . .

• • •

Հարավի այս տաք, օտար եզերքից
Հյուսիս մեկնելիս, խոնարհված քո դեմ,
Քե՛զ, Արևելքի պահակ Կապբեկի՛ն,
Ես բերել եմ իմ ողջո՛ւյնը նժդեհ։

Զյունը չալմա՛ է դարեր փաթաթում
Կնճռոտ ճակատին քո ծերունական,
Եվ չի՛ վրդովում տրտունջը մարդու
Հպարտ անդո՛րը քո հավերժական։

Բայց աղոթքը քո խոնարհ ծառայի
Թող տանե՛ն լանջիդ ժայռերն առնական,
Դեպի եզերքնե՛րն անդրաստղային,
Դեպի Ալլահի գա՛հն հավերժական։

Աղոթում եմ, որ զով ցերեկ իջնի,
Տոթ հովիտներին ու ճանապարհին,
Եվ անապատում տրտում ու դժնի,
Ես հանգստանամ՝ նստած չոր քարին։

Աղոթում եմ, որ բուքը լեռնային
Ձթնդա հանկարծ՝ ռազմի քուրքն ուսին,
Եվ անդնդախոր ձորում Դարյալի
Ձխեղդվե՛նք ես ու հոգնատանջ իմ ձին։

Մի ցանկություն՞ էլ ունեմ ես խորին...
Բայց ասե՞մ արդյոք... վա՞խ կա իմ հոգում.—
Իսկ եթե հանկարծ աքսորման օրից
Մոռացվա՞ծ եմ ես իմ հայրենիքում...

Կգտնե՞մ այնտեղ գրկա՞նքը նախկին
Եվ ողջույններ ու սերը հոգեթով,—
Կճանաչե՞ն իմ ընկերները հին
Ի՞նձ, տառապյալի՞ս, տարիներ հետո։

Թե՞ հանգրվանում ցուրտ շիրիմների,
Ես ոտք կդնեմ և շիրմի՞ն անգին,
Աղնիվ, բարի իմ ընկերների՝
Ուղեկիցների՞ իմ ջահել կյանքի։

Եթե այդպե՞ս է՝ բուքով մոլեգին
Թաղի՞ր ինձ, Կազբե՞կ, օտար այս հողում,
Եվ առանց գութի ու ափսոսանքի,
Ցրի՞ր իմ անտեր աճյունն այս ձորում։

1837—1838

ԴԱՀՈՒՅՆԸ

Սիրում եմ քեզ, պողպատե իմ դաշույն,
Ընկեր իմ շողափայլ և սառ.
Վրեժի համար կոփեց քեզ վրացին խոհուն,
Սրեց չերքեզն ազատ՝ ահեղ մարտի համար։

Շուշանակերպ մի ձեռք քեզ ինձ ընծա բերեց,
Նշան հիշատակի՝ անջատումի պահին,
Քեզ առաջին անգամ՝ արյուն չէր, որ թրջեց,
Այլ տանջանքի արցունք-մարգարիտներն էին։

Եվ սև աչքերը իր՝ վրաս սևեռելով,
Խորհրդավոր էին ու թախիծով լցված,
Ինչպես պողպատը քո թրթռուն կրակի քով՝
Մերթ աղոտում էին, մերթ շողշողում հանկարծ...

Իբր ուղեկից տրված, սիրո նշան ես լուռ,
Եվ անօգուտ չես դու թափառողիս համար,
Այո, չեմ փոխվի ես, կլինեմ հոգով ամուր,
Քեզ պես, քեզ պես, իմ լավ, երկաթեղեն եղբայր։

• • •

Ես երկյուղո՞վ եմ նայում գալիքին,
Ես ձանձրույթո՞վ եմ անցյալին նայում,
Եվ շուրջը փնտրում մտերիմ մեկին,
Ոնց հանցապարտը՝ կատափնարանում։
Կերևա՞ արդյոք բանբերը փրկիչ,
Որ ինձ վերծանի իմաստն այս կյանքի,—
Իմաստը հույսի՞, տենչի՞, կրքերի՞.
Գուշակի, թե տերև ի՞նչ է ինձ պահել,

Ինչո՞ւ է այդպես նա հակաճառել։
Իմ պատանության պայծառ հույսերին։

Ես հողին տվի տուրքը նրա սև
Բարո՛ւ և չարի՛, սիրո՛ և հույսի՛,
Պատրաստ եմ ուրի՞շ մի կյանք սկսել
Եվ սպասում եմ՝ ժա՛մն է օրհասի...
Ժառանգ չե՞մ թողնում ես այս աշխարհում.
Ցրտո՛ւմն է թաղված ու սև խավարո՛ւմ,
Իմ հոգնատանջ ու մենավոր հոգին։
Խակ պտուղի պես, կախված չոր ճյուղքից,
Նա կո՞ւշ է եկել օրհասի բքից
Եվ թառամե՛լ է կյանքի բարկ շոգին։

• • •

Հենց լսում եմ թռվիչ
Ձայնդ զվարթ-զնգուն,
Թպրտում է սիրտն իմ
Հանց թռչուն վանդակում.

Թե հանդիպում են ջինջ
Աչքերդ խորունկ-լազուր,
Խենթի նման հոգիս
Ընդառաջ է վազում.

Ե՛վ ուզում եմ լացել,
Ե՛վ ուրախ եմ ինչ-որ...
Ինչպե՞ս կնետվեի
Լուսածուփ գիրկը քո...

• • •

Երկնքի պես քո հայացքն է փայլում
Երկնագույն փայլով արծնի,
Համբույրի նման զնգում է, հալվում
Քո ձայնը ջահել, կանացի։

Քո կախարդ խոսքի հնչյունի համար,
Հայացքի համար քո միակ,
Պատրաստ եմ տալու ռազմի զարդը չար՝
Իմ վրացական թուրը հաղթ։

Նա էլ է հիմա փայլում քաղցրորեն,
Ավելի քաղցր է նա զնգում,
Դողում է հոգիս այդ ձայնից նորեն,
Արյունս եռում իմ սրտում։

Թայց կյանքով ռազմի ու փոթորկածուփ
Ջեմ տարվում արդեն այն պահից,
Երբ որ լսեցի ես քո ձայնը նուրբ
Ու տեսա հայացքդ անբիծ։

• • •

Երգո՞ւմ է նա, և հնչյուններն են հալվում
Այնպես, ինչպես համբույրները՝ շրթերին,
Նայո՞ւմ է նա, և երկինքն է թավալվում
Աստվածային աչքերի մեջ անթերի։
Քայլո՞ւմ է նա—ամեն շարժում, շորորում,
Կամ բա՛ռ ասում—համակ դեմքը հեզ ու թարմ
Այնքա՞ն խոսուն, լի են հույզով վարարուն,
Լի են այնքան սքանչելի՞ պարզությամբ։

1888

ԽՈՀ

Ցավով, տրտմությամբ եմ մեր սերնդին նայում.
Գալիք օրը նրա կա՞մ մութն է, կա՞մ դատարկ,
Մինչ նա անգործությամբ կծերանա իզուր
Բանականության ու կասկածի բեռան տակ։
Դեռ օրոցքից արդեն հարուստ ենք մենք՝ կամկար
Խելքով, սխալներով մեր հայրերի,
Եվ կյանքն է մեզ տանջում, ինչպես աննպատակ, հարթ
ճանապարհ,
Ինչպես խնջույքն օտար հանդեսների։

Բարու, չարի հանդեպ ճղճմորեն անտարբեր,
Առանց մի պայքարի սմքում ենք մենք կյանքում.
Նվաստ, փոքրոգի ենք վտանգների հանդեպ,
Իշխանության առաջ՝ անարգ ստրուկ։
Վաղահաս պտուղն է այդպես ճյուղից կախվում,
Թոշնա՞ծ, թալո՞ւկ, օտար որբի նման,
Ո՞չ համով է գերում, ո՞չ էլ աչք է շոյում,
Այլոց ծաղկման ժամն է՝ ժամն իր անկման։

Ամուլ գիտությամբ ենք չորացրել միտքը մեր.
Թաքցնելով խանդով ընկերներից մոտիկ
Ե՛վ լավագույն հույսեր, և՛ ազնիվ ձգտումներ՝
Երկյուղելով ծաղրից անհավատի։
Վայելքի թասն հազիվ հպած շրթունքներիս՝
Զրկված ենք ավյունից պատանեկան,
Ձանձրույթի երկյուղից՝ վաղուց ու մեկընդմիշտ
Հյութասպառ ենք արել ամեն բերկրանք։

Ո՛չ արվեստի գործեր, ո՛չ ներշնչանք պոետական
Քաղցր զմայլանքով մեր միտքն էլ չեն շոյում.
Նրպես ժլատությամբ թաղված անօգուտ գանձ՝
Հույզերի թերմացքն ենք մեր մեջ պահում։
Պատահաբար ենք մենք և՛ ատում, և՛ սիրում,
Ոչինչ չզոհելով դրանց, այնպե՞ս,
Խորհրդավոր ինչ-որ ցուրտ է հոգում տիրում,
Մինչ կրակն է եռում մեր արյան մեջ։
Ձանձրանում ենք նախնյաց բարքերից անառակ,
Պարտաճանաչ, սակայն մանկամիտ-անհեթեթ.
Շիրիմ ենք շտապում ապերջանիկ, անփառք,
Ծիծաղելի հայացք ուղղելով ետ։

Որպես դյուրամոռաց մռայլ մի խառնամբոխ,
Կանցնենք այս աշխարհից անաղմուկ ու անհետ,
Դարերին չտալով ո՛չ միտք արգասավոր
Եվ ո՛չ էլ հանճարով ստեղծված երկ։
Իբրև քաղաքացի, իբրև խիստ դատավոր,
Աճյունը մեր հետնորդը կանարգի,
Կարհամարհի, ինչպես սնանկացած մի հոր
Դառնորեն ծաղրում է խաբված որդին։

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Փայլում է դաշույնն իմ ոսկեքանդակ.
Սո՞ւր է նրա շեղբն, անվթա՞ր, անբի՛ծ,
Իր խորհրդավոր ջրդեղումը տաք
Ժառանգել է նա գոռ Արևելքից։

Շա՞տ է լեռներում նա փայլատակել,
Անվարձ ծառայել տիրո՛ջն իր հեծվոր,
Շատ զրահնե՛ր է մի զարկով ճեղքել,
Շատ կրծքի թողել հե՛տքն իր ահավոր։

Քեֆի է նստել նա տիրոջ նման,
Դողացել խոսքից վիրավորական.—
Այդ թեժ օրերին ճոխ զարդը նրան
Օտա՞ր կթվար ու ո՞չ սազական։

Մի քաջ կազակ է դաշույնն այս հանել
Իր տիրոջ, արդեն արնաքամ, ձեռքից,
Հետո գտել են նրան ու գնել
Ծանոթ մի հայի ռազմի կրպակից։

Հիմա նա, զրկված իր հին պատյանից,
(Որ շա՞տ էր տեսել արյուն ու կրակ...)
Խաղալիքի պես փայլում է պատից
Անվնա՞ս, ավա՞ղ, և անփառունա՞կ։

Ո՞չ ոք հոգատար ու սովոր ձեռքով
Չի՞ սրբում նրան ու յուղով պատում,
Եվ արշալույսին, տարված աղոթքով,
Նրա վրայի գիրը չի՞ կարդում...
Մի՞թե այդպես չես կորցրել և դո՞ւ,

Պոե՞տ, քո դե՞րն այս քնքշակյաց դարում,—
Ոսկու հետ փոխած ո՞ւժն այն բնատուր,
Որին աշխա՞րհն էր հպատակ դառնում։

Կար ժամանակ, երբ կանչը քո խոսքի
Բոցավառո՞ւմ էր մարտնչող քաջին,
Նա պե՞տք էր՝ ինչպես թասը՝ խնջույքին,
Ինչպես Սուրբ խունկը՝ աղոթող աջին։

Սավառնում էր նա որպես սուրբ հոգին,
Եվ արձագանքը քո վեհ մտքերի
Թնդում էր, ինչպես զանգը համայնքի
Հաղթության պահին, կամ աղետների։

Բայց, հպարտ ու պարզ քո խոսքը թողած,
Գատարկ փայլո՞վ ենք մենք հիմա տարվել,
Եվ մեր մաշված դարն իր դեմքը մաշված
Կարմիր ներկո՞վ է սովոր շպարել...

Կզարթնե՞ս կրկին, մարգարե՛ կրքոտ,
Թե՞, վրիժառու և ինքնամոռաց։
Երբեք չի՞ շողա էլ դաշույնը քո՝
Արհամարհանքի ժանգի մեջ կորած։

1880

* * *

Մնունդն այս քնքուշ, սիրելի մանկան
Ես ողջունում եմ բառերով իմ այս ուշացած երգի,
Թող օրհնանքները ուղեկցեն նրան
Բոլոր երկրային, բոլոր երկնային հրեշտակների։
Թող նա արժանի իր հորը լինի,
Եվ իր մոր նման լինի սիրելի ու չքնաղատես,
Թող հոգին նրա միշտ անդորր լինի,
Ճշմարտության մեջ միշտ ամուր լինի քերովբեի պես։
Ժամանակից շուտ չունենա փառքի
Անհագուրդ խոհեր, չունենա սիրո տառապանքը մեծ,
Թող նայի առանց հանդիմանանքի,
Նա կեղծ պերճանքին ու մեր աշխարհի աղմուկին այս կեղծ։
Թող չորոնի պատճառները նա
Այլոց կրքերի և իր սեփական խնդությունների,
Ու թող աշխարհիկ տիղմից բարձրանա,
Հոգին անարատ ու սիրուն այնտեղից անվնաս բերի։

ՄԻ՛ ՀԱՎԱՏԱ ԴՈՒ ՔԵԶ

Que nous font après tout les vulgaires abois
De tous ces charlatans qui donnent de la voix,
Les marchands de pathos et les faiseurs d'emphase
Et tous les baladins qui dansent sur la phrase?

A. Barbier*

Մի՛ հավատա դու քեզ, պատանի՛ երազող,
Ներշնչանքից սարսի՛ր, ինչպես ախտից...
Կա՛մ զառանցանքն է այն ծանր՝ հիվանդ հոգուդ,
Կա՛մ կաշկանդված մտքիդ անզոր գրգիռ։

* Վերջապես ի՞նչ գործ ունենք այդ բոլոր պոռոտախոս խաբեբաների, պաթոսավաճառների, ճոռոմագիտների և ֆրազի վրա պարողների գռեհիկ ճղճղոցի հետ։ Օ. Բարբյե. (Ֆրանս.)։

Երկնային նշան այնտեղ դուր մի՛ փնտրիր.
Արյան եռքն է այն կամ՝ ուժերիդ հորդ,
Ավելի շուտ՝ կյանքդ հոգսերի մեջ մաշի՛ր,
Թսփի՛ր ըմպելիքը այդ թունավոր։

Թե պատահի հանկարծ պահին նվիրական,
Հրաշալի, հոգուդ մեջ վաղուց լուռ
Հայտնագործես անհայտ աղբյուր մի կուսական,
Հնչյուններով իր պարզ ու քաղցրալուր,—
Մի՛ ունկնդրիր ու մի՛ հմայվիր նրանցով,
Ծածկի՛ր դրանք քողով մոռացության.
Քո կոկիկ երգերով ու սառնաշունչ խոսքով
Չես հաղորդվի դրանց իմաստն իսպառ։

Վիշտը ծալված լինի հոգուդ գաղտնարանում,
Թե կրքեր բռնկվեն ամպրոպաբեր,
Մի՛ մտիր դու մարդկանց բազմաժխոր խնջույք
Այդ կատաղի ու խենթ ընկերոջ հետ։
Քեզ մի՛ նվաստացրու. ամաչի՛ր վաճառել
Մե՛րթ բարկություն ու մե՛րթ հլու թախիծ,
Շարավն հոգուդ վերքի գոռոզ ցուցադրել
Ի զարմանս պարզամիտ ամբոխի։

Մեր ի՞նչ գործն է, թե դու տառապել ես կամ ոչ,
Կամ ինչո՞ւ իմանանք հույզերը քո,
Քո վաղ տարիների հույսերն անմիտ ու փուչ՝
Գիտակցությանդ դառն ափսոսանքով։
Նայի՛ր. քո առջևով ճամփով սովորական
Ամբոխն է խաղալով թեթև անցնում.
Հազիվ թե նշմարես դեմքերին տոնական
Վշտի մի հետք կամ անպատշաճ արցունք։

Մինչդեռ հազիվ գտնես նրանց մեջ գեթ մեկին,
Որին ճմլած չլինի կյանքը դաժան,
Կամ վաղաժամ կնճիռ ունենա իր դեմքին

Առանց հանցանքների ու կորստյան...
Սիծաղելի ես քո ողբ ու կշտամբանքով,
Շինծու վարժ երգերով նրանց աչքում,
Շպարված ողբերգակ մի դերասան ես լոկ,
Որն իր թղթե սուրն է բեմին ճոճում։

ԵՐԵՔ ԱՐՄԱՎԵՆԻ

(Արևելյան ավանդություն)

Արաբական աշխարհում ավազուտի մեջ անծայր
Հպարտ ու ձիգ աճեցին արմավենու երեք ծառ։
Ու դուրս գալով նրանց տակ, ամուլ գետնի խոռոչում,
Իր սառնորակ ջրերով մի աղբյուր էր կարկաչում,
Որ գեղեցիկ ու կանաչ տերևների հովանում
Թաքչում էր տապ շոգերից և ավազից պաշտպանվում։

Եվ շատ ու շատ տարիներ եկան, անհետ գնացին,
Բայց հեռավոր աշխարհից նկած ոչ մի հողածին
Սառն աղբյուրի եզերքին, սրտով ծարավ, հոգնատանջ
Չէր կռացել դեռ երբեք տաղավարում այն կանաչ,
Եվ սկսեցին չորանալ տապ ու տոթից հրաշող
Տերևները այն փարթամ և աղբյուրը կարկաչող։

Տրտնջացին աստծուն մեկտեղ ծառերն այն երեք.
«Նրա՞ համար աճեցինք, որ չորանանք այստեղ մենք.
Ավազուտում անօգուտ մենք մեծացանք, ծաղկեցինք,
Տոթը խանձեց մեզ անվերջ և հողմահար ճոճվեցինք,
Ուրախ չարինք ոչ ոքի և մարդիկ մեզ չտեսան,
Անարդար է, օ՜, երկինք, քո վճիռը սրբազան»։

Հազիվ էին դեռ լռել, երբ հեռանիստ կապույտում
Դեղին ավազն էր արդեն այունանման պտտվում,
Ղողանջեցին բոժոժներն աննիրդաշնակ զնգոցով.
Ահա բեռներ գույնզգույն—խալիների ծածկոցով,
Եվ ուղտն ուղտի հետևից, ինչպես նավակն օվկիանում,
Օրորվելով հողմածեծ միշտ առաջ էր ընթանում։

Ծածանվելով ուղտերի սապատների վերևում,
Վրանների գեղազարդ փեշերն էին երևում,
Ու թխամորթ բազուկներ քղանցքն էին մերթ բացում
Եվ վրանից սևորակ աչեր էին առկայծում...
Եվ հենվելով աղեղին, թեքած իրանն իր ճկուն,
Ձափ էր գցում, բորբոքում արաբն իր ձին անկում։

Ծառսն էր լինում մերթընդմերթ և խոյանքով ահագին,
Քանց նետահար մի հովազ, ոստնում էր ձին մոլեգին,
Եվ սպիտակ հագուստի սիրուն դարսերն այն թեթև
Ձիավորի ուսերին ծփում էին հողմաթև.
Եվ աղաղակ սուլոցով, արշավելով ատելում,
Իր նիզակն էր նա նետում, առնում՝ նորից շպրտում։

Եվ աղմուկով ծառերին քարավանն էր մոտենում.
Ու բացվեցին վրաններ ահա նրանց հովանում։
Ձնգուն կժերն են լցված, իսկ ծառերը գեղեցիկ,
Հպարտորեն շարժելով կատարները երկնաձիգ,
Ողջունում են խնդալով անակնկալ հյուրերին,
Նրանց ծարավն է մարում շռայլ աղբյուրն անլռին։

Բայց խավարն անապատում չէ՛ր խոնարհվել դեռ գետին,
Երբ կացինը զնգալով իջավ նրանց արմատին,
Եվ ծառերը դարավոր տապալվեցին անկենդան,
Մանուկները պոկեցին նրանց հագուստը փարթամ,
Մարմինները կտրեցին հետո կացին-ուրագով
Եվ մինչև լույս այրեցին խարույկների կրակով։

Իսկ երբ անցավ արևմուտք մառախուղը վաղորդյան՝
Քարավանը զնգոցով շարունակեց իր ճամփան,
Եվ որպես հետք տխրալի անբարբեր այն վայրում
Արդեն սառած, սպիտակ մոխիրն էր լոկ երևում.
Մնացորդներն էլ արևի ճառագայթներն այրեցին,
Իսկ քամիներն՝ առնելով, ավազուտում ցրեցին։

Եվ ավազուտը հիմա ամայի է և լռին,
Չեն շշնջում տերևներն կարկաչահոս աղբյուրին։

Իզուր է նա աղերսում մարդարեից շուք ու զով,
Նա ծածկվում է հիմա սոսկ արևախանձ ավազով,
Իսկ ուրուրն էլ դաշտային, միշտ մարդախույս ու տրտում,
Նրա գլխին կռինչով իրեն որսն է ծվատում։

ԱՂՈԹՔ

Կյանքիս ծանր բոպեին,
Երբ թախիծն է սրտիս նստում,
Մի աղոթք եմ հրաշալի
Կրկնում անգիր, կրկնում անդուլ։

Կա բարեբեր ուժ՝ կենսալի
Խոսքերում այդ համահնչյուն,
Մի սրբազան, անմեկնելի
Հմայքով են դրանք շնչում։

Հոգուց ասես բեռն է ընկնում,
Տագնապներն են մնում ետև,
Ե՛վ լալիս ես, և՛ հավատում,
Ե՛վ զգում ես այնպե՛ս թեթև...

ԹԵՐԵՔԻ ՆՎԵՐՆԵՐԸ

Թերեքը ժեռ ափերի մեջ
Ոռնում է խենթ, կատաղի,
Փոթորկածայն ողբում անվերջ,
Արցունքներն է շաղ տալիս։
Բայց խորամանկ տեսք է առնում —
Դուրս վազելով տափաստան,
Կասպից ծովին քնքուշ փարվում
Ու քշփշում է նրան.

«Ճանապա՛րհ բաց, օ՛, ծո՛վ—ծերուկ,
Տո՛ւր ապաստան կոհակիս,

Շլրջել եմ հանդ ու դաշտերում,
Ժամ է՝ առնեմ ես հանգիստ։
Ես Կազբեկի մոտ եմ ծնվել,
Ամպի կրծքից խմել կաթ,
Հավետ վեճի եմ բռնվել
Խորթ բռնության հետ մարդկանց։
Ու ես, իբրև զվարճալիք,
Ջավակներին քո կայտառ,
Գոկել, բերել եմ Դարյալից
Մի ամբողջ հոտ գլաքար»։

Բայց իր փափուկ ափին փռված՝
Ծովը լռում է, ննջում,
Եվ Թերեքը հիմա նրա
Ականջին է շշնջում.

«Ես բերել եմ քեզ մի նվեր,
Այն էլ ո՛չ թե հասարակ.—
Մի կաբարդին, որ քաջ կռվել
Ու դարձել է նահատակ։
Հագել է նա օղազրահ,
Արմնկակալ պողպատե,
Սուրբ Ղուրանից ոսկով գրված
Մի պատվիրան կա այնտեղ։
Խոժոռել է հոնքերը խիտ,
Եվ բեղերի ծայրին, տե՛ս,
Հոսող արյունը շիթ առ շիթ
Բոցավառվում է կարծես։
Հայացքը բաց ու անմեկին՝
Լի է ոխով հնօրյա,
Եվ ալիքվում է ծոծրակին
Թուխ մազափունջը նրա»։

Բայց իր ափին ծովը պառկած՝
Ննջում և լուռ է մնում,
Ու Թերեքն է փրփուր հագած՝
Կրկին դիմում ծերունուն.

«Լսի՛ր, քեռի՛, նվերիս մոտ
Ի՞նչ են գանձերն աշխարհի...
Բայց բոլորից մինչև այսօր
Ես պահել եմ այն գաղտնի։
Բերում եմ քեզ ջրերիս հետ
Կազակուհու մի չքնաղ.
Հյուսերը՝ շեկ ու լուսավետ,
Ուսերը՝ մերկ ու գունատ։
Թախծոտ մուժ կա նրա դեմքին,
Աչքերը՝ փակ, երազուն,
Կրծքի վրա փոքրիկ վերքից
Ալվան շիթեր են վազում։
Ավանի մեջ այն գետափնյա,
Ջահել կույսին գեղեցիկ
Մե՛կն է, որ չի ցավում բնավ.
Դա կազակն է գրեբենցի։
Թամբել է ձին իր սևաթույր,
Ու երբ սարում մութն ընկնի,
Ջար չեչենի դաշույնից սուր
Գլուխը վար կդնի»։

Լռեց հորձանքը զայրացած...
Եվ ջրերի վրա լուրթ
Երեսը՝ ձյուն, վարսերը՝ թաց,
Երևաց լույս մի գլուխ։

Եվ ծերունին ելավ խրոխտ,
Շողաց, ինչպես հուր-կայծակ.
Ու լցվեցին խոնավ կրքով
Աչքերը մուգ-կապուտակ։
Կայտառացավ, խինդով ծփաց,
Եվ նա խուժող ալյաց դեմ
Բացեց գիրկը, փարվե՛ց նրանց
Շշուկներով սիրաջերմ։

Ա. Ի. ՕԴՈԵՎՍԿՈՒ ՀԻՇԱՏԱԿԻՆ

1

Ես գիտեի նրան. լեռներում Կովկասի
Թափառել ենք մեկտեղ. վիշտը տարագրման
Մտերմաբար կիսել. սակայն իմ փորձանքի
Ժամանակը անցավ կարգով օրինական,
Եվ ես վերադարձա դաշտերն հայրենական.
Իսկ նա չարժանացավ այդ բաղձալի պահին.
Ուղերթային ինչ-որ վրանի տակ խղճուկ
Ցավը հաղթեց նրան, ու նա տարավ շիրիմ
Իր հետ երամներով թռչող դեռևս մութ,
Տակավին անորոշ, անհաս ներշնչանքներ,
Խաբված հույսեր, դառնակսկիծ ափսոսանքներ...

2

Նա ծնվել էր դրանց, այդ հույսերի համար,
Պոեզիայի, բախտի... բայց խենթությամբ անզուսպ
Մանկական հանդերձից վաղաժամ մերկացած՝
Սիրտը նետեց կյանքի ծովը փոթորկահույզ,
Եվ ո՛չ աստված փրկեց, ո՛չ աշխարհը գթաց։
Բայց մինչև վերջ, ծանր հուզումների ծովում,
Անմարդ անապատում, մարդկային ժխորում,
Նրա մեջ չմարեց մեղմ բոցը հույզերի.
Պահպանեց և փայլը լաղուր իր աչքերի,
Մանկան ծիծաղն հնչուն, խոսքն իր աշխույժ, թեթև,
Հավատն հպարտ՝ մարդու և այլ կյանքի հանդեպ...

3

Բայց նա ընկավ մենակ, ընկերներից հեռու...
Սիրելի՛դ իմ Սաշա, խաղաղությո՛ւն սրտիդ,
Ծածկված օտար հողով՝ անծանոթ դաշտերում,
Թո՛ղ հանգիստ ննջի նա, ինչպես իմ հուշերի
Համր շիրմում կապրի մտերմությունը մեր։

Մահացար դու, ինչպես շատերը, անաղմուկ,
Սակայն հաստատակամ։ Խոհը խորհրդավոր
Դեռևս թափառում էր քո ճակատին դալուկ,
Երբ փակվեցին աչքերդ հավերժական քնով.
Եվ այն, ինչ ասացիր քո վախճանից առաջ,
Ոչ ոք լսողներից չհասկացավ, ավա՜ղ...

4

Դա եղել է ողջո՞ւյն երկրին հայրենական,
Նվիրական անո՞ւն թողած բարեկամի,
Երիտասարդ կյանքի տենչ ու կարո՞տ անբավ,
Թե՞ պարզապես ճիչն էր վերջին տանջանքներիդ.
Ո՞վ կհայտնի, կասի իմաստը դառն ու խոր
Քո վերջին խոսքերի... անցա՜վ, կորա՜վ հավետ...
Գործերը, խոհերը, երազանքները քո,
Բոլորը ցնդեցին ու չքացան անհետ,
Ինչպես իրիկնային ամպերի ծվեններ.
Հազիվ հայտնվում են, և տանում է քամին...
Ո՞ւր, ինչո՞ւ... — ո՜վ նրանց պիտի պատասխանի...

5

Իսկ նրանցից հետո չի մնում ոչ մի հետք,
Ինչպես անհուսալի սիրուց մանկան,
Ինչպես երազանքից, որը երբեք, երբեք
Նա չէր հանձնում հոգսին քնքուշ մտերմության...
Ի՜նչ փույթ... Թող մոռանա խավը բարձրաշխարհիկ
Մի գոյություն, իբեն այնքա՜ն խորթ ու օտար.
Ինչի՞դ են պսակը նրա ուշադրության
Եվ փշերը նրա դատարկ զրպարտանքի.
Չես ծառայել նրան ու դեռ վաղ հասակից
Մերժել ես չարանենգ շղթաները նրա.
Սիրել ես դու ծովի աղմուկ հողմաշառաչ,

6

Կապույտ տափաստանի անդորր ու լռություն,
Ժանեվոր երկնասույզ լեռնապարեր մռայլ...

Բոլորն, ինչով կյանքում ապրել, հրճվել ես դու,
Միավորել է բախտն այնքա՜ն գեղահրաշ
Անհայտ ու մենավոր քո շիրմի շուրջբոլոր.
Համր ու կապտամշուշ տափաստանն է ահա
Գրկել Կովկասն արծաթափայլ իր պսակով.
Ծովի վրա հանգիստ ննջում է նա խոժոռ,
Ինչպես հսկան հակված իր վահանի վրա,
Պատմությունն է լսում ճռճվող ալիքների,
Իսկ Սև ծովը աղմկում է անլռելի...

• • •

Նա նստած էր մտախոհ աղմկահույզ խնջույքում
Լքված, մենակ, անբարեկամ, անընկեր,
Եվ հայացքն իր հոգեկան, մեզ համար փակ ու անտես,
Ապագայի հեռուներն էր թափանցում։

Ժխորի մեջ խառնալուր, բաժակների զնգոցի,
Քրքիջի ու երգերի մեջ տոնական,—
Ես հիշում եմ, համակ թախիծ ու տագնապ՝
Մարգարեի նրա խոսքերն հնչեցին.

Բարեկամնե՛ր, հրճվեցե՛ք, ինչի՞ն է ձեր
Ճակատագիրն այս զառամյալ աշխարհի...
Ձեր գլխներին ճռճվում է ահագնափայլ սուր կացին,
Բայց ձեզ ի՞նչ փույթ... այն տեսնում եմ միայն ես։

. . . . . .

Է. Կ. ՄՈՒՍԻՆԱ-ՊՈՒՇԿԻՆԱՅԻՆ

Մեր կոմսուհի սեգ Էմիլիան
Սպիտակ է, քան թե լիլիան,
Այնքան ձիգ է նրա տալիան,
Որ չի ճաքվի մեկ այլ հողում։
Իր երկնքով ողջ Իտալիան
Աչքերի մեջ է շողշողում։
Սակայն սիրտը Էմիլիայի
Շա՜տ է նման Բաստիլիայի։

1840

1-Ը ՀՈՒՆՎԱՐԻ

Երբ խայտաբղետ ամբոխ է հաճախ ինձ շրջապատում,
Ու ես, ասես թե երազի միջից, իմ շուրջն եմ դիտում
Եվ աղմուկի տակ նվագի, պարի,
Սերտած ճառերի շշուկների տակ վայրենի ու բիրտ
Տեսնում եմ մարդկանց կերպարանքները անհոգի, անսիրտ
Եվ դիմակները քաղաքավարի։

Ու երբ մի անփույթ համարձակությամբ իմ պաղ ձեռքերին
Դիպչում են հանկարծ այն քաղաքային գեղուհիների
Ձեռքերը՝ վաղուց անգող, անսարսուռ,
Արտաքուստ սուզված նրանց փայլի և ունայնության մեջ,
Իմ հոգու խորքում փայփայում եմ ես հինավուրց մի տենչ,
Հանգած օրերիս հնչյունները սուրբ։

Ու թե մի վայրկյան հաջողվում է ինձ ողջն այդ մոռանալ,
Ես հիշողությամբ թռչում եմ դեպի օրերն իմ անցյալ,
Ազատ հավքի պես թռչում եմ արագ,
Ու տեսնում ահա՝ մանուկ եմ կրկին, իմ շրջապատում
Հոգուս հարազատ վայրերն են բոլոր՝ բարձրաշեն մի տուն,
Այգին և այգում՝ ջերմոցն ավերակ,

Ավազանն ահա ննջում է խոտի կանաչ ցանցի տակ,
Իսկ այնտեղ, հեռվում գյուղակն է ծխում ծուխն իր
կապուտակ,
Եվ դաշտն է սուզված թափանցիկ մուժում,
Ես ծառուղին եմ մտնում այն խավար, և իրիկնային
Շողն է ինձ նայում սաղարթի միջից, տերևն է դեղին
Իմ անհամարձակ քայլի տակ խշշում։

Օվ արտասվոր մի տխրություն է ինձ այցի գալիս,
Նրա մասին եմ խորհում ես անվերջ, սիրում եմ, լալիս,
Սիրում երազի իմ ստեղծածին,

Նրա աչքերը լեցուն են կապույտ, կապույտ կրակով,
Եվ ժպիտ ունի վարդագույն, ինչպես անտառից ծագող
Վաղ արշալույսի ցոլանքն առաջին։

Որպես հիասքանչ մի արքայության զվարթ տիրակալ,
Միայնության մեջ ես նստում էի երկար ու երկար,
Եվ իմ մեջ այդ հուշն ապրում է անվերջ,
Ապրում է նա դեռ կասկածի, կրքի հողմի տակ դաժան,
Ինչպես կղզին է անվնաս ապրում ծովում անսահման
Եվ ծաղկում խոնավ ամայության մեջ։

Ու երբ սթափված, խաբեությանն եմ հասու լինում ես,
Աղմուկն ամբոխի երբ հալածում է երազն իմ, որպես
Անկոչ հյուրն այդ ճոխ տոնախմբության,
Այնպես եմ ուզում պղտորել նրանց խնդությունը սին
Եվ իմ երկաթե երգը շպրտել նրանց երեսին,
Երգն իմ, ողողված դառը չարությամբ։

ԵՎ ՏԽՈՒՐ Է, ԵՎ ՁԱՆՁՐԱԼԻ

Ե՛վ տխուր է, և՛ ձանձրալի, մեկն էլ չկա մինչև անգամ,
որ ձեռք մեկնես, երբ աղետն է չոքում հոգուդ...
Ցանկություններ՝... բայց ի՞նչ օգուտ իզուր տեղը և հար
ցանկալ.
անց են կենում տարիներն էլ — և լավագո՛ւյն։

Սիրե՞լ... բայց ո՞ւմ... առժամանակ՝ նեղությանդ չարժե
անգամ,
իսկ հար սիրել անհնարին ինչ-որ բան չի՞։
Սրտիդ խորքն ես ինքդ նայում — անցյալիցդ հետք իսկ
չկա.
և՛ խինդ, և՛ ցավ, ամե՛ն ինչ է այնտեղ չնչին...

Կրքերն ի՞նչ են,— դե՛հ, վաղ թե ուշ նրանց ախտն էլ
քաղցր ու պատիր
կանհետանա դատողության խոսքերի տակ.
Կյանքն էլ, եթե շուրջդ նայես սառն հայացքով և ուշադիր,—
ի՞նչ է կյանքը — այնքա՛ն հիմար ու փուչ կատակ...

ԿԱԶԱԿԱԿԱՆ ՕՐՈՐՈՑԱՑԻՆ

Նանի՜կ արա, սիրո՜ւն բալա,
Նա՜-նա՜-նա՜, նանի՜կ։
Գարդ լուսինն է նայում ահա
Օրոցքիդ մեղմիկ։
Ես հեքիաթներ կպատմեմ քեզ,
Կերգեմ քեզ համար.
Դի աչերդ փակի՜ր, բալե՜ս,
Նա՜-նա՜-նա՜, դարդա՜ր։

Հորդ Թերեքն է հոսում փրփրած,
Ալիծուփ, պղտոր.
Ջար չեչենն է, դաշույն սրած,
Սողանցում ափով.
Բայց քո հայրը զինվոր է հին,
Մարտերում կոփված.
Քնի՜ր, հոգի՜ս, եղի՜ր հանգիստ,
Նա՜-նա՜-նա՜, դարդա՜ր։

Կսովորես ժամանակին
Կյանքին մարտական.
Ոտք կդնես ասպանդակին,
Կառնես հրացան։
Ռազմի թամբը քո մետաքսով
Կնախշեմ զառ-վառ...
Նանի՜կ-օրո՜ր, սրտի՜ս կտոր,
Նա՜-նա՜-նա՜, դարդա՜ր։

Տեսքով հսկա դու կլինես
Ու կազակ հոգով։
Ուղեկցելու դուրս կգամ ես,
Դու կանես ձեռքով...
Ինչքա՜ն արցունք պիտի ծածուկ
Թափեմ քեզ համար...
Քնի՜ր, անո՜ւշ, քնի՜ր մուշ-մուշ,
Նա՜-նա՜-նա՜, դարդա՜ր։

Քո կարոտից պիտի տանջվեմ,
Անսփոփ մնամ.
Պիտի ամբողջ օրն աղոթեմ,
Մթնով բախտ բանամ,
Մտածեմ, որ դու տխրում ես
Ափերում օտար...
Քնի՜ր, քանի հոգս չդիտես,
Նա՜-նա՜-նա՜, դարդա՜ր։

Սրբապատկեր կտամ ես քեզ
Մեկնելուդ ժամին.
Աղոթելիս թող մշտապես
Քո դիմաց լինի.
Վտանգավոր կռվից առաջ
Հիշի՜ր մորը քո...
Քնի՜ր, չքնա՜ղ իմ հրեշտակ,
Նա՜-նա՜-նա՜, օրո՜ր։

Մ. Ա. ՇՀԵՐԲԱՏՈՒԼԱՅԻՆ

Պարահանդեսի
Փայլի հետ շքեղ ու հոգնեցուցիչ,
Նա փոխեց վսեմ
Իր Ուկրաինայի դաշտե՛րը դյութիչ։

Բայց բարձր խավի
Ջոր, անագորույն ցրտի մե՛ջ անգամ,
Դեռ նրա վրա
Սիրած հարավի նշանները կա՜ն։

Ինչպես աստղազարդ,
Ջերմ գիշերնե՛րը տափաստանների,
Գաղտնալից են ցարդ
Խոսքե՛ր նրա բուրող շուրթերի։

Լուրթ են ու խոնավ
Աչերն՝ հարավի երկնքի հանգույն
Եվ փայլո՜ւմ է նա,
Եվ այրո՜ւմ՝ ինչպես հո՜ղմը բաց հանդում։

Հասնող սալորի
Կարմրությո՜ւնը կա նրա այտերին,
Շողերն արևի
Խաղում են նրա ոսկե վարսերին.

Եվ հավատարիմ
Իր հայրենիքին տրտում ու խոկուն,
Աստծո բարի
Հույս-հավա՜տն է նա պահում իր հոգում։

Իր ցեղի նման՝
Նա օտարներից նեցուկ չի՜ հայցում,
Հպարտ, անվարան
Կրում չարությո՜ւն, ծա՜ղր ու ուրացո՜ւմ։

Հանդուգն ակնարկից
Նրա կիրքն իսկույն չի՜ բոցավառվում,—
Իզուր չի՜ լքի,
Բայց հեշտությամբ էլ չի՜ սիրահարվում։

• • •

Խոսքեր կան՝ իմաստով
Աննշան են կամ մութ.
Բայց լսել չես կարող
Անտարբեր, անհուզմունք.

Հնչյուններն են դրանց
Առլի խենթ տենչանքով,
Թրթիռով հանդիպման,
Բաժանման արցունքով։

Ժխորում մարգկային
Չի գտնում պատասխան
Կրակից ու լույսից
Ծնված խոսքն այդ վառման.

Բայց տաճարում լինեմ,
Թե մարտում, ամենուր,
Կիմանամ, հենց լսեմ,
Ես հնչյուններն այդ սուրբ։

Ազոթքս չավարտած՝
Կարձագանքեմ դրանց,
Մարտը կիսատ թողած՝
Կնետվեմ ընդառաջ։

ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻՍ

Ես չեմ սպասում ազատ օրերի,
Բանտային օրն էլ թվում է տարի.
Իմ պատուհանը շատ բարձր է գետնից,
Դրսում պահակն է արթուն հսկում ինձ։

Մեռնե՛ի թող ես վանդակում այս հին,
Թե չլինե՛ր իմ հարևանուհին...
Արթնացանք այսօր մենք լուսաբացին,
Ես նրան մեղմիվ գլուխ տվեցի։

Գերությունն է, որ մեզ մտերմացրեց,
Միակերպ բախտն է, որ ծանոթացրեց,
Եվ պատուհանները այս վանդակավոր
Ծնեցին մեր մեջ նույն տենչանքը խոր։

Ցեղին՝ հենց նստեմ պատուհանի տակ
Ու թևեր տամ իմ հայացքին անհագ,—
Դեմի լուսամուտն՝ են թակում կամաց,
Ու վարագույրն է բարձրանում հանկարծ։

Ձեռներին հենած գլուխն համայն,
Խորամանկությամբ նա ինձ է նայում.
Ու կարծես քամու թեթև հոսանքից
Սահում է նախշուն թաշկինակն ուսից։

Թաց գանատ է կուրծքն իր գեռափթթած.
Ու նստած է լուռ, տրտում, անժպիտ.
Երևի նա էլ հոգով փոթորկուն
Զգտում է ինձ պես դեպ ազատություն։

Անգի՛նըս, այդքան դու մի՛ վշտանա...
Կամենաս՝ վանդակն այն ետ կգնա,
Եվ աստղծու զույգ հավքերի՛ նման
Քեզ հետ կճախրենք դաշտում անսահման։

Կգողանա՛ս դու հորդ բանալին,
Քեֆի՛ կուղարկես պահապաններին,
Իսկ ովքեր դռան մոտ լինեն կանգնած,—
Ի՛նքս կտեսնեմ հաշիվը նրանց։

Ընտրիր գիշերը դու ամենամութ,
Եվ հորդ գինի՛ տուր ամենաթունդ,
Աղլուխդ էլ կախիր դու պատուհանից,
Որ լավ երևա ձեր տան ճամփան ինձ։

ԳԵՐՎԱՏ ԱՍՊԵՏԸ

Նստել եմ լուռ լուսամուտի տակ զնդանի,
Կապույտ երկինքն է այստեղից ինձ երևում,
Այնտեղ ազատ ճախր են անում հավքեր քանի,
Նայում նրանց և՛ ամաչում եմ, և՛ ցավում։

Եվ մեղավոր աղոթք չկա շուրթիս վրա,
Ու երգ չկա՝ ձոնված փառքին սիրեցյալի,
Մտաբերում եմ ես այստեղ սուր ու զրահ
Եվ մարտերն եմ մտաբերում ես անցյալի։

Հիմա քարե զրահի մեջ եմ ես բանտված,
Եվ գլուխս է ճնշում քարե մի սաղավարտ,
Իմ վահանն է սրի, նետի դեմ կախարդված,
Առանց հեծվոր իմ նժույգն է սուրում ազատ։

Ժամանակն է իմ նժույգը հավատարիմ,
Սաղավարտիս երեսկալն է ցանցը բանտի,
Բարձր ու քարե այս պատերն են զրահը իմ,
Իմ վահանն են դարպասները այս երկաթի։

Դե, ժամանա՛կ, սուրա արագ ու խելահեղ,
Նոր զրահն իմ հեղձուցիչ է դարձել արդեն,
Մահն ասպանդակն իմ կպահի, երբ հասնենք տեղ,
Ես վար կիջնեմ, երեսկալն իմ նետելով դեն։

ԺՈՒՌՆԱԼԻՍՏԸ, ԸՆԹԵՐՑՈՂԸ ԵՎ ԳՐՈՂԸ

Les poètes ressemblent aux ours, qui se nourrissent en suçant leur patte.
Inédit*

(Գրողի առանձնասենյակը. վարագույրները ցած են թողնված։ Նա նստած է մեծ բազկաթոռին, բուխարու դիմաց. ընթերցողը, սիգարը ձեռքին, կանգնած է մեջքով դեպի բուխարին։ Մտնում է ժուռնալիստը)

ԺՈՒՌՆԱԼԻՍՏ

Ուրախ եմ, որ ձեզ գտնում եմ հիվանդ.
Մարդկանց ժխորում, հոգսերում կյանքի
Շուտով կորցնում է միտքը պոետի
Իր աստվածային անուրջները վառ.
Տգավորության խառնիճաղանջում
Հոգին մանրուքի փոխանակելով,
Նա կործանվում է, աննկատ կորչում,
Դարձած հանրության կարծիքների զոհ։

* Բանաստեղծները նման են արջերին, որոնք սնվում են սեփական թաթը ծծելով։ Անտիպ։

Զվարճանքների եռուզեռում թեժ
Էլ ե՞րբ որոճա նա հասուն մի երկ։
Դրա փոխարեն, ի՞նչ երանություն,
Թե անցնի հանկարծ երկնքի մտքով
Նրան ուղարկել կա՛մ բանտ, կա՛մ աքսոր,
Կա՛մ տալ տևական մի հիվանդություն.
Իսկույն կհնչի մի երգ հոգեթով
Առանձնարանում նրա խուլ, անձուկ։
Կսիրահարվի երբեմն էլ կրքով
Իր իսկ տրտմության քաղցր ու գեղաշուք...
Իսկ չէ՞ր կարելի իմանալ արդյոք,
Թե ի՞նչ եք գրում։

ԳՐՈՂ

Ոչինչ...

ԺՈՒՌՆԱԼԻՍՏ

Շատ իզո՞ւր։

ԳՐՈՂ

Ի՞նչ գրես. հարավ, արևելք արդեն
Վաղուց պատկերվել, երգվել են այնքա՞ն.
Բոլոր պոետներն ամբոխին ձաղկել,
Գովաբանել են հարկն ընտանեկան.
Երկինք են ճախրել բոլորն էլ հոգով,
Աղերսել գաղտնի մի թախանձանքով
№№-ին, անհայտ իր գեղեցկությամբ.
Եվ ձանձրացրել են բոլորն էլ անչափ։

ԸՆԹԵՐՑՈՂ

Դե՛ ես էլ ասեմ. քաջություն է պետք,
Որ բացի մարդ... ձեր ժուռնալը թեկուզ
(Այն իմ ձեռքերը ջարդել է արդեն)։
Նախ՝ թուղթն է շատ գորշ, գուցե և մաքուր,
Բայց սոսկալի է առանց ձեռնոցի...
Նայում ես՝ անթիվ սխալ, վրիպակ.
Ջափածոն այնքա՞ն դատարկ է ու սին.
Բառերն անիմաստ, զգացմունք չկա,
Ամեն մի դարձվածք ձգձգված, ճապաղ.

Ընդսմին, ասե՞լ ձեզ որպես գաղտնիք,—
Հանգերն էլ հաճախ թերի են ու կաղ։
Արձա՞կն ես վերցնում,— լոկ թարգմանական։
Իսկ եթե հանկարծ պատահում են քեզ
Եվ հայրենական պատմվածքներ, ապա
Մոսկվան են ծաղրում անպայման այնտեղ
Կամ հայհոյում են պաշտոնյա մարդկանց։
Այդ ո՞ւմ են նրանք պատկերում տեսնես,
Որտե՞ղ են լսում այդպիսի խոսվածք.
Իսկ եթե իրենց պատահել է այդ,
Մենք դրանք բնավ չենք ուզում լսել։
Ե՞րբ պիտի ամուլ Ռուսաստանում,
Հրաժարված կեղծ, խաբուսիկ փայլից,
Մտքերն ստանան պարզ ձևավորում
Եվ կրքերը՝ ձայն մաքուր ու ազնիվ։

ԺՈՒՌՆԱԼԻՍՏ

Ճիշտ և ճիշտ նույնն եմ ասում նաև ես.
Եվ ռուսական մուսային էլ հենց
Ձեզ պես եմ նայում, վրդովված տատիկ,
Կարդացեք խնդրեմ հոդվածները իմ։

ԸՆԹԵՐՑՈՂ

Ես կարդացել եմ. մանր հարձակումներ
Վրիպակների, զարդանախշերի,
Տպատառի կամ այլ մանրուքի դեմ,
Ակնարկներ շատ նուրբ, հանելուկային.
Այն մասին, ինչ որ ոչ ոք չգիտե։
Քիչ զվարճալի լինեին գոնե։
Սակայն, պարոնա՛յք, ձեր թանաքներում,
Ձես զգում նույնիսկ դառնություն լեղու,
Այլ միայն պղտոր ջուր է պարզապես։

ԺՈՒՌՆԱԼԻՍՏ

Դրա հետ նույնպես համաձայն եմ ես։
Բայց հավատացե՛ք, ես ուրախությամբ
Չէի ցանկանա հայհոյել իսպառ.
Բայց դե ի՞նչ անես... հայհոյում են քեզ...

Մի քիչ էլ մտեք մեր դրության մեջ.
Մեզ կարդում են և ցածր շրջանում.
Արտահայտության սրությունը մերկ
Ամեն լսելիք չի վիրավորում.
Ե՛վ պատշաճություն, և՛ ճաշակ այնքան
Պայմանական են, հեղհեղուկ, մինչդեռ
Փող վճարում են բոլորն հավասար։
Հավատացե՛ք ինձ, ճակատագրով մեզ
Տրված է կրել շատ ծանր մի բեռ.
Ասացե՛ք, ինչպե՞ս կարդալ այդ անլուր
Բարբաջանքները, այդ գրքերն համայն...
Եվ բոլորն ինչո՞ւ—որ ասենք միայն,
Թե արժանի չեն դրանք կարդալու...

ԸՆԹԵՐՑՈՂ

Բայց ինչպիսի՞ մեծ հաճույք ես զգում,
Հանգստանում է և՛ միտք, և՛ հոգի,
Երբ ձեռքդ է ընկնում մի կերպ մի կարգին
Թարմ ու կենդանի ստեղծագործություն։
Ահա, օրինակ, բարեկամը իմ.
Ունի հիասքանչ գրելակերպ, ոճ,
Ճոխություն մտքի, զգացմունքների.
Օժտված է աստծուց ամենակարող։

ԺՈՒՌՆԱԼԻՍՏ

Լիովին ճիշտ է. ցավն էլ այդ է հենց.
Այդ պարոններն էլ չեն ուզում գրել։

ԳՐՈՂ

Ի՞նչ պիտի գրես. լինում են պահեր,
Երբ թոթափվում է բեռը հոգսերիդ,
Օրեր ներշնչված աշխատանքների,
Երբ միտքդ ու սիրտդ լի են հորդազեղ.
Ներդաշնակ հանգերն ալիքների պես
Իրար ետևից, կարկաչահնչուն,
Հորդում են, հոսում, խաղացկուն թեթև։
Ճառագում է վառ հրաշք լուսատուն

Այնժամ հազիվհազ զարթնած հոգուդ մեջ.
Մտքերիդ վրա, զորությամբ տոգոր,
Բառերն են իջնում մարգարտի նման։
Եվ ապագային նայում է այնժամ
Պոետն աներկյուղ, վստահ հավատով,
Տեսնում է աշխարհն ազնվաճաճանչ
Իր երազներով լվացված, մաքուր։
Սակայն երկերը այդ օտարոտի
Լոկ ինքն է կարդում թաքուն հրճվանքով,
Իսկ հետո առանց խղճի մի խայթի
Իր բուխարին է վառում դրանցով։
Մի՞թե մանկական զգացմունքներն այդ,
Այդ անհաշվետու ցնորքն օդեղեն
Արժանի են խիստ արվեստին. դրանք
Կծաղրվեն միայն ու կմոռացվեն...

Լինում են ծանր գիշերներ մղձկուն.
Աչքերդ են վառվում ու լալիս անքուն,
Կրծում է սիրտդ անհագ մի թախիծ.
Սառ ձեռքդ դողով տաք բարձն է գրկում.
Փշաքաղվում ես ինքնեկ սարսափից.
Պոկվում է կրծքից քո տագնապահար
Մի հիվանդագին ու խելահեղ ճիչ,
Թոթվում է լեզուդ անգիտակցաբար
Վաղուց մոռացված ինչ-որ անուններ.
Հիշողության մեջ, հակառակ կամքիդ,
Հառնում է վաղուց մոռացված մի դեմք
Ողջ գեղեցկության փայլով իր նախկին.
Աչքերի մեջ սեր, շրթունքներին՝ սուտ.
Ե՛վ հավատում ես ակամա նորից,
Ե՛վ ուրախություն, և՛ ցավ ես զգում։
Քրքրելով խոցերն հին-հին վերքերիդ։
Այնժամ գրում եմ. խիղճս է լոկ հուշող,
Գրիչն է վարում միտքս զայրալիր.
Պատմություն է դա թովիչ, առինքնող
Ծածուկ գործերի, թաքուն մտքերի,
Պատկերներ սառած՝ անառակության,

Հուշապատում խենթ ջահել օրերի,
Վաղուց անօգուտ ու անվերադարձ
Կորած կրքերի հորձանուտներում,
Մարտերում անտես, սակայն անկոտրում,
Տգետ մարդկանց մեջ, խաբեբա կանանց,
Կեղծ-անհուսալույս կասկածանքներում
Եվ հույսերի մեջ կեղծ-ծիածանված։
Որպես անսովոր, անհայտ դատավոր,
Ջինայելով գաղտնիքներն այլոց,
Արատը, ներկված բարեհեսությամբ,
Գամում եմ ազատ անարգանքի սյան։
Անդրդվելի եմ ես ու անողոք...
Այդ դառն ու կծու տողերը, սակայն,
Ես չեմ վստահում հանձնել երբևէ
Անպատրաստ մարդկանց ուշադրության։
Ասացե՛ք, ինչի՞ մասին էլ գրել...

Ինչո՞ւ բորբոքեմ անշնորհակալ
Ամբոխի ցասումն, ատելությամբ լի,
Որ խոսքերը իմ մարգարեական
Նենգամիտ լուտանք միայն համարի,
Որ բարկ էջերիս թույնը գաղտնածածկ
Խռովի մանկան քո՞ւնը անվրդով,
Կլանի սիրտը տկար ու անզոր
Իր հորձանքի մե՞ջ, ամեհի, անսանձ։
Օ՜ ոչ, հանցավոր երազանքներով
Ձիուրացնելով իմ միտքը երբեք,
Այդպիսի ծանր, այդքան թանկ գնով
Ես չեմ ցանկանում գնել փառքը ձեր։

(Մ. Պ. ՍՈԼՈՄԻՈՍԿԱՅԱՅԻՆ)

Շրջելով անհուն դժոխքի ձգրին,
Երբեմն մարդու հոգին հանցագործ
Կարդում է դրախտի դարպաս-դռներին
Նախշազարդերը սրբազան գրոց։

Ու աներկրային իր ցավի համար
Հաճախ է գտնում նա խինդ մի թաքուն,
Երբ տենչանքներով իր նախանձավառ
Ձգտում է անցնել պարիսպն աննկուն։

Այդպես օրերում իմ աքսորական
Ձննելով գծերն օտար մի դեմքի,
Ինձ ազատ էի զգում մի վայրկյան՝
Ջորավոր կամքով իմ երազանքի։

Իբրև ցանկալի մի ազատություն,
Իբրև շողն հուսո ծովում փորձանքի,
Այնժամ ինձ համար դարձավ անանուն,
Բայց հար հիշելի ձեր ողջույնն անգին։

ԻՆՉԻՑ Է

Ես տխուր եմ, որովհետև սիրում եմ քեզ,
Ու ես գիտեմ. ջահել կյանքիդ գարունն ու քեզ
Թամբասանքի հալածանքը չի խնայի։
Ամեն լուսե օրվա համար կամ թե քաղցր ամեն պահի
Դու արցունքով ու կարոտով կհատուցես բախտին ազդու։
Ես տխուր եմ, որովհետև... ուրախ ես դու։

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Շնորհապարտ եմ քեզ ամեն ինչի համար.
Ե՛վ կրքերի թաքուն ու խուլ տառապանքի,
Ե՛վ համբույրի թույնի, արցունքի դառնության,
Ե՛վ թշնամու ոխի ու ընկերոջ զրպարտանքի,
Հոգու հրի համար, վատնված անապատում,
Այն բոլորի՝ ինչով խաբվեցի միալար...
Այնպե՛ս արա միայն, որ գոնե հետայսու
Շնորհակալ լինեմ քեզնից դեռ ոչ երկար։

ԳՅՈԹԵԻՑ

Նիրհում է մթնում
Պարը լեռների.
Հովիտներն անդորր
Պաղ միգով են լի.
Ճամփան թափուր է,
Ո՛չ ձայն, ո՛չ շարժում...
Ուր որ է՝ դու էլ
Կմտնես խոր քուն։

ՄԱՆԿԱՆԸ

Տանջվելով հուշից վաղ անուրջների,
Թաքուն խնդությամբ ու սոսկումով լի,
Զքնաղ դու մանկիկ, ես քեզ եմ նայում...
Գիտե՞ս ինչպես ես դու ինձ հմայում.
Ինչքա՜ն եմ սիրում ժպիտդ անբասիր,
Մազերդ ոսկյա, աչիկներդ ժիր,
Եվ ձայնդ հնչեղ։— Ասում են հաճախ,
Որ մորդ ես նման։ Տարիներն, ավա՜ղ,
Թռչում են. վիշտը նրան շուտ փոխեց,
Բայց հավատարիմ ցնորքս թողեց
Այն պատկերը ջինջ իմ սրտում հավետ,
Եվ հայացքն այն հուր շրջում է ինձ հետ։
Իսկ դու սիրո՞ւմ ես, սիրո՞ւմ ես դու ինձ,
Զանձրույթ չե՞ս զգում իմ գգվանքներից։
Շատ չե՞մ աչիկներդ արդյոք համբուրում,
Արցունքս այտերդ արդյոք չի՞ այրում։
Բայց տես, հա՜, մորդ դու բան մի ասի,
Ոչինչ՝ ոչ վշտիս, ոչ էլ իմ մասին։
Ի՞նչ միտք ունի այդ... ես չէի ուզի.
Գուցե դա նրան վրդովի, հուզի։

Բայց ասա. երբ որ մութն իջնում էր ցած,
Սրբապատկերի առաջ խոնարհված,
Մայրդ աղոթք էր մեղմ շշնջում քեզ,

Մատներդ պահում, որ դու խաչ հանես,
Իսկ դու կրկնելով նրա հետ մի-մի
Անուններ ծանոթ, հարազատների —
Մեկի համար էլ աղոթք չէ՞ր հուշում
Նա, որ դու կրկնես լուրթ այդ մշուշում։
Չէ՞ր տալիս արդյոք անուն մի մարդու,
Որ այժմ արդեն մոռացել ես դու։
Էհ, կարիք չկա, մի՛ հիշիր դու այն,
Անունն ի՞նչ է որ — լոկ դատարկ մի ձայն։
Ասված տա, որ նա անհայտ մնա քեզ,
Բայց եթե մի օր հանկարծ ճանաչես,
Դու մանկությունդ հիշիր, իմացիր,
Բայց նրան, տղաս, դու մի անիծիր։

Ա. Օ. ՍՄԻՐՆՈՎԱՅԻՆ

Շատ բան եմ ուզում ասել ձեզ հեռվից,
Ձեզ մոտ ուզում եմ ձեզ անվերջ լսել.
Բայց դուք նայում եք այնպես լուռ ու խի՛ստ,
Որ շփոթմունքով լռում եմ ես էլ։

Ի՞նչ արած... ավա՜ղ, ինձ չի վիճակվել
Ձեր միտքը հուզել խոսքով սիրական...
Սա ծիծաղելի կարող էր լինել,
Եթե լոկ տխուր չլիներ այսքան։

ԴԻՄԱՆԿԱՐԻՆ

Զվարթ է՝ նման գանգրահեր մանկան,
Պճնված՝ ինչպես թիթեռ հունիսի.
Նրա շուրթերին փոխվում է անգամ,
Քնքշանք է դառնում անգամ խոսքը սին։

Նրան շատ երկար դուր գալ չի լինի.
Կապանք է հաշվում ամեն սովորույթ,—
Իսկույն, օձի պես, սողանցում կանի
Եվ թռչունի պես կսուրա անփույթ։

Իր իսկ ցանկությամբ ճակատը նրա
Ե՛վ վիշտն է պահում, և՛ խինդը հստակ։
Լուսե երկինքն է աչքերում նրա,
Իսկ հոգին մութն է՝ ինչպես ծովի տակ։

Ճոմարտությամբ է մերթ կարծես շնչում,
Մերթ էլ ամեն ինչ կեղծ է ու շինծու,
Անհնար է իր գաղտնիքին տիրել,
Բայց անհնար է նաև... չսիրել։

ԱՄՊԵՐ

Դուք ամպե՛ր երկնային, մշտահած ճամփորդներ,
Հարթությամբ լազուրե, հույլերով մարգարտյա,
Անկայան, ասես թե տարագիր, ինչպես ես,
Սիրելի հյուսիսից սուրում եք դեպ հարավ։

Ո՞վ է ձեզ հաչածում՝ որոշո՞ւմը բախտի,
Ծածկաեռ նախա՞ծը, ոխն ու քե՞նե տնանքող,
Թե՞ ոճիրն է ճնշում՝ ծանրացած ձեր սրտին,
Կամ գուցե չարաթույն զրպարտա՞նքն ընկերոջ։

Ո՛չ, ամուլ դաշտերն են ձանձրացրել ձեզ միայն...
Օտար են ձեզ կրքեր, տառապանք, անձկություն.
Հավետ սառն, հավիտյան անկաշկանդ ու ազատ,
Դուք չունեք հայրենիք, դուք չունեք տարագրում։

ՎԱԼԵՐԻԿ

Պատահաբար եմ գրում ես ձեզ.
Չգիտեմ էլ, թե ինչպես, ինչու։
Այդ իրավունքը կորցրել եմ ես։
Ի՞նչ պիտի ասեմ, ոչինչ, անշուշտ։
Որ հիշո՞ւմ եմ ձեզ, բայց, տե՛ր աստված,
Չէ՛ որ շատ վաղուց դուք այդ գիտեք.
Եվ, հարկավ, մեկ է դա ձեզ համար։

Ձեր ինչի՞ն է պետք, թե ես հիմա
Ինչպե՞ս եմ, ո՞ր խուլ ծայրում երկրի.
Հոգով օտար ենք. և մի՞թե կա
Հարազատություն հոգիների։
Ահա անցյալն եմ նորից թերթում,
Ամեն ինչ հերթով կշռադատում
Արդեն սառած ու զգաստ մտքով.
Ամեն ինչից էլ տարհամոզվում,
Տեսնում եմ՝ ողջը պատրանք էր լոկ։
Ծիծաղելի է այդքա՜ն երկար
Սրտով կեղծ լինել քեզ հետ նույնիսկ
(Այլ բան, երբ ի սեր զվարճության
Հիմարացնում ես բարձր խավին)։
Բացի այդ, ի՞նչ շահ զուր հավատալ
Այն բանին, որը չկա արդեն...
Հեռակա սիրո՞ւն անմտորեն
Սպասել, երբ մեր դարում բոլոր
Զգացմունքները անվերապահ
Լինում են միայն ժամկետավոր.
Բայց, այդուհանդերձ, ճիշտ է և այն,
Որ ձեզ ո՛չ մի կերպ և ո՛չ մի օր
Չկարողացա ես մոռանալ։
Նախ այն պատճառով, որ չափազանց
Եվ երկա՜ր, երկա՜ր ձեզ սիրեցի.
Ապա օրերն այդ երանության
Տառապանքներով իմ չարաչար
Ու տագնապներով հատուցեցի.
Հետո ապարդյուն զղջմամբ տարա
Շղթան իմ ծանր տարիների.
Սպանեցի սառ դատողությամբ
Վերջին ծաղիկը նաև կյանքիս։
Մարդկանց հետ զգույշ մտերմացա,
Չարաճճություն չահելության
Աղմուկ, պոեզիա, սեր մոռացա,
Բայց անհնա՜ր էր ձեզ մոռանալ։

Ընտելացել եմ ես այդ մտքին
Եվ խաչս կրում եմ անտրտունջ.
Միևնույն չէ՞ այս կամ այլ պատիժ։
Արդեն դարձել եմ կյանքին հասու.
Ճակատագրից, ինչ էլ լինի,
Լավ, թե վատ, մեկ է, մնում եմ միշտ
Հավասարապես շնորհակալ,
Ինչպես, ասենք, մի թուրք կամ թաթար.
Աստծուց չեմ խնդրում երջանկություն
Եվ ամեն շարիք կրում եմ լուռ։
Գուցե երկի՞նքն է արևելյան
Հարազատացրել ինձ ակամա
Իր մարգարեի ուսմունքի հետ։
Կյանքն էլ ամեն ժամ քոչվորական,
Աշխատանք, հոգսեր օր ու գիշեր.
Ամեն ինչ, արգելը դրած մտքիդ,
Հասցնում է կյանքին նախամարդու
Իմ հիվանդ հոգին. սիրտս է ննջում,
Էլ տեղ չի մնում երազանքի...
Եվ գլուխն այստեղ էլ գործ չունի...
Դրա փոխարեն, փռվում ես խիտ
Կանաչների մեջ, հանգիստ նիրհում
Փարթամ վազերի կամ չինարի
Ջով ու ընդարձակ ստվերներում։
Ջորս կողմ վրաններ են սպիտակ.
Վտիտ ձիերը կազակների
Կանգնում են կողքիդ, դնչները կախ.
Թնդանոթի մոտ պղնձակուռ
Սպասակազմն է կարծես քնած.
Պատրույգներն են թույլ, հազիվ ծխում.
Ջույգերով շարքն է հեռվում կանգնած։
Սվիններն են վառ հուրհրատում
Հարավային բարկ արևի տակ։
Լսվում է մոտիկ մի վրանից
Անցյալի մասին խոսակցություն.
Ինչպես օրերում Երմոլովի

Դեպի լեռները՝ չեչենների,
Ավարների դեմ են գնացել.
Ինչպես են կռվել, ջարդել արի,
Ինչպես և մե՛զ է բաժին հասել։
Տեսնում եմ ահա ես ոչ հեռվում,
Գետի մոտ, հլու մարգարեին,
Թաթարն է հանգիստ նամազ անում՝
Զբարձրացնելով հայացքը իր.
Ահա և մի այլ խումբ է նստած.
Սիրում եմ դեղին դեմքերը այդ,
Որոնք ունեն գույն ասպանդակի,
Թավ փափախները, թևքերը ծակ,
Հայացքը խոժոռ ու խորամանկ,
Եվ զրույցները կոկորդային։
Սղ՜ւս... կրակոց է հեռվում, դղրա՜ց
Մի խելառ գնդակ... քա՜ղցր հնչյուն...
Ինչ-որ ճիչ... դարձյալ խոր լռություն...
Սակայն շոգն արդեն քիչ մեղմացավ.
Ձիերը տանում են ջրելու.
Հետևակն արդեն խուլ խլրտաց.
Ահա դոփյուններ, ձայներ, աղմուկ...
— Որտե՞ղ է երկրորդ վաշտը։— Բեռնե՞լ...
— Սայլերը քշե՛ք, արագ, իսկո՛ւյն։
— Սավելյի՛չ... — Իրո՞ք... — Կրա՛կ տուր, շո՛ւտ..
Թմբուկն է թնդում վերկաց արդեն.
Նվագախումբն է ճղղում-շչում.
Ջորաշարքերի միջով անցնող
Թնդանոթներն են խուլ շռնչում։
Գեներալը իր շքախմբով
Առաջ սլացավ... Դաշտով մեկ լայն
Կազակներն աղմուկ-գոռգոռոցով
Մեղուների պես ցրիվ եկան.
Բացատում արդեն երևացին
Ինչ-որ նշաններ. չալման գլխին,
Կարմիր տարազով չերքեզական
Մի մյուրիդ ձիով բաց-մոխրագույն,
Որը եփվում է, խաղում իր տակ,

Գնում-գալիս է գոռոզաբար,
Ձեռքով է անում, բարձր կանչում.
Ո՞ւր է կտրիճն այն, որ դուրս կգա
Իր դեմ մահու և կենաց մարտի...
Հիմա, նայեցե՛ք. սև գլակով
Մի կազակ շտապ նետվեց առաջ.
Հրացան կորզեց երկու ձեռքով...
Մոտ է... կրակոց... ծխի քուլա...
— Էհե՛յ, կազակնե՛ր, իր ետևի՛ց...
— Վիրավո՞ր է։— Քի՛չ... Եվ բորբոքվեց
Հրաձգություն երկու կողմից...

Ընդհարումներն այդ քաջակորով
Զվարճալի են ու անհեթեթ.
Քիչ չեն եղել զով երեկոներ,
Երբ զմայլվել ենք մենք դրանցով,
Առանց հուզմունքի արյունատենչ,
Ինչպես բալետով ողբերգական.
Բայց բալետնե՛ր եմ տեսել նաև,
Որ ձեր բեմերին բնավ չկան...

Մի օր Գիխիի մոտակայքում
Մենք անցնում էինք անտառով խիտ.
Կրակ էր շնչում, հուրհրատում
Երկնակամարը լազուր-վճիտ։
Դաժան կռիվ էր մեզ սպասվում.
Իշկերյան հեռու լեռնաշխարհից,
Անսալով կոչին եղբայրների,
Ձեչենիա էին համախռնվում
Բազմությունները կտրիճների։
Մինչդրհեղեղյան անտառներում
Փարոսներ էին վառվում չորս կողմ.
Ծուխը մե՛րթ սյան պես գալարվելով
Վեր էր խոյանում, մե՛րթ տարածվում,
Ցրվում էր ամպի ծվեններով.

Անտառներն էին կենդանացել.
Վրանների տակ նրանց կանաչ
Թնդում էր վայրի կռինչ, փոխկանչ։
Գումակն հազիվ էր բացատ հասել,
Երբ գործն սկսվեց։ Սո՛ւս, վերջապահ
Զորքն է թնդանոթ գործի դնում.
Թփերից զենք են հանում տանում.
Ոտքերից քարշ են տալիս մարդկանց,
Բուժակներ կանչում որոտաձայն...
Հանկարծ ոռնոցով դուրս թափվեցին,
Թնդանոթներին վրա տվին.
Ահա ծառերի կատարներից
Կարկուտ են տեղում դնդակների։
Մինչդեռ առջևում լուռ է. այնտեղ
Գետակն է վազում մեծ թփուտում։
Մենք մոտենում ենք. նրանք մեր դեմ
Մի քանի նռնակ են շպրտում.
Շարժվում ենք դարձյալ. լուռ են հիմա.
Բայց անցափակի գերաններին
Կարծես հրացան է պսպղում.
Նշմարվեցին և երկու փափախ
Ու դարձյալ կորան թավ խոտերում։
Դա լռություն էր սպառնալի,
Որը թեպետև շատ կարճ տևեց,
Սակայն քիչ սրտեր չխփեցին
Այդ արտասովոր սպասման մեջ։
Հանկարծ համազարկ... նայում ենք լուռ.
Պառկած են ահա նրանք շարք-շարք.
Ի՞նչ փույթ, այստեղի գնդերը քաջ
Ու փորձառու են, գործին հմուտ...
— Սվինամարտի՜, միահամո՛ւռ,—
Հնչեց ետևից մեր հրաման։
Արյունը եռաց մեր սրտերում։
Բոլոր սպաներն առաջ ընկան...
Ով չէր հասցրել ցատկել ձիուց,
Դեպի անցկալներ սուրաց ձիով...
— Ուռա՜։— Ու լռեց... — Դաշույններո՜վ,

Խզակոթերո՞վ... — Ի՞նչ կոտորած...
Ամբողջ երկու ժամ մարտը տևեց
Գետակի ջրում։ Մոլագարված
Մորթոտում էին մարդիկ իրար
Կուրծք-կրծքի, անձայն, դաժանորեն.
Գետակն էր կանգնել դիակներից։
Ուզեցի ես ջուր ըմպել ափով
(Ուժասպառ էի մարտից, շոգից),
Բայց տաք էր, կարմիր ջուրը պղտոր...«

Գետափին, կաղնու ստվերի տակ,
Առաջին թմբից մի քիչ այն կողմ,
Կանգնած էր մի խումբ։ Ինչ-որ զինվոր
Ծնկի էր իջել. կոպիտ, մռայլ,
Բիրտ էին թվում դեմքերն անքուն,
Բայց թարթիչներից նրանց փոշոտ
Արցունքի շիթեր էին կաթում...
Շինելի վրա, կաղնու տակ հին
Նրանց կապիտանն էր տարածվել...
Մեռնում էր, կրծքին երկու վերքեր
Հազիվհազ սևին էին տալիս.
Արյունն էր քիչ-քիչ կաթում ներքև,
Կուրծքն էր ծանրորեն ելևէջում,
Պղտոր հայացքն էր շուրջը հածում,
Հծծում. «Փրկեցե՞ք ինձ, եղբայրնե՞ր»...
— Տանում են լեռներ... — Սպասեցե՛ք,
Մեր գեներալն է վիրավորված...
Ձեն լսում... Երկար նա հեծեծաց,
Բայց ավելի ու ավելի թույլ,
Լռեց ու հոգին տվեց աստծուն։
Հրացաններին հենված՝ խմբով
Թավաբեղները կանգնել տխուր...
Արտասվում էին լուռ... իսկ հետո
Խնամքով աճյունը մարտական
Ծածկեցին ինչ-որ գորշ թիկնոցով,
Վերցրին ու տարան։ Թախծից տանջված՝
Անշարժ ես նրանց էի նայում,

Մինչ հառաչանքով շուրջս մարդիկ
Զայնարկում էին ընկերներին.
Սակայն չգտա ես իմ հոգում
Ո՛չ կարեկցություն և ո՛չ էլ վիշտ։
Արդեն տիրում էր խոր լռություն.
Կույտեր կազմեցին դիակներից.
Արյունն էր քարերն ի վայր հոսում
Ծխուն շիթերով. նրա ծանր
Գոլորշիներով օդն էր լցված։
Մեր գեներալն էր զեկույց լսում
Ծառի տակ, նստած մի թմբուկի։
Անտառը ծխի մեջ վառոդի
Կապտին էր տալիս, ասես միգում։
Հեռվում, շարքերով խառն ու անկարգ,
Բայց հավետ հանգիստ ու վեհատես
Լեռներն են ձգվում, փայլում է վես
Կազբեկը գլխով իր սրածայր։
Ես խորհում էի ներքին վշտով.
Խե՜ղճ մարդ։ Ի՞նչ է նա, արդյոք, ուզում...«
Բոլորի համար երկնի ներքո
Տեղ կա միշտ ազատ, ուրեմն, ինչո՞ւ,
Ինչո՞ւ է լոկ նա անդուլ, անմիտ
Սնում, բորբոքում թշնամություն...
Գալուբը՝ շեշեն կունակն իմ հին,
Խփելով ուսիս՝ միտքս խզեց։
Տեղի անունը ես հարցրի,
Եվ պատասխանեց նա.— Վալերիկ.
Եթե ձեր լեզվով այն թարգմանես,
Ապա կլինի գետակ մահվան.
Հնոց ավանդն է, հավանաբար։
— Ձերոնցից քանի՞ մարդ է կռվել
Մոտավորապես։— Մոտ յոթ հազար։
— Զոհերը շա՞տ են։— Ի՞նչ իմանաս։
Իսկ ինչո՞ւ ինքներդ չեք հաշվել։
Այո՛, ինչ-որ մեկն ասաց, նրանք
Կհիշե՞ն օրն այս արյունահեղ։
Խորամանկորեն նա ինձ նայեց,

Որորեց գլուխն իր դառնացած։

Վախենում եմ սա ձեզ ծանծրացնի.
Զվարճության մեջ ազնվական
Տագնապները բիրտ ռազմական
Պիտի թվան ձեզ ծիծաղելի։
Դուք սովոր չեք ձեր միտքը տանջել
Վախճանի մասին խորհելով զուր.
Ձեզ նշմարի ձեր դեմքին ջահել
Հոգսի ու վշտի ոչ մի նշույլ.
Հազիվ թե մոտից տեսած լինեք,
Թե մարդիկ ինչպես են մահանում։
Տա՛ աստված, երբեք էլ չտեսնեք.
Ուրիշ տագնապներ շատ կան կյանքում։
Լավ չէ՞ ավարտել կյանքի ուղին
Ինքնամոռացման գրկում, արդյոք,
Եվ հանգչել քնով անզարթնելի՝
Մոտիկ զարթոնքի երազանքով։

Է՜հ, ժամն է, որ ձեզ տամ հրաժեշտ։
Թե պատմությունն իմ այս անարվեստ
Զվարճացնի ձեզ գոնե փոքր-ինչ,
Ես շատ երջանիկ պիտի զգամ,
Եթե ո՛չ, ապա համարե՛ք այն
Զարաճճություն, ներեցե՛ք ինձ
Եվ շշնջացե՛ք կամաց. խելա՛ռ...

ԿՏԱԿ

Կուզեի, եղբա՛յր, քեզ հետ զրուցել,
Բացե՛լ սիրտս քեզ.
Ասում են, թե ինձ քի՛չ է մնացել
Եվ մեռնո՛ւմ եմ ես.
Դու տո՛ւն կդառնաս շուտով, ասիեկա՛մ,
Տես հա՛... Բայց ո՞ւմ ինչ՝ ես կա՛մ, թե չկա՛մ,
Չէ՞ որ, ի՞նչ էլ որ ինձ հետ պատահի,
Ոչ ոք չի՛ հուզվի, սիրտը չի՛ ցավի։

Բայց եթե մեկը քեզ հա՛րց տա ինձնից...
Եվ ուզես ասե՛լ,
Ասա՝ գնդակը դիպել էր կրծքի՛ս,
Ծակել ու անցե՛լ.
Որ ապրա՛ծ կենա թագավորը մեծ,
Որ անճարա՛կ են բժիշկները մեր,
Եվ որ հայրենի ռուսաց եղերքին,
Ես ուղարկում եմ բարև՛ն իմ վերջին...։

Դժվա՛ր թե հիմա կենդանի լինեն
Մնո՛ղքն իմ սիրած,
Ճիշտն ասած, հոգուս մե՛ղք էլ կլինեք
Վշտացնե՛լ նրանց,
Բայց թե նրանցից մեկը հա՛րց տա քեզ,
Ասա՝ գրելում մի քիչ ծո՛ւլ եմ ես,
Ասա, որ գունդը ճակա՛տ ճամփեցին
Եվ թող... չսպասե՛ն իմ վերադարձին...
Աղջի՛կ ունեինք մի հարևանի...
(Նա կա՞, թե չկա...)
Գիտեմ, իմ մասին նա չի՛ հարցնի,
Բայց դո՛ւ, բարեկա՛մ,
Պատմի՛ր ողջ եղած-չեղածը նրան,
Զուր մի խնայի չոր սիրտը նրա,
Թող նա լաց լինի ու աչքը թացի՝
Ոչինչ չի՛ լինի նրան այդ լացից...

1841

ԱՐԴԱՐԱՑՈՒՄ

Երբ որ, փոխանակ փառապանծ անվան,
Միայն կրքերի մոլություններից
Հիշողություններ կթողնի մարդկանց
Բարեկամը քո և ուրիշ ոչինչ,

Երբ սառ հողի տակ քնած լինի լուռ
Այն սիրտը, որտեղ արյունն էր եռում,
Որտեղ այնպե՞ս խենթ, այնպե՞ս ապարդյուն
Քշնամության դեմ սերն էր մաքառում,

Երբ համընդհանուր դատավճռի դեմ
Դու կպապանձվես, գլուխդ հակած,
Եվ երբ քո սերը անմեղ ու անեղծ
Դառնա քեզ համար նախատինք հանկարծ,—

Նրան, ով կրքով ու արատներով
Մթագնեց կյանքը մատաղ օրերիդ,
Խնդրում եմ. կծու կշտամբանքներով
Այդ ծանր ժամին մի՛ մտաբերիր։

Բայց նենգ ամբոխի դատաստանի դեմ
Ասա՛. կդատի մեզ ա՛յլ դատավոր,
Եվ ներման քո սուրբ իրավունքն արդեն
Դու գնել ես քո տառապանքներով։

ՀԱՅՐԵՆԻՔ

Սիրում եմ ես հայրենիքս, սակայն սիրով տարօրինակ։
Եվ անզոր է իմ այդ սիրույն միտքս մատնել լուրջ
պարտության։
Ո՛չ այն փառքը, որ գնել է տաք արյունով նա շարունակ,

Ո՛չ հանգիստը, որ լեցուն է ինքնավստահ հպարտությամբ,
Ո՛չ էլ նրա նվիրական ավանդները մութ անցյալի
Իմ մեջ երբեք չեն հարուցում երազանքներ ուրախալի։
Բայց սիրո՛ւմ եմ, սիրո՛ւմ եմ ես — ինչի՞ համար՝ ե՛կ
հասկացիր—
Նրա անափ ստեպների լռությունը ցրտից սառած։
Նրա թավուտ անտառների տարուբերումն անծայրածիր
Ու գետերի վարարումը՝ ծովեր դառած։
Գյուղամիջյան ճանապարհով սիրում եմ ես թռչել կառքով
Եվ հայացքով ներթափանցած՝ մթան քողը հետախուզել,
Փափագելով տաք օթևան՝ տեսնել լույսեր տխուր շարքով,
Տրտմաթախիծ գյուղակների դողդո՛ջ լույսեր։

Կրակ արված խոզանների ծուխն եմ սիրում,
Բայց ստեպում օթևանած ինչ-որ գումակ,
Եվ բլուրին՝ ոսկեդեղին ծով արտերում՝
Մերձ ու մոտիկ մի զույգ կեչի՝ այնպես ճերմակ։
Մի խնդությամբ, որ անհայտ է շատ-շատերին,
Տեսնում եմ ես դեզ ու հարդով լեցուն մի կալ,
Պուճուր խրճիթ՝ ծածկված շերտով ծղոտների
Եվ լուսամուտ՝ իր փեղկերով փորանկար։
Ու երբ տոն է և իրիկուն շաղով-ցողով,
Մինչ ուշ գիշեր ես կդիտե՛մ այն պարը տաք՝
Սուլոցներո՛վ, դոփյունների թինդ ու դողով
Արդեն հարբած մուժիկների զրույցի տակ։

ՄԵՌՅԱԼԻ ՍԵՐԸ

Ի՞նչ փույթ, որ այսպես սառն հողում, անգի՛ն,
Գտա ապաստան.
Ամենուր քեզ հետ կլինի իմ հոգին
Հուր ու հավիտյան։
Խելահեղ սիրո տանջանքներն անլուր,
Անգամ շիրմի մեջ,
Այս հանգստի ու մոռացման երկրում
Մնացին անշեջ։

Օրհասի պահին թողնելով անահ
Թե՛ քեզ, թե՛ աշխարհ,
Սպասում էի բաժանման բերկրանք —
Բաժանում չկա։
Տեսա երկնագեղ անմարմիններին,
Սակայն թախծեցի,
Որ պատկերը քո նրանց դեմքերին
Չճանաչեցի։

Ինչի՞ս է փայլը աստծո տերության,
Դրախտն երկնային,
Թերել եմ այստեղ ինձնից անբաժան
Կրքեր երկրային։
Իմ լույս երազն եմ փայփայում ես քեզ
Միշտ և ամենուր.
Տենչում եմ, լալիս, խանդում անամոթ,
Ինչպես անցյալում։

Թե հանկարծ օտար մի շունչ է խաղում
Այտերիդ, անգի՛ն,
Համր տանջանքից սմքում է, գողում
Վհատ իմ հոգին.
Թե շշնջում ես մի ուրիշ անուն
Դու քուն մտնելիս,
Շշունջներդ իմ մեջ վառվելով՝ հոսում,
Ճարակում են ինձ։

Ո՛չ, դու չպետք է սիրես ուրիշին
Երբեք, հավիտյան.
Մեռյալիս հետ ես պսակված ընդմիշտ
Ուխտով սրբազան.
Ավա՜ղ, քո վախն ու աղերսանքը քո
Զուր են, տիրեցի՛ս,
Գիտես, որ հանգիստ, մոռացում, անդորր
Հարկավոր չեն ինձ։

ՎԵՐՋԻՆ ՏՈՒՆՄՏԵՂ

Ու մինչդեռ Ֆրանսիան ծափահարությամբ, ուրախ
կանչերով
Դիմավորում է պաղ մոխիր դարձած աճյունը նրա,
Նրա, որ վաղուց ընկել է հեռվում մենակ տանջվելով,
Շղթաների մեջ, աքսորում մռայլ.
Մինչդեռ աշխարհը գովաբանությամբ հաճոյակատար
Պսակում է իր ուշացած զղջման ավյունը անսանձ,
Եվ իրենից գոհ ամբոխն այս անմիտ, որ հիմարաբար
Հպարտանում է, հինը մոռացած,
Ես ազատություն տալով հույզերիս ու իմ զայրույթին,
Եվ հասկանալով տոնախմբության հոգին սնափառ,
Ուզում եմ դիմել, ուզում եմ ասել մեծ ժողովրդին՝
Դու ժողովուրդ ես խղճուկ ու դատարկ։
Ողորմելի ես, քանզի և՛ հավատ, և՛ փառք, և՛ հանճար,
Այն ինչ վեհությունն ու սրբությունն է համայն աշխարհի,
Դու քո մանկամիտ կասկածանքների ծաղրանքով հիմար
Փոշիների մեջ ոտնակոխ արիր։
Փառքը փոխեցիր երեսպաշտության մի խաղալիքի,
Ազատությունից դու դահճի տապար ու սուր կռեցիր
Եվ նվիրական ու սուրբ հավատը քո հայրենիքի
Դու զգեստեցիր ու թրատեցիր։
Մեռնում էիր դու, և նա հայտնվեց իր խիստ հայացքով,
Նա, որ ճակատին աստծո սրբազան կնիքը ուներ,
Առաջնորդ կարգվեց նա ժողովրդի դատով ու կամքով,
Նրա մեջ ձուլվեց նաև կյանքը ձեր։
Եվ դուք ամբացաք նրա տերության հովանու ներքո,
Ու աշխարհն արար նայում էր այնպես երկյուղած, անձայն,
Թե ինչպես էր նա ձեր ուսերն ի վար գցում իր ձեռքով
Սիրանին փառքի և հզորության։
Մենակ էր, ցակայն ամենուր էր նա, սառն էր ու շիտակ,
Հայրն էր ալեհեր իր ջոկատների ու որդին սիրած
Հին Եգիպտոսի ավազուտներում, Վիեննայի տակ
Ու թե Մոսկվայի ձյուներում սառած։

Իսկ դուք, ասացեք, այն նույն ժամանակ ի՞նչ էիք անում,
Երբ հպարտորեն մահանում էր նա գաշտերում օտար,

Որպես ծանր բեռ դուք իշխանությո՞ւն էիք սասանում,
Ո՞ւր էիք սրում գիշերում մթար։
Վերջին մարտերի բախումների մեջ, հուսահատ ջանքում,
Ահից չզգացիք ամոթը ձեր պիղծ խայտառակության
Եվ կնոջ նման դավաճանեցիք դուք նրան կյանքում,
Դուք ճորտերի պես մատնեցիք նրան։
Կորցրած իր տեղն ու քաղաքացու իրավունքն ազատ,
Նա ինքը հանեց պսակն իր ջարդված ու նետեց հողին
Ու իբրև գրավ նա ձեզ մոտ թողեց որդուն հարազատ,
Իսկ դուք մատնեցիք նրան ոսոխին։
Եվ ծանրաբեռնած բիրտ շղթաներով խայտառակության,
Հերոսին տարան իր ջոկատների անզուսպ լացի տակ,
Ու ծովից անդին, ժայռերի վրա այն օտարության,
Մոռացված հանգավ, հանգավ նա մենակ։
Մենակ — նա տանջվեց անպտուղ տենչով վրիժառության
Եվ իր տրտմությամբ հպարտ ու լռին,
Ու փաթաթելով նրան թիկնոցով իր զինվորական,
Վարձու ձեռքերը գերեզման դրին։
Բայց տարիք անցան, ու թեթևամիտ ժողովուրդը այն
Գոռում է. «Մերն է, մերն է, մեզ տվեք այդ աճյունը թանկ,
Կթաղենք նրան, որպես մեծ հնձի սերմը սրբազան
Հենց իր իսկ փրկած պարիսպների տակ»։
Նա հողն իր դարձավ, առաջվա նման պտույտ են անում
Նրա շուրջբոլոր բազմությունները խենթ ու խելագար,
Մայրաքաղաքի մեջտեղում՝ շքեղ դագաղ են դնում
Նրա աճյունի մասունքներն արդար։
Ուշ ցանկությունն այն հաջողությամբ է պսակված հիմա,
Կարճ հիացմունքն իր ամբոխը հիմա փոխած մի այլով,
Ուրախ, ինքնագոհ քայլում է նրա աճյունի վրա,
Նրա, որի դեմ մի օր կանգնել է միայն դողալով։
Եվ թախծում եմ ես, խորհելով, որ սուրբ անդորրն են
խախտում
Ու լռությունը շուրջը այն մարդու,
Որ այսքան տարի այնպես անձկորեն իր անպատում
Քուն է երազել ու հանգստություն։
Թե առաջնորդի ոգին երբևէ գա այցելության
Այն նոր դամբանին, ուր իր աճյունն է ամփոփված հիմա,

Ինչպիսի՞ ցասման ու ատելության
Փոթորկով պիտի հուզվի ու եռա։
Եվ ինչպես, ինչպես ափսոսա պիտի, տարված տխրությամբ
Հեռու երկնի տակ ընկած այն կղզին շոգ ու հրակեզ,
Ուր իր աճյունին պահակ էր կանգնել օվկիանոսն անափ,
Որ անպարտելի ու մեծ էր իր պես։

• • •

Սառն ու խորհրդավոր քո դիմակի տակից
Հնչեց ինձ բերկրալի ձայնդ, ինչպես երազ.
Լուսավորեցին ինձ աչիկներդ թովիչ.
Ժպտում էին նաև շուրթերդ խորամանկ։

Ես ակամա տեսա նուրբ շղարշի միջով
Ե՛վ այտեր կուսական, և՛ պարանոց ճերմակ,
Երջանկությո՞ւն, նաև մի քմահաճ խոպոպ՝
Հարազատ ծամերի ալիքներից փախած...

Եվ այդ նշաններով թեթև՝ ես մտովին
Ստեղծեցի այնժամ իմ նոր գեղեցկուհուն.
Նույն պահից էլ ահա տեսիլքն այդ անմարմին
Կրում եմ իմ հոգում, սիրում ու փայփայում։

Ու միշտ թվում է ինձ. խոսքերն այն կենդանի
Անցյալ տարիներին ես լսած եմ եղել.
Շշնջում է ասես մեկն էլ, թե մենք նորից
Կհանդիպենք որպես նախկին բարեկամներ։

(Ս. Ն. ԿԱՐԱՄԶԻՆԱՅԻ ԱԼԲՈՄԻՑ)

Ես էլ եմ սիրել օրերում անցյալ,
Միամտության օրերում հոգուս,
Ե՛վ աղմկահույզ մրջիկ բնության,
Ե՛վ մութ կրքերի մրրիկներ ծածուկ։

Սակայն գաղտնիքը դրանց այլանդակ
Գեղեցկության ես հասկացա շատ շուտ.
Եվ ձանձրացրրեց ինձ դրանց անկապ,
Խլացուցիչ ու կցկտուր լեզուն։

Արդ տարեցտարի սիրում եմ արդեն,
Ազատ տեղ տալով խաղաղ տենչանքիս,
Պարզ եղանակը առավոտյան դեմ
Եվ իրիկնային զրույցներ հանգիստ...

Սիրում եմ և ձեր պարադոքսները,
Հա՜-հա՜ն ու հի՜-հի՜ն, ֆարսը Սաշայի,
Ս(միռնովայի) չար կատակները,
Ոտանավորներն Իշկա Մ(յատլևի)...

(ԿՈՄՍՈՒՀԻ ՌԱՍՏՈՊՉԻՆԱՅԻՆ)

Ես հավատում եմ, ծնված ենք եղել
Ձեզ հետ միասին նույն աստղի ներքո.
Նույն ուղիով ենք ընթացել նաև,
Խաբված ենք եղել նույն երազանքով։
Ի՞նչ արած, ազնիվ նպատակներից
Խլված կրքերի փոթորիկներով՝
Ամուլ պայքարում մոռացման տվի
Ես պատանության ուխտերն իմ բոլոր։
Կանխատեսելով անդուլ բաժանում,
Վախեցած, սրտիս կապանք եմ դրել
Եվ չեմ հանդգնում այլևս ապարդյուն
Դավաճան խոսքին երազ վստահել...

Այդպես տարվում են երկու ալիքներ,
Դիպվածով կազմած կամավոր մի զույգ,
Կապուտակ ծովի ամայության մեջ.
Մեկտեղ քշվում են հարավի քամուց.
Սակայն ինչ-որ տեղ նրանց անպայման

Պիտի բաժանի ժայռի կուրծքը ժեռ...
Եվ, սովորական սառնությամբ, դարձյալ
Անտեր, անտարբեր, ամեն մեկն իր հետ
Իրարից հեռու ափեր կտանի
Խոխոջն իր քաղցրը ու քընքշանըվաղ,
Փայլն իր փոխառյալ, աղմուկն իր մոլի
Եվ գրգանքներն իր հավիտենական։

ԴԱՇՆԱԳԻՐ

Թող արհամարհեն մարդիկ չարությամբ
Անհասկանալի մեր դաշինքն անբիծ,
Թո՛ղ որ ամբոխի նախապաշարմամբ
Դու զրկվա՛ծ լինես ընտանի հարկից։

Սակայն ես երբեք ծունկի չե՞մ իջել
Կուռքերի առաջ հասարակության,
Չէ՞ որ մենք գիտենք, որ արժանի չէ՛
Նա ոչ մեծ սիրո՛, ոչ ատելությա՛ն։

Ինչպես դո՛ւ, ե՛ս էլ պտտվում եմ խենթ
Եվ խրախճանքում ոչինչ չե՞մ ջոկում,
Խոսում և խենթի, և խելոքի՛ հետ
Եվ սրտիս ուզածն անո՛ւմ այս կյանքում։

Մենք մեր կարճ բախտը չե՞նք գնահատում,
Մարդկա՛նց ենք սովոր մենք միշտ վեր հանել,
Չե՞նք դավաճանի մենք մեզ այս կյանքում
Եվ անհնա՞ր է մեզ դավաճանել։

Մենք ամբոխի մեջ գտա՛նք իրարու,—
Մտերմացանք ու լքո՛ւմ ենք ընդմիշտ.
Անուրա՛խ էր մեր սերը աշխարհում,
Եվ անջատումը կլինի անվի՛շտ։

* * *

Մնաս բարո՜վ դու, անլվա՜ Ռուսիա,
Երկիր տերերի ու ճորտերի.
Մնաք բարո՜վ դուք, մունդիրնե՛ր լազվարթ,
Ժողովուրդ՝ նրանց հավատարիմ։

Գուցե Կովկասի պարսպից այն կողմ
Թաքնվեմ ես քո փաշաներից,
Նրանց աչքերից ամեն ինչ տեսնող,
Ամեն ինչ լսող ականջներից։

ԺԱՅՌԸ

(առաջին տարբերակ)

Ժայռ-հսկայի խոնջ կրծքի վրա
Ոսկի մի ամպիկ էր գիշերում.
Առավոտյան վաղ թևեց-սուրաց,
Խաղալով ուրախ ջինջ լազուրում։

Բայց ծերուկ ժայռի կնճռի մեջ խոր
Մնաց հետքը թաց։ Ու նա տրտում,
Կանգնած մենավոր ու խորախոհ,
Արտասվում է լուռ անապատում։

ԺԱՅՌԸ

(երկրորդ տարբերակ)

Ոսկի մի ամպիկ անապատում
Գիշերեց հսկա ժայռի կրծքին.
Առավոտյան վաղ սուրաց կրկին՝
Խաղալով ուրախ ջինջ կապույտում։

Բայց ծերուկ ժայռի կնճռի մեջ խոր
Ամպիկի խոնավ հետքը մնաց։
Եվ արտասվում է ժայռը կամաց՝
Մենավոր, տխուր ու խորախոհ։

ՎԵՇ

Այնպես եղավ, որ ցեղակից
Լերանց բազմության մեջ
Մեր Շատ-սարի* ու Կազբեկի
Միջև բացվեց մեծ վեճ։
«Զգուշացի՛ր, տե՛ս,— Կազբեկին
Ասաց Շատն ալեզարդ,—
Իզուր չէ, որ մարդու կամքին
Հնազանդ ես, եղբա՛յր։
Նա կշինի խցեր ծխոտ՝
Լեռների խորշերում.
Կշառաչի կացինը գոռ
Կիրճերիդ խորքերում։
Բահն ու բրիչը երկաթի
Քարեղեն կրծքիդ մեջ,
Հայթայթելով պղինձ, ոսկի,
Կբացեն ճամփաներ։
Քարվաններ են արդեն անցնում
Այն քերծերով, որտեղ
Լոկ մշուշներն էին շրջում
Եվ արքա-արծիվներ։
Խորամա՜նկ են մարդիկ... Դժվարն
Առաջին քայլն էր սոսկ...
Արևելքը, զգո՛ւյշ, եղբա՛յր,
Մարդաշատ է, հզոր»։
«Արևելքից ես վախ չունեմ,—
Ասաց Կազբեկ հսկան,—
Մարդկային ցեղն այնտեղ արդեն
Քնած է ինը դար։
Տե՛ս՝ շվաքում զով չինարի
Գինին է փրփրածին
Թափթփում իր զառ շալվարին
Քնեած վրացին։
Շատրվանի մոտ լուսացիր,
Ղնյլանների ծխում,

* Շատ—էլբրուս։ (Ծան. Լերմոնտովի)։

Թիկնած գունեղ իր բազմոցին
Մեղկ Թեհրանն է ննջում։
Ահա նաև անշարժ, անխոս
Մի երկիր էլ մեռած
Երուսաղեմի ոտքի մոտ,
Աստծու կամքով այրված։
Այն կողմ, հավետ խորթ ստվերին,
Նեղոսն է ողողում
Արքայական դամբանների
Սանդուղքներն անտերունչ։
Բեդվինն, ի սեր վրանների,
Ասպատակ մոռացել,
Աստղ հաշվելով, երգում է հին
Պապենական գործեր։
Ինչ տեսնում եմ, անփույթ, հանգիստ
Քնի մեջ է սուզվել...
Ո՜չ, զառամյալ Արևելքն ինձ
Անկարող է տիրել»։

«Մի՛ պարծեցիր դու կանխապես,—
Ասեց Շատն ասաց նրան.—
Տե՛ս՝ հյուսիսում մշուշի մեջ
Երևում է մի բան»։

Եվ այդ լուրից ներքուստ անչափ
Հսկա Կազբեկն հուզվեց
Ու, շփոթված, հայացքն անթարթ
Մոայլ հյուսիս ուղղեց։
Տարակուսած նայում է նա,
Խոհերով լի, այն կողմ,
Տեսնում՝ շարժում տարօրինակ,
Լսում՝ շռինդ, ժխոր։
Մեծ Ուրալից մինչև Դանուբ,
Մինչև գետն ահռելի,
Հորձանք տալով, շողալով՝ բյուր
Բանակներ են գալիս։
Ցցունքներն են ծփում, ինչպես
Փետրախոտեր ճերմակ,
Ուլաններ են սուրում պես-պես,
Փոշու ամպեր թողած։
Մարտական կուռ շարքերով խիտ
Ջոկատներն են դոփում.
Դրոշներ են տանում դեմից,
Թմբուկներ են խփում։
Մարտկոցներն են պղնձաշար
Ոստոստում ու թնդում,
Պատրույգներն, հանց կովից առաջ,
Ծխում են, բոցկլտում։
Մի գեներալ է ծեր, կովի
Մրրիկներում փորձված,
Ահագնասաստ աչքերով իր
Առաջնորդում նրանց։
Աղմկելով հեղեղի պես
Գնդերը ահռելի՝
Ահեղընթաց, ինչպես ամպեր,
Արևելք են գալիս։
Զարագուշակ խոհերով, սև
Երազներով տանջված,
Մոայլ Կազբեկն ուզեց հաշվել —
Բայց հաշի՞վ կար նրանց...
Եվ ցեղակից հոծ լեռներին
Տխուր հայացք ձգեց,
Քաշեց գլխարկը* հոնքերին
Ու հավիտյան լռեց։

ԵՐԱԶ

Դաղստանի հովտում, միջօրեի շոգին,
Ընկած էի անշարժ, կապարը իմ կրծքում.
Ու մորմոքում էր դեռ խորախոց վերքը իմ,
Եվ կաթիլ առ կաթիլ արյունս էր վար հոսում։

* Լեռնականները գլխարկ են անվանում Կազբեկի գագաթին մշտապես նստած ամպերը։ (Նան. Լերմոնտովի)։

Պառկել էի մենակ հովտի ավազներին,
Շուրջը նեղվում էին ժայռախորշերը լայն,
Արեգակն էր կիզում կատարները դեղին,
Կիզում և ինձ, իսկ ես՝ քնած քնով մահվան։

Եվ երազում տեսա ճրագներով լույսի
Երեկոյան խնջույքն իմ հայրենի երկրում։
Ծավալվում էր ուրախ զրույցը իմ մասին՝
Երիտասարդ կանանց ծաղկապսակ խմբում։

Սակայն անմասնակից այդ զրույցին ուրախ
Այնտեղ մի մտատանջ աղջիկ էր լուռ նստել.
Եվ երազով տխուր ջահել հոգին նրա,
Ասված գիտե, թե ո՞ւր, ո՞ւր էր խորասուզվել։

Ու երազում էր նա հովիտ Դաղստանի,
Ծանոթ դիակ՝ ընկած այդ միևնույն հովտում,
Մխացող վերքը խոր իր սևացած կրծքին,
Եվ շիթերով սառչող արյունն էր վար հոսում...

* * *

Մի լար, մի լար, իմ երեխա,
Ջարժի նա վիշտդ աղեկեզ,
Կատակով էր գուրգուրում նա
Եվ ձանձրույթից էր սիրում քեզ։
Մի՞թե վրաց երկնքի տակ
Քիչ են պարմանները սիրուն՝
Սև աչքերով-շարժուն կրակ
Ու բեղերով թուխ, ոլորուն։

Հեռու երկրից օտարանուն
Այստեղ նետված բախտին հլու,
Կռիվ ու փառք էր որոնում,
Նրա համար ի՞նչ էիր դու։

Նա քեզ ոսկի էր նվիրում,
Երդվում, որ չի դավաճանի,
Քնքշանքդ էր թանկ գնահատում,
Արցունքդ չի գնահատի։

* * *

Sie liebten sich beide, doch keiner
Wollt'es dem andern gestehn.
Heine*.

Շատ էին սիրում նրանք մեկմեկու՝ քնքուշ ու երկար,
Խորին կարոտով և խռովահույզ կրքով խելագար։
Բայց թշնամու պես հանդիպումներից նրանք խուսափում
Եվ — ի՞նչ սիրտ բացել. պարզ խոսքերն անգամ կարճ էին կապում։
Նույն հպարտությամբ լուռ բաժանվելով՝ իրար տանջեցին,
Լոկ երազի մեջ տեսնելով իրար կերպարանքը թանկ։
Եվ մահը եկավ. հասավ վայրկյանը նոր տեսակցության,
Բայց նոր աշխարհում... իրար այդպես էլ չճանաչեցին։

ԹԱՄԱՐԸ

Դարյալի կիրճում խորունկ ու մթին,
Որտեղ Թերեքն է գալարվում արագ,
Սևին տալով սև ժայռի ճակատին՝
Կանգնած էր վաղուց մի հին աշտարակ։

Այդ աշտարակում բարձրաբերձ ու նեղ
Ապրում էր մի օր Թամար թագուհին,
Որ դևի նման նենգ էր ու ահեղ
Եվ չքնաղ, ինչպես կույսը երկնային։

Եվ փայլում էր միշտ մի լույս ոսկեշող
Այնտեղ, գիշերվա խավարի միջում,

* Նրանք իրար սիրում էին, բայց ոչ մեկը
Չէր ուզում մյուսին խոստովանել։

Հայնե

Երևում էր նա մթնում անցորդին
Ու գիշերային հանգստի կանչում։

Եվ լսվում էր պարզ ձայնը Թամարի,
Որ լի էր կրքով, ցանկությամբ մոլի,
Որ ուներ հմայք ամենակարող
Եվ իշխանություն անհասկանալի։

Հովիվ, փերեզակ, թե ռազմիկը քաջ —
Գնում են անտես այդ փերու ձայնին.
Դռներն են բացվում եկողի առաջ,
Եվ ներս է թողնում մոայլ ներքինին։

Եվ իրեն մահճում փափուկ, փետրալի,
Մարգարիտներով, խասով զարդարված,
Սպասում է նա հյուրին ցանկալի.
Դեմը գինու զույգ թասերն են դրված։

Փաթաթվում էին բազուկները տաք,
Շրթունքներն էին ջերմ հպվում իրար,
Ու վայրի ձայներն այն տարօրինակ
Չէին դադարում գիշերում խավար։

Ասես թե հարյուր կին ու պատանիք
Այդ կեսգիշերին, դատարկ ամրոցում,
Խմբվել-եկել են մի մեծ հարսանիք,
Կամ թաղման ծեսում լալիս են, կոծում։

Բայց հենց արեգակն առավոտ ծեգին
Կապույտ լեռներին իր ցոլքն էր նետում,
Նախկին անդորրն ու խավարը կրկին
Տիրում էր այնտեղ մի ակնթարթում։

Թերեքն էր միայն Դարյալի կիրճում
Իրեն աղմուկով անդորրն այդ խզում,
Ալիքներն էին վեր ու վար թռչում,
Ալիքներն՝ իրար հետևից վազում։

Եվ տանում էին նրանք ողբալով
Դիակը անխոս. այնժամ ինչ-որ բան,
Պատուհանի մոտ սպիտակին տալով,
Հրաժեշտ էր ասում վերևից նրան։

Եվ անջատումն այդ քնքուշ էր այնքան,
Տես, դոփյուն է մոտից լսվում,
Որ կարծես գալիք ուրախ տեսության
Սերն ու գգվանքն էր նրան խոստանում։

ԾԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1

Արդեն նիրհող լեռան հետև
Թրիխնային շողն է հանգչում,
Փայլատակում է դեռ թեթև
Աղբյուրը տաք ու շառաչուն։
Այգիներով բույրն է հոսում,
Մաղիկների բույրը անուշ,
Խոր լռություն է Թիֆլիսում,
Եվ կիրճի մեջ ծուխ է ու մուժ։
Մարդկանց վրա այն մեղսական
Չար երազներ են թևածում,
Հրեշտակներն են պահապան
Մանուկների հետ զրուցում։

2

Այնտեղ՝ ռանչին միջոց սարի,
Ուր կանգնած է ամրոցը հին,
Չինարու տակ մի վիթխարի
Մենակ պառկել եմ ես գորգին։
Մենակ պառկել, խորհում եմ ես.
Դա երազո՞ւմ էր, թե՞ արթուն,
Որ գիշերով մոայլատես

Ինձ խոստացար տեսակցություն։
Եվ այս ժամին խորհրդավոր,
Սակայն սիրո քաղցր ժամին,
Կանչում է տենչն իմ թևավոր
Քեզ, իմ միակ բարեկամին։

3

Հին կամուրջին պաշտեկների
Կրակներն են միայն թարթում,
Զանգատներն են վանքերի
Հանց պահակներ կանգնել արթուն։
Հին քաղաքի բաղնիսներից
Իրենց քայլքով անհամարձակ,
Նման ճերմակ շղթաների
Դուրս են գալիս վրաց կանայք։
Փողոցներով լուռ, ամայի
Քայլում են հեզ, սահում հանդարտ,
Բայց ծածկոցի տակ չադրայի
Քեզ ճանաչել դժվար է շատ։

4

Քո տնակն է հարթ տանիքով
Հեռվից հեռու ինձ երևում,
Որի շեմքը հին սանդուղքով
Լողանում է գետի ջրում։
Քուռի վրա վետվետացող
Ջովության մեջ ու հովերի
Կանգնած է նա, պատած ցանցով
Կանաչավուն բաղեղների։
Բարձրակատար բարդու հետև
Տեսնում եմ ես մի լուսամուտ...
Բայց մենավոր մոմը այնտեղ
Չի բոցկլտում... մռայլ է, մութ։

5

Սպասում եմ։ Սակայն իզուր
Թափառում է հայացքը իմ,
Անհամբեր եմ, դաշույնն իմ սուր
Կտրատում է այս գորգը հին։
Սպասում եմ ես տիրամած,
Եվ այնպես ծանր է այս ժամին,
Արևելքից փչեց կամաց
Խոնավ քամին ու ցուրտ քամին։
Լեռներն հեռու՝ պատած ձյունով,
Սկսում են կարմիր հագնել,
Ու քաղաքից քարավանով
Դուրս են գալիս փերեզակներ։

6

Հեռու, արցո՛ւնք ամոթաբեր,
Նա՛, դու սիրտ իմ բորբոքուն,
Քո խարդավանքն ու դավը սև
Հասկանալի են իմ հոգուն։
Գիտեմ, ինչով էր սփոփված
Այն թաթարը երիտասարդ,
Որ փողոցով ձեր սալարկված
Սլանում էր խենթ ու աղատ։
Նա իզուր չի միշտ երևում
Լուսամուտի առջև ձեր տան
Եվ քո հորը հիացնում
Հովատակով իր պարսկական։

7

Մի հրացան կառնեմ երկար,
Դարպասից դուրս կելնեմ արագ
Այնտեղ, ուր ժայռն է վիմաքար,
Մի կեռման կա նեղ ու բարակ։

Մինչև կեսօր կքած լռին
Քարի հետև գերեզմանի,
Ես փոշեպատ ճանապարհին,
Կուղղեմ փողն իմ հրացանի։
Զուր է կուրծքն իմ այսպես հուզվում...
Պառկում եմ ես դիրքում իմ գոց.
Տես, դոփյուն է մոտից լսվում,
Ա՜յ, այդ դու ես, եղեռնագործ...

ՏԵՐԵՎԸ

Կաղնու անօգ մի տերև պոկվեց ոստից հարազատ,
Հալածված խոլ հողմերից՝ քշվեց-ընկավ անապատ,
Ցրտից, տապից ու վշտից նա չորացավ ու թոշնեց,
Թափառելով՝ հայտնվեց Սև ծովի մոտ վերջապես։

Ծովի ափին գեղուղեշ մի չինար էր կանաչում,
Սյուքն էր գգվում ոստերին իր, հետը հուշիկ քշփշում,
Հավքերն էին դրախտի ճոճվում կանաչ ճյուղերին,
Գեղգեղալով փառք երգում կույս-թագուհուն ծովերի։

Եվ տերևը կառչելով սեգ չինարի արմատից՝
Աղերսում է անձկագին մի ապաստան նրանից
Եվ ասում է նա այսպես. «Կաղնու տերև եմ թշվառ,
Հայրենիքում իմ դաժան ես աճեցի վաղահաս։

Աննպատակ ու մենակ վաղուց քշվում եմ այսպես,
Թոշնել՝ անքուն, անհանգիստ, չորացել եմ անստվեր։
Ա՜ռ պանդուխտիս զմրուխտյա տերևներիդ մեջ կանաչ.
Պատմություններ շատ գիտեմ, արտասվոր, հիասքանչ»։

«Ինչի՞ս ես պետք,— չինարը տվեց նրան պատասխան,—
Դեղնած ես դու ու փոշոտ, զավակներիս անարժան։
Շա՜տ ես տեսել,— ինչի՞ս են առասպելներդ սնոտի,
Ջանձրացրել են ինձ վաղուց հավքերն անգամ դրախտի։

Գնա անցի՛ր, ո՞վ պանդուխտ, չեմ ուզում քեզ ճանաչել,
Ես սիրված եմ արևից, նրա համար եմ ծաղկել.
Ճյուղերս ազատ եթերում մինչ երկինք են տարածվում,
Արմատներս էլ սառնորակ կապույտ ծովն է ողողում։

• • •

1

Ո՛չ, այդ քե՛զ չէ, որ ես սիրում եմ բուռն այդքան.
Ինձ համար չէ շենշող փայլը թովչանքներիդ.
Սիրում եմ ես քո մեջ տանջանքներն անցյալիս,
Օրերն իմ կործանված ջահելության։

2

Երբեմն հմայված երբ նայում եմ ես քեզ,
Սուզվում խորքն աչքերիդ անմեկին հայացքով,
Ես տարված եմ լինում խորհրդավոր խոսքով,
Բայց սրտով խոսում եմ ոչ թե քեզ հետ։

3

Խոսում եմ սիրուս հետ պատանի օրերի,
Քո դեմքին փնտրում եմ ուրիշ դիմագծեր,
Կենդանի շուրթերիդ՝ վաղուց համր շուրթեր,
Աչքերիդ մեջ՝ հուրը խավարած աչքերի։

• • •

Ես դուրս եմ ելնում, մենակ, ճանապարհ —
Փայլում է ուղին մշուշի միջից.
Լսում է աստծուն անապատը լուռ,
Եվ աստղն աստղի հետ խոսում է հեռվից։

Հրաշալի երկինք, շքեղահանդես,
Երկիրն է նիրհում կապույտ շողերում...
Ինչո՞ւ ցավագին տխուր եմ այսպես,
Սպասո՞ւմ եմ մի բան, անցա՞ծն եմ ողբում։

Ես կյանքից արդեն հուսալիք չունեմ,
Եվ չե՛մ ափսոսում օրերս անցյալ,
Ես ազատություն և հանգիստ կուզեմ,
Ես կուզեմ քնել և ինձ մոռանալ։

Սակայն ո՛չ երբեք ցուրտ քնով չիրմի,
Կուզեի հավերժ ես այնպե՛ս ննջել,
Որ կյանքի ուժը նիրհեր իմ սրտում
Եվ կուրծքս մեղմով բարձրանար, իջներ։

Որ գիշեր-ցերեկ ինձ սիրո մասին
Սրտաբուխ մի երգ քաղցրաձայն հնչեր.
Եվ սաղարթախիտ, մթագին կաղնին
Հավերժ գալարուն՝ վրաս շառաչեր։

ԾՈՎԻ ԱՐՔԱՅԱԴՈՒՍՏԸ

Ծովում արքայազնը լողացնում է ձին.
Լսում է. «Նայի՛ր, արքայա՛զն, ինձ»։

Նժույգն է փնչում ականջը խլշած,
Ջուրը ճողփելով լողում է առաջ։

«Արքայադուստր եմ ես,— լսեց մեկ էլ,—
Ուզո՞ւմ ես ինձ հետ գիշեր անցկացնել»։

Ահա և մի ձեռք երևաց ջրից,
Բռնեց մետաքսյա սանձի ծոպերից։

Ապա դուրս եկավ մի գլուխ մատղաշ,
Ծովային խոտը ծամերին հյուսված։

Կապույտ աչքերը սիրով են վառվում.
Վզին մարգարտե շիթեր են դողում։

Խորհում է տղան. «Սպասի՛ր, դե լա՛վ».
Ճարպկորեն բռնեց հյուսերից նրա։

Աղջիկը, ձեռքում առնական ու կուռ,
Լալիս է, խնդրում, ծեծկվում, թպրտում։

Ափ է դուրս լողում դյուցազնը արի,
Բարձրաձայն կանչում իր ընկերներին.

«Հե՛յ, բարեկամնե՛ր, շուտ այստե՛ղ եկեք,
Ո՞նց է թպրտում իմ որսը, տեսե՛ք...

Դե ի՞նչ եք կանգնել այդպես շվարած.
Թե՞ դուք չեք տեսել այսպիսի հրաշք»։

Եվ արքայազնը հանկարծ ետ նայեց.
Ցնցվեց, հաղթական հայացքն իր մարեց։

Տեսավ՝ ոսկեգույն ավազին պառկած
Ծովի հրեշն է, պոչով իր կանաչ.

Օձաթեփուկով պոչն է շողշողում,
Նվաղում է թույլ, գալարվում, դողում.

Փրփուրն է հոսում ճակատով վարար,
Աչքերն է պտտել խավարը մահվան.

Ավազն է ճանկռում դալուկ ձեռքերով,
Քրթմնջում ինչ-որ նզովքներ աղոտ...

Եվ արքայազնը գնաց մտացիր։
Արքայադուստեր դեռ շա՛տ կՀիշի...

ՄԱՐԳԱՐԵ

Երբ դատավորը երկնի շնորհեց
Ինձ ամենիմաց ձիրք մարգարեի,
Մարդկանց աչքերում կարդում եմ անտես
Էջեր շարության ու արատների։

Ես սկսեցի տարփողել սիրո
Եվ ճշմարտության ուսմունք սրբազան,
Բայց բոլոր մարդիկ, նույնիսկ մերձավոր,
Ինձ քարկոծեցին մոլուցքով դաժան։

Մոխիր ցանեցի գլխիս ու փախա
Ես քաղաքներից, աղքատիկ ու խեղճ,
Եվ անապատում ապրում եմ ահա
Աստծո շնորհով՝ թռչունների պես։

Այստեղ, արարչի պատգամին հլու,
Հնազանդ է ինձ ամեն երկրածին.
Նույնիսկ աստղերն են խոսքիս ունկնդրում՝
Ճառագայթների խաղով ցնծագին։

Երբ բազմաժխոր քաղաքով հանկարծ
Ես անց եմ կենում անապարանքով,
Այնժամ ծերերն ինձ ցույց տալով մանկանց՝
Ասում են ժպտով իրենց ինքնագոհ.

«Նայեցե՛ք, ահա՛ լավ օրինակ ձեզ.
Հպարտ էր, մեզ հետ յոլա չգնաց.
Անմի՛տ. ուզում էր մեզ հավատացնել,
Թե իր շուրթերով խոսում է աստված։

Հապա մի դրա՞ն նայեք, երեխե՛ք,
Որքա՛ն մռայլ է, գունատ ու վտիտ,
Տեսե՛ք, թե ինչպես թշվառ է ու մերկ,
Ինչպես ծաղրում են բոլորն այդ խենթին։

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ
1829—1836

1829

ԹՈՒՐՔԻ ԳԱՆԳԱՏԸ

Գիտե՞ս դու այն վայրի երկիրն արևային,
Պուրակներն ու մարգերն ուր գունատ են ծաղկում,
Անհոգն ու խորամանկն ուր չարին են պաշտում,
Ուր կրքով են եռում սրտերը մարդկային։
Այնտեղ, ուր երբեմն էլ ոստնում են վեհորեն
Մտքերը, որ սառն են և ամուր ինչպես քար,
Բայց նրանք վաղաժամ թախծի մեջ խեղդվում են,
Վաղաժամ է մարում նրանց հուրը արդար։
Դառնանում է այստեղ մարդկանց կյանքը արագ,
Կշտամբանքն հետևում է այնտեղ բերկրանքին,
Այնտեղ մարդն է տնքում շղթայի լծի տակ,
Այդ երկիրը, ընկեր, հայրենիքն է հենց իմ։

Հ. Գ.

Ա՜խ, թե հասկանա՞ս դու ինձ քո սրտով,
Ապա ներիր իմ ակնարկներն ազատ,
Թող ճշմարիտը քողարկվի ստով,
Ինչ արած, չէ՞ որ մենք ամենքս ենք մարդ։

ԻՄ ԴԵՎԸ

Նրա տարերքը գումարն է չարյաց.
Ծխուն ամպերի միջով սլանում,
Սիրում է մրրիկ ճակատագրական,
Գետերի փրփուր, անտառի աղմուկ։
Կանգնած է նրա գահը աներեր
Տերևների մեջ թափվող, դալկահար.

Այնտեղ, համբացած հողմերում ահեղ,
Նստում է վհատ, անհույս ու մոայլ։
Նա ներշնչում է կասկածանք չորս կողմ
Արհամարհում է սերն իսկ սրբազան,
Ամեն թախանձանք մերժում անողորմ,
Արյան նայում է անտարբերությամբ։
Կրքերի ձայնով ճզմում է, խեղդում
Ամեն մի հնչյուն վեհ երազանքի.
Իր ոչ երկրային աչքերից սոսկում,
Սմքում է մուսան հեզ ներշնչանքի։

ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ունչությունն է ողջ արժեքն այս աշխարհի,
Ո՞ւմ են պետք փառքի տենչն ու գիտությունն անհուն,
Տաղանդն ու բոցեղեն սերն առ ազատություն,
Երբ որ կիրառելն է դրանք անկարելի։
Մենք հյուսիսի որդիք, ու մեր բույսերի պես
Ծաղկում ենք կարճատև, թառամում ենք արագ,
Ջմեռային արփին գորշ երկնքում ինչպես,
Մոայլ է մեր կյանքը և, ավա՜ղ, կարճ այնպես,
Նրա տխուր հոսքը-միապաղաղ։
Օդը հեղձուցիչ է մեզ մեր հայրենիքում,
Ծանրանում է սիրտը, թախծում է մեր հոգին,
Մեզ չի ժպտում ո՛չ սեր, ո՛չ ջերմ ընկերություն,
Թոշնում է մեր կյանքը դատարկ փոթորկի մեջ
Մոայլվում է թույնով, ախտով նա նենգության
Բաժակը մեր կյանքի, ավա՜ղ, դառն է այնպես,
Եվ չի ուրախացնի մեր հոգին ոչ մի բան։

ԲԱԼԼԱԴ

Սովի մոտ նստած է մի կույս հրաշածին,
Փարվում, շշնջում է նա իր սիրածին.

— Այսօր անդունդի՛ մեջ ընկավ մի մանյակ,
Հանիր իմ մանյակը, իջիր մինչ հատակ.

Եվ դա ապացույցը սիրուդ թող լինի։
Նոաց տաք արյունը, հուզվեց պատանին.

Տնքում է ուղեղը, ցավով բռնված,
Փրփուր անդունդի մեջ նետվեց նա հանկարծ։

Ցնցուղ-մարգարիտ է խորքերից թռչում,
Վազող՝ալիքները ետ-ետ են փախչում.

Նորից կուտակվում են, ափին զարնվում,
Արդյոք սիրածի՞ն են իրենց հետ բերում։

Օ՜, բախտ, օ՜, նա ողջ է, ժայռից է կախվել,
Ձեռքի մեջ մանյակն է, նա շատ է տխրել։

Բայց չի հավատում նա հոգնած ոտներին,
Եվ թաց գանգուրներն են փռվել ուսերին...

«Արդյոք քեզ սիրո՞ւմ եմ, ասա, չե՞մ սիրում,
Որ քո մանյակին եմ իմ կյանքը զոհում.

Մի խոսքն էլ ինձ բավ էր, հասա մինչ հատակ,
Մարջան անձավում ես մանյակդ գտա...

Վերցրու»— և տխուր նա հայացքն է հառել
Նրան, ում սիրել է կյանքից առավել։

Եղավ պատասխանը.— «Օ՜, իմ սիրասուն,
Հանի՛ր, թե սիրում ես, մարջանը փայլուն»։

Խիզախ այն ջահելը նետվեց ջրի մեջ,
Հուզված նա փնտրում է մարջան, կամ թե վերջ։

Ցնցուղ-մարգարիտ է խորքերից թռչում,
Վազող ալիքները ետ-ետ են փախչում.

Նորից կուտակվում են, ափին զարնվում,
Սիրած ընկերոջը էլ ետ չեն բերում։

1880

ՍՏԱՆՍՆԵՐ (ՏՆԵՐԳԵՐ)

Սիրում եմ, երբ, մաքառելով
Իր սրտի դեմ, կույսս է շիկնում.
Այդպես, նախքան հողմ ու ամպրոպ,
Վերջալույսն է կարմիր լինում։

Հառաչանքն եմ սիրում նրա
Լուսնկային խուլ անտառում.
Այդպես տավիղն է ոսկելար
Զեփյուռի հետ մեղմ բարբառում։

Բայց առավել քաղցր է տեսնել
Նրա արցունքն աղաչական.
Քերովբեն է լացել այդպես
Անմեղ տանջվող փրկչի համար։

ԳԻՇԵՐ. II

Օրը մարեց։ Մոայլ խավարը գիշերվա
Պատեց կամարն երկնի մի սև սավանի պես։
Տեղ-տեղ խավարի մեջ հածում էին միայն
Ու առկայծում լույսի ինչ-որ աղոտ կետեր.
Նրանց միջև և մեր երկիրն էր պտտվում.
Այնտեղ մի անվրդով անդորրով պարուրված՝
Քնած էր ամեն ինչ. քնած չէի լոկ ես։
Լոկ ես չէի քնել... ահեղ աղջամուղջում,
Հավասար բերկրանքի, վշտի միջև սեղմված՝
Ցնքում էր սիրտը իմ, և ուզում էի ես,
Որ կամ խնդությունն իմ, կամ տրտմությունն աճի՝
Նահատակված կյանքիս հիշողությամբ.
Միայն թե վերջինը դյուրին էր ավելի...

Ահա արևմուտքից բարձրանալ սկսեց
Անչափելի կմախք մի կամարով մոայլ
Եվ իրենով ծածկեց աստղերը... Նրա դեմ
Ոչնչանում էին աշխարհներ բովանդակ,
Քայլերից ճարճատում, ճայթում էր ամեն ինչ,
Եվ հետքից մնում էր ոչնչություն միայն։
Ահա մոտենում է հսկան ամենազոր
Երկրագնդին. վրան քնած է ամեն ինչ,
Բայց տագնապել, հուզվել չի մտածում ոչ ոք.
Միակ մահկանացուն տեսավ միայն այն, ինչ,
Աստվա՜ծ չանի, տեսնի մեկ ուրիշ արարած...
Ահա բարձրացրեց նա ձեռքերն իր ոսկրոտ,
Ամեն մի ձեռքի մեջ բռնած մեկական մարդ.
Դողում էին. նրանք լավ ծանոթ էին ինձ.
Ես հայացք ձգեցի նրանց ու լաց եղա։
Հանկարծ մի անսովոր ձայն հնչեց.— Փոքրոգի՜,
Փոշու, մոռացության զավա՜կ, դու չէի՞ր այն,
Որ քո անտանելի տանջանքներից վհատ՝
Կանչում էիր ինձ. դե՜, այստեղ եմ, մա՜հն եմ ես...
Անսահմանափակ է իշխանությունը իմ...
Ահա երկուսը։ Դու ճանաչում ես նրանց.
Սիրել ես... Նրանցից մեկը պիտի մեռնի։
Թույլ եմ տալիս վճռել քեզ անխուսափելին...
Կմեռնես նաև դու, կխորտակվես անհետ
Հավիտենության մեջ. Եվ նրանց ո՜չ մի տեղ,
Ո՜չ մի տեղ և երբե՜ք չես տեսնելու կրկին։
Ինչպես ժամանակն է անցնում-անհետանում,
Այնպես էլ մարդիկ են ու ծնունդը նրանց,
Եվ աստված է միայն հավերժական...
Դե որոշի՛ր, դժբա՜խտ...
Ակամա դողն այնժամ
Սկսեց տարածվել ինձնով վայրկենապես.
Խանգարում էր սաստիկ կափկափն ատամներիս,
Որ դուրս պոկվեն կրծքից իմ խոսքերը դաժան.
Եվ հաղթահարելով սարսափը, վերջապես,
Գոչեցի կմախքին.— երկո՜ւսն էլ, երկի՜ւսն էլ...
Հավատում եմ՝ չկա հանդիպում, բաժանում...

Բավական ապրել են նրանք, որպեսզի դեռ
Շարունակվի նրանց պատիժն հավերժական։
Ա՜խ, ի՜նձ էլ վերցրու, ի՜նձ, երկրային ճիճվիս.
Փոշիացրո՜ւ նաև երկիրն այս ապական,
Այդ անառակության ու խելահեղության,
Վշտի, տառապանքի բույնը դժոխային...
Ամեն, ամենայն ինչ խլո՛ւմ է մեզանից
Խաբելով և ոչինչ չի պարգևում նա մեզ,
Բացի լոկ ծծնդից... անե՛ծք այդ պարգևին...
Առանց դրա երբեք չէինք ճանաչի քեզ,
Ինչպես նաև կյանքն այս խղճուկ, պատիր, ունայն,
Որտեղ չկա հույս, և երկյուղ է ամենուր։
Բարեկամները իմ թող որ մեռնե՜ն, մեռնե՜ն...
Ես պիտի արտասվեմ լոկ մի բանի համար.
Ինչո՞ւ, ինչո՞ւ նրանք մանուկներ չեն...

Ու տեսա, թե ինչպես ձեռքերը այն ոսկրոտ
Ճզմեցին երկուսին... ու նրանք չքացան.
Ջմնաց ո՛չ ստվեր, ո՛չ ուրվական նույնիսկ...
Ու մշուշով պատվեց կերպարանքը մահվան,
Եվ այդպես նա գնաց հյուսիս։ Երկա՜ր, երկա՜ր
Ձեռքերս ջարդելով, արցունքներ կուլ տալով,
Ես արարչի հանդեպ տրտնջացի միայն,
Սարսափելով նրան աղոթելուց...

ԱՄՊՐՈՊ

Ոռնում է ամպրոպն, ամպերն են ծխում,
Կախված անհատակ ու խավար ծովին,
Փրփուր ալիքներն իրար են բախվում,
Մտրակում, եռում, շաչում խմբովին։
Ժայռերի շուրջը տխրամած շանթի
Օձն է գալարվում ժապավենի պես,
Տարերքն է հուզվում պարսերով անթիվ,
Եվ այնտեղ անշարժ, լուռ կանգնած եմ ես։

Կանգնած եմ. մի՞թե ուժերն այս զարհուրելի
Կարող են սարսափ այն հոգուն բերել,
Որ իր ողջ կյանքում զգացել է զուր
Եվ միշտ այս կյանքից խաբված է եղել։
Ում շուրջբոլորը սրտի թույնը վատ՝
Ջրպարտությունն է գալարվել խավար,
Ինչպես ժայռի շուրջն այս սրագագաթ
Դու ես գալարվում, բոց կործանարար։

Օ՜, ո՜չ... Երկնի հուր, թևածիր այդպես,
Շաչե՛ք իմ գլխին, հողմեր մոլեգին,
Այստեղ եմ. սառն ու անտարբեր եմ ես,
Դողալ չգիտե բնավ իմ հոգին։

ՀՐԵԱԿԱՆ ՄԵՂԵԴԻ

Ես հաճախ եմ տեսել, թե աստղիկը լուսե
Ջրերի մեջ ինչպես է շողում,
Նա դողում է թեթև, և փոշին արծաթե
Շաղ գալիս ու հեռու է լողում։

Բայց բռնել չփորձես և որսալ դու չուզես,
Խաբուսիկ են և՛ շող, և՛ ալիք։
Քո ստվերը կընկնի, աստղն իսկույն կմթնի,
Հեռացիր—կշողա նա լրիկ։

Լուսավոր խնդության մի աննինջ ուրվական
Մեզ կանչում է ցրտին մշուշից,
Դու բռնել ես ուզում, նա հեռու է վազում,
Դու խաբված, նա քո դեմն է նորից։

ԵՐԵԿՈՆ ԱՆՁՐԵՎԻՑ ՀԵՏՈ

Նայում եմ պատուհանից, և արդեն լույսն է մարում,
Շողերն են հրաժեշտի սյուների վրա վառվում,
Հանգչում է արևն արդեն գմբեթի, խաչի վրա,
Եվ խաբված աչքերի մեջ փայլում է ցոլքը նրա...

Եզրերը կրակներում ամպերը գրկում բոցի,
Գծվում են երկնի վրա, գալարվում նման օձի։
Եվ այգու միջով ահա զեփյուռն է անցնում կամաց,
Անցնում է այնպես թեթև, օրորում խոտերը թաց.
Մի չքնաղ ծաղիկ տեսա խոտերում մենակ ու հեզ,
Արևելքն հեռվում թողած մարգարիտ լիներ կարծես.
Փայլփլուն ջրաշիթեր թերթերի վրա դողում,
Գլխահակ կանգնած է նա՝ աղջիկ է լուռ ու խոհուն,
Իր բախտի սևերի մեջ, խոցել են սիրտը նրա,
Սպանել պայծառ ոգին, բայց կանգնած խորհում է նա.
Եվ թեկուզ արցունք թափում աչքերից արևավոր,
Հիշում է՝ ինքն էլ այնքան գեղեցիկ, լավն էր մի օր...

ԿՈՎԿԱՍԻՆ

Կովկա՛ս, վեհասքանչ ու հեռավոր,
Ո՞վ ազատության պարզ օթևան,
Դու էլ ես կռվում արյունահոսդ,
Դու էլ ես լցված դժբախտությամբ...
Մի՞թե այրերն ու ժայռերը քո
Մռայլ մշուշիդ քողի ներքո
Կլսեն նույնպես ճիչեր կրքի,
Ձայնը շղթայի, ոսկու, փառքի...
Ո՛չ, մի՛ սպասիր օրերն անցյալ
Քո հայրենիքում այլևս, ներքե՛զ.
Սիրելի երկիրն ազատության
Կորչում է նրա համար արդեն...

ՀԱՅԱՍՏԱՆ

Արդեն երկյուղած կյանքին հուսալուց,
Ապրում եմ ինչպես քար քարերի մեջ.
Ջեմ արտահայտում տանջանքներն Հոգուս.
Թող կրծքիս մեջ էլ անթեղված մրկվեն։

Պատմությունը իմ տառապանքների
Չի հուզի, գիտեմ, սրտերը մարդկանց.
Մի՞թե կարող է ձայնը քարերի
Բախման թափանցել խորքերը նրանց։

Պահվում է իմ մեջ դեռևս մանկուց
Անշեջ, անայլայլ երկնային մի բոց,
Բայց սահմանված է նրան ի վերուստ՝
Այնտեղ էլ մարել լռության մեջ խոր։
Սպասեցի ես իր պտուղներին,
Սիրելով խոսել ինքս լոկ ինձ հետ։
Կլռի ձայնը սրտիս խոսքերի.
Ու ես կմնամ մենամենակ հավետ։

Լքեցի հանուն խոհերիս թաքուն
Ե՛վ փառքի ճամփան, և՛ ճամփան սիրո,
Այն բոլորն, ինչով կարող ես կյանքում
Ստանալ փոքր-ինչ անուն փառավոր.
Թշվառս բոլոր արարածներից
Կմնամ այսպես շրջանում մարդկանց
Հավետ զուրկ նրանց արժանիքներից,
Առանց սեփական առաքինության։

Մեր մեջ երկու կյանք կա միևնույն շիրիմ,
Կա ահեղ ոգի, մտքին խորթ, օտար.
Սեր, հույս, վիշտ, վրեժ, ամեն, ամեն ինչ
Նրա կամքին են միայն ենթակա։
Նա հիմնարկել է կացարան այնտեղ,
Ուր պահպանում ենք մենք հիշողություն,
Եվ կործանում է կանխագուշակում,
Երբ խուսափելն է ուշ լինում արդեն։

Եվ սիրում է նա խոշտանգել անխիղճ.
Նրա խոսքերում կեղծիք կա թունոտ.
Խայթում է, հաշմում կյանքն, ինչպես կարիճ։
Ես հավատացի նրան, իսկ հետո՞...
Նայե՛ք ճակատիս, աչքե՛րս զննեք,

Տեսե՛ք, թե նվաղ, գունատ եմ որքա՜ն.
Մի՞թե կարող է դեմքս ձեզ ասել,
Որ հազիվ լինեմ տասնհինգ տարեկան։

Եվ ծերությունը կհասցնի շուտով
Ինձ գերեզմանին. ու ես կնայեմ
Կյանքին, ողջ չնչին իր արգասիքով,
Ու կվերհիշեմ անցյալը նորեն.
Եվ հավատարիմ ընկերն էլ շիրմի
Կգա սառնաշունչ իր գեղեցկությամբ.
Ինչից տանջվեցի, ինչ-որ սիրեցի,
Այնժամ կդառնան միայն երազանք։

Մի՞թե բոլորին մի դագաղ է հենց
Ոչնչացումով սպառնում ընդմիշտ.
Ինչպե՞ս իմանաս. այդ դեպքում թերևս
Կիսամեռյալին ծիծաղը նորից
Կբոցավառի, ու կգա բերկրանք,
Ցարդ օտար հնչյուն իմ բառարանում,
Եվ պատանության համար իմ ոսկյա
Վախճանից առաջ չեմ տխրի անհույս։

Տեսնում եմ, սակայն, որ աշխարհն այս պերճ
Մարդկանց համար չի եղել ստեղծված.
Կոչնչանանք մենք, կջնջվենք անհետ.
Այդ է մեր բախտը, օրենքը միակ։
Եվ տիեզերական հողմը կթոցնի
Մեր հոգին անափ հեռուներ մռայլ,
Իսկ դին մեր հողն այս լոկ կփափկացնի՝
Այլ անապական գոյերի համար։

Խորթ կլինի նրանց նզովք ու անեծք,
Ազատ կլինեն ոսկուց ու պատվից.
Նրանց օրերը կընթանան անեղծ,
Ինչպես օրերը ջինջ մանուկների.
Եվ նրանց միջև մտերմություն, սեր
Ցեն կաշկանդվելու կեղծ պատշաճությամբ,

Ու ծիծաղելով նրանք երբևէ
Չեն թափի եղբոր արյունը արդար...

Նրանց մոտ (ինչպես որ կարող են միշտ)
Հրեշտակները կթռչեն, իսկ մենք
Պիտի տեսնենք այս դրախտն երկրային
Խավարի վիհին շղթայված անզերծ։
Խայթը նախանձի, վիշտ ու կշտամբանք,
Հավիտենություն պատիժներ են լոկ,
Հատուցումներ այն չարագործության,
Որ երկար դարեր կա լուսնի ներքո։

...ԻՆ

Մի՛ կարծիր, թե արժանի եմ կարեկցանքի,
Թեպետ տխուր են խոսքերս, օ՜, ո՜չ, սակայն,
Ո՜չ, իմ բոլոր գալարումները տանջանքի
Նախանշանն են լոկ գալիք մեծ փորձության։

Հնչյուններն են եռում ջահել իմ հոգու մեջ
Եվ Բայրոնին հասնելն է՝ տենչս անսահման,
Նույնն ենք հոգով ու տանջանքի հրով անշեջ,
Օ՜, երանի՜ բախտս էլ լիներ նրա նման։

Մղատություն և մոռացում եմ որոնում,
Նրա նման բոցկլտում էր հոգիս մանկուց.
Սիրում էի ես մայրամուտը լեռներում,
Փրփրադեզ գետն ու մրրիկներն աշխարհացունց։

Եվ նրա պես իզուր անդորր եմ որոնում,
Ինձ հետևում է անդադար մի միտք-տանջանք,
Ահավոր է անցյալը, երբ ետ եմ նայում,
Եվ գալիքում ես չեմ տեսնում մխիթարանք։

ԿԱՆԽԱԳՈՒՇԱԿՈՒՄ

Կգա՛ Ռուսիայի սևավոր տարին,
Երբ կընկնի թագը ինքնակալների,
Խաժամուժն արդեն չի սիրի նրանց,
Շատերի հացը կդառնա սև մաղձ,
Ընկած օրենքը էլ չի պաշտպանի
Կանանց և անմեղ երեխաներին։
Նեխած դիերից մի համաճարակ
Կընկնի այդ պահին գյուղերն անճարակ,
Որ հյուղակներից մարդկանց դուրս կանչի,
Եվ խեղճ երկիրն այս՝ սո՜վը կտանջի,
Կշառագունեն գետերն արյան պես,
Ու մի զորավոր մարդ կգա հանդես,
Եվ կհասկանաս դու այն ժամանակ,
Թե նա ինչու է մերկացրել դանակ։
Եվ վա՜յ քեզ՝ քո լացն ու հառաչը խեղճ
Կխեղդվի նրա թունդ ծիծաղի մեջ։
Եվ նա կլինի այնքա՜ն ահարկու,
Ինչպես իր մռայլ ու սև վերարկուն։

1880 ԹՎ., ՀՈՒԼԻՍԻ 15

(Մոսկվա)

Ինչո՞ւ թողի ընտանեկան շրջան ու հարկ,
Ուր ամեն ինչ սրտիս համար ջերմ էր այնքան,
Ուր ամեն ինչ ընկեր էր ինձ ու գաստիարակ
Եվ հավատում էր տենչերին իմ մանկական։
Ինչպե՞ս էին սարսափները գերում հոգիս,
Ինչպե՞ս էի ձգտում ազատ ամպերն ի վեր,
Պատրաստ էի համբուրել շուրթն ընկերներիս,
Ջնայելով, թե օձն այնտեղ չի՞ թաքնվել։

Սակայն մի այլ շրջանի մեջ ես ոտք դրի
Եվ զգացի խաբեությունն ընկերական,
Կասկածամիտ դարձա հավետ ու կորցրի
Սա հոգևոր թալիսմանն իմ անհոգության։

Ու թե մեկը հիմա ասի՝ ընկերն եմ քո,
Հին վերքերիս խորին ցավից լուռ կարթնանա
Ոչ թե խոսքը, այլ հառաչն իմ կրծքի ներքո,
Ոչ թե ողջույն, հանդիմանանք կլսի նա։

Ա՜խ, սիրել եմ, երբ իմ հոգին էր երջանիկ,
Երբ լոկ սիրուց կարող էի արցունք հեղել,
Սակայն հիմա տառապանքով է կուրծքն իմ լիք,
Հնարավո՞ր է, ասացեք, արդյոք սիրել։
Երբ իմ գիրկն եմ առնում կույսին այն կաթոգին,
Վախենում եմ թունավորել նրա հոգին,
Ցույց տալ նրան, որ իմ սիրտն է զոհասեղան,
Այրված հավետ կրակներից ողջակիզման։

Բայց առավել լավն եմ, քան թե թվում եմ ես,
Մարդիկ անկար են, որ դեմքիս սիրտս կարդան,
Եվ ի՞նչ համբավ ունեմ կյանքում... Օ՜, ես այնպե՜ս
Վախենում եմ, որ երբ լսեմ, չդիմանամ։
Նրանց հանդեպ, երդվում եմ ես, իմ հոգու մեջ
Չի վառվում հուրն ատելության ու չարության,
Սակայն... ինչո՞ւ են ջանացել նրանք անվերջ
Թունավորել այդպես օրերն իմ մանկության։

Կորված աղեղն իմ պրկված լարը խզելով
Շաչում, սակայն նորից ուղիղ չի դառնում նա։
Որ դեն նետեմ նրանց շղթան, ընդվզելով
Իմ վերջին ճիգը գործեցի... Եվ ի՞նչ, հիմա
Ապրում եմ ես առանց ընկեր, անհույս, անխոհ,
Ապրում եմ ես ողորմելի, տխուր կյանքով
Եվ դժգույն եմ, քան անզգա ջուանյակի շող,
Երբ լուսամուտ է նա տեսնում պատի լայնքով։

ՄՈՒՐԱՅԿԱՆԸ

Վանքի դռանը սրբազան,
Թոշնած քաղցից ու ծարավից,
Կանգնած էր խեղճ մի մուրացկան՝
Շվար տխրով անկարեկից։

Անցորդներին ձեռքը մեկնած
Աղերսագին ու տանջահար,
Խնդրում էր նա մի կտոր հաց,
Բայց դրեցին ափի մեջ քար։

Այդպես քո սերը խնդրեցի,
Դառն արցունքով կարոտ հոգու,
Այդպես դաժան ծանակեցիր
Ամենասուրբ տենչերս դու։

30-Ն ՀՈՒԼԻՍԻ (ՓԱՐԻԶ) 1830 ԹԻՎ

Դու կարող էիր լավ արքա լինել,
Դու չցանկացար։— Դու ժողովրդին
Ենթադրում էիր լծով ստորացնել։
Բայց ծանոթ չէիր ֆրանսիացիներին։
Արքային էլ կա երկրում դատաստան։
Ու վախճանը քո նա ազդարարեց.
Եվ քո դողդողջուն գլուխն հավիտյան
Փախուստիդ պահին պսակը կորցրեց։

Եվ բոցավառվեց սարսափելի մարտ.
Եվ ինչպես ոգի՝ դրոշն ազատության
Առաջնորդում էր ամբոխին հպարտ։—
Եվ լսվում էին ղողանջները միայն.
Եվ Փարիզի մեջ արյունը ցայտեց։
Օ՜, ինչո՞վ պիտի հատուցես, տիրան,
Փոխարեն արյա՜նը քաղաքացոց,
Փոխարեն մարդկանց այդ արդար արյան։

Երբ իր ղողանջով շեփորը վերջին
Կկիսի կապույտ կամարը երկնի.
Երբ դագաղները կբացվեն կրկին,
Աճյունն իր նախկին տե՛սքը կընդունի.
Եվ կշեռքները երբ կհայտնվեն,
Կբռնի նրանց դատավորը այն...

Քո մազերն արդյոք չպիտի՞ ցցվեն,
Չպիտի՞ արդյոք ձեռներդ դողան...
Հիմա՛ր... ի՞նչ կլինես դու այն օրը դեռ,
Երբ ամոթով ես հիմա դու այսքան.—
Դժոխքի ծաղրի առարկա, ստվեր,
Ճակատագրից խաբված ուրվական,
Անմոռանալի վերքից սպանված,
Խնդրող հայացքդ կպտտես ահա,
Եվ կաղաղակի շարքն արյունոտված՝
Մեղավո՛ր է նա... մեղավո՛ր է նա...

ՄԱՐՏԻԿԻ ԳԵՐԵԶՄԱՆԸ

(Խոհ)

Քնած է նա վերջին քնով,
Քնած վաղո՜ւց ի վեր,
Վրան տխուր մի շիրմաթումբ,
Չորս կողմ՝ կանաչ խոտեր։

Փարվում է հողը ծերունու
Ճերմակ գանգուրներին,
Որ ուսերին էին փռվում
Թաս բռնելու պահին։

Կարծես ճերմակ փրփուր լինեն,
Մի ժայռածեծ փրփուր,
Ասող-խոսող շուրթերն արդեն
Համր են հիմա և լուռ։

Եվ ննջեցյալն է դունատվել,
Ինչպես իր թշնամին,
Երբ նրան ինքն ահաբեկեց
Գրոհելու ժամին։

Կուրծքն է սեղմում հողը խոնավ,
Մե՛կ է. նա չի՛ դգալու,

Եվ ճակատին որդն է սողում
Առանց վախենալու։

Նրա համա՞ր նա սուր բռնեց,
Որ մութ երեկոյան
Անգղերը գան չարագուշակ,
Շիրմի վրա կռռան։

Շատ անգամ է երգիչը իր
Նրան երգել թեպետ,
Բայց երգը՝ երգ, իսկ կյանքը՝ կյանք.
Քնած է նա հավետ։

1881

1881-Ի ՀՈՒՆՎԱՐԻՆ

Նոսրանում են մշուշները դալկացած
Խորխորատի վրա մահվան ահավոր.
Եվ ելնում են ահա կրկին իմ դիմաց
Հսկաները դարերի հին, հեռավոր։
Նրանք կանչում, հրապուրում են նրանք,
Նրանք երգում, և ես ահա նրանց հետ
Երգում եմ ու լի կենդանի զգացմամբ՝
Սարսափում գեթ մի ակնթարթ նայել ետ։

Ես չեմ ուզում, որ երկրային ձայների
Գոյությունը զգացվի իմ երգերում,
Եվ եզերքին կյանքի իմ նոր, հրաշալի
Չհիշեմ ես ոչ մարդկանց, ոչ տրտմություն,
Որ չհիշեմ ես աշխարհն այս ապական,
Ուր ամեն ինչ դրոշմն ունի անեծքի,
Ուր թունոտ է մարդու համբույրը անգամ,
Ուր խնդություն չկա առանց կեղծիքի։

1881-Ի ՀՈՒՆԻՍԻ 11-ԻՆ

1

Հիշում եմ, մանկուց ես հոգով ամբողջ
Հրաշքն եմ փնտրել։ Սիրել եմ այնքան
Համայքն աշխարհի, բայց աշխարհը՝ ոչ,
Ուր ապրել էի լոկ վայրկյան-վայրկյան,
Այդ վայրկյաններն էլ լի էին ցավով,
Լցվում էր երազն իմ խորհրդավոր
Այդ վայրկյաններով։ Երազը, սակայն,
Դրանից չէր մթնում աշխարհի նման։

2

Շատ հաճախ մտքով վայրկյանում մի կարճ
Ապրել եմ դարեր և այլ մի կյանքով,
Հողն եմ մոռացել։ Եվ բազում անգամ
Հոգիս տագնապած տխուր տենչանքով
Լացել է։ Բոլոր կերպարներն իմ այն,
Իրերն իմ սիրո ու ատելության
Չէին նմանվում երկրայիններին,
Այնտեղ դժոխքն ու երկինքն էր վերին։

3

Դժվար է պատմել տառերով ցրտին
Մարտը մտքերի։ Հնչյուններ չկան
Այնքան զորավոր, որ կարենային
Պատկերել տենչը սուրբ երանության։
Զգում եմ կրքի կրակը անշեջ,
Բայց խոսք չեմ գտնում։ Մի այլ կրծքի մեջ
Պարպելու համար ստվերն իսկ նրա,
Պատրաստ եմ զոհել ես կյանքս հիմա։

4

Ի՞նչ են փառք, հռչակ, ինձ վրա սակայն
Իշխում են նրանք ու պատվիրանում,
Որ հանուն իրենց զոհեմ ամեն բան,
Եվ դառն օրերս եմ քարշ տալով տանում
Մենակ, զրպարտված, տարերայնորեն,
Բայց հավատում եմ — անհայտ մարգարեն
Ինձ անմահություն խոստացավ, ու ես
Հղջ երկրայինը արի ողջակեզ։

5

Բայց երկնայինը չունի գերեզման։
Ու երբ ես մեռնեմ, անուրջներն իմ թանկ,
Չհասկանալով թեկուզ և, համայն

Աշխարհը կօրհնի, և դու, իմ հրեշտակ,
Ցես մեռնի ինձ հետ, սերն իմ կաթոգին
Կանմահացնի քո լուսավոր հոգին,
Եվ իմ անվան հետ կկրկնեն քոնն էլ,—
Մեռած հոգիներն ինչո՞ւ բաժանել։

6

Արդար են մարդիկ մեռյալի հանդեպ,
Ինչ հայրն անիծեց, օրհնում է որդին։
Դա հասկանալու համար, օ՜, երբեք
Հարկ չէ ծերանալ։ Վերջ կա ամենին,—
Մի քիչ երկար է մարդն ապրում ծաղկից։
Բայց հավերժի դեմ, ա՜խ, որքա՜ն է քիչ
Նրանց կյանքն ամբողջ։ Եվ հոգին միայն
Պետք է շատ ապրի, իր օրրանը քան։

7

Այդպես էլ մարդու ստեղծածն։ Հաճախ
Գետի եզերքին մենակ, մոռացված
Դիտել եմ՝ ինչպես ալիքները պաղ
Կապույտին տալով, սուրում սրընթաց,
Փրփրում էին ու իրար փարվում,
Նայում էի ես ու չէի տարվում
Ուրիշ խոհերով, աղմուկը վայրի
Ցրում էր ամբոխն իմ խոր խոհերի։

8

Երջանիկ էի... օ՜, թե կանացի։
Հայացքն անմոռաց հոգիս մոռանա,
Հայացքն այն, պատճառն իմ ցավի, լացի։
Վաղուց է արդեն ուրիշինն է նա,
Ինքս էլ ուրիշին իմ սիրտը տվել
Եվ աղոթում եմ ամբ երկինքն ի վեր,
Որ ցավեր տա նոր,— բայց իմ կրծքի տակ
Դեռ ապրում է հին, տխուր մի պատրանք։

9

Ես էլ ոչ ոքի թանկ չեմ աշխարհում,
Եվ ինչպես այլոց՝ բեռ եմ ինձ համար,
Ճակատիս վրա վիշտն է թափառում,
Սառն եմ ու հպարտ, և ամբոխն ինձ չար,
Դաժան է կարծում։ Սակայն մի՞թե նա
Պետք է հանդգնի ու սիրտն իմ բանա,
Որ տեսնի՝ արդյոք ի՞նչ կա կրծքիս տակ,
Աղջամո՞ւղջ է լոկ, թե՞ բոց ու կրակ։

10

Սևակնած ամպն է երկնքով լողում,
Հուրն օրհասական իր մեջ թաքցրած,
Որ դուրս ժայթքելով փոշու է փոխում
Ճամփին ամեն ինչ։ Սրարշավ թռած
Շաչում է, նորից թաքնվում ամպում,
Եվ ո՞վ է նրա ակունքն իմանում,
Եվ ինչո՞ւ զնեել ընդերքը, եթե նա,
Հետք չթողնելով, պիտի չքանա։

11

Գալիքն այնքան է սիրտն իմ տագնապում։
Ինչպե՞ս կավարտեմ կյանքս. իմ հոգին
Ո՞ւր կթափառի, ու ես ո՞ր ափում
Կհանդիպեմ իմ սիրած իրերին։
Ով սիրել է ինձ, ձայնն իմ լսելով
Ինձ կճանաչի... Ու ես թախծելով,
Տեսնում եմ՝ սերս արատ է եղել,
Բայց ավելի թույլ չեմ կարող սիրել։

12

Շատերը սիրուն, ո՛չ, չեն հավատում
Ու երջանիկ են... Նա այլոց համար
Ճանկություն է լոկ, արյունի խաչում,

Մտքի խանգարում կամ տեսիլ մի խառ։
Չեմ կարող խոսքով սերը սահմանել,
Բայց նա կրքերից զորեղն է։ Սիրել
Ինձ պե՞տք է անչափ, ու սիրել եմ խոր,
Լարած իմ հոգու ուժերը բոլոր։

13

Խաբեությունն էլ դաց չեղավ ինձ, ոչ։
Նվում էր անկիրք իմ սիրտը ունայն,
Ապրում էր սրտիս վերքում խորախոց
Սերն, աստվածուհին իմ պատանության։
Ավերակների ճեղքերի միջին
Այդպես երբեմն ընձյուղում կեչին,
Հայացք է շոյում դալար կանաչով
Ու զարդարում է գրանիտը չոր։

14

Եվ կարեկցում է եկվորը օտար
Նրա հեգ բախտին։ Նա տրված դաժան
Ամառվա տապին, բուքին հողմավար
Պիտի վերջապես թողնի վաղաժամ։
Բայց արմատախիլ չի անի երբեք
Հողմն իմ կեչուն, նա պինդ է, անթեք,
Այդպես լոկ կիրքը խորտակված սրտում
Ունի անսահման մի իշխանություն։

15

Իմ հպարտ հոգին կենաց բեռան տակ
Չի հոգնում բնավ ու չի ցրտանում,
Չի զարկի նրան բախտն այդքան արագ,
Այլ կրմբոստացնի... Վրեժով անհուն
Բազում չարիքներ կգործի, օ՜, նա
Ոգու դեմ անհաղթ, միայն կարենա
Երջանկությունը պարգևել մարդկանց,—
Այդպիսի հոգով չաթք ես կամ աստված։

16

Անապատներն են միշտ էլ ինձ գերել։
Սիրում եմ քամին մերկ բլուրների,
Ուրուրի ճախրանքն իմ գլխի վերև
Եվ տափաստանում ստվերն ամպերի։
Երամակն այստեղ լուծի չի սովոր,
Եվ արյունարբու թռչունն ահավոր
Հրճվում է վերից, ամպն էլ լազուրում
Ինչ-որ առավել ազատ է սուրում։

17

Հավերժի խոհը հսկայի նման
Գերում է հանկարծ միտքը մարդկային,
Երբ տափաստանի օվկիանն անսահման
Կապտում է քո դեմ,— տիեզերային
Ներդաշնակության ամեն մի հնչյուն,
Ամեն տառապանք, ամեն խնդություն
Կարող ենք հստակ զգալ, հասկանալ,
Մեր բախտի մասին պարզ հաշիվ մեզ տալ։

18

Ով կատարներն է ելնում լեռնային
Թարմաշունչ պահին իրիկնամուտի,
Նա արևմուտքում տեսնում է արփին
Եվ արևելքում՝ ստվերը մութի,
Մշուշ է վարում, թփեր, սահանքներ,
Շուրջը վեհապանծ լեռներն են կանգնել,
Լույսերում սուզած սեգ կատարները,
Ինչպես ամպրոպից հետո ամպերը։

19

Եվ սիրտը անցյալ օրերով է լի,
Արագ է զարկում ու տենչն հուրհրան
Կյանքի է կոչում կմախքն անցյալի,
Որ գեղեցիկ է առաջվա նման։

Սիրում ենք մեր հին նկարին այդպես
Նայել, թեկուզ նա նման չի էլ մեզ,
Պահում է կտավն հայացքը քո կայծ,
Ժամանակից ու կրքերից հանգած։

20

Ի՞նչ կա աշխարհում առավել թովիչ,
Քան այս լեռների բուրգերը ձյունոտ,
Նրանց գոռ տեսքը չի փոխի ոչինչ,
Ոչ իշխողի փառք ու ոչ էլ ամոթ։
Ամպն է փշրվում նրանց կողերին,
Կայծակն է գրկում ժայռերը վերին,
Բայց անվնաս են, օ՜, երկնամերձին
Չի հաղթի կյանքում ոչ մի հողածին։

21

Տխուր է այնպես ստեպն այն ժամին,
Երբ ալիքելով սեզն արծաթավուն,
Շրջում է ազատ հյուսիսի քամին
Եվ իր առջևից փոշի է տանում։
Ու շուրջբոլորդ, որքան էլ նայես,
Երկու կամ երեք կեչի կտեսնես,
Որոնք, պարուրված մուժով կապտավուն,
Սևին են տալիս ամայի հեռվում։

22

Երբ պայքար չկա, տխուր է այդպես։
Շատ քիչ գործեր ենք կարող տարբերել
Մենք անցյալի մեջ։ Դա անզոր է մեզ
Ջահել օրերին խնդություն բերել։
Ինձ գործել է պետք, օրերն իմ բոլոր
Կանմահացնեի ես, իբրև հզոր
Հերոսի ստվեր, և՝ անհայտ է ինձ,
Թե ինչ ասել է անդորր ու հանգիստ։

23

Միշտ իմ մտքի մեջ ինչ-որ բան եռում,
Հասունանում է։ Տենչանքն ու թախիծ
Իմ սրտին անվերջ տագնապ են բերում։
Եվ ի՞նչ... միշտ կարճ է թվում կյանքը ինձ,
Ու վախենում եմ, որ չեմ հասցնի
Ինչ-որ բան անել։ Ծարավը կյանքի
Իմ մեջ զորեղ է տառապանքը քան,
Թեկուզ կյանքն այլոց ատում եմ այնքան։

24

Ժամ կա—սրընթաց մտքերդ են սառչում,
Կա հոգու ժանգառք, երբ ամեն մի տենչ
Դառնում է մռայլ, խոհերդ են ննջում,
Եվ կիսալույս կա խինդ ու ցավիդ մեջ,
Նեղվում է հոգիդ ինքը իրենից,
Կյանքն ատելի է, բայց մահն՝ ահալից։
Քո մեջ են ցավի արմատները խոր,
Եվ երկինքը չէ այստեղ մեղավոր։

25

Օ՜, ծանոթ է այդ վիճակն իմ հոգուն,
Բայց այն չի կարող պարզ արտահայտել
Ոչ հրեշտակի, ոչ դևի լեզուն,
Նրանք չգիտեն նման տագնապներ։
Մեկն համակ մաքուր, մյուսը՝ չար համակ,
Լոկ մարդու մեջ են միաժամանակ
Ապրում թե արատ ու թե սրբություն։
Եվ դրանից են ծնվում ցավ ու թույն։

26

Ոչ ոք այս կյանքից այն չի ստացել,
Ինչ ցանկացել է, ու թե անգամ նա,
Ում շնորհվել է բախտը լիաձեռ,
Իր անցած ճամփով մի պահ ետ դառնա,
Կզգա՝ առավել երջանիկ կապրեր,
Թե բախտը, ավա՜ղ, չթունավորեր
Հույսերը նրա։ Ալիքը սակայն
Ծովափ դառնալու ուժ չունի այդքան։

27

Երբ քշված հողմից մի օրհասական
Փրփուր ալիքն է սլանում անվերջ,
Նա հիշում է ծոցն այն հայրենական,
Ուր փրփրում էր եղեգների մեջ,
Եվ, գուցե, հասնի ծովածոց մի այլ,
Բայց այստեղ անդորր չի կարող չգալ,
Ով թափառել է տարերքում վայրի,
Չի կարող ննջել շուքի տակ ժայռի։

28

Ես նախազգացի վախճանն իմ բախտի,
Եվ կնքել է ինձ տխրությունը վաղ,
Ինչպես եմ տանջվել՝ լոկ տերը գիտի,
Բայց թող չիմանա աշխարհը այս պաղ։
Անհայտ չեմ մեռնի։ Մահն իմ ահավոր
Զարմանք կշարժի ափերում բոլոր,
Եվ միայն, միայն հողում հայրենի
Անեծքը պիտի բաժինն իմ լինի։

29

Վերջ։ Ո՜չ, դեռ վերջ չէ... Կա մեկը կյանքում,
Որ սեր ունի ջերմ, բայց ոչ ինձ համար,
Նա մինչև հիմա ինձ չի հավատում,
Բայց կուրծքը լեցուն կրակով անմար,
Էլ չի բաժանի կարծիքն ուրիշի,
Մարգարեությունն իմ նա կհիշի,
Եվ հրճվանքով լի հայացքը այն լուրթ,
Մշուշի պիտի արցունքն անօգուտ։

30

Ինձ սպասում է շիրիմ մի արնոտ,
Շիրիմ մի արնոտ, անխաչ, անօրհնանք,
Այն վայրի ափին, խռով ծովի մոտ,
Ամայության մեջ, մութ երկնքի տակ։
Լոկ երիտասարդ մի օտարական,
Որ մահն իմ լսած, ցավել է այնքան,
Հետաքրքրությամբ լուռ ու սրտաբեկ
Շիրիմիս քարին կնստի մեկ-մեկ։

31

Եվ կասի՝ ինչո՞ւ, ինչո՞ւ այս մեծին
Զրմբռնեց աշխարհն, ինչո՞ւ չգտավ
Նա բարեկամներ, սիրո ջերմագին
Ողջույնը ինչո՞ւ կուրծքը չմտավ։
Արժանի էր նա... ու մի տխրություն
Կհուզի նրան, կնայի հեռուն,
Կտեսնի ամպեր, ջրեր կապուտակ,
Ճերմակ առագաստ ու սահող նավակ։

32

Եվ հողաթումբն իմ... Տենչերն իմ սիրած
Սրանց են նման։ Կա մի քաղցրություն
Երազանքներում չիրականացած,
Այդ պատկերներում՝ մի գեղեցկություն,
Որ թղթին հանձնել դժվար է անչափ,
Խոսքը զորեղ է, երբ չունի նա չափ,
Երբ ազատ է նա իբրև մանկան խաղ
Ու երգը տավղի՝ գիշերում խաղաղ։

...Ին

Բարձրյալն արձակեց իր վճիռն արդեն,
Ոչ ոք և ոչինչ չի բեկանի այն.
Իր պատժող ձեռքը նա պարզեց մեր դեմ,
Կդատի արդար հիմա ամեն բան։
Նա՛ կարող է լոկ, նա՛ գիտե միայն,
Թե սերս որքան նուրբ էր, բոցակեզ,
Ինչ կարող էի՝ ես անպատասխան,
Ամեն, ամեն ինչ զոհ բերեցի քեզ։
Զարաշահեցիր իրավունքը քո,
Որ դու ձեռք էիր բերել իմ հանդեպ,
Նախ՝ շողոմեցիր քնքշանքով սիրո,
Հետո՝ դրժեցիր,— էհ, տերը քեզ հետ։
Օ ոչ, չեմ կարող նզովել ես քեզ,
Ամեն ինչ քո մեջ սուրբ է ինձ համար.
Աչքերդ կախարդ և կուրծքդ շքեղ,
Ուր բաբախում է սիրտդ քնքշաբար։
Հիշում եմ՝ ինչպես ես խաբեությամբ
Պոկեցի պահին մեր հրաժեշտի
Անմեղ շուրթերիդ համբույրն անկաշկանդ —
Թունոտ ծաղիկը տանջանքի, վշտի։
Գիտեի, որ դա սեր չէր, բայց թե ինչ,
Տարա, ես չէի կարող իմանալ,
Որ իմ հույսերից, արցունքներից ջինջ
Ակնթարթն ուրախ թանկ է քեզ համար։
Երջանիկ եղիր իմ դժբախտությամբ
Եվ տառապանքիս մասին երբ լսես,
Դու քեզ մի՛ տանջիր զղջումով ունայն,
Ների՛ր,— ահա այն, ինչ ուզում եմ ես...
Ինչո՞վ եմ արժան, որ արցունքներից
Խամրի աչքերիդ կախարդանքը պերճ...
Պետք է ծիծաղին վարժվես, սիրելիս,
Չէ՞ որ կյանքն էլ է մեզ ծաղրում անվերջ։

ՏԵՆՉԱՆՔ

Ինչո՞ւ թռչուն չեմ կապույտի գրկում,
Ինչո՞ւ չեմ կարող թռչել անարգել,
Ինչո՞ւ չեմ կարող ազատ երկնքում
Ազատությունը սիրել ու երգել։

Ես կթռչեի դեպի արևմուտք,
Ուր նախնիներիս դաշտերն են ծաղկած,
Ուր հին բերդի մեջ, միգոտ լեռներում
Նրանց աճյունն է հանգչում մոռացված։

Մնում են այնտեղ լուռ ու ապահով
Սուրն ու վահանը՝ հնամյա պատին,
Ես կմաքրեի իմ թևիկներով
Ձենքերին իջած փոշին արծաթի։

Ես կդիպչեի հին շոտլանդական,
Տավիղի զնգուն, քնքուշ լարերին,
Կզրնգային լարերը հանկարծ,
Եվ հնչյունները լուռ կմարեին։

Սակայն իզո՞ւր է, իզո՞ւր անրջել՝
Հակառակ դաժան օրենքին բախտի,
Իմ ու հայրենի լեռների միջև
Ընկած են ծովեր, հովիտներ անթիվ։

Քաջ մարտիկների ես հետնորդ վերջին,
Ծնվեցի այստեղ, բայց ուրիշ հոգով,
Սառչում եմ ուրիշ ձյունների միջին,
Ինչո՞ւ չեմ թռչում ազատ թռիչքով...

ԿՅԱՆՔԻ ԹԱՍԸ

Մենք ըմբոշխնում ենք թասից այս կյանքի
Միշտ աչքերով փակ,
Ցողելով նրա եզրերը ոսկի
Արցունքով մեր տաք.

Բայց մահից առաջ, երբ աչքերից մեր
Քողն է վար ընկնում,
Եվ պատրանքն է մեր ցնդում նրա հետ
Ու անհետանում,

Տեսնում ենք, որ թասն եղել է դատարկ,
Որ այն մե՛րն էլ չի.
Միջի խմիչքն էր պատիր երազանք
Եվ ուրիշ ոչինչ։

Լ-ԻՆ

(Բայրոնի նմանությամբ)

Ուրիշների ոտքերն ընկած՝
Քեզ եմ հիշել էլի.
Սիրել այլոց, տանջվել եմ, բայց
Սիրով իմ անցյալի։
Գնուկ-իշխող հուշն է այսպես
Կապում մեզ անցյալին.
Եվ կրկնում եմ ես մշտապես.
— Սիրում եմ լոկ մեկին։
Արդեն տրված ես ուրիշին,
Երգչին քո մոռացել։
Այդ պահից ինձ երազներն իմ
Տանում են այլ ափեր,
Նավը թռցնում է ինձ քեզնից
Հեռուներն անմեկին,
Բայց հնչում են ալիքներից.
— Սիրում եմ լոկ մեկին։

Եվ չգիտի ա՞ղմկալի
Աշխարհն՝ ում եմ սիրում.
Ում հիշատակն է վշտալի
Ինձ մշտապես տանջում։
Եվ որտեղ էլ փնտրեմ անհագ,
Կորած անդորրն իմ հին,
Կշշնջա սիրտս համակ.
— Սիրում եմ լոկ մեկին։

• • •

Հիասքանչ եք դուք, հայրենի երկրի դաշտեր անսահման,
Վատ եղանակին դուք առավել եք պերճ ու հիասքանչ,
Ձմեռը այստեղ երկրի առաջին ՀՄՌանն է նման,
Ինչպես որ նրա ժողովուրդները՝ առաջին մարդկանց։
Մշուշն է այստեղ պարուրում երկնի կամարները վեհ,
Եվ տափաստանն է մանիշակագույն իր քողով փռվել,
Նա այնպես թա՞րմ է ու հարազա՞տ է իմ հոգուն այնպես
Եվ ազատության համար է միայն կարծես արարվել։

Բայց տափաստանը այս անծայրածիր խորթ է իմ սիրուն,
Բայց ձյունն այս, ձյունն այս սլացող, թեթև ու
արծաթաթույր,
Որ արատավոր այս երկրի համար շա՞տ շատ է մաքուր,
Իմ սրտին երբեք ուրախություններ ու խինդ չի բերում։
Նրա սպիտակ, սառն ու անփոփոխ հագուստը իր տակ
Մոռացված աճյուն ու շիրմաթումբ է լռին անթեղում,
Աճյուն, որ սակայն, սակայն ինձ համար կյանքում շատ է
թանկ։

• • •

Բուքն է աղմկում ու ձյունը՝ տեղում,
Եվ այդ աղմուկից մի ձայն հեռավոր
Պոկվելով հաճախ սուլում է, ոռնում.
Դա մոայլ թաղման արձագանքն է խոր,

Դա տարտարոսի ձայնն է հասնում մեզ.
Ողջերին լուտանք, մեռյալներին՝ լուր,
Գերեզմանային խամրած ծաղկի պես
Հավետ անհմայք և անհրապույր։

Վախով է լցնում նա սրտերը մեր,
Եվ ազդարարում ի լուր ամենքին,
Երկրային վաղանց տանջանքներին վերջ,
Հաճախ՝ նորերի ժամը առաջին։

ՀՐԵՇՏԱԿ

Հրեշտակն էր թռչում գիշերվա երկնքում
Ու մեղմիկ մի երգ էր նա երգում,
Սուրբ երգն այդ և՛ աստղեր, և՛ ամպեր, և՛ լուսին
Ունկնդրում էին լուռ միասին։

Երգում էր նա անմեղ ոգիներ երջանիկ
Դրախտի պարտեզում խայտալիս,
Գովերգում էր աստծուն ու նրա փառքը մեծ,
Եվ գովքն էր սրտալի ու անկեղծ։

Իր գրկում բերում էր նա մատաղ մի հոգի
Աշխարհին վշտի ու արցունքի.
Եվ ձայնը իր երգի մնաց միշտ հոգու մեջ,
Թեև զուրկ խոսքերից, բայց անշեջ։

Եվ երկար տառապեց հոգին այս աշխարհում
Հիասքանչ տենչերով պարարուն,
Բայց ձայնին երկնային չփոխարինեցին
Տաղտկալի երգերը երկրային։

• • •

Օ՜, դաժան էր բախտը, և՜ հոր, և՜ որդու.
Ապրել բաժան և մահանալ անջատված,
Հայրենիքում քաղաքացու անունով
Վտարանդու նման ապրել մոռացված։
Բայց սխրանքդ կատարեցիր դու, իմ հայր,
Եվ դու հասար քո վախճանին ցանկալի.
Թող տա աստված, նա էլ հանգչի քեզ նման,
Որ պատճառեց քեզ այդքա՜ն ցավ ու թախիծ։
Ես մեղք ունե՞մ, դու կներես, հա՜յր իմ, ինձ,
Որ ցանկացան մարել հուրն այն ալեկոծ,
Մարդիկ հուրն այն, որ դեռ իմ մեջ օրոցքից
Բոցկլտում էր աստծո կամքով մեծագործ։
Բայց ընդունայն դարձան իղձերը նրանց.
Մենք թշնամանք չսնեցինք իրար դեմ,
Բայց զոհ դարձանք տանջանքների մի անանց,
Արդար ես դու, թե ոչ, դե, ես ի՞նչ դատեմ։
Դատված ես դու վերնաշխարհից... Ի՞նչ է այն,
Խառնամբոխ է մի չար, կամ էլ բարեգութ,
Սիծաղելի գովեստների անարժան
Եվ ծաղրալի մի բանսարկու հավաքույթ։
Չի ճանաչում նա ո՜չ դժոխք, ո՜չ եդեմ,
Հայր, աշխարհը դու մոռացար, նա էլ՝ քեզ,
Օ՜, սակայն դու բախտավոր ես, քան թե ես,
Քանզի կենաց ծովի նման լայն ու բաց,
Հավերժության շունչը բացվեց քո առաջ։
Չե՞ս ափսոսում, հայր իմ, դու այն օրերին
Արցունքների, հուզմունքների մեջ կորած,
Մթնշաղի ջերմիկ լույսով ողողված,
Երբ քո հոգու անապատում տխրագին
Փշրանքն էիր փնտրում հույզի քո նախկին։
Իսկ եթե դու էլ չես սիրում քո որդուն,
Այս աշխարհին երկինքն էլ չէ արժանի,
Որտեղ քարշ եմ տալիս կյանքը իմ տրտում.
Ոչի՞նչ բախտը թող ինձ բաժին չհանի,
Բայց գոնե ես... ե՛ս ապրում եմ ու սիրում։

Դ-ԻՆ...

Եղիր ինձ հետ, ինչպես եղել ես դու հնում,
Օ՜, ասա ինձ, ասա թեկուզ մի բառ,
Որ հոգին իմ գտնի քո մի հատիկ բառում,
Ինչ փնտրել է այնքան երկար, երկար։

Եթե հույսի կայծը տակավին չի մարել
Իմ սրտի մեջ, ապա այն կվառվի,—
Եթե կարող է դեռ կրկին արցունք փայլել
Իմ աչքերում, ապա այն կթափվի։

Բառեր կան, բայց նրանց գաղտնիքը չգիտեմ,
Որ ինձ վրա ունեն իշխանություն.
Լսելով բառերն այդ, ես իսկույն կսթափվեմ,
Բայց ուրիշը՝ չի առնի հարություն։

Օ՜ Հավատա դու ինձ, սառը խոսքերը լոկ
Սրբապղծում են լույս քո շուրթերը։
Այնպես, ինչպես օձի խայթոցները թունոտ՝
Երիտասարդ ծաղկի թերթիկները։

1830—1831

...ԻՆ

Անառակությունն այս որքա՞ն դեռ հանդուրժենք,
Մի՞թե բռնակալին վահան է ծիրանին։
Թո՛ղ որ տխմարները նրանց աստվածացնեն,
Թո՛ղ որ ուրիշ քնար հնչի նրանց պատվին.
Բայց դո՛ւ... բայց դու կա՛նգ առ, կա՛նգ առ, երգի՛չ.
Ոսկե պսակը քո պսակը չի։

Թե աքսորված լինես հայրենական հողից,
Պարծեցի՛ր դրանով որպես ազատությամբ
Մշտապես, ամենուր. չէ՛ որ բնությունից
Օժտված ես դու վսեմ հոգով, մտքով անճառ.
Չարիք ես տեսել, բայց չարի հանդեպ
Հպարտ ճակատը քո չես խոնարհել։

Ազատություն էիր երգում այն ժամանակ,
Երբ գոռ բռնակալն էր մահաշունչ որոտում.
Վախդ դատաստանն էր միայն հավերժական.
Ջիմանալով ինչ է երկրային վախ, երկյուղ՝
Դու երգեցիր, և կա մեկը այստեղ,
Որ հասկացավ քո երգը, բանաստե՛ղծ։

ԻՄ ՏՈՒՆԸ

Իմ տունն այնտե՛ղ է, ուր որ կամարն է կապույտ երկնքի,
Ուր երգն է մեղմիվ հնչում անդադար,
Ապրում են այնտեղ ամենքը, ում մեջ դեռ կա՛յծ կա կյանքի,
Եվ բնավ տունս նեղ չէ ինձ համար։

Եվ ծածկը նրա մինչև աստղին է հասնում հեռավոր,
Նրա մի պատից մյուսը մինչև

Անծա՛յր ճամփա է, որ ոչ թե աչքով, այլ լոկ հայացքով
Դու, բնակիչդ, կարող ես չափել։

Կա ճշմարտության զգացումը վեհ մարդկային հոգում,
Հատիկը արդար սուրբ հավերժության,
Եվ նա կընդգրկի ընթացքը հավերժ մի ակնթարթում
Եվ ժամանակի, և տարածության։

Ամենակարող տունս պայծառ է, շռայլ ու շքեղ,
Նա այդ զգացման համար է շինվել,
Եվ թեկուզ երկար վիճակված է ինձ տառապել այնտեղ,
Ես լոկ այդ տան մեջ հանգիստ կլինեմ։

ՄԱՀԸ

Շոյված ծաղկալի երազանքներով
Ես քնած տեղից զարթնեցի հանկարծ,
Բայց իմ զարթոնքը երազ էր նույնպես.
Եվ մտածելով, որ տեսիլքների
Խաբուսիկ շղթան քանդել եմ այդպես,
Կրկնակի անգամ անրջանքներից
Խաբված եղա ես, քանի որ միայն անրջանքներն են
Արարում այն նոր աշխարհը, որ մեզ
Արհամարհել է ստիպում այս հողն այսքան անզգա։
Եվ թվում էր ինձ՝ մահն իր պաղ շնչով
Սառեցնում է իմ մարմինը արդեն.
Հաճախ չէր զարկում սիրտս և, սակայն, զարկում էր ուժեղ,
Զարկում հիվանդոտ ինչ-որ սարսուռով,
Եվ իմ մարմինը, վերջն իր տեսնելով, ձգտում էր նորից
Անհամբեր հոգուս ավյունը պահել,
Եվ սակայն հոգիս հին ընկերոջն էր
Լսում սրտնեղած, ու նախատինքը
Այդ բաժանումը դարձրեց թախծալի։
Երկու կյանքի մեջ՝ արանքում հույսի և սփոփանքի
Ես չէի խորհում ոչ մեկի մասին, ոչ էլ մյուսի,
Կասկածն էր միայն իմ սիրտը հուզում,

Կասկածը վերջին։ Չէի հասկանում՝
Ինչպես կարող եմ երանությունը
Եվ կամ դառնագին տառապանքն զգալ
Այն հողից հեռու, ուր հասկացել եմ առաջին անգամ,
Որ ապրում եմ ես և անսահման է կյանքը ինձ տրված,
Ուր անհագորեն որոնել եմ ես ինքնամոռացում,
Ուր այնքան սիրել ու կորցրել եմ,
Սիրել, համաձայն ունայն մարմնիս հետ,
Առանց որի ես սեր չեմ հասկացել։
Ես այդպես էի խորհում և հանկարծ ննջեց իմ հոգին
Ու հաջորդ պահին կյանք առավ նորից,
Բայց շուրջբոլորս չտեսա արդեն
Երկրային իրեր և չէի զգում
Այլևս ոչ ցավ և ոչ էլ ծանր անհանգստություն
Գալիք բախտի ու մահվան նկատմամբ.
Ամեն ինչ այնպես պարզ էր ու մեկին,
Ոչնչի մասին հարց չէի տալիս էլ ես ինքս ինձ,
Կարծես թե նորից այն վայրերն էի ես վերադարձել,
Ուր ապրում էի և ուր ամեն ինչ ծանոթ էր հոգուս,
Միայն երբեմն հազիվ զգալի իմ ծանրությունը
Սլացումի մեջ հիշեցնում էր ինձ
Երկրային իմ կարճ արտաքսումը։

Հանկարծ իմ հանդեպ տարածության մեջ այդ անծայրածիր
Մի անհայտ ձեռքով, մի խուլ աղմուկով,
Ինչ-որ գիրք բացվեց... Շատ բան էր գրված
Այդ գրքում, սակայն իմ բախտը միայն,
Բախտն իմ ահավոր, ինձ համար այնպես հստակ ու մեկին,
Գրված էր այնտեղ արնոտ բառերով.
Անմարմին հոգի, գնա, հետ դարձիր
Երկիրը դեպի։ Հանկարծ իմ դեմից գիրքը չքացավ
Ու լուրթ երկինքը խսկույն դատարկվեց,—
Ոչ հրեշտակը, ոչ էլ դժոխքի դեր թախծագին
Իրենց թևերով էլ չէին հատում դաշտը երկնային,
Եվ միայն աղոտ մոլորակները, թռչելով հեռու,
Հազիվ կայծ էին նետում ճամփեքին։
Կարդալով բախտն իմ ցնցվեցի։ Ինչպե՞ս

Ես պիտի դառնամ ես դարձյալ երկիր,
Որ տեսնեմ շարքերն այն շարիքների,
Որոնց պատճառը սխալներն էին միայն մանկական։
Կտեսնեմ մարդկանց տառապանքները
Եվ տանջանքների պատճառն աննշան,
Կտեսնեմ մարդկանց երջանիկ կյանքի միջոցներն ամեն
Եվ դա անհնար կլինի նրանց սովորեցնել։
Թող այդպես լինի, թռչում եմ երկիր։ Եվ իրն առաջին,
Որ տեսա այնտեղ, շիրիմ էր շքեղ մի պատվանդանով,
Որի տակ մարդիկ ինձ էին թաղել։
Եվ ես ցանկացա դագաղ թափանցել
Ու իջա զնդան, դագաղ էր երկար,
Ուր փտում էր իմ դիակը, ու ես մնացի այնտեղ։
Ոսկորներն էին երևում արդեն, ու միսը այստեղ
Կախված էր կապույտ իր կտորներով, ու նշմարեցի
Երակներն ամեն՝ շորացած արնով։
Հուսահատորեն նստել էի ես ու նայում էի,
Թե ինչպես էին վխտում մլջատներն
Ու ագահորեն մահվան որսն ուտում։
Որդն էր մերթ սողում աչքի խոռոչից,
Մերթ նորից կորչում գանգում այլանդակ։
Եվ ի՞նչ... ամեն մի շարժումը նրա
Ինձ ծվատում էր ջղաձիգ ցավով։
Պարտավոր էի ես նայել մահվանն իմ բարեկամի,
Որն այնքան երկար ապրեց հոգուս հետ,
Վերջին ու միակ իմ բարեկամի,
Որ կիսեց հոգուս խինդն ու վշտերը,
Ես նրան այնպես օգնել ցանկացա, բայց իզուր, իզուր։
Ոչնչացումի հետքերը արագ տարածվում էին,
Բազմանում էին որդերն անհամար,
Վիճում մնացյալ սնունդի վրա
Եվ կրծում էին ժանգահոտ կաշին։
Ոսկորը մնաց, սակայն ոսկորն էլ չքացավ խսկույն,
Ու լոկ աճյունը մնաց մարմնի տեղ։

Համակված միայն մոայլ մի հույսով,
Խոնարհվում էի մնացորդների վրա այն ունայն

Ու ճգնում շնչով ջերմացնել դրանք
Կամ անմահացնել կյանքով իմ անմահ։
Օ, այդ ժամանակ որքան երկրային
Երանություններ ես կզոհեի միայն մի վայրկյան
Նրանց ջերմությունն զգալու համար։ Եվ, սակայն, իզուր,
Նրանք հնազանդ միայն օրենքի,
Մնացին սառը, սառը, ինչպես ինքն՝ ատելությունը։
Եվ բարբառեցի այնժամ անեծքի վայրենի բառեր
Հորս ու մորս դեմ և բոլոր մարդկանց։
Եվ անմահության հուսահատությամբ,
Ես, վկաս դաժան այդ կործանումի,
Երկար ու երկար տրտնջում էի արարչի հանդեպ,
Երկյուղ կրելով աղոթել նրան,
Ցանկանում էի պարսավել երկինքն
Ու այսպես ասել...
Բայց ձայնս հանգավ, ու ես արթնացա։

• • •

Թող ամբաստանի բանաստեղծին
Վերնախավն անմիտ, թող բամբասի,
Ես չեմ խանգարի այդ կաղկանձին,
Իմ պատասխանը նա չի լսի։
Ինձնով եմ ապրել, իմ հավատով,
Աղատ սուրում է երգս հեռուն,
Ինչպես թռչունը անապատով,
Ինչպես մակույկը լուրթ ջրերում։
Ինձ ի՞նչ՝ վերնախավն ինչ է անում,
Երբ դու նստած ես ինձ հետ անվերջ,
Երբ ձեռքս է ահա մեղմ ջերմանում
Կախարդանքով լի քո ձեռքի մեջ։
Երբ հետդ այստեղ, դրախտի կույս,
Երկնային ժամ եմ վայելում ես,
Երբ չի տառապում հոգիս անհույս,
Երբ գեմդ նստած նայում եմ քեզ։

• • •

Թեպետ վաղուց է բերկրանքն ինձ դավել,
Ինչպես մարդկային սերը կաթոգին,
Եվ խամրել, մինչև կլուսավորեր
Ջահելությունը՝ հույսով իմ հոգին,
Արհամարհում եմ բախտն, աշխարհն ունայն,
Ինձ ստորացնել նրանք չեն կարող,
Եվ թե օրհասին և թե լավ օրվան
Սպասում եմ ես անտարբեր, անդող։
Չեն հավատալու խոսքիս անկասկած,
Սակայն դա ճիշտ է, երդվում եմ ահա,
Ով, ինքն է եղել աշխարհից խաբված,
Ուրիշին խաբել նա չի ցանկանա։
Թող կյանքս տրվի փոթորկին համակ,
Անտարբեր եմ ես ու գիտեմ վաղուց,
Քանի խփում է սիրտս կրծքիս տակ,
Ես չեմ ունենա երջանկության հույս։
Լոկ գերեզմանը խոնավ ու խավար
Գուցե պարգևի պահ անդորրության
Մարդուն, ով սիրեց այնքան բոցավառ,
Որ դժվար սիրեր աշխարհը նրան։

ԻՄ ԴԵՎԸ

1

Նրա տարերքը գումարն է չարյաց.
Ծխուն ամպերի միջով սլանում,
Սիրում է մրրիկ ճակատագրական,
Գետերի փրփուր, անտառի աղմուկ.
Սիրում է մռայլ, ամպամած գիշեր,
Մեգ-մառախուղներ, դալկադեմ լուսին,
Դառը ժպիտներ, աչքեր վշտակեզ,
Անտեղյակ քնին, օտար արցունքին։

2

Սովոր է լսել աշխարհի փծուն,
Սառն ասեկոսեն ժպիտով թունոտ,
Սիծաղն են շարժում ամեն մի ողջույն,
Ամեն հուսավառ հավատ ունեցող։
Օտար են նրան սեր ու ափսոսանք.
Նա մնունդով է ապրում երկրային,
Ռազմի ծուխն է կլանում անհագ
Գոլորշին, հառնած արյան հեղեղից։

3

Եթե ծնվում է տառապյալ մի նոր,
Տագնապահար է անում հոր հոգին,
Այնտեղ է նա իր դժնդակ ծաղրով
Եվ վայրագությամբ հպարտ իր դեմքի.
Երբ մեկնումեկը դողդոջ, ահաբեկ
Հոգով է դիմում դեպի գերեզման,
Լինում է վերջին ժամին նրա հետ,
Բայց չի սփոփում թշվառին բնավ։

4

Եվ չի բաժանվի հպարտ դեն ինձնից,
Քանի ապրում եմ կյանքում հողմակոծ,
Միտքս շարունակ կլուսավորի
Ճաճանչով հրի իր հրաշագործ.
Ցույց կտա տիպար կատարելության,
Կխլի հանկարծ հավիտենապես,
Տալով զգացում լոկ՝ երանության,
Նա երջանկություն չի տա ինձ երբեք։

1882

• • •

Սիրում եմ կապույտ լեռնապարը վեհ,
Երբ, հարավային մետեորի պես,
Թեև լուսազուրկ, բայց վառ-շառագույն
Լուսինն է նրանց ուսից ճառագում,
Թագուհին երգչի վեհագույն մտքի
Եվ մարգարիտն այն լուսապսակի,
Որով երկինքն է պարծենում հաճախ,
Ասես թե լինի երկրային արքա։
Արևմուտքում դեռ շողն իրիկնային
Վառում է վեհեր՝ փեշերն ամպերի
Եվ հապաղում է լուսնին զիջել ողջ
Երկնակամարը մռայլված ու գորշ.
Բայց վերջալույսը շուտով կմարի...
Մի երկու մատղաշ ծվեն ամպերի,
Ուր որ է, լուսնին կառնեն իրենց մեջ...
Ահա և ամբողջ հանդերձանքն այն պերճ,
Ինչ որ լուսինը ունի ձեռքի տակ՝
Պաճուճելու իր ճակատն սպիտակ։
Ո՞վ չի վայելել նման գիշերներ
Տափաստանում կամ խոր կիրճերի մեջ...
Ես էլ այդպիսի մի լուսնկայի
Սուրացել եմ իմ ձիով մրրկալի
Տափաստաններով լուրթ ու լայնարձակ,
Ինչպես հողմ, մենակ, ազատ, համարձակ.
Ողողել էր պարզ լուսինը վերից
Ե՛վ մեջքն ու բաշը նժույգիս, և՛ ինձ
Մեղմ արծաթափայլ շողերով իր ծով.
Զգում էի, ձիս ինչպես փռնչոցով,
Հուժկու դոփյունով գետնից ետ նետված՝
Հողեր ցայթելով սուրում է առաջ.

Ինքնամոռացմամբ մի երանելի
Ես անշարժանում ու պրկվում էի,
Ջանալով ձուլվել ձիուս հետ համակ,
Որ սլանայինք ավելի արագ.
Եվ երկա՜ր, երկա՜ր սուրացինք այդպես...
Մեկ էլ, նայելով, ի՜նչ եմ տեսնում ես.
Նույն տափաստանն ու լուսինն են դարձյալ,
Որն ասես հայացքն իր հառած վրաս՝
Հանդիմանում է ինձ այն պատճառով,
Որ ինչ-որ մի մարդ այդ գիշեր ձիով
Վիճարկել է, որ իր ձեռքից խլի՜
Իշխանությունը տափաստանների...

• • •

Ընկնող աստղի պես ավելորդ եմ ես
Ցոլանքով իմ տաք,
Եվ թեև սիրտս ծանր է քարի պես՝
Օ՜ձ կա նրա տակ։

Ինձ մանրուքներից փրկել է կյանքում
Ներշնչման ձիրքը,
Սակայն սեփական հոգուց չի փրկում
Նույնիսկ բախտն ի՜նքը։

Բախտ էի տենչում երբեմն և ես,
Բայց հիմա, նայի՜ր,
Նա ծանր է թվում իմ հոգուն, ինչպես
Թագը՝ արքային։

Եվ, լքած բոլոր տենչերը կրկին,
Միայնակ եմ ես,
Անմարդաբնակ, մոայլ դղյակի
Տիրակալի պես։

...ԻՆ

Ոչ, ես քո առջև չեմ ստորանա.
Քո նախատինքն ու ողջույնը երբեք
Չեն կարող իշխել իմ հոգու վրա,
Իմացիր, արդեն օտարներ ենք մենք։
Ազատությունը, դու մոռացե՞լ ես,
Չեմ փոխարինի ես մոլորության,
Ու տարիներս զոհեցի այսպես
Քո ժպիտներին, աչքերիդ վառման։
Եվ այսպես երկա՜ր, երկա՜ր տարիներ
Քո մեջ հույս ու խինդ էի տեսնում ես,
Սկսեցի ամբողջ աշխարհը ատել,
Որ էլ ավելի ուժգին սիրեմ քեզ։
Ի՜նչ գիտենամ ես, վայրկյաններն այն վեհ,
Որ հոսում էին քո ոտքերի մոտ,
Ներշնչումներից արդյոք չե՞մ խլել,
Եվ հատուցեցի՞ր դու նրանց արդյոք։
Գուցե խոհերով վեհ ու երկնային,
Եվ իմ հոգու մեջ հավատը վառման
Թանկագին նվեր տայի աշխարհին,
Իսկ նա ինձ՝ պսակը անմահության։
Ինչո՞ւ քնքշանքով դու ինձ խոստացար
Փոխարինել վեհ պսակին նրա,
Ինչո՞ւ սկզբից այնպիսին չեղար,
Ինչպիսին դարձել ես արդեն հիմա։
Հպարտ եմ, ների՜ր, սիրի՜ր ուրիշին,
Զգտիր սեր գտնել ուրիշների մեջ,
Իսկ ես աշխարհիկ կրքերին չնչին
Ստրուկ չեմ լինի էլ առաջվա պես։
Հեռու հարավի լեռներում օտար
Ես կանհայտանամ գուցե վերջապես,
Բայց այնպես, այնպես գիտենք մենք իրար,
Որ չենք մոռանա միմյանց մենք հավերժ։
Եվ այս վայրկյանից պիտի վայելեմ,
Կսկսեմ երդվել բոլորին կրքոտ,
Ամենքի հետ ես պիտի ծիծաղեմ

Ու լաց չեմ լինի էլ ոչ ոքի մոտ։
Կսկսեմ խաբել անաստվածաբար,
Եվ առաջվա պես չեմ սիրի անբիծ,
Ինչպե՞ս կարող եմ կնոջն հավատալ,
Երբ հրեշտակը դավաճանեց ինձ։
Ես պատրաստ էի տանջանքի, մահվանչ
Ձեռնոց նետելու ամբողջ աշխարհին,
Որպեսզի քնքուշ քո ձեռքը դալար,
Օ, հիմարություն, սեղմեի կրկին։
Անմաս նենգավոր դավաճանության,
Իմ ամբողջ հոգին քեզ տվեցի ես,
Գիտեի՞ր արդյոք դու գինը նրա,
Գիտեիր, այդ ես չգիտեի քեզ։

• • •

Այգալույսի պես, Լելի վարդերի,
Ձքնաղ է գույնը նրա այտերի,
Ռաֆայելի աստվածամոր պես
Լռությամբ իր իսկ խոսում է կար
Մարդկանց դեմ գոռոզ, վիճակին
Գիտեր հնարքը անկեղծ կեղծելու,
Բայց ձևացնում էր ինքն իրեն այդպես.
Բախտի համար էր նա ծնվել կարծես։
Սակայն ինչե՞ր չէ կյանքը խորտակում,
Եվ ջնջում անհետ ազնիվ ամեն բան։
Որի՞ հոգին չէ կծկում, մորմոքում,
Դարձնում ինքնասեր և ինքնահավան։
Ո՞ւմ աչքերը չէ զուգսե իր շուքով
Պատում պճնագեղ նա իր դիմակով։

• • •

Ո՞չ, ես Բայրոն չեմ, ուրի՞շ եմ, այլ,
Դեռևս անհայտ ընտրյալ երկնի,
Նրա պես երկրից հալածված միշտ,
Միայն թե հոգով ռուսական։

Վաղ եմ սկսել՝ կավարտեմ շուտ,
Շատ բան չի անի միտքն իմ հոգնած,
Հոգուս մեջ, ինչպես օվկիանոսում,
Խորտակ հույսերի բեռն է թաղված։
Եվ ո՞վ կարող է, օվկիա՛ն մթին,
Մեկնել խորհուրդը քո, ո՞վ արդյոք
Կպատմի խոհերն իմ ամբոխին.
Կա՛մ ես, կա՛մ աստված և կա՛մ ոչ ոք։

• • •

Ապրել եմ ուզում, ուզում եմ վիշտ՝
Ընդդեմ սիրո՛ ու երջանկության.
Նրանք իմ միտքը շոյել են միշտ
Ու հարթել ճակատն իմ չափազանց։
Ժամն է, որ ծաղրը այս աշխարհի
Ցրի հանգստի մշուշը գորշ.
Ի՞նչ է պոետի կյանքը անվիշտ.
Առանց փոթորկի կա՞ օվկիանոս։
Ապրել է ուզում նա տանջանքի,
Մաշող հոգսերի գնով միայն։
Հնչյուններ գնո՛ւմ է երկնքից
Եվ չի ընդունում անհատույց փառք։

ՏԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Բացե՛ք դռներն իմ զնդանի,
Տվե՛ք ինձ լույս ցերեկվա,
Սևաչյա կույս մի գեղանի
Եվ նժույգ մի սևաթաշ,
Թողե՛ք հեծած այդ նժույգին
Լուրթ դաշտերով սուրամ ես,
Ազատության, անհոգ կյանքին,
Ինձ անծանոթ այդ աշխարհքին
Մոտից նայեմ գեթ մի հեղ։

Տվե՛ք մակույկ տախտակակապ
Նստարանով փտած, հին,
Փողփողուն գորշ մի առագաստ,
Որ ծանոթ է փոթորկին։
Այնժամ ծովը ես կնետվեմ
Անհոգ, ազատ ու մենակ,
Կսուրամ լուրթ անհունով մեկ,
Կմաքառեմ հրճվանքով խենթ
Հորձանքների հետ վայրագ։

Տվե՛ք բարձր մի ապարանք,
Շուրջը կանաչ ճոխ այգի,
Ուր ստվերում լայնատարած
Սաթի խաղողը ծաղկի.
Մարմարիոնին նրա անլուռ
Շատրվաններ խոխոջեն,
Դրախտային երազներում,
Ողողած ինձ սառ ցողերում,
Ե՛վ նինջ բերեն, և՛ հույզեր...

* * *

Այո՛, խե՛նթ եմ ես. դուք ճի՛շտ եք ասել,
Անմահություն ծա՛ղր է այս հողում,
Ի՞նչ հանդգնություն՝ մեծ փառք երազել,
Երբ երջանիկ եք դուք փոշիներում։
Ինչպե՞ս կարող էր իմ միտքը ազատ,
Նախապաշարման շղթան թոթափել,
Եվ խղճի խայթի գաղտնի հուրն անզարդ
Բանաստեղծական սուրբ կրա՛կ կարծել...
Ո՛չ, ո՛չ, նման չեմ ես բանաստեղծի.
Ես տեսնում եմ, որ խաբվա՛ծ եմ կրկին,
Նրա պես՝ օտար ձեր բարձր դասին,
Սակայն օտար եմ նաև երկնքի՛ն։
Տխուր-տրտում են տողերն իմ գրած,
Բայց չե՛ք հասկանա դուք նրանց, գիտե՛մ,

Ես պոկում եմ իմ խենթ սրտից նրանց,
Որպեսզի ցա՛վը նրանց հետ պոկեմ...
Ո՛չ, ինձ չի՛ տրված իշխել մտքերին
Եվ դրա համար ողջակե՛զ դառնալ,
Թող որ բա՛րձր եմ ես ձեր կույր կրքերից,
Բայց կարո՞ղ եմ ինքս ինձնից վերանալ...
Եվ կմոռանա՞մ ես երբևիցե
Սերն իմ կործանված ու տառապագին,
Այն ամենն, ինչին ջերմ հավատացի
Եվ չե՛մ հանդգնի հավատալ կրկին։

* * *

Նա գերում է ոչ գեղեցկությամբ սեգ
Պատանիներին թարմ ու կենսաշունչ,
Նա քարշ չի տալիս ետևից երբեք
Հառաչողների բազմությունը մունջ։
Եվ իրան չունի նա աստվածուհու,
Չի ծփում կուրծքը ալիքի նման,
Եվ ոչ ոք՝ նրա հմայքին հլու,
Ծունր չի դնում իբրև սրբության։
Բայց շարժումները նրա հոգեթով,
Ժպիտը, խոսքը և դեմքը անամպ
Լեցուն են կյանքով ու ներշնչանքով,
Լեցուն են այնպես հրաշք պարզությամբ։
Բայց նրա ձայնը սուզվում է հոգիս,
Իբրև հնօրյա մի հուշ ինձ կանչում,
Սիրում է սիրտս, տանջվում մորմոքից,
Բայց նաև իր այդ սիրուց ամաչում։

ԵՂԵԳ

Մի կենսախինդ ձկնորս
Նստել է գետափին.
Եղեգներն են իր դեմ
Քամուց ծփում հանգիստ։

Կտրեց մի չոր եղեգ,
Վրան անցքեր բացեց,
Մի ծայրը փակելով՝
Մյուսով նվագեց։

Ասես թե կյանք առած՝
Եղեգն է բարբառում
Ե՛վ մարդկային ձայնով,
Ե՛վ ձայնով մեղմ քամու։
Ու երգում է տխուր.
«Թո՛ղ ինձ, ձկնո՛ւս անգին,
Զարշրկում ես դու ինձ,
Տանջում ես իմ հոգին։

Կար ժամանակ, որ ես
Աղջիկ էի չքնաղ,
Իմ խորթ մոր զնդանում
Ծաղկում էի մենակ.
Շատ այրող արցունքներ
Անմեղ ես թափեցի
Եվ վաղաժամ շիրիմ
Անասված տենչացի։

Եվ իմ խորթ-մայրն ուներ
Մի որդի սիրասուն.
Խաբում էր կույսերին,
Ազնիվ մարդկանց առնչում։
Մի երեկո եկանք
Դիտելու գետափից
Ալիքները կապույտ,
Մայրամուտը ոսկի։

Նա իմ սերը խնդրեց,—
Սիրել չէի կարող,
Նա ինձ փող նվիրեց,—
Չվերցրի ես փող.
Զարշրկեց թշվառիս,

Կուրծքս խրեց դանակ,
Այս դարավանդ ափին
Դիս թաղեց հողի տակ։

Եվ իմ շիրմի վրա
Աճեց եղեգն այս մեծ.
Երիտասարդ հոգուս
Վշտերն են սրա մեջ։
Ձկնո՛ւս, ձկնո՛ւս սիրուն,
Թո՛ղ եղեգը քո խեղճ.
Ինձ օգնել չես կարող,
Իսկ լալ՝ դու տվող չես»։

ՄԱԿՈՒՅՑ

Կամքով զորության մի հրաշագործ
Կրքերի ծովից շպրտվեցի դուրս,
Ինչպես ավազին, փոթորկից հետո,
Ալեբախ ջարդված, նետված մի մակույկ։
Որքան մակընթաց ալիքը շոյի,
Հաշմանդամն այլևս չի խաբվի նորեն.
Նա գիտե արդեն անզորությունն իր,
Թեև քնած է ձևացնում իրեն։
Էլ չի վստահի ոչ մեկը նրան
Ո՛չ իրեն, ո՛չ էլ բեռն իր թանկագին.
Ոչ մի տեղ այլևս պիտանի չէ նա.
Կործանված է ու տրված հանգստի...

* * *

Նա ծնվել էր հույսի, երջանկության համար,
Խաղաղ ներշնչանքի, բայց խենթությամբ անզուսպ՝
Մանկական հանդերձից վաղաժամ մերկացավ,
Սիրտը նետեց կյանքի ծովը փոթորկահույզ.
Եվ ո՛չ աստված փրկեց, ո՛չ աշխարհը գթաց։

Վաղահաս պտուղն է կախվում ահա այդպես
Ծաղիկների միջև, որբի նման,
Անհամ, անհրապույր, և ժամը նրանց պերճ
Գեղեցկության՝ ժամն է հենց իր անկման։

Անհագ որդն է նրան կրծո՞ւմ, կրծո՞ւմ անվերջ,
Մինչ քույրերն իր իրենց թարմությամբ ջինջ
Նազում են ճյուղերին, սա գոյությունն իր խեղճ
Քարշ է տալիս մինչև... հողմն առաջին։

Ահավոր է լինել չսպիտակած ծերուկ.
Նա չի գտնում մեկին իրեն նման.
Ամբոխի հետ է, բայց հոգով խորթ է նրան.
Ո՛չ տիրակալ է նա, ո՛չ էլ ստրուկ.
Բոլորն, ինչ ապրում է, ապրում է միայնակ։

ԱՌԱԳԱՍՏ

Կապույտ ծովի մառախուղում մենավոր
Մի սպիտակ առագաստ է փողփողում...
Ի՞նչ է փնտրում ափերում այս հեռավոր,
Ի՞նչ է ձգել հայրենական իր հողում...

Ալիքներն են խաղում, սուլում է քամին,
Կայմն է տարտամ օրորումով ճոնչում...
Ո՛չ նա, ավա՜ղ, բախտ է փնտրում, անհանգիստ,
Ո՛չ էլ գլուխն առած բախտից է փախչում։

Նրա ներքո ջուրն է, պայծառ լազուրից,
Շողշողում է գլխին արփին ոսկեվառ...
Բայց նա անձկավ թախանձում է փոթորիկ,
Հանգիստն ասես փոթորկի մեջ է միայն։

1833—1834

• • •

Խթաններին այս արծաթաթույր
Ահա նայում եմ ու մտորում,
Քեզ համար, նժույգ իմ հողմասույր,
Կողերիդ համար եմ ես դողում։

Սրանց անծանոթ նախնիքը մեր՝
Տափաստաններում արշավելիս,
Հաստ մտրակներո՛վ էին քշում
Ճամփից ուշացող նժույգներին։

Բայց լուսավորումն առաջավոր
Կոպտության տեղակ այդ հինավուրց,
Նոր գյուտեր բերեց, հնարքներ նոր,
Տարաշխարհիկ և օտարամույծ։

Եվ արդ սնում են ու փաղաքշում,
Մեջքի պատիվն են պահում պատշաճ...
Առաջ ծեծում էին, հիմա խոցում,
Ո՞րն է ձեռնտուն—գիտե աստվա՛ծ։

• • •

Խոիվ շարքերով մենք կանգնել անձայն,
Թաղում էինք մեր մոտ բարեկամին։
Քրթմնջում էր լոկ գնդի քահանան
Եվ շառաչում էր աշնան ցուրտ քամին։

Կիվերներն՝ հակված շիրմին սրբազան,
Աշնան մշուշում լուռ շողում էին,
Մարտական սուրն ու գդակն ուլանյան
Հանգչում էին շոր նրա դագաղին։

Եվ աչքերն ամեն սև հողին հակված,
Մի սիրտ էր թակում ամեն կրծքի տակ.
Այն, ինչ որ արդեն հողին էր տրված,
Կարծես կուզեին ետ խլել նրանք։

Չկար արտասուք իզուր հեղեղվող,
Մեր հոգիներն էր ճմլում վիշտը խոր,
Եվ հրաժեշտի մի փոքրիկ բուռ հող
Ընկավ ու բախեց իր դագաղը շոր։

Դե, գնաս բարով, ընկեր մեր անգին,
Դո՞ւ կապուտաչյա քնքուշ տաղերգու,
Լոկ փայտե խաչը եղավ քեզ բաժին,
Եվ հուշն այն, որ միշտ կապրի մեր հոգում։

ՋՐԱՀԱՐՍԸ

1

Լուսնի լույսով ողողված կապույտ ջրի մեջ գետի
Ջրահարսն է մեղմ լողում
Եվ ճգնում է, որ մինչև հեռու աստղերը նետի
Ջրի արծաթը շողուն։

2

Աղմուկով ու պտույտով գետն օրորում էր իր մեջ
Արտացոլումն ամպերի,
Եվ ջրահարսն էր երգում, ու ամեն մի ելևէջ
Հասնում էր թեք ափերին։

3

Եվ ջրահարսն էր երգում. «Այնտեղ ինձ մոտ, հատակում
Լույսն է ցոլում ցերեկվա,
Ոսկե ձկներ կան այնտեղ, որ խաղում են ու խայտում,
Քաղաքներ կան բյուրեղյա։

4

Այնտեղ ահա եղնուտի հովանու տակ զովասուն,
Ավազի վառ բարձերին,
Մի դյուցազուն է ննջում, օտար երկրի դյուցազուն,
Խանդոտ գետի լուռ գերին։

5

Մենք սիրում ենք գիշերով նրա գանգուր մազերի
Մետաքս օղերը շոյել,
Եվ շրթունքները նրա և ճակատը կեսօրին
Շատ անգամ ենք համբուրել։

6

Բայց չգիտեմ, թե ինչու համբույրների դեմ մեր տաք
Մնում է նա համր ու սառ,
Ննջում է նա՝ գլուխը կրծքիս վրա սպիտակ,
Ննջում անշունչ ու անբառ։

7

Եվ ջրահարսը այսպես գետում երգում էր անվերջ,
Տրտմությամբ էր երգն այդ լի,
Ու աղմկոտ հոսանքով գետն օրորում էր իր մեջ
Արտացոլումն ամպերի։

1836

ՄԵՌՆՈՂ ԳԼԱԴԻԱՏՈՐԸ

I see before me the gladiator lie...
Byron*.

Ցնծում է Հռոմն անզուսպ, մոլագար ու վայրագորեն...
Եվ հանդիսավոր ծափերից հսկա կրկեսն է թնդում.
Իսկ նա ընկած է անմռունչ՝ կրծքից խոցված կարեվեր,
Արյան, փոշու մեջ ծնկներն են անզոր սահում-թպրտում...
Պղտոր հայացքը զուր է աղերսում գութ ու կարեկցանք.
Տիրակալն այն գոռ ու սենատորը նրա շողոքորթ
Հաղթանակի հետ ծափում են նաև անկման անարգանք...
Ամբոխի համար ի՞նչ է խոցոտված մի գլադիատոր.
Արհամարհված ու արդեն մոռացված... սուլված դերասան

Արյունն է հոսում... և վայրկյաններն են վերջին առկայծում,
Պահն է օրհասի... Մի հիշողություն ահա նշողեց
Փայլեց իր հոգում... Դանուբն է իր դեմ աղմկում-հոսում...
Իր հայրենական երկիրն է ծաղկում ազատության մեջ.
Ընտանիքն է իր տեսնում, թողնված ծաղրի, լուտանքի,
Տեսնում է հորը, դողդոջ ձեռքերը անձկորեն պարզած՝
Կանչում է իրեն՝ զառամ օրերի միակ նեցուկին...
Խաղացող կայտառուն իր զավակներին, սիրելի այնքա՞ն...
Եվ սպասում են բոլորն իր դարձին՝ ավարով, փառքով...
Իզուր. նա խղճուկ ստրուկ էր,— ընկավ որպես մի գազան,
Վայրագ ամբոխի վայրկենական ցոփ հաճույքին ի կուր...
Մնաք բարո՞վ դուք, անառա՛կ Հռոմ, հո՞ղ հայրենական...

Մի՞թե այդպես էլ դու չես, Եվրոպա,
Երբեմնի կուռքդ ազնիվ, բոցավառ Դրազողների,

* Ես իմ առաջ տեսնում եմ ընկած գլադիատորին...
Բայրոն

Հակում գլուխը քո անփառունակ դեպի գերեզման
Բզկտված, հյուծված կասկածներից ու կրքերից մոլի,
Առանց հույսերի, առանց հավատի խաղալիք մանկան
Եվ ծիծաղաշարժ մի զվարճալիք հրճվող ամբոխի։

Արդ ափսոսանքի խոր հառաչանքով, վախճանից առաջ,
Հայացք ես ուղղել քո պատանության, պայծառ, կորովի,
Որ վաղուց արդեն, հանուն ախտերիդ լուսավորության
Եվ շքեղության քո հպարտ, անհոգ մոռացման ավիր։
Տառապանքներիդ ցավերը վերջին ջանալով խեղդել,
Դու ազահորեն լսում ես և՛ քո երգերն հնամի,
Ե՛վ ասպետական հրաշապատում ավանդություններ.—
Անկատարելի երազնե՛ր անմիտ շողոքորթների։

ՊՈԵՄՆԵՐ

ԵՐԳ ԻՎԱՆ ՎԱՍԻԼՅԵՎԻՉ ԹԱԳԱՎՈՐԻ, ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻԿՆԱՊԱՀԻ ԵՎ ԽԻԶԱԽ ՎԱՃԱՌԱԿԱՆ ԿԱԼԱՇՆԻԿՈՎԻ ՄԱՍԻՆ

Է՜խ, դու, է՜խ, Ահեղ Իվան թագավոր,
Թող որ այս երգը հյուսենք քո մասին
Եվ համհարզներիդ մասին քաջազոր,
Որոնք արծաթյա վառ աստղեր էին,
Իսկ դու նրանց մեջ՝ ոսկեթագ լուսին։
Ապա հյուսում ենք քաջ վաճառական
Կալաշնիկովի ու նրանց մասին,
Ովքեր տաղերով մեր գուսանական
Քեզ փառք են մաղթում մեզ հետ միասին,
Մեր տաղն հյուսում ենք վաղեմի հանգով՝
Գուսլիի հնչեղ լարերի վրա,
Եվ անմահ սիրո վաղեմի երգով
Զվարճանում է ժողովուրդն ահա։
Իսկ բոյար Մատվեյ Ռոմոդանովսկին
Մեղր է մատուցել մեզ ոսկեգավաթ,
Իսկ նրա կինը փրփրամարմին
Զեռքին լուսնաձև սկուտեղն արծաթ՝
Մեզ սրբիչ տվեց նախշով մետաքսյա,
Եվ մենք երեք օր ու երեք գիշեր
Գուսլիներն առած մեր կրծքի վրա՝
Երգենք պիտի փառք, և՛ արցունք, և՛ սեր։

1

Զի շողում դեմքը ալ արեգակի,
Եվ չեն նրանով ամպերն հիանում...
Ահա դնելով իր թագը ոսկի՝
Ահեղ այն արքան սեղան է նստում։
Եվ համհարզները շարվում են կողքին,
Դեմը բազմեցին բոյարներն ամեն,
Եվ քեֆը բացեց արքան ցնծագին,
Որ փառքի փայլով գավաթներ քամեն։

Եվ հրամայեց ահա սեգ արքան,
Որ լիքը լցնեն անապակ գինով,
Եվ խմեն երգով հին գուսանական՝
Առաջին գավաթն աստծո անունով։
Եվ լցնում էին ամենքն ու խմում
Ի փառս աստծո և ի փառս իրա,
Եվ խմում էին ու փառաբանում
Իրենց այն ահեղ արքային անմահ։

Բայց միայն մեկը այն համհարզներից՝
Կատաղի կտրիճ մի ջահել ու պերճ
Հեռու էր կանգնել ոսկյա գավաթից,
Չէր թրջում բեղը կարմիր գինու մեջ։
Նա սև աչքերը գցել էր գետին,
Գլուխը թեքել լայն կրծքի վրա,
Եվ սրտում գաղտնի մրրկվում էին
Ամենքին անհայտ տենչերը նրա։

Բայց Ահեղ արքան նրան նկատեց,
Կիտեց հոնքերը կտրիճի վրա.
Ասես երկնքից սև բազեն նայեց
Վայրի դեռահաս աղավնու վրա։
Կտրիճն անտեղյակ մնաց գլխիկոր,
Եվ մութ աչքերը չբարձրացրեց,
Երբ որ զայրացած արքան մեծազոր
Կուռ գավազանով հատակին խփեց,

Խփեց ու ճեղքեց հատակը կաղնյա,
Ահեղ որոտաց ամպի պես մթին։
Եվ բարի կտրիճն սթափվեց ահա։
Բայց թագավորը մռնչաց կրկին.
— Հե՜յ, հավատարիմ իմ բազկի ծառա,
Հե՜յ, դու, իմ կտրիճ Կիրիբեևիչ,
Ինչո՞ւ է չոքել ամպը քեզ վրա,
Ինչո՞ւ չես խմում, թե՞ գինիս է քիչ,
Թե՞ չար մտքով ես դու իմ դեմ թախծում,
Թե՞ ձանձրացել ես զենք ու զրահից,
Թե՞ իմ փառքին ես գաղտնի նախանձում,
Փառքիս, որ երկրում բարձր է իմ գահից։
Գիտե՞ս, որ երբ սեգ լուսինն է ծագում,
Ուրախանում են աստղերը համակ.
Չէ՞ որ աստղերին հեշտ է՝ երկնքում
Կռվել մութի դեմ լուսնի լույսի տակ...
Իսկ որը ամպի մեջ է թաքնվում,
Կորցնում է ճամփան իր պայծառատես...
Ու դու իմ քեֆից հեռու ես փախչում,
Իմ բարի կտրիճ, անվայել է՝ քեզ։

Եվ պատասխանեց այն կտրիճն ահա,
Ահեղ արքային խոր գլուխ տալով.

— Թագավոր դու մեր, հավիտյան անմահ,
Սիրտս մի՛ խոցիր ինձ նախատելով,
Անբախտ է կտրիճ ստրուկդ անարժան,
Եվ վիշտս երբեք չես խեղդի գինով։
Քեզ զայրացրեց իմ տեսքը դաժան,
Հրամայիր՝ ինձ գլխատեն կացնով,
Կտրեն գլուխս, որ դյուցազնական
Ուսերիս վրա կապար է դարձել,
Եվ կռացել է դեպի գերեզման
Եվ հույս ու աշխարհ, ողջը մոռացել։

Ապա հարցրեց թագավորն Ահեղ.
— Բայց ի՞նչ բանից է սիրտդ վշտանում,—

Հո չի՞ ծանրացել զրահդ շքեղ,
Հո չի՞ քո դալար ձեռքը թուլանում,
Հո չի՞ քո ալմաստ սուրը բթացել,
Հո չի՞ վիրավոր՝ կաղում քո հուր ձին,
Կամ քեզ հո կռվում գետին չի՞ գցել
Վաճառականի թափառիկ որդին...

Եվ կտրիճն այսպես տվեց պատասխան,
Շարժելով գլուխն իրա գանգրահեր.
— Չի ծնված ձեռքը այն կախարդական,
Որ սուրս խլած՝ ինձ գետին զարկեր,
Դեռ սեգ արծիվ է հրեղեն իմ ձին,
Եվ զրնգում է զրահն ինձ վրա,
Սուրս շողում է ինչպես ապակին,
Դեռ վայելում եմ ես փառքը նրա։
Կապում եմ դեռ իմ մետաքսյա գոտին,
Թավշյա գլխարկը ճակատիս թեքում,
Եվ հյուր եմ գնում Մոսկվա գետին,
Դեպի այն ափն եմ ձիս ասպանդակում
Եվ ման եմ գալիս այն կանաչ ափին,
Ուր միշտ դուրս գալով դարպասների մոտ,
Աղջիկներն ինձ են նայում խնդագին
Եվ փսփսում են, խոսում ծիծաղկոտ...
Գիտեմ՝ ինձնով են նրանք հիանում
Եվ ոչ նժույգով իմ եղնիկատոտ,
Բայց միայն մեկը ճամփես չի պահում,
Չի նայի, թեկուզ մեռնեմ նրա մոտ...
Մեր հայրենիքում այս հնամենի՝
Ռուսաստանում սուրբ ու սրբազան
Նրա նմանը չկա, չես գտնի.
Դրախտի մեջ էլ տենչում են նրան։
Քայլում է, սահում կույս կարապի պես,
Նայում է քաղցր, ինչպես աղավնյակ,
Իսկ երբ խոսում է, սոխակն է կարծես,
Վարդն են այտերը, և՛ վարդ, և՛ կրակ։
Ոսկե հյուսքերը ուսերից իջնում
Եվ համբուրում են կուրծքը սպիտակ։

Մնվել է նա մի ծեր ու դողդոջուն
Վաճառականի հարուստ հարկի տակ,
Եվ Ալինա են ամենքը կանչում,
Ու նա է, նա է իմ վիշտը միակ։
Հենց որ տեսնում եմ հանկարծ ես նրան,
Ինքս իմը չեմ. սիրտս մշուշից
Լուռ սկսնում են աչքերս վառման,
Մունկս թուլանում, ընկնում եմ ուժից։
Ահա թե ինչու չեմ խմում գինին,
Ու ձանձրալի է թվում ամեն բան...
Ինձ չեն կախարդում ո՛չ կայծակ իմ ձին,
Ո՛չ էլ հանդերձանքն իմ իշխանական,
Էլ հարկավոր չեն ինձ ոսկի գանձեր.
Ո՞ւմ հետ բաժանեմ ես գանձս ոսկի,
Ո՞ւմ ցույց տամ բազկիս թափը անվեհեր,
Ո՞ւմ առաջ սանձեմ հողմն իմ նժույգի,
Ո՞ւմ համար քաշեմ սուրս կայծակող
Եվ հաղթող լինեմ կտրիճների մեջ...
Արձակիր, արքա՛, աստվածակարող,
Գնամ Վոլգայի տափաստանը պերճ՝
Ապրելու կյանքով մի կազակական,
Կամ վայր դնելու գլուխս անահ
Մահմեդականի նիզակի ծայրին։
Այնտեղ թաթարներն իմ գանգի վրա
Կռիվ կսարքեն, կխլեն իմ ձին
Մեկմեկու ձեռքից և չերքեզական
Իմ թամբի համար կկռվեն կարգին...
Եվ այդպես հանդում անտեր կմնամ,
Ուրուրն էլ դեռ թաց աչքս կհանի,
Գանգս անձրևը կլվա այնժամ,
Եվ կարոտ խնկած մի գերեզմանի՝
Աճյունս պիտի ցրվի քամու հետ,
Անունս էլ այդպես կկորչի անհետ...

Բայց խոսեց արքան ծիծաղի ձայնով.
— Հե՛յ, հավատարի՛մ իմ բազկի ծառա,
Կտրիճն իր վիշտը կխեղդի գինով.

Ջեմ ուզում վիշտը քո սրտին մնա.
Ահա, վերցրու իմ այս մատանին,
Որ տվել էի ես իմ թագուհուն,
Եվ այս մարգարտյա իմ մանյակն անգին։
Նախ գնա, խոսիր հարսնախոսուհուն,
Նրա հետ գանձեր ուղարկիր նվեր
Դու քո Ալինա աղջկան անսեր։
Եվ հենց որ առնի նա քո մատանին,
Եվ հենց որ սիրեց, հարսանիք արա,
Իսկ թե չսիրեց, է՛, քարը գլխին.
Հեծիր նժույգդ, ուրիշին գնա...

Է՛խ դու, է՛խ, բարի Իվան թագավոր,
Խաբեց խորամանկ քո ստրուկը քեզ.
Ճշմարտությունը թաքցրեց նա խոր,
Նա քեզ չհայտնեց, որ գեղեցկուհին
Մի վաճառական կտրիճ է սիրում
Եվ հենց նրա հետ՝ օրենքով մեր հին
Պսակված է քո աստծո տաճարում։

•

Հե՛յ, գուսլիները լարեք, տղանե՛ր,
Հե՛յ, գինի խմեք, պարե՛ք, այր ու կին,
Հասկացեք բանը, խմեք, կտրիճնե՛ր,
Հե՛յ, գուսլահարներ, շունչ տվեք երգին...

II

Հսկա խանութում նստած է տխուր,
Ջահել, թիկնավետ, բայց դալուկ դեմքով
Պարամոնովիչ Ստեփանը լուռ,
Որին կոչում են և Կալաշնիկով։
Կանգնեց, դուրս նայեց և ապա լռին
Նա դասավորեց մետաքսները բաց,
Քաղցր ձայնելով նա անցորդներին
Ուզեց իր գանձով կախարդել նրանց՝

Հաշվելով շռայլ արծաթն ու ոսկին։
Բայց օրը չար էր, ու նրա դռնով
Չէր անցնում բարին ու ներս չէր մտնում...
Եվ բոյարները անցնում անխռով՝
Ներս չէին մտնում, ու օրն էր մթնում։
Արդեն հանգել էր սուրբ տաճարներում
Ժամերգությունը իշնող իրիկվա,
Եվ վեհ Կրեմլի բուրգի ետևում
Վառվում է միգոտ վերջալույսն ահա։
Երկինքն են պատում ամպերը մթին,
Եվ բուքն է նրանց քշում աղմուկով,
Եվ խանութները փակվում են լռին,
Եվ տուն են գնում տերերն անխռով։
Կալաշնիկովն էլ փակում է անձայն
Ահա խանութը իրա կաղնեդուռ,
Մոայլ քրթմնջում մտքում ինչ-որ բան
Ու տուն է գնում ահա նա տխուր։
Այնտեղ դեռատի կինն է սպասում՝
Մոսկվա գետի այն ափի վրա։
Եվ ահա, ահա նա տուն է հասնում
Ու ներս է մտնում դարպասից նրա։
Բայց շեմքին սառը զարմանքը պատեց
Այն ջահել ու քաջ վաճառականին.
Չերևաց կինը, չդիմավորեց,
Չփռեց ճերմակ սուփրեն սեղանին։
Եվ մոմն էլ վշտից հազիվ է վառվում
Սրբի դալկադեմ պատկերի առաջ,
Ու տունը մի լուռ դամբան է թվում,
Երբ չկա չքնաղ կինը կապուտաչ։
Կտրիճը կանչեց ծեր սպասուհուն,
Պառավն հայտնվեց ստվերի նման։
— Ո՞ւր է տիրուհին, ասա ինձ իսկույն,
Ո՞ւր է իմ կինը, ո՞ւր է Ալինան,
Նա այս ուշ ժամին ո՞ւր է թաքնվել,
Որ մանուկները աղմուկ ու խաղից
Հոգնել են վաղուց ու վաղուց քնել,
Եվ գուցե սոված՝ կարոտ մոր կաթից։

— Տեր իմ,— պառավը ահով շշնջաց,—
Նա մի ժամ առաջ ժամ էր գնացել,
Ահա տերտերն էլ փակեց, տուն գնաց,
Բայց իմ տիրուհին չի վերադարձել։
Ու երեխեքը լալիս են, լալիս,
Ու մայր են կանչում, իսկ մայրը չկա։
Պառկեցնում եմ, քունը չի գալիս,
Ա՜խ, աստվա՜ծ, գլխիս ի՞նչ ձյուն պիտի գա։

Շփոթվեց մի պահ ու մթնեց մեկից
Այն երիտասարդ վաճառականը,
Եվ կյանքը կարծես չքացավ դեմքից
Եվ սուզվեց նա մութ մտքի օվկիանը։
Մոայլ մոտեցավ նա պատուհանին.
Դրսում շոքել էր գիշերը խավար,
Թափվում էր ձյունը, ծածկում մարդկային
Դաժան կրքերի հետքերն անհամար։
Բայց ահա լսվեց մի խուլ ոտնաձայն,
Ասես հովն անցավ ու ջահը վառվեց,
Եվ ինչպես անհայտ վշտի ուրվական
Սրահում հանկարծ կինը հայտնվեց։
Կինը՝ այլայլված, ու չկար գլխին
Գլխաշորը խաս՝ մետաքսը նրա,
Ինչպես արծվից փախած աղավնին
Հևում էր ասես ու դողում էր նա։
Մազերը՝ ցրիվ, աչքերն ահառած,
Հելակորույս էր հայացքն ամեհի,
Եվ շրթունքները ահա կարկամած,
Շրշացին բառեր անհասկանալի։

— Ո՞ւր էիր,— գոչեց մարդը զայրագին,—
Թափառո՞ւմ էիր և ո՞ւմ հետ, ասա՜,
Որ տուն ես գալիս դու այս ուշ ժամին,
Մազերդ քանդած՝ ուսերիդ վրա։
Թե՞ ազնվական կտրիճներն առած
Ման էիր գալիս, գուցե բա՞խտ ճարում,
Դրա համար չէր, որ աստծո առաջ

Մենք պսակվեցինք աստծո տաճարում։
Սակայն քեզ հիմի հենց դրա համար,
Կդնեմ մթին զնդանը խավար,
Կփակեմ նրա կաղնյա դուռն տակ,
Որ էլ աստծո լույսը չտեսնես,
Կդնեմ վրան երկաթե փականք,
Որ ազնիվ անուն էլ չմրոտես...

Եվ կինը ճչաց՝ աչքերն ամուսնու
Թվացին իր դեմ դաշույններ սրված,
Եվ նա ընկնելով ոտները մարդու,
Դառն արտասվելով խոսեց այլայլված.
— Տե՛ր իմ, արե՛ իմ, դու տե՛ր իմ անգին,
Սպանի՛ր դու ինձ կամ լսի՛ր մի պահ,
Խոսքիդ դաշույնով մի՛ խոցիր դու ինձ,
Չեմ վախում մահից, չեմ վախում դրսի
Բամբասանքներից չար ու արնախում։
Քո կինն անմեղ է, ինձ մի՛ բամբասի,
Անողորմ ես դու, քեզնի՛ց եմ վախում։
Բայց լսիր մի պահ, կարեկցիր սիրուց.
Չի ստում լեզուն իմ անմեղապարտ։
Տուն էի գալիս մայր եկեղեցուց,
Երբ ետևիցս զիլ սուլեց մի մարդ,
Ետ դարձա, ահից ծունկս թուլացավ,
Ծածկեցի դեմքս իմ գլխաշորով,
Բայց չարագուշակ նա ինձ մոտեցավ,
Եվ այսպես ասավ՝ ձեռքս բռնելով.
— Ինչո՞ւ ես վախում, իմ գեղեցկուհի,
Ո՛չ գող եմ ես չար, և ո՛չ մարդասպան,
Բարի ծառան եմ Ահեղ արքայի,
Կիրիբևիչն եմ ազնվական...
Բայց ես ավելի վախեցա, իմ տեր,
Գլուխս ահից պտտվեց, երբ նա
Սկսեց բռնի շոյել, համբուրել
Եվ այսպես խոսեց համբույրով իրա.
«Ասա՛, քեզ ի՞նչ է հարկավոր, ասա՛,
Իմ սիրելի՛ դու, դու իմ թանկագի՛ն

Ոսկի՞, մարգարի՞տ, ի՞նչ գանձեր, ասա՛,
Մետաքս ու ատլա՞ս և քարե՞ր անգին...
Քեզ կզարդարեմ թագուհու նման,
Ու թող բոլորը նախանձեն փառքիդ,
Միայն մի՛ թողնի դառնամ մարդասպան,
Մեռնեմ հանցավոր. սիրի՛ր ինձ, դրկի՛ր
Գեթ հրաժեշտի այս պահին անմեռ...»։
Եվ շոյում էր ինձ, և ինձ համբուրում,
Այտերիս վրա, կրակի պես դեռ
Պիղծ համբույրների հետքերն են վառվում,
Իսկ մարդիկ, մարդիկ թե՛ չահել, թե՛ ծեր
Նայում էին մեզ ու չար ծիծաղում։
Ահա հենց նրա ձեռքից եմ փախել,
Եվ գլխաշորս, որ գլխիս չկա,
Այն ավազակն է իմ գլխից տարել.
Թաշկինակի հետ քո այն մետաքսյա։
Անարգեց նա ինձ, ինձ խայտառակեց,
Շունը մրոտեց անունս անարատ,
Հարևանները ի՞նչ պիտի ասեն...
Էլ նրանց աչքին ինչպե՞ս երևամ.
Դու մի՛ թողնի ինձ՝ քո հավատարմին
Պախարակելու և հայհոյելու,
Ա՜խ, բացի քեզնից, ուրիշ հույս չունեմ,
Էլ ումի՞ց խնդրեմ՝ գան ինձ օգնելու...
Ես որբ եմ այս լույս աշխարհի վրա,
Հարազատ հայրս հող է հողի տակ,
Եվ կողքին հիմա մայրս է հող դառնում,
Իսկ մեծ եղբայրս, ինքդ լավ գիտես,
Անհետ կորել է օտար աշխարհում։
Իսկ փոքր եղբայրս էլ փոքր է, երեխա,
Փոքր է, երեխա ու անհասկացող...
Այսպես էր խոսում, ու կրծքի վրա
Գլուխը կախում, արտասվում էր նա։

Դրսում գիշերն էր խորացել լրին,
Բայց ահա մեկալ վանականը
Կանչում է փոքր իր եղբայրներին,

Եվ եկան նրանք ու մեծ եղբորը
Իրենց կարոտած ողջույնը բերին.
— Հայտնիր մեզ, մեր հայր, եղբայր մեր անգին,
Ի՞նչ է պատահել, ի՞նչ ցավ ունես, է՜խ,
Որ մեզ կանչեցիր այս մութ գիշերին,
Այս մեջգիշերին, այս բքին ահեղ։

— Ահա, սիրելի իմ եղբայրներ,
Մի սև փորձանք է եկել իմ գլխին.
Անարգել է սուրբ ընտանիքը մեր
Կիրիբեևիչ համհարզն արքայի,
Եվ այդ պիղծ բանը հոգիս չի տանի,
Եվ չի դիմանա անգամ սիրտը քաջ։
Եվ հենց որ վաղը գոտեմարտ լինի
Մոսկվայի ափին, արքայի առաջ,
Ես պիտի նետվեմ համհարզի վրա
Եվ պիտի կռվեմ, թեկուզ մինչև մահ։
Բայց թե նա հաղթեց, դո՛ւք կռվի ելեք,
Հանուն սրբության՝ նրան տապալեք,
Եվ մի՛ վախենաք, իմ արծվիկներ,
Ձեզ վրա մեղքը քիչ է ավելի.
Աստված կների...

Ու եղբայրները
Պատասխանեցին զայրույթով լցված.
— Ուր որ քշում է երկնային քամին,
Այնտեղ են չվում ամպիկներն հլու,
Երբ թուխ արծիվն է կանչում ձագերին,
Կռվի հովիտը՝ խնջույք սարքելու,
Լեշ հավաքելու այն մեծի կանչին
Փոքր արծիվներն այնտեղ են գալու։
Դու մեր արծիվն ես, մեր երկրորդ հայրը,
Որոշիր դու մեր ճակատագիրը,
Արա՝ ինչ կուզես. ինչ էլ որ լինի,
Մեր հարազատին չենք դավաճանի...

Հե՜յ, գուսլիները լարեք, տղանե՜ր,
Հե՜յ, գինի խմեք, հասկացեք բանը,

Զվարճացրեք բարի բոյարին
Եվ բոյարուհուն իր ձյունամարմին...

III

Եվ ոսկեգմբեթ հսկա Մոսկվայի
Եվ վեհ Կրեմլի բուրգերի վրա
Խուլ անտառներից, հեռու լեռներից,
Տանիքի տակից երկնքի՝ ահա
Ցրելով այն գորշ ամպերը, լռին
Ալ արշալույսն է շքեղ բարձրանում,
Դառնում ոսկե թագ Մոսկվայի գլխին,
Շաղ տալով ոսկի գանգուրներն իրա,
Լվացվում է լուռ ձյունով բյուրեղի,
Երկնքին նայում ու ժպտում է նա,
Ինչպես հայելուն՝ մի գեղեցկուհի։
Բայց դու, արշալույս, ի՞նչ վաղ արթնացել,
Ի՞նչ մի խնդության համար ես բացվել...

Ինչպես քիչ հետո կայծակող ամպեր,
Ահա Մոսկվա սուրբ գետի վրա
Լուռ հավաքվում են քաջերն անվեհեր՝
Բռնցքամարտի և կիրակնօրյա
Տոնը խնդությամբ թնդացնելու...
Եվ ահա խրոխտ ժամանեց արքան,
Վառ շքախմբով իր համհարզների
Եվ հրամայեց արծաթե շղթան
Ձգել, տեղ բացել մրցախաղերի։
Եվ բաց արեցին սեգ արքայի դեմ,
Քսանհինգ սաժեն մի հրապարակ,
Ուր մտնեն պիտի ու մենամարտեն
Ամբոխից ելած մարդիկ համարձակ։
Եվ ահա կանչեց արքան սիրաջեղ,
— Հե՜յ, հայտնվեցեք, իմ երկրի՜ քաջեր,
Զվարճացրեք ձեր հայր արքային,
Հապա դուրս եկեք, մենամարտեցեք,
Ես գանձ ու պարգև կտամ հաղթողին,
Իսկ հաղթվողին թող աստված փրկե...

Դուրս եկավ ահա Կիրիբեևիչն՝
Ահեղ արքային խոր գլուխ տալով,
Ցած դրեց մուշտակն հսկա ուսերից,
Աջ ձեռքով խրոխտ կողքին հենվելով,
Ձախով նա ուղղեց գլխարկը կարմիր,
Եվ... սպասում էր հակառակորդին...
Եվ երեք անգամ բարձր ձայնեցին,
Բայց չշարժվեց և ոչ մի մարտիկ,
Միայն հրում էր մեկը մյուսին։

Եվ շղթայի մեջ համհարզն էր քայլում
Եվ կարգիճների վրա ծիծաղում.
— Է՜խ, է՜խ, վախենա՞ք, մտքի տա՞կ ընկաք,
Ի՞նչ ուռաներ եք, որ հետ քաշվեցիք։
Բայց կխոստանամ ուրբ երկնքի տակ՝
Ձեզ ծառա լինեմ, եթե հաղթեցիք,
Իսկ եթե ընկաք, ձեզ բան չեմ անի,
Նորից կենդանի կթողնեմ գնաք,
Մեղքերդ քավեք հանուն այս տանի,
Միայն թե մեկը ինձ հետ կռվի դա՝
Զվարճացնենք մեր սուրբ արքային։
Եվ լռեց քաջը, բայց շուրջը նրա
Լուռ է, նայում է մեկը մյուսին...
Հանկարծ ամբոխը ճեղքեց, դուրս եկավ
Վաճառականը այն երիտասարդ,
Այն քաջը վառեմ, այն կարգիճն ահա
Կալաշնիկովը այն մռայլազարդ։
Կայծկլտում էին աչքերը նրա,
Բազեի պես էր նա շուրջը նայում,
Եվ հայացքն հառեց համհարզի վրայ
Ահա զանգրամազ մորուքն է շոյում։
Եվ այսպես խոսեց Կիրիբեևիչն.
— Դե, ասա, տեսնենք, ո՞վ բարի կտրիճ,
Դու ի՞նչ ցեղից ես, ի՞նչ տոհմից ես դու,
Ի՞նչ են քեզ կոչում, ասա իմանամ,
Ո՞ւմ դեմ եմ ձեռքս բարձրացնելու,
Ո՞ւմ հոգեհանգիստն եմ ես անելու։

Եվ պատասխանեց քաջը զայրալից.
— Մարդիկ կանչում են ինձ Կալաշնիկով,
Ծնվել եմ բարի ու աղնիվ հորից,
Ապրում եմ արդար աստծո օրենքով,
Ուրիշի կնոջ չեմ խայտառակել,
Չեմ եղել մթին գիշերն ավազակ,
Եվ աստվածային աչքից չեմ ընկել.
Վաճառական եմ, բայց հոգով կազակ.
Եվ ճշմարտությունն ասացիր հենց դու.
Մեր այս երկուսից մեկն է ընկնելու.
Մեկիս պիտի գա մեծ հոգեհանգիստ՝
Ոչ ուշ, հենց վաղը, այսօրվա ժամին,
Ու մեզնից մեկն էլ պարծանքով հանգիստ
Խնջույք պիտի տա՝ իր ընկերներին...
Ես ծիծաղեցնել չեմ ուզում մեկին,
Քեզ նման, դու չար Մահմեդի տղա,
Քո դեմ առաջին կռիվս է վերջին,
Եվ տես, ոտիս տակ հողդ կդողա...

Լռեց ամենը Կիրիբեևիչն
Ու գույնը գցեց, ինչպես աշնան ձյուն,
Դող առավ կարծես թիկունքն առնական,
Մռայլվեց, մթնեց կրակն աչքերում,
Եվ թաց շուրթերին բառերը սառան...

Այո՞ւծն էր հանկարծ իր բաշը ցնցեց,
Բո՞ւքն էր վրդովեց կանգնած ամբոխին.
Ոչ, հսկաների կռիվն սկսվեց,
Ամբոխն աղմուկով շունչ տվեց կռվին։

Համհարզը ձեռքը վեր բարձրացրեց,
Առաջինն ինքը խփեց մոլեգին
Ուղիղ կրծքի մեջ Կալաշնիկովի,
Եվ հսկան կարծես դողաց ցավագին։
Կալաշնիկովը օրորվեց մի պահ,
Եվ կրծքին կախած իր խաչը ծռվեց,
Եվ դանակի պես խաչը պղնձյա

Ցոլաց մի վայրկյան ու կուրծքը խրվեց,
Եվ խաչի տակից կաթեց, ինչպես ցող,
Կարմիր ու ազնիվ արյունը նրա։
Սակայն դյուցազնը ծանր հառաչով
Մի վայրկյան այսպես մտածեց ահա.
«Ինչ վիճակված է, այն էլ կլինի,
Մինչև վերջ պիտի պատիվս փրկեմ,—
Ճշմարտությունը ինձ չի կորցնի,
Կորցնի, բազկով նրան կգտնեմ...»։
Եվ ոստնեց հանկարծ և ուժը պրկեց,
Հավաքեց, կիտեց մկան մկանի,
Եվ ամբողջ ուժով հարձակվեց, զարկեց
Ուղիղ ձախ քունքին հսկա համհարզի։

Ջահել համհարզը հառաչեց թեթև,
Օրորվեց, մեռած տապալվեց գետին։
Սառը ձյան վրա հասակը պարթև
Մեկնվեց, ինչպես անտառում սոճին՝
Հենց իր արմատից հանկարծ կտրված...
Եվ Ահեղ արքան կանգնեց մթագին,
Ցասկոտ զայրույթով գետինը դոփեց,
Խոժոռեց, կիտեց հոնքերը մթին,
Եվ որոտընդոստ նա հրամայեց.
— Բռնեցե՛ք վայրագ վաճառականին։
Կտրիճը գնաց նրա դեմ կանգնեց։

Եվ այսպես խոսեց ուղղափառ արքան։
— Պատասխա՛ն տուր ինձ, ճշմարիտ, խղճով,
Ազատ ցանկությա՞մբ, թե՞ չուզենալով,
Թե՞ քեզ կորցրած զարկեցիր նրան՝
Իմ հավատարմին, կտրիճին իմ քաջ,
Իմ քաջ ծառային, իմ աչքի առաջ...

— Ես կասեմ ամենն, ազնիվ թագավոր։
Խփեցի նրան ազատ ցանկությամբ,
Բայց քեզ չեմ ասի, թե ինչ պատճառով։
Միակ աստծուն կասեմ լռությամբ...

Հրամայիր, տեր, թող կառափնարան
Տանեն մեղապարտ գլուխս անգին,
Միայն թե գթաս, ողորմած արքա,
Իմ փոքր ու կարիճ որբ եղբայրներին,
Եվ արդեն այրի կնոջս և այն
Իմ երկու ծաղիկ խեղճ մանուկներին...

— Լավ է, օ՜, լավ է, ո՛վ երիտասարդ,
Վաճառականի դու կտրիճ տղա,
Որ չստեցիր... կթողնեմ ազատ
Քո ջահել կնոջն ու մանուկներին,
Նրանց ես գանձեր, պարգևներ կտամ,
Կհրամայեմ՝ քո եղբայրներին
Թողնեն՝ առևտուր անեն ինքնակամ,
Առանց մի վաշխի և առանց հարկի
Քաղաքների մեջ ողջ ռուսական։
Բայց դու, ո՛վ կտրիճ, բարձրանաս պիտի
Եվ քո կատաղի գլուխը դնես
Կաղնեկուռ ծնկին կառափնարանի...
Եվ ահա ելնում ու կոչում եմ ես,
Որ քո դահիճը ալ կարմիր հագնի,
Սրի կացինը մի անգղի պես,
Եվ իմ երկրով մեկ զանգը հնչեցնի,
Որ ողջ Ռուսիան իմանա, թե ես,
Թողած սրբազան օրենքն արքունի,
Քո դաժան մահով գթացել եմ քեզ...

Նով է ժողովուրդն հրապարակում,
Մահագույժ զանգն է ղողանջում բեկ-բեկ,
Դեգերում է լուրն ու մռայլ սգում
Նա ամենուրեք ու մրտակեղեք։
Եվ լուռ բարձունքին կառափնարանի,
Կարմիր, արնագույն շապիկը հագին
Մեծ, սրած կացնով,
Սև դահիճն ուրախ քայլում է լռին
Իր մերկ ձեռները իրար շփելով.
Լուռ սպասում է նա մեղապարտին։

Իսկ այն ջահելը, այն կտրիճն ահա
Կարծես ցող անգամ սիրտը չի լալիս,
Քարաղեմ, մռայլ շշնջում է նա,
Հարազատներին հրաժեշտ տալիս.

— Դե, եղբայրիկներ իմ արյունակից,
Համբուրվենք վերջին բաժանման համար,
Իմ Ալյոնային ողջունեք ինձնից,
Ասացեք՝ թող քիչ, թող քիչ վշտանա,
Իմ մասին, ասեք, երբեք չպատմի
Երեխաներին իմ կիսաբողբոջ,
Բարեկամ, ծանոթ և թե թշնամի
Թող ողջույնս առնեն ու մնան միշտ ողջ,
Իսկ դուք աղոթեք մայր եկեղեցում
Իմ հոգուն, որ, չէ՞, չունի մահացում...

Սարսեցին հանկարծ մարդիկ խմբովին,
Դահճի կացինը կայծակեց ահով,
Եվ այսպես կտրիճ Կալաշնիկովին
Պատժեցին մի չար, մի դաժան մահով։

Եվ լռին տարան, թաղեցին նրան
Մոսկվա գետի այն ափի վրա,
Ամայի դաշտում, երեք անսահման
Ճամփաների մեջ՝
Տուլայի, Ռյազանի ու Վլադիմիրի։
Եվ խոնավ հողից բլուր կանգնեցրին,
Լոկ մի խաչ գրկեց բլուրը նրա,
Շուրջը ոռնում էր կատաղի քամին,
Լալիս անանուն բլուրի վրա,
Եվ բարի մարդիկ, երբ ամեն անգամ
Անցնում են երեք ճանապարհներով՝
Կանգնում են մի քիչ, հիշում մի վայրկյան,
Լցվում են, լալիս թախծոտ հուշերով։
Եվ այսպես տարիք ու գուցե դարեր
Կանցնի ծերունին՝ կխաչակնքի,
Կտրիճը կանցնի՝ լուռ կպատիառի,
Կանցնի աղջիկը՝ լուռ կվշտանա,
Եվ գուսլահարը դառնացած կանցնի
Ու կերգի ազնիվ անունը նրա...

Հե՞յ, իմ սոխակներ,
Իմ գուսլահարներ,
Լավ սկսեցինք, լավ կվերջացնենք.
Թող նրանք գինի, մենք արցունք խմենք,
Փա՞ռք առատաձեռն բարի բոյարին,
Փա՞ռք գեղեցկուհի իր բոյարուհուն,
Փա՞ռք ժողովրդին...

ՏԱՄԲՈՎԻ ԳԱՆՁԱՏԻՐՈՒՀԻՆ

Տանուլ տվածը ետ չի գա նորից
(առած)

Զոհ

Ինձ հնահավատ թեկուզ համարեք,
Մեկ է, ես նույնիսկ ուրախ եմ անչափ։
Իմ բարեկամներ, կպատմեմ մի դեպք
Ես Օնեգինի տաղաչափությամբ։
Խնդրում եմ լսեք այս հեքիաթն ահա։
Անսպասելի լուծմանը նրա,
Գուցե և գլխի թեթև շարժումով
Հավանություն տաք՝ ինձ հավատալով։
Հնոց բարքերին հետևելով քաջ՝
Կխմենք հիմա գինին անթերի
Բանաստեղծական անհարթ տողերի,
Որոնք կաղալով կհոսեն առաջ
Եվ հաշտ ու խաղաղ կգնան հեռու՝
Մոռացման գետում հանգիստ առնելու։

I

Միշտ չէ քարտեզի վրա գլխավոր՝
Տամբովը նշված իբրև շրջանակ,
Այն շնորհազուրկ ու փոքր էր մի օր,
Հիմա դարձել է հայտնի մի քաղաք։
Կա այնտեղ երեք փողոց ուղղաձիգ,
Սալարկ, լապտերներ՝ այնքա՜ն գեղեցիկ,
Կա երկու պանդոկ՝ միշտ էլ անլուին.
Մեկը Մոսկովյան, իսկ մեկը՝ Բեռլին։
Կա և չորս կրպակ այնտեղ, Տամբովում,
Երկու պահակով ոստիկանական.
Ձեռքները նրանք պատվի են առնում
Ու երկու անգամ փոխվում օրական։
Մի խոսքով՝ եռուն, փառահեղ քաղաք։

II

Սակայն ձանձրույթն է, աստվա՜ծ իմ, աստվա՜ծ,
Հյուր գալիս, ինչպես Նևայի ափին,
Հրամցնում է քեզ քաղցրահամ մի մաղձ,
Կոպիտ ձեռքերով շոյում քո հոգին։
Կան պճնամոլներ սեթևեթ, անհոգ,
Եվ իմաստակներ՝ այնքան անողոք,
Փրկություն չկա բյուր հիմարներից,
Երաժշտական երեկոներից։
Եվ կան դամաներ՝ հրաշք են կարծես,
Միշտ էլ խստադեմ, գլխարկներ դրած,
Մերժում կա հավետ դեմքերին նրանց,
Ու վատը նույնիսկ դու չմտածես.
Միտքդ կարդալով քո աչքերի մեջ,
Քեզ կնախատեն, կանիծեն անվերջ։

III

Կյանք առավ հանկարծ ցեղն ազնվական,
Գավառի կանայք հրճվեցին թաքուն.
Մի լուր տարածվեց. գունդն ուլանական
Պետք է ձմեռի Տամբով քաղաքում։
Ա՜խ, իսկապես որ ճարպիկ ուլաններ...
Ճիշտ է, գնդապետն ամուրի է դեռ,
Բայց բրիգադի գեներալն, անշուշտ,
Երեկույթ տալով՝ քեֆ կանի մի կուշտ։
Մայրիկների դեմքն առկայծեց մի լավ,
Բայց գծուծները շար ու անհանգիստ
Եվ հայրիկները անողոք ու խիստ՝
Վարանման մեջ են... սուրն ու թուրն, իրավ,
Փորձանք կբերեն շպարված սեռին...
Տամբով քաղաքը հուզվում էր տեղին։

IV

Եվ ահա մի օր, վաղ լուսաբացին,
Կուսական քնի պահին վաղորդյան,
Երբ դեռ մշուշի շղարշից անծիր

Նոր էր լուսաստղը նայում անվարան,
Ու երբ դեռ հազիվ Ավրորան անտես
Ոսկեզօծում էր գմբեթները վեհ,
Եվ երբ հանգիստ էր պանդոկն այդ ժամին,
Որպես լուռության հայտնի թշնամին,

. . . . . .

. . . . . .

Ուլաններն աջից վեց հոգով շարված՝
Ներս մտան քաղաք։ Թամբերին նիրհող
Երաժիշտները համարյա անշարժ՝
«Երկու կույրերից» նվագեցին մարշ։

V

Լսելով սիրած դոփյուններն ահա
Ոչ վրնջյունը սև նժույգների,
Ո՞ւմ սիրտը ասես՝ չէր ուրախանա,
Ո՞վ ասես դրան չէր դառնա գերի։
Տաք անկողինը մոռացվեց անփույթ...։
«Մա՛լա՛շկա, հիմա՛ր, Կատերի՛նա, շո՛ւտ,
Բե՛ր կոշիկներս, աղլուխս սիրած։
Իվանն ի՞նչ եղավ։ Ապո՛ւշ արարած,
Երկու տարի է՝ փեղկ է բացում դեռ...»։
Ու փեղկը բացվեց։ Տնով ու տեղով
Մաքրում են ահա պատուհանն աղոտ,
Եվ աղջիկները հետաքրքրասեր
Քնկոտ աչքերով նայում են նրանց
Խոժոռ դեմքերին՝ փոշու մեջ կորած։

VI

«Հորեղբո՛ր աղջիկ, մի այս կողմ նայի՛ս.
Ա՛յ, նա՛ է»։ «Ո՞րը։ Մայո՞րը»։ «Օ՜յ, ո՞չ»։
«Ինչ լա՛վն է, իսկ ձին հրաշք է ասես,
Ափսո՛ս, կոռնետ է, սա՛ է ցավն ամբողջ...։
Ի՜նչ ճարպիկ թեքվեց, և ի՜նչ անվեհեր...
Տեսա երազում նրան այս գիշեր...

Էլ հետո քնել չկարողացա...»։
Եվ թրթռացող կրծքին աղջկա
Ելնում-իջնում է գլխաշորը նուրբ,
Ու երազանքի հրով բռնկված
Դեմքը կենսախինդ՝ մթնում է կամաց։
Բայց գունդը գնաց։ Հետևից մի խումբ
Քաղաքի տղերք ձգվեցին-անցան
Բոբիկ, անլվա և աղմկաձայն։

VII

Մոսկովյան կոչվող հյուրանոցի մոտ,
Որտեղ ապրում են թունդ բեղապաշտներ,
Կար մի Բոբկովսկի բոլորին ծանոթ,
Մի նահանգական ծերուկ դանձատեր։
Պարոնի տունը շինված էր դեռ վաղ,
Անբարեեսես էր, բայց միշտ էլ խաղաղ,
Ու երկու կլպած սյունի օգնությամբ
Հազիվ էր պահվում մի հին պատշգամբ։
Տանիքը արդեն պատել էր մամուռ,
Թխկթխկում էին տախտակները չոր,
Դրա տեղ՝ խուզված սոճիները չորս
Պատուհանի դեմ ելնում էին լուռ,
Իբրև վարագույր բաց երկնքի տակ,
Իբրև զարդերի անմեղ պաճուճանք։

VIII

Սեր էր տանտերը, մռայլ մշտապես,
Գլուխը ճաղատ ու հսկայական։
Պետական փողով ապրում էր այնպես,
Կարծես թե այն իր գանձն էր սեփական։
Նա շատ էր սիրում թափառել անվերջ
Հազվի մշուշոտ հորձանքների մեջ,
Դրա համար էլ խաղացող էր նա,
(Այդ բանը միակ արատն էր նրա)։
Սիրում էր ձմռան երեկոներին
Ընկնել դեռ ու դեն, աջ ու ձախ շրջել։

Չորրորդ տարվածը հիմնովին ջնջել,
Հետո նոր գումար դնել սեղանին,
Եվ անեծք տալով կորուսյալ փողին՝
Խմել Ցիմլյանսկի կարկաչուն օղին։

IX

Նա աշխատանքը ատում էր սրտանց,
Քաջերին բուռն էր հավաքում հանգիստ,
Ահ ու սարսափն էր գավառի կանանց
Եվ նրանց որդոց դաստիարակը խիստ։
Խաղաթղթերը նրա բծանիշ
Հաճախ կես ժամում լափել են ընդմիշտ
Թե՛ յուղ, թե՛ վարսակ, թե՛ հնդկահավեր,
Որպես եկամուտ ու անմեղ նվեր։
Բժիշկ, դատավոր, ոստիկանապետ.
Այս էր ծերուկի շրջապատը հար,
Վերջինն ընկեր էր ու շատ գործարար,
Սրամտում էր, կատակում հավետ,
Այնպես, որ հաճախ գանձատիրուհին
Գլուխն ամոթից հակում էր լռին։

X

Ընթերցո՛ղ, ես դեռ չասացի մի բան.
Ամուսնացած էր գանձատերը մեր,
Արարիչ-ատված օրհնել է նրան,
Առաքելով գանձն այդ սրտանվեր։
Հարյուր հազար էր նրան համարում,
Թեև բավական համեստ էր պահում
Եվ մեկը մի մեծ քաղաք գնալիս՝
Գլխարկ բերելու դրամ չէր տալիս։
Կյանքի խորհուրդը մեկնում էր նրան՝
Ինչպես հառաչել կամ նայել տխուր,
Որ դրած փողը չկորչի իզուր,
Վանդակից փախած թռչնակի նման։
Բայց և կնոջից անգամ այդ պահին
Աչքը չէր կորում խելոք ծերունին։

XI

Ճիշտ որ Ավդոտյա Նիկոլաևնան այդ
Համեղ պատառ էր թվում նայողին։
Քայլում էր այնպես սահուն ու հպարտ,
Կարծես կոշիկը չէր կպչում հողին։
Ամբողջ Տամբովում չեն տեսել մարդիկ
Այդքան փարթամ կուրծք, այդքան գեղեցիկ.
Նա նուրբ էր այնքան և այնքան ճերմակ,
Որ երևում էր ամեն մի երակ։
Կարծես ծնված էր իբրև քնքուշ բոց՝
Կրքերի՞ համար։ Իսկ աչքերն ասես...
Փիրուզ ասածը ի՞նչ է իսկապես,
Ի՞նչ է երկինքը։ Ի միջի այլոց,
Ես սիրահար եմ կապույտ աչքերի,
Ինչպե՞ս կարող եմ դատել անթերի։

XII

Հապա քթի՞կը, շուրթե՞րը նրա.
Մայիսյան վարդի թերթեր են ասես,
Ատամնաշա՞րը մարգարտանման,
Զա՞յնը մեղմականչ՝ երազանքի պես։
Թերություն ուներ միայն մի բանում.
«Ր»-ն այնքան պարզ չէր նա արտասանում։
Սակայն արատն այդ փոքր ու աննշան
Ո՞վ ասես՝ սրտանց չէր ների նրան։
Նրա այտերը հանուն քնքշանքի
Սիրում էր շոյել գանձատերը ծեր։
Շատ ափսոս միայն, որ երեխաներ
Չունեին։ . . . . . .
. . . . . .
. . . . . .

XIII

Այս սիրավեպի պարզության համար
Պետք է ձեզ ասեմ, որ մի ուլանի
Սիրահարված էր կրքով խելագար

Քույրերից մեկը նրա գեղանի։
Ինչպես որ հարկն է, մի օր էլ ահա
Դունյային բացեց այդ գաղտնիքը նա։
Դուք ամուսնացած երկու քույրերի
Զրույցը լսած լինեք երևի։
Ա՜խ, ինչե՜ր ասես, դատավո՜ր վսեմ,
Այրվող շուրթերով չեն խոսում նրանք։
Օ՜, դո՜ւք, ռուսական բարքե՜ր հասարակ։
Ես շիտակ մարդ եմ ու պետք է ասեմ,
Որ նման խոսքեր՝ ասված կամացուկ,
Մի երկու անգամ լսել եմ ծածուկ։

XIV

Այսպես տամբովցի չքնաղ գեղուհին
Պաշտում էր բեղեր ու երջանկանում։
. . . . . .
. . . . . .
Շատ իմանալը կործանեց նրան։
Մի երիտասարդ, ստահակ ուլան
(Նրա հետ մեկտեղ եղել եմ հաճախ)
Վերցրեց պանդոկում անկյուն մի խաղաղ
Ուղիղ հենց նրա սենյակի դիմաց։
Երեսունամյա տղամարդ էր մի,
Շտաբռոտմիստր, տեսքը՝ կոռնետի,
Բեղերը սև-սև, դեմքը բռնկված.
Մի խոսքով՝ իղձը շատ աղջիկների,
Ամեն կողմերով ռուս էր անթերի։

XV

Նա իր հայրական ունեցվածքը ծով
Խժռել էր, երբ դեռ կոռնետ էր միայն,
Հետո ապրում էր վաղվա հույսերով
Աստծո արարած թռչնակի նման։
Ուտում-խմում էր ու պառկում անհոգ,
Թե վաղն ինչ կուտի՝ չգիտեր ոչ ոք։

Ռուսաստանն ամբողջ տալով ոտնատակ,
Մեկ որպես հեծյալ, որպես սուրհանդակ,
Կամ մերթ կիսարբուկ նորոգիչ էր մի,
Մերթ էլ կնամոլ արձակուրդավոր,—
Այնքան էր ծանոթ դեպքերին բոլոր,
Որ ես զառանցանք կհամարեի,
Թե նրա ասած որևէ մի բառ
Սնապարծության նշույլ ունենար։

XVI

Նա չէր շշկլվում երկրային կրքից,
Չէր կորցնում իրեն ոչ մի ժամանակ։
. . . . . .
. . . . . .
Հաճախ բոլորին շուրջը հավաքում,
Սիծաղեցնում էր խոսքերով փքուն,
Իր փողոցային ծամածռությամբ
Կամ էլ մի դիպուկ սրամտությամբ։
Մի վեճից հետո ի սեր կատակի
Գնդակով խփեց մեկի ճակատին։
Ի սեր կատակի ի՜նքն էլ կմեռներ,
. . . . . .
Մանկան պես մեկ-մեկ անչար էր հոգով,
Բարի էր, ազնիվ, դարձյալ կատակով։

XVII

Նա այն իգամոլ մարդը չէր բնավ,
Որը մեզ վաղուց հայտնի է արդեն,
Չէր սիրում ծեծված կածանով գնալ,
Կարողանում էր ճամփան իր հարթել։
Չէր սիրում կրքոտ բացատրություններ,
Մեկի դեմ ծնկի չէր եկել նա դեռ,
Բայց, բարեկամնե՜ր, չնայած դրան,
Ինձնից ու ձեզնից բախտով էր տղան։
. . . . . .

. . . . . .
. . . . . .
Շտաբռոտմիստր Գարինն ինքն էր դա.
Ծայրահեղ դեպքում նրան նայելով՝
Փոքր էր երևում-ինձնից հինգ տարով։

XXIII

Տամբովի դեպքերն հազվագյուտ այնքան՝
Պանդոկապետից նա մեկ-մեկ լսեց։
Իմացավ հազար ծիծաղելի բան,
Բանսարկություններ, կարծեմ, հինգ թե վեց։
Տեղյակ էր հարուստ հարսնացուներին,
Այս փեսախոսին, այն հարսնախոսին։
Սակայն ամենից առավել ու խիստ
Հուզում էր նրա միտքը անհանգիստ
Հարևանուհին սիրուն ու ջահել։
— Խե՜ղճ աղջիկ,— ուլանն ասում էր մտքում,—
Մի անկյանք ապուշ քեզ իր վանդակում
Իրավունք ունի մեկուսի պահել,
Իսկ ես՝ հիմարս կանգնել եմ լռին,
Ձե՞ռք չեմ տալիս քո ճակատագրին։

XIX

Նստում է փութով նա պատուհանին,
Հագած պարսկական ինչ-որ արխալուղ։
Ծուխ է արձակում նրա շուրթերին
Մի ուլունքաշար ու նախշուն չիբուխ։
Ծածկել է փափուկ գանգուրները նա
Բալենու գույնի թասակով ահա՝
Ոսկե եզրակալն ու ծոպը վրան.
Մոլդավուհին էր նվիրել նրան։
Նստել՝ նայում է ջանասիրաբար...
Եվ ինչպես մթնում վառվող մի կրակ,
Ապակու միջով պատկերվեց հստակ
Նուրբ ու սիրելի մի դիմանկար։
Ա՜յ, պատուհանը կարծես շրխկաց...
Ա՜յ, կարծես թե այն բախեցին կամաց։

XX

Լուռ է քաղաքը և քնաթաթախ,
Այգն է առկայծում պատուհաններին,
Ու դեռ փողոցը նիրհում է խաղաղ,
Չկա թխկոցը ծածկակառքերի...
Ա՜խ, ի՞նչն է ստիպել, որ կիսամութին
Արթնանա ջահել գանձատիրուհին։
Ո՞րն է այդ բանի պատճառն իսկական,
Անքնությո՞ւնն է հալածել նրան։
Գլուխը ձեռքին հենել քնքշաբար,
Հառաչում է նա՝ գուլպա հյուսելով,
Բայց չի վերջանում բանը դրանով.
Գուլպայից խոսել՝ շատ է անհարմար։
Իսկ եթե ճիշտը ասելու լինենք,
Գուլպա գործելը նրան շա՞տ էր պետք։

XXI

Նախ՝ սքանչելի հայացքը նրա
Խոյացավ դեպի եթերը անհուն,
Հետո խոնարհվեց երկրի վրա,
Եվ հանկարծ... ա՜յ քեզ խայտառակություն.
Պատուհանի մոտ, ուղիղ իր դիմաց
Կա մի տղամարդ՝ մունդիրը հանած։
Շո՜ւտ, շտաբռոտմի՜ստր, հիմա գործդ տե՜ս։
Ու պատուհանը բախեց... Տե՜ղն է քեզ։
Եվ անհետացավ տեսիլքը սիրած։
Իհարկե, ազնի՜վ իմ բարեկամներ,
Ձեր հոգում արդար զայրույթ կծներ
Այսպիսի տխուր վախճանն անկասկած։
Բայց ես ուլանին պատիվ եմ տալիս։
Նա ասաց. սկիզբն ինձ դուր է գալիս։

XXII

Երկու օր մնաց պատուհանը փակ։
Սակայն կսպասի՜ ուլանը, ոչի՜նչ։
Ու երրորդ օրը ապակին՝ հստակ

Ցույց տվեց կնոջ ստվերը թովիչ։
Եվ լուսամուտը կամացուկ ճռռաց։
Այնտեղ նստել է նա գուլպան բռնած։
Բայց փորձված աչքը լավ էր նկատում,
Թե նա նոր շորով անց էր կոտրատվում,
Իր հաջողությամբ ուրախ ավելի,
Ուլանը բակից դուրս եկավ-գնաց.
Մինչև առավոտ չունեք վեճ-դատ,
Իսկ հետո, թեև շատ էր ցավալի,
Նա հավաքելով ուժերը բոլոր՝
Պատուհանին մոտ չեկավ երեք օր։

XXIII

Բայց գժտությունն այդ փոքր ու աննշան
Առիթ էր քնքուշ գժտությունների.
Շուտով իրարից դարձան անբաժան
Խոսքերով չասված, բայց ընթեռնելի։
Օ՜, սիրո՜ լեզու, հիասքա՜նչ լեզու,
Որ միայն ջահել սրտերն ես կիզում,
Ո՞ր սիրողին չես վերցրել դու գերի
Ու դարձել նրա լեզուն մայրենի։
Անզուսպ կրքերի պահին խելագար
Ո՞ւմ չես օգնել գեթ մի անգամ միայն
Սիրած շուրթերի, ոտքերի մոտ այն,
Ո՞ւմ չես լծիդ տակ ստիպողաբար
Ցար ու նախանձոտ ամբոխների մեջ
Փրկություն բերել քո հրով անշեջ։

XXIV

Կարճ ասեմ. ուղիղ երկու շաբաթում
Գարունը արդեն գերազանց գիտեր,
Թե երբ է սիրած էակը ճարթնում,
Մարդու հետ թեյում, զբոսնում մի տեղ։
Հենց որ լինում է ժամ ու պատարագ,
Ինքն էլ հետևից գնում է արագ։

Կանգնում է խոնավ սյունի մոտ հեռու
Եվ նայում առանց խաչակնքվելու։
Կանթեղի շողով շառագույն ու վառ
Լուսավորվում է գեմքը ուլանի,
Ի՞նչ մոայլ է այն, սա՞ռն անտանելի։
Իսկ հայացքները զենող ու համառ
Մաքրում ու հանկարծ փայլում են կրկին՝
Զարնվելով կնոջ գեղանի կրծքին։

XXV

Վաղուց է հայտնի, որ սերը կանանց
Միշտ էլ եղել է հետաքրքրասեր.
Ուլանից նրա սրտի մեջ մնաց
Տպավորության հաճելի մի բեռ.
Տղան վարվում էր շատ տարօրինակ,
Իհարկե, պետք չէր ընկնել մեղքի տակ
Սրտի ճանապարհ հարթելու համար,
Վախենալ, հետո շոյել քնքշաբար։

. . . . . .

. . . . . .

. . . . . .

Այնքա՜ն է տհաճ կյանքն առանց սիրու։
Կրքերից խոսելն իզուր է անգամ,
Երբ ամուսինը ծեր է բավական։

XXVI

Բայց ժամանակը թռչում էր առաջ։
«Վե՜րջ»,— մտածում էր սիրահարն իմ քաջ։
«Հեքիաթո՜ւմ են լոկ հառաչում անբավ,
Իսկ ես հեքիաթի հերոս չեմ բնավ»։
Ու ծառան ահա ներս մտավ մի օր։
«Այդ ի՞նչ ես բերել»։— «Գրությո՜ւն է այս։
Պարոնը ասաց, որ գլուխ տամ խոր,
Ինքն անձամբ չեկավ, գործե՛ր ունի, բա՜ռ։
Եվ հրամայեց ճաշի կանչել ձեզ,
Իսկ երեկոյան՝ պարի անկասկած։

Նրա մեծությունն այդպես էլ ասաց»։
— Գնա և ասա, որ գալո՛ւ եմ ես։—
Ու շտաբռոտմիստրը մտքի մեջ հաշվով՝
Ժամը երեքին սլացավ ճաշի։

XXVII

Ամֆիտրիոնը առաջնորդ էր մի;
Եվ ուրախ օրին կնոջ ծննդյան
Իբրև մոլեռանդ պահապան կարգի՝
Կանչեց մեծերին իր նահանգական
Ու մի ամբողջ գունդ։ Թեև շատ անցավ,
Թեև գեներալն ուշ ներկայացավ
Եվ ամբողջ օրը տարվեց հորանջով,
Սակայն չտուժեց տոնը ոչնչով։
Պատրաստված էր այն անչափ խելացի.
Սկահակները խնձորով լցված՝
Սպասում էին գեղեցիկ տիկնանց,
Իսկ տղամարդկանց համար առանձին
Երեք արկղ թունդ գինի կար արդեն,
Որ բերել էին առավոտյան դեմ։

XXVIII

Տանտերը կնոջն այն գեներալի
Տարավ թևանցուկ։ Ու սեղանի մոտ
Տեղն իր գրավեց սեռը գեղանի՝
Տղամարդկանցից հեռու, ամաչկոտ։
Ու պատշգամբից՝ թունդ ու զորավոր
Հնչեցին գնդի փողերը բոլոր,
Խեղդելով ասես ձայները անմեղ՝
Ամանեղենի զնգոցները մեղմ,
Բարքերը հին են, բայց հրաշալի...
Այն ախորժակը լա՛վ է բորբոքում,
Երբեմն, ի դեպ, նա երկու հոգու
Զրույցն է խեղդում տաք ու անձկալի,
Բայց մեր օրերում հինը անպայման
Համարվում է լոկ ծիծաղելի բան։

XXIX

Ո՛չ, բոյարական ազնիվ բարքերի
Հետքե՛րը նույնիսկ մի փնտրի հիմա,
Լոկ հուսարական հարուստ քեֆերի
Փողերն են հնչում առաջվա նման։
Ա՜խ, ե՞րբ կլինի, որ ես անտրտում
Կնստեմ սիրած իմ շրջապատում,
Կըմպեմ հեղուկով լիքը մի բաժակ
Գնդային երգի հնչյունների տակ։
Եվ ե՞րբ կտեսնեմ ես մենտիկների
Փայլը ոսկեգույն ու հոգեպարար
Այն գորշ պահերին, երբ լուսայգը վառ
Քաջ հուսարների քնկոտ շարքերին
Ու զորակացքին՝ թավ անտառակում
Իր գաղտագողի շողն է առաքում։

XXX

Շտաբռոտմիստրը նստել էր շուքով,
Կողքին՝ Ավդոտյա Նիկոլավնան մեր։
Նա ոլորում էր բեղը մի ձեռքով,
Համառ հայացքով արձակում նետեր։
Իսկ կնոջ հոգում հուզմունք կար մի մեծ...
Հանկարծ, չգիտեմ, ինչպես պատահեց,
Նրա նուրբ ծնկին սեղանի հետև
Ուլանն իր ծնկով կպավ մի թեթև։
Ներողություններ, խոսքեր զանազան՝
Ու սկսեցին նրանք խոսել իրար հետ,
Մի քնքուշ հայացք, երկու կոմպլիմենտ՝
Եվ բանը հասավ լուրջ բացատրության...
Շատ է վայել դա ազնիվ սպային։
Ուրի՛շ էր սակայն գանձատիրուհին։

XXXI

Նա ի պատասխան մեղմ շշնջոցին՝
Սրտի հրճվանքը պահում էր թաքուն,

Ու դաս առնելով իր դաժան փորձից՝
Ընկերություն էր լոկ առաջարկում։
Գյուղում դեռ հնուց կա հայտնի մի կարգ.
Տանջելը՝ կանանց միջոցն է միակ։
Բայց կա և ուրիշ հայտնություն անանց.
Սերն ընկերների և սերը կանանց։
Ի՞նչ դժոխային տանջանք է ու ցավ
Ամբողջ երեկոն նստել tête à tête
Մի տասնութամյա գեղեցկուհու հետ

. . . . . .
. . . . . .
. . . . . .

XXXII

Այս վերջին տարում ես մեր քաղաքի
Աղջիկների մեջ անսահման քնքուշ՝
Կիրքն էի տեսնում սին զառանցանքի
Ու միստիցիզմի։ Նրանցից զգո՛ւյշ։
Մեկ էլ տեսնում ես՝ իմաստակ մի կին
Սիրո հրաբորբ ժամանցի պահին
Համոզում է քեզ, խոսքերո՛վ թեկուզ,
Թե հինգ չի անի երեքին՝ երկուս։
Փոխանակ սիրի, գրկի քնքշաբար,
Կամենում է քեզ իսկույն հիպնոսել,
Լավ է քնել ու ոչինչ չխոսել...
Քո առաքկության պտուղները դառն
Տեսած չի լինի աշխարհն անկասկած,
Սակայն ի՞նչ օգուտ, ի՞նչ օգուտ, աստվա՛ծ։

XXXIII

Չեմ պատմի բոլորն, ինչ կար այն պահին,
Թեև փայլուն էր երեկույթն անչափ։
Ամբողջ երեկո իմ քաջ ուլանին
Ամուրն էր օգնում ջանասիրությամբ։
Ավա՛ղ, ...

Էլ չե՞ն հավատում Ամուրին հիմա,
Չի՛ հիշվում սիրո աստվածը կախարդ,
Եվ զոհասեղանն անկրակ է արդ։
Բայց առաջադեմ մայրաքաղաքին
Չի շտապում գավառն իսկույն հետևել։

. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .

XXXIV

Գերվեց Դունյայի սիրտը քնքշասուն.
Մի զորեղ հայացք պարուրեց նրան...
Նա ամբողջ գիշեր դյութիչ երազում
Լսում էր թրի զնգոցը միայն։
Նա ժամը իններն ելնում անվրդով,
Նստում է ահա ճմլած խալաթով,
Հյուսում ինչ-որ բան, բայց չի հեռանում
Այն նույն երազը և իրականում։
Իր այրը ունի բազում անելիք...
Ինքը մենակ է, ազատ խոհերով։
Հանկարծ բախեցին դուռը։ «Ո՞վ է, ո՞վ,
Անդրյո՞ւշկան։ Ա՜խ, դո՛ւ, ծովաշո՛ւն-ծույլիկ...»։
Դանդաղ քայլերով ինչ-որ մեկն անձայն
Ներս մտավ... միայն Անդրե՛յը չէր այն։

XXXV

Լա՛վ եք կռահում դուք հավանաբար,
Թե ով էր հյուրն այդ անսպասելի,
Իհարկե, գուցե քաջն իմ սիրահար
Շտապեց չափից մի քիչ ավելի,
Սակայն նկատի առնելով նրա
Համբերությունը անցած անգամվա,
Լավ կհասկանա՞ք՝ ինչն է այդ պահին
Համարձակ դարձնում երիտասարդին։

Նա խոնարհելով գլուխը կամաց,
Դունյային ահա մոտեցավ լռին,
Ապա սևեռեց նրա աչքերին
Հայացքը տրտում, անչափ միգամած,
Հետո ոլորեց բեղերը երկար
Ու հառաչելով խոսեց քնքշաբար.

XXXVI

«Գիտե՞մ, ինձ չէի՞ք սպասում անքուն,
Դա մատնում են ձեր աչքերն անհանգիստ,
Ա՜խ, չե՞ք փորձել դուք երբևէ կյանքում,
Թե ինչ է կրքի մի պահը նույնիսկ։
Հուզվում է հիմքից սրտիս ծովն անհուն,
Կորցրել եմ և՛ ուժ, և՛ համբերություն։
Քո առաջն է արդ սիրահար մի խենթ...
Քո անդա՜վն եմ ես... Ի՞մն ես դու հավետ։
Առանց սիրո ի՞նչ հասկանալ կյանքից,
Սարսափելի չէ ոչինչ ինձ համար,
Կորչի՛ երկրային բամբասանքը չար
Կամ ես կմեռնեմ ատրճանակից...
՞Օ, մի՛ վախենա, մի՛ դողա այդպես,
Դու է՞լ ես սիրում, ասա՛ վերջապես...»

XXXVII

Նրա հայացքը կեղծ համեստությամբ
Մերթ խոնարհվում էր, մարում անխոով,
Ու մերթ էլ, ինչպես շողշողուն մի լամպ,
Վառվում կրքերի տանջալի հրով։
Եվ նրա առաջ Դունյան գունատված՝
Կանգնել է մոլոր... Ուլանին թվաց,
Թե շուտով իրեն կժպտա բարի՝
Հաղթական սիրո պահը բաղձալի...
Եվ հանկարծ... չէր էլ սպասում երբեք.
Ամոթը պատեց գանձատիրուհուն,
Եվ նա բռնկված՝ ձեռքով իր սիրուն

Հրեց տղային. «Հերի՛ք է, լռե՛ք,
Այդ խոսքը լսե՛լ չեմ ուզում անգամ,
Ինձ հանգի՛ստ թողեք, թե չէ կգոռամ...»

XXXVIII

Նայում է տղան. չի կեղծում նա, ո՛չ,
Կինն այդ պահերին կատակ չի անի,
Դա սովորական քմայք է կնոջ,
Համառությո՛ւն է, սատանա՛ն տանի։
Եվ հետո, ա՛յ քեզ նվաստ արարած.
Շտաբռոտմիստրը շոքում է հանկարծ,
Խոսում լալագին... Մեկ էլ այդ պահին
Մտնում է դռնից խանդոտ ծերունին։
Գեղեցկուհին՝ «ա՜խ»։ Ու մոայլադեմ
Երկու հայացքներ բախվեցին միմյանց։
Բայց ամպրոպը լուռ անցավ ու գնաց,
Հեռացավ Գարինն... ու տանը արդեն
Ատրճանակը լցրել գնդակով,
Նստել՝ չիբուխն է ծխում անվրդով։

XXXIX

Չէր անցել նույնիսկ և մի ժամը դեռ,
Երբ ծառան բերեց կեղտոտ մի բացիկ։
Ի՞նչ հրաշք է այս. գանձատերը ծեր
Հրավիրում է խաղալու վիստիկ։
Մենդյան օրն է... Թող հյուր գա մեկից...
Կատաղությունից ու խոր զարմանքից
Քիչ մնաց մեռներ մեր հերոսն անմեղ.
Խաբեություն կա երևի այստեղ։
Անհանգիստ էր օրն ու հուզումնալի։
Վերջապես եկավ երեկոն ահա։
Նայում է. տես, ի՞նչ խորամանկն է նա.
Լուսավոր է տունն ու մարդկանցով լի։
Ի՞նչ անի. վարվի անզգույշ ու խե՞նթ,
Ատրճանակը չտանի՞ իր հետ։

XL

Գնում է։ Խոնարհ հայացքով նրան
Դիմավորում է գանձատիրուհին։
Հազիվ սկսվող զրույցը տղան
Կտրում է սրտի հառաչով խորին։
Իսկ առավոտյան դեպքից՝ ոչ մի բառ.
Առաջվա նման օտար են իրար։
Ու եղանակից խոսք է բացում նա,
Կինն էլ ասում՝ «Հա՞», լռում ակամա։
Գարինը, սրտում պահած թաքուն վիշտ՝
Գնում է ուղիղ լայն խաղասենյակ...
Բայց չկա այստեղ շտապելու հարկ,
Հետո շտապելու տեղ չկա ուրիշ։
Թույլ տվեք մի պահ շունչ առնել ի դեպ,
Հետո կարող ենք ավարտել մի կերպ։

XLI

Տարիներ առաջ ջանում էի ես
Տագնապ ու հուզում փնտրել ամեն օր,
Արհամարհելով խենթ մանուկի պես
Բնության օրենքն իմաստուն ու խոր։
Եվ ի՞նչ ստացվեց, ի՞նչ եկավ գլխիս.
Հոգնածությունը կաշկանդեց հոգիս,
Իսկ կարեկցանքը գիշեր ու ցերեկ
Անցյալն է տանում։ Չես օգնի երբեք։
Ո՞վ է անցածը դեպի ետ շրջում։
Ջահել արծիվը վանդակից այդպես
Նայելով հովտին ու լեռներին վեր,
Չի թափահարում թևերն ու թռչում.
Չի կտցում որսը իր արնանման,
Նստում է լռին ու սպասում մահվան։

XLII

Ո՞վ ջահելություն, մի՞թե դու անցար,
Երբ կյանքն է խոսում սրտի հետ անվերջ,
Երբ սիրտն ուժգնորեն խփում է դարձյալ,
Ու միտքն է եռում զմայլանքի մեջ։

Մի՞թե կթախծի արծիվը միշտ լուռ
Վանդակի մեջ փակ ու երկաթակուռ.
Նա իր կորուսյալ երկնքի ճամփան
Դեռ պիտի գտնի մի օր անպայման
Այնտեղ, ուր մթին ժայռերն ամեհի
Հագել են մշուշն ու ձյունը ճերմակ,
Ու արծիվներն են բույն դնում մենակ,
Ուր թափառում է երամն ամպերի։
Թափ կառնի այնտեղ սլացքը նրա
Ազատ ու անհոգ ճամփեքի վրա։

XLIII

Բայց ամեն ինչին վերջ կա աշխարհում,
Ամենաանզուսպ երազին անգամ։
Լա՛վ, շարունակե՛նք։ Նա ներս է գնում,
Եվ, ա՛յ քեզ հրաշք. իբրև բարեկամ՝
Տանտերը նրան խորին հարգանքով
Հյուրասիրում է քաղցրավենիքով,
Շամպայնով լիքը բաժակ է տալիս։
«Հուդա՛» — ուլանի ծիծաղն է գալիս։
Հյուրերն աղմկում, խոսում են ահա՝
Կանաչ սեղանի շուրջը հավաքված,
Թղթախաղն, այո՛, լուրջ էր չափաղանց,
Եվ բանկը հարուստ պահում էր հենց նա՝
Գանձատերն ինքը հաճույքով վերին
Ի թեթևություն բարեկամների։

XLIV

Քանի որ պարոն Բոբկովսկին հիմա
Անձամբ է վարում մեծ գործերն այսպես,
Տամբովյան փայլուն շրջապատն ահա
Թույլ տվեք այժմ ներկայացնել ձեզ.
Նախ՝ խորհրդատուն։ Մի պարոն է սա՝
Բարքերի հսկիչ, հանգիստ բամբասան։

. . . . . .

. . . . . .

Ա՛յ, և առաջնորդ մի գավառական՝
Վզկապով զուգված, ֆրակը հագին,
Դիսկանտ, բեղավոր, հայացքը մթին։
Ահա հանգստի մի հին պահապան։
Սա էլ՝ գավառի ոստիկանապետ,
Ես նրա մասին ասել եմ թեպետ։

XLV

Ահա նորագույն Միտրոֆանը մեր,
Կիսաֆրակով, օծված բավական,
Ցափազանց անկիրթ, անտաշ խաղընկեր,
Բայց և բթամիտ անբարոյական։
Միշտ էլ վստահ է ուզածդ պահին
Նա գանձատիրոջ ուժին ու խաղին,
Որքան ասում են՝ նա գնում է բանկ,
Միշտ էլ այդ պատվիը մնում գոհունակ։
Միշտ և... բայց թող վերջակետ դնեմ,
Թե չէ, ընթերցո՛ղ, հեռու կգնաս
Եվ այսպես. անկապ պատմությունն իմ այս,
Աստված գիտի, թե ինչով կներկեմ՝
Հնազանդվելով իմ գրչի կամքին
Կամ էլ թանաքի քմահաճույքին։

XLVI

Խաղը տաքացավ։ Մեկը գունատված՝
Պատռում խաղաթուղթն ու ճչում էր խենթ,
Մեկը նստել էր գլուխը հակած,
Չէր ուզում հաշտվել կորուսյալի հետ։
Այլոք մի հաջող ելքի ժամանակ
Աղմուկ հանելով, զարկելով բաժակ
Խմում էին։ Բայց բանկադիրը խեղճ
Համր էր ու մռայլ։ Սառ քրտինքի մեջ
Կորել էր նրա ճաղատը ողորկ։
Ինչ ուներ-չուներ՝ տարվում էր արագ,

Միայն լսում էր. «Կտրեցի՛նք, տարա՛նք»։
Կատաղությունից դարձավ անողոք
Ու տանուլ տվեց նա իր տունը հին
Եվ ինչ տանը կից ուներ այդ պահին։

XLVII

Նա տանուլ տվեց կահույքն իր ամբողջ,
Սայլ, կառք, ձիասարք, երեք երիվար,
Ականջօղերը սեփական կնոջ,
Կարճ ասած, բոլորն՝ ինչ կար ու չկար։
Հուսահատությամբ, չարությամբ լեցուն՝
Նստել էր գունատ ու լլկել լեզուն։
Կեսգիշերն անց էր։ Ճթթալով հանկարծ՝
Մի մոմը արդեն հանգավ ու գնաց։
Այգը կապտագույն-տղոտ շողերում,
Ամպած երկնքի կամարներն ի վեր
Սահում էր դանդաղ։ Շատ խաղացողներ
Քունը բաց թողնել չէին կամենում,
Երբ գանձատերը մեկ էլ սթափված՝
Հատուկ խնդրանքով դիմում է մարդկանց։

XLVIII

Նոր խաղի համար նա ամբարտավան
Թույլտվություն է խնդրում ամենքից.
Կամ ետ կբերի նորից ամեն բան,
Կամ «տանուլ կտա կնոջն էլ մեկից»։
Սոսկալի՜ հրեշ, չարագո՛րծ ու նեռ։
Եվ մինչև հիմա գանձատունը դեռ
Կարողանում է հանդուրժել նրան։
Բոլորը սարսուռ զգացին միայն։
Եվ մոտ է գալիս ուլանն անխռով.
«Ի՞նչ արած, ես շատ ուրախ եմ, խաղա՛նք,
Թող որքան կուզեն՝ աղմկեն նրանք,
Մենք գործն անպայման կավարտենք սիրով,
Բայց խարդավանքը թող հեռո՛ւ մնա,
Թե չէ ձեր բանը վա՛տ կվերջանա»։

XLIX

Ենդրզմ եմ հիմա՝ դուք պատկերացնեք
Պարանի շրջանակն առանց փողերի,
Տարբեր գույներով վառվող երկու դեմք,
Փայլը աչքերի և ակնոցների,
Հետո բեղավոր քաջին անխնա,
Որ բանկ է գնում հենց ոտքի վրա։
Նրա դեմ, երկու մոմերի միջև
Մի հսկա ճակատ ու ճերմակ շեղջեր
Նոսր խոպոպի՝ կախված ձախ ու աջ,
Ժպիտով ձգված բերանի եզերը,
Թղթախաղերը բռնած երկու ձեռք,—
Եվ պատկերն ամբողջ կգա ձեր առաջ,
Եթե կնոջն էլ հաշվենք՝ առանձին
Հեռու անկյունում նստած բազմոցին։

L

Ինչ էր կատարվում նրա սրտի մեջ՝
Դժվար թե պատմել մենք կարողանանք,
Արտահայտում էր նրա դեմքն անվերջ
Այնպիսի մի վիշտ, այնպիսի տանջանք,
Որ եթե հանկարծ դուք կռահեիք,
Գուցե ակամա լաց կլինեիք։
Սակայն հեղեղը դառն արցունքների
Թող ձեր աչքերին մշուշ չբերի։
Դժվար է հարկավ ճանաչել մարդուն,
Որն իմանում է բանը աշխարհի։
Օրերում անցյալ զգայուն դարի
Հնարված ամեն մի ողբերգություն
Հեղել է բազում աղի արցունքներ...
Ո՞վ է դրանից շահել՝ հարց է դեռ։

LI

Ճակատամարտը երկար չտևեց։
Ուլանն զգում էր իրեն անսասան։
Բախտը ծերունու վրա ծիծաղեց։

Վիճակը ընկավ։ Ու ժամը հասավ...
Այնժամ Ավդոտյա Նիկոլավնան մեր
Վեր կացավ տեղից, սահուն ու երեր
Դեպի սեղանը մոտեցավ լռին,
Բայց դեմքը մռայլ ու բոլորովին
Գունատ էր արդեն։ Ամբոխը հանկարծ
Քար կտրեց տեղում սպասողաբար։
Ոչ մի շիթ արցունք, գանգատ, կամ մի բառ.
Կինը ամուսնուն նայեց կարկամած
Հետո շպրտեց նրա երեսին։
Իր ամուսնական միակ մատանին։

LII

Եվ ուշաթափվեց։ Ու որսին իր թանկ
Առած գրկի մեջ, հպարտ ու խնդուն,
Մոռացած հաշիվ և թուր ու գլխարկ՝
Ուլանն այնտեղից ճանապարհվեց տուն։
Իսկ առավոտյան, հաճո է, թե ոչ՝
Լուրն ալեկոծեց քաղաքը ամբողջ։
Եվ հետո եկան ու անցան օրեր.
Մեկը կատակով, մեկը լրջորեն՝
Այս դեպքից էին խոսում շարունակ։
Ծերուկն ապառիկ պաշտպաններ վարձեց։
Ուլանին քնքուշ սեռը անիծեց.
Այդ ինչպե՞ս եղավ, որ լավ չիմացանք,
Նախանձ է գուցե։ Բայց ո՜չ, ո՜չ, օ, ո՜չ,
Ո՜ւխ, ատում եմ այդ բամբասանքը ողջ։

LIII

Ահա և վերջը դառն իրողության
Կամ թե հեքիաթի. կասեմ ուղղակի։
Կշտամբո՞ւմ եք ինձ։ Սպասել եք լայն
Մի գործողությո՞ն, խելահեղ կրքի՞։
Հիմա շատ տխուր վախճանն են հարգում,
Կանա՜չք են նույնիսկ արյուն փափագում։
Իսկ ես՝ զգայուն սանս, ինձ համար

Ընտրեցի պահն այս ամենահարմար.
Անզոր լինելով ջղերիս դիմաց՝
Տեսարանն այնքան լավ շավարտեցի,
Ախոյաններին ես չհաշտեցրի
Եվ չգժտեցրի մի կարգին նրանց...
Ահա և ամբողջ պատմությունը մեր։
Ի՞նչ արած, բա՛վ է, իմ բարեկամնե՛ր։

ՕԱԽՍՏԱԿԱՆԸ

(Լեռնական ավանդազրույց)

Փախչում էր Հարունն այծյամից արագ,
Արծվից պուկ տվող նապաստակի պես.
Փախչում էր կռվի դաշտից ահահար,
Որ չերքեզների արյունով ներկվեց.
Հայրն ու հարազատ եղբայրներն երկու
Հանուն նամուսի և ազատության
Գլուխներն իրենց թողեցին փոշում
Ընկած թշնամու դարշապարի տակ։
Նրանց արյունը վրեժ է ուզում,
Մինչ սա մոռացած և՛ պարտք, և՛ ամոթ,
Կռվում կորցրած հրացան ու սուր,
Գլուխը կորցրած փախչում է երկչոտ։

Մթնել է օրը. ծփալով բարդ-բարդ՝
Քողով իր ճերմակ ու լայնատարած
Մեգն է պարուրել բացատները մութ.
Սառնություն փչեց ցուրտ արևելքից,
Եվ մարգարեի անապատին լուռ
Բարձրացավ հանդարտ լուսինը ոսկի...

Հարունն հոգնաբեկ, ծարավից տանջված,
Դեմքից սրբելով քրտինք ու արյուն,
Ժայռերի միջև ճանաչեց հանկարծ
Աուլն հայրենի լուսնի շողերում.
Մոտեցավ անտես ու գաղտագողի...
Շուրջը հանգիստ էր ու խոր լռություն.
Միմիայն նա էր արնահեղ կռվից
Ճողոպրած մի կերպ վերադառնում տուն։

Տանտերը տանն է. լույս է պսպղում.
Որքան կարող էր գոտեպնդվելով
Անցնում է շեմքից ու ներս է սողում։
Սելիմը նախկին բարեկամն էր իր,
Սակայն եկվորին լավ չճանաչեց.

Նա տանջված ծանր հիվանդությունից,
Մենակ, մեռնում էր լուռ անկողնու մեջ...
— «Մե՞ծ է ալահը, պատվիրել է նա
Հրեշտակներին իր սուրբ պահպանել
Զարաթույն մահից քեզ փառքի համար»։
— «Ի՞նչ նորություն կա»,— Սելիմը հարցրեց,
Բացելով կոպերն իր թույլ, ծանրացած,
Եվ հույսի հրով հայացքը փայլեց...
Բարձրացավ տեղից. արյունը մարտկի
Վախճանի պահին բորբոքվեց կրկին։
— «Երկու օր համառ կռվեցինք կիրճում,
Եղբայրներս ընկան, հայրս էլ նրանց հետ.
Ես թաքնվեցի լոկ անապատում
Քշված, հալածված մի գազանի պես.
Սուր-սուր քարերից, թուփ-մացառներից
Ոտքերս քրքրված, արյունակոլոլ,
Հետքով գայլերի ու վարազների
Անցա անծանոթ արահետներով...
Մերոնք ընկնում են. ոսոխն է չորս կողմ...
Ընդունի՛ր դու ինձ, իմ հի՛ն բարեկամ,
Մարգարե՞ն վկա, լավությունը քո
Ես չեմ մոռանա մինչև գերեզման...»
Եվ մահամերձը տվեց պատասխան։
— «Դու արժանի ես արհամարհանքի.
Հեռացի՛ր, չունեմ ես ո՛չ ապաստան
Վախկոտի համար, ո՛չ խոսք օրհնանքի»...

Հարունն, ամոթի տանջանքով թաքուն,
Կուլ տալով լուտանքն առանց բարկության,
Հեռանում է լուռ, անարգված, նկուն,
Դուրս սողում շեմքից այդ անհյուրընկալ։

Անցնելով մի նոր հյուղակի մոտով
Մի պահ կանգ առավ թախծով համակված.
Անցած օրերի երազներն հանկարծ
Հառնեցին հոգում, քաղցր ու լուսավոր,
Թևեցին թեթև, վառեցին սառած

Ճակատը նրա համբույրի հրով.
Գիշերվա մթնում, թվաց, իր առաջ
Շողացին քնքուշ՝ բոցափայլ աչքեր.
Եվ նա մտածեց. օ՜, սիրված եմ ես,
Նա լոկ ինձնով է շնչում ու տպրում...
Ուզեց ներս մտնել, լսում է, սակայն,
Լսում է ծանոթ երգը հինավուրց...
Ու դառնում է նա լուսնից էլ գունատ.

Լուսինն է լողում
Հանդարտ ու մեղմիկ,
Կռիվ է գնում
Մարտիկ պատանին։
Լցնում է խիզախ իգիթն հրացան,
Իսկ սևաչ աղջիկն ասում է նրան.
Գնա՛, սիրելի՛ս, եղի՛ր անվեհեր,
Ապավինելով քո ճակատագրին,
Աղոթի՛ր հաճախ դեպի արևելք,
Միշտ հավատարիմ կա՛ց մարգարեին,
Զինվորի փառքին և՛ս առավել։
Ով դավաճանի յուրայիններին,
Տմարդությամբ իր ուխտը դրժելով,
Ով չջախջախի թշնամիներին,
Պիտի կործանվի անարգի մահով.
Չեն լվա վերքերն անձրևները անգամ,
Եվ ոսկորներն էլ անթաղ կմնան։
Լուսինն է լողում
Հանդարտ ու մեղմիկ,
Կռիվ է գնում
Մարտիկ պատանին։

Գլխահակ, արագ քայլերով կրկին
Շարունակում է Հարունն իր ճամփան,
Եվ արցունքների շիթերն են հաճախ
Թերթերունքներից գլորվում կրծքին...

Ահա հայրական խրճիթն է իր դեմ
Ճերմակին տալիս, փոքրիկից կքած.

Լցված նոր հույսով ու սրտապնդված,
Պատուհանն է նա սկսում թակել։
Ջերմ աղոթքներ են այնտեղ, երևի,
Բարձրանում երկինք Հարունի համար.
Սպասում է մայրն իր որդու դարձին,
Սպասում է, բայց ո՛չ թե միայնակ...

— «Դուռը բա՛ց, մայրի՛կ, խեղճ ճամփորդ եմ ես
Քո Հարունն եմ ես, քո կրտսեր որդին.
Ես ռուսների գնդակից պրծել,
Անցել անվնաս, եկել եմ կրկին,
Եկել եմ քեզ մոտ»։— «Եվ մենա՞կ»։— «Մենակ»...
— «Իսկ ո՞ւր են հայրդ ու եղբայրներդ հապա»։
— «Ընկան։ Մարգարեն նրանց մահն օրհնեց
Եվ հոգիները վերցրին երկինք»...
— «Վրեժ՝ լուծեցի՞ր»։— «Ո՛չ, չլուծեցի...
Հազիվ նետի պես սուրացի լեռներ,
Սուրս թողնելով օտար ափերում,
Եկա, որ վիշտդ գոնե ես մեղմեմ,
Գոնե ես սրբեմ արցունքներդ սուրբ»...
— «Լռի՛ր, լռի՛ր դու, խորամա՞նկ գյավուր,
Դու փառքով մեռնել չկարողացար,
Ուրեմն հեռացի՛ր ու ապրի՛ր մենակ.
Ես ազատության փախստականիդ
Խայտառակությամբ, ամոթով անլուր
Ծերության օրերն իմ չեմ մթագնի.
Դու վախկո՛տ, ստրո՛ւկ — իմ որդին չե՛ս դու»...
Ու լռեց մերժման խոսքը մայրական.
Շուրջը ամեն ինչ պատված էր քնով։
Անեծք ու նզովք, աղերս, հառաչանք
Երկար հնչեցին պատուհանի մոտ.
Վերջը դաշույնի հարվածը միայն
Անհույս թշվառի ամոթը շնչեց...
Առավոտյան, երբ մայրը նկատեց...
Շրջեց հայացքն իր անտարբերությամբ։
Դիակը, մերժված բարեպաշտներից,
Ոչ ոք չթաղեց, չծածկեց հողով.

Լերդած արյունը նրա վերքերի
Տան շունը լիզեց խուլ զոմռալով.
Երեխաները լուտանքով իրենց
Փախստականի դին անարգեցին.
Սուրբ ազատության ավանդների մեջ
Նրա ամոթն ու մահը մնացին։
Եվ մարգարեի ցասկոտ աչքերից
Հոգին սարսափած փախել է հեռու,
Դեպ ուրվականը մութ գիշերներին
Թափառում է դեռ երկրի սարերում,
Պատուհանի տակ մինչև առավոտ
Թակում է, խնդրում, որ թողնեն խրճիթ,
Սակայն անսալով հայտնի ահավոր
Խոսքին զուրանի՝ փախչում է նորից
Մեգ-մառախուղի հովանու ներքո,
Ինչպես նախկինում փախել էր սրից։

ՄԾԻՐԻ*

Ճաշակելով հաշակեցի զուակավ մեղր մի և ահա մեռանիցեմ հե։

Ա. Գիրք թագ

1

Սրանից առաջ մի քանի տարի,
Այնտեղ ուր Արազվ ու Կուր գետերի
Ջրերն աղմուկով խառնվում իրար,
Գրկվում են երկու քույրերի նման,
Կար մի մենաստան։ Կարող է այժմ էլ
Անցորդը սարի ուսերից տեսնել
Քանդված դռների կանգուն սյուները։
Վանքի կամարն ու աշտարակները։
Բայց անուշահոտ ջուխը բուրվառի
Էլ չի վերանում կամարի տակին,
Եվ ոչ լսվում է աղոթողների
Երգը գիշերվա ուշ ժամանակին։
Այժմ մեն-մենակ զառամյալ մի ծեր,
Ավերակ վանքի պահնորդ կիսամեռ,
Ընկած մտքիցը մարդկանց ու մահի,
Սրբում է փոշին շիրմաքարերի,
Որոնք պատմում են անցած դարերի,
Անցած փառքերի ու նրա մասին,
Թե ինչպես ճնշված իր թագի տակին,
Այսինչ թագավորն այս ժամանակին
Իր ժողովուրդը հանձնեց ռուսին։

2

Մի ռուս գեներալ Կովկաս լեռներից
Մի անգամ դեպի Թիֆլիս էր գալիս,
Իր հետ նա գերի մի մանուկ ուներ.
Սա տկարացավ, չկարաց տանել
Նեղությունները հեռավոր ճամփի։

* Մծիրի վրացերեն նշանակում է նժգեհ, եկվոր, անապատական։

Հազիվ թե լիներ հինգ-վեց տարեկան,
Այծեմնիկի պես երկչոտ, վայրենի
Եվ թույլ ու ճկուն եղեգնի նման։
Սակայն նրա մեջ ցավը տանջելի
Ջորացրեց այնժամ իրեն հայրենի
Աննկուն հոգին։ Վիշտը լուռ տանում
Եվ իր մանկական տկար շրթունքից
Մի թույլ հառաչանք նույնիսկ չէր հանում,
Հացը նշանով մերժում էր նա դեն
Ու խաղաղ, հպարտ մեռնում էր արդեն։
Կարեկցությունից մի ծեր վանական
Նրան խնամեց, տվավ ապաստան.
Ու այսպես՝ վանքի հարկի տակ մնաց
Բարեկամական ձեռքով աղատված։
Բայց, զուրկ մանկական զվարթ հաճույքից,
Փախչում, խորշում էր նա ամեն մեկից.
Թափառում էր լուռ, մենակ, սրտաբեկ,
Թառանչով նայում դեպի արևելք,
Մաշվելով մի լուռ, անմեկին վշտից —
Իրեն հայրենի երկրի կարոտից։
Գերության սակայն շուտ ընտելացավ,
Օտարի լեզուն քիչ-քիչ հասկացավ.
Հայր սուրբը կնքեց, տվավ սուրբ հաղորդ,
Ու դեռ աշխարհքի կյանքին անծանոթ,
Ուզում էր արդեն ծաղիկ հասակում
Աբեղայական ընդունել կոչում,
Երբ որ մի անգամ աշնան գիշերով
Անհետ չքացավ։ Շուրջը սարերով
Զգվում էր անծայր անտառը մթին.
Երեք օր այնտեղ իզուր փնտրեցին,
Վերջապես դաշտում անզգա գտան
Ու առան, կրկին բերին մենաստան։
Նա սաստիկ գունատ, թույլ էր ու նիհար.
Կարծես աշխատել, տանջվել էր երկար,
Կամ հիվանդություն ու սով էր քաշել։
Հարցմունքներին նա չէր պատասխանում.
Օրն օրի վրա ընկնում էր, խամրում,

Այսպես մոտեցավ ժամը իր մահվան։
Այնժամ նրա մոտ եկավ աբեղան
Եվ հորդորելով և աղերսելով։
Հիվանդը հպարտ իրեն լսելով,
Նստեց, մնացած ուժը հավաքեց
Ու այսպես երկար խոսել սկսեց.

3

«Գո՜հ եմ քեզանից, հա՜յր սուրբ, որ եկար՝
Իմ խոստովանքը լսելու համար։
Ինչ էլ որ լինի, իմ սիրտը ցավոտ
Կուզեի բանալ խոսքով մեկի մոտ։
Սակայն ես մարդկանց չարիք չեմ արել,
Իմ արարքները նրա համար էլ
Ի՞նչ օգուտ եթե խոստովանեի.
Իսկ հոգին մի՞թե պատմել կլինի...
Ես քիչ եմ ապրել և այն էլ՝ գերի.
Այսպես երկու կյանք՝ մի աղմկալի,
Եռուն կյանքի հետ, որ տեսել եմ, ծեր,
Ես կփոխեի, թե հնար լիներ։
Ես լոկ մի մտքի ուժ եմ իմացել,
Մի, բայց բոցավառ կիրք եմ ունեցել.
Նա ինչպես մի որդ ապրել է իմ մեջ,
Կրծել է հոգիս, մաշել մինչև վերջ։
Իմ ցնորքները թոցրել, տարել է
Այս նեղ խցերից անդորր աղոթքի
Այն վեհ աշխարհը կռվի, աղմուկի,
Ուր որ ժայռերը թաքչում ամպերում,
Ու մարդիկ այնպես ազատ են ապրում...
Ես իմ այդ կիրքը գիշերվա մթնում
Պահել եմ վշտով, արցունքով սնել,
Եվ՝ այժմ ահա բարձրաձայն հայտնում,
Խոստովանում եմ առջևն աշխարհքի,
Ու թողություն էլ չեմ խնդրում իսկի։

4

Ծերուկ, շատ անգամ իմացել եմ ես,
Որ դու իմ կյանքը մահից փրկել ես։
Ինչո՞ւ փրկեցիր։ Մենակ ու դաժան,
Փոթորկի պոկած տերևի նման,
Մռայլ պատերի միջում մեծացա,
Հոգով դեռ մանուկ, կյանքով աբեղա։
Չկարողացա ոչ ոքի ասել
«Հայրիկ»ու «մայրիկ» սրբազան խոսքեր։
Հարկավ, քո միտքը այն էր, ծերունի,
Որ մենաստանում ես խորթանայի
Էսքան քաղցրալի այս անուններին։
Զուր. հետս են նրանց ձայները ծնվել,
Ես տեսնում էի, որ ուրիշներին
Հայրենիք, ընկեր, ծնող ունեին,
Մինչդեռ չունեի ես նրանց նման
Ոչ թե սիրելիք, այլև գերեզման։
Ես էլ այն օրից իզուր չողբացի,
Այլ հոգուս միջում այսպես ուխտեցի,
Որ երբևիցե, թեկուզ մի վայրկյան,
Այս իմ բոցավառ կուրծքը մանկական
Սեղմեմ կարոտով մի ուրիշ կրծքի,
Թեկուզ անծանոթ, միայն հարազատի։
Բայց, ավա՜ղ, հիմա երազներս այն
Կորել են իրենց պերճանքով համայն,
Ու, ինչպես օտար երկրում ապրեցի,
Մեռնում եմ դարձյալ ես որբ ու գերի։

5

Ինձ չի վախեցնում գերեզմանն ահեղ.
Տանջանքն, ասում են, հանգչում է այնտեղ
Սառն, հավերժական լռության միջում։
Կյանքից զրկվելն է ինձ մենակ տանջում։
Ջահե՜լ եմ, ջահե՜լ... ունեցե՞լ ես դու
Ցնորմունքները անհոգ պատանու։

Դու չես ունեցել կամ չես հիշում էլ,
Թե ինչ ես մի օր ա՛տել ու սիրել,
Ինչպես է սիրտդ բաբախել ուժգին
Կանաչ դաշտերին, վառ արեգակին
Անկյունի բարձր բուրգից նայելիս,
Ուր թարմ է օդը, և ուր մերթ գալիս
Ու բարձր պատի խորունկ ճեղքվածքում,
Թուքից վախեցած, կուչ եկած նստում,
Պատսպարվում է փոքրիկ աղավնին՝
Զքնաղ զավակը անհայտ աշխարհքի։
Ուր մնաց՝ արդեն զառամ ես, թույլ ես,
Սիրուն աշխարհը կշտացրել է քեզ.
Սրտումդ անկատար էլ չունիս ըղձեր...
Էլ ի՞նչ ես ուզում, ապրել ես դու, ծե՛ր,
Աշխարհքում ունիս մոռնալու մի բան.
Չէ՞ որ կապրեի ես էլ քեզ նման...

6

Կուզե՞ս իմանալ ազատության մեջ
Ես ինչեր տեսա. դաշտեր տեսա պերճ,
Բլուրներ տեսա, ուր կանաչ ծառեր,
Ինչպես շուրջպարի բռնած եղբայրներ,
Չորս կողմից դալար պսակ կապելով՝
Շշնջում էին թարմ խմբակներով։
Տեսա դեզերը մռայլ ժայռերի,
Երբ բաժանում էր վտակը նրանց,
Նրանց մտքերը հասկանում էի.
Վերևիցն էր այն շնորհքն ինձ տված։
Վաղուց, շատ վաղուց օդում տարածված
Այն քարե գրկերն ամեն մի վայրկյան
Փափագում են լուռ իրար հանդիպման,
Բայց օրեր անցնում, տարիք են անցնում,
Ու նրանք երբեք իրար չեն հասնում...
Բարձր լեռների շարքից տեսա ես՝
Վեհ, հրաշալի ցնորքների պես,
Երբ արշալույսի ժամին վաղորդյան

Նրանց գլխները սեղանի* նման
Մխում են հանդարտ կապույտ երկնքում,
Ու ամպը ամպի ետևից ձգվում,
Թողնելով գաղտնի իր օթևանը,
Ինչպես տարագնաց սպիտակ հանքի
Հեռու կողմերից չվող երամը
Ուղղում է իր չուն կողմն արևելքի։

Անոսր մշուշի արանքից, հեռվում,
Գոհարի նման փայլող ձյուներում
Տեսա ալևոր Կովկասն անսասան։
Եվ ես չգիտեմ, թե ինչից էր այն,
Բայց թեթևացավ սիրտս նույն ժամայն.
Սկսեց գաղտնի մի ձայն ինձ ասել,
Թե երբեմն այնտեղ ապրել եմ ես էլ...
Ու հետզհետե բացվեցավ խավար
Անցյալն իմ մտքում պայծառ ու պայծառ...

7

Եվ ես հիշեցի մեր տունն հայրական,
Հիշեցի մեր ձորն ու իր շրջական,
Շվաքում ցրված գյուղի տները.
Լսեցի իրիկվան ձեն ու ձունները
Դեպի տուն վազող երամակների,
Հեռու հաչոցը ծանոթ շների։
Միտս եկան թուխ-թուխ ծերունիները.
Լուսնյակի լույսով իրիկունները
Իմ հոր սրահի, շեմքի դեմուդեմ
Նստոտած խոհուն ու խոժոռադեմ.
Ու խանչալների պղնձապատած
Պատյանների փայլն... ու բոլորն հանկարծ
Խառը շարքերով, երազի նման
Աչքիս առաջից եկան, անցկացան։
Հապա իմ հա՞յրը. պատերազմական

* Խոսքը զոհասեղանի մասին է։

Իր գրեթաներով, ինչպես կենդանի,
Աչքիս երևաց, ու միտս եկան
Զրահի շռինդ, փայլն հրացանի,
Նրա հայացքը հպարտ, աննկուն,
Եվ իմ քույրերը մատաղ, սիրասուն...
Շողե՞ր նրանց աղու աչքերի
Եվ հնչյունները երգի, խոսքերի,
Որ ասել էին օրրանիս վրա...
Այն ձորի միջով վտակ էր վազում,
Աղմկող էր նա, սակայն ոչ խորին։
Նրա ոսկեգույն մանրիկ ավազում
Խաղալու էի գնում կեսօրին,
Եվ նայում էի աչքերս հառած,
Երբ ալիքներին, անձրևից առաջ
Դիպչում էր թևով սև ծիծեռնակը։
Հիշեցի և մեր խաղաղ տնակը,
Օջախի առջև իրիկունները
Արած այն երկար պատմությունները,
Թե ոնց են ապրել մարդիկ վաղեմի,
Երբ դեռ աշխարհքը ճոխ էր ավելի։

8

Կուզե՞ս իմանալ, թե ես ինչ արի
Այն երեք օրում։ Ազատ ապրեցի,
Եվ կյանքս առանց այն երեք օրի
Քո ուժից ընկած ծերությից էլ դեռ
Ավելի դժգույն, տխուր կլիներ։
Մտքումս վաղուց, վաղուց դրել եմ՝
Մի անգամ արձակ դաշտերին նայեմ,
Տեսնեմ՝ աշխարհքը սիրո՞ւն է արդյոք։
Ինչո՞ւ ենք, տեսնեմ, գալի մենք աշխարհ.
Ազատ ապրելո՞ւ, թե՞ բանտի համար։
Եվ այն գիշերվա սոսկալի ժամին,
Որոտմունքն, երբ որ վախեցրել էր ձեզ,
Սեղանի առջև երբ որ խմբովին
Ընկել էիք դուք խոնված այնպես,

Ես վանքից փախա։ Օ՜, ինչպես եղբայր
Կուզեի գրկել մորիկն հողմազայր։
Աչքերս ամպերի ետևից տանում,
Ձեռքով շանթ էի բռնել ցանկանում...
Դե ասա՜, հայրի՜կ,
Ինձ այս պատերում ի՞նչ պիտի տայիք
Իմ փոթորկալի սրտի և ահեղ
Այն որոտմունքի մտերմության տեղ...

9

Երկար վազեցի, թե ուր կամ որտեղ,
Այդ ես չգիտեմ։ Եվ ոչ մի աստղ
Իմ դժվար ճամփան չէր լուսավորում,
Միայն բերկրությամբ շունչ էի առնում
Իմ վաստակաբեկ ու տանջված կրծքով
Այն անտառների թարմությունը զով։
Երկար վազեցի, վերջապես հոգնած
Բարձր խոտերում ընկա ու պառկած՝
Ականջ դրի ես. հետևող չկար։
Որոտմունքն ընկավ. լույսը՝ մի երկար
Դժգույն ու դալուկ շերտով բացվելով,
Ձգվեց երկնքի-երկրի արանքով,
Եվ նրա վրա ես որոշեցի
Սուր ժանիքները հեռու լեռների։
Անձայն ու անշարժ ես պառկած էի.
Երբեմն-երբեմն չախկալը կիրճում
Երեխի նման լալիս էր, ճչում,
Եվ, հարթ ու փայլուն թեփով փայլելով,
Սողում էր օձը քարերի միջին։
Չէր ճնշում սակայն երկյուղն իմ հոգին,
Ես էլ գայլի պես խորթ էի մարդոց,
Եվ սողում էի, թաքչում ինչպես օձ։

10

Ներքևն, անդնդում, ինձանից շատ ցած,
Ջուրը՝ հեղեղից սաստիկ հորդացած,
Աղմկում էր խուլ, ինչպես բարկացած

Մարդկային խոսուն ձայներ անհամար։
Թեպետ և անխոսք, սակայն ինձ համար
Պարզորոշ էր միտքն այն խոսակցության,
Անլուռ աղմուկը, վեճն հավերժական,
Հարվածը համառ ժայռերի կույտին։
Մեղմանում էր նա ու դարձյալ ուժգին
Խաղաղ ձորի մեջ հանկարծ որոտում։
Եվ ահա վերև, մառախլոտ օդում,
Հավքերն երգեցին։ Արևածագի
Երկինքը շիկնեց։ Մի թեթև քամի
Նամ տերևները շարժեց ու գնաց,
Ու ծաղիկները շնչեցին քնեած.
Նրանց պես՝ օրին դիմավորելու,
Ես էլ գլուխս բարձրացրի վերև...
Մտիկ արի ցած ու չեմ թաքցնում,
Սարսափն ինձ պատեց. անհատակ ու սև
Անդունդի եզրին էի ես պառկած,
Ոռնում էր ներքև ջուրը փրփրած։
Այնտեղ է տանում ժայռը իջնելով,
Բայց չարը մենակ իջավ նրանով,
Երբ որ երկնքի բարձրից գահավեժ,
Կորավ ստորին էն մութ վիհի մեջ։

11

Ծաղկում էր շուրջս եդեմն արարչի.
Ջվարթ ու դալար զարդը կանաչի
Պահպանում էր դեռ արցունքն երկնային.
Եվ խոպոպները խաղողի որթի
Ծառերի միջով գալարվում էին
Պճնած կանաչով քնքուշ սաղարթի.
Իսկ նրանց վրա ճոխ կախված էին,
Ինչպես ականջի գինդեր թանկագին,
Լիք ողկույզները, և մերթ նրանց մոտ
Թռչում էր հավքի երամը երկչոտ։
Ու նորից գետնին կպա ես մին էլ,
Նորից սկսա ես ականջ դնել
Այն օտարոտի թովիչ ձայներին.

Նրանք թփից թուփ ծլվլում էին
Ու խոսում էին կարծես միասին՝
Երկնքի-երկրի գաղտնիքի մասին։
Այնտեղ բնության ձայները բոլոր
Միացած էին։ Այն հանդիսավոր
Փառաբանության երգի ժամանակ
Մարդու գոռ ձայնը չէր լսվում մենակ։
Ինչ որ այն ժամին զգում էի ես,
Անհետացել են մտքերս այն բոլոր,
Բայց կուզենայի պատմել նրանց քեզ,
Որ գոնե մտքով ապրեմ նորից նոր։
Այն առավոտը կամարն երկնքի
Այնքան էր հստակ, որ հրեշտակի
Ճախրը սուր աչքը տեսնել կարող էր.
Այնքա՜ն թափանցիկ ու այնքան խոր էր,
Այնքա՜ն էր լեցուն ջինջ կապուտակով,
Որ ես նրա մեջ հայացքով, հոգով
Սուզվեցի, կորա, մինչև իր շողով
Իմ ցնորքները կեսօրը ցրեց,
Ու ինձ ծարավը տանջել սկսեց։

12

Այնժամ՝ բռնելով ճկուն թփերից,
Դեպի հեղեղատն անդունդի եզրից,
Մի սայլից մի սայլ որքան ուժս կար՝
Սկսա իջնել։ Երբեմն մի քար
Ոտներիս տակից՝ պոկվելով հանկարծ,
Գլորվում էր ցած։
Թռչում էր ներքև դղորդ հանելով,
Հետևից ակոս, փոշի անելով
Ու կուլ էր գնում ջրի ալիքին։
Ես կախված էի՝ անդունդն իմ տակին։
Բայց ջահելությունն ուժով է լինում,
Մահվան երկյուղը ինձ չէր վախեցնում։
Հենց իջա տակը այն սեպ-սեպ ժայռի,
Երեսիս փչեց լեռնային ջրի
Ջով թարմությունը, և իսկույն ագահ

Նրա սառնորակ ալիքին ընկա։
Հանկարծ մի շշուկ, ոտնաձայն թեթև...
Իսկույն թաքչելով թփերի ետև,
Ամբողջ բռնված ակամա դողով,
Երկչոտ հայացքս վեր քաշած վախով՝
Ես ականջ դնել սկսա ագահ.
Եվ մոտենալով՝ հնչում էր ահա
Մատաղ վրացուհու ձայնը պատանի,
Այնպե՞ս բնական, այնպե՞ս կենդանի,
Այնպես քա՞ղցր, ազա՞տ, որ կարծես թե նա
Սիրելի մարդկանց անվան հնչյուններ
Միայն կանչելու սովորած լիներ։
Այն մի հասարակ երգ էր լեռնային,
Խոր տպվեց սակայն իմ մտքի միջին,
Եվ իմ ականջին, հենց մութն ընկնում է,
Մի անտես, անհայտ ոգի երգում է։

13

Սափորն ուղիղ բռնած ուսին
Նեղ շավիղով վրացուհին
Ջուրն էր իջնում։ Երբեմնակի
Քարերի մեջ սայթքում էր նա
Ծիծաղելով իրեն վրա։
Այնպես աղքատ ու պարզ հագած.
Շղարշի ծալքերն ետև ձգած,
Թեթևաքայլ գնում էր նա։
Թեժ արևը, շոգն ամառվա
Նրա դեմքն ու կուրծքն այրելով՝
Գատել էին ոսկի ստվերով։
Տապ էր շնչում դեմքը բոլոր,
Եվ աչքերի մութն այնքան խոր,
Այնքան սիրո գաղտնիքով լի,
Որ մտքերս փոթորկալի
Շփոթվեցին։ Հիշում եմ խոր,
Կծի ձայնը, ջուրը երբ որ
Մեջն էր թափում մեղմաքրքիջ,

Ու սոսափյունն... ուրիշ ոչինչ։
Երբ որ ուշքի եկա կրկին,
Ու ետ քաշվեց սրտիս արքնն,
Արդեն շատ էր նա հեռացած,
Ու գնում էր թեթև, կամաց.
Շիտակ իրեն բեռան տակին,
Որպես դաշտի շքեղ բարդին...
Մի քիչ հեռու, սառը միգում,
Որպես ընկեր՝ ժայռի գրկում
Բուսել էին երկու տնակ.
Հարթ կտուրի վրայից մեկի
Ծուխը ելնում էր կապուտակ։
Ես տեսնում եմ այժմ էլ ասես,
Ինչպես նրա դուռը բացվեց
Ու կամացուկ փակվեց դարձյալ...
— Դու, ես գիտեմ, չես հասկանա
Իմ տխրությունն, իմ վիշտն անհաս.
Եվ կցավեմ, թե հասկանաս.
Թող հիշատակն այն վայրկենի
Ինձ հետ, իմ մեջ մնա-մեռնի։

14

Հոգնած՝ գիշերվա նեղություններից,
Ընկա ստվերում։ Շուտով սփոփիչ
Քունը աչքերս փակեց ակամա
Եվ ես մյուս անդամ երազում տեսա
Ջքնաղ պատկերը այն վրացուհու,
Եվ մի անսովոր, դուրեկան թախիծ
Անուշիկ ճմլեց իմ սիրտը նորից։
Ճիգ էի անում, որ մի շունչ քաշեմ.
Հանկարծ արթնացա։ Արդեն երկնքում
Փայլում էր լուսինն, ու մենակ մի ամպ
Սողում էր նրա ետևից թաքուն,
Բաց արած իրեն գիրկն ագահությամբ.
Կարծես թե իրեն ոգին լիներ էն։
Լուռ էր ու խավար աշխարհք համրորեն.

Գագաթները միայն ձյունոտ սարերի,
Ինչպես արծաթյա ծոպեր ահռելի
Պսպղում էին առաջիս-հեռվում,
Հեղեղատը խուլ ճողփում ափերում։
Ծանոթ խրճիթում մերթ պայծառ վառվում,
Ու մերթ հանգչում էր աղոտ մի կրակ։
Այնպես է հանգչում գիշեր ժամանակ
Պայծառ աստղիկը երկնքում փայլող։
Ես ուզում էի... բայց չէի կարող
Ես այնտեղ մտնել։ Ես այն ժամանակ
Հոգումս ունեի լոկ մի նպատակ —
Հասնել հայրենիք. ու համբերեցի
Քաղցի, ծարավի, որքան կարացի։
Եվ ահա անձայն ու երկչոտ ընկա
Ես ուղիղ ճամփա։
Բայց շատ չքաշեց, անտառի խորքում
Սարերը դարձյալ աչքիցս ընկան,
Ու սկսեցի կորցնել ճամփան։

15

Անզուսպ կատաղած, երբեմն իզուր
Պոկ էի տալիս ես հուսակտուր
Իրար խճճված բաղեղ ու մացառ.
Շուրջս անտառ էր, անեզր անտառ,
Հետզհետե խոր, խիտ ու ահռելի։
Եվ բազմությունով սև-սև աչքերի
Գիշերվա մութը հետևում էր ինձ
Ամեն մի թփի, ճյուղի արանքից։
Գլուխս սկսավ արդեն պտտել.
Ծառեր բարձրացա, ուզեցի դիտել,
Բայց մինչև անգամ երկնի եզերքում
Նույն ժանիքավոր անտառն էր ձգվում։
Այնժամ հուսահատ վայր ընկա կրկին,
Հեկեկում էի, լալիս դառնագին
Ու հողի խոնավ կուրծքն էի կրծում։
Արտասուքներս վայր էին հոսում
Նրա երեսին՝ տաք ցողի նման...

Բայց հոժար չէի մարդոց օգնության.
Խորթ էին ընդմիշտ ինձ համար մարդիկ։
Եվ եթե հանկարծ կարճատև մի ճիչ
Ինձ դավաճաներ, գիտցի՛ր, ծերունի՛,
Լեզուս արմատից պետք է պոկեի։

16

Մանուկ ժամանակ, քո մի՞տն է գալիս,
Ես չգիտեի երբեք արտասվել,
Բայց այնտեղ չէի ամաչում լալիս։
Ո՞վ էր տեսնելու. մթին ծմակը,
Մին էլ երկնքում սահող լուսնյակը։
Լուսավորված նրա լույսով,
Ծածկված մամռով ու ավազով,
Խիտ ծմակով շրջափակված՝
Բացատն էր իմ առջև ընկած։
Հանկարծ այնտեղ անցավ մի ստվեր,
Ու հրեղեն երկու կայծեր
Պսպղացին... ապա թե այն
Մութ թավուտից ինչ-որ գազան
Մի ոստյունով, Ֆռավ, պառկեց,
Ավազի հետ խաղալ սկսեց։
Այն անապատի մշտական տերը՝
Հուժկու հովազն էր։ Հում-հում ոսկորը
Կրծոտում էր նա, ուրախ մռմռում,
Երբեմն արյունոտ հայացքը հառում
Ու փաղաքշաբար պոչը շարժելով՝
Նայում լրացած լուսնյակի վրան,
Ու փայլում էր մազն արծաթի նման։
Սպասում էի ես մի ճյուղ բռնած՝
Կռվի վայրկյանին. ու սիրտս հանկարծ
Բորբոքվեց արյան, կռվի ծարավով...
Հա՛, բոլորովին այլ ճանապարհով,
Այլ շավիղով էր ինձ բախտը տանում,
Բայց համոզված եմ, որ մեր աշխարհում
Ես էլ կլինեի քաջերի շարքում։

17

Սպասում էի։ Արդեն գիշերվա
Մթնում թշնամու հոտն առել էր նա,
Ու մոնչյունը երկա՜ր, սրտահեծ,
Որպես հառաչանք՝ հանկարծ տարածվեց...
Ավազը թաթով կատաղած փորեց,
Ծառս եղավ, հետո փորըսող արեց,
Ու մի ցատկելով սակավ էր մնում,
Իսկույն ինձ մահի բաժին էր անում։
Բայց հանդիպեց իմ հարվածին.
Ծանր ճյուղը, ինչպես կացին,
Ճեղքեց նրա ճակատը լայն...
Նա հառաչեց մարդու նման
Ու շուռ եկավ։ Սակայն նորից,
Թեև նրա խոր վերքերից
Հոսում էր հորդ արյունն այնքան,
Վառվեց կռիվն օրհասական։

18

Ընկավ կրծքիս, բայց շտապով
Նրա կոկորդն ես կոխեցի,
Երեք անգամ պտտեցի
Միակ զենքս... Նա հառաչեց,
Իրեն բոլոր ուժն հավաքեց,
Ու մենք, ինչպես օձեր, կպած.
Ընկերներից ամուր գրկված՝
Գլորվեցինք, ու խավարում
Գետնի վրա էինք կռվում,
Այն վայրկենին ես էլ էի
Ինչպես հովազ չար, կատաղի.
Եվ վառվում էի, ծնգծնգում իր պես,
Ես ինքս էլ ծնված լինեի կարծես
Հովազների ու գայլերի միջին,
Թարմ անտառների հովանու տակին։
Մարդկային բարբառն, այնպես էր թվում,

Մոռացել էի, և հենց իմ կրծքում
Այն սարսափելի կռինչն էր ծնվել,
Կարծես թե լեզուս ծննդից ի վեր
Ուրիշ ձայների անսովոր լիներ...
Բայց իմ թշնամին սկսավ թուլանալ,
Դես-դեն երերալ ու ծանր հևալ.
Վերջին անգամ հուպ տվավ ինձ,
Կանգնած աչքերն սպառնալից
Փայլկտացին, ապա հանգան
Փակված քնով հավերժական։
Բայց հաղթանակող թշնամու առջև
Հպարտ հանդիպեց նա իր օրհասին,
Ինչպես վայել է կռվում հերոսին...

19

Իմ կրծքի վրա տեսնո՞ւմ ես դեռ նոր
Նրա ճանկերի հետքերը խոր-խոր.
Չեն առողջացել նրանք տակավին,
Դեռ չեն ծածկվել, բայց հողի տակին
Նորից կբացվեն ու կթարմանան,
Ու կառողջացնի մահը հավիտյան...
Մոռացել էի ես այնժամ նրանց,
Ու իմ մնացած ուժը հավաքած՝
Գնում էի միշտ թավուտ անտառում...
Սակայն բախտիս հետ զուր էի կռվում։
Նա ծաղրում էր ինձ ու արհամարհում։

20

Դուրս եկա կրկին բերանն անտառի.
Օրը բացվեցավ, դժգույն աստղերի
Բույլը չքացավ նրա շողերում։
Սկսավ ծխալ աուլը հեռվում,
Ու մութ անտառը շքշել արթնացած։
Ներքև հովիտում հողմի հետ հանկարծ
Մի ժխոր անցավ... վրա նստեցի,

Բայց նա հողմի հետ լռեց վերստին։
Իմ շորս կողմերը ես աչքս ածի.
Կարծես այն տեղերն ինձ ծանոթ էին։
Սարսափելի էր այս միտքն ինձ համար,
Եվ չէի ուզում հավատալ երկար,
Թե կրկին բանտս եմ ես վերադարձել,
Թե այնքան օրեր զուր եմ մտածել,
Փայփայել գաղտնի միտք նվիրական,
Տառապել, տանջվել, համբերել այնքան,
Ու բոլորն ինչո՞ւ. որ այս հասակում,
Դեռ նոր բաց արած աչքս աշխարհքում,
Թավ անտառներում շունչ ու կյանք առած,
Ազատ աշխարհքին, կյանքին սովորած,
Ինձ հետ միասին տանեմ գերեզման
Այրող կարոտը սուրբ հայրենիքիս,
Խիստ նախատինքը իրաբված հույսերիս
Եվ ամոթանքը ձեր կարեկցության...
Սակայն տակավին կասկածներով լի
Կարծում էի, թե երազում էի,
Երբ հանկարծակի խաղաղ օդի մեջ
Զանգի ղողանջը հեռվից տարածվեց.
Այստեղ ինձ համար բոլորը պարզվեց...
Օ՜, ճանաչեցի իսկույն ես նրան։
Շատ է փախցրել նա իմ մանկական
Կարոտ աչքերից վառ երազներիս
Թանկ տեսիլքները՝ հարազատներիս,
Ազատությունը վայրի դաշտերի,
Եվ նժույգները թեթև, կատաղի,
Եվ կռիվները ժայռերի միջին,
Ուր հաղթում էի մենակ ամենքին...
Անլաց, ուժասպառ լսում էի ես։
Սրտիս միջից էր ղողանջը ասես։
Կարծես թե մեկը անընդհատ զարկով
Զարկում էր կրծքիս ծանր երկաթով։
Եվ ես անորոշ այնժամ հասկացա,
Թե այսուհետև դեպի հայրենիք
Երբեք ինձ համար էլ ճամփա չկա։

21

Հա՜, արժանի եմ վիճակիս, հայրիկ.
Հզոր նժույգը օտար դաշտերում
Իր վատ հեծվորին վայր է գլորում,
Հեռու աշխարհքից դեպի հայրենիք
Գտնում է ուղիղ ու կրճատ ուղի...
Ի՞նչ եմ նրա մոտ։ Զուր են սիրտս լի
Այսքան մեծ թախիծ, տենչեր ու փափագ.
Դա ջերմ է միայն և՛ թույլ, և՛ դատարկ։
Ցնորքի մի խաղ, խելքի խանգարում։
Ինձ վրա բանտը իրեն կնիքը
Թողել է արդեն... Այսպես է լինում
Անլույս խավարում բուսած ծաղիկը.
Քարերի միջին դալուկ ու մենակ,
Թերթիկները փակ, երկար ժամանակ
Սպասեց արևի շողերին զվարթ։
Օրեր անցկացան, ու բարի մի մարդ
Կարեկցությունից հանելով նրան,
Փոխեց մի պարտեզ, վարդին հարևան։
Ամենայն կողմից փարթամ ու շքեղ
Կյանքի քաղցրություն շնչում էր այնտեղ...
Բայց ի՞նչ դուրս եկավ. հենց օրը բացվեց,
Ու արշալույսի ցոլքը տարածվեց,
Նրա վառվռուն շողերն այրեցին
Խավարչային բանտում սովորած ծաղկին...

22

Ինձ ևս այնպես, ինչպես և նրան
Այրում էր տապը անողորմ օրվան։
Իզուր էի ես ծածկել աշխատում
Հոգնած գլուխս չորացած խոտում.
Փուշ պսակի պես նրա տերևը
Խճճվում էր իմ ճակտիս վերևը,
Երկիրն երեսիս կրակ էր շնչում,
Ու պսպղալով կայծերը օդում

Պտտվում էին։ Ելնում էր շոգին
Սպիտակ ժայռերից։ Աստծո աշխարհքին
Կաշկանդել էր խուլ, գերեզմանական
Ծանր մրափը հուսահատության։
Գեթ լորամարգին ճռվողեր, խոսեր,
Կամ թե ճպուռի ճռռոցը լսվեր,
Կամ թե մանկական թոթովն առվակի...
Ձենց օձն էր մենակ, որ աշնան մարգի
Ջորացած խոտը դես-դեն շարժելով,
Դեղնավուն մեջքով փայլկտին տալով՝
Որպես ոսկետառ գրությամբ պատած
Ծայրից մինչև ծայր փայլուն մի սուսեր
Փխրուն ավազը ակոսում, տողում,
Զգույշ սողում էր, քնքշալով խաղում,
Եռակի ոլորում, օղ շինում ագին
Ու մին էլ հանկարծ, կարծես թե շանթած՝
Իրեն նետում էր, թռչում սրընթաց,
Թաքչում հեռավոր թփերի տակին...

23

Ու ողջն երկնքում մեղմ էր ու պայծառ։
Մշուշի միջից հեռվում երկու սար
Սևին էին տալիս։ Մեկի ետևից
Մեր մենաստանը ժանիքները ցից
Իրեն պարսպով երևում էր ինձ։
Կուրն ու Արագվան ներքև, հովիտում
Իրենց արծաթյա երիզով պատում
Թարմ կղզիների ստորոտները,
Ու լվանալով շրշուն թփերը,
Սուր հոսում էին ընկած իրարու...
Նրանք ինձանից շատ էին հեռու,
Ասի՝ վեր կենամ, սակայն առաջիս
Ամեն բան արագ պտույտ էր գալիս։
Ասի, թե կանչեմ, լեզուս ցամաքած,
Առանց հնչյուն էր, անշարժ, կարկամած...

Մեռնում էի ես։ Տանջում էր մահվան
Զառանցանքը ինձ։ Այնպես էր թվում,
Թե խոր գետի թաց հատակում
Պառկած էի, ու իմ բոլոր
Շուրջը մռայլ խորհրդավոր։
Եվ, հագեցնելով ծարավս անհագուրդ,
Ջրի հոսանքը սառցի նման ցուրտ,
Խոխոջ հանելով կուրծքս էր մտնում...
Ես միայն քնելուց էի վախենում —
Այնքա՜ն դուրեկան, այնքա՜ն էր քաղցր...
Իսկ իմ վերևը, ինձանից բարձր,
Խռնվում էին ալիքն ալիքին.
Արևը նրանց բյուրեղի միջից
Լուսնից էլ անուշ շողշողում էր ինձ...
Ու խայտաճամուկ պարը ձկների
Մերթ-մերթ խաղում էր այն լուսի տակին։
Եվ հիշում եմ ես նրանցից մեկին.
Նա, դուրիշներից անուշ ավելի,
Փաղաքշում էր ինձ մտերիմ սիրով
Մեջքը ծածկված ոսկյա թփերով,
Խայտում էր գլխիս վերև, խլրտում,
Ու խո՜րն էր այնքան, քնքուշ ու տրտում
Հայացքը նրա կանաչ աչքերի...
Ու ես անկշտում հիացած էի։
Արծաթահնչյուն նրա ձայնիկը
Ինձ զարմանալի բաներ էր պատմում,
Նա մեկ լռում էր, մեկ նորից երգում։
Նա ասում էր.

— Իմ պատանի,
Այստեղ ինձ հետ կաց միասին.
Սառն ու հանգիստ միշտ կլինի
Ազատ կյանքը ջրային։

«Իմ քույրերին ես կկանչեմ,
Մենք, միասին պար բռնած,
Կխնդացնենք մռայլ դեմքդ
Ու քո հոգին վաստակած։

Քնի՛, մահիճդ ահա փափուկ
Ու վերմակդ թափանցիկ...
Կանցնեն տարիք, կանցնեն դարեր
Երազներում գեղեցիկ։

Օ՜, պատանի՛, սիրո՜ւմ եմ քեզ,
Ահա իմ ողջ գաղտնիքը,
Սիրում ջրի ալիքի պես,
Սիրում, ինչպես իմ կյանքը...»։

Ու երկար, երկար ես լսում էի.
Ու կարծես հնչուն ալիքը ջրի
Խառնում էր իրեն մրմունջը խորին
Էն ոսկեթափուկ ձկան բառերին։
Այստեղ ինձ կորցրի։ Աչքերս մթնեց.
Զառանցանքն հատավ ու տեղի տվեց
Տկարությանը վաստակած մարմնիս...

24

Այսպես գտան ինձ, վերցրին...
Մնացածն արդեն հայտնի է քեզ։
Ես վերջացրի։ Այժմ կուզես
Մի՛ հավատար, ա՛յդ չեմ հարցնում,
Մի բան է միայն ինձ տխրեցնում,
Որ իմ դիակն այստեղ-հեռու,
Իմ մայր հողում չի փտելու,
Ու ցավերիս վեպը տրտում
Չեն պատմելու խուլ խրճիթում,
Որ մեկն ուշքով լսի ու լա
Իմ տխրալի անվան վրա։

25

Մնաս բարյավ, հայր... քո ձեռքը տուր ինձ.
Տեսնո՞ւմ ես, իմը ինչպես այրվում է...
Այս բոցն, իմանաս, մանուկ օրերից
Իմ կրծքի տակին ծածկված մնում է.
Բայց հիմա արդեն էլ սնունդ չկա,
Ու իրեն բանտը ողջ լափել է նա։

Վերադառնում է նրա մոտ կրկին,
Որ օրինավոր կարգով ամենքին,
Տալիս է տանջանք ու հանգստություն...
Բայց ի՞նչ եմ անում. թեկուզ դրախտում,
Ամպերից վերև—էն սուրբ աշխարհքում—
Իմ հոգին իրեն հանգիստ ունենար...
Ա՜խ, միայն մի քանի վայրկյանի համար,
Մոայլ, վիթխարի էն ժայռերի մեջ,
Ուր անց եմ կացրել օրերս մանկության,
Կտայի ես ողջ—դրախտ, հավիտյան...

26

Երբ որ, ծերունի, մեռնելու լինեմ,
Ու գիտեմ—երկար չպիտի ապրեմ,—
Պատվեր տուր այնժամ դու ինձ տանելու
Մեր կանաչ այգին, այնտեղ, ուր երկու
Ճերմակ հակակի թփեր են ծաղկում...
Խոտն էնքան խիտ է նրանց արանքում,
Ու անուշաբույր թարմ օդը այնպես,
Այնպես թափանցիկ, այնպես ոսկեշող
Տերևն արևի տակին խաղացող...
Դու հրամայի ինձ այնտեղ տանեն։
Պայծառ ցերեկի փայլով ոսկեղեն
Վերջին անգամը կարբենամ գեթ ես։
Կովկասն այնտեղից կերևա նույնպես։
Կարելի է հով զեփյուռների հետ
Ուղարկի նա ինձ վերջին հրաժեշտ
Էն բարձունքներից հզոր, աննվաճ...
Ու իմ ականջին, օրհասից առաջ
Կհնչի դարձյալ հարազատ մի ձեն։
Ու կմտածեմ, թե ընկերս է էն,
Կամ թե եղբայրս վրաս կորացած՝
Զգույշ ձեռքերով գեմքիցս կամաց
Մահվան սառնամած քրտինքն է սրբում
Ու մեր տան մասին կիսաձայն երգում...
Ու ես այս մտքով խաղաղ կհանգչեմ,
Էլ չեմ գանգատվի ոչ ոքի ընդդեմ...»։

ԴԵՎ

(Արևելյան զրույց)

Առաջին մաս

I

Տրոմագին Դևը՝ արտաքսման ոգին,
Ճախրում էր մեղսոտ աշխարհի վրա,
Եվ լավ օրերի վերհուշն էր կրկին
Խմբվում նրա դեմ, պաշարում նրան,
Այն լավ օրերի, երբ որ դրախտում,
Շողշողում էր նա՝ մի լույս քերովբե,
Երբ որ գիսաստղը՝ սուրալով օդում,
Սիրալիրաբար նրան էր ժպտում
Եվ ողջույն առնում ամեն մի բոպե,
Երբ մուժի միջից հավիտենական,
Ծարավ ու պապակ գիտության ջրին՝
Նա հետևում էր տիեզերական
Անցնող ու դարձող քարավաններին,
Երբ նա սիրում էր հավատում խորին,
Նա՝ անդրանիկը սուրբ արարչության,
Անգետ կասկածին, առանց շարության,
Եվ չէր սպառնում դեռ նրա մտքին
Վհատ դարերի շարանն անպտուղ...
Շատ բան էր հիշում... Վերհիշել կրկին,
Ողջը մի տեղ բերել ուժը չէր պատում։

II

Անապատ երկրում վաղուց էր շրջում
Անապատարան և առանց մահի.
Դարի ետևից նոր դարն էր թռչում,
Ինչպես որ պահն է հետևում պահին՝
Նույն միօրինակ հերթականությամբ։
Առանց հաճույքի՝ սերմը չարության

Սփռում էր Դևը աշխարհում չնչին,
Ուր ինքն էր իշխում և ուր ոչնչից
Չէր էլ սպասում դիմադրություն—
— Ու նա ձանձրացավ չարության չնչից։

III

Եվ սեգ Կովկասի լեռների վրա
Դրախտից քշված այդ ոգին թռավ։
Իր հավերժահան սառույցով կապույտ
Կազբեկն է շողում ադամանդի պես
Եվ, ամենից ցած, մթին սանդի պես
Սևին է տալիս ոլորապտույտ
Դարյալը՝ լեցուն օձերով կույտ-կույտ,
Եվ առյուծի պես՝ լեռնաշղթային
Թավ բաշը փռած՝ թերեքն է թռչում,
Մռնչում—և ի՞նչ. գազան ու թռչուն
Խենթ պտտվելով պարում օդային՝
Նրա ջրերի բարբառն են լսում.
Հեռու հարևանի ամպն էլ հուրհրան
Ջվում է գալիս, ուղեկցում նրան.
Ու ցատկոտելով հյուսիս է հոսում։
Եվ խուլ ժայռերը խիտ-խիտ շարքերով,
Մի խորհրդավոր ու խոր նիրհի մեջ,
Ներքև խոնարհած իրենց դեմքերով
Ալիքներին են հետևում անվերջ.
Մշուշի միջից՝ ժայռերին թառած
Բերդ ու բուրգերն են նայում ահարկու,
Ասես Կովկասի դոնների առաջ
Հսկաների պես նրան են հսկում,—
Ամեն ինչ այստեղ՝ աստծո աշխարհում,
Ջքնաղ է, վայրի,— բայց արհամարհում,
Բայց աստծո կերտած աշխարհի վրա
Նայում է նա լոկ քամահրանքով,
Եվ սառն ու գոռոզ ճակատը նրա
Չի ցոլում անգամ թեթև բերկրանքով։

IV

Վառ գեղեցկության գույներով հիմա
Ուրիշ պատկեր է նրա դեմ փռվում.
Լայնորեն բացված գորգերի նման
Պերճ Վրաստանի դաշտերն են հեռվում,—
Երջանիկ ու ճոխ եզերքը հողի։
Վերձիգ բարդիներ՝ նման կոթողի,
Ուրախ կարկաչող առվակ ու վտակ,
Որ ունեն քարե գույնզգույն հատակ.
Թփուտներ վարդի,
Սոխակներ անթիվ,
Որ գեղեցկուհուն գովերգ են անում,
Սակայն սիրո դեմ սեր չեն ստանում.
Փարթամ չինարի, որ շուքն է փռում՝
Բաղեղի կանաչ պսակը հագին,
Անձավներ, որտեղ կեսօրվա շոգին
Ապաստանում է երկչոտ եղջերուն.
Տերևի խշշոց, փսփսուկ ու փայլ,
Հազար ձայների մի համաբարբառ
Եվ շնչառություն հազար բույսերի.
Եվ տոթ՝ հարավի տարփոտ կեսօրի,
Եվ ցող բուրավետ, որ ցած է գալիս,
Գիշերը շոգին մեղմություն տալիս,
Եվ պայծառ աստղեր, պայծառ՝ աչքի պես,
Սեգ վրացուհու վառ հայացքի պես...
Սակայն մի սառցե նախանձից բացի,
Բնության փայլը բան չէր հարուցում
Դատարկ կրծքի տակ այն արտաքսվածի—
Ո՛չ նոր ուժ, նոր հույս, ո՛չ էլ զգացում.
Ինչ էլ աշխարհում նկատում էր նա,
Կա՛մ արհամարհում, կա՛մ ատում էր նա։

V

Մերուկ Գուդալը դղյակ էր շինել՝
Բարձրաբերձ մի տուն ընդարձակ բակով...
Նրա տան վրա արյուն-արցունքով

Հլու ճորտերը քիչ չէին բանել։
Հենց արեգակը գլուխը հաներ՝
Դիմացի լանջին տան շուքն էր մնում։
Ժայռին փորված են խոր աստիճաններ,
Որ բուրգից դեպի գետակն են տանում։
Թամարը՝ դուստրը Գուդալ իշխանի,
Փաթաթված ճերմակ շադրայի քողում՝
Այդ աստիճանի վրայով շողում,
Գետափ էր իջնում, որ տուն ջուր տանի։

VI

Մշտապես լռին հովտին է նայում
Մեծ ժայռին թառած այդ տունը մռայլ։
Բայց այսօր այնտեղ խնջույք է շռայլ—
Հոսում է գինին, զուռնան հմայում,—
Գուդալն աղջկա նշանդրեքին
Քեֆի է կանչել ողջ ընտանիքին
Գորգերով ծածկված տափակ տանիքին
Նստել է հարսը աղջիկների մեջ.
Երգ ու խաղով է անցկենում անվերջ
Նրանց ժամանցը։ Սարի պռունկին
Թեքվում է արդեն արեգակը պերճ.
Երգում են նրանք ուրախ ու ցնծուն՝
Համաչափորեն հետը ծափ տալով..
Իր դափն է վերցնում ջահել հարսնացուն։
Ահա մի ձեռքի քնքուշ մատերով
Նա իր գլխի շուրջ դափը պատելով՝
Մերթ թռչունի պես սուրում է, քայլում,
Մերթ՝ կանգնում, նայում. և նրա հստակ
Տամուկ աչքերը շողում են, փայլում
Իրենց նախանձկոտ թարթիչների տակ.
Մերթ հոնքն է խաղում, մերթ աչքն է փակվում,
Մերթ, հանկարծ, փոքր-ինչ առաջ է թեքվում,
Եվ աստվածային տրիկը նրա
Սահում է, լողում գորգերի վրա.
Մանկական զվարթ խնդությամբ լեցուն՝

Ժպիտն է նրան լույսով իր օծում։
Բայց լուսնի շողը, որ մերթ խայտում է,
Վետվետում երեր ջրերի վրա,
Դժվար թե հասնի ժպիտին նրա՝
Վառ, ինչպես կյանքը, ջահելությունը։

VII

Երդվում եմ աստղով կեսգիշերային,
Ե՛վ արշալույսով, և՛ մայրամուտով,
Որ չէր վիճակվել ո՛չ պարսից շահին,
Ո՛չ էլ աշխարհում մեկ այլ արքայի
Համբուրել աչքեր առավել դյութող։
Հարեմի ո՛չ մի ցայտող շատրվան
Եվ ո՛չ մի անգամ ամառվա շոգին
Չէր լողացրել ցողով իր հակինթ
Այսպիսի բարակ ու ճկուն իրան։
Դեռևս աշխարհում հողածին մեկին
Բախտ չէր վիճակվել սիրածի դեմքին
Նման խոպոպիկ քանդել իր ձեռքով։
Ինչ հողը կորցրեց իր եղեմ այգին,
Երդվում եմ, նման գեղեցիկ այլ կին
Չէր ծաղկել երբեք արևի ներքո։

VIII

Վերջին անգամ էր նա պարում։ Ավա՜ղ,
Իշխան Գուդալի ազատ ու անվախ
Ապրած ժառանգին առավոտը վաղ
Խեղճ ստրկուհու բախտ էր սպասում,
Մի բախտ տրտմագին և անմխիթար,
Հայրենիքն արդեն՝ այսուհետ օտար,
Եվ խորթ էր դառնում ընտանիքը սուրբ։
Ու նրա դեմքը լուսավոր ու նուրբ
Հաճախ էր մթնում թաքուն կասկածից։
Նրա շարժումներն այնքա՜ն սլացիկ
Ու լեցուն էին արտահայտությամբ,

Այնքան էին լի թովիչ պարզությամբ,
Որ եթե Դևը այս կողմով թռչեր
Ու նայեր նրա դիմագծերին՝
Դեմքը կշրջեր ու կհառաչեր,
Հիշելով նախկին իր եղբայրներին...

IX

Եվ Դևը տեսավ... Ու նրա հոգին
Մի վայրկյան հանկարծ ինչ-որ անմեկին,
Անհասկանալի հույզով համակվեց։
Սեն անապատը նրա լուռ հոգու
Լցվեց մի ձայնով աղնիվ ու մաքուր,—
Եվ նա վերստին սրբության հակվեց՝
Սիրո, բարության ու գեղեցկության...
Երկար հիացավ նա այդ պատկերով,
Եվ նրա նախկին բախտավորության
Երազանքները ձգված շարքերով,
Ինչպես աստղերի մի երկար շարան,
Հառնեցին նորից, պատեցին նրան։
Մի նոր տրտմության նա ծանոթացավ՝
Անտես մի ուժից շղթայված գոռով.
Ու նրա հոգում հանկարծ արթնացավ
Ու խոսեց մի հույզ՝ ծանոթ բարբառով։
Ի՞նչ էր դա, նշան վերածնությա՞ն։
Եվ նա չգտավ ահեղ փորձության՝
Գայթակղության նենգամիտ խոսքերը...
Մոռացո՞ւմ,— բայց դա չէր տվել Տերը,
Համաձայն էլ չէր նա մոռացության...

. . . . . .

X

Տանջելով իր լավ ու խեղճ նժույգին՝
Դեռ մութը չընկած, հարսնախնջույրին
Հասնել էր ուզում անհամբեր փեսան։
Ահա և նրանք հաջողակ հասան

Լույս Արագվայի կանաչ ափունքին։
Թանկ նվերների ծանր բեռներով,
Քայլելով հազիվ, հոգնած ու անուժ,
Ուղտերի շարքն է ձգվում լեռներով,
Երևում—կորչում ճանապարհներով,
Եվ զանգակներն են ղողանջում անուշ։
Նա՝ Սինոդալի տերը պանծալի,
Հենց ինքն է վարում ճոխ քարավանը։
Գոտին է պրկում ճկուն իրանը.
Արևի ներքո թուր ու խանչալի
Պատյանն է փայլում. պերճ փորագրված
Գոռ հրացանն է մեջքից կախ տրված։
Խաղալով, կայտառ, ուրախ երգելով՝
Քամին է հրճվում շրջանկարված
Նրա չուխայի երկար թևքերով։
Սանձը զուգված է գունեղ ծոպքերով.
Թամբը մետաքսե թելով է կարված.
Եվ ամբողջովին փրփրակալված,
Սեգ Ղարաբաղի ծնունդը կայտառ՝
Ոսկեթույր իր ձին չի դադրում խայտալ—
Նա ականջներն է վտանգ ու ահով
Խլշտում, փնչում, խեթ նայում դիքից
Ճերմակ փրփուրին թռչող ալիքի.
Նեղլիկ է ճամփան ու վտանգավոր։
Ձախից՝ ահարկու ժայռեր են սառած,
Իսկ աջից՝ գետն է խենթ ու վարարած։
Եվ ուշ է/արդեն։— Արևը մարեց
Ջյունոտ կատարին. մշուշը թառեց...
Եվ քարավանն է շտապում առաջ։

XI

Եվ ճանապարհին ահա մի մատուռ...
Այժմ որբացած, կյանքում մեծատուն
Մի մարդ՝ սպանված քինալից ձեռքով,
Վաղուց է հանգչում այս ծածկի ներքո։
Այն օրից, ուր էլ ճամփորդը գնա՝

Ուրախ խնջույքի թե արնոտ կռվի,
Պիտի որ այնտեղ մի վայրկյան մնա,
Ջերմեռանդորեն աղոթքի տրվի.
Աղոթքը նրան փրկում է չարից
Ու մուսուլմանի թուր ու խանչալից։
Բայց կտրիճ փեսան... նա արհամարհեց
Նախնյաց ադաթը—նա աղոթք չարեց։
Դեռ նենգամիտ երաղանքներով
Երիտասարդի միտքն էր պղտորում.
Նա իր մտքի մեջ տաք շրթունքներով
Հարսին էր մթնում արդեն համբուրում։
Հանկարծ... առջևում երկու կերպարանք,
Հետո՝ կրակոց... ա՜յ քեզ բան... Արագ
Թեքելով փափախն իր թուխ հոնքերին,
Հենվելով զնգուն ասպանդակներին՝
Կտրիճ իշխանը բերան չբացեց.
Թուրքական փողը շողշողաց նրա
Ջահել ձեռքերում, մտրակը շաչեց,
Եվ արծվի նման նա առաջ թռավ։
Նորից կրակոց... Հովիտով թևեց
Վայրենի ճիչը, հունչը հառաչի,—
Արյունոտ մարտը երկար չտևեց,
Փախուստ տվեցին վախկոտ վրացիք։

XII

Ամեն ինչ լռեց. սեղմվելով իրար,
Ուղտերը՝ փռված դիերի վրա
Սարսափով էին լոտ մտիկ տալիս.
Եվ լռության մեջ, հոգնատանջ այդ մռայլ
Զանգակներն էին խլշտացնում լալիս։
Զարկված-տարված էր քարավանը շտապ,
Եվ քրիստոնյա դիերի վրա
Գիշերահավն էր լոկ պտտվում դողալ։
Նրանց դիերը չեն դանվի հանդիպած
Սարքարների տակ ոչ թե խաղաղ վանքի,
Որտեղ հայրերի աճյունն է թաղված,

Եվ այցի չեն գա արցունքով շաղված
Նրանց քույրերը, նրանց մայրերը՝
Կարոտը խեղդած չադրայի ներքո,
Լացով, աղերսով, ողբաձայն երգով՝
Թողած հեռավոր իրենց վայրերը։
Դրա փոխարեն ջերմեռանդ ձեռքով
Այստեղ, ճամփեզրի քարաժայռի տակ,
Մի խաչ կտնկվի իբրև հիշատակ.
Բաղեղն էլ պիտի կանաչի կրկին
Ու գորովանքով այդ խաչը գրկի,
Այդ խաչը պատի զմրուխտի ցանցով.
Եվ այդ դժվարին ճամփեքով անցնող
Հոգնած ճամփորդն էլ շատ անգամ շոգին
Պիտի հանձնվի աստծո այս շուքին...

XVIII

Նժույգն է սուրում, ինչպես մի թռչուն,
Փնչում է, կարծես կռվի է թռչում,
Մերթ սլանալիս ետ է ընկրկում,
Քամու ձայնին է ականջը տնկում՝
Իր շեղ ռունգերը լայնորեն փքած.
Մերթ էլ պայտերի դոփյունով մի կարճ
Քարացած հողին հորդ տարափ տալով,
Գզգզված բաշը ուժգին թափ տալով՝
Պոկվում է տեղից ու թռչում հանկարծ։
Նստած է ձիուն մի մարդ լռակյաց։
Նժույգի բաշին գլուխը թեքած՝
Երբեմն թամբին նա վեր է ցատկում։
Նա արդեն սանձը թողել է ձեռքից,
Շատ է ներս խրվել ոտն ասպանդակում.
Եվ լայն շիթերով նրա լայն վերքից
Արյունն է ծծվում թամբի չափրակում։
Քո տեր հեծյալին; ո՞վ սուրող դու ձի,
Թռչող նետի պես կռվից հանեցիր,
Բայց օսետինի չար գնդակը տաք
Անգամ մթան մեջ տիրոջդ գտավ։

XIV

Հսկա ամբոխ է բակում հավաքված,
Գուդալի տանն էլ՝ լաց ու կոծ, հառաչ.
Այդ ո՞ւմ ձին սուրաց, ասես կրակված,
Ու փռվեց քարին, դարպասի առաջ։
Եվ ո՞վ է անշունչ հեծվորն այս ջահել։
Կռվի տագնապի հետքերն է պահել
Իր կնճիռներում ճակատը նրա։
Արնաշաղախ են հագուստն ու զենքը,
Եվ վերջին անգամ սեղմված ձեռքը
Սառել է ձիու թավ բաշի վրա։
— Կարոտ հայացքով, հա՛րս, շատ էլ երկար
Դու չսպասեցիր փեսային ջահել.
Նա իշխանական իր խոսքն է պահել,—
Իր հարսանիքին թռավ ու եկավ...
Բայց հազա՞ր ափսոս, երևի նա է՛լ
Չի նստի իր ձին իշխանավայել...

XV

Աստծո պատիժը շանթի պես փլվեց
Իշխան Գուդալի անհոգ տան վրա։
Թշվառ Թամարը անկողնուն փռվեց,
Եվ հեծկլտոցը լուռ ցնցեց նրան.
Դա՞ռը արցունքներ—իրար ետևից,
Նա փարթամ կրծքով դժվար է շնչում,
Եվ մեկ էլ... կարծես մի ձայն է հնչում,
Մի ձայն է հնչում դյութիչ ու թովիչ.
«Մի՛ լար, մանկիկս, մի՛ լար այդպես զուր
Չի իջնի որպես անմահական ջուր
Այս լուռ դիակին ծով արցունքը քո.
Դու միայն պայծառ աչքերդ ես տանջում
Եվ կույս այտերդ այրում արցունքով։
Նա շատ է հեռու, իզուր ես կանչում,
Եվ գին էլ չի տա թախծիդ խոսքերին.
Երկնային լույսն է գգվում-ճաճանչում
Նրա անմարմին աչքերում խորին.

Նա դրախտային երգեր է լսում...
Ի՞նչ է այս կյանքի երազանքը սին,
Եվ հառաչանքը ու լացը կույսի
Եդեմյան այգու կենվորին ասում։
Օ, ո՛չ, երկնայի՛ն իմ լույս հրեշտակ,
Երբեք վիճակը մահկանացուի
Չարժե քո թախծի վայրկյանին այս թանկ,
Մե՛ն մի՛ վայրկյանին, հավատա դու ինձ»։

«Օդային լայն օվկիանոսում,
Անառագաստ և անղեկ,
Լող են տալիս, միգում հոսում
Լուսատուներ հրաշեկ։
Անծիր դաշտում՝ երկնում անբիծ,
Առանց հետքի, լուռ ու մեղմ
Անորսալի թուխպ ու ամպի
Հոտն է շարժվում նրբագեղմ։
Հանդիպումից, բաժանումից
Ո՛չ խինդ, ո՛չ ցավ—ո՛չ հուզում.
Բան չեն ուզում գալիք ժամից,
Անցյալը չեն ափսոսում։
Դժբախտ օրը երբ քեզ նեղի՝
Թող երևան նրանք քեզ.
Երկրայինի հանդեպ եղիր
Անմաս, անփույթ՝ նրանց պես»։

«Հենց որ Կովկասի դեպի վեր միտված
Լեռներին գիշերն իր քողը փռի,
Հենց որ կախարդիչ խոսքերով դյութված
Աշխարհը դանդաղ վերստին լռի.
Հենց որ սառնաշունչ զեփյուռը լեռան
Ճոճի ժայռերի խոտերը թառամ,
Ու վախկոտ ծիտը, պահված այդ խոտում,
Անդադրն ճախրի միգապատ օդում.
Հենց որ խաղողի փարթամ վազի տակ
Կուլ տալով ցողի կաթիլը հստակ՝
Գիշերվա քնքուշ ծաղիկը բուսնի.
Հենց որ ոսկեգույն մանիշակը լուսնի

Լեռան թիկունքից գլուխը հանի
Եվ գաղտագողի քեզ մտիկ անի,—
Քեզ մոտ կթռչեմ առանց մի խոսքի.
Քեզ հյուր կմնամ մինչև լուսադեմ,
Եվ թարթիչներին քո մետաքսաթել
Շաղ կտամ խոր քուն, երազներ ոսկի...»

XVI

Խոսքերը մարում հեռավոր օդում,
Ձայները մեկ-մեկ մեռնում են մոտիկ։
Նա շուրջն է նայում՝ թռչելով ոտի...
Ինչ-որ անպատում, ահեղ խլրտում
Շարժվում է սրտում.— մի՛ համեմատիր
Դրան վիշտ, կամ վախ, կամ ցնծության կայծ։
Բոլոր հույզերը եռացին հանկարծ.
Հոգին կտրատեց կապերն իր բոլոր,
Հուր ու բոց լցվեց նրա արյան մեջ,
Եվ թվաց, թե այդ հիասքանչ ու նոր
Ձայնը դեռ հնչում, հնչում է անվերջ։
Երբ մոտենում էր լույսն առավոտի,
Աչքին մոտ եկավ քունն էլ բաղձանքով,
Բայց միտքը հուզեց մի երազանքով
Մարգարեական և օտարոտի։
Համր ու լուռ, պատված մշուշի քողով,
Փայլելով ինչ-որ երկնային գեղով՝
Մեկը թեքվել էր Թամարի բարձին,
Նայում էր նրան սիրով մի անծիր,
Տրտում էր նայում Թամարի վրա,
Այնպես, կարծես թե խղճում էր նրան։
Նա աստվածային մի պահպանի՞չ է։
Հրեշտակ չէ, երկնի հար բնակիչ չէ.
Նա գլխին դրած վառ պսակ չունի՝
Հյուսված գույներով վառ ծիածանի։
Նա և դժոխքի ոգի չէր անգութ,
Մի արատավոր մեղսոտ նահատակ։
Նա կարծես լիներ իրիկուն հստակ.
Ո՛չ օր, ո՛չ գիշեր—ո՛չ լույս էր, ո՛չ մութ...

Երկրորդ մաս

I

«Հայրի՜կ, քո՜ղ, հայրի՜կ, էլ մի՜ սպառնա,
Քո խեղճ Թամարին էլ մի՜ հայհոյիր.
Նա քեզ աղաչում ու լալիս է նա,
Եվ նոր չի հոսում արցունքն այս, նայի՜ր։
Փեսացուների խմբերն ահագին
Զուր են հավաքվում ու գլուխ տանում...
Ի՜նչ, աղջիկ չկա՞ էլ Վրաստանում։
Ա՜խ, չէ՜, ոչ մեկին ես չեմ դառնա կին...
Հա՜յր, մի՜ նախատիր, մի՜ լինիր դու չոր։
Ինքդ ես նկատել, որ ես օրեցօր
Զար թույնից մաշվում, ձեռքից եմ գնում։
Մի երազանքով, որ անց չի կենում,
Ծվատում է ինձ ոգին նենգ ու չար։
Ա՜խ, ես կորչում եմ, հա՜յր իմ, ինձ խղճա՜։
Քո գիժ աղջկան, քո խենթ Թամարին
Տար սուրբ մենաստան, տար անխոս դու վանք.
Ինձ կպաշտպանի փրկիչը բարի,
Ես նրան դարդս կանեմ խոստովանք։
Իմ սիրտն աշխարհում էլ խնդում չունի...
Իբրև հովանի սրբության համար՝
Թող մոայլ խուցը նախապես, հիմա
Դագաղի նման ինձ գիրկն ընդունի...»

II

Եվ ծնողները մի օր վերցրին
Ու տարան նրան մենաստան մի սուրբ,
Մազեղեն կոպիտ զգեստ հագցրին
Այն ջահել մարմնին ու կրծքին այն նուրբ։
Բայց և վանական հանդերձի ներքո,
Ինչպես ծաղկաշարդ փափուկ դիպակում,
Առաջվա նման նույն սիրտն էր զարկում
Նույն ապօրինի հին երազանքով։

Խորանի առաջ, մոմի ցոլքի մեջ
Եվ հանդիսավոր սուրբ պատարագում,
Խորունկ աղոթքի խոսքի արանքում
Նույն ծանոթ ձայնն էր նա լսում անվերջ։
Կամարների տակ կիսամութ վանքի
Նույն ծանոթ դեմքը հաճախ մոտ թռչում,
Սահում էր անձայն և անհետ կորչում
Բարակ մուժի մեջ բուրավետ խունկի։
Նա աստղի նման մեղմիկ առկայծում,
Նա հմայում էր, կանչում էր... բայց ո՞ւր...

III

Երկու զովաշունչ բլրի արանքում
Պահվել էր վանքը՝ մի հին մենաստան։
Ջինարի, բարդու շարքերն են փակում
Նրան չորս կողմից։ Հաճախ, երբ մթան
Սև թևն էր թառում անհատակ ձորում,
Ծառերի միջից,
Անտրև խցից
Ջահել մեղսուհու կանթեղն էր ծլրում։
Նշենիների շուքի տակ փարթամ,
Ուր որպես լռին պահակ՝ շիրմատան
Տրտում խաչերի շարքերն են հսկում,
Թռչուններն են միշտ ուրախ խմբերգում։
Քարերի վրա ցատկում են, ճչում
Աղբյուրները պաղ ու մաքրակոհակ
Ու, քարափի տակ հավերժ գլխահակ,
Բարեկամաբար միանում կիրճում
Եվ առաջ թռչում ուրախ քրքիջով
Եղյամոտ ծաղկանց, թփերի միջով։

IV

Երևում էին հյուսիսում սարեր։
Ծագող լուսաստղի փայլի տակ հրե,
Երբ կապույտ մուժը արևից առաջ
Հովիտի խորքում ծխում է հազիվ,

Եվ դեմքը դեպի արևելք արած՝
Մուեզինները են կանչում նամազի,
Երբ զանգերն իրենց զողանջն են ցրում
Ու քնած վանքը վաղ արթնացնում.
Այն հանդիսավոր ու խաղաղ պահին,
Երբ երիտասարդ սեգ վրացուհին
Երկար սափորը ուսին է դնում,
Սարից իջնելով ջրի է գնում,—
Զյունոտ լեռների շարքերն անսահման
Բաց շուշանագույն պարսպի նման
Նկարվում էին հստակ երկնքին
Եվ ամեն անգամ ծածկվում կրկին
Ճոխ վերջալույսի քողով ոսկեմազ.
Եվ ամենից վեր, բարձր ու ահագին,
Ճեղքելով վերջին ամպերն էլ անգամ,
Փաթթոցը գլխին, շուրջառը հագին,
Կաղբեկն էր կանգնում՝ լեռների արքան։

V

Մակայն հանցավոր մտքերով լեցուն՝
Մաքուր բերկրանքին դուռն իր չէր բացում.
Թամարի հոգին։ Թամարի համար
Մռայլ ստվեր է աշխարհին թառում,
Ամեն ինչ այնտեղ ցավ է պատճառում
Ե՛վ այգը լուսե, և՛ գիշերը մառ։
Երբ որ գիշերը իր քնաթաթախ
Զովությունով էր երկիրը պատում,
Թամարը իրեն խենթի պես հաճախ
Սրբապատկերի առաջ էր նետում
Ու լալի՛ս, լալի՛ս։ Եվ լռին մթնում
Այդ հեծկլտանքը ծանր ու անհատնում
Ճամփորդի սիրտն էր տագնապի մատնում,
Նա միտք էր անում. «Դա լեռան ոգի՞ն,
Նա՞ է, շղթայված, տնքում քարայրում»։
Եվ լսելիքը ակամա լարում,
Ասպանդակում էր հոգնած նժույգին...

VI

Հաճախ, կարոտը ու դողը սրտում,
Լեցուն մենավոր մտքերով տրտում,
Պատուհանի մոտ Թամարը նստած
Նայում է հեռու հայացքով իր թաց
Եվ հառաչելով ողջ օրն սպասում...
Նա կգա,— նրան մի ձայն է ասում։
Զուր չէր երազը նրան փայփայում.
Թախիծով լեցուն իր ծով աչքերով
Զուր չէր նա գալիս, Թամարին նայում։
Դիմում քնքշալից հրաշք խոսքերով։
Տանջանքն աղջկան վաղուց էր պատել,
Ինքն էլ չգիտեր՝ ինչպե՞ս և ինչո՞ւ.
Նա սրբերին էր ուզում աղոթել,
Բայց սիրտն աղոթքով Ն ր ա ն էր կանչում.
Թե արդեն անզոր ծանր պայքարի՝
Հոգնած պառկում է, որ հանգստանա,
Այրում է բարձր, տոթ է սոսկալի,
Եվ վեր ցատկելով՝ դողդողում է նա,
Մուժ է աչքերում, հազիվ է շնչում։
Վազվում են ուսերն ու կուրծքը նրա։
Գիրկն ագահորեն հանդիպման տենչում,
Համբույրն է հալչում շրթների վրա...

. . . . . .

. . . . . .

VII

Իրիկվա մեգի ծածկույթը խոնավ
Լեռներն է պատում սեգ Վրաստանի։
Իր սովորույթի հմայքին խոնարհ՝
Դեր մոտ թռավ սուրբ մենաստանին։
Բայց երկա՞ր-երկա՞ր սուրբ օթևանի
Հանգիստը խախտել Դեր սիրտ անել
Չէր համարձակվում։— Սեղան վայրկյաններ,
Երբ թվաց, թե նա անդարձ կվանի

Միտումն իր դաժան։ Եվ աննպատակ
Նա շրջեց բարձր պարիսպների տակ.
Եվ առանց քամու, լոկ նրա քայլից,
Ստվերի խորքում տերևն էր դողում։
Նա վերև նայեց. կանթեղի փայլից
Նեղ պատուհանն է մթան մեջ շողում.
Կույսը վաղուց է սպասում մեկին։
Եվ ահա խորունկ այդ լռության մեջ
Զոնգուրն է հնչում, ուղեկցում երգին,
Որ հոսո՜ւմ, հոսո՜ւմ, հոսո՜ւմ է անվերջ,
Արցունքի նման՝ իրար ետևից։
Այնպես քնքուշ էր այդ երգը լուսե,
Որ երկրի համար անմաքուր ու սև
Երկնքում էին կարծես թե հյուսել։
Վաղուց մոռացված եղբոր հետևից
Հրեշտակն է այդ ցած իջել երկիր,
Որ արտաքսվածին հանդիպի կրկին
Ու նրան պայծառ անցյալից երգի՝
Նրա տանջանքը մեղմելու համար...
Առաջին անգամ և միայն հիմա
Դևն զգաց խայտանքն ու ցավը սիրո.
Սարսափից ուզեց թողնել հեռանալ...
Չկարողացավ թևերը բանալ։
Եվ—ա՜յ քեզ հրաշք. նրա այտերով
Մանր արցունքներ ցած գլորվեցին...
Մինչև այսօր էլ հենց այդ նույն լեցի
Դռների առաջ կա մի քար ձգված՝
Մի անմարդկային արցունքով ծակված,
Արցունքով կիզիչ ու նման բոցի...

VIII

Եվ ներս է մտնում՝ սրտում ծով մի սեր,
Բարության առաջ լայն բացվող հոգով,
Ու միտք է անում, որ ժամն է հասել,
Ցանկալի ժամը՝ ապրել նոր կյանքով։
Ե՛վ սպասումի սարսուռը անկամ,

Ե՛վ անհայտության սարսափն անլեզու
Կարծես հանդիպում առաջին անգամ
Եվ Դևի գոռող հոգին են հուզում։
Դա ուրիշ քան չէր, քան չար գուշակում։
Մտնում է նա ներս և տեսնում. այնտեղ
Զքնաղ մեղսուհու հսկիչը անքուն՝
Դրախտի դեսպան քերովբեն արդեն
Փայլուն ճակատով ու վառ ժպիտով
Կանգնած է Դևի՝ իր ոսոխի դեմ,
Եվ իր թևերով կույսին է ծածկում։
Եվ աստվածային լույսի ճաճանչում
Փակվում են աչքերն անմաքուր Դևի։
Եվ ի՜նչ. փոխանակ քաղցր բարևի՝
Քար նախատինքի խոսքերն են հնչում.

IX

«Ոգի՛ անհանգիստ, ոգի՛ պղծագույն,
Ո՞վ է քեզ կանչել գիշերվա միգում։
Ցայսօր չարն այստեղ չի շնչել բնավ,
Եվ չունես այստեղ դու երկրպագու.
Թեպի սրբությունն ու սերն իմ մաքուր
Հանցավոր ճամփա մի՛ ձգտիր բանալ։
Ո՞վ է քեզ կանչել»։

Չար ոգու դեմքին
Իբրև պատասխան նենգ ժպիտ ծագեց։
Հայացքը խանդից սուր փայլատակեց։
Եվ ատելության հին թույնը կրկին
Արթնացավ սրտում ու վառեց հոգին։
«Նա ի՞մն է,— ասաց ահեղ ու մռայլ։
Թո՛ղ նրան, ի՞մն է, ի՞մն է, իմացի՛ր։
Դու՝ պահապանդ, ուշ երևացիր,
Դատավորն էլ չես ո՞չ իմ, ո՞չ նրա։
Իմ ձեռքով դրված կնիքը ազդու
Հպարտությամբ լի այս սիրտն է կրում.
Ոչ մի սրբություն էլ չունես աստ դու,
Աստ ե՛ս եմ տիրում

Ու ե՛ս եմ սիրում»։
Եվ հրեշտակը աչքերով տրտում
Նայեց չար Դևի խեղճ զոհի վրա
Ու իր թևերը թափ տալով օդում՝
Երկնքի կապույտ եթերում կորավ։

. . . . . .

X

ԹԱՄԱՐ

Օ՜յ, ո՞վ ես։ Խոսքերդ ինձ վախ են ազդում։
Դժո՞խքն է ճամփել, դրախտի՞ց հասար։
Ի՞նչ ես կամենում...

ԴԵՎ

Գեղեցիկ ես դու։

ԹԱՄԱՐ

Բայց պատասխանիր, ո՞վ ես դու։ Ասա՛...

ԴԵՎ

Ես նա եմ, որին գիշերվա լռին
Քար լռության մեջ ինքդ էիր լսում,
Ում միտքը հոգուդ շատ բան էր ասում,
Ում դեմքն ես տեսել հաճախ երազում
Ու գուշակել ես թախիծը որի։
Նա, ում հայացքը հույսեր է մարում,
Նա, ում չի սիրում ո՛չ ոք աշխարհում։
Ես պատուհասն եմ իմ մարդ-ճորտերի,
Արքան գիտության և ազատության,
Ոսոխը երկնի, չարը բնության,
Եվ տե՛ս, փարվում եմ ես քո ոտերին։
Ես քեզ եմ բերել հուզմունքով անտակ
Առաջին սիրո իմ աղոթքը ջինջ
Ե՛վ իմ առաջին արցունքները տաք,
Ե՛վ իմ երկրային տանջանքն առաջին։
Օ՜, գեթ խղճալուց լսի՛ր ինձ, գթա՛։
Ինձ նորից բարուն, նորից երկնքին

Կվերադարձնես քո կենտ մի խոսքով։
Պճնված սիրուդ սուրբ հանդերձանքով՝
Ես կերևայի երկնքում կրկին—
Մի նոր հրեշտակ՝ իր նոր ցոլանքով։
Մինչև վե՛րջ լսիր, խնդրո՛ւմ եմ, սիրո՛ւն,
Ես ստրուկն եմ քո, ես քեզ եմ սիրում։
Հենց որ քեզ տեսա, հենց նկատեցի՝
Ինձնից էլ թաքուն հանկարծ ատեցի
Անմահությունն իմ և ուժն աշխարհում։
Ու ես նախանձով հանկարծ հասկացա
Երկնային կիսատ խնդության գինը.
Քեզ պես չապրելը թվաց հսկա ցավ,
Քեզ հետ չապրելը՝ դժոխք, անգի՜նս։
Արնաքամ սրտում չսպասված մի շող
Նորից բռնկվեց մարող բոցի պես,
Եվ հին վերքիս մեջ իմ սիրտը հոշող
Թախիծը կրկին շարժվեց օձի պես։
Առանց քեզ ի՜նձ ինչ հավերժությունը,
Իմ իշխանության անեզրությունը,—
Դատարկահնչուն անարժեք մի բառ,
Առանց աստծո—վիթխարի տաճար։

ԹԱՄԱՐ

Թո՛ղ ինձ, հեռացի՛ր, օ՜, խարդա՛խ ոգի։
Լռիր, թշնամուն ես չե՞մ հավատում...
Տե՛ր աստված... Ավա՜ղ, ուժս չի պատում՝
Աղոթել... իմ խեղճ թուլացող մտքին
Ինչ-որ սպանիչ սև թույն է կաթում։
Ինձ կկործանես, լսի՛ր ինձ, լսի՛ր։
Քո ամեն խոսքը կրակ է ու թույն...
Ինչո՞ւ ես սիրում, ասա՛ ինձ, խոսի՛ր։

ԴԵՎ

Ինչո՞ւ։ Ավա՜ղ ինձ, իմ գեղեցկուհի՛։
Ինքս էլ չգիտեմ։ Նոր կյանքով լեցուն՝
Փշերից հյուսված պսակը իմ հին
Իմ մեղսոտ գլխից ես դեն եմ գցում։

Իմ ողջ անցյալը նետել եմ մի կողմ.
Դժոխք ու դրախտ աչքերումն են քո։
Սիրում եմ, բայց ո՞չ երկրային կրքով,
Ինչպես չեմ կարող սիրել դու, անգի՜ն.
Ամբողջ զորությամբ ու զմայլանքով
Իմ անմահ մտքի ու երազանքի։
Քո պատկերն եմ ես հոգու մեջ կրում
Այս հին աշխարհի առաջին օրից,
Աչքերիս առաջ այդ դո՜ւ ես նորից
Եթերի հավերժ անապատներում։
Վաղուց էր հնչում քո անունն էլի
Եվ հուզում միտքս ու մտքիս հաղթում.
Անցած օրերում իմ երանելի
Պակասում էիր լոկ դո՜ւ դրախտում։
Օ՜, կարենայիր հանկարծ հասկանալ,
Թե ինչ տանջանք է իմ կյանքը համակ.
Առանց ընտրության, դարեր շարունակ
Անվերջ տառապել ու զվարճանալ,
Ջարիքի դիմաց գովեստ չստանալ
Եվ ոչ էլ պարգև՝ բարու փոխանակ։
Ապրել ի՞ր համար, ձանձրանալ ումի՞ց,
Իրենի՞ց և հար մի մաքառումից,
Ուր ո՞չ հաշտվել կա, ո՞չ էլ հաղթանակ։
Ընդմիշտ ափսոսել, բայց չկամենալ,
Ողջը հասկանալ, զգալ, նկատել,
Աշխատել, սակայն ամեն ինչ ատել
Եվ ամրհամարհել ողջը իմանալ...
Հենց որ կատարվեց անեծքն ասուծո,
Այն հեռու օրից և մինչև հիմա
Բնության գիրկը ջերմությամբ իր ծով՝
Հավիտենապես սառեց ինձ համար.
Կապտին էր տալիս տարածությունը.
Ես տեսնում էի զուգվածությունը
Ինձ ծանոթ աստղի ու մոլորակի՝
Միշտ հարսանեկան ոսկե պսակով...
Եվ ի՜նչ. չէր անցնում ոչ մեկի մտքով
Ճանաչել իրենց եղբորը նախկին։

Ինձ պես արտաքսված այլոց ես այնժամ
Հուսահատորեն ի տես կանչեցի,
Բայց դեմքը, խոսքերն, աչքերը դաժան
Ավա՜ղ, ես ինքս էլ չճանաչեցի։
Ու ես սարսափով թևս շարժեցի
Եվ թռա—բայց ո՞ւր, և ինչո՞ւ, որ ի՞նչ,—
Ինքս էլ չգիտեմ... Ու ես մերժվեցի
Իմ նախկին բոլոր բարեկամներից.
Ինչպես եղեմը՝ աշխարհն էլ համայն
Համր ու խուլ դարձավ մերժվածիս համար։
Այսպես մակույկը՝ զուրկ առագաստից,
Տրված հոսանքին, անղեկ ու անկայմ՝
Ջրի քմայքով լողում է անկամ,
Առանց ուղղության կամ գեթ հանգստի.
Այդպես շանթալից ամպի մի պատառ
Առավոտ կանուխ երբեմն վազում;
Սեին է տալիս երկնքում լազուր՝
Առանց կանգառի, անվերջ-անդադար,
Ե՛վ աննպատակ, և՛ անհետ, և՛ զուր,
Աստված իմանա՝ որտեղի՞ց և ո՞ւր։
Ես մարդկանց վրա չիշխեցի երկար
Եվ մեղքի երկար չուսուցանեցի,
Փառազրկեցի՝ ինչ ազնիվ բան կար,
Ինչ գեղեցիկ էր՝ վատաբանեցի.
Ո՛չ, նրանց հոգում հար չցանեցի
Մաքուր հավատի բոցեր ու կրակ...
Իմ նեղությանն իսկ չարժեին նրանք,
Որ տխմար են լոկ ու լոկ կեղծավոր։
Եվ թաքնվեցի լեռան կիրճերում,
Ստիպված եղա որպես գիսավոր
Խորին գիշերվա մթնում շրջելու...
Եվ ուղևորը խեղճ ու մենավոր՝
Մոտիկ կրակից խաբվելով՝ թռչում,
Անդունդի մեջ էր ձիու հետ կորչում,
Եվ զուր էր կանչում—լոկ խորհրդավոր
Արյունն էր ժայռի կողերը թրջում...
Սակայն չարության խաղերն այս մթին

Երկար դուր չեկան իմ սառած սրտին։
Գոռ փոթորկի հետ գոտեմարտելով,
Փոշի հանելով, շաղ տալով աճյուն,
Մառախուղ հագած, զինված շանթերով՝
Ես հաճախ էի ամպերով թռչում,
Որ տարերքի մեջ այս խռովալի
Դիվային սիրտս տրտունջից զրկեմ,
Անխուսափելի խոհից ինձ փրկեմ,
Մի կերպ մոռանամ անմոռանալին։
Ի՞նչ է մարդկային անցած ու գալիք
Հոծ ամբոխների ծանր զրկանքը,
Բյուր աղետները և աշխատանքը
Ջխոստովանած ու տանջված սրտիս
Վայրկյանի հանդեպ։ Եվ ի՞նչ են մարդիկ,
Ի՞նչ է տանջանքը, գործը մարդկային։
Վաղը չեն լինի, իսկ այսօր կային...
Կա հույս, կա արդար ա՜ռյան երկնային.
Դատապարտի էլ՝ կարող է ներել։
Իսկ այստեղ է միշտ թախիծն իմ հրե,
Եվ նա էլ, ինձ պես, վախճան չի գտնի,
Հանգչելու հույսով շիրիմ չի մտնի։
Նա մերթ գգվում է, խայթում օձի պես,
Նա մերթ այրում է, խայտում բոցի պես,
Մերթ քարի նման իջնում մտքերիս՝
Իբրև անկործան նեղիչ դամբարան
Խորտակված հույսիս, մարած կրքերիս...

ԹԱՄԱՔ

Իմ պատահական տանջված բարեկա՜մ,
Ով էլ որ լինես՝ անհանգիստ-անքուն
Ես լսում եմ քեզ ակամա անդամ,
Ես քեզ եմ լսում խինդով մի թաքուն։
Բայց թե խոսքերդ նենգ են ու պատիր,
Թե խաբում ես դու ու խաբկանք թե կա...
Օ՜, խնայի՛ր ինձ։ Ի՞նչ փառք, ի՞նչ պատիվ,—
Քեզ ինչո՞ւ հենց իմ հոգին պետք եկավ։
Մի՞թե երկնքին ես թանկ եմ, քան թե

Նրանք, որոնց դեռ դու չես նկատել։
Նրանք էլ, ավա՜ղ, սիրուն են նույնքան.
Եվ ինչպես իմին՝ ձեռք չի կպել դեռ
Նրանց մահճին էլ՝ նույնքան կուսական...
Չէ՜, երդվի՛ր, ինձ տուր այնպիսի՜ երդում...
Ասա՜, տեսնո՞ւմ ես՝ ոնց եմ կարոտում,
Հապա կանացի երազներն իմ տես։
Սարսափն ակամա փարում ես հոգուդ...,
Բայց դու կխղճաս, չես լինի անգութ,—
Չէ՞ որ հասկացար, ամեն բան գիտես...
Երդվի՛ր ինձ... ուխտի՛ր, որ չար ուժերին
Այսուհետ երբեք չես դիմի էլ դու։
Ա՜խ, մի՞թե չկա էլ անդրժելի
Ոչ մի սրբազան խոստում ու երդում...

ԴԵՎ

Երդվում եմ ես քեզ սուրբ արարչության
Առաջին օրով և վերջին օրով,
Խայտառակությամբ հանցագործության
Եվ հար ճշմարտի հաղթության հրով,
Երդվում եմ անկման ծանր տանջանքով
Եվ հաղթանակի կարճ անրջանքով.
Երդվում եմ քեզ հետ իմ հանդիպումով
Եվ սպառնացող մեր անջատումով.
Ինձ հար ենթակա իմ չարք—եղբորով՝
Բյուր ոգիների բախտով եմ երդվում,
Իմ ոսոխների՝ անահ ու արթուն
Հրեշտակների թրի շեղբերով.
Երդվում դժոխքով, երկնքով վճիտ,
Երկրի սրբությամբ և քեզնով, և քո
Առաջին զուլալ ու ջինջ արցունքով,
Ու քո հայացքով ամենավերջին,
Քո անչար բերնի տաք շնչառությամբ,
Մետաքս մազերիդ ալիքով գանգուր.
Երդվում եմ ցավով ու երանությամբ,
Երդվում եմ նաև սիրով իմ մաքուր,—
Հրաժարվել եմ իմ հին մութ քենից,

Հրաժարվել եմ գոռոզ մտքերից.
Շողոքորթության թույնն այնուհետև
Ոչ մեկի միտքը չի հուզի թեթև.
Ես երկնքի հետ հաշտվել եմ ուզում,
Սիրել, աղոթել, պաշտվել եմ ուզում,
Ուզում եմ բարու հավատքին տիրել։
Ես քեզ արժանի ճակատից իմ այս
Զղջման արցունքով կշնչեմ հիմա
Երկնային պատժի հետքերը հրե.
Աշխարհն այսուհետ թող երկնքի տակ
Ծաղկի առանց ինձ՝ հանգի՛ստ, անգիտա՛կ։
Օ՜, հավատա՛ ինձ. լոկ ես եմ ցայսօր,
Որ քեզ հասկացա, գնահատեցի.
Ես իշխանությունն իմ շար ու հզոր
Քո ոտքերի տակ սիրով նետեցի՝
Քեզ համարելով իմ սրբությունը։
Քո սերն եմ տենչում իբրև բարիքի,
Եվ կտամ ես քեզ հավերժությունը
Վայրկյանի՞ համար։ Հավատա՛, Թամա՛ր,
Ես սիրո մեջ էլ, ինչպես չարիքի,
Հավատարիմ եմ, մեծ եմ ու համառ։
Ազատ եթերի զավակ՝ արդեն
Քեզ տանելու եմ աստղերից էլ դեն,
Եվ դու՝ առաջին իմ ընկերուհի,
Կդառնաս այնտեղ նաև թագուհի.
Դու անափսոսանք, անմաս ու թեթև
Կնայես կյանքին, ուր իրոք չկան
Ո՛չ գեղեցկություն մի երկարատև,
Ո՛չ երջանկություն ու բախտ իսկական,
Ուր լոկ հանցանքն ու պատիժն են մնում,
Ուր մարդկանց չնչին կրքերն են տիրել,
Ուր առանց վախի չեն կարողանում
Ո՛չ կարգին ատել, ո՛չ կարգին սիրել։
Թե՞ դու չգիտես՝ ինչ է մարդկային
Քեզ ծանոթ սերը ակնթարթային.
Սոսկ ջահել արյան խայտա՞նք ու եռո՛ւմ,—
Բայց օրն է թռչում—արյունն է սառում։

Ո՞վ է դիմանում բաժանությանը,
Նոր գեղեցկության գերող հմայքին,
Ահեղ ձանձրույթին ու հոգնությանը
Ու երազների անծիր քմայքին։
Օ ո՜չ, իմացի՛ր. բախտով մի վերին,
Իմ ընկերուհի՛, քեզ չի վիճակված
Իբրև նախանձկոտ չարության գերի
Թառամել այս գաղջ անձուկում փակված,
Կեղծ բարեկամի և ոսոխների,
Սառն ու խեղճ մարդկանց խմբով օղակված,
Անպտուղ վախի, անպտուղ հույսի
Եվ գործերի մեջ կեղեքող ու սին։
Առանց կրքերի և տրտում այսպես
Չէ՛, դու չե՞ս մարի այս պարիսպներում,
Լոկ աղոթքի մեջ՝ հավասարապես
Հեռու աստծուց և մարդուց հեռու։
Օ ո՜չ, դու չքնա՞ղ, գեղեցի՛կ էակ,
Քեզ վիճակված է ուրիշ դրություն.
Քեզ սպասում է այլ ցավ ու կրակ
Եվ ծով բերկրանքի ուրիշ խորություն։
Եվ թող երբեմնի քո բաղձանքները
Ու խեղճ աշխարհն այս իր բախտին մնան.
Ես իմացության գոռ հորձանքները
Դրա փոխարեն քո դեմ կբանամ։
Քո ոտքերի տակ իրենց կնետեն
Իմ սպասարկու ոգիները միշտ.
Քեզ՝ գեղեցկուհի, կշրջապատեն
Թեթև ու թովիչ հազար մի նաժիշտ.
Թամա՛ր, քեզ համար ես սրտի դողով
Կառնեմ լուսաստղի պսակը բոցե
Ու ծաղիկների գիշերվա ցողով
Այդ ոսկեճաճանչ պսակը կօծեմ.
Ես բուրումնալից ու մաքուր օդով
Քեզ ամեն կողմից կշրջապատեմ.
Ես սքանչելի նվագով անվերջ
Քո լսելիքը կշոյեմ, Թամա՛ր.
Սաթ ու փիրուզից գեղեցիկ ու պերճ

Մ. Յու. Լերմոնտով, Ընտիր երկեր

Պալատ կշինեմ՝ նորի՛ց քեզ համար.
Կսուզվեմ ծովի հատակը մթար,
Կսուրամ-կանցնեմ ամպերի ետև,
Ողջ երկրայի՛նը, ամե՛ն ինչ կտամ,
Միայն թե սիրիր...

XI

Եվ նա շա՛տ թեթև
Իր այրող բերնով մեղմորեն դիպավ
Նրա շրթներին դողացող ու պաղ.
Թովիչ խոսքերով հրապուրանքի
Պատասխան տվեց ծով աղերսանքին։
Նա իր հայացքը հզոր ու անհագ
Աչքերին հառեց—Թամարին այրեց,
Ու նրա վրա մթան մեջ փայլեց
Ինչ-որ մի անբեկ-անխուսափ դանակ։
Ավա՛ղ, չար ոգին տարավ հաղթանակ։
Նրա համբույրի թույնը մահացու
Ծծվում է իսկույն կրծքի մեջ ջահել,
Եվ տառապալից կույսի ճիչն ահեղ
Խոր լռությունն է հանկարծ սղոցում։
Ամեն ինչով էր այդ ճիչը լեցուն.
Դա ճիչ էր սիրո և տառապանքի,
Վերջին աղերսի ու կշտամբանքի,—
Անհույս հրաժեշտ մի ջահել կյանքի։

XII

Գիշերվա պահակն այդ նույն ժամանակ
Ինչպես միշտ՝ թուջե տախտակը ձեռքին,
Իր սովոր ճամփով, անխոս ու մենակ
Սեպ պարսպի տակ շրջում էր կրկին։
Հասնելով ջահել ճգնուհու խուցին՝
Համաչափ քայլն իր դանդաղեցրեց,
Ինչ-որ մի խոովք հոգին լցրեց,
Եվ ձեռքը սառեց ու մնաց թուջին։

Կեսգիշերային լռության միջից
Թվաց, թե լսեց իր ականջներով,
Որ երկու բերան միացան սիրով,—
Հնչեց սուր հառաչ, կարճատև մի ճիչ։
Եվ ինչ-որ մի պիղծ ու մթին կասկած
Ներս սողաց ծերի սրտի մեջ հանկարծ...
Բայց ամեն ինչ է քիչ հետո լռում,
Լոկ քամին հեռվից տրտունջն է բերում
Փարթամ սաղարթի, և ափի հետ է
Վհատ շշնջում լեռնային գետը։
Մերն շտապում է, երկյուղը հոգում,
Աստվածահաճո սուրբ աղոթքը անել
Եվ փորձությունը չարամիտ ոգու
Մեղավոր մտքից ընդմիշտ դուրս անել.
Մթին կասկածից ալեկոծ կրծքին
Դողդոջ մատներով նա խաչ է հանում,
Եվ ոտքերն շտապ քայլում են կրկին
Ու սովորական լուռ ճամփով տանում։

. . . . . .

XIII

Քնած փերու պես սիրուն ու թովիչ՝
Ահա պառկած է նա իր դագաղում,
Նրա ճակատի գույնը նվաղուն
Ճերմակ էր անգամ երեսի քողից։
Փակվել՝են հավետ կոպերը կույսի...
Օ՜ երկինք, բայց ո՞վ, այդ ո՞վ չէր ասի,
Որ հայացքն այնտեղ ննջում է միայն
Եվ—հրաշալի՛—տենչում է միայն
Կա՛մ տաք համբույրի, կա՛մ արշալույսի։
Սակայն շողերը ոսկե ծոպերով
Անօգուտ անցան նրա կոպերով,
Հարազատները վշտի տակ կքված
Զուր համբուրեցին աչքերն այդ փակված...
Ո՛չ, մահվան դրած կնիքը արդեն
Այլևս ոչ ոք չէր կարող քանդել...

XIV

Իր ուրախության ոսկե օրերին
Չէր եղել երբեք հագուստը նրա
Այսքան բազմագույն և այսքան շռայլ։
Առատ ծաղկունքը ծանոթ ձորերի
(Ըստ սովորության հին-հին դարերի)
Իր բույրն էր փռել Թամարի վրա
Եվ սեղմվելով ձեռքում մեռնողի՝
Տալիս էր կարծես հրաժեշտ հողին։
Ոչի՛նչ, ո՛չ մի բան նրա երեսին
Բնավ չէր խոսում այն վերջի մասին,
Որ եղել էր կիրք, հրայրք կախարդիչ.
Եվ նրա դեմքի գծերը դեռ թարմ
Հագեցած էին մի գեղեցկությամբ,
Որ մարմարն ունի՝ անարտահայտիչ—
Զուրկ զգացմունքից, մտքին անսովոր,
Ինչպես մահն ինքը՝ հար խորհրդավոր։
Մի տարօրինակ ժպիտ էր սառել
Հազիվ առկայծած շրթերին նրա։
Ուշադիր աչքին ժպիտն արդարև
Շատ բան էր պատմում տխուր ու մռայլ։
Կար այդ ժպիտում և՛ արհամարհանք
Մի ծաղկած հոգու, որ թոշնում է հեշտ,
Ե՛վ վերջին մտքի առկայծում արագ,
Ե՛վ երկրին տված անխոս հրաժեշտ։
Նախկին կյանքի ցոլքն իզուր է և սին,—
Դեռ ավելի էր ժպիտն այդ մեռած
Ու սրտի համար առանց թույլ հույսի,
Քան թե աչքերը հավիտյան մարած։
Այսպես վեհ պահին և վերջալույսի,
Երբ ոսկե ծովում իրեն հալելով՝
Ցերեկվա կառքը կորչում է հպարտ,
Մերուկ Կովկասի ձյունները մի պահ
Օրվա կարմրավառ ցոլքը պահելով՝
Դեռ պլպլում են հեռվում միգապատ,
Բայց կիսակենդան այդ շողը նորից

Ցոլք չի հանդիպի էլ անապատում.
Եվ այն կատարից, որ ձյունն է պատում,
Ոչ ոքի ճամփա չի լուսավորի...

XV

Խմբերով եկան դրկից-բարեկամ,
Որ ճամփու դնեն մեռածին ջահել։
Փետելով գլուխն սպիտակահեր,
Կուրծքը ծեծելով՝ մի վերջին անգամ
Իշխան Գուդալը հեծնում է իր ձին։
Թափորն է շարժվում։— Ամբողջ երեք օր
Ու երեք գիշեր նրանք գլխիկոր
Իրենց գնացքը շարունակեցին,
Որ պապենական գերեզմանոցում
Պահ տան մեռածին ցուրտ հողի ծոցում։
Պապերից մեկը Գուդալ իշխանի,
Որ թալանում էր ճամփորդներ, շեներ,
Երբ մահճին գամվեց, և զղջման բարի
Ժամերը հասան՝ խոստացավ շինել
Իր հին մեղքերի թողության համար
Մի եկեղեցի՝ լեռան կատարին,
Ուր երգում է լոկ քամին կատաղի,
Եվ ուր ճախրում են ցիներն անհամար։
Ու սառույցի մեջ ճերմակ Կազբեկի
Շուտով վեր հառնեց մի մենակ տաճար,
Եվ չարագործի աճյունն անհոգի
Այնտեղ թաղվելով լոկ հանգստացավ.
Շիրմատուն դարձավ մի ժայռ, որ ուներ
Ամպ ու թուխպի հետ հար մտերմություն,—
Մոտիկ երկնքից կարծես ջերմություն
Ցուրտ գերեզմանը պիտի ընդուներ...
Կարծես մարդկանցից այսքան հեռացած՝
Մեռածի քունը չի վրդովվելու...
Իզուր է. նրան էլ չի՛ թողելու
Ո՛չ անցած խինդը, ո՛չ թախիծն անցած...

XVI

Անծիր եթերի բիլ հեռաստանում
Ոսկե թևերով մի սուրբ հրեշտակ
Թռչում էր երկրից և գրկում իր տաք
Մի նոր մեղավոր հոգի էր տանում։
Նա հուսադրման քաղցրանուշ խոսքով
Ցրում կասկածներ, պարգևում հանգիստ
Ու լվանում էր աքցունքի հոսքով
Հետքը զանցանքի ու տառապանքի։
Ահա և նրանց ականջին հասան
Դրախտից ձայներ,— և հանկարծ կողքից
Կտրելով նրանց ճանապարհն ազատ՝
Վիհից վեր թռավ ոգին դժոխքի։
Նա գոռ մրրկի պես հզոր էր, հուժկու
Ու փայլատակեց կայծակի նման,
Եվ հանդգնությամբ խելագար հոգու
Հպարտ բարբառեց. «Նա իմն է հիմա»։
Թշվառ Թամարի հոգին ապական
Ելացնելով սարսափն աղոթքով՝
Իր պահապանին հպվեց հավատքով։
Լուծվում էր նրա բախտի ապագան,
Նրա դեմ նորից Դևն էր ծառացել,
Բայց, տե՛ր իմ, նրան ո՞վ կճանաչեր.
Նայում է հիմա ի՞նչ շարությունով,
Հայացքն է լեցուն մահացու թույնով
Մի թշնամության, որ վախճան չունի,
Իսկ անշարժ դեմքը՝ մի սառնությունով,
Որ միշտ փչում է մթայն անձյունից։

«Ջրվի՛ր, կասկածի մռայլ դու ոգի՛,—
Երկնի դեսպանը պատասխան տվեց,—
Քո հաղթանակը բավական տևեց,
Բայց դատաստանի ժամը մոտ թևեց,
Եվ վճիռն ասածը բարի է կրկին։
Փորձության օրերն անցան առհավետ.
Անցաղիկ կյանքի հանդերձանքի հետ

Ջարի կապանքն էլ նրանից ընկավ։
Սպասում էինք, և արդ նա եկավ։
Սա, գիտցի՛ր, ուներ այնպիսի հոգի,
Ում համար կյանքը այլ բան չէ, քան պահ
Մի անտանելի ծանր տանջանքի
Եվ զվարճության անհաս մի ճամփա։
Այդ հոգիները հյուսել է աստված
Մաքուր եթերի կենդանի լարից,
Նրանց համար չէ աշխարհն ստեղծված,
Եվ ոչ էլ նրանք՝ մեղսոտ աշխարհի։
Այն կասկածները, որ կրում էր նա
Ծանր ու թանկ գնով նաև հատուցվեց...
Նա ուռատպում էր ու սիրում էր նա—
Եվ սիրո համար դրախտը բացվեց»։

Ու հրեշտակը ազդու հայացքով
Խստորեն նայեց գայթակղիչին
Եվ իր թևերի զվարթ սլացքով
Սուզվեց երկնքի ցոլքում պաղ ու ջինջ։
Ու պարտված Դևը հրե խոսքերով
Երազներն իր խենթ անիծեց հոգում
Եվ առաջվա պես մնաց ողջ կյանքում
Առանց խնդության և առանց սիրո...

Քարքարոտ լեռան սարավանդակին,
Կոյշաուր հովտի գլխավերևում,
Մինչև հիմա էլ հին ավերակի
Սուր ատամներն են հեռվից երևում։
Երեխաներին սարսափ պատճառող
Շատ բան են պատմում այս բերդի մասին...
Որպես ուրվական, հուշարձանն այս սին՝
Կախարդ օրերի այս վկան լռող,
Սևին է տալիս խիտ ծառերի մեջ։
Աուլն է ցածում փռված անրջում,
Հողն է կանաչում ու ծաղկում անվերջ,

Անկարգ ձայների աղմուկն է կորչում,
Քարավանները օր ու գիշերով
Անուշ զնգոցով գնում են-գալիս,
Ու մուժի միջից գահավիժելով՝
Գետն է փրփրում ու հորձանք տալիս։
Եվ հավերժ ջահել—անանց մի կյանքով,
Ջովով, գարունով, վառ արեգակով
Բնությունն ինքը հրճվում է այնպես՝
Կատակ անելով անհոգ մանկան պես։

Բայց բերդի դեմքին թախիծն է պաղել,
Անցել են և՛ կյանք, և՛ ջահել տարիք
Այն ծերուկի պես, որ ինքն է թաղել
Ընկեր-բարեկամ, սիրած ընտանիք.
Եվ հին դղյակի կենվորներն անտես
Լուսնի լույսին են միայն սպասում,
Այնժամ է կյանքը ազատ մի հանդես,
Ու նրանք բզզում, չորս կողմ են վազում։
Ծերունի սարդը՝ ճգնավոր մի նոր,
Իր ցանցն է հիմնում՝ ինչպես ամեն օր.
Կանաչ մողեսը մեծ ընտանիքով
Խաղում է ուրախ, վազում տանիքով.
Եվ զգուշավոր օձն է դուրս գալիս
Իր մթին ճեղքից ու կամաց սողում
Հինավուրց վանքի մեծ սալաքարին.
Մերթ՝ եռապատիկ օղակվում տեղում,
Մերթ երկարում է, փայլփլում է ջինջ,
Ինչպես մի երկար պողպատե հաստ թուր,
Որ մոռացվել է հին մարտադաշտում
Եվ պետք չէ արդեն էլ զոհված քաջին...
Վայրի է ողջը. անցած օրերի
Ո՛չ մի հետք չկա. ձեռքը դարերի
Ավլել է երկար ու սրբել՝ ինչ կար,
Եվ արդեն ոչի՞նչ հիշել չի տալիս
Պանծալի անունն իշխան Գուդալի,
Նրա սիրելի չքնաղ աղջկան։

Բայց եկեղեցին լեռնագագաթի,
Ուր հողում նրանց ածյունն է պահված,
Սուրբ իշխանության ուժով պահպանված՝
Դեռ երևում է ամպերում մթին.
Դարպասի առաջ հին պահակներին
Փոխարինում են սև գրանիտե
Շիրմաքարերը, և զրահի տեղ
Սառույցն է վառվում նրանց հագներին,
Ու ձյան թիկնոցն է կրծքները պատել։
Հսկա կույտերը նիրհող շեղջերի՝
Ասես ջրվեժներ, որ ցրտի ձեռից
Սառույց են կտրել՝ ծերպերից ամա.
Հոնքերը կիտած կախվել են հիմա։
Փչելով փոշին պատերից այս հին՝
Պահնորդի նման բուքն է ման գալիս
Եվ կանչում է՝ նա մերթ ժամապահին,
Մերթ էլ մի երկար երգ է ձիգ տալիս.
Հեռվում, որտեղից արևն է ծագում,
Այս հրաշալի տաճարի մասին
Լուրեր լսելով՝ շտապ, միասին
Ամպերն են գալիս ի երկրպագում.
Բայց վաղուց ոչ ոք չի թախծում անգամ
Շիրմաքարերին այս ընտանեկան։
Կովկասի ժայռը մռայլ ու արթուն
Իր թանկ ավարն է հսկում միշտ ագահ,
Եվ էլ մշտական տրտունջը մարդու
Չի հուզի նրանց քունը մշտական։

ՀԵՔԻԱԹ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1

Էպիկ պոեմների դարն անցել է արդեն,
Չափածո վիպակն էլ արդ անկում է ապրում։
Դրանում պոետներն այնքան մեղավոր չեն
(Թեև շատ-շատերի ոտքն հաճախ է կաղում)։
Հասարակությունն էլ ճիշտ չէ, պետք է ասել։
Չգիտեմ, թե ով է արդար կամ մեղավոր.
Վաղուց է, ինչ ես չեմ կարդում ոտանավոր.
Ոչ այն պատճառով, որ չեմ սիրում, այլ այնպե՞ս.
Տիծաղելի է մեր հասուն դարում կորցնել
Ոսկի ժամեր ինչ-որ հնչուն տողի համար...
Չէ՞ որ մենք բոլորս էլ գործով ենք զբաղված։

2

Չափածո չեմ կարդում, բայց սիրում եմ մեկ-մեկ
Թերթիկներ գրոտել, թերև կատակ, ժամանց.
Բռնում եմ իմ երգի պոչից խիզախորեն.
Եվ խելքս էլ գնում է եռյակ համահնչման,
Հյութեղ հանգի համար, ինչպես յու-ով, ասենք։
Ահա թե ինչու եմ այս հեքիաթը գրում։
Եվ հանգույցը նրա կախարդական ու մութ
Այստեղ մանրամասն ես չեմ պարզաբանի,
Որ խուսափեմ որոշ հարցաքննությունից,
Սակայն վախճանը անշուշտ կլինի խրատական,
Որպեսզի այն գոնե մանուկները կարդան։

3

Հերոսն հայտնի է, և առարկան էլ նոր չէ.
Լավ է. հնացել է ամեն բան, ի՞նչ կա նոր։
Առաջ երգում էի մի ուրիշ դևի ես,
Պատանեկան ուժով ու հրով եռալով.
Դա զառանցանք էր լոկ մանկան, կրքոտ ու խենթ։

Ո՞վ գիտի, որտեղ է տեսարն այն անձկալի.
Հպվո՞ւմ է մի ձեռնոց արդյոք բուրումնավետ
Նրա թերթերին, և լավո՞ւմ է c'est joli...*
Թե՞ մոխրն է զբաղված նրանով փոշու մեջ։
Սակայն բոլորովին այլ է այս սատանան.
Արիստոկրատ և ո՛չ սատանայի նման։

4

Խնդրեմ այժմ ինձ հետ անցնել ննջասենյակ.
Վարագույրները ալ ցած են թողնված այնտեղ.
Արևելյան գորգի զարդանախշերը վառ
Աչքը դժվարությամբ կարող է նշմարել։
Հաճելի մի դող է համակում ձեզ հանկարծ
Եվ, կուսական շնչով տոգորված, քնածու
Օդն այնտեղ ձեր դեմքին կրակ է արձակում.
Ահա թաթիկ և ուս, ահա և նրանց քով
Բարձերի մարմաշին, նրբագեղ ժանյակով,
Նշմարվում է մատղաշ, բայց խիստ մի կիսաբեմ
Եվ մի դև էլ նրան նայում է ակնդետ։

5

Արդյոք դա հենց ինքը մեծ Սատանա՞ն էր այն,
Թե՞ մի փոքր դիվուկ, նվաստ աստիճանով,
Որոնց մտերմությունն այնքա՞ն պետք է մարդկանց
Մութ գործերի համար, ընտանեկան, սիրո։
Եթե երկրային ձև տրված լիներ նրանց,
Պոզերով, հագուստով կարող էի անշուշտ
Տարբերել հասարակ խուժանն ավագանուց.
Բայց ոգի՞ն—հայտնի է, ի՞նչ ասել է ոգի.
Կյանք, ուժ, զգացմունք, ձայն, զգայարաններ, միտք
Առանց մարմնի, տարբեր ձևերի մեջ հաճախ։
(Ընդունված է նրանց պատկերել այլանդակ)։

* (Սև ժոլի—ֆրանսերեն) սիրուն է։

6

Բայց ես երբեք այդպես չեմ պատկերացրել
Թշնամուն բոլոր սուրբ, մաքուր հակումներով։
Միտքն իմ պատանեկան հաճախ է վրդովել
Կերպարն հզոր։ Շարքում ուրիշ տեսիլքների
Որպես արքա է նա, համր, հպարտ, փայլել
Այնքա՞ն կախարդական-քաղցր գեղեցկությամբ,
Որ սարսափում էի... և հոգիս անձկությամբ
Ճմլվում էր. ցնորքն այդ վայրի տենդորեն
Հետապնդում էր իմ միտքը շատ տարիներ...
Բայց ես, բաժանվելով իմ այլ երազներից,
Բաժանվեցի նաև, երգերով, նրանից։

7

Հիանալի միտք է. ձեր թշնամիների
Դեմքերին նետեցե՛ք միշտ սուր էպիգրամներ.
Եթե կշտամբել եք ուզում բարեկամին,
Ապա գործի՛ դրեք դրամա կամ պոեմ։
Բավական է, գործի՛։ Ես արդեն ասացի,
Որ խորամանկ դևն էր ննջարանում պահված։
Անմեղ քնով այնքան էլ նա չէր զգացված.
Եռում էր նրա մեջ, պա՛րզ է, ոչ թե արյուն,
Ուստի և սերը նա այլ կերպ էր ընկալում.
Գայթակղելի էին նենգ խոսքերը նրա.
Չէ՛ որ անտեղի չէր նա ոգի-սատանա։

8

«Դու չգիտես, թե ես ով եմ, սակայն արդեն
Շատ վաղուց է, ինչ ես կարդում եմ քո հոգին,
Անտես, անլսելի խոսում եմ միշտ քեզ հետ,
Բայց խոսքերն իմ, ինչպես ստվերներ, ի՛մ անգին,
Անցնում են մանկական սրտիդ կողքով, այնպե՞ս.
Եվ նա զմայլվում է դրանցով միշտ հանգիստ
Ու լռությամբ։ Թո՛ղ որ։ Ինչի՞դ է անունն իմ.

Սարսափահար պիտի սերն իմ խելացնոր
Դու մերժեիր. բայց ես սիրում եմ իմ ձևով...
Կարող եմ համբերել ու սպասել համբուն,
Եվ ինձ հարկավոր չեն ո՛չ գգվանք, ո՛չ համբույր։

9

«Երբ ննջում ես, օ՜ իմ երկրային հրեշտակ,
Եվ կուսական արյամբ բաբախում է ուժգին
Անուրջներին տրված սիրտդ երիտասարդ,
Իմացի՛ր, այդ ես եմ, հակված քո սնարին,
Զմայլվում քեզանով, խոսում քեզ հետ անձայն։
Եվ խոր լռության մեջ ես՝ ուսուցիչը քո,
Պատմում եմ գաղտնիքներ հիասքանչ, հոգեթով...
Իմ հայացքին որքա՞ն շատ բան է մատչելի,
Հասկանալի. չէ՛ որ կապերով երկրային
Կաշկանդված չեմ բնավ և հավիտենությամբ
Ու իմացությամբ եմ վերուստ դատապարտված...

10

«Մի անգամ, սրանից քիչ տարիներ առաջ,
Թռչում էի քնած ոստանի վրայով։
Գիշերն էր արձակում կիսալույսն իր ճերմակ.
Բոսոր արևմուտն էր արշալույսի հետ նոր
Խառնվում հյուսիսում, ինչպես ժամադրման
Ողջույնը՝ բաժանման աղերսանքին թախծոտ.
Եվ քաղաքի վրա հնչում էին աղոտ,
Մեղսոտ երազների տարփոտ խոսքերի պես,
Խորհրդավոր ձայներ. իսկ նավերի միջև
Փայլփլում էր, վշշում Նևան լայնատարած
Ու ալիքների հետ ծովն էր տանում նրանց։

11

«Համր պալատների սյուները մտազբաղ
Ստվերների նման խռնված են ափերին.
Լողում էին ջրի փրփուրում գրանիտյա
Աստիճանները լայն նրանց՝ առմուտքերի.

Անցած տարիների բախտորոշ դեպքերի
Բախտորոշ հետքերն էր ալիքը լվանում.
Աստղերն էին ժպտում, կապույտ ու կայծկլտուն,
Բարձունքից նայելով երկրի փոշուն հպարտ,
Երկիրն արժանի էր ասես սիրուն նրանց,
Երկիրը երկնքից թանկ էր նրանց ասես...
Ու ես այն ժամանակ... ես ժպտացի նույնպես...

12

«Խոր հայացք ձգելով շուրջբոլորս՝ տեսա,
Ակամա հրճվանքով, երազներ հանցավոր
Շքեղ պալատների հովանիների տակ,
Շահատենչ աշխատանք լամպի առաջ աղոտ,
Անլուր գաղտնիքների շարաններ դժնդակ.
Սկսեցի որսալ թափառական ձայներ,
Օրհասական ճիչեր, քրքիջներ խելահեղ.
Ախտը մե՛րթ հրճվում էր, մե՛րթ տանջվում ցավագին.
Աղոթքների մեջ ես լսեցի նախատինք,
Սիրո ցնորքներում՝ ցանկություն անպատկառ.
Ամենուր սուտ-կեղծիք, մոլություն, տառապանք։

13

«Սակայն Նևայի մոտ հնամյա մի գյուղակ
Թվաց լի սրբազան երանությամբ անպարզ.
Ամեն ինչ շնչում էր այնտեղ ժառանգական
Փառահեղությամբ ու ճոխությամբ դարավոր.
Ճակատն էր զարդարված գերբով իշխանական.
Նկարեն մարմարյա սյուներ վայելչագեղ
Շարված էին չորս կողմ. նրանց միջև թուջե
Պատշգամբներն էին օդային խմբերով
Հպարտանում չքնաղ զարդաքանդակներով.
Մուգ-թափանցիկ շարքն էր պատուհանների պերճ
Հմայում վանելով հայացքներն անպարկեշտ։

14

«Եղել է ժամանակ բոյարակա՞ն փառքի.
Տերեր էին խոնվում սենյակներում շքեղ,
Անցած արքունիքի նախկին ավագանին,
Մոռացված գործերի աղոտա՞ծ հերոսներ։
Երեկոներն էին թնդում երգ ու պարից,
Լույսերն էին վերից բեկբեկվում Նևայում,
Խոպոպն էր փայլկտում, պուդրայած, գալարուն,
Կարմիր կրնկիկով տոտիկն էր շատ հաճախ
Պայմանական նշան տալիս սեղանի տակ.
Իսկ ծերերն, ակնահեռ, աստղազարդ, միասին
Դատում էին շատ խիստ ֆրանտների մասին։

15

«Այդ դարն անցավ, անցան և այն մարդիկ, նրանց
Ուրիշներն են արդեն փոխարինել. այն հին
Սերունդը վերջացավ, փոշու մեջ գոթական
Դիմանկարները հպարտ պարոնների,
Շուքը սենյակների թոշնել են, մոռացված.
Բակն է ծածկվել խոտով, կորցրել փայլը նախկին,
Աղջամուղջն ու խոնավ մեզն են տիրել հանգիստ
Դահլիճը ընդարձակ... Ամայի է թվում
Տունը խաղաղ, սակայն այնտեղ տերն է ապրում,
Նիհար մի ծերունի, պատվական, վեհադեմ,
Զարացած նոր դարի ու նոր բարքերի դեմ։

16

«Հասակով կլիներ մոտ վերջոկ տասներկու,
Տնայինների հետ խիստ էր անգթաբար,
Միշտ լուռ էր. քայլում էր շուրջ երկու ժամ, ճաշում,
Քնում էր... երբեմն, տանջված անքնությամբ,
Սրամիտ խոսքերի գրքույկներ էր թերթում
Կամ ընթերցում Վոլտեր։ Ի՞նչ անես. մարդկանց մեջ
Ուժեղ է հավատը ավանդության հանդեպ...

Նա ուներ մի դուստր տասնչորս տարեկան,
Հանդիպում էր նրան սակավ։ Գոգնոց կապած
Մադամի հետ էր միշտ սա ճաշելու գալիս.
Նստում էր վայելուչ, իրեն պահում ուղիղ։

17

«Ահաբեկված հորից ու անգլուհու անփույթ
Խստությունից, աճեց նա միշտ մենավորիկ,
Ինչպես հովտաշուշան ապակու ետևում,
Ավելի շուտ՝ գունատ ձյունատակի ծաղիկ։
Բարեկազմ էր, սակայն դեմքից անհետանում,
Փախչում էին կյանքի գույները օրեցօր,
Աչքերն էին դառնում ավելի մտախոհ.
Զգելով գիրքն անհամ՝ նստում էր լռակյաց,
Ավելի հաճույքով, պատուհանի առաջ,
Եվ թափառում էին երազներն իր հեռում,
Քանի դեռ խաղալու չէին հրավիրում։

18

«Այնժամ իջնում էր նա երկար դահլիճ, սակայն
Ինչ-որ ահավոր էր նրան այնտեղ վազել.
Եվ սյուների միջև ինչ-որ տարօրինակ
Մանկան քայլ էր հնչում։ Գերեզման էր ասես
Փորված շնչում այնտեղ մատղաշ կյանքի վրա։
Հայելիների մեջ իրերն էին հայտնվում
Շատ ավելի երկար, շատ ավելի դժգույն,
Հագած ինչ-որ մեռյալ շղարշներ. և հանկարծ
Անորոշ շրշյուն էր լսվում համատարած.
Մե՛րթ որոտում էր, մե՛րթ ավելի մե՛ղմ ու մե՛ղմ
(Ուրվականներ էին նախնյաց, կամ թե մկներ)։

19

«Եվ ի՜նչ. սովորել էր նա յուրովի մեկնել
Այդ ավերակների խոսքը տարօրինակ,
Եվ կրակոտ միտքը սկսելով ճախրել
Գունատ գլխի վրա՝ բերում էր մշուշված,

Աղոտ տեսիլքների օդային երամներ։
Ես չէի բաժանվում նրանից մի վայրկյան.
Ուզում էի լսել թոթովանքը մանկան,
Թրթիռն անմեղ սրտի, համբ, ագահ, անվերջ
Տանջալից կարոտով նրա շնչով արբել,
Ինչպես կյանքով... անշուշտ ծիծաղելի էր դա,
Բայց ինձ համար նոր էր ու հաճելի այնքա՜ն։

20

«Սիրահարվեցի ես։ Իրոք փոքրիկ Նինան
Լավիկն էր չափազանց։ Այդպիսի կիսաղեմ,
Կրակով շնչելով, չեն նկարել անգամ
Ո՛չ Պերուջինոյի վրձինները, ո՛չ էլ
Ռաֆայելի մատի կապարը մոգական։
Թվում էին նրա շարժումները բոլոր
Համակված բացառիկ թովչանքով անսովոր.
Սակայն դեռ մանկական օրերից երբևէ
Չէին դավաճանել մեծ աչքերը իրեն,
Թաքցնելով, մեկ է, վիշտ, թե բերկրանք ու հույս,
Եվ նրանցում մութն էր, ինչպես կապույտ ծովում։

21

«Հասկանում էի, որ հոգիներից է այն,
Ում համար ամեն ինչ վաղ է հասկանալի։
Տառապանքի, բախտի, բարու, չարի համար
Սնունդը նրանց մեջ շատ է. անդառնալի,
Առանց կշտամբանքի, տրտունջի ու զղջման,
Գնում են միշտ այնտեղ, որ դիպվածն է տանում.
Դաս գոյություն չունի նրանց համար կյանքում,
Եվ զգացմունքներին կրկնություն չի տրված...
Այդպիսի հոգիներ ես սիրել եմ շատ վաղ,
Որոնել աշխարհում միշտ ազատության մեջ.
Չէ՛ որ որոշ չափով այդ կարգի եմ և ես։

22

«Նրան հուզում էին անսովոր երազներ.
Գատահում էր դատարկ, ամայի դահլիճում
Երևակայում էր փայլ, պերճանք, ծաղիկներ,
Երաժշտություն, աղմուկ, հյուրերի բազմություն.
Արյունն էր բորբոքվում նեղվածքից տոթահարած,
Ջքնաղ նախշեր էին աչքերին հայտնվում
Իր հանդերձի վրա, խթաններ որոտում,
Մոտենում էր նրան անտես մի կավալեր,
Երևակայական վալսի տանում իր հետ։
Գտտվում էր ինքը բալի մրրկում ահա,
Հետո հոգնած ընկնում բազկաթոռի վրա...

23

«Այստեղ խոնարհելով հայացքն իր խորամանկ
Եվ ի ցույց դնելով հազիվ նկատելի
Ոտիկն իր, ջանում էր սկսել կամաց-կամաց
Խոսակցություն մթին, երկմիտ, անմեկնելի.
Սկզբում ուրախ ու սրամիտ էր տղան,
Երբեմն էլ չափազանց անտարբեր ու անփույթ.
Սակայն վերջում որքա՜ն սիրալիր էր, քնքուշ...
Ինչպե՞ս վարվի. շինծու-խիստ հայացքը նրա
Որոտի պես իրեն ետ էր մղում արագ,
Իսկ սիրտն իր խփում էր այնպես ուժգի՜ն, ուժգի՜ն,
Շուրթերին սառում էր չարաճճի ժպիտ...

24

«Գատահում էր, ամբողջ ժամ հայելու առաջ
Մազերն էր հարդարում, գեղեցիկ ծաղիկներ
Ամրացնում նրանց. աչիկների շարժման,
Թեքված գլխին տալով ինչ-որ ալարկոտ տեսք՝
Կանգնում էր... սովորում. մի անգամ չէ, որ ես
Ցանկացել եմ նրան նենգամիտ խորհուրդ տալ,
Սակայն միաքը նրա ուշիմ, ընկալունակ

Կռահում էր բոլորն ինքը վայրկենապես։
Տարիներ անցկացան լուռ շարքերով այդպես.
Հասավ և հասակն այն, որի մասին այնքա՜ն
Լի են գրքերը ձեր ամեն տխմարությամբ։

25

«Դա մեծ օր էր անշուշտ, տասնյո՜թ տարեկան։
Բոլորն, ինչ մինչև այդ ծածկված էր մութ քողով,
Այժմ գոռոզաբար հայտնվում է լույս աշխարհ։
Հայրը բերել տվեց պառավ հորաքրոջ,
Հարազատներն եկան խորհրդի։ Եվ նրանց
Հուզում էր նախ բալի ընտրությունը հաջող.
Արքունիքից կգա՜ն... Վախեցնում էր այլոց
Ամոթխածությունը ջահել վայրենուհու,
Բայց ինչպես նկատեց մեկ ուրիշը շատ նուրբ,
Այդ կարող է նրան տալ հմայք յուրովի.
Հետո դիտեցին և հանդերձը բալային։

26

«Ահա հասավ նաև երեկոն վճռական։
Առավոտից ասես նա տենդի մեջ լիներ.
Քիչ լացեց, կոտրեց մի ոսկի ապարանջան,
Անհանգստությունից ձեռնոցները պատռեց...
Նա կառք նստեց ինչ-որ ահով ու անձկությամբ.
Ճանապարհին լի էր տագնապով տանջագին.
Դուրս գալով՝ սայթաքեց առմուտքի սանդուղքին...
Եվ, կարկամ դեմքին մի դալկություն վշտահար,
Տարտամորեն մտավ դահլիճ... Մուտքը նրա
Դիմավորեց ինչ-որ տարօրինակ շշուկ.
Ու նկատեց նրան բարձր խավը իսկույն։

27

«Բալն եռում էր, փայլում ամբողջ պայծառությամբ.-
Կար այն ամենն, ինչ որ անվանում են свет.
Այդ անունը ես չեմ տվել նրան, սակայն

Խոր իմաստ ունի այն։ Ընկերներիս այնտեղ
Ես չէի ճանաչի. դեմք, տեսք, ժպիտ, ծիծաղ
Կեղծում էին, ստում այնքա՜ն վարպետորեն,
Որ քիչ էր մնացել տխրեի նույնիսկ ես։
Ականջ դրի... սակայն լսելիքս հազիվ
Կարողացավ որսալ խոսքեր մութ, թռուցիկ.
— Անանուն հույզերի, մտքերի պատառներ՝
Անհայտ գրվածքների ինչ-որ բնաբաններ...

. . . . . .

ԴԻՄԱԿԱՀԱՆԴԵՍ

Դրամա, չորս գործողությամբ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԱՐԲԵՆԻՆ, ԵՎԳԵՆԻ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎԻՉ
ՆԻՆԱ — ԱՐԲԵՆԻՆԻ ԿԻՆՈՋ
ԻՇԽԱՆ ԶՎԵԶԴԻՉ
ԲԱՐՈՆՈՒՀԻ ՇՏՐԱՎ
ԿՆԶԱՐԻՆ, ԱՖԱՆԱՍԻ ՊԱՎԼՈՎԻՉ
ՇՊՐԻԽ, ԱԴԱՄ ՊԵՏՐՈՎԻՉ
ԴԻՄԱԿ
ԱՍՏԻՃԱՆԱՎՈՐՆԵՐ
ԽԱՂԱՑՈՂՆԵՐ
ՀՅՈՒՐԵՐ
ԾԱՌԱՆԵՐ ԵՎ ԱՂԱԽԻՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Պատկեր առաջին

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

Խաղացողներ, Իշխան Զվեզդիչ, Կազարին և Շարիխ
(Սեղանի շուրջը խմբվածները բանկ են դնում և խաղագումար են իջնում... շուրջը մարդիկ են կանգնած)։

1-ԻՆ ԽԱՂԱՑՈՂ

Դե՛, Իվան Իլյիչ, թույլ տվեք իջնել։

ԲԱՆԿ ԴՆՈՂ

Խնդրում, համեցե՛ք։

1-ԻՆ ԽԱՂԱՑՈՂ

Հարյուր ռուբլի։

ԲԱՆԿ ԴՆՈՂ

Լավ։

2-ՐԴ ԽԱՂԱՑՈՂ

Բարի ճանապարհ։

3-ՐԴ ԽԱՂԱՑՈՂ

Դուք ցանկանում եք շտկել ձեր բախտը,
Բայց անհաջող է այդ խաղաքարտը։

4-ՐԴ ԽԱՂԱՑՈՂ

Կրկնապատկեցեք գումարը, իշխա՛ն։

3-ՐԴ ԽԱՂԱՑՈՂ

Թո՛ղ, մի՛ խառնվիր։

2-ՐԴ ԽԱՂԱՑՈՂ

Ամբո՞ղջ գումարով... երկյուղալի է։

4-ՐԴ ԽԱՂԱՑՈՂ

Բարեկամ, ոչինչ չի խոնարհվում,
Կյանքում նա երբեք ոչինչ չի շահում։

3-ՐԴ ԽԱՂԱՑՈՂ (շշուկով, [illegible])

Ուշադիր նայիր դու նրա խաղին։

ԻՇԽԱՆ ԶՎԵԶԴԻՉ

Ամբողջ գումարը։

2-ՐԴ ԽԱՂԱՑՈՂ

Իշխան, խաղացեք առանց բարկության,
Հայրենյաց արյուն է պղտորում միայն։

ԻՇԽԱՆ ԶՎԵԶԴԻՉ

Խորհուրդները գեթ թողեք այս անգամ։

ԲԱՆԿ ԴՆՈՂ

Խփված է, տարա՛։

ԻՇԽԱՆ ԶՎԵԶԴԻՉ

Գրողը տանի։

ԲԱՆԿ ԴՆՈՂ

Թույլ տվեք ստանալ։

2-ՐԴ ԽԱՂԱՑՈՂ (հեգնանքով)

Հրայրքի մեջ եք, և հիմա քամուն կտաք ամենը,
Ասացեք, իշխան, ի՞նչ արժեն ձեր այդ էպոլետները։

ԻՇԽԱՆ

Այդ ձեռք եմ բերել սեփական պատվով,
Եվ դուք չեք կարող այն գնել փողով։

2-ՐԴ ԽԱՂԱՑՈՂ

(ատամների արանքից, հեռանալով)

Ձեր այդ տարիքում և գժբախտ այդքան,

Գոնե քիչ համեստ լինեիք, իշխա՜ն։
(Իշխանը մի բաժակ լիմոնադ խմելով առանձնանում է և խորասուզվում է մտքերի մեջ)։

ՇՊՐԻԽ (մոտենալով՝ կարեկցությամբ)
Իշխան, միգուցե փո՞ղ է հարկավոր... պատրաստ եմ օգնել
Զնչին տոկոսով... կարող եմ թեկուզ մի դար սպասել։
(Իշխանը սառնությամբ գլուխ է՛ տալիս և շրջվում, Շպրիխը անբավականությամբ հեռանում է)։

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

Արբենին և ուրիշներ
(Արբենինը մոտենալով սեղանին խոնարհվում է և ապա նշան անելով Կազարինին, հեռանում նրա հետ)

ԱՐԲԵՆԻՆ
Ի՞նչ է, չե՞ս խաղում արդեն, Կազարին։

ԿԱԶԱՐԻՆ
Մյուսներին եմ նայում ես, եղբա՛յր, իսկ դու, սիրելի՛ս,
Ամուսնացել ես և հարստացել, բարին ես դարձել,
Հին ընկերներիդ խսպառ մոռացել։

ԱՐԲԵՆԻՆ
Այո, վաղուց է չեմ եղել ձեզ մոտ։

ԿԱԶԱՐԻՆ
Ի՞նչ է, տարված ես անվերջ գործերո՞վ։

ԱՐԲԵՆԻՆ
Սիրով... ոչ գործով։

ԿԱԶԱՐԻՆ
Կնոջ հետ մեկտեղ, պարահանդեսով։

ԱՐԲԵՆԻՆ
Ոչ։

ԿԱԶԱՐԻՆ
Իսկ խաղո՞ւմ ես։

ԱՐԲԵՆԻՆ
Ոչ... հանդարտվել եմ։ Բայց նոր դեմքեր եմ նկատում այստեղ,
Այդ պճնամոլին ճանաչո՞ւմ ես դու։

ԿԱԶԱՐԻՆ
Շպրիխն է, Ադամ Պետրովիչը։ Եկ,
Քեզ ծանոթացնեմ նրա հետ իսկույն։
(Շպրիխը մոտենում է և ողջունում)։
Ներկայացնում եմ իմ բարեկամին,
Խնդրեմ, Արբենին։

ՇՊՐԻԽ
Ճանաչում եմ ձեզ։

ԱՐԲԵՆԻՆ
Որքան հիշում եմ, մենք անծանոթ ենք։

ՇՊՐԻԽ
Իրավացի եք,
Սակայն ձեր մասին կողմնակի կերպով այնքան եմ լսել,
Որ վաղուց էի փափագում ձեզ հետ մոտ ծանոթ լինել։

ԱՐԲԵՆԻՆ
Ես, ցավոք-սրտի, ձեր մասին երբեք չեմ լսել ոչինչ։
Բայց հավանաբար ինքս շատ բաներ կլսեմ ձեզնից։
(Նորից միմյանց գլուխ են տալիս։ Շպրիխը դեմքին քթու աբստրակտություն տալով հեռանում է)։

Դուք չեկավ նա ինձ... տհաճ մոտիվներ ես շատ եմ տեսել,
Բայց նման մի տիպ հնարավոր չէ դիտմամբ հնարել։
Ժպիտը՝ չարախինդ, աչքերն՝ ապակյա,
Նայում ես՝ մարդ չէ, ոչ էլ սատանա։

ԿԱԶԱՐԻՆ

Էհ, դու էլ, եղբայր, արտաքին տեսքը ի՞նչ արժեք ունի,
Թող լինի թեկուզ սատանա... բայց նա մարդ է պիտանի.
Փո՞ղ է հարկավոր, պատրաստ է զիջել։
Թե ինչ ազգից է, չեմ կարող ասել.
Ամեն լեզվով էլ խոսում է հմուտ,
Հավանական է, որ լինի ջհուդ։
Գիտե բոլորին և ամենուրեք գործեր ունի նա,
Շատ լավ է հիշում, գիտե ամեն ինչ, հոգսերում թաղված,
Բազմիցս ծեծված, անաստվածի հետ որպես անաստված,
Կեղծ սրբերի մոտ իսկական ճիզվիտ
Եվ թղթախաղի մոլի սիրահար,
Ազնիվ մարդկանց մոտ, գերազնիվ մարդու կատարյալ
տիպար։
Նրան կսիրես, այդ գիտեմ հաստատ։

ԱՐԲԵՆԻՆ

Պատկերը լավ է, բնագիրն է վատ։
Իսկ ո՞վ է ահա երկայնահասակ այն բեղավորը,
Ահա այն մարդը շպարված դեմքով։
Անշուշտ, մոդայի սիրահա՞ր մոլի,
Հոգնած կնամո՞լ, զբոսաշրջի՞կ։
Պատերազմից դուրս հերոս է կարգին,
Դիպո՞ւկ է խփում նա նպատակին։

ԿԱԶԱՐԻՆ

Գրեթե այդպես... մենամարտեց ու վռնդվեց գնդից
Կամ չկամեցավ լինել մասնակից։
Դահիճ դառնալուց սաստիկ վախեցավ,—
Մայրն էլ մի կին էր շատ խստաբարո,—
Երբ որ այդ դեպքից հինգ տարի անցավ,
Մարտահրավեր ստացավ կրկին,
Եվ մենամարտեց այս անգամ կարգին։

ԱՐԲԵՆԻՆ

Իսկ ճանաչո՞ւմ ես դու այն գաճաճին,
Այն թափթփուկին, բարի ժպիտով,
Այն մարդուն՝ խաչով և ծխատուփով...

ԿԱԶԱՐԻՆ

Հա՜, Տրուշչովն է այդ...
Անգնահատելի, հիասքանչ մարդ.
Վրաստանում յոթ տարի ծառայեց,
Կամ թե մեր ինչ-որ գեներալի հետ այնտեղ ուղարկվեց,
Հետո անկյունից սպանեց մեկին,
Ծառայության մեջ հինգ տարին անցավ,
Ինչպես տեսնում եք, խաչ էլ ստացավ։

ԱՐԲԵՆԻՆ

Ծանոթության մեջ դուք շատ գիտակ եք։

ԽԱՂԱՑՈՂՆԵՐ (աղաղակելով)

Կազարին, Աֆանասի Պավլովիչ, այստեղ համեցեք,

ԿԱԶԱՐԻՆ

Գալիս եմ, ահա։

(Կեղծ կարեկցությամբ)

Ուխտադրժության դաժան օրինակ։
Հա՜, հա՜, հա՜, հա՜, հա՜։

1-ԻՆ ԽԱՂԱՑՈՂ

Շտապի՛ր, արա՛գ։

ԿԱԶԱՐԻՆ

Այդ ի՞նչ աղետ է այնտեղ պատահել։
(Աշխույժ խոսակցություն խաղացողների միջև, այնուհետև նրանք հանդարտվում են։ Արբենինը նկատում է իշխան Զվեզդիչին և մոտենում)։

ԱՐԲԵՆԻՆ

Իշխան, դո՞ւք էլ եք այստեղ, այդ ինչպե՞ս։

ԻՇԽԱՆ (անբավականությամբ)

Նույնն ուզում էի հարցնել ես ձեզ։

ԱՐԲԵՆԻՆ

Ձեր պատասխանը կկանխեմ, իշխան.
Ծանոթ եմ վաղուց, հաճախ եմ եղել ես այս շրջանում,
Նայել լռությամբ, համր տագնապով,
Ինչպես էր բախտի անիվը շրջվում,
Ինչպես էր մեկին բարձրացնում երկինք,
Մյուսին ճզմում, խորտակում արագ։
Նայել եմ նրանց առանց նախանձի,
Զզգալով նաև ոչ մի կարեկցանք։
Եվ ջահելներ եմ տեսել բազմաթիվ,
Լիցուն հույսերով, քաղցր, բոցավառ զգացմունքներով,
Շատ անգետներ եմ տեսել երջանիկ,
Որոնք միմիայն տենչում էին սեր։
Երկար չտևեց, չխուսափեցին նրանք կորստից,
Եվ վիճակված է այս ամենն ահա տեսնել ինձ նորից։

ԻՇԽԱՆ (զգացված բռնելով նրա ձեռքը)

Տանուլ եմ տվել։

ԱՐԲԵՆԻՆ

Հետո՞, ի՞նչ արած, ուզում եք խեղդվե՞լ...

ԻՇԽԱՆ

Ես վհատված եմ։

ԱՐԲԵՆԻՆ

Երկու միջոց կա այդ բանի համար.
Կամ երդվել ընդմիշտ խաղից հեռանալ,
Կամ խկուլն նստել և նորից խաղալ։
Բայց թե վճռել եք դուք այստեղ շահել,
Պետք է ամեն ինչ մոռանալ լքել.
Հարազատներիդ, բարեկամներիդ, անգամ պատիվդ,
Պետք է սառնարյուն փորձեք շոշափել
Ձեր ողջ ձիրքերը, ինչպես և հոգին,
Քննել այն մաս-մաս և սովորել պարզ՝
Ձեզ փոքր-ինչ ծանոթ մարդկանց դեմքերին
Տեսնել ու կարդալ բոլոր կրքերը, նաև մտքերը,

Եվ երկարամյա ձեր հմուտ փորձը
Փոխանցել ձեռքի վարժության վրա,
Ատել բնության, ատել մարդկային ողջ օրենքները,
Ցերեկը խորհել, գիշերը խաղալ,
Տառապանքներից հոգու հանգիստը խսպառ մոռանալ
Եվ շրջապատից ձեր տանջանքները ծածկել իմանալ։
Եվ չսարսռալ, եթե հանդիպեք
Ձեզ նման հմուտ խաղացողի հետ,
Եվ չմոռանալ այդ կարճ ցնծության վերջն ամոթալի,
Եվ չկարմրել, երբ ձեզ անվանեն «Ստոր գարշելի»։
(Լռություն: Իշխանը հուզված էր և հազիվ էր նրան լսել):

ԻՇԽԱՆ

Այժմ չգիտեմ, թե ի՞նչ անեմ ես։

ԱՐԲԵՆԻՆ

Կամեցածիդ պես։

ԻՇԽԱՆ

Դախտը այս անգամ գուցե ժպտար ինձ...

ԱՐԲԵՆԻՆ

Այստեղ բախտ չկա, ձեռք քաշեք բախտից։

ԻՇԽԱՆ

Ա՜խ, ես բոլորը տանուլ եմ տվել, ինձ խորհուրդ տվեք։

ԱՐԲԵՆԻՆ

Իշխան, խորհուրդներ չեմ տալիս երբեք։

ԻՇԽԱՆ

Նորից կնստեմ...

ԱՐԲԵՆԻՆ

(ճանկարձ բռնելով իշխանի ձեռքը)

Սպասե՛ք, իշխան, ձեր փոխարեն ես՝ ինքս կնստեմ։
Դուք դեռ չահել եք. չահել հասակում ես էլ ձեզ նման

Եղել եմ անփույթ և ամբարտավան,
Եվ եթե...

(կանգ առնելով)
մեկն ինձ այնժամ արգելեր...
(Սևեռուն նայում է իշխանին)։
(Տոնը փոխելով)

Դե, բախտի համար տվեք ձեր ձեռքը համաձակորեն,
Իսկ մնացածը իմ գործն է արդեն։
(Մոտենում է սեղանին, նրան տեղ են տալիս)։

Հաշմանդամիս էլ ձեր շարքն ընդունեք։
Ուզում եմ փորձել՝ ինչ կտա բախտն ինձ,
Թույլ կտա՞ արդյոք, որ իր հին ծառան
Ամոթանք կրի խաղի այսօրվա սիրահարներից։

ԿԱԶԱՐԻՆ
Բռնկվեց ցասկոտ, չհամբերեց, տե՛ս։

(Ցածրաձայն)
Նայի՛ր, բարեկամ, չխայտառակվե՛ս,
Եվ ապացուցի՛ր, որ լավ իմանան,
Եվ հին վարպետից միշտ զգույշ մնան։

ԽԱՂԱՑՈՂՆԵՐ
Բարեհաճեցե՛ք, խաղաթղթերը ահա վերցրե՛ք,
Դուք՝ այստեղ տանտեր, իսկ մենք էլ՝ հյուրեր։

1-ԻՆ ԽԱՂԱՑՈՂ (երկրորդի ականջին)
Զգուշացի՛ր, հա՛, աչքդ չորս արա,
Ինձ հաճելի չէ Վանկա Կայենն այդ։
Փորձանք չբերի՞ իմ տուզի վրա։
(Խաղը սկսվում է, բոլորը խմբվում են սեղանի շուրջը, երբեմն լսվում են բացականչություններ. հեռագա խոսակցության ժամանակ շատերը մոայլ հեռանում են սեղանից)։ (Շպրիխը Կազարինի հետ գալիս է բեմի առաջնամասը)։

ՇՊՐԻԽ (ճենգարեն)
Նայիր, բոլորը խմբվել են ի մի,
Փոթորիկն արդեն պայթեց երևի։

ԿԱԶԱՐԻՆ
Ամբողջ մի ամիս այդ չեն մոռանա։

ՇՊՐԻԽ
Երևում է, որ հին վարպետ է նա։

ԿԱԶԱՐԻՆ
Այո՛, եղել է։

ՇՊՐԻԽ
Եղե՞լ, իսկ հիմա՞...

ԿԱԶԱՐԻՆ
Իսկ հիմա արդեն ամուսնացել է և հարստացել։
Մի պատկառելի պարոն է դարձել,
Դեմքն էլ անմեղ է ասածո զառան պես,
Բայց իրականում հին գայլն է, գիտե՞ս...
Երբեմն ասում են, մարդն ընդունակ է բնույթն իր փոխել։
Հիմարություն է այդպես մտածել։
Թեկուզ հրեշտակ ինքը ձևանա,
Դարձյալ հոգու մեջ կա մի սատանա։
Դու էլ, բարեկամ։
(Խփելով ուսին)
Թեպետ մանուկ ես դու նրա առաջ,
Բայց քո մեջ էլ է սատանան նստած։
(Երկու խաղացող մոտենում են աշխույժ խոսակցությամբ)։

1-ԻՆ ԽԱՂԱՑՈՂ
Ես քեզ չասացի՞։

2-ՐԴ ԽԱՂԱՑՈՂ
Ի՞նչ անես, եղբայր,
Վեմ-ու ապառաժ բախվեցին իրար,

Մեզ կապալով է առել միասին,
Ամոթ է նույնիսկ հիշել այդ մասին...

ԿԱԶԱՐԻՆ՝ (մոտենալով)
Ի՞նչ է, պարոններ, ուժերից վե՞ր էր։

1-ԻՆ ԽԱՂԱՑՈՂ
Արբենինը ձեր վարպետն է եղել։

ԿԱԶԱՐԻՆ
Դե, ի՞նչ եք ասում, արգո պարոններ։
(Հուզմունք խաղացողների մեջ)։

3-ՐԴ ԽԱՂԱՑՈՂ
Թերևս շահի մի հարյուր հազար, թե այդպես գնա։

4-ՐԴ ԽԱՂԱՑՈՂ (մեկուսի)
Կոկորդում մնա։

5-ՐԴ ԽԱՂԱՑՈՂ
Լավ, տեսե՛ք, բարի։

ԱՐԲԵՆԻՆ (կանգնելով)
Բավ է, վերջացրի։
(Ոսկին հավաքելով հեռանում է, մյուսները մնում են սեղանի շուրջը։ Կազարինը և Շպրիխը նույնպես կանգնած են սեղանի մոտ։ Արբենինը լռությամբ բռնելով իշխանի ձեռքը, փողերը հանձնում է նրան)։

ԻՇԽԱՆ
Ա՜խ, երբեք, երբեք այդ չեմ մոռանա...
Կյանքս փրկեցիք...

ԱՐԲԵՆԻՆ
Փողերը նույնպես,
(Դառնությամբ)
Բայց դե ճիշտն ասած դժվար է պարզել,՝
Որն է դրանցից թանկը իսկապես։

ԻՇԽԱՆ
Մեծ զոհողություն արիք ինձ համար։

ԱՐԲԵՆԻՆ
Օ՜, ամենևին։ Ես հրճվում էի, որ այս դիպվածով
Կարող եմ դարձյալ հուզել արյունս, ուղեղս թմրած
Եվ հոգիս նորից լցնել տագնապով։
Այնպես նստեցի ես թղթախաղի,
Ինչպես եթե դուք գնայիք մարտի։

ԻՇԽԱՆ
Դուք կարող էիք տանուլ տալ սակայն։

ԱՐԲԵՆԻՆ
Ես... Ոչ մի դեպքում... այն երանելի օրերը անցան,
Եվ խաղի բոլոր նրբությունները թափանցիկ դարձան.
Ահա թե ինչու այժմ չեմ խաղում։

ԻՇԽԱՆ
Երախտապարտություններ ինչո՞ւ եք մերժում։

ԱՐԲԵՆԻՆ
Ազնվորեն ասած՝ այդ զգացումը ես չեմ հանդուրժում։
Երբեք ոչ մեկին ես պարտական չեմ եղել իմ կյանքում,
Իսկ եթե մեկին բարիք եմ գործել, ոչ թե նրանից,
Որ համակրել եմ նրան կամ սիրել,
Այլ լոկ հենց այնպես, օգուտ եմ տեսել։

ԻՇԽԱՆ
Ձեզ չեմ հավատում։

ԱՐԲԵՆԻՆ
Մի հավատացեք, ձեզ չեն ստիպում.
Զանձրացրել է ինձ վաղուց այդ ցույցը,
Ձձուլանայի, միգուցե նույնիսկ կեղծավորեի...
Վերջացնենք սակայն մեր այս զրույցը։
(Ուրոշ լռությունից հետո)

Բայց վատ չէր լինի՝ թարմացնեիք մեզ։
Այժմ տոներ են, և հավանաբար Էնգելբերտի մոտ
կազմավորված է դիմակահանդես...

ԻՇԽԱՆ

Այո, խնկապես։

ԱՐԲԵՆԻՆ

Գնա՞նք երկուսով։

ԻՇԽԱՆ

Ինչո՞ւ չէ, սիրով։

ԱՐԲԵՆԻՆ (մեկուսի)

Ես ամբոխի մեջ կհանգստանամ։

ԻՇԽԱՆ

Այնտեղ կանայք կան... ուղղակի հրաշք...
Ասում են այնտեղ. լինում են անգամ...

ԱՐԲԵՆԻՆ

Թող ասեն, մեր ի՞նչ գործն է, բարեկամ,
Դիմակների տակ հավասարվում են աստիճանները,
Դիմակավորը ո՛չ հոգի ունի
Եվ ո՞չ էլ կոչում, ունի լոկ մարմին։
Եվ երբ դիմակով ծածկված են մարդկանց դիմագծերը.
Նրանք համարձակ ի ցույց են դնում զգացմունքները։
(Գնում են)։

ՏԵՍԻԼ ԵՐԲՈՐԴ

Նրանք, բացի Արբենինից և իշխան Զվեզդիչից

1-ԻՆ ԽԱՂԱՑՈՂ

Տեղին վերջացրեց... փոքրանք էր կարծես...

2-ՐԴ ԽԱՂԱՑՈՂ

Ուշքի էլ չեկանք, ջարդեց խնկապես։

ՍՊԱՍԱՎՈՐ (ներս մտնելով)

Ընթրիքը պատրաստ է...

ՏՆԱՏԵՐ

Գնանք, պարոններ,
Շամպայնի գինին գուցե սփոփի կորուստները ձեր։
(Գնում են)

ՇՊՐԻԽ (միայնակ)

Արբենինի հետ մտերմություն եմ ուզում ստեղծել
Եվ ցանկանում եմ ես ձրի ընթրել։
(Մատը դնելով ճակատին)
Դե, կընթրեմ այստեղ, զանազան լուրեր կհավաքեմ ես
Եվ նրանց հետքից կսուրամ ուղիղ դիմակահանդես։

(Հեռանում է, ինքն իրեն մմմտալով)։

Պատկեր երկրորդ

Դիմակահանդես

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

Դիմակներ, Արբենինը և տպա իշխան Զվեզդիչը
(Թազմություն բեմի վրա ետ ու առաջ է քայլում, ձախ կողմում դրված է բազմոցը։)

ԱՐԲԵՆԻՆ (ներս մտնելով)

Ջուր եմ ամենուր փնտրում հաճույքներ,
Խայտում էլ դժժում ամբոխն իմ առաջ...
Պաղել են հոգիս, երազանքս վառ,
Եվ մենք հավիտյան օտար ենք իրար։
(Իշխանը մոտենում է ճոռանչելով)։
Նայեցեք, ահա, ներկա սերունդը։
Ես այդ տարիքում այդպե՞ս եմ եղել։
Ի՞նչ կասեք, իշխան, ոչ մի արկածի դեռ չե՞ք հանդիպել։

ԻՇԽԱՆ

Ամբողջ մի ժամ է շրջում եմ արդեն։

ԱՐԲԵՆԻՆ

Ա՜խ, դուք ուզում եք, որ բախտը իսկույն փարվի ձեր վզի՞ն,
Ա՜յ քեզ նորություն... պետք է հաղորդել ի լուր աշխարհին։

ԻՇԽԱՆ

Դե դիմակներ են, բոլորն էլ հիմար...

ԱՐԲԵՆԻՆ

Դիմակավորը հիմար չէ, եղբայր.
Եթե նա լուռ է՝ խորհրդավոր է,
Իսկ երբ խոսում է՝ ջե՜րմ է, քաղցրանա՜ղ։
Նրա հայացքին, նրա խոսքերին և ժպիտներին,
Վերագրիր դու, ինչ որ կամենաս...
Հապա մի նայեք, ինչ վեհաշուք է ելույթ ունենում
Այն բարձրահասակ, այն դեր թրքուհին...
Ինչպես է կուրծքը աղատ, տարփանքով բաբախում նրա,
Գիտեք ո՞վ է նա։
Թերևս հպարտ մի կոմսուհի է, կամ իշխանուհի,
Հասարակության մեջ մի Դիանա...
Իսկ այս հանդեսում՝ մի նոր Վեներա։
Կարող է նաև այդ գեղեցկուհին
Վաղը ձեզ մոտ գա իրիկնապահին։
Ապահով եղեք, երկու դեպքում էլ դուք կորուստ չունեք։

(Գնում է)

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

Իշխանը և մի դիմակավոր կին
(Դիմակավոր կինը մոտենում է և կանգնում։ Իշխանը կանգնած է մոտախոհ)։

ԻՇԽԱՆ

Այսպես,— խոսելը հեշտ է անկասկած...
Մինչդեռ շարունակ հորանջում եմ ես...
Գալիս է մեկը... օգնի՛ր ինձ, աստված։

(Մի դիմակավոր առանձնանում է և խփում նրա ուսին)։

ԴԻՄԱԿԱՎՈՐ

Ճանաչում եմ քեզ։

ԻՇԽԱՆ

Եվ երևում է, որ չափազանց լավ։

ԴԻՄԱԿԱՎՈՐ

Նույնիսկ գիտեի ինչ էիր խորհում։

ԻՇԽԱՆ

Երջանիկ ես դու ինձնից այդ դեպքում։

(Գողունի նայում է դիմակի տակը)։

Թե չեմ սխալվում,
Սա հիանալի շրթունքներ ունի։

ԴԻՄԱԿԱՎՈՐ

Դուր եմ գալիս քեզ, այդ ավելի վատ։

ԻՇԽԱՆ

Ո՞ւմ համար է վատ։

ԴԻՄԱԿԱՎՈՐ

Մեզանից մեկի։

ԻՇԽԱՆ

Բայց ասա, ինչո՞ւ...
Քո գուշակությամբ ինձ չես վախեցնի,
Ու թեպետ այնքան խորամանկ չեմ ես,
Համենայն դեպս կճանաչեմ քեզ...

ԴԻՄԱԿԱՎՈՐ

Ուրեմն՝ այդպես. դու արդեն գիտե՞ս,
Թե մեր զրույցը ինչ վերջ կունենա։

ԻՇԽԱՆ

Մի քիչ կխոսենք և կբաժանվենք։

ԴԻՄԱԿԱՎՈՐ

Անկասկա՞ծ։

ԻՇԽԱՆ

Այո՛, դու՝ ձախ, իսկ ես՝ աջ։

ԴԻՄԱԿԱՎՈՐ

Իսկ թե եկել եմ դիտմամբ այն մտքով,
Որ քեզ հանդիպեմ, զրուցեմ քեզ հետ.
Եթե քեզ ասեմ, որ դու մի ժամից
Կբերդվես հավերժ չմոռանալ ինձ,
Ուրախ կլինես, որ նույնիսկ կյանքդ ինձ զոհաբերես
Այն ակնթարթին, երբ առանց խոսքի
Ես կանէանամ ուրվականի պես,
Որ ասեմ ես քեզ իմ շրթունքներով
Գեթ մի հատիկ խոսք՝ մնացե՞ք բարով...

ԻՇԽԱՆ

Նելոք դիմակ ես, բայց շատախոս ես,
Թե ծանոթ ես ինձ, ասա, ո՞վ եմ ես։

ԴԻՄԱԿԱՎՈՐ

Դո՞ւ... մի դիմազուրկ, անբարոյական,
Անանտված և շար, մի ինքնահավան, բայց թույլ էակ ես,
Քո մեջ տեսնում եմ մեր ներկա դարը՝
Փայլուն, բայց չնչին։
Ուզում ես կյանքդ իմաստավորել,
Բայց խուսափում ես, փախչում կրքերից,
Դու կամենում ես շատ բան ունենալ։
Բայց զոհաբերել չես կարող ոչինչ։
Ատում ես նվաստ և անսիրտ մարդկանց,
Բայց խաղալիք ես դու ձեռքին նրանց։
Օ՜, ծանոթ եմ քեզ...

ԻՇԽԱՆ

Խոսքերդ անչափ հաճելի են ինձ։

ԴԻՄԱԿԱՎՈՐ

Դու չարիքներ ես շատ անգամ գործել։

ԻՇԽԱՆ

Ակամա, գուցե։

ԴԻՄԱԿԱՎՈՐ

Թերևս այդպես, միայն ես գիտեմ՝
Երբեք չպետք է կանայք քեզ սիրեն։

ԻՇԽԱՆ

Ես սեր չեմ փնտրում։

ԴԻՄԱԿԱՎՈՐ

Փնտրել չգիտես։

ԻՇԽԱՆ

Իզուր փնտրելուց ձանձրացել եմ ես։

ԴԻՄԱԿԱՎՈՐ

Իսկ եթե այստեղ ինքը քո առաջ
Հայտնվի հանկարծ, խաստովանի սեր,
Մի՞թե կարող ես մնալ անտարբեր։

ԻՇԽԱՆ

Սակայն ո՞վ է նա... ինչարկե, իդեալ։

ԴԻՄԱԿԱՎՈՐ

Ո՛չ, սրտի կին է նա,
Մնացյալի հետ գործ մի ունենա։

ԻՇԽԱՆ

Ցույց տուր, համարձակ թող ինձ մոտենա։

ԴԻՄԱԿԱՎՈՐ

Շատ բան ես ուզում, հապա մտածիր ապագայի վրա։
(Ցրոշ լռություն)

Նա չի պահանջում ո՛չ խոստովանանք, ո՛չ հառաչանքներ,
Ո՛չ էլ լաց, աղերս, բոցավառ խոսքեր...

Երդվի՛ր դու միայն թողնել ջանքերդ, ճանաչել նրան...
Եղածի մասին լռել հավիտյան...

ԻՇԽԱՆ

Երդվում եմ երկրով, երդվում երկնքով,
Սեփական պատվով։

ԴԻՄԱԿԱՎՈՐ

Խոսքերս հիշի՛ր, չկարծես կատակ,
Դե՛, այժմ գնանք։

(Թևանցուկ հեռանում են)։

ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ

Արբենինը և երկու դիմակավորներ
(Արբենինը դիմակավոր մարդու թևից բռնած քարշ է տալիս)։

ԱՐԲԵՆԻՆ

Պարոն, ինձ ասացիք այնպիսի խոսքեր,
Որ իմ պատիվը չի կարող տանել...
Գի՞տեք ով եմ ես...

ԴԻՄԱԿ

Գիտեմ ով էիք, ճանաչում եմ ձեզ։

ԱՐԲԵՆԻՆ

Հանեք դիմակը, հիմա էլ նույնպես
Ինձ հետ վարվում եք անպատկառի պես։

ԴԻՄԱԿ

Իսկ ինչի՞ համար.
Իմ դեմքը նույնպես, դիմակիս նման, անծանոթ է ձեզ.
Ես ձեզ տեսնում եմ առաջին անգամ։

ԱՐԲԵՆԻՆ

Ձեզ չեմ հավատում, դուք վախենում եք ինձնից
չափազանց։

Ամոթ է նույնիսկ, որ ես բարկանամ, դուք մի երկչոտ եք.
Աչքերիս չքվե՛ք։

ԴԻՄԱԿ

Մնացեք բարյա՛վ, բայց զգուշացեք,
Աղետ կլինի ձեզ հետ այս գիշեր։

(Անհետանում է տամբախի մեջ)։

ԱՐԲԵՆԻՆ

Սպասի՛ր... կորավ... Ահա քեզ նոր ցավ,
Սակայն ո՞վ էր նա, իհարկե, ինչ-որ վախկոտ թշնամի՝
Որոնցից ունեմ անթիվ անհամար,
Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, գնա՛, բարեկա՛մ, բա՛րի
ճանապարհ...

ՏԵՍԻԼ ՉՈՐՐՈՐԴ

Շպրիխ և Արբենին

(Հայտնվում է Շպրիխը։ Բազմոցի վրա նստած են երկու դիմակավոր կին, ինչ-որ մեկը, մոտենալով նրանց, սկսում է անհանգստացնել, բռնում է ձեռքը... կանանցից մեկը ազատվելով հեռանում է. նրա բազկից վայր է ընկնում ապարանջանը)։

ՇՊՐԻԽ

Ո՞ւմ էիք այդպես անիրազեղ քարշ տալիս,
Եվգենի Ալեքսանդրովիչ։

ԱՐԲԵՆԻՆ

Ոչինչ,
Կատակում էի բարեկամիս հետ։

ՇՊՐԻԽ

Դե այդ նման չէր արդեն կատակի,
Թե ձեր կատակն էր հասել դանակի։
Նա հեռանում էր և ձեզ հայհոյում։

ԱՐԲԵՆԻՆ

Իսկ ո՞ւմ մոտ, պարո՛ն։

ՇԳՐԻԽ

Ինչ-որ դիմակիս

ԱՐԲԵՆԻՆ

Լսողությունդ նախանձ է շարժում։

ՇԳՐԻԽ

Այո, ամեն ինչ ես լավ եմ լսում, լսում ու լռում,
Այլից գործի մեջ քիթս չեմ խոթում...

ԱՐԲԵՆԻՆ

Այդ արդեն պարզ է։ Մի՞թե ամոթ չէ,
Որ դեռ չգիտես, պարոն, այդ մասին...

ՇԳՐԻԽ

Այդ ինչի՞ մասին...

ԱՐԲԵՆԻՆ

Է՜հ, ոչինչ, ոչինչ, մի կատակ էր սա...

ՇԳՐԻԽ

Խնդրում եմ, ասա...

ԱՐԲԵՆԻՆ

Ձեր կինն, ասում են, որ շատ է սիրուն...

ՇԳՐԻԽ

Այո, ի՞նչ կա որ։

ԱՐԲԵՆԻՆ (տոնը փոխելով)

Իսկ այն թիատրեմն, այն բեղավորը գալի՞ս է ձեր տուն։
(Ինչ-որ եղանակ սուլելով հեռանում է)։

ՇԳՐԻԽ (միայնակ)

Լեզուդ պապանձվի... ծիծաղեց վրաս...
Սպասի՜ր, դու էլ պոզեր կունենաս։
(Անհետանում է ամբոխի մեջ)։

ՏԵՍԻԼ ՀԻՆԳԵՐՈՐԴ

1-ին դիմակը միայնակ
(Առաջին դիմակավորը արագ և հուզված է մտնում, քնկնում բազմոցի վրա)։

ԱՌԱՋԻՆ ԴԻՄԱԿ

Հազիվ եմ շնչում... վազում էր անվերջ նա իմ հետևից,
Իսկ եթե հաներ դիմակս... բայց ոչ, չճանաչեց ինձ...
Այն կնոջ մասին, որը շարժում է զարմանք ու նախանձ,
Կարո՞ղ էր լինել որևէ կասկած,
Որ մոռացման մեջ, վզին փարվելով,
Նրանից պիտի խնդրեր մի երկու քաղցր ակնթարթ,
Սիրո փոխարեն լոկ կարեկցություն պիտի աղերսեր,
Եվ հանդգնաբար նրան պիտ ասեր՝ ես քոնն եմ ահա...
Ո՜չ, այդ գաղտնիքը նա չի իմանա... թող այդպե՜ս լինի։
Չեմ էլ ցանկանում... բայց հիշատակ է նա ինձնից ուզում...
Գուցե մատանի...
Ես ինչպե՞ս վարվեմ... հանդգնություն է սա սարսափելի։
(Հատակի վրա տեսնում է ապարանջանը և բարձրացնում)
Ահա քեզ և բախտ։ Աստվա՜ծ իմ, կորցրած մի ապարանջան,
Էմալով, ոսկյա... կտամ, թող առնի...
Հետո սրանով թող ինձ որոնի։

ՏԵՍԻԼ ՎԵՑԵՐՈՐԴ

Իշխան Զվեզդիչը և առաջին դիմակավորը
(Իշխանը լոռնետն աչքերին՝ շտապուցը առաջ է գալիս)։

ԻՇԽԱՆ

Հենց նա է որ կա...
Այժմ ես արդեն հազարների մեջ կգտնեմ նրան։
(Նստում է բազմոցին և բռնում նրա ձեռքը)։
Օ՜, դու այլևս չես փախչի ինձնից։

ԴԻՄԱԿԱՎՈՐ

Ես չեմ խուսափում, ի՞նչ եք ցանկանում։

ԻՇԽԱՆ

Ձեզ տեսնել միայն։

ԴԻՄԱԿԱՎՈՐ

Սիծաղելի բան, ես ձեր առջև եմ...

ԻՇԽԱՆ

Ա՜յ քեզ չար կատակ...
Քո նպատակն է միայն կատակել,
Այնինչ ես ունեմ ուրիշ նպատակ..
Եթե չբացես երկնարժան դեմքդ, հենց այժմ իմ դեմ,
Այն դեպքում ես քո խարդախ դիմակը ուժով կպոկեմ։

ԴԻՄԱԿԱՎՈՐ

Դե, տղամարդուն արի հասկացիր... Անբավական եք...
Մի՞թե հերիք չէ, որ սիրում եմ ձեզ, համարում եք քիչ...
Ձեզ հարկավոր է ամեն, ամեն ինչ.
Դուք կամենում եք նաև պատիվս ոտնակոխ անել,
Որ երբ հանդիպեք պարահանդեսում, ճեմելու ժամին,
Դուք զավեշտալի ձեր արկածները
Սիծաղով պատմեք ձեր ընկերներին.
Նրանց կասկածը ցրելու համար, ասեք՝ ահա նա,
Ձեր մատն ուղղելով իսկույն ինձ վրա։

ԻՇԽԱՆ

Ես այսուհետև ձայնդ կհիշեմ։

ԴԻՄԱԿԱՎՈՐ

Ահա՜ քեզ հրաշք... ինչո՞ւ չէ, խնդրեմ.
Բազմաթիվ կանայք, միևնույն ձայնով խոսում են ինձ պես,
Փորձիր մոտենալ, կխայտառակվես,
Եվ ի դեպ ասած՝ շատ լավ կլիներ։

ԻՇԽԱՆ

Սակայն իմ բախտը անկատար է դեռ։

ԴԻՄԱԿԱՎՈՐ

Ես ո՞նց իմանամ...
Գուցե գոհ պետք է լինեք ձեր բախտից,
Որ ես չեմ հանում դիմակն իմ դեմքից։
Գուցե տգեղ եմ, գուցե պառավ կին...
Ի՞նչ դժգոհություն կիջներ ձեր դեմքին։

ԻՇԽԱՆ

Վախեցնում ես ինձ,
Նանոթ լինելով քո թուլանքների միմիայն կեսին,
Հեշտ է գուշակել մյուսի մասին։

ԴԻՄԱԿԱՎՈՐ (ուզում է հեռանալ)։

Մնացեք բարյա՜վ, առմիշտ, հավիտյան...

ԻՇԽԱՆ

Օ ո՜չ, մի վայրկյան...
Իբրև հիշատակ ոչինչ չե՞ս թողնում
Եվ խելագարիս մի՞թե չես խղճում։

ԴԻՄԱԿԱՎՈՐ (երկու քայլ ետ քաշվելով)

Ես ձեզ խղճում եմ, իրավացի եք,
Ապարանջանս ահա վերցրեք։
(Ապարանջանը նետում է հատակին։ Մինչև այն բարձրացնելը, դիմակավոր կինը խառնվում է բազմությանը)։

ՏԵՍԻՎ ՅՈԹԵՐՈՐԴ

Իշխանը, հետո Արքենինը

ԻՇԽԱՆ

(Հայացքով ապարդյուն որոնում է դիմակավոր կնոջը)։

Իրոք որ հիմար դերի մեջ ընկա...
Կարող եմ նույնիսկ ցնորվել հիմա...
(Նկատելով Արքենինին)
Ա՜ա...

ԱՐԲԵՆԻՆ (մատույց տալիս է գալիս)։
Բայց ո՞վ էր արդյոք այն չար մարգարեն...
Ճանաչում էր ինձ... նա կատակ չարեց։

ԻՇԽԱՆ (մոտենալով)
Ձեր տված դասը ինձ օգուտ բերեց։

ԱՐԲԵՆԻՆ
Ուրախ եմ հոգով։

ԻՇԽԱՆ
Բայց բախտը եկավ հանկարծ, ինքն իրեն։

ԱՐԲԵՆԻՆ
Այդպես է բախտի օրենքը արդեն։

ԻՇԽԱՆ
Հենց այդ էր, նրան մի կերպ բռնեցի.
Մտածելով, որ գործը վերջացավ, երբ մեկ էլ հանկարծ...
(Փշում է ձեռքի ափի վրա)։
Իսկ այժմ անշուշտ պարզ է ինձ համար,
Որ այն ամենը եթե երազ չէր,
Ես եղել եմ մի հիմար արարած։

ԱՐԲԵՆԻՆ
Ոչինչ չգիտեմ, ուստի չեմ վիճում։

ԻՇԽԱՆ
Շարունակում եք անվերջ կատակել,
Ի՞նչ է, չե՞ք կարող վիշտս փարատել։
Ես ձեզ կպատմեմ հիմա ամեն ինչ։
(Ակամայից մի քանի քար է շշնջում)։

Ինչպե՞ս զարմացա։ Այդ չարաճճին
Խույս տվեց ինձնից։ բայց ահա, մի տե՛ս,
(Ցույց է տալիս ապարանջանը)։
Ողբալի վախճան, երազ էր կարծես։

ԱՐԲԵՆԻՆ (ժպտալով)
Սկիզբը վատ չէ... ցույց տվեք տեսնեմ...
Իրոք որ չքնաղ ապարանջան է, կարծես ինչ-որ տեղ
Ինքս տեսել եմ այսպիսի մի բան... որքան հիշում եմ...
Հա՞, սպասեցե՛ք... Անկարելի՞ է... Ո՛չ, մոռացել եմ...

ԻՇԽԱՆ
Որտե՞ղ կարող եմ ես նրան փնտրել...

ԱՐԲԵՆԻՆ
Կարող եք կառչել որևէ մեկից,
Դժվար չէ գտնել, շատ կան դրանցից։

ԻՇԽԱՆ
Իսկ եթե ինքը չլինի հանկա՞րծ։

ԱՐԲԵՆԻՆ
Թեկուզ և այդպես, սակայն ի՞նչ կա որ,
Աղետ չի բերի այդ ձեզ անկասկած։

ԻՇԽԱՆ
Նրան կգտնեմ, թեկուզ և ծովի հատակում լինի,
Ապարանջանը անշուշտ ինձ կօգնի։

ԱՐԲԵՆԻՆ
Այժմ կատարենք մի երկու պտույտ,
Եթե այդ կինը հիմար չէ ու բութ.
Ուրեմն, իշխան, նա այս հանդեսը վաղուց է լքել։

Պատկեր երրորդ

ՅԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

Եվգենի Արբենին (ներս է մտնում)։ Մառաև։

ԱՐԲԵՆԻՆ
Ծրեկուլքն ահա վերջացավ արդեն, ուրախ եմ որքան։
Ժամանակն է, որ գեթ մի ակնթարթ մոռացման
տամ ինձ։

Ողջ խաժամուժը այն խայտաճամուկ, դիմակները այն
Ալեկոծվում են մտքիս մեջ նորից։
Եվ մի՞թե, մի՞թե ծիծաղելի չէր այն, ինչ ես արի...
Խորհուրդներ տվի մի սիրահարի,
Կասկածի առիթ ինձ տվեց ինչ-որ մի ապարանջան...
Այլոց փոխարեն ես երազեցի պոետի նման...
Վկա է աստված, որ իմ տարիքում,
Այդ դերն ինձ բնավ պատիվ չի բերում։

(Մառային)

Ի՞նչ է, տիրուհին դեռ տուն չի՞ դարձել։

ՄԱՌԱ

Բարին, չի դարձել։

ԱՐԲԵՆԻՆ

Իսկ ե՞րբ է գալու։

ՄԱՌԱ

Տասներկու ժամին խոստացավ գառնալ։

ԱՐԲԵՆԻՆ

Արդեն երկուսն է,
Հո չի՞ որոշել գիշերը մնալ։

ՄԱՌԱ

Չգիտեմ, բարին։

ԱՐԲԵՆԻՆ

Իբր չգիտես.. գնա՛, մոմը դի՛ր սեղանի վրա։
Հենց որ պետք լինի, ձայն կտամ՝ կգաս։
(Մառան հեռանում է, Արբենինը նստում է բազմոցի վրա)։

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

ԱՐԲԵՆԻՆ (միայնակ)

Թատաստանն աստծո ճիշտ է և արդար,
Վիճակված է ինձ պատիժս կրել՝

Անցած օրերի մեղքերիս համար։
Եղել է, երբ ինձ այլոց կանայք են սպասել այսպես,
Այժմ կնոջս սպասում եմ ես...
Գեղեցիկ կանանց նենգաթով գրկում,
Հիմարի նման ջահելությունս իզուր վատնեցի.
Շատերն են սիրել ինձ ջերմ, բոցավառ,
Սակայն ոչ մեկին ես չսիրեցի։
Ընթերցած վեպի առաջին էջը,
Պարզ էր ինձ արդեն այդ խաղի վերջը։
Որպես հին հեքիաթ՝ դայակի պատմած,
Ես կրկնում էի սիրո խոսքերը շրջանում կանանց,
Եվ ծանր դարձավ ապրել ինձ համար, կյանքը մռայլվեց...
Եվ այդ ժամանակ մեկն ինձ նենգադավ մի խորհուրդ տվեց,
Որ ամուսնանամ... որ ես ունենամ մի սուրբ իրավունք՝
Էլ չսիրելու կյանքում ոչ մեկին։
Ես գտա նրան, մի հեզ արարած, քնքուշ, գեղանի,
Աստծո գառան պես ինձ համար գամված զոհասեղանին...
Եվ հանկարծ վաղուց մեռած իմ հոգում,
Սիրո խլացած ձայնը լսեցի
Եվ տեսա, որ ես նորից եմ սիրում...
Ամոթ է ասել... ես սարսափեցի...
Զարթնած երազներն ու սերը կրկին
Ալեկոծում են իմ դատարկ հոգին,
Որպես մի խարխուլ, որպես հին նավակ,
Ես դեգերում եմ ծովի մեջ մենակ
Կհասնե՞մ արդյոք բաղձալի ափին։

(Մտասուզվում է)։

ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ

Արբենինը և Նինան

(Նինան ներս է մտնում ոտքի ծայրերի վրա և հետևից համբուրում ամուսնու ճակատը)։

ԱՐԲԵՆԻՆ

Ա՜խ, բարև, Նինա... վերջապես եկար,
Ինչո՞ւ ուշացար։

ՆԻՆԱ

Ի՞նչ, այդքան ո՞ւշ է։

ԱՐԲԵՆԻՆ

Ժամից ավելի սպասում եմ քեզ։

ՆԻՆԱ

Ա՜խ, ի՞նչ լավն ես դու։ Ասա, իսկապե՞ս։

ԱՐԲԵՆԻՆ

Իսկ մտածում ես... Թող այդ հիմարը...
Սպասի, իսկ ես...

ՆԻՆԱ

Ա՜խ, իմ արարիչ...
Դու մոայլ ես միշտ, դժկամ հայացքով,
Անկարելի է քեզ սիրաշահել որևէ բանով։
Երբ անջատվում ենք, տխրում, տրտմում ես,
Երբ միասին ենք՝ դու քրթմնջում ես...
Ասա ինձ. Նինա, լքիր կյանքը այդ,
Ես պիտի ապրեմ քեզ հետ, քեզ համար.
Ինչո՞ւ ողջ օրը քեզ պիտի տեսնի ինչ-որ տղամարդ,
Կորսետավորված մի բուլվարային պճնամոլ հիմար,
Իսկ ես մի ամբողջ օրվա ընթացքում,
Հազիվ եմ քեզ հետ մի ժամ զրուցում, զբաղեցնում քեզ,
Այդ ամենն ասա... և պատրաստ եմ ես։
Ջահելությունս կթաղեմ գյուղում՝
Կթողնեմ մոդան, այս պերճանքները, սրահը պարի։
Մ՛վ ազատությունն իմ այս տաղտկալի։
Բարեկամաբար ասա ինձ միայն...
Բայց ինչո՞ւ եմ ես տարվում խաղերով երևակայության...
Գեկուզ ընդունենք, որ սիրում ես ինձ, բայց այնքան չնչին,
Որ չես էլ խանդում քնավ ոչ մեկին։

ԱՐԲԵՆԻՆ (ժպտալով)

Ի՞նչ կա, սովոր եմ ես անհոգ ապրել։
Դիմադրելի է ինձ համար խանդել...

ՆԻՆԱ

Այո, իհարկե։

ԱՐԲԵՆԻՆ

Դու զայրանում ես։

ՆԻՆԱ

Ոչ, շնորհակալ եմ ես։

ԱՐԲԵՆԻՆ

Ինչո՞ւ ես տխրում։

ՆԻՆԱ

Ուզում եմ ասել, որ ինձ չես սիրում։

ԱՐԲԵՆԻՆ

Նինա...

ՆԻՆԱ

Դե ասա։

ԱՐԲԵՆԻՆ

Լսիր... միևնույն բախտի կապերով
Մենք շղթայված ենք հավերժ մեկմեկու...
Գուցե սխալմամբ, սակայն այդ մասին
Ձենք կարող դատել ո՞չ ես, ո՞չ էլ դու։

(Նստեցնում է ծնկներին և համբուրում)։

Դու ջահել ես դեռ հոգով, տարիքով,
Կենաց մեծ գրքի անվանաթերթն ես կարդացել միայն,
Եվ բաց է քո դեմ ծովը շարիքի ու երջանկության։
Գնա՛ ցանկացած քո ճանապարհով, հուսա՛, երազի՛ր,
Հեռվում ջողում են բազմաթիվ հույսեր։
Իսկ կյանքդ անցյալ մաքուր է, անբիծ։
Ջրճանաչելով իմ ու քո հոգին,
Ինձ հանձնվեցիր հավիտենապես

Եվ սիրում ես ինձ, հավատում եմ քեզ,
Բայց անհոգ, անփույթ, հույզերի խաղով,
Երեխայական անմեղ խայտանքով։
Բայց ես սիրում եմ քեզ մի այլ սիրով,
Կյանքում տեսել եմ, ես զգացել եմ
Եվ հասկացել եմ ամեն, ամեն բան,
Հաճախ սիրել եմ, շատ հաճախ ատել,
Իսկ ամենից շատ ծանր տառապել։
Նախ ես ձգտել եմ ամեն մի բանի,
Հետո ատել եմ տենչերն իմ սիրած,
Մերթ չեմ հասկացել կյանքում ինքս ինձ,
Մերթ մարդկանց համար եղել անթափանց։
Ես վաղ զգացի իմ կյանքի վրա կնիքն անեծքի,
Մոայլ սառնությամբ գիրկս փակեցի
Երկրային բախտի, հույզերի առաջ...
Եվ այսպես անցան երկա՜ր տարիներ։
Խոլ տագնապներում իմ թունավորված օրերի մասին,
Իմ պղծված ջահել օրերի վրա,
Ինչպիսի անհուն խորին գարշանքով,
Թեքված քո կրծքին խորհում եմ հիմա։
Օ՜, թշվառական... առաջ արժեքդ ես չհասկացա...
Բայց կեղևն այդ շոր հոգուս վրայից հեռացավ արագ,
Եվ բացվեց նորից հայացքիս առաջ կյանքը բովանդակ,
Եվ հարյավ հոգիս քո սիրով դարձյալ
Բարի գործերի և կյանքի համար։
Բայց երբեմն ինչ-որ չարագույժ ոգի
Ինձ թոցնում է դեպի փոթորիկն անցած օրերի։
Եվ իմ հուշերից ջնջում է կրկին
Հայացքդ պայծառ ու կախարդական ձայնդ մտերիմ։
Այդ ինքնամարտում, դառը մտքերով ծանրաբեռնված,
Դառնում եմ դաժան, մոայլ լռակյաց։
Վախենում եմ ես, որ սրբապղծեմ քեզ իմ հպումով,
Ուզում եմ, որ դու երկյուղ չկրես ո՜չ հառաչանքից,
Ո՜չ տառապանքիս տխուր ձայներից։
Այնժամ ասում ես «նա չի սիրում ինձ»։

(Նինան ինքնուրույն նայում է ամուսնուն և խաղում մազերի հետ)։

ՆԻՆԱ

Տարօրինա՜կ մարդ.. այդպես պերճախոս
Երբ ինձ պատմում ես քո անզուսպ սերը,
Երբ դու այրվում ես, և աչքերիդ մեջ
Պարզ առկայծում են քո խոր մտքերը,
Հեշտ է հավատալ քո ամեն խոսքին.
Բայց հաճախ...

ԱՐԲԵՆԻՆ

Հաճա՞խ...

ՆԻՆԱ

Ոչ, սակայն մեկ-մեկ...

ԱՐԲԵՆԻՆ

Ես հոգով ծեր եմ, իսկ դու՝ շատ ջահել,
Բայց մենք կարող ենք զգալ հավասար։
Եվ քո տարիքում ես էլ ամենքին
Հավատում էի միամտաբար։

ՆԻՆԱ

Անբավական ես դարձյալ... Աստվա՜ծ իմ...

ԱՐԲԵՆԻՆ

Ո՜չ... երջանիկ եմ, բախտավոր հավետ...
Ես զրպարտիչ եմ, անգութ եմ ու խենթ։
Թող նախանձ ու չար ամբոխը մեզնից միշտ հեռու լինի։
Երջանիկ եմ ես, քեզ հետ եմ քանի։
Թաղենք անցյալը, մոռանանք կյանքն այդ ծանրաշո՛ւք։
խավա՜ր

Այժմ տեսնում եմ, որ արարիչը որպես թանկ պարգև
Քեզ ուղարկել է, Նինա, ինձ համար։

(Համբուրում է կնոջ ձեռքերը և հանկարծ նկատում, որ մի ձեռքի ապարանջանը չկա, լռում է և գունատվում)։

ՆԻՆԱ

Դու գունատվեցիր, դողում ես... աստվա՜ծ։

ԱՐԲԵՆԻՆ (վեր թռչելով)

Ե՞ս... ոչինչ... Ո՞ւր է ապարանջանը։

ՆԻՆԱ

Կորել է, չկա։

ԱՐԲԵՆԻՆ

Կորե՞լ է, չկա՞։

ՆԻՆԱ

Սակայն ի՞նչ կա որ, այդ մեծ աղետ չէ.
Քսանհինգ ռուբլի ընդամենն արժեր,
Այնքան էլ թանկ չէր։

ԱՐԲԵՆԻՆ (մեկուսի)

Կորել է... Սակայն ինչո՞ւ եմ հուզված,
Ինչո՞ւ է կասկածն ինձ այսպես խոցում,
Մի՞թե անցածը եղել է երազ,
Իսկ սա արթնացում...

ՆԻՆԱ

Ճշմարիտն ասած, քեզ չեմ հասկանում։

ԱՐԲԵՆԻՆ

(Աչքերը խաչած, թափանցող հայացքով նայում է կնոջը)։
Ապարանջանը կորե՞լ է, ասա՛...

ՆԻՆԱ (վիրավորվելով)

Ոչ, ասում եմ խոսում։

ԱՐԲԵՆԻՆ (ինքն իրեն)

Բայց որքա՞ն, որքա՞ն նման էր նրան։

ՆԻՆԱ

Հավանական է՝ կառքում է կորել,
Հրամայեցե՛ք թող ծառան փնտրի.
Չէի հանդգնի ինձ հետ վերցնել,
Թե խմանայի...

ՏԵՍԼԱ ՉՈՐԲԱՐԴ

Նրանք և ծառան

ԱՐԲԵՆԻՆ

(Զանգահարում է, ներս է մտնում ծառան)։ (Ստանյին)
Կառքում կորել է մի ապարանջան...
Գնա որոնի՛ր ամեն մի անկյուն,
Կտրված ազատի, թե գաս ձեռնունայն։
(Նինային)

Պատվիս ու բախտիս մասին է խոսքը։
(Ստանն գնում է)։ (Որոշ լռությունից հետո, Նինային)
Իսկ եթե հանկարծ չգտնի կառքո՞ւմ։

ՆԻՆԱ

Ուրեմն՝ կորել է որևէ այլ տեղ։

ԱՐԲԵՆԻՆ

Որևէ այլ տե՞ղ, բայց գիտե՞ս որտեղ։

ՆԻՆԱ

Առաջին անգամ նկատում եմ այդ։
Շատ խստասիրտ եք և նույնքան ժլատ,
Որպեսզի շտապ ձեզ մխիթարեմ,
Հենց վաղը նորը ես կպատվիրեմ։
(Ներս է մտնում ծառան)։

ԱՐԲԵՆԻՆ

Շուտ պատասխանի՛ր, դե ասա՛, ի՞նչ կա։

ԾԱՌԱ

Ամեն մի անկյուն կառքում մանրակրկիտ

ԱՐԲԵՆԻՆ

Չգտա՞ր, չկա՞։

ԾԱՌԱ

Բարին, չգտար։

ԱՐԲԵՆԻՆ

Ես այդ գիտեի... հեռացի՛ր, գնա՛։

(Նշանակալից ճայացքով ճայում է կնոջը)։

ԾԱՌԱ

Անշուշտ կորել է դիմակահանդեսում։

ԱՐԲԵՆԻՆ

Ահա՛... եղե՞լ եք դուք այդ հանդեսում։

ՏԵՍԻԼ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Նրաեմ, բացի ծառայից
Արբենինը և Նինան

ԱՐԲԵՆԻՆ (ծառային)

Գնա՛։

(Նինային)

Մի՞թե ձեզ համար դժվար էր այդպես,
Որ այդ ասեիք դուք ինձ նախապես։
Գուցե հաճեիք թույլ տալ ինձ, տիկին,
Որ ձեզ ուղեկցեմ, տուն բերեմ կրկին։
Չէի խանգարի խիստ հսկողությամբ,
Ոչ էլ անտեղի, հիմար գգվանքով...
Ո՞ւմ հետ եք եղել։

ՆԻՆԱ

Հարցրեք մարդկանց,
Նրանք կպատմեն ամեն-ամեն բան նույնիսկ ուռճացրած,
Քեզ կբացատրեն ողջը, կետ առ կետ,
Թե ով կար այնտեղ, ում հետ եմ խոսել,
Ապարանջանս ում եմ նվիրել։
Եվ հարյուր անգամ լավ կիմանայիք,
Քան եթե անձամբ այնտեղ լինեիք։

(Ծիծաղում է)

Վկա է աստված՝ ծիծաղելի է և՛ ամոթ, և՛ մեղք՝
Աղմուկ բարձրացնել դեպքից մի չնչին։

ԱՐԲԵՆԻՆ

Աստված տա, Նինա, որ դա չլինի ծիծաղ վերջին։

ՆԻՆԱ

Թե շարունակեք այդպես զառանցել,
Անշուշտ, չի կարող վերջինը լինել։

ԱՐԲԵՆԻՆ

Ո՞վ գիտե, գուցե...
Լսիր ինձ, Նինա... ծիծաղելի եմ ես այն պատճառով,
Որ ես քեզ հզոր, մշտնջենական սիրով եմ սիրում,
Ինչպես կարող է մարդ արարածը սիրել աշխարհում։
Եվ զարմանալի ի՞նչ բան կա այստեղ.
Ոմանք կյանքի մեջ ունեն անհամար երաղնե՞ր, հույսե՞ր,
Ոմանք էլ ունեն հարստության սեր,
Մեկը տարված է գիտությամբ անհագ,
Մեկը սիրում է հասարակություն, վայելք, զվարճանք,
Մեկը տենչում է խաչ ու աստիճան կամ փառք սնամեջ.
Մեկը թափառում, մյուսի արյունը
Ալեկոծվում է թղթախաղի մեջ...
Ես թափառել եմ, եղել խաղամոլ և թեթևամիտ,
Ճանաչել եմ ես արժեքն ընկերոջ, սերը նենգամիտ։
Աստիճանների երբեք չեմ ձգտել, փառքի չեմ հասել,
Հարուստ թե աղքատ եղած ժամանակ,
Մաշող ձանձրույթից տանջվել շարունակ,
Զարիք եմ տեսել ես ամենուրեք,
Բայց նրա առջև հպարտ գլուխս չեմ թեքել երբեք։
Այդ դու ես, Նինա, ինչ որ ինձ մնաց կյանքից բովանդակ,
Դու, թույլ արարած, բայց գեղեցկության թովիչ հրեշտակ.
Քո շունչը, սերը, քո վառ հայացքը, ժպիտները քո...
Ես մարդ եմ. քանի դեռ իմն են դրանք,
Առանց քեզ չունեմ ես երջանկություն,
Հոգի, զգացմունք, գոյություն և կյանք։
Բայց եթե իրոք ես խաբված լինեմ, թե լինեմ խաբված...
Եթե ես այդքան երկար ժամանակ
Նենգ օձի լինեմ կրծքիս տաքացրած,

Եթե իրավ է, որ այդ բոլորը ճիշտ եմ դուշակել...
Եվ ինձ քնեցրած քո փաղաքշանքով,
Մի ուրիշի հետ ծաղրել ես դու ինձ...
Լսի՛ր ինձ, Նինա՛... ծնվել եմ կյանքում
Հրավառ հոգով, որպես թեժ լավան,
Քանի հանդարտ է, քանի չի հալվել,
Ամուր ու կարծր է նա քարի նման...
Եվ երբեք կատակ չկարծես, Նինա,
Երբ զարհուրելի մի հեղեղ դառնա։
Այնժամ դու ներում իզուր չհայցես.
Ես օրենքները վրեժիս համար չեմ կանչի պաշտպան,
Եվ մեր երկուսի կյանքը կխզեմ
Առանց արցունքի և կարեկցության։

(Ցանկանում է կնոջ ձեռքից բռնել, բայց սա մի կողմ է նետվում)։

ՆԻՆԱ

Զարհուրելի՞ ես... Ինձ մի՛ մոտենա։

ԱՐԲԵՆԻՆ

Զարհուրելի՞ եմ, ո՞չ, կատակում ես,
Ծիծաղելի եմ... դե, ծիծաղեցե՛ք...
Ձեր նպատակին հասնելուց հետո
Կարիք կա՞ր արդյոք այդպես թպրտալ,
Այդպես թոցնել գույնը երեսի.
Հրճվանքի համար թող շուտ այստեղ գա ջերմ սիրահարդ,
Այդ խաղալիքը դիմակահանդեսի։
Օ՜, ձեր պատճառով դժոխքի բոլոր
Տառապանքները ճաշակել եմ ես,
Հենց այդ էր պակաս ինձ համար կարծես։

ՆԻՆԱ

Ա՜խ, ահա թե ինչ, դուք կատակածում եք,
Եվ պատճառն է լոկ մի ապարանջան.
Ձեր վարքի վրա ոչ թե միայն ես,
Այլ կծիծաղի աշխարհը համայն։

ԱՐԲԵՆԻՆ

Դե՛, քրքջացե՛ք, խաբված հիմարներ,
Դուք, ամուսիններ, և անհոգ, և խեղճ,
Որոնց երբեմն խաբել եմ և ես,
Դուք, որ ապրում եք սրբերի նման այդ դրախտի մեջ...
Այդ պիղծ շուքի տակ.
Բայց դու երկնային, դու իմ երկրային դրախտն ես միակ,
Ընդունիր վերջին հրաժեշտն իմ այս...
Արդեն ամեն ինչ հասկանում եմ պարզ։

(Նինային)

Իսկ դու, բորենի, հեռացիր ինձնից։
Եվ կարծում էի, խենթս, որ կզգա,
Որ նա զղջումով, որ նա վշտացած ողջը ինձ կասի,
Որ նա ծնկաչոք, դեռ ինձ մոտ կգա։
Կմեղմանայի, եթե արցունքի մի շիթ տեսնեի,
Ա՜խ, գոնե մի շիթ այդ աչքերի մեջ...
Բայց նա քրքիջով ինձ պատասխանեց։

ՆԻՆԱ

Չգիտեմ, թե ինձ ով է զրպարտել,
Բայց ներում եմ ձեզ, առանց որևէ մեղք ունենալու,
Ցավում եմ թեպետ չեմ կարող օգնել,
Որ ձեզ սփոփեմ, հո չե՞մ ստելու։

ԱՐԲԵՆԻՆ

Օ՜, բավական է... խնդրում եմ... լռիր...

ՆԻՆԱ

Բայց ես անմեղ եմ... հանուն աստծո...
Ինձ մի պահ լսիր...

ԱՐԲԵՆԻՆ

Ոչչն անգիր գիտեմ, ինչ պիտի ասես։

ՆԻՆԱ

Ծանր է լսել ինձ կշտամբանքներդ...
Եվդենի, չէ՞ որ ես սիրում եմ քեզ։

ԱՐԲԵՆԻՆ

Ժամանակ գտար խոստովանության։

ՆԻՆԱ

Խնդրում եմ, լսի՛ր, օ՜, իմ արարիչ,
Ի՞նչ ես պահանջում արդյոք դու ինձնից։

ԱՐԲԵՆԻՆ

Վրեժխնդրությո՛ւն...

ՆԻՆԱ

Ումի՞ց ես ուզում դու վրեժ լուծել։

ԱՐԲԵՆԻՆ

Այդ ժամը կգա, և կզարմանաք անշուշտ ինձ վրա։

ՆԻՆԱ

Ինձանի՞ց արդյոք... ուրեմն պետք չէ, որ այն ուշացնես։

ԱՐԲԵՆԻՆ

Հերոսությունը սազական չէ ձեզ։

ՆԻՆԱ (արհամարհանքով)

Իսկ ո՞ւմ է սազում։

ԱՐԲԵՆԻՆ

Իսկ ո՞ւմ համար եք դուք երկյուղ կրում։

ՆԻՆԱ

Արդյոք շա՞տ պետք է տառապեմ այսպես.
Օ՜, դադարեցրու... քո խանդոտությամբ դու ինձ կսպանես...
Դու անողոք ես, ես էլ չեմ խնդրի...
Բայց այստեղ դարձյալ ես ներում եմ քեզ։

ԱՐԲԵՆԻՆ

Ավելորդ ջանքեր։

ՆԻՆԱ

Սակայն կա ասված, նա քեզ չի ների։

ԱՐԲԵՆԻՆ

Շատ է ցավալի...

(Նինան արտասվելով հեռանում է)։
(Արբենինը միայնակ)։

Ահա և կինք... վաղուց եմ ծանոթ ես ձեր բոլորին,
Ձեր գգվանքներին, կշտամբանքներին,
Բայց, ափսո՜ս, կյանքը ինձ շատ է կոփել,
Ստիպված եմ ես այդ դասի համար շատ թանկ վճարել...
Եվ, ի դեպ ասած, նա ինչո՞ւ կապվի ինձ հետ իր սիրով.
Ահարկու տեսքի՞ս, ձայնի՞ս պատճառով...

(Մոտենում է կնոջ սենյակի դռանը և ունկնդրում)։

Ի՞նչ է անում նա, հո չի՞ ծիծաղում...
Ո՛չ, արտասվում է։

(Հեռանալով)

Ո՜ւշ է, շա՜տ ափսոս...

Վերջ առաջին գործողության

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՒԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Պատկեր առաջին

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

(Թարոնուին նոգնած նստել է բազմոցին։
Գիրքը մի կողմ է նետում)։

ԲԱՐՈՆՈՒՀԻ

Իսկապես ասած, ինչո՞ւ ենք ապրում, սոսկ նրա համա՞ր,
Որ ստրկանանք և այլոց կամքին միշտ լինենք գերի։
Ժորժ Զանդը ճիշտ է. կինն ի՞նչ է հիմա՝

Կամազուրկ էակ, սոսկ մի խաղալիք այլոց կրքերի։
Նրա դատավորն աշխարհն է համայն,
Այնինչ կյանքի մեջ նա չունի պաշտպան։
Նա պիտք է թաղի բուռն հույզերի բոցը իր հոգում,
Կամ թե խեղդի այն ծաղիկ հասակում։
Կինն ի՞նչ է. մանկուց զոհ է մի հարմար,
Որ պատրաստում են վաճառքի համար։
Մեղադրում են, թե իրեն է սիրում,
Իսկ ուրիշներին սիրել՝ արգելում։
Նրա հոգու մեջ մոլեգնում է մերթ թաքնված կիրքը,
Որ դուրս է վանում երկյուղն ու միտքը.
Իսկ եթե մի պահ կինը մոռանա
Իշխանությունը տիրող բարքերի,
Նետի երեսից քողը կրքերի,
Անձնատուր լինի հույզերին անսանձ,
Այնժամ բախտ, անպորը կկորչեն անդարձ։
Աշխարհը իսկույն քեզնից է կառչում,
Գաղտնի գործերը նա չի հանդուրժում,
Առաքինությունն ու արատները՝
Ընդունում է նա մեր հագուստներով, տեսքով արտաքին,
Իսկ թե մեղանչես պատշաճ կյանքի դեմ,
Կդատի նա քեզ խիստ ու զայրագին։

(Ուզում է կարդալ)։

Չեմ կարող կարդալ... Ես վրդովվեցի.
Սոսկալի են այս մտորումները թշնամու նման...
Իսկ երբ հիշում եմ եղելությունը,
Ես ինքս ինձնից ապշում եմ միայն։

(Ներս է մտնում Նինան)։

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

ՆԻՆԱ

Շրջում էի ես սահնակով այսօր,
Միտք արի այցի գալ քեզ, mon amour[1]։

1 Իմ սիրելի (Ֆրանս.)։

ԲԱՐՈՆՈՒՀԻ

C'est une idée charmante, vous en avez touours.[1]

(Նստում են)։

Այսօր քամի է, օդը սառնալից,
Բայց դու գունատ ես սովորականից,
Աչքերդ կարմրած. հո չե՞ս արտասվել։

ՆԻՆԱ

Հիվանդ եմ այսօր, ես վատ եմ քնել։

ԲԱՐՈՆՈՒՀԻ

Լավ չէ բժիշկդ, ուրիշին դիմիր։

ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ

(Ներս է մտնում իշխան Զվեզդիչը)։

ԲԱՐՈՆՈՒՀԻ (սառնությամբ)

Ա՜խ, դո՞ւք եք, իշխան։

ԻՇԽԱՆ

Եկել էի ձեզ երեկ հայտնելու,
Որ մեր պիկնիկը չի կայանալու։

ԲԱՐՈՆՈՒՀԻ

Նստեցեք, իշխան։

ԻՇԽԱՆ

Նոր վիճում էի, որ կվշտանաք,
Սակայն ձեր դեմքը հանգիստ է այնքան։

ԲԱՐՈՆՈՒՀԻ

Իսկապես ասած, ափսոսում եմ ես։

1 Գեղեցիկ միտք է, ինչպես միշտ ձեզ մոտ (Ֆրանսերեն)։

ԻՇԽԱՆ

Իսկ ես ուրախ եմ։
Քրսան պիկնիկը ինձ համար չարժե դիմակահան։

ՆԻՆԱ

Երեկ դո՞ւք էլ եք եղել հանդեսում։

ԻՇԽԱՆ

Եղել եմ, այո։

ԲԱՐՈՆՈՒՀԻ

Իսկ ի՞նչ հագուստով։

ՆԻՆԱ

Այնտեղ կային շատ...

ԻՇԽԱՆ

Այո և այնտեղ
Դիմակների տակ մեր տիկիններից ես տեսա ոմանց։
Դուք սիրում եք ձեզ զուգել չափազանց։
(Միծաղում է)։

ԲԱՐՈՆՈՒՀԻ (վրդովված)

Ես պարտավոր եմ, իշխան, ձեզ հայտնել,
Որ ամենևին ծիծաղելի չէ բամբասանքը ձեր։
Մի՞թե պատիվն իր ճանաչող մի կին
Թույլ կտա ձուլվել այդ խառնամբոխին,
Ուր թեթևամիտ ամեն մի տականք
Կարող է նետել քեզ վիրավորանք,
Գնալ ճանաչվել որևէ մեկից.
Ամոթ է, իշխան, հրաժարվեցեք ձեր այդ խոսքերից։

ԻՇԽԱՆ

Ոչ, հրաժարվել անկարող եմ ես, ամաչել՝ խնդրեմ։
(Ներս է մտնում մի ատենապետ)։

ՏԵՍԻԼ ՁՈՐԲՈԳ

Նրանք և ատենապետը

ԲԱՐՈՆՈՒՀԻ

Ա՜խ, դո՞ւք, որտեղի՞ց։

ԱՏԵՆԱՊԵՏ

Հենց վարչությունից,
Եկա խոսելու ձեր գործի մասին։

ԲԱՐՈՆՈՒՀԻ

Արդեն վճռեցի՞ն։

ԱՏԵՆԱՊԵՏ

Դեռ ոչ, բայց շուտով...
Ներեցեք, գուցե ձեզ խանգարեցի...

ԲԱՐՈՆՈՒՀԻ

Ոչ, ամենևին։
(Մոտենում են պատուհանին և խոսում)։

ԻՇԽԱՆ (մեկուսի)

Բացատրվելու հարմար ժամանակ։

(Նինային)

Այսօր ձեզ, տիկի՛ն, տեսա խանութում։

ՆԻՆԱ

Այդ ո՞ր խանութում։

ԻՇԽԱՆ

Անգլիական։

ՆԻՆԱ

Վաղո՞ւց էր։

ԻՇԽԱՆ

Հենց նոր։

ՆԻՆԱ

Զարմանալի է, ձեզ չեմ նկատել։

ԻՇԽԱՆ

Զբաղված էիք։

ՆԻՆԱ (արագ)

Հա, ընտրում էի ես ապարանջան,
(Զեռնափսակից հանելով)
Ա՛յ, սրա զույգը...

ԻՇԽԱՆ

Ի՞նչ հիանալի ապարանջան է,
Ո՞ւր է մյուսը։

ՆԻՆԱ

Կորել է։

ԻՇԽԱՆ

Իրո՞ք։

ՆԻՆԱ

Բայց զարմանալու ի՞նչ բան կա արդյոք։

ԻՇԽԱՆ

Եվ այդ գաղտնիք չէ՞, ե՞րբ եք կորցրել։

ՆԻՆԱ

Այս երրորդ օրն է, ոչ հենց երեկ էր կամ անցյալ շաբաթ։
Բայց ձեր ի՞նչ գործն է, երբ է եղել այդ։

ԻՇԽԱՆ

Ես մտածում եմ մի բանի մասին,
Որ գուցե թվա շատ տարօրինակ։

(Մեկուսի)

Հարցը լրջորեն նրան վրդովեց.
Ա՞խ, համե՛ստ կանայք։

(Նրան)

Ցանկանում էի ծառայություն ձեզ առաջարկել...
Ապարանջանի կարող ենք գտնել։

ՆԻՆԱ

Խնդրեմ... բայց որտե՞ղ։

ԻՇԽԱՆ

Իսկ ո՞ւր է կորել։

ՆԻՆԱ

Չեմ մտաբերում։

ԻՇԽԱՆ

Կորել է գուցե պարահանդեսո՞ւմ։

ՆԻՆԱ

Կարող է լինել։

ԻՇԽԱՆ

Կամ հիշատա՞կ եք մեկին նվիրել։

ՆԻՆԱ

Ինչպե՞ս հանգեցիք այդ հետևության։
Ո՞ւմ նվիրեի։ Ամուսնո՞ւս պետք է նվիրեի այն։

ԻՇԽԱՆ

Կարծես մարդ չկա ամուսնուց բացի.
Ընկերուհիներ ունեք անհամար։
Թեկուզ ընդունենք, որ կորել է նա,
Սակայն գտնողը ձեզնից որևէ պարգև կստանա՞։

ՆԻՆԱ (ժպտալով)

Նայած թե ով է։

ԻՇԽԱՆ

Իսկ եթե վաղուց ձեզ սիրում է նա,
Գտել է ձեր մեջ իր երազը հին,
Ձեր ժպիտների, մի խոսքի համար
Նա չի խնայի ոչինչ երկրային։
Եթե ինքներդ ինչ-որ ժամանակ
Վճռել եք անել որևէ ակնարկ՝
Սպասվող բախտի, վայելքի մասին,
Եվ, դիմակի տակ քողարկված դեմքով,
Շոյել եք նրան սիրո խոսքերով...
Օ՜, դե իմացե՛ք, հասկացե՛ք, տիկի՛ն։

ՆԻՆԱ

Ես այդ բոլորից հասկացա միայն,
Որ մոլորվել եք չափազանց, իշխան...
Խնդրում եմ խոնարհ ձեզնից. այսուհետ
Այլևս երբեք չխոսել ինձ հետ։

ԻՇԽԱՆ

Օ՜, աստված, աստված. երազում էի... մի՞թե բարկացաք։
(Ինքն իրեն)

Խույս տվիր ինձնից, շատ բարի, տիկին...
Բայց կգա ժամը, և ես կհասնեմ իմ նպատակին։
(Նինան մոտենում է բարոնուհուն): (Ապտիճանավորը խոնարհվում է և հեռանում)։

ՆԻՆԱ

Adieu, ma chere[1]. Դեռ կհանդիպենք, իսկ այժմ գնամ։

ԲԱՐՈՆՈՒՀԻ

Դեռ-վաց, mon ange[2], չհասցրինք էլ զրուցել անգամ։

[1] Ցտեսություն, սիրելիս։
[2] Իմ հրեշտակ (ֆրանս.)։

(Համբուրվում են)։

ՆԻՆԱ (գնալով)

Լավ, քեզ կսպասեմ վաղն առավոտից։

ԲԱՐՈՆՈՒՀԻ

Երկար կթվա օրը շաբաթից։

ՏԵՍԻԼ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Նրանք, բացի Նինայից և ապտիճանավորից

ԻՇԽԱՆ (մեկուսի)

Վրեժս կառնեմ. ա՜յ քեզ համեստ կին,
Ասենք հիմար եմ, թող խույս տա այդպես,
Ապարանչանը ճանաչեցի ես։

ԲԱՐՈՆՈՒՀԻ

Ինչո՞ւ եք այդպես մութերով տարվել։

ԻՇԽԱՆ

Ես ստիպված եմ շատ բան մտորել։

ԲԱՐՈՆՈՒՀԻ

Աշխույժ զրույց էր ձեր մեջ սկսվել։
Ի՞նչ էիք վիճում։

ԻՇԽԱՆ

Ես պնդում էի, որ հանդիպել եմ դիմակահանդեսում։

ԲԱՐՈՆՈՒՀԻ

Իշխան, ո՞ւմ։

ԻՇԽԱՆ

Նրան։

ԲԱՐՈՆՈՒՀԻ

Ինչպե՞ս, Նինայի՞ն։

ԻՇԽԱՆ

Այո՛, Նինային, և Հաստատեցի։

ԲԱՐՈՆՈՒՀԻ

Պարզ է ինձ համարել
Որ մարդկանց դեմքին չարախնդում եք դուք անդադար

ԻՇԽԱՆ

Իմ տարօրինակ վարքի պատճառով։

ԲԱՐՈՆՈՒՀԻ

Ինքն այստեղ չէ, նրան խնայեք,
Չէ՞ որ դուք ոչ մի ապացույց չունեք։

ԻՇԽԱՆ

Ո՛չ... փաստեր ունեմ, ապարանջանը երեկ տվեց ինձ,
Մյուսն իր մոտ է, հենց ճիշտ սրանից։

ԲԱՐՈՆՈՒՀԻ

Ա՛յ քեզ ապացույց, լավ փաստ եք գտել,
Ամեն խանութում կա այդ տեսակից։

ԻՇԽԱՆ

Բոլոր խանութներն այսօր շրջեցի,
Սրանցից չկան. ես համոզվեցի։

(Որոշ լռություն)

ԲԱՐՈՆՈՒՀԻ

Հենց վաղը խորհուրդ կտամ Նինային՝
Հավատ չընծայել շաղակրատներին։

ԻՇԽԱՆ

Իսկ ինձ ի՞նչ խորհուրդ։

ԲԱՐՈՆՈՒՀԻ

Չե՞ղ, ահա թե ինչ.
Վարել այդ գործը հաջող սկսած,
Ավելի հարգել պատիվը կանանց։

ԻՇԽԱՆ

Զուլգ խորհուրդների համար ձեր տված,
Շնորհակալ եմ ձեզանից կրկնակի։

ՏԵՍԻԼ ՎԵՑՆԵՐՈՐԴ

ԲԱՐՈՆՈՒՀԻ

Գնոց պատիվը ենթարկել այսպես ծաղր ու ծանակի՝
Թե ճանաչվեիր նույն բանը անշուշտ սպասում էր ինձ։
Եվ այսպես, իշխան, մնացեք բարով,
Ես ձեզ չեմ հանի մոլորությունից. ոչ, ասված փրկի։
Միայն մի բան է ինձ զարմանալի. ապարանջանը
Ես ինչպե՞ս գտա. ուրեմն Նինան այնտեղ է եղել,—
Եվ ահա լուծումն այս հանելուկի։
Չգիտեմ ինչո՞ւ, նակայն սիրում եմ ես այդ իշխանին,
Գուցե ձանձրույթի՞ց, վշտի՞ց կամ խանդի՞ց... այրվում եմ, մաշվում։

Ոչ մի բանի մեջ բերկրանք չեմ գտնում։
Կարծես լսում եմ ծաղր ու ծանակը դատարկ ամբոխի
Եվ ափսոսանքի շշուկները շար։
Ոչ, այդ ամոթից ինձ պետք է փրկեմ, փրկեմ անպատճառ...
Ուրիշի հաշվին թեկուզ այդ՝ լինի,
Եվ նույնիսկ եթե տանջանքով քավեմ
Այս նոր հանցանքը իմ արարքների...

(Մտածվում է)։

Այս ի՞նչ շղթա է ահավոր, անմիտ ձեռնարկումների։

ՏԵՍԻԼ ՏՈՒԹԵՐՈՐԴ

Բարոնուհին և Շպրիխը

(Շպրիխը ներս մտնելով խոնարհվում է)։

ԲԱՐՈՆՈՒՀԻ

Ա՜խ, Շպրիխ, Շպրիխ, դու հայտնվում ես միշտ ժամանակին։

ՇՊՐԻԽ

Խնդրեմ, ես ինձ շատ ուրախ կզգայի,

Ձեզ որևէ կերպ եթե օգնեի.
Ձեր ամուսինը...

ԲԱՐՈՆՈՒՀԻ

Ա՜հ, սիրալի՞ր ես արդյոք միշտ այդպես։

ՇՊՐԻԽ

Այո, բարեմը, էն լուսահոգին...

ԲԱՐՈՆՈՒՀԻ

Հինգ տարի առաջ, այդ հիշում եմ ես։

ՇՊՐԻԽ

Պարտք առավ հազար...

ԲԱՐՈՆՈՒՀԻ

Գիտեմ, բարեկամ,
Սակայն հինգ տարվա քո տոկոսները
Հենց այսօր կտամ։

ՇՊՐԻԽ

Ներեցեք, ինքս դրամի կարիք չեմ զգում հիմա,
Ես պատահաբար հիշեցի, այնպես։

ԲԱՐՈՆՈՒՀԻ

Ի՞նչ նոր բան գիտես։

ՇՊՐԻԽ

Մի կոմսի մոտից հենց նոր դուրս եկա,
Շատ բան լսեցի, շատ նորություն կա։

ԲԱՐՈՆՈՒՀԻ

Արբենինայի, Զվեզդիչի մասին ոչինչ չե՞ս լսել։

ՇՊՐԻԽ (տարակուսանքով)

Ո՜չ, ո՜չ... լսել եմ... ինչպե՞ս չեմ լսել...
Այդ մասին վաղուց խոսել են, լռել։

(Մեկուսի)

Հա՜, սպասիր... միտս չի գալիս, ա՜յ քեզ զարմանք բան։

ԲԱՐՈՆՈՒՀԻ

Թե բացահայտ է ամեն ինչ այդքան,
Ուստի հարկ չկա ոչինչ ասելու։

ՇՊՐԻԽ

Սակայն կուզեի ձեզնից ես լսել,
Ինչպե՞ս եք հաճում այդ մասին դատել։

ԲԱՐՈՆՈՒՀԻ

Նրանք աշխարհի կողմից են դատված։
Ի դեպ, կարող եմ խորհուրդ տալ նրանց.
Իշխանին կասեմ՝ տղամարդու մեջ
Հաստատուն կամքն են մեր կանայք սիրում,
Որ նա անհամար արգելքներ անցնի,
Զգտի և հասնի իր հերոսուհուն։
Արբենինային խորհուրդ կտայի, որ նա մեղմացներ
Իր խստությունը և ավելացներ համեստությունը։
Դե, մոսյո Շպրիխ, սպասում է ինձ քույրս ճաշելու,
Այլապես քեզ հետ ես կմնայի ավելի երկար։

(Հեռանալով)։ (Մեկուսի)։

Այժմ փրկված եմ, օգտակար եղավ այս դասն ինձ համար։

ՏԵՍԻԼ ՈՒԹԵՐՈՐԴ

ՇՊՐԻԽ (միայնակ)

Հանգիստ մնացեք, արդեն հասկացա,
Այժմ ինձ համար պետք չէ կրկնություն։
Խելքի և մտքի ի՞նչ արագություն։
Այստեղ ինտրիգ կա... Ես կխառնվեմ գործերին նրանց,
Դե գոհ կլինի իշխանն անկասկած։
Ես գործակալը նրա կլինեմ...
Քարոնուհուն էլ լուրեր կբերեմ։
Ցոսկ այս միջոցով կորզեմ երևի
Հնգամյա տոկոսն իմ գումարների։

Պատկեր երկրորդ

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

Արբենինի առանձնասենյակը
Արբենինը միայնակ, հետո ծառան

ԱՐԲԵՆԻՆ

Խանդիս ամեն ինչ պարզ է, բայց ավա՜ղ, ապացույց չունեմ,
Երկյուղ եմ կրում սխալ գործելուց,
Բայց սպառվում է իմ համբերանքը։
Ուրեմն թողնե՞լ, մոռանա՞լ այսպես զառանցանքն այս կարճ.
Գերեզմանից էլ զարհուրելի է այսպիսի կյանքը։
Մարդիկ եմ տեսել թմրած, պաղ հոգով,
Որ փոթորկի մեջ հրճվում են, նիրհում երջանիկ քնով.
Նախանձելի է այդպիսի կյանքը։

ԾԱՌԱ (ներս մտնելով)

Ներքևում ինչ-որ մարդ է սպասում,
Տիրուհու համար երկտող է բերել նա իշխանուհուց։

ԱՐԲԵՆԻՆ

Ո՞ր իշխանուհուց։

ԾԱՌԱ

Չիմացա, բարին։

ԱՐԲԵՆԻՆ

Երկտո՞ղ. Նինայի՞ն...

(Գնում է, ծառան մնում է)։

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

Աֆանասի Պավլովիչ Կազարինը և ծառան

ԾԱՌԱ

Ահա քիչ առաջ բարինը գնաց,
Փոքր-ինչ սպասեք։

ԿԱԶԱՐԻՆ

Կսպասեմ, բարի։

ԾԱՌԱ

Իսկույն կհայտնեմ։

(Գնում է)։

ԿԱԶԱՐԻՆ

Սպասել պատրաստ եմ, որքան կամենաք, թեկուզ մի տարի,
Մոսյո Արբենին, ես ձեզ կսպասեմ։—
Գործերս վատ են, ինձ համար ահա այդ է ցավալի։
Հմուտ ընկերոջ խիստ կարիք ունեմ,
Վատ էլ չէր լինի, այո, եթե նա
Մեծահոգի և անձնվեր լիներ,
Եվ երեք հազար ճորտեր ունենար,
Վերնախավի մոտ՝ հովանավորներ։
Ես Արբենինին պետք է խաղի մեջ գրավեմ կրկին,
Առաջվա նման անձնվիրաբար
Նա կպաշտպանի իր բարեկամին,
Նորելուկներից նա չի շփոթվի։
Էհ, ջահելներն այս,
Ցավ են, պատուհաս։
Քարոզիր նրանց, ինչպես կամենաս,
Նրանք ո՛չ տեղին սկսել գիտեն, ո՛չ ճիշտ վերջացնել,
Ո՛չ ազնիվ լինել պահանջված դեպքում։
Ո՛չ էլ խաղի մեջ բարձրուք կեղծել։
Նայեցեք ահա ծերունիներին,
Շատերը խաղով հասել են բարձր աստիճանների,
Ցեխից բարձրացել,
Վերնախավի հետ կապ են ստեղծել։
Եվ այդ բոլորը գիտե՞ք, թե ինչպես.
Գործել են նրանք պատշաճ, անթերի,
Օրենքները միշտ լավ են պահպանել,
Ամեն կանոնի հետևել... և տես...
Հասել են պատվի ու միլիոնների։

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

Կազարին և Շպրիխ

(Ներս է մտնում Շպրիխը)։

ՇՊՐԻԽ

Դո՞ւք եք, Կազարին, իսկակա՞ն հրաշք։
Որքա՞ն ուրախ եմ, չէի սպասում ես ձեզ հանդիպել։

ԿԱԶԱՐԻՆ

Ես նույնպես։ Ի՞նչ է, այցի՞ ես եկել։

ՇՊՐԻԽ

Ես այո, իսկ դո՞ւք։

ԿԱԶԱՐԻՆ

Դե ես էլ նույնպես։

ՇՊՐԻԽ

Այս ի՞նչ լավ եղավ, որ հանդիպեցինք,
Մի գործի մասին ցանկանում էի ձեզ հետ զրուցել։

ԿԱԶԱՐԻՆ

Շատ գործերով ես դու միշտ զբաղվել,
Առաջին դեպքն է, որ զբաղված ես մի գործով միայն։

ՇՊՐԻԽ

Bon mot* ասածը ձեզ մոտ գին չունի,
Սակայն այս գործը շատ է պետքական։

ԿԱԶԱՐԻՆ

Ինձ էլ շատ է պետք քեզ հետ զրուցել։

ՇՊՐԻԽ

Մեր գործն ուրեմն սահուն կընթանա։

* Սրամտություն (ֆրանսերեն)։

ԿԱԶԱՐԻՆ

Չգիտեմ... Շպրիխ, դե խոսի՛ր հապա։

ՇՊՐԻԽ

Թույլ տվեք ես ձեզ մի բան հարցնեմ,
Լսե՞լ եք արդյոք, որ Արբենինը, ձեր բարեկամը...
(Մատներով գլխի վրա եղջյուրներ է պատկերում)։

ԿԱԶԱՐԻՆ

Անկարելի է։ Դու հաստա՞տ գիտես։

ՇՊՐԻԽ

Աստվա՛ծ իմ, հապա էլ ո՞վ իմանա.
Հենց նոր այդ գործը գլուխ բերի ես։

ԿԱԶԱՐԻՆ

Միշտ չար սատանան հետևում է մեզ։

ՇՊՐԻԽ

Ա՛յ, պատմեմ. նրա կինը նորերս,
Պարահանդեսում, թե ճաշկերույթում,
Այդ լավ չեմ հիշում. տեսնում է ինչ-որ մի իշխանիկի,
Եվ դուր է գալիս նրան շատ սաստիկ,
Իսկ մեր իշխանը դառնում է շուտով սիրված, երջանիկ։
Բայց գեղեցկուհին նրա դեմ հանկարծ,
Ձևանում է մի անմեղ արարած։
Դե, կատաղում է իշխանը արդեն,
Դեպքը պատմելով թռչում դես ու դեն։
Գործը կունենար թշվառ հետևանք,
Ուստի ինձ ոմանք խնդրեցին հարթել...
Ձեռնամուխ եղա և անմիջապես գործը շտկեցի.
Խոստացավ իշխանն այդ մասին լռել...
Մի երկտող գրեց, ձեր խոնարհ ծառան թեթև ուղղելով,
Նույն ժամին, իսկույն իր տեղը բերեց։

ԿԱԶԱՐԻՆ

Զգո՛ւյշ ամուսնուց, հանկարծ չպոկի ականջներդ այդ։

ՇՊՐԻԽ

Ավելի դժվար գործեր եմ տեսել,
Բայց անց եմ կացրել առանց մենամարտ։

ԿԱԶԱՐԻՆ

Նույնիսկ չե՞ս ծեծվել։

ՇՊՐԻԽ

Ձեզ մոտ ամեն ինչ ծիծաղ է, կատակ...
Իսկ ես միշտ կասեմ, որ կարիք չկա
Կյանքը վտանգել առանց նպատակ։

ԿԱԶԱՐԻՆ

Այո, իսկապես,
Կյանքդ բոլորի համար թանկագին՝
Մեծագույն մեղք է իզուր ենթարկել անմիտ վտանգի։

ՇՊՐԻԽ

Այդ թողնենք մի կողմ, բայց ուզում էի
Ձեզ հետ զրուցել լուրջ գործի մասին։

ԿԱԶԱՐԻՆ

Իսկ այդ ի՞նչ գործ է։

ՇՊՐԻԽ

Անեկդոտ։ Ահա բանն ինչումն է, տե՛ս։

ԿԱԶԱՐԻՆ

Զքվի՛ր այստեղից դու էլ, քո գործն էլ,
Արբենինն ահա գալիս է կարծես։

ՇՊՐԻԽ

Ոչ ոք չի գալիս. լսի՛ր, Վերջերս կոմս Վրուտիից
Հինգ որսկան շուն են բերել ինձ համար։

ԿԱԶԱՐԻՆ

Օ՜յ ասսված վկա, քո անեկդոտը շատ է գրավիչ։

ՇՊՐԻԽ

Եղբայրդ որսորդ է, շատ լավ կանեիք, եթե գնեիք։

ԿԱԶԱՐԻՆ

Եվ Արբենինը հիմարի նման...

ՇՊՐԻԽ

Լսեցե՛ք, սակայն...

ԿԱԶԱՐԻՆ

Երվել է, թաղվել գործերում ահաճ,
Բացահայտորեն ծաղրված, խաբված,
Դե ամուսնացեք սրանից հետո։

ՇՊՐԻԽ

Բայց եղբայրը ձեր,
Այդ գյուտով, գիտեմ, անչափ կհրճվեր։

ԿԱԶԱՐԻՆ

Ամուսնության մեջ բախտ, վստահություն՝ սուտ է ամեն ինչ։
Շպրի՛խ, ձե՛ռք քաշիր ամուսնությունից։

ՇՊՐԻԽ

Բայց դե վաղուց եմ ես ամուսնացած...
Դրանցից մեկը հազվագյուտ մի գանձ։

ԿԱԶԱՐԻՆ

Այդ ո՞վ, քո կի՞նը։

ՇՊՐԻԽ

Ոչ, պարո՛ն, շունը։

ԿԱԶԱՐԻՆ

Հոգիս հանեցիր դու քո շներով.
Լսի՛ր, սիրելի դու իմ բարեկամ,
Թե քո կնոջ հետ ինչպես կվարվես, ասածուն է Գայանեի,
Բայց այդ շները շուտ չես սաղացնի։

(Ներս է մտնում Արբենինը նամակը ձեռքին. նրանք կանգնած են գրասեղանի մոտ, ձախ կողմում, և նա նրանց չի նկատում)

Մտասուզված է, նամակն էլ ձեռքին. հետաքրքի՞ր է։

ՏԵՍԻԼ ՋՈՐՈՐԴ

Նրանք և Արբենինը

ԱՐԲԵՆԻՆ

(նրանց չնկատելով)

Ա՛յ քեզ երախտիք... և վաղո՞ւց է, որ
Չճանաչելով գրնթե նրան,
Փրկեցի նրա պատիվն, ապագան։
Եվ ի՞նչ, այդ օձը գողունի խաղով ներս սողաց տունս,
Խայտառակությամբ և ամոթանքով ծածկեց անունս։
Անցյալ օրերիս փորձը դառնագին մոռացած խպառ,
Ես այդ բոլորը համարում էի աչքերի պատրանք,
Երեխայի պես միամտաբար
Չէի հանդգնում նույնիսկ կասկածել այդպիսի հանցանք։
Ես կարծում էի, որ մեղավորը իմ կինն է միայն...
Մտածում էի, որ չի ճանաչել այդ մարդը նրան,
Որ գիշերային իր արկածները նա կմոռանա,
Մի տարօրինակ երազի նման։
Նա չմոռացավ, որոնեց, գտավ,
Եվ նույնիսկ այստեղ նորից կանգ չառավ...
Ես այս աշխարհում շատ բան եմ տեսել,
Բայց զարմանալու նոր առիթ եղավ։

(Նամակը վերընթերցում է)։

«Թեև ձեզ գտա, բայց չկամեցաք դուք խոստովանելու։
Օ՜, համեստության տե՞ղն է իսկական։
«Բամբասանքից էլ չար բա՞ն կա... Եվ դուք ճիշտ եք անկասկած.
Մեզ կարող էին ունկնդրել հանկարծ։
Ես ձեր բոցավառ աչքերի խորքում
Երկյուղ կարդացի և ոչ թե մերժում։

Գաղտնի՞ք եք սիրում, գաղտնիք կմնա.
Բայց ես պատրաստ եմ զրկվելու կյանքից,
Քան հրաժարվել երբևէ ձեզնից»։

ՇՊՐԻԽ

Հենց այն նամակն է, կորա՜վ ամեն ինչ։

ԱՐԲԵՆԻՆ

Հմո՜ւտ գայթակղիչ, շա՜տ լավ. սպասե՛ք,
Ձեզ արնաշաղախ պատասխան է պետք։
(Կազուրինին)

Ա՜խ, դու այստե՞ղ ես։

ԿԱԶԱՐԻՆ

Ամբողջ մի ժամ է սպասում եմ քեզ։

ՇՊՐԻԽ

(մեկուսի)

Ես բարոնուհուն կպատմեմ հիմի,
Թող հոգսը քաշի, դես ու դեն ընկնի։
(Մոտենում է դռանը)։

ՏԵՍԻԼ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Նրանք, բացի Շպրիխից

(Շպրիխն անկասելիորեն ճեռանում է)։

ԿԱԶԱՐԻՆ

Մենք Շպրիխի հետ... Ո՞ւր կորավ այսպես։
(մեկուսի)

Նամակ, ա՛յ թե ինչ, հասկանում եմ ես...
(նրան)

Դու մտախոհ ես...

ԱՐԲԵՆԻՆ

Այո, խորհում եմ։

ԿԱԶԱՐԻՆ

Որ այս աշխարհում հույսե՞րն են ունայն, բարիքները սի՞ն։

ԱՐԲԵՆԻՆ

Գրեթե այդպես, երախտագիտություն կոչվածի մասին։

ԿԱԶԱՐԻՆ

Այդ հարցի մասին շատ կարծիքներ կան.
Քող մարդիկ խորհեն ձևով ցանկացած,
Բայց դա կարևոր հարց է անկասկած։

ԱՐԲԵՆԻՆ

Իսկ քո կարծիքո՞վ։

ԿԱԶԱՐԻՆ

Իսկ իմ կարծիքով, ազնիվ բարեկամ,
Երախտագիտությունն է այնպիսի մի բան,
Որը կախված է արժանիքներից մեր ծառայության,
Չէ որ մենք հաճախ բարիք ենք գործում մեր կամքից անկախ։
Ահա Սլուկինը երեկ ինձ դարձյալ
Թղթախաղի մեջ տարվեց հինգ հազար,
Ես էլ, իմ ասված, երախտապարտ եմ նրան անկասկած,
Ահա թե ինչպես, ուտեմ թե խմեմ, նույնիսկ քնի մեջ
Նրա մասին եմ մտածում անվերջ։

ԱՐԲԵՆԻՆ

Դու կատակում ես շարունակ այդպես։

ԿԱԶԱՐԻՆ

Լսի՛ր, Եվգենի, ես սիրում եմ քեզ
Եվ այժմ պետք է խոսեմ լրջորեն։
Բայց դու, իմ եղբայր, թո՛ղ տեսքդ ահեղ, եղիր դու բարի,
Եվ ես կբացեմ ահա քո առաջ
Ողջ գաղտնիքները, իմաստությունը ՁԵՐ այս աշխարհի։
Կուզե՞ս իմանալ ոնց եմ խորհում ես,
Ինձ համբերությամբ խնդրում եմ լսես։
Վոլտեր ու Դեկարտ ինչ էլ քարոզեն,

Մի թղթախաղ է աշխարհը իմ դեմ,
Կյանքը մի բանկ է, ճակատագիրը թուղթ է բաժանում,
Իսկ ես խաղում եմ, այդ կանոնները կիրառում կյանքում։
Ահա օրինակ այս կանոնները պարզելու համար։
Ես տուզի հույսով իջնում եմ հազար—
Սնահավատ եմ ես թղթախաղում։—
Դիցուք, թե տուզս տարավ պատահմամբ, առանց հնարի,
Ուրեմն՝ բարի,
Բայց ոչ մի դեպքում իմ երախտիքը տուզին չեմ հայտնի,
Գանձս լռությամբ ես կժողովեմ։
Այնքան կխաղամ մինչև որ հոգնեմ.
Իմ հաշիվները տեսնելուց հետո
Ճմռած թղթերը գետին կնետեմ։
Սակայն, սիրելիս, դու ինձ չե՞ս լսում։

ԱՐԲԵՆԻՆ (մտածմունքի մեջ)

Զարիք, կեղծիք ես տեսնում ամենուր։
Իսկ ես քիչ առաջ, արձանի նման,
Լսում էի այդ անմռունչ ու լուռ։

ԿԱԶԱՐԻՆ (մեկուսի)

Հը՛մ, մտասուզվեց։

(Նրան)

Այժմ միասին մի այլ դեպք քննենք,
Աստիճանաբար, որ չխոտորվենք.
Կամ թղթախաղին կամ շվայտ կյանքին,
Ասենք, ուզում ես նվիրվել կրկին,
Մեկ էլ տեսնում եմ, որ բարեկամդդ
Ասում է հանկարծ՝ «Զգո՛ւյշ կաց, եղբա՛յր»։
Եվ էլի ինչ-որ իմաստուն խոսքեր,
Որոնք ոչ մի բան չարժեն քեզ համար։
Լսում ես նրան դու պատահաբար.
Ասված տա նրան երկար տարիներ։
Եվ եթե մի օր նա գինարբուքից հեռու պահեց քեզ,
Առանց հապաղման հարբեցրու նրան դու անմիջապես,
Խաղի մեջ գուփիր, ճանապարհ գցիր։
Իսկ եթե փրկեց քեզ թղթախաղում... խսկույն դու գնա

Եվ սիրահարվիր պարահանդեսում իր կնոջ վրա...
Կամ առանց սիրո, բայց հրապուրիր, խաբիր հենց այնպես,
Որ իր ամուսնու պարտքը վճարես։
Երկու դեպքում էլ քո այդ վարմունքը կլինի արդար,
Եվ միայն այդպես դու կվճարես իր դասի համար։

ԱՐԲԵՆԻՆ

Բարոյախոս ես դու մեծահնար։

(Մեկուսի)

Այդ մասին արդեն բոլորը գիտեն...
Սպասի՛ր, իշիան... քո դասի համար քեզ կվարձատրեմ։

ԿԱՋԱՐԻՆ (ուշադրություն չդարձնելով)

Մնաց քեզ վերջին կետը բացատրեմ.
Ասենք սիրում ես որևէ կնոջ, նվիրվում նրան
Ե՛վ հարստությամբ, և՛ մտերմությամբ, նույնիսկ քո կյանքով,
Շրջապատում ես նրան վայելքով ու փայփայանքով.
Բայց արժե՞, որ նա գոհ լինի քեզնից։
Այդ բոլորն արիր ինքդ քեզ համար, դրդված կրքերից,—
Ցոհաբերեցիր, հոգուդ ուժը ողջ,
Բայց ո՞չ թե բախտի համար այդ տիկնոջ։
Ինքդդ մտածիր սառնասրտորեն և կտես միայն՝
Պայմանական է կյանքում ամեն բան։

ԱՐԲԵՆԻՆ (վրդովված)

Հա՛, հա՛, դու ճիշտ ես. սիրո մեջ կինը ի՞նչ է ուզում որ.
Միշտ ամենօրյա հաղթանակներ են նրան հարկավոր։
Կուզես արտասվիր, աղերսիր նրան,
Քո տանջված տեսքով, քո լալկան ձայնով
Հեգնանք կշարժես նրա մեջ միայն։
Իրավացի ես, հիմար են նրանք և նույնքան դժբախտ։
Որ երազում են միայն կնո՛ջ մեջ որոնել դրախտ։

ԿԱՋԱՐԻՆ

Ա՛յ, դու դատում ես առողջ ու կարգին,
Թեև բախտ ունես, ունես նաև կին։

ԱՐԲԵՆԻՆ

Իրո՞ք։

ԿԱՋԱՐԻՆ

Մի՞թե ոչ։

ԱՐԲԵՆԻՆ

Բախտավոր եմ... հա՛...

ԿԱՋԱՐԻՆ

Անչափ ուրախ եմ։
Բայց այսուհանդերձ ես ափսոսում եմ, որ ամուրի չեմ։

ԱՐԲԵՆԻՆ

Իսկ ինչո՞ւ, ինչո՞ւ։

ԿԱՋԱՐԻՆ

Այնպես... Հիշում եմ անցյալը կրկին,
Մեր խնջույքները քեզ հետ միասին...
Ջահել էինք մենք, երկուսս էլ խոհուն,
Բայց ի՜նչ գինարբուք, և ի՜նչ խենթություն։
Փառավոր կյանք էր...
Առավոտները հանգիստ ու գրգանք,
Քաղցր գիշերվա այն հուշերը թանկ...
Հետո հրավերք, գինին Ռաուլի՝
Բաժակների մեջ փայլուն, փրփրալի,
Սուր կատակները և զրույցները մեր աղմկալի։
Իսկ հետո թատրոն. հոգիս հրճվում է,
Երբ հիշում եմ կյանքն այն երանավետ,
Բեմի հետևում պարուհիներին
Հմայում էինք, դուրս քաշում քեզ հետ...
Ճիշտ չէ՞, որ անցած օրերում այն հին
Ամեն բան լավ էր, ամեն ինչ դյուրին։
Թատրոնից հետո սլանում էինք բարեկամի մոտ...
Ներս էինք մտնում... արդեն եռում էր խաղը կրակոտ,

Կարտերի վրա ոսկին էր դիզված,
Մեկը տենդահույզ, մեկը դունատված,
Ինչպես մեռյալը խոր գերեզմանում։
Նստում էինք մենք... խաղն էր բորբոքվում...
Ի՜նչ զգացմունքներ, կրքեր այդ պահին
Փոթորկում էին մեր սիրտն ու հոգին,
Եվ միտքն էր պրկում հաճախ կատաղի
Ջսպանակը մեր այրվող ուղեղի...
Եվ եթե այդտեղ ինչ-որ հնարքով շահես հաղթանակ,
Ստիպես բախտին, որ նա խոնարհվի քո ոտքերի տակ,—
Նապոլեոնն անգամ այդպիսի դեպքում
Խեղճ, ծիծաղելի էակ է թվում։

(Արբենինը շրջվում է)։

ԱՐԲԵՆԻՆ

Ա՜խ, ձեզ ո՞վ, ձեզ ո՞վ հետ կդարձնի, փոթորկո՛տ Դույներ,
Ձե՛զ, անմիտ, սակայն, բոցավառ օրեր.
Ձեզ կզոհեի երջանկությունն այս ձանձրալի, հիմար։
Բախտն ու անդորրը, ա՜խ, չեն ստեղծված կյանքում ինձ համար...
Արժե ինձ արդյոք լինել ամուսին, ընտանիքի հայր,
Ինձ, որ փորձել եմ և՛ արատների,
Ե՛վ չարիքների համը դառնագին,
Բայց նրանց առաջ չի սարսռացել երբեք իմ հոգին։
Առաքինությո՛ւն, կորի՛ր իմ աչքից,
Ես այսօրվանից քեզ չեմ ճանաչում,
Խաբված եմ եղել ես նաև քեզնից,
Ես քեզ հետ մեր կարճ դաշինքն եմ խզում,—
Դե, բարյավ մնա...

(Ընկնում է աթոռի վրա և դեմքը ծածկում)։

ԿԱԶԱՐԻՆ

Այժմ ի՞մն է նա...

Պատկեր երրորդ

Իշխանի սենյակներից մեկը։ Դեպի մյուս սենյակը տանող դուռը բաց է։ Կա բնած է բազմոցի վրա։

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

Իվանը, ճեռոն Արբենինը

(Ստառն նայում է ժամացույցին)։

ԻՎԱՆ

Ցոթերորդ ժամն է արդեն վերջանում,
Իսկ նա պահանջեց ութին արթնացնել.
Ոչ թե մոդայով, ռուսաց ձևով է իշխանը քնում,
Դեռ կհասցնեմ կրպակը մտնել։
Դուռը կփակեմ... հուսալի է դա...
Կարծես սանդուղքով մարդ է բարձրանում։
Է՜հ, կասեմ նրան՝ տերս տանը չի... թող կորչի գնա։

(Ներս է մտնում Արբենինը)։

ԱՐԲԵՆԻՆ

Իշխանը տա՞նն է։

ՇԱՌԱ

Տանը չէ, պարոն։

ԱՐԲԵՆԻՆ

Բայց դու ստում ես։

ՇԱՌԱ

Հենց մի քիչ առաջ այստեղից մեկնեց։

ԱՐԲԵՆԻՆ (ականջ դնելով)

Ո՞չ, ստում ես խոսում, ա՛յ, այստեղ է նա։

(ցույց է տալիս առանձնասենյակը)

Եվ քաղցր քուն է մտել երևի.
Ականջ դիր հապա, ինչպես է շնչում։

(Մեկուսի)

Սակայն այդ բանը երկար չի տևի։

ՍԱՌԱ

Ամեն ինչ լսեց...

(Արբենինին)

Նա հրամայեց իրեն չարթնացնել։

ԱՐԲԵՆԻՆ

Քնել սիրում է... Այդ ավելի լավ,
Կքնի ու չի արթնանա բնավ։

(Սառային)

Կարծեմ ասացի, որ ես կսպասեմ։
Մինչև արթնանա։

(Սառան հեռանում է)։

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

ԱՐԲԵՆԻՆ (միայնակ)

Հարմար առիթ է... ա՛յժմ կամ երբե՛ք։
Իմ ցանկությունը դյուրին, աներկյուղ ես կիրագործեմ։
Ես կապացուցեմ, որ կա գեթ մեկը մեր այս սերբենդում,
Որի հոգու մեջ վիրավորանքը
Ցասկոտ վրեժի հրդեհ է վառում...
Ո՛չ, ես չեմ դառնա՝ սորուկը նրանց,
Ինձ համար ուշ է խոնարհվել արդեն...
Եթե թշնամուս կռվի կանչեի ես նրանց դիմաց,
Նրանք չարությամբ կծիծաղեին... այժմ կլռեն։
Ես չեմ պատկանում այն մարդկանց թվին,
Որոնք կարող են դառը՝ն ամոթը կրել ճակատին
Եվ հետո թողնել առանց հատուցման։

(Դուռը բացելով)

Քնած է... Ի՞նչ է տեսնում երազում այս վերջին անգամ։

(Անհարկու ժպիտով)

Ես կարծում եմ, որ իմ մի հարվածով նա կանշնչանա՝
Գլուխն է կախել... կօգնեմ ես արյան ազատ ընթացքին...
Ողջը թող գրվի բնության հաշվին։

(Ներս է մտնում սենյակը)։
(Երկու բոպեի չափ մնալուց հետո, գունատված
վերադառնում է)։

Անկարելի է։

(Լռություն)։

Այդ վեր է արդեն ուժից և կամքից...
Առաջին անգամ կյանքիս ընթացքում ես սարսափեցի.
Ավա՜ղ, այստեղ ինձ դավաճանեցի...
Վա՜ղ, ինչ-որ երկչոտ եմ այսպես.
Իսկ ո՞վ ասաց այդ... հենց ես ասացի,
Վախկոտ եմ, այո՛... ամո՛թ է, ամո՛թ,
Փախի՛ր, կարմրի՛ր, արհամարհված մարդ։
Քեզ էլ, ինչպես և շատ ուրիշներին,
Մեր ներկա դարը սեղմել է գետնին,
Ինքդ քո առաջ միայն պարծեցար,
Ափսո՛ս... շա՜տ ափսոս... և ահա դու էլ
Լուսավորության ծանր բեռան տակ եղար ուժասպառ,
Ցանկացար սիրել... չկարողացար...
Վրեժի եկար... և տկարացար։

(Լռություն)։
(Նստում է)։

Անխոհեմաբար վեր թռա սաստիկ,
Պետք է ես ընտրեմ հաստատ ճանապարհ...
Եվ այժմ ահա մի ուրիշ, խոր միտք
Ծագեց իմ կրծքում հոգնած, տանջահար։
Այսպես ուրեմն, նա՝ պետք է ապրի,
Սպանությունը մոդա չէ արդեն.
Մարդ սպանողին գլխատում են արդ կառափնարանում։
Չէ՞ որ ծնվել եմ լուսավոր դարում.
Մեր այս օրերում լեզուն և ոսկին
Փոխարինում են դաշույնին, թույնին։

(Վերցնում է գրիչը և գրում է երկտող, հետո վերցնում է գլխարկը)

ՏԵՍԻԼ ՋՈՐԲՈՐԴ

Արբենինը և բարոնուհին։

(Արբենինը գնում է դեպի դուռը և դեմ առ դեմ հանդիպում մի հողավոր կնոջ)։

ՔՈՂԱՎՈՐ ԿԻՆԸ

Ամեն ինչ կորավ...

ԱՐԲԵՆԻՆ

Այս ի՞նչ է։

ՔՈՂԱՎՈՐ ԿԻՆԸ (աշխատելով խուսափել)

Թողե՛ք։

ԱՐԲԵՆԻՆ

Օ ո՛չ, սա ծախու առաքինության
Շինծու ճիչը չէր։

(Խստությամբ նրան)

Իսկ դուք լռեցե՛ք։
Ո՛չ մի ձայն, թե չէ այս ակնթարթին...
Այս ինչ կասկած է։
Բարձրացրեք քողը, քանի մենակ ենք։

ՔՈՂԱՎՈՐ ԿԻՆԸ

Այստեղ ես սխալ մտա ուղղակի։

ԱՐԲԵՆԻՆ

Այո՛, դուք փոքր-ինչ սխալ եք գործել,
Բայց ոչ թե տեղի, այլ՝ ժամանակի։

ՔՈՂԱՎՈՐ ԿԻՆԸ

Ի սեր աստծո, թողե՛ք ինձ, թողե՛ք, ձեզ չեմ ճանաչում։

ԱՐԲԵՆԻՆ

Արտասուց հուզում... Բացե՛ք ձեր դեմքը։
Նա դեռ քնած է... և այս միջոցին կարող է զարթնել։
Ամեն ինչ գիտեմ... Սակայն ուզում եմ հաստատվել։

ՔՈՂԱՎՈՐ ԿԻՆԸ

Գիտե՛ք ամեն ինչ...

(Արբենինը բարձրացնում է քողը և զարմանքից ետ հաշվում հետո տիրապետում է իրեն)։

ԱՐԲԵՆԻՆ

Շնորհակալ եմ քեզնից, արարի՛չ։
Որ ինձ այսօր դու թույլ տվեցիր սխալվելու ինձ։

ՔՈՂԱՎՈՐ ԿԻՆԸ

Ա՜խ, ես ի՞նչ արի։ Վե՛րջ ամեն ինչին։

ԱՐԲԵՆԻՆ

Հուսահատվելու տեղը չէ, տիկի՛ն,
Ձեզ համար, գիտեմ, շատ է վշտալի՝
Գրկախառնության, փայփայանքի տեղ
Հանդիպել այստեղ սառը ձեռքերի...
Մի քիչ վախեցաք... Մեծ աղետ չէ այդ,
Ես համեստ մարդ եմ, սիրով կլռեմ, փառք տվեք աստծուն,
Որ չեք հանդիպել դուք մի ուրիշին...
Թե չէ քաղաքը երկար կխոսեր ձեր վարքի մասին։

ԲԱՐՈՆՈՒՀԻ

Ա՜խ, նա արթնացավ, արդեն խոսում է։

ԱՐԲԵՆԻՆ

Ոչ, զառանցում է...
Բայց դուք հանդարտվեք, կգնամ շուտով։
Միայն բացատրեք, արդյոք, ի՞նչ ուժով
Այդ կուպիդոնը կախարդել է ձեզ։
Եվ ինչո՞ւ կանայք նրան են ձգտում բուռն կրքերով։

Երբ ինքն անզգա սառն է քարի պես։
Ինչո՞ւ չէ ինքը ընկնում ձեր ոտքը՝
Աղերսանքներով, արտասուքներով և երդումներով։
Եվ դուք... դուք այստեղ զդայուն մի կին,
Պատիվդ խպառ տալով մոռացման,
Եկել եք հոժար հանձնվեք նրան...
Ինչո՞ւ մի այլ կին, ձեզնից ոչ պակաս,
Պատրաստ է նրան նվիրաբերել իր ամբողջ բախտը,
Կյանքը և սերը... լոկ մի հայացքի, մի խոսքի համար։
Ասացե՛ք, ինչո՞ւ... Հիմա՞ր եմ, հիմա՞ր։

(Կատաղության մեջ)
Ա՜խ, ինչո՞ւ, ինչո՞ւ։ Ի՞նչ բանի համար։

ԲԱՐՈՆՈՒՀԻ (վճռականորեն)
Հասկացա՝ ինչի՛ մասին եք խոսում...
Գիտեմ, եկել եք...

ԱՐԲԵՆԻՆ
Ասացե՛ք, ինչպե՞ս, ձեզ ո՞վ է պատմել...

(Ուշքի գալով)
Իսկ դուք ի՞նչ գիտեք...

ԲԱՐՈՆՈՒՀԻ
Աղերսում եմ ձեզ, ներե՛ք ինձ, ներե՛ք...

ԱՐԲԵՆԻՆ
Չեմ դատապարտում ձեզ ամենևին,
Ընդհակառակը, հրճվում եմ բախտով իմ բարեկամի։

ԲԱՐՈՆՈՒՀԻ
Կուրացել էի ես իմ կրքերից,
Ես եմ հանցավոր այս բոլորի մեջ, սակայն լսեք ինձ...

ԱՐԲԵՆԻՆ
Բայց ինչո՞ւ։ Մեկ է ամեն ինչ, տիկի՛ն...
Երկրպագու չեմ խստիվ մորալին։

ԲԱՐՈՆՈՒՀԻ
Բայց լսեք, եթե ես չլինեի, չէր գրվի նամակ,
Ոչ էլ...

ԱՐԲԵՆԻՆ
Այդ չափից վեր է... Ի՞նչ նամակ...
Ա՜խ, ուրեմն այդպես, դուք այն ժամանակ
Հանդիպեցրել եք նրանց իրարու... և սովորեցրել...
Վաղո՞ւց եք արդյոք այդ դերն ստանձնել։
Ձեզ ի՞նչն ստիպեց... Անմեղ զոհերին այստե՞ղ եք բերում։
Թե՞ ջահելներն են ձեզ մոտ այցելում։
Խոստովանում եմ... հյուրանոցների գանձ եք դուք մի քանի,
Ինձ չի զարմացնում արդեն մեր կանանց վարքը անառակ...

ԲԱՐՈՆՈՒՀԻ
Աստվա՛ծ իմ, աստվա՛ծ...

ԱՐԲԵՆԻՆ
Սակայն կուզեի անկեղծ խոսել ես...
Ի՞նչ են վճարում պարոնները ձեզ։

ԲԱՐՈՆՈՒՀԻ (ընկնելով բազկաթոռի վրա)
Բայց դուք վարվում եք ոչ մարդկայնաբար։

ԱՐԲԵՆԻՆ
Սխալ էր, ներեք,
Դուք ծառայում եք սոսկ պատվի համար։
(Ուզում է գնալ)։

ԲԱՐՈՆՈՒՀԻ
Ես կցնորվեմ... Կանգնե՛ք... գնում է,
Չի ուզում լսել... Օ՜, ես կմեռնեմ...

ԱՐԲԵՆԻՆ
Շարունակեցեք նույն ձևով գործել։
Կարող եք այդպես մեծ փառք ստեղծել...
Դե՛, մնաք բարյավ, իսկ այժմ ֆրկյուզ մի կրեք ինձնից...

Բայց հանուն աստծու, տիկի՛ն, խույս տվեք նոր
հանդիպումից...
Կյանքում դուք ինձնից անդարձ խլեցիք ամեն, ամեն բան,
Պիտի հալածեմ ես ձեզ հավիտյան՝
Լինի փողոցում, միայնության մեջ, շրջանում մարդկանց,
Իսկ եթե բախվենք... աղետ կլինի ձեզ հետ անկասկած,
Կսպանեի ձեզ... Սակայն մահը մեծ նվեր կլիներ,
Որ պիտի պահեմ այլ կնոջ համար,
Տեսնո՞ւմ եք որքան գթոտ եմ, բարի,
Որ դժոխային տանջանքի գիմաց,
Թողնում եմ ես ձեզ դրախտն աշխարհի։
(Գնում է)։

ՏԵՍԻԼ ՋԱՐՐՈՐԴ

Բարոնուհին միայնակ

ԲԱՐՈՆՈՒՀԻ (ետևից)

Լսե՛ք, երդվում եմ... այդ ատամ է եղել... Անմեղ է Նինան։
Ապարանջանը ես ինքս միայն...
Գնաց, չի լսում, ա՜խ, ես ի՞նչ անեմ.
Հուսալքումը չոքել է հոգուս ու սրտիս վրա...
Ճար չկա... պետք է իշխանին փրկեմ,
Կաղերսեմ, կընկնեմ ոտքերը նրա,
Կխոստովանեմ, որ ստել եմ ես, գործել եմ հանցանք։
Օ՜, նա արթնացավ... ահա գալիս է... օ՜, տանջա՜նք,
տանջա՜նք...

ՏԵՍԻԼ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Բարոնուհին և իշխանը

ԻՇԽԱՆ (մյուս սենյակում)

Իվան, այս ո՞վ է, ձայներ եմ լսում.
Այս ի՞նչ մարդիկ են, կես ժամ էլ նույնիսկ քնել չեն թողնում։
(Ներս է մտնում)
Վա՜հ, այս ի՞նչ այլ է, այս ո՞ւմն եմ տեսնում։
Օ՜, գեղեցկուհի, ուրախ եմ անչափ։

(Ճանաչելով ետ է քաշվում)
Ա՜խ, բարոնուհի... անկարելի է։

ԲԱՐՈՆՈՒՀԻ

Բայց դուք ինչո՞ւ եք այդպես ետ քաշվում։
(Թույլ ձայնով)
Շվարո՞ւմ եք դուք։

ԻՇԽԱՆ (շփոթված)

Գարշ է, ինձ համար հաճելի է այդ...
Բայց չեմ սպասել ես այսպիսի բախտ։

ԲԱՐՈՆՈՒՀԻ

Եվ տարօրինակ կլիներ նույնիսկ, թե սպասեիք...

ԻՇԽԱՆ

Ի՞նչ էի խորհում։ Թե իմանայի...

ԲԱՐՈՆՈՒՀԻ

Թեպետ շատ հեշտ էր գալ ամեն ինչ,
Բայց դժբախտաբար չիմացաք ոչինչ։

ԻՇԽԱՆ

Օ՜, ես պատրաստ եմ քավել մեղքը այդ,
Կընդունեմ խոնարհ ամեն մի պատիժ...
Ես կույր եմ եղել, իմ անգիտությամբ ձեր դեմ հանցապարտ...
Էլ արդարացման ի՞նչ ասեմ ուրիշ...
(Բռնելով բարոնուհու ձեռքը)
Բայց ձեր ձեռքերը... սառույց են կարծես, գեմքդ՝
տրտմաշուք,
Ասացե՛ք, մի՞թե խոսքերիս վրա կասկածում եք դուք։

ԲԱՐՈՆՈՒՀԻ

Սխալվում եք դուք... եկա, բայց ձեզնից ես սեր չեմ հայցում,
Խոստովանություն ես չեմ պահանջում։
Ես վճռեցի ներս մտնել ձեզ մոտ;
Տալով մոռացման կնոջը հատուկ երկյուղ և ամոթ։

Ինձ ձեզ մոտ մղեց սրբազան մի պարտք.
Ծպասում են ինձ այլ օրեր, այլ կյանք,
Անցան օրերը հախուռն իմ կյանքի,
Բայց ես պատճառ եմ եղել չարիքի՝
Եվ ահա ընդմիշտ հրաժեշտ տալով աշխարհիկ կյանքին,
Եկա ուղղելու հանցանքս նախկին։—
Ես՝ իմ ամոթը պատրաստ եմ կրել,
Ինձ չփրկեցի... բայց ես ուզում եմ ուրիշին փրկել։

ԻՇԽԱՆ

Ձեզ չեմ հասկանում։

ԲԱՐՈՆՈՒՀԻ

Ինձ մի խանգարեք։
Մեծ ջանքի գնով ես վճռեցի խոսել այդ մասին...
Սակայն դուք, իշխան, գործին անգիտակ,
Իմ տանջանքների պատճառը եղաք...
Ջնայած դրան, պետք է ձեզ փրկեմ...
Բայց ինչի՞ համար, ինքս էլ չգիտեմ...
Թեպետ և չարժե այդպիսի մի զոհ ձեզ համար բերել,
Անզոր եղաք ինձ հասկանալ, սիրել...
Թերևս ինքս էլ չէի կամենա...
Սակայն լսեք ինձ. այսօր իմացա,
Թե ինչպես՝ մեկ է, չարժե կանգ առնել,
Որ Արբենինի կնոջն անզգույշ նամակ եք գրել...
Ոմանց ասելով, նա սիրում է ձեզ.
Սո՛ւտ է, սո՛ւտ է դա. օ՜, չհավատա՛ք...
Այդ միտքը միայն կկործանի մեզ։
Կինն անտեղյակ է, բայց ամուսինը գիտե ամեն բան,
Ջարհուրելի է նա թե՛ սիրո մեջ, թե՛ ատելության։
Ձեզ մոտ է եղել... Նա ձեզ կսպանի...
Օ՜, նա վարժված է չարագործության,
Իսկ դուք դեռ ջահել, ջահե՛լ եք այնքան։

ԻՇԽԱՆ

Զուր եք սարսափում...
Դե, Արբենինը խելոք է և քաջ ծանոթ է կյանքին,

Չի համաձայնվի խոսել այդ մասին,
Առանց կարիքի, առանց նպատակ,
Նա չի վերջացնի արնահեղությամբ կոմեդիան դատարկ։
Թե գաղափար է, այդ ոչինչ չարժի.
Գիստոլետները կառնեն Լեպաժի,
Եվ կհաշվեն երեսուներկու քայլ.
Էպոլետներն այս ես չեմ փաստակել
Կռվում թշնամուց փախչելու համար։

ԲԱՐՈՆՈՒՀԻ

Եթե ձեր կյանքը առավել, քան ձեզ թանկ է այլ ոքի...
Եթե կապված է նա մի այլ կյանքի,
Աստված իմ, հանկարծ թե ձեզ սպանեն...
Այդ ամբողջ մեղքը ես պիտի կրեմ։

ԻՇԽԱՆ

Դո՞ւք։

ԲԱՐՈՆՈՒՀԻ

Ինձ խնայեք։

ԻՇԽԱՆ (մտածելուց հետո)

Ես պետք է կռվեմ.
Վիրավորել եմ պատիվը նրա,
Ես եմ մեղապարտ, թեպետ և ինքս չեմ իմացել այդ.
Բայց արդարացման այլ միջոց չկա։

ԲԱՐՈՆՈՒՀԻ

Ոչ, դեռ միջոց կա։

ԻՇԽԱՆ

Միգուցե ստե՞լ. ա՛յլ միջոց գտեք.
Փրկության համար չեմ ստի երբեք,
Եվ անմիջապես կգնամ իր մոտ։

ԲԱՐՈՆՈՒՀԻ

Եվս մի բոպե... ամեն ինչ կասեմ։

(բռնելով նրա ձեռքից)

Օ՜, դուք բոլորդ էլ խաբված եք եղել... դիմակն այն ես եմ...

(ընկնելով հենվում է սեղանին)

ԻՇԽԱՆ

Այդ ինչպե՞ս թե դուք, նախախնամությո՞ւն...

(լռություն):

Բայց Շպրիխն ասաց... նա է մեղավոր...

ԲԱՐՈՆՈՒՀԻ (սթափվելով և հեռանալով)

Մոլորություն էր դա մի կարճատև ու խելացնոր,
Եղածի համար զղջում եմ հիմա,
Բայց դա անցել է, ողջը մոռացեք։
Ապարանջանը ետ տվեք նրան,
Որը ես գտա ինչ-որ հրաշքով մի պատահական,
Եվ ինձ խոստացեք այդ գաղտնիք պահել...
Է՜հ, աստված թող ինձ դատավոր լինի։
Նա ձեզ կների... դուք անկարող եք, սակայն, ինձ ներել։
Ես հեռանում եմ... կարծում եմ, իշխան,
Որ չենք տեսնվի մենք երբե՞ք, երբե՞ք։

(Մոտենալով դռանը, նկատում է, որ իշխանը ցանկանում նեռվել իր հետևից):

Ինձ մի՛ հետևեք։

(Գնում է):

ՏԵՍԻԼ ՎԵՑԵՐՈՐԴ

Իշխանը միայնակ

ԻՇԽԱՆ (երկար մտածելուց հետո)

Զգիտես, իրոք, թե ինչ մտածես,
Լոկ հասկանում եմ ես այս բոլորից,
Որ ոչինչ չարի երեխայի պես,
Եվ հաջող դեպքը բաց թողի ձեռքից։

(Մոտենում է սեղանին)

Դարձյալ գրություն... ումի՞ց է տեսնեմ։
Հա՜, Արբենինից... ապա ընթերցեմ...

«Միքելի Իշխան... այս երեկոյան կգաս N-ի մոտ։ Ճաշերը այնտեղ կլինեն... և ժամանակը ուրախ կանցկացնենք...
Ես քեզ չուզեցի արթնացնել, թե չէ դու ամբողջ երեկոյան կնիրհեիր։ Մնաս բարով։ Սպասելու եմ, կգաս անպայման։
Քո՝ անկեղծ՝

Եվգենի Արբենին»:

Իրոք, հազվագյուտ աչք է հարկավոր,
Որպեսզի այստեղ թակարդ նկատի։
Որտե՞ղ է լսված, ընթրիքի կանչեն,
Նախքան կկանչեն քեզ մենամարտի։

Պատկեր չորրորդ

N-ի սենյակներից մեկը

ՏԵՍԻԼ ՈՒՆԱՉԻՆ

(Կազարինը, տնատերը և Արբենինը նստում են թղթախաղի)։

ԿԱԶԱՐԻՆ

Իրավ թողել ես քմայքները քո,
Որոնցով մեզ մոտ հպարտ են մարդիկ,
Քայլում ես նորից հին ճանապարհով...
Սքանչելի՜ միտք...
Դու պետք է անշուշտ բանաստեղծ լինես,
Եվ հանճար ես դու ըստ ամենայնի,
Բայց ընտանիքը շատ է ճնշում քեզ,
Ցուր ինձ քո ձեռքը, եղբայր տիքելի։
Դարձյալ դու մերն ես։

ԷՐԲԵՆԻՆ

Այո, ես ձերն եմ, չքվել է անգամ ստվերն անչյալի։

ԿԱԶԱՐԻՆ

Ինչ լավ է տեսնել աստված իմ վկա,
Թե խելոք մարդիկ ինչպես են նայում աշխարհի վրա։

Պատշաճ բարքերը շղթայից վատ են այդ մարդկանց համար...
Այսօր մենք խաղում կլինե՞նք կիսրաց։

ՏՆԱՏԵՐ

Պետք է մի թեթև փետրել իշխանին։

ԿԱՋԱՐԻՆ

Լա՞վ փետրել, այո...

(Մեկուսի)

Զվարճալի է լինելու նայել այդ ընդհարումին։

ՏՆԱՏԵՐ

Կառք է մոտենում. մի տեսնենք հապա...

(Աղմուկ է լսվում)։

ԱՐԲԵՆԻՆ

Հենց ինքն է, որ կա։

ԿԱՋԱՐԻՆ

Ի՞նչ է, ձեռքերդ դողո՞ւմ են այսօր։

ԱՐԲԵՆԻՆ

Ոչինչ, դարձել եմ խաղին անսովոր։

(Ներս է մտնում իշխանը)։

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

Նրանք և իշխանը

ՏՆԱՏԵՐ

Իշխան, ուրախ եմ, խնդրեմ, համեցե՞ք,
Սուրը հանեցեք նստեցեք մեզ մոտ,
Կռիվ է գնում այստեղ կրակոտ։

ԻՇԽԱՆ

Օ՞, ես պատրաստ եմ հաճույքով նայել։

ԱՐԲԵՆԻՆ

Այն օրից ի վեր սարսափո՞ւմ եք դեռ,

ԻՇԽԱՆ

Ճիշտն ասած, ձեզ հետ ես չեմ վախենում,

(Մեկուսի)

Մարդուն պիտի հաճոյանամ,
Որ կնոջ հետ մտերմանամ...
Տիկնոջ սերը թող վերցնեմ,
Իսկ այս խաղում թող կորցնեմ...

(Նստում է)

ԱՐԲԵՆԻՆ

Իշխան, ձեր տունն եմ այցելել այսօր։

ԻՇԽԱՆ

Թուղթը կարդացի,
Ինչպես տեսնում եք, հնազանդվեցի։

ԱՐԲԵՆԻՆ

Ձեր տան մուտքի մոտ, հանդիպեց մեկն ինձ,
Բավական հուզված և տագնապալից։

ԻՇԽԱՆ

Եվ ճանաչեցի՞ք։

ԱՐԲԵՆԻՆ (ծիծաղելով)

Կարծես թե, այո.
Թունդ դայթակղիչ եք եղել դուք, իշխա՞ն,
Ես գուշակեցի, գիտեմ ամեն բան։

ԻՇԽԱՆ (մեկուսի)

Պարզ է, որ ոչինչ նա չի հասկացել։

(Հեռանում է և սուրը վայր դնում)։

ԱՐԲԵՆԻՆ

Ձէի կամենա՝ կինս ձեզ դուր գար։

ԻՇԽԱՆ (մտացրիվ)

Իսկ ինչի՞ համար։

ԱՐԲԵՆԻՆ

Այնպես. ես չունեմ այն առաքինի, բարի գծերը,
Որ ամուսնու մեջ միշտ որոնում են սիրահարները։

(Մեկուսի)

Բայց չի այլայլվում սա ամենևին...
Սպասի՛ր, տխմար, քաղցր հանգիստդ ես կխորտակեմ,
Քո հաճույքի մեջ ես թույն կխառնեմ,
Եվ թե խաղի մեջ դնես քո հոգին,
Այնժամ հոգուդ դեմ իմը կդնեմ։

(Խաղում են, Արբենինը բաժանում է թղթերը)։

ԿԱԶԱՐԻՆ

Դնում եմ ահա ես հիսուն։

ԻՇԽԱՆ

Ես էլ։

ԱՐԲԵՆԻՆ

Իսկ ես կպատմեմ ձեզ մի անեկդոտ,
Որ լսել եմ դեռ չահել հասակում.
Այսօր իմ մտքից դա չի հեռանում։
Ահա լսեցեք. ինչ-որ մի բարին,
Պսակված մի մարդ,— տարար, Կազարին։—
Հա՛, կարգված մի մարդ վստահ իր կնոջ գերազնիվ վարքին,
Նիրհում էր քաղցր երազների մեջ,—
Իշխան, լսում եք դուք շատ ուշադիր,
Կտարվեք կարգին։—
Մարդը բարի էր, սիրված կնոջից,
Եվ անցնում էին օրերը խաղաղ իրար հետևից.
Որպես հավելում այդ բարյաց վրա,
Այդ անհոգ մարդը մի բարեկամի հանդիպեց ահա...
Ի դեպ, այդ մարդուն նա մատուցել էր մեծ ծառայություն,
Եվ տեսնում էր իր բարեկամի մեջ խիզախ ազնվություն։

Եվ ի՞նչ. չգիտեմ, թե ինչ դիպվածով, մարդը իմացավ,
Որ երախտագետ իր այդ ընկերը բարի, սրտացավ.
Որպես չափազանց ազնիվ պարտական,
Նրա կնոջը ծառայությամբ է դիմել այրական։

ԻՇԽԱՆ

Իսկ մարդն ի՞նչ արեց։

ԱՐԲԵՆԻՆ (կարծես թե չի լսել հարցը

Իշխան, դուք խաղը մոռացել իսպառ,
Խաղում եք ցրված, անզգուշաբար։

(Սուր հայացքը նետելով իշխանին)

Հետաքրքրո՞ւմ է, մարդն ինչպես վարվեց...
Ցնցին առիթով ապտակեց նրան...
Դուք ի՞նչ կանեիք այդ դեպքում, իշխան։

ԻՇԽԱՆ

Նույնը կանեի,
Բայց գոնե հասա՞վ արդյոք դուելի։

ԱՐԲԵՆԻՆ

Ոչ։

ԿԱԶԱՐԻՆ

Կավելի՞ն սրով։

ԱՐԲԵՆԻՆ

Ոչ, ոչ։

ԿԱԶԱՐԻՆ

Ուստի հաշտություն։

ԱՐԲԵՆԻՆ (դառը ժպտալով)

Անկարելի բան։

ԻՇԽԱՆ

Լա՞վ, ցլնուհանգերձ մարդն ինչպե՞ս վարվեց։

ԱՐԲԵՆԻՆ

Վրեժն իր լուծեց,
Նրան ապտակի ամոթով թողեց, այդ անառակին։

ԻՇԽԱՆ (ծիծաղում է)

Դա դեմ է կյանքի կարգին, օրենքին։

ԱՐԲԵՆԻՆ

Ատելությունն ու վրեժը երբեք
Հաշվի չեն առել կանոն կամ օրենք։
(Խաղում են. լռություն)։
Իշխան, շահեցիք...
(Կանգնելով)
Սպասեք, սակայն, թուղթը փոխեցիք։

ԻՇԽԱՆ

Ե՞ս, բայց լսեցե՛ք...

ԱՐԲԵՆԻՆ

Այժմ վե՛րջ խաղին... Ո՛չ, ազնվության այստեղ հարկ չկա։
(շնչասպառ)
Դուք խաղանենգ եք, ստոր սրիկա։

ԻՇԽԱՆ

Ե՞ս։

ԱՐԲԵՆԻՆ

Այո, սրիկա, պետք է այդ խոսքը ձեր դեմքին նետել,
Որ ամեն մեկը ամոթ համարի ձեզ հետ հանդիպել։
(Խաղաթղթերը նետում է նրա դեմքին։ Իշխանն այնքան է ապշել, որ չգիտի, թե ինչ անի)։
(Ձայնը ցածրացնելով)
Դե՛, մեր հաշիվը սրանով փակվեց։

ԿԱԶԱՐԻՆ

Քեզ ի՞նչ պատահեց։

(Տանտիրոջը)

Ափսոս, որ գժվեց խաղի լավ տեղում։
Շատ էր տաքացել, հարյուր հազար էլ կդներ խաղում։

ԻՇԽԱՆ (սթափվելով վեր է թռչում)

Հենց այժմ, այժմ ինձ հետևեցե՛ք,
Վիրավորանքը լոկ ձեր արյունով դուք պիտի մաքրեք։

ԱՐԲԵՆԻՆ

Ի՞նչ, մենամարտե՞լ, և այն էլ ձեզ հե՞տ։ Դուք մոլորված եք։

ԻՇԽԱՆ

Ա՜խ, դուք վախկոտ եք։
(Ուզում է նետվել նրա վրա)

ԱՐԲԵՆԻՆ (ահեղ ձայնով)

Թեկուզև այդպես, բայց խորհուրդ չեմ տա ոչ ինձ մոտենալ,
Ոչ էլ հապաղել ու այստեղ մնալ։
Ասենք երկչոտ եմ, բայց անկարող եք
Ինձ պես երկչոտին վախեցնել անգամ։

ԻՇԽԱՆ

Ես ձեզ կստիպեմ, որ մենամարտեք,
Կպատմեմ վարքը ձեր ամենուրեք,
Սրիկան ես չեմ, այլ դուք եք միայն...

ԱՐԲԵՆԻՆ

Պատրաստ եմ դրան։

ԻՇԽԱՆ (ավելի մոտենալով)

Եվ ես կպատմեմ, թե ձեր կնոջ հետ...
Օ՜, զգուշացե՛ք, ապարանջանի մասին հիշեցեք...

ԱՐԲԵՆԻՆ

Դրա համար էլ դուք պատժված եք...

ԻՇԽԱՆ

Օ՜ կատաղությո՜ւն... Ա՜խ, որտե՞ղ եմ ես,
Աշխարհն է իմ դեմ. ես կսպանեմ ձեզ...

ԱՐԲԵՆԻՆ

Կարող եք, խնդրեմ. այս դեպքում նույնիսկ
Ձեզ խորհուրդ կտամ այդ շուտ կատարել,
Թե չէ մի ժամից ձեր քաջությունը կարող է մարել։

ԻՇԽԱՆ

Ո՞ւր ես, իմ պատիվ... տվեք ինձ նորից այդ խոսքը հպարտ,
Եվ ես ձեր դիմաց կընկնեմ ծնկաչոք,
Ձեր հոգում չկա սրբություն, հավատ,
Դուք դևե՞ ք, թե՞ մարդ։

ԱՐԲԵՆԻՆ

Ե՞ս, մի խաղացող։

ԻՇԽԱՆ (վայր ընկնելով և դեմքը ծածկելով)

Պատի՛վ, ի՞մ պատիվ...

ԱՐԲԵՆԻՆ

Այո՛, պատիվդ հեռացավ անդարձ։
Ջարի-բարու մեջ սահմանն է խախտված,
Աշխարհը քեզնից երես կթեքի արհամարհանքով,
Եվ դու կգնաս մերժվածի ճամփով,
Դու կճաշակես համը արյունոտ արտասուքների։
Բարեկամներիդ երջանկությունը հոգիդ կտանջի՛,
Դու գիշեր-ցերեկ մի բանի մասին կխորհես անվերջ,
Եվ գեղեցկության, սիրո հույզերը
Դանդաղ կխամրեն, կմեռնեն քո մեջ.
Եվ ոչ մի հնարք էլ երջանկություն չի տա քեզ նորից,
Բարեկամներդ քեզնից կանջատվեն,
Ինչպես տերևը փտած ոստերից.
Դու ամոթահար քո դեմքը ծածկած,
Ամբոխի միջով կանցնես անարգված,
Եվ քեզ կտանջի ամոթն ավելի,

Քան չարագործին՝ որևէ հանցանք.
Դե, մնաս բարյա՛վ...

(հեռանալով)

Ցանկանում եմ քեզ երկա՛ր, երկա՛ր կյանք։

(Գնում է)։

Վերջ երկրորդ գործողության

ԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Պատկեր առաջին

Պարտեզ

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՏԱՆՏԻԿԻՆ

Բարոնուհուն եմ սպասում հիմա,
Շատ է ցավալի, եթե նա չգա։

1-ԼՆ ՀՅՈՒՐ

Ձեզ չեմ հասկանում։

2-ՐԴ ՀՅՈՒՐ

Բարոնուհուն եք սպասո՞ւմ։ Մեկնեց...

ՇԱՏԵՐԸ

Ո՞ւր մեկնեց։ Վաղո՞ւց, և ինչի՞ համար։

2-ՐԴ ՀՅՈՒՐ

Հենց այս առավոտ գյուղ ուղևորվեց։

ՄԻ ՏԻԿԻՆ

Իսկ ի՞նչ պատճառով,
Ասված իմ... մի՞թե իր բարի կամքով։

2-ՐԴ ՀՅՈՒՐ

Սիրավեպերը, երազները սին...
Է՜հ, ավելորդ է խոսել այդ մասին։
(Ցրվում են, տղամարդկանց մի այլ խումբ)։

3-ՐԴ ՀՅՈՒՐ

Դուք լսե՞լ եք, որ իշխան Զվեզդիչը տանուլ է տվել։

4-ՐԴ ՀՅՈՒՐ

Հենց ճիշտ հակառակ, բայց երևում է խարդախ հնարքով, ով կերել է մի փառավոր ապտակ։

5-ՐԴ ՀՅՈՒՐ

Մենամարտե՞լ է։

4-ՐԴ ՀՅՈՒՐ

Ոչ, չի կամեցել։

3-ՐԴ ՀՅՈՒՐ

Ի՞նչ ստոր մարդ է և ի՞նչ ստահակ։

5-ՐԴ ՀՅՈՒՐ

Այլևս նրան չեմ ճանաչի ես։

6-ՐԴ ՀՅՈՒՐ

Ի՞նչ կեղտոտ արարք։— Ես էլ ճիշտ նույնպես։

4-ՐԴ ՀՅՈՒՐ

Իսկ ինքը այսօր այստեղ կլինի՞։

3-ՐԴ ՀՅՈՒՐ

Հավանաբար, ո՜չ, էլ չի հանդգնի։

4-ՐԴ ՀՅՈՒՐ

Բայց ահա ինքը։
(Իշխանը մոտենում է, հյուրերը հազիվ գլուխ են տալիս։ Բոլորը հեռանում են, բացի 5-րդ և 6-րդ հյուրերից։ Քիչ հետո նրանք էլ են հեռանում։ Նինան նստում է բազմոցի վրա)։

ԻՇԽԱՆ

Ահա ես ու նա մենակ մնացինք,
Ավելի լավ պահ չի կարող լինել։
(Նինային)
Ցանկանում եմ ձեզ երկու խոսք ասել,
Եվ պետք է դուք ինձ անպայման լսեք։

ՆԻՆԱ

Անպայման լսե՞մ։

ԻՇԽԱՆ

Ձեր բախտի համար. այդ եկքն է միակ։

ՆԻՆԱ

Կարեկցություն է դա տարօրինակ։

ԻՇԽԱՆ

Տարօրինակ է, այո, նրանով,
Ու ձեր պատճառով խորտակվեցի ես...
Համենայն դեպս, ափսոսում եմ ձեզ,
Տեսնում եմ, որ այն ձեռքով եմ խոցված,
Որը ձեզ կտա մահացու հարված։
Ցնչին վրեժով չեմ ստորացնի ինձ երբե՞ք, երբե՞ք,
Բայց լսե՞ք դուք ինձ և զգուշացե՞ք։
Ձեր ամուսինը մի չարագործ է, անզուգ, անաստված,
Ես նախազգում եմ ձեր կյանքին աղետ։
Մնացեք բարյա՞վ այժմ, առհավետ,
Դեռ չարագործը չի բացահայտվել,
Ուստի ես նրան չեմ կարող պատժել,
Բայց ես կսպասեմ, այդ օրը կգա...
Ապարանջանը հարկավոր չէ ինձ, վերցրե՞ք, ահա՛։
(Արբենինը հեռվից նայում է նրանց)։

ՆԻՆԱ

Օ՜, իշխա՜ն, իշխան, ցնորվե՞լ եք դուք,
Այժմ ձեր վրա ամոթ կլինի, որ ես բարկանամ։

ԻՇԽԱՆ

Մնացեք բարյա՞վ, ես խնդրում եմ ձեզ այս վերջին անգամ։

ՆԻՆԱ

Իսկ ո՞ւր եք մեկնում, երևում է, որ չափազանց հեռու,
Ասացեք, լուսին հո չե՞ք ելնելու։

ԻՇԽԱՆ

Ոչ, մոտիկ, Կովկաս (գնում է)։

ՏԱՆՏԻԿԻՆ (մյուսներին)

Գրեթե եկան բոլոր հյուրերը, նեղվածք է այստեղ,
Պարոններ, դահլիճ բարեհաճեցեք,
Mesdames, դուք էլ այնտեղ համեցեք։
(Գնում են)։

ՏԵՍԵՔ ԵՐԿՐՈՐԴ

ԱՐԲԵՆԻՆ (առանձին)

Կասկածո՞ւմ էի... այնինչ բոլորը գիտեն այդ մասին.
Բոլոր կողմերից հալածում են ինձ ակնարկները շար...
Մինչ ողորմելի եմ և ողորմելի ես նրանց համար։
Եվ ո՞ւր մնացին ջանքերս բոլոր,
Ի՞ւր է երբեմնի այն ուժս, որով
Պատժում էի ես այդ ամբոխին խայթող խոսքերով։
— Այդ ուժը երկու կին է սպանել։ Մեկը նրանցից...
Օ՜, ես սիրում եմ, սիրում եմ նրան,
Բայց անգթաբար նա խաբել է ինձ...
Օ, ո՜չ, ես նրան չեմ զիջի մարդկանց...
Կյանքում մեզ դատել չի կարող ոչ ոք,
Ե՛ս կկատարեմ իմ դատն անողոք...
Պատիժ կփնտրեմ նրան սահմանված,
Իսկ իմը այստեղ թող մնա փակված։

(Ցույց է տալիս կուրծքը)։

Նա պետք է մեռնի, էլ ես չեմ կարող ապրել նրա հետ...
Սակայն բաժանվա՞ծ մնալ առհավետ...

(Կարծես ինքն իրենից վախեցած)

Դա վճռված է, նա պետք է մեռնի,
Նախկին հաստատուն կամքին ես երբեք չեմ դավաճանի։
Եվ վիճակված է ծաղիկ հասակում նրան կործանվել,
Սիրվել ինձ նման մի չարագործից, ուրիշին սիրել...
Մի՞թե կարող է նա դարձյալ ապրել...
Անտեսանելի, բայց ամենատես, գթառատ աստված,
Ընդունիր նրան, որպես երաշխիք ես քեզ եմ հանձնում։
Դու ներիր նրան, դու օրհնիր նրան քեզ մոտ, երկնքում։
Բայց ես աստված չեմ, և ես չեմ ներում։

(Լսվում են երաժշտության ձայներ։
Սենյակում քայլում է և հետո հանկարծ կանգնում)։

Առաջին անգամ՝ տաս տարի առաջ,
Ես ցոփ ու շվայտ կյանքի մեջ մտա.
Մի գիշեր, ողջը երբ տանուլ տվի,
Ոսկու գինը ես այնժամ հասկացա,
Բայց անծանոթ էր ինձ գինը կյանքի։
Եվ հուսահատված հեռացա խաղից
Ու թույն գնելով, մոտեցա նորից խաղասեղանին,
Կրծքիս արյունն էր հորդում մոլեգին։
Եվ լիմոնադի բաժակն իմ ձեռքին,
Իսկ մյուս ձեռքում չորսնոցն ագռավի,
Այս նվիրական թույնի փոշու հետ
Պահած գրպանում իմ վերջին ռուբլին՝
Սպասում էի... հանդգնությունս մեծ էր, հիրավի։
Բայց բախտս բերեց, ես ետ շահեցի։
Այն օրից ես այս թույնը պահեցի,
Ծանր իմ կյանքի տագնապներում խոլ,
Ինչպես թալիսման մի խորհրդավոր,
Սև օրվա համար ես պահեցի այն,
Եվ օրն այդ արդեն հեռու չէ այնքան։
(Արագ հեռանում է)։

ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ

Տանտիկինը, Նինան, մի քանի կանայք և կավալերներ

(Վերջին խոսքերը արտասանելու ժամանակ ներս են մտնում):

ՏԱՆՏԻԿԻՆ

Լավ կլիներ քիչ հանգստանայինք։

ԴԱՄԱ (մյուսին)

Քիչ է մնում, որ ես հալչեմ շոգից։

ՊԵՏՐՈՎ

Նաստասյա Պավլովնան մեզ համար կերգի մի որևէ երգ։

ՆԻՆԱ

Ես նոր ռոմանսներ, իրոք, չգիտեմ,
Հներն էլ արդեն ձանձրացրել են ինձ։

ԴԱՄԱ

Ա՜խ, ճիշտ են ասում, Նինա, դե երգի՛ր։

ՏԱՆՏԻԿԻՆ

Դու այնքան բարի, այնքան լավիկն ես,
Որ չես ստիպի երկար խնդրել քեզ։

ՆԻՆԱ (նստելով դաշնամուրի մոտ)

Սակայն խնդրում եմ ուշադիր լսել,
Գուցե այս պատժով կարողանայի
Ձեզ փոքր-ինչ ուղղել։

(Երգում է):

Երբ թախիծը քո աչքերից
Դառն արցունք է քամում վշտոտ,
Օ՜, հասկանալ դժվար չէ ինձ,
Որ դժբախտ ես դու նրա մոտ։
Քո որբացած կյանքն անպաշտպան
Դաժան վիշտը կուտի անտես։

Ուրախ եմ, որ քեզ չի սիրում,
Այնքան, որքան սիրում եմ ես։
Իսկ թե հանկարծ բախտը փայլի,
Քո աչքերի ցոլքում անշեջ,
Ես կտանջվեմ դառն ու թաքուն,
Սև դժոխքը իմ կրծքի մեջ։

ՏԵՍԻԼ ՉՈՐՐՈՐԴ

Արբենինը և մյուսները

(Երգի երրորդ տունը վերջացնելուց հետո, ամուսինը ներս մտնելով հենվում է դաշնամուրին. նկատելով ամուսնուն, Նինան դադարեցնում է երգը):

ԱՐԲԵՆԻՆ

Շարունակեցեք, ինչո՞ւ եք լռում։

ՆԻՆԱ

Վերջին տողերը բնավ չեմ հիշում։

ԱՐԲԵՆԻՆ

Եթե ուզում եք, ես կհիշեցնեմ։

ՆԻՆԱ (շփոթված)

Ո՜չ, ինչի՞ համար։

(Առանձին, տանտիկնոջը)

Ինձ վատ եմ զգում։

(Կանգնում է):

ՄԻ ՀՅՈՒՐ (մյուսին)

Այժմ մոդայիկ ամեն մի երգում
Հանդիպում են միշտ այնպիսի խոսքեր,
Որ արտասանել չեն կարող կանայք։

2-ՐԴ ՀՅՈՒՐ

Թաքի դրանից, մեր մայր լեզուն էլ համառ է այնքան,
Որ չի հարմարվել դեռևս կանանց քմահաճույքին։

3-ՐԴ ՀՅՈՒՐ

Դուք ճիշտ եք դատում. մի ազատասեր վայրենու նման,
Չի ուզում թեքվել մեր հպարտ լեզուն,
Նրա փոխարեն բարեհոգաբար մենք ենք խոնարհվում։

(Հյուրերին մատուցում են պաղպաղակ։ Նրանք անցնում են-դանլիճի մյուս ծայրը, և այնտեղից մեկ-մեկ մտնում են մյուս սենյակները, այնպես, որ վերջում Արբենինը և Նինան մնում են երկուսով։ Բեմի խորքում երևում է Անճայրը)։

ՆԻՆԱ (տանտիկնոջը)

Այնտեղ շատ շոգ է, կնստեմ այստեղ միառժամանակ։

(Ամուսնուն)

Հրեշտակս, խնդրեմ բեր ինձ պաղպաղակ։

(Արբենինը ցնցվում է, հետո գնում է պաղպաղակ բերելու, վերադառնում է և թույն է լցնում պաղպաղակի մեջ)։

ԱՐԲԵՆԻՆ

Մահ, օգնի՛ր դու ինձ։

ՆԻՆԱ

Հոգիս պատել է մռայլ մի թախիծ,
Ինչ-որ մի աղետ սպասում է ինձ։

ԱՐԲԵՆԻՆ (մեկուսի)

Նախազգացմանը ես հավատում եմ։

(Պաղպաղակը տալով)

Վերցրո՛ւ, դեղ է սա ձանձրույթի դեմ։

ՆԻՆԱ

Սա կզովացնի։

ԱՐԲԵՆԻՆ

Ո՞նց չի զովացնի։

ՆԻՆԱ

Տխուր է այստեղ։

ԱՐԲԵՆԻՆ

Բայց դե ի՞նչ արած,
Որ դուք չտրտմեք մարդկանց շրջանում,
Պետք է ձեզ վարժեք նայելու նրանց
Խենթություններին, նենգություններին,
Հիմարությանը և խարդավանքին։
Դա այն առանցքն է, որի շուրջը այս կյանքն է պտտվում։

ՆԻՆԱ

Իրոք այդպես է, ի՞նչ սոսկալի է։

ԱՐԲԵՆԻՆ

Հա՛, սոսկալի է։

ՆԻՆԱ

Կյանքում չես գտնի անարատ հոգի։

ԱՐԲԵՆԻՆ

Իսկապես չկա։ Ես կարծում էի գտել եմ մեկին,
Բայց սխալվեցի։

ՆԻՆԱ

Ի՞նչ ասացիր դու։

ԱՐԲԵՆԻՆ

Ես ասացի, որ աշխարհում համայն
Այդպիսի մեկին ես գտա միայն։
... Քեզ։

ՆԻՆԱ

Գոմեստ ես դու։

ԱՐԲԵՆԻՆ

Ես շատ եմ պարել, գուցե դրանից։

ՆԻՆԱ

Հիշիր, mon ami, չես շարժվել տեղից։

ԱՐԲԵՆԻՆ

Ուրեմն նրանից, որ քիչ եմ պարել։

ՆԻՆԱ (դատարկ ափսեն տալով ամուսնուն)

Ափսեն վերցրու և դիր սեղանին։

ԱՐԲԵՆԻՆ (վերցնելով)

Ողջը կերել է, ինձ համար ոչի՞նչ, ոչի՞նչ չի թողել։
Ա՜խ, դու անգութ կին։

(Խոհերով. տարված)

Հետ դառնալն ուշ է, քայլն օրհասական արդեն կատարվեց,
Բայց նրա համար թող ոչ ոք, ոչ ոք էլ զոհ չդառնա։

(Ափսեն խփում է գետնին և փշրում)։

ՆԻՆԱ

Ի՞նչ անզգույշն ես։

ԱՐԲԵՆԻՆ

Ոչինչ, հիվանդ եմ, տուն դառնանք արագ,

ՆԻՆԱ

Պատրաստ եմ։ գնանք, սակայն, սիրելիս,
Մոայլ ես այսօր, դժգո՞հ ես ինձնից։

ԱՐԲԵՆԻՆ

Ո՜չ, այսօր ես շատ զոհ էի քեզնից։

(Գնում են)։

ԱՆՀԱՅՏ (մնալով միայնակ)

Քիչ էր մնում, որ խղճահարվեի, եղավ մի վայրկյան,
Երբ ուզում էի նետվել ես առաջ...

(Մտածելով)

Ո՞չ, թող կատարվի վճիռը երկնի,
Հետո դուրծելու հերթն ինձ կհասնի։

(Գնում է)։

Պատկեր երկրորդ.

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

Արբենինի ննջասենյակը

(Ներս է մտնում Նինան, նրա հետևից ազախինը)։

ԱՂԱԽԻՆ

Տիրուհի, ինչո՞ւ գունատ եք այդքան։

ՆԻՆԱ (ականջօղերը հանելով)

Տկար եմ մի քիչ։

ԱՂԱԽԻՆ

Հոգնել եք, ոչի՞նչ։

ՆԻՆԱ (մեկուսի)

Երկյուղ է ազդում ինձ ամուսինս, լուռ է շարունակ,
Հայացքն էլ ցրված ու տարօրինակ։

(Աղախնուն)

Խեղդվում եմ կարծես, գուցե կորսետից.
Շորերս այսօր սաղո՞ւմ էին ինձ։

(Մոտենալով հայելուն)

Դու ճիշտ ես ասում. իրոք գունատ եմ, մահվան պես գունատ,
Բայց ո՞վ չէ գունատ մեր Պետերբուրգում,
Գուցե Միմիայն ծեր իշխանուհին,
Նա էլ կեղծում է՝ այտերը ներկում։

(Հանձում է կեղծամը և մազերը փաթաթում)

Ա՜ռ, գցիր մի կողմ, տո՛ւր իմ ծածկոցը։

(Նստում է բազկաթոռի վրա)

Նոր վալսն այդ որքա՜ն հմայիչ պար էր,
Զմայլանքի մեջ պտտվում էի արագ ու սահուն,
Եվ չնաշխարհիկ երազանքները
Տանում էին ինձ ու միտքս հեռուն,

Ու ճմլվում էր սիրտս. հաճույքի՞ց, թե տրտմությունից։
Սա՛շա, մի գիրք տուր կարդալու համար։
Որքա՜ն ձանձրացրեց այդ իշխանը ինձ։
Բայց ես խղճում եմ այդ խեղճ պատանուն։
Նա ի՞նչ էր խոսում... Կովկաս... ու վտանգ...
Չարագործ, պատիժ... ա՛յ քեզ զառանցանք։

ԱՂԱԽԻՆ

Կհրամայե՞ք, տիկին, հավաքեմ։

(Ցույց տալով ճագուռաը)

ՆԻՆԱ

Թող այդպես մնա։

(Խորասուզվում է մտածմունքների մեջ)։
(Դռների մեջ երևում է Արբենինը)։

ԱՂԱԽԻՆ

Կը հրամայե՞ք գնամ։

ԱՐԲԵՆԻՆ (ցածր ձայնով դեպի ոգևորությունը)

Լա՛վ, գնա՛։

(Աղախինը չի հեռանում)

Հեռացի՛ր, գնա՛։

(Աղախինը հեռանում է։ Արբենինը փակում է դուռը)։

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

Արբենինը և Նինան

ԱՐԲԵՆԻՆ

Աղախինն արդեն հարկավոր չէ՞ քեզ։

ՆԻՆԱ

Օ, դու այստե՞ղ ես։

ԱՐԲԵՆԻՆ

Այո, այստեղ եմ։

ՆԻՆԱ

Կարծես հիվանդ եմ։

Գլուխս այրվում է կրակի նման,
Մո՛տ եկ, տո՛ւր ձեռքդ, զգո՞ւմ ես, ինչպես հրդեհվում է նա։
Իզուր ես այնտեղ պաղպաղակ կերա,
Հավանական է, որ ես մրսեցի հենց այդ ժամանակ։

ԱՐԲԵՆԻՆ (ցրված)

Այո, պաղպաղակ...

ՆԻՆԱ

Կուզեի քեզ հետ խոսել, իմ անգին...
Դու շատ ես փոխվել, դարձել ինձ օտար,
Քեզնից չեմ զգում զգվանքը նախկին,
Քանդ դողդոջ է, իսկ հայացքդ՝ սառ։
Եվ այս բոլորը դիմակահանդես գնալու համար։
Երդվել եմ երբեք չգնալ այնտեղ, ատելի են ինձ։

ԱՐԲԵՆԻՆ (մեկուսի)

Զարմանալի չէ, չես զգա դրանց կարիքն այս անգամ։

ՆԻՆԱ

Ի՞նչ է կատարվում, երբ անգգույշ ես թեկուզ մեկ անգամ։

ԱՐԲԵՆԻՆ

Անգգույշ, օհո՜։

ՆԻՆԱ

Հենց դրա մեջ է ողջ պատուհասը։

ԱՐԲԵՆԻՆ

Ամենի մասին պետք է նախապես կշռադատել։

ՆԻՆԱ

Վարքդ նախապես թե իմանայի,
Քո կինը երբեք ես չէի լինի։
Ուրախություն ու հաճույք է կարծես՝
Ինքս միշտ տանջվեմ ու չարչարեմ քեզ։

ԱՐԲԵՆԻՆ

Ի դեպ, իմ սերը քո ինչի՞ն է պետք։

ՆԻՆԱ

Ի՞նչ սեր կա այստեղ, իմ ինչի՞ն է պետք այսպիսի կյանքը։

ԱՐԲԵՆԻՆ (ճստելով)

Իրավացի ես. ի՞նչ բան է կյանքը, լոկ ունայնություն,
Քանի մեր սրտում աշխույժ և անհոգ արյունն է հորդում,
Կյանքում ամեն ինչ հաճելի է մեզ, մոտիկ մեր սրտին։
Անցնում են կրքի, երազանքների այդ տարիները,
Դառնում է ողջը մոայլ ու մթին։
Ի՞նչ է կյանքը որ... մի բառախաղ է հնուց մեզ հայտնի։
Վարժության համար երեխաների։
Սկզբում ծնունդ. հետո վշտերի, գաղտնի վերքերի,
Ծանր հոգսերի մի զարհուրելի շարունակություն,
Որի վերջն է մահ, իսկ ամբողջությամբ՝ սին խաբեություն։

ՆԻՆԱ (ցույց տալով կուրծքը)

Այստեղ ինչ-որ բան տոչորում է ինձ։

ԱՐԲԵՆԻՆ (շարունակելով)

Դատարկ բան է դա. լուր ու լսիր։
Կյանքն այնքան է մեզ սիրելի ու թանկ,
Քանի մեր հոգուն բերում է բերկրանք։
Իսկ այդ երկա՞ր է տևում, ո՞վ կասի...
Կյանքը նման է պարահանդեսի.—
Երբ պտտվում ես, շուրջդ ամեն ինչ պարզ է ու պայծառ...
Բայց դառնում ես տուն, ճմռած հագուստդ մի կողմ ես նետում,
Մոռանում ողջը և իսկույն հոգնում։

Եվ որքա՜ն լավ է կյանքից հեռանալ տարիքում ջահել,
Քանի դեռ հոգին սովորություններով
Այդ ունայն ստին չի ընտելացել։
Մի ակնթարթում ճախրել այլ աշխարհ,
Քանի մտքերին դեռ չեն ծանրացել հոգսերն անհամար,
Քանի մահվան դեմ կռվելն է դյուրին,
Բայց քչերին է բախտը շնորհում պարգևն այդ վերին։

ՆԻՆԱ

Ց՜, ո՜չ, ես ապրել, ապրել եմ ուզում։

ԱՐԲԵՆԻՆ

Իսկ ինչի՞ համար։

ՆԻՆԱ

Բայց ես տանջվում եմ հիվանդ, Եվգե՛նի։

ԱՐԲԵՆԻՆ

Բայց մի՞թե ուրիշ քիչ տանջանքներ կան՝
Քո կրածներից ավելի զորեղ ու զարհուրելի։

ՆԻՆԱ

Բժի՛շկ կանչեցեք։

ԱՐԲԵՆԻՆ

Կյանքն անվախճան է, իսկ մահն՝ ակնթարթ։

ՆԻՆԱ

Ցակայն ես ապրել, ապրե՛լ եմ ուզում։

ԱՐԲԵՆԻՆ

Ի՞նչ սփոփանք է տառապյալներին այնտեղ սպասում։

ՆԻՆԱ (երկյուղով)

Աղաչո՜ւմ եմ քեզ, բժի՛շկ բեր շտապ։

ԱՐԲԵՆԻՆ

(տեղից բարձրանալով, սառնությամբ)

Ձեմ ուզում բերել։

ՆԻՆԱ (առոչ լռությունից հետո)

Դու կատակում ես. ի՞նչ անգութ կատակ։
Կարող եմ մեռնել, ուղարկի՛ր արագ։

ԱՐԲԵՆԻՆ

Առանց բժշկի չե՞ք կարող մեռնել։

ՆԻՆԱ

Դու չարագործ ես. չէ՞ որ քո կինն եմ,

ԱՐԲԵՆԻՆ

Լավ, գիտե՛մ, գիտե՛մ։

ՆԻՆԱ

Օ՜, գթա՛ դու ինձ. բոցը հոբդում է
Հիվանդ կրծքիս մեջ և մեռնում եմ ես։

ԱՐԲԵՆԻՆ

Այդքան շո՞ւտ, դեռ ոչ։

(Նայում է ժամացույցին)

Կես ժամ դեռ ունես։

ՆԻՆԱ

Դու ինձ չես սիրում։

ԱՐԲԵՆԻՆ

Իսկ ինչո՞ւ սիրեմ, ա՞յն բանի համար,
Որ մի ահավոր դժոխք ես վառել իմ հոգու խորքում։
Քո տառապանքից հրմվում եմ ահա։ Արարիչ, օ տե՜ր,
Դեռ հանդգնում ես պահանջելու սե՞ր։
Բայց ասա՛, մի՞թե քեզ քիչ եմ սիրել.
Հասկացա՞ր արժեքն իմ զգվանքների։—

Իսկ ես քեզնից ի՞նչ եմ պահանջել.
Լոկ քնքուշ ժպիտ, հոգեթով հայացք,
Իսկ ի՞նչ գտա ես. դավաճանություն, կեղծիք, խարդավանք։
Բայց կարելի՞ էր ինձ այդպես ծախել
Ինչ-որ հիմար համբույրի համար,
Ինձ, որ առաջին քո իսկ ակնարկով
Պատրաստ էի քեզ նվիրվել հոգով,
Ինձ դավաճանե՞լ, այն էլ այդքան շո՞ւտ...

ՆԻՆԱ

Թե իմանայի ես իմ մեղքերը...

ԱՐԲԵՆԻՆ

Լռի՛ր, այլապես ես կցնորվեմ.
Ե՞րբ կդադարեն այս տանջանքները։

ՆԻՆԱ

Ի՞նչ ապարանջանն իշխանն է գտել,
Ինձ զրպարտել են, եղել ես խաբված։

ԱՐԲԵՆԻՆ

Այսպես ուրեմն, եղել եմ խաբված։
Հերիք է որքան ես սխալվեցի և երազեցի,
Որ դեռ կարող եմ լինել երջանիկ...
Մտածում էի նորից հավատալ ու սիրել նորից...
Բայց ժամը հասավ, զառանցանքի պես ցնդեց ամեն ինչ։
Գուցե հույսերին եղած անձնատուր
Իրագործեի երազանքներն իմ այդ երկնային,
Գուցե սրտիս մեջ կենդանանային
Այն ամենն, ինչ որ նրա մեջ առաջ ծաղկում էր պայծառ։
Բայց դու մերժեցիր, դու չկամեցար։
Արտասվի՛ր ցավից.
Բայց ի՞նչ է, Նի՛նա, կնոջ արցունքը՝ ջուր, ուրիշ ոչինչ։
Ես եմ լաց եղել, արցունքներ թափել,
Խանդից, զայրույթից, տառապանքներից ու ամոթանքից
Ողջակիզվել է այրական հոգիս։
Իսկ գիտե՞ս, թե ինչ է նշանակում,

Երբ տղամարդն է լալիս, հեկեկում։
Այդ ակնթարթին, օ՜, չմոտենաս երբեք դու նրան։
Մահն է ձեռքերում, իսկ նրա կրծքում՝ դժոխքը համայն։

ՆԻՆԱ

(Արտասվալից աչքերով ընկնում է
ծնկների վրա, բարձրացնելով ձեռքերը դեպի երկինք)
Երկնայի՜ն իմ տեր, խնայի՜ր դու ինձ։
Նա ինձ չի լսում, բայց դու լսում ես, ամեն ինչ գիտես,
Դու, ամենազո՜ր, ինձ կարդարացնես։

ԱՐԲԵՆԻՆ

Կա՜ց, նրա առջև գոնե մի՜ կեղծիր։

ՆԻՆԱ

Օ՜, ես չեմ ստում, և չեմ էլ պղծի
Կեղծ աղոթքներով սրբությունն անբիծ,
Տառապյալ հոգիս նրան եմ հանձնում,
Նա քեզ կպատժի, կպաշտպանի ինձ։

ԱՐԲԵՆԻՆ

(որն այդ ժամանակ քայլում է սենյակում ձեռքերը խաչած)
Մոտեցավ ժամը, Նինա, աղոթի՜ր։
Քիչ հետո արդեն դու պիտի մեռնես,
Քո մահը մարդկանց կմնա գաղտնի,
Աստված կարող է միայն դատել մեզ։

ՆԻՆԱ

Ինչպե՞ս թե մեռնել, ա՞յժմ հենց, հիմա՞. անկարելի է։

ԱՐԲԵՆԻՆ (ծիծաղելով)

Ես լավ գիտեի, որ կսարսափես։

ՆԻՆԱ

Մահ... այո՜, այո՜ նա ճիշտ է ասում,
Դժոխքի բոցն է կրծքիս մեջ կարծես։

ԱՐԲԵՆԻՆ

Գարահանդեսում թույն եմ տվել քեզ։

ՆԻՆԱ

(Լռություն)։
Ո՜չ, չեմ հավատում, անկարելի է, դու ծիծաղում ես...
(Նետվելով ամուսնու գիրկը)
Ո՜չ, դու դահիճ չես... չէ՞ որ քո հոգում
Կայծեր կան բարու... այդքան սառնությամբ
Մաղիկ հասակում ինձ չես կործանի,
Մի՜ շրջիր դեմքդ ինձնից, նվազենի։
Մի՜ շարունակիր տանջանքն այս ահեղ,
Ցրի՜ր երկյուղս, դե փրկի՜ր դու ինձ...
Դե նայի՜ր այստեղ...
(Նայում է ուղիղ ճրա աչքերի մեջ և նա է քոչում)։
Մահն է աչքիդ մեջ։
(Վայր է ընկնում աթոռի վրա և դեմքը ծածկում)։
(Արբենինը մոտենում է և համբուրում նրան)։

ԱՐԲԵՆԻՆ

Այո, կմեռնես, իսկ ես կմնամ հավետ միայնակ...
Կանցնեն տարիներ, կմեռնեմ և ես,
Բայց հոգիս դարձյալ մենակ կմնա.
Սարսափելի է... Բայց մի՜ վախենա.
Մի շքեղ աշխարհ կբացվի քո դեմ, քեզ, տառապյալին՝
Հրեշտակները կառնեն օթևանն իրենց երկնային։
(Արտասվում է)
Այո, սիրում եմ, սիրում եմ ես քեզ...
Անցյալն եմ ահա տալիս մոռացման,
Ամեն մի վրեժ ունի և սահման, ահա սահմանն այդ.
Տես, քո դահիճը երեխայի պես լալիս է վրադ։
(Լռություն)

ՆԻՆԱ

(Ձեռքից ազատվելով վեր է թռչում)
Եկե՞ք... օգնեցե՞ք... ա՞խ, ես մեռնում եմ։

Թո՞ւյն, թո՞ւյն, չեն լսում... ես հասկանում եմ,
Որ դու զգույշ ես... որ դու ոչ մեկին... ավա՜ղ, չեն գալիս...
Հիշիր երկնային դատաստանը, իսկ ես՝
Դահի՛ճ, մարդասպա՛ն, նզովում եմ քեզ։

(Ձեռասնելով միշև դռները, ընկնում է անզգայացած)

ԱՐԲԵՆԻՆ (դառնորեն ծիծաղելով)

Նզո՞վք. ի՞նչ օգուտ քո նզովելուց,
Ես նզովված եմ իրենից՝ աստծուց։

(Մոտենում է)։

Դու խե՜ղճ արարած, պատիժն այս վեր էր նրա ուժերից,

(Կանգնում է ձեռքերը խաչած)

Գունատվեց ահա։

(Ցնցվում է)։

Բայց դեմքն անխռով՝ հանգիստ է որքան,
Չի էլ նշմարվում ո՛չ մի խղճի խայթ, ո՛չ էլ հետք զղջման.
Մի՞թե...

ՆԻՆԱ (թույլ ձայնով)

Մեռնո՜ւմ եմ... մնաս բարո՞վ, Եվգենի,
Մեռնում եմ անմեղ... չարագործ ես դու։

ԱՐԲԵՆԻՆ

Ո՛չ, ո՛չ, մի՛ խոսիր, քեզ չեն օգնելու
Խոնարհանքություն և ոչ էլ կեղծիք։
Դե ասա, որ ես խաբված եմ եղել...
Որ իմ սիրո հետ չէր կարող նույնիսկ
Ինքը՝ դժոխքը այդպես կատակել։
Ա՜խ, դու լռո՞ւմ ես, վրեժն ուրեմն արժանի է քեզ...
Ոչինչ չի օգնի, դու պիտի մեռնես...
Եվ ողջը մարդկանց գաղտնիք կմնա, դու հանգիստ եղիր...

ՆԻՆԱ

Է՜հ, միևնույն է... այժմ ի՞նչ տրած...
Եզնով մաքուր եմ ես աստծու առաջ։

(Մեռնում է)։

ԱՐԲԵՆԻՆ

(մոտենում է Նինային և իսկույն երեսը դարձնում)

Սո՛ւտ է, սուտ։

(Ընկնում է բազկաթոռի մեջ)։

Վերջ երրորդ գործողության

ՉՈՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Պատկեր առաջին

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ԱՐԲԵՆԻՆ

(Նստած է բազմոցի վրա, սեղանի մոտ)։

Այս տառապագին խենթ ճիգերի մեջ,
Այս ինքնամարտում եղա ուժասպառ...
Եվ ես ի վերջո զգում եմ կարծես
Ինչ-որ հոգեմաշ, խաբուսիկ դաղար...
Երբեմն միայն մռայլ հոգսերում
Հոգիս նվում է գրկում ցուրտ քնի,
Սիրտս ճմլվում և սպասում է ինչ-որ մի բանի։
Ա՜խ, չի՞ վերջացել այս ամենն արդյոք, մի՞թե կյանքում դեռ
Պիտի ճաշակեմ նոր տառապանքներ...
Անմտություն է... Կանցնեն, վշտերս կտամ մոռացման,
Կյանքի բեռան տակ կիջնի հուշերիս սև քոնը մահվան։
Սակայն երազած հանգիստս մի օր,
Կայցե՞լի արդյոք սիրտն այս վիրավոր։

(Մոտաստվում է, ճանկարձ գլուխը բարձրացնում է)։

Ես սխալվել եմ... Անհնար է դա,
Ի՜նչ անողոք եք, հուշե՛ր չարախոց...
Ի՜նչ պարզ եմ տեսնում աղերսը նրա։—
Հեռացի՛ր ինձնից, արթնացա՛ծ դու օձ։

(Գլուխն իջեցնում է ձեռքերի վրա)։

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

ԿԱՋԱՐԻՆ (ցածրաձայն)

Արբենինն այստե՞ղ, հառաչում է նա վշտացած ու խեղճ։
Տեսնենք՝ ինչպես է դերը խաղալու կոմեդիայի մեջ։

(Ճրաճ)

Ազնի՛վ բարեկամ, քո դժբախտության լուրը լսեցի,
Եվ իսկույն եկա քեզ այցելության։
Դե, ճակատագրին այդ է հաճելի,
Ամեն մարդ ունի մի բախտ, մի վախճան։

(Լռություն):

Դե, բա՛վ է, եղբայր, դիմակդ հանիր, նետիր քո դեմքից,
Այդպես լուրջ, տխուր ի՞նչ ես նայում ինձ։
Այդ լավ է անել ժողովրդի մեջ, մարդկանց երեսին,—
Մենք դերասան ենք քեզ հետ միասին։
Մի ասա՛, ի՞նչ ես գունատվել այդպես,
Կարծես ողջ գիշեր թղթախաղի մեջ տարվել ես, եղբայր։
Ա՜խ դու, հի՜ն խարդախ,— սրան նայիր, տե՛ս,—
Մենք դեռ այդ մասին կխոսենք երկար...
Ահա հարգանքի և վշտի համար
Հարազատներդ եկան, բարեկամ։
Դե, մնաս բարյավ, ես վաղը կգամ։

(Գնում է):

ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ

Հյուրասենյակները նորից են մտնում

ՏԻԿԻՆ (բարեկամուհուն)

Անիծված էին, կասկած չի կարող լինել այդ մասին,
Վատ զավակ էր նա, անպետք ամուսին։
Ցմոռանաս ինձ նաև հիշեցնել՝
Խանութից սգո հագուստ վերցնել,
Ու թեև ոչ մի եկամուտ չունեմ,
Բայց սրանց համար պիտի քայքայվեմ։

ԲԱՐԵԿԱՄՈՒՀԻ

Ma tante, ասա այդ ինչպե՞ս եղավ,
Որ մեր կուզինան, մեր Նինան մեռավ։

ՏԻԿԻՆ

Գատճառը, օրիորդ, ձեր բարքի գերի կյանքն է անհեթեթ։
Դեռ շատ կտեսնենք չարիք ու աղետ։

(Գնում են):

ՏԵՍԻԼ ՉՈՐՐՈՐԴ

Հանգուցյալի սենյակից դուրս են գալիս բժիշկը և մի ծերունի

ՇԵՐՈՒՆԻ

Տիկինը ձեզ մո՞տ ավանդեց հոգին։

ԲԺԻՇԿ

Ավա՜ղ չգտան ինձ ժամանակին...
Ես միշտ ասել եմ, պնդել շարունակ,
Որ հանդեսները և պաղպաղակը բերում են փորձանք։

ՇԵՐՈՒՆԻ

Շքեղ ծածկոց է դիպակն այդ, պարո՜ն, դուք տեսա՞ք կարգին։
Մեռած իմ եղբոր աճյունի վրա, նախընթաց գարնան,
Նույն դիպակից էր, իսկ և իսկ նման։

(Գնում է):

ՏԵՍԻԼ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԲԺԻՇԿ

(Մոտենում է Արբենինին և բռնում է նրա ձեռքը):

Լավ կլիներ՝ քիչ հանգստանայիք։

ԱՐԲԵՆԻՆ (ցնցվելով)

Ա՜հ...

(մեկուսի)
Սիրտս ճմլվեց։

ԲԺԻՇԿ

Տառապել եք դուք, ողջ գիշեր տանջվել,
Նիրհեցեք փոքր-ինչ։

ԱԲԲԵՆԻՆ

Կաշխատեմ, ոչինչ։

ԲԺԻՇԿ

Էլ հնար չկա ոչ մի կերպ օգնել,
Այժմ ձեր մասին մտածեք միայն։

ԱԲԲԵՆԻՆ

Դուք Հանգիստ եղեք։ Կյանքիս մեջ որքա՜ն
Ծանր վշտեր է կրել կուրծքը այս,
Բայց ես ապրում եմ դարձյալ անվնաս...
Բախտ էի խնդրում ես արարիչից,
Հրեշտականման մի քնքուշ էակ պարգևեց նա ինձ.
Բայց մեղսոտ շունչս իջավ իր վրա,
Աստվածությունը եղծանեց նրա,
Եվ ահա, տեսե՛ք, էակն այս չքնաղ
Մահվան պաղ քնով հանգչում է խաղաղ։
Կյանքում մի անգամ մի մարդու ժառար
Իմ պատվի գնով փրկեցի եզրից անել կործանման,
Իսկ նա ծաղրանքով, չակնարկած մի բառ,
Մի ժամ էլ չանցած, ինձանից անդարձ խլեց ամեն բան։
(Գնում է)։

ԲԺԻՇԿ

Նա լուրջ հիվանդ է, ես չեմ կասկածում,
Նա տանջանքներ է կրել անհամար,
Բայց եթե հանկարծ նա խելագարվի,
Երաշխավոր եմ իր կյանքի համար։
(Դուրս գալով դեմառդեմ՝ հանդիպում է երկու հոգու)։

ՏԵՍԻԼ ՎԵՑԵՐՈՐԴ

Ներս են մտնում Անհայտը և իշխանը

ԱՆՀԱՅՏ

Թույլ տվեք հարցնել.
Մենք Արբենինին կարո՞ղ ենք տեսնել։

ԲԺԻՇԿ

Չեմ կարող իրոք ձեզ պատասխանել,
Այդ մարդու կինը վախճանվեց երեկ։

ԱՆՀԱՅՏ

Ափսո՜ս, շա՜տ ափսոս։

ԲԺԻՇԿ

Եվ նա տխուր է, այնքա՜ն վշտաբեկ։

ԱՆՀԱՅՏ

Ես շատ եմ ցավում այդ մարդու համար։
Բայց ինքը տա՞նն է, ասացե՛ք խնդրեմ։

ԲԺԻՇԿ

Նա՞, այո՛, տանն է։

ԱՆՀԱՅՏ

Իր հետ կարևոր, շատ լուրջ գործ ունեմ։

ԲԺԻՇԿ

Պարոննե՛ր, նրա բարեկամնե՞րն եք։

ԱՆՀԱՅՏ

Առայժմ դեռ ոչ, բայց հենց եկել ենք,
Որ իր հետ մի քիչ բարեկամանանք։

ԲԺԻՇԿ

Նա լուրջ հիվանդ է։

ԻՇԽԱՆ (վախեցած)

Ի՞նչ է, պառկա՞ծ է, չի՞ հիշում ոչինչ։

ԲԺԻՇԿ

Բոլորովին ոչ, քայլում է, խոսում,
Հույս ունեմ մի քիչ։

ԻՇԽԱՆ

Աստված իմ, փա՜ռք քեզ։

(Բժիշկը հեռանում է)։

ՏԵՍԻԼ ՅՈՓԵՐՈՐԴ

ԻՇԽԱՆ

Ահա վերջապես։

ԱՆՀԱՅՏ

Ձեր դեմքն այլվում է։
Հաստա՞տ եք պահում դուք ձեր վճիռը։

ԻՇԽԱՆ

Հավատացա՞ծ եք, որ հիմնավոր են։
Ձեր կասկածները։

ԱՆՀԱՅՏ

Լսեք ինձ, մենք մի նպատակ ունենք։
Մենք երկուսով էլ.ատում ենք նրան.
Բայց դուք այդ մարդու հոգին չգիտեք,
Նա խոր է, խավար, ինչպես գերեզման։
Մի բանի համար եթե նա բացվեց,
Կթաղի իր մեջ հավիտենաբար։
Նա չի ընդունում ոչ մի ապացույց՝
Կասկածն իր հոգուց վանելու համար։
Ներում, խղճմտանք նա չի ճանաչում,
Երբ վիրավորվեց, այդ մարդն ունի
Միայն մի օրենք ու մի նպատակ. վրեժ է գոչում։

Կինն այդ չի մեռել մահով բնական, արդեն պարզ է մեզ։
Ես գիտեմ, որ դուք ատում եք իրար,
Պատրաստ եմ սիրով ծառայելու ձեզ։
Դուք կպայքարեք, իսկ ես քիչ հեռու
Կկանգնեմ ձեր այդ մարտը դիտելու։

ԻՇԽԱՆ

Իսկ ո՞նց իմացաք, որ մի օր առաջ
Վիրավորանք եմ կրել այդ մարդուց։

ԱՆՀԱՅՏ

Ամենայն սիրով կպատմեի ձեզ,
Սակայն ձանձրացնել ես ձեզ չեմ ուզում.
Այդ մասին ամբողջ քաղաքն է խոսում։

ԻՇԽԱՆ

Անտանելի՜ միտք։

ԱՆՀԱՅՏ

Ուրեմն՝ այդ միտքը ձեզ շա՞տ է խոցում։

ԻՇԽԱՆ

Դուք չեք զգացել, թե ամոթանքը ինչպես է տանջում։

ԱՆՀԱՅՏ

Ամո՞թ, ահա ինչ։— Հա՜, ի դեպ ասած,
Կյանքը կստիպի ամոթի ցավը մոռանալ անդարձ։

ԻՇԽԱՆ

Սակայն ո՞վ եք դուք։

ԱՆՀԱՅՏ

Դուք իմ անո՞ւնն եք ուզում իմանալ.
Իմացեք միայն՝ գործակիցն եմ ձեր,
Ձեզ հետ միասին, ձեր պատվի համար

Պիտի պայքարեմ կրքոտ, անձնվեր։
Բայց սո՛ւս... գալիս է... դանդաղ, ծանրաքայլ։
Հենց ինքն է, որ կա.
Խնդրեմ հեռացեք դուք իսկույն ևեթ,
Հաշիվներ ունեմ ես այդ մարդու հետ,
Եվ ականատես ինձ պետք չէ հիմա։

(Իշխանը մի կողմ է քաշվում)։

ՏԵՍԻԼ ՈՒԹԵՐՈՐԴ

Արբենին, ձեռքին մոմ

ԱՐԲԵՆԻՆ

Մա՜հ, մա՜հ դժնալից։ Ողջ էությունս
Համակել է նա, հալածում է ինձ։
Երկար, անմռունչ ես նայում էի նրա դիակին։
Անբացատրելի խորին տրտմությամբ հոգին իմ լեցուն՝
Նրա մանկական խաղաղված դեմքին.
Հավերժ ժպիտն էր մեղմիկ առկայծում,
Որ գուցե այնտեղ ծաղկեց այն պահին,
Երբ նրա առջև հավերժությունը բացվեց դրախտի,
Ուր հոգին կարդաց վճիռն իր բախտի։
Ես սխալվե՞լ եմ... ո՞վ կապացուցի,
Որ անմեղ էր նա. այդ սո՛ւտ է, սո՛ւտ է.
Ես փաստեր ունեմ, ես սխա՞լ թույլ տամ։
Ես անգամ նրան չհավատացի,
Սրանից հետո ո՞ւմ կհավատամ։
Այո՛, եղել եմ կրքոտ ամուսին,
Բայց այստեղ եղա դաժան դատավոր,
Ո՞վ կհանդգնի հավատքս փոխել եղածի մասին։

ԱՆՀԱՅՏ

Ե՛ս կհանդգնեմ։

ԱՐԲԵՆԻՆ (Սկզբում վախենում է և
ետ քաշվելով, մոմը մոտեցնում է դեմքին)։

Սակայն ո՞վ եք դուք։

ԱՆՀԱՅՏ

Ճանաչեցիր դու ինձ, Եվգենի,
Բարեկամներ ենք եղել երբեմնի։

ԱՐԲԵՆԻՆ

Սակայն ո՞վ եք դուք։

ԱՆՀԱՅՏ

Քո բարի ոգին։
Ամենուր, անտես եղել եմ քեզ հետ, քեզանից ծանուկ,
Միշտ ուրիշ դեմքով, այլ զգեստ հագած,
Իմացել եմ քո բոլոր գործերը, մտքերդ անձուկ.
Քեզ զգուշացրի պարահանդեսում երկու օր առաջ։

ԱՐԲԵՆԻՆ (ցնցվելով)

Մարգարեությունն ատելի է ինձ.
Խնդրում եմ իսկույն չքվե՛ք այստեղից։

ԱՆՀԱՅՏ

Լսեցի, սակայն ես չեմ հեռանա,
Ջնայած կտրուկ քո հրամանին և ահեղ ձայնին։
Այո՛, պարզ է, որ ինձ չես ճանաչում։
Ես չեմ պատկանում այն մարդկանց թվին,
Որ նպատակը՝ փայփայած երկար,
Դատարկ երկյուղից թողնեն անկատար։
Այժմ հասել եմ իմ նպատակին,
Կարող եմ այստեղ ընկնել, մահանալ,
Սակայն դառնալու չեմ անի մի քայլ։

ԱՐԲԵՆԻՆ

Ես էլ եմ դրանց թվին պատկանում,
Բայց այդ հատկությամբ ես չեմ պարծենում։

(Նստում է)

Ես լսում եմ ձեզ։

ԱՆՀԱՅՏ (մեկուսի)

Նա իմ խոսքերից չընկճվեց բնավ.

Ես սխալվել եմ գուցե իսկապես...
Հերջը տեսնենք, լա՛վ։

(Արբենինին)

Յոթ տարի առաջ, ճանաչում էիր դու ինձ, Արբենին։
Հահել էի ես, անփորձ և հարուստ, կրքոտ, բռնկուն։
Իսկ քո հոգու մեջ դեռ այն ժամանակ
Կար մի թաքնված մռայլ սառնություն,
Բոլորի հանդեպ մի դժոխային շար արհամարհանք,
Որով ամենուր պարծենում էիր։
Խելքի՞դ վերագրեմ, թե՞ պայմաններին,—
Չգիտեմ և չեմ քննի քո հոգին,—
Քեզ կհասկանա միմիայն աստված,
Որն ստեղծել է քեզ պես արարած։

ԱՐԲԵՆԻՆ

Լավ նախաբան է։

ԱՆՀԱՅՏ

Եվ վերջաբանը հաջող կլինի։
Մեկ անգամ դու ինձ հորդորանքներով
Հրապուրեցիր և տարար քեզ մոտ...
Քսակս լիքն էր, բախտի նկատմամբ հաստատ հավատքով
Նստեցի խաղի, բայց տարար դու ինձ։
Հայրս մի մարդ էր ժլատ, խստասիրտ,
Եվ ես, որպեսզի ազատվեմ նրա կշտամբանքներից,
Վճռեցի կրկին կորուստը շահել։
Դու թեև շահել, սակայն լավ էիր դու ինձ կաշկանդել
Քո ճանկերի մեջ, և ես բոլորը տարվեցի կրկին։
Խոր հուսալքում իջավ իմ սրտին,—
Գուցե հիշում ես իմ արցունքները, աղերսանքները,
Որ քո մեջ միայն ծիծաղ շարժեցին...
Լավ էր լինեի ես դաշունահար։
Բայց այն ժամանակ մարդարեաբար
Գործիդ վախճանը չգուշակեցիր,
Եվ այժմ միայն շար սերմն անցյալի
Ահա տվեց իր պտուղն արժանի։

(Արբենինը ցանկանում է առաջ ճեռվել, բայց խորասուզվում է մտքերի մեջ)։

Եվ ես լքեցի այդ անկնթարթից
Երանությունը ջահել օրերի, սերը և կանանց,
Կորան հույզերս, երազանքներս քաղցր, քնքշալից,
Եվ այս աշխարհում մի ուրիշ աշխարհ բացվեց իմ առաջ,
Մի նոր, այլ աշխարհ ինձ օտարոտի զգացումների,
Հանրության կողմից հալածված մարդկանց,
Քինոտ սրտերի, սառած կրքերի,
Եվ հրապուրիչ տառապանքների։
Ես տեսա՝ ոսկին իշխում է կյանքում որպես հզոր տեր,
Եվ խոնարհվեցի։ Անցան տարիներ,
Եվ արագությամբ կորավ ամեն ինչ՝ փող, առողջություն,
Բախտի դռները հավիտենաբար փակվեցին իմ դեմ,
Եվ ես կնքեցի վերջին պայմանը բախտիս հետ դժբեմ,
Եվ ահա՛ շարձա այսպես, ինչպես կամ։
Ա՜խ, դու դողո՞ւմ ես, դու հասկանո՞ւմ ես
Իմ նպատակը, թե ինչ եմ ասում,
Դե կրկնիր դարձյալ, որ չես ճանաչում։

ԱՐԲԵՆԻՆ

Ա՜խ, ճանաչեցի, հեռացի՛ր ինձնից։

ԱՆՀԱՅՏ

Հեռանա՞լ. մի՞թե այդ է բոլորը. դու ծաղրել ես ինձ,
Այժմ ծաղրելու հերթն ինձ է հասել։
Նորերս հանկարծ լուրեր լսեցի,
Որ դու հարուստ ես, ամուսնացել ես ու երջանկացել.
Սիրտս բողոքեց, հուզվեցի սաստիկ,
Եվ սկսեցի երկար մտածել.
Նա ինչո՞ւ, ինչո՞ւ դարձավ երջանիկ։
Խլացած մի ձայն շշնջում էր ինձ.
«Գնա՛, խոովի՛ր իր կյանքը հանդիստ»։
Խառնված ամբոխին ես սկսեցի քեզ հետապնդել,
Անխոնջ, ամենուր, միշտ քո հետևից,
Բոլորն իմացա, և դու ահա տե՛ս,

Գործիս վախճանը հասավ վերջապես։
Լսի՛ր, ես գիտեմ, ես ճշմարտորեն քեզ կասեմ ողջը...

(Ձայնը երկարացնելով)

Դու... սպանել ես դու քո կնոջը...

(Արբենինը ետ է թռչում: Իշխանը մոռենում է):

ԱՐԲԵՆԻՆ

Սպանե՞լ եմ, ի՞սկ։ Իշխան... ի՞նչ է այս...

ԱՆՀԱՅՏ

Ես իմն ասացի, իսկ մնացածը կասի՝ կիմանաս։

ԱՐԲԵՆԻՆ (կատաղության մեջ)

Ա՜, դավադրություն... սքանչելի է...
Եվ դուք թակարդի մեջ եք ինձ առել...
Ո՞վ կհանդգնի էլ ձեզ խանգարել.
Ոչ ոք... իհարկե, դուք արքաներ եք... ես հնազանդված
Ընկել եմ ահա անուժ, ջախջախված,
Հոգիս դողում է ձեր հայացքներից...
Ես խենթ եմ, մանուկ, ձեզ պատասխանել չեմ կարող ոչինչ.
Պարտված եմ ձեր դեմ ես վայրկենաբար, կատակով խաբված,
Վիզս թեքում եմ ես ձեր կացնի տակ՝ հանգիստ և հաշտված։
Իսկ մի՞թե արդեն մոռացել եք դուք,
Որ դեռ ունեմ խելք, փորձառություն, ուժ.
Կարծում եք նրա շիրիմը տարավ ամեն ինչ անհուշ,
Եվ ձեզ բոլորիդ ես չեմ հատուցի ինչպես անցյալում։
Ահա թե որքան ստորացած եմ եղել ձեր մտքում
Բամբասանքներով խարդախ ամբոխի։
Այս տեսարանը, որ հնարել եք այսքան պերճաշուք,
Բայց վերջաբանը գուշակե՞լ եք դուք։
Իսկ այս լակոտը, սա էլ է փորձում մարտնչել իմ դեմ,
Քիչ էր ապտակը, ո՜չ, նա ուզում է նորից ապտակեմ.
Ոչինչ, սիրելիս, կստանաք ինձանից։
Զանձրացել եք դուք երևի կյանքից,
Զարմանալի չէ, ի՞նչ արժեք ունի կյանքը հիմարի
Եվ փողոցային մի կնամոլի.

Հանդարտվե՛ք այժմ, եղե՛ք ապահով,
Կմեռնեք այստեղ սրիկայի պես, լրբենի մահով։

ԻՇԽԱՆ

Կտեսնենք, արագ։

ԱՐԲԵՆԻՆ

Պատրաստ եմ, գնա՞նք։

ԻՇԽԱՆ

Երջանիկ եմ ես։

ԱՆՀԱՅՏ (կանգնեցնելով նրան)

Բայց կարևորը դու մոռացել ես։

ԻՇԽԱՆ (կանգնեցնելով Արբենինին)

Բայց սպասեցե՛ք, դուք պարտավոր եք այժմ իմանալ։
Որ շատ իզուր եք դուք ինձ մեղադրել...
Եվ որ ձեր զոհը անմեղ է եղել,
Տեղին եմ կրել ես վիրավորանք...
Ուզում էի ձեզ ամեն ինչ հայտնել... բայց այժմ գնանք։

ԱՐԲԵՆԻՆ

Այդ ինչպե՞ս, ինչպե՞ս։

ԱՆՀԱՅՏ

Այո՛, քո կինը անմեղ է եղել,
Զափազանց խիստ եք նրա հետ վարվել։

ԱՐԲԵՆԻՆ (ծիծաղում է)

Դուք կատակների մեծ պաշար ունեք։

ԻՇԽԱՆ

Երդվում եմ աստծով, ես չեմ կատակում,
Ապարանշանը այդ պատահաբար
Շորալի մոտ է ընկել, և հետո

Նա ինձ է հանձնել իրեն իսկ ձեռքով։
Ես ինքս նույնպես եղել եմ խաբված,
Բայց ձեր տիկնոջից իմ սերը մնաց խստորեն մերժված։
Թե գիտենայի, որ մի սխալից
Կծագեն այսքան դառը չարիքներ,
Այն դեպքում երբեք ես չէի փնտրի ո՛չ ժպիտ, ո՛չ սեր։
Եվ բարոնուհին նամակի մեջ այս
Եղելությունը ձեզ բացում է պարզ,
Կարդացեք արագ, ինձ համար՝ ամեն մի վայրկյանն է թանկ։
(Արբենինը նայում է նամակին և կարդում)։

ԱՆՀԱՅՏ

(Աչքերը բարձրացնելով դեպի երկինք կեղծավորաբար)։
Ափսոս անմեղ կորած զոհին,
Կպատժվի չարագործը կամքո՛վ վերին.
Կյանքում տեսավ թախիծ, տանջանք,
Բայց երկնքում նա կգտնի,
Փրկություն ու մխիթարանք։
Ես տեսել եմ, գիտեմ նրան,
Այն աչքերում առկայծում էր
Նրա հոգու մաքրությունը անմեղսական,
Ո՞վ կկարծեր, որ ծաղիկն այդ սքանչելի
Կխորտակի փոթորիկը վայրկենական։
Պապանձվե՞լ ես, թշվառական,
Դե մազերդ հիմա փետի՛ր։ Դե ծվատվի՛ր, աղաղակի՛ր—
«Սոսկալի է, ի՞նչ արի ես»։

ԱՐԲԵՆԻՆ (ճարձակվում է նրանց վրա)
Անա՛րգ դահիճներ, կխեղդեմ ես ձեզ։
(Հանկարծ թուլանալով ընկնում է բազկաթոռին)։

ԻՇԽԱՆ (կոպտորեն հրելով)
Զղջումը հիմա էլ չի օգնի ձեզ։
Մեր վեճն առայժմ դեռ չվճռվեց,
Պիստոլետները սպասում են մեզ։
Լուռ է, անտարբեր... Մի՞թե ցնորվեց։

ԱՆՀԱՅՏ
Միգուցե այդպես...

ԻՇԽԱՆ
Ինձ խանդարեցիք։

ԱՆՀԱՅՏ
Վրեժի համար մենք ընտրել էինք տարբեր ճանապարհ,
Ես այն լուծեցի, իսկ դուք ուշացաք։

ԱՐԲԵՆԻՆ (վայրենի հայացքով)
Դուք ի՞նչ ասացիք... ուժերս կորան,
Այնպես խոր էի ես վիրավորված, այնքան համոզված
Ներիր մեղքերս, թողություն տուր ինձ, գթառա՛տ աստված։
(Քոքշալով)
Բայց արցունքները, աղերսները այն...
Իսկ դո՞ւ, դու մի՞թե ներեցիր նրան։
(Կանգնելով ծնկների վրա)
Ընկել եմ ձեր դեմ ահա ծնկաչոք.
Ասացե՛ք դուք ինձ, ճիշտ չէ՞ որ արդյոք,
Դավաճանությամբ անարգ, սրբապիղծ,
Բացահայտորեն նա խաբել է ինձ...
Դե՛, հրամայում, պահանջում եմ ես,
Որ դուք էլ նրան մեղադրեք նույնպես.
Ի՞նչ, նա անմե՞ղ էր.
Մի՞թե դուք ինձ հետ այստեղ եք եղել,
Իմ հոգու խորքը դիտել, թափանցել։
Ինչպես ես հիմա, նա էլ էր ինձնից գթություն հայցում,
Սխալվում եմ ես գուցե այս հարցում.
Խնդրում էր նա ինձ անմեղ և ազնիվ,
Բայց ես ասացի. «Ո՛չ, ստում ես դուք»։
(Կանգնում է)
Այո, ես ինքս ասացի նրան։
(Լռություն)
Լսեցեք ինչ եմ ուզում ձեզ հայտնել,
Նրա դահիճը, այդ ես չեմ եղել։

(Թափանցող հայացք նետելով Անհայտի վրա)։

Դո՛ւ ես դահիճը, դե խոստովանի՛ր, խոսի՛ր համարձակ,
Եղի՛ր դու անկեղծ գոնե այս պահին։
Ազնի՛վ բարեկամ, ինչո՞ւ էր այդպես դաժան քո հոգին։
Չէ՞ որ սիրել եմ նրան խենթի պես,
Ես կլքեի երկինք ու երեմ,
Միայն թե Նինան չարտասվեր իմ դեմ,—
Բայց ներում եմ քեզ։

(Ընկնում է նրա կրծքին և արտասվում)։

ԱՆՀԱՅՏ (ետ հրելով նրան կոպտությամբ)

Ուշքի՛ եկ, ուշքի, մի հիշի՛ր հապա...

(իշխանին)

Դուրս հանենք նրան...
Թարմ օդում անշուշտ նա կզգաստանա...

(Բռնելով Արբենինի ձեռքից)

Լսի՛ր, Արբենին։

ԱՐԲԵՆԻՆ

Արդեն հավիտյան
Մենք չենք տեսնվի... բարյա՛վ մնացեք...
Գնա՛նք, դե գնա՛նք... այստե՛ղ նայեցեք։

(Դուրս պոկվելով, նետվում է դեպի դռները, որտեղ դրված է Նինայի դագաղը)։

ԻՇԽԱՆ

Կանգնեցրե՛ք դրան...

ԱՆՀԱՅՏ

Այս հպարտ միտքն էլ այսօր ընկճվեց։

ԱՐԲԵՆԻՆ

(Վերադառնալով և վայրենի հեծկլտանքներով)

Այստե՛ղ նայեցեք, այստե՛ղ նայեցեք...

(Վազելով բեմի կենտրոնը)։

Ես ասում էի, որ դաժան ես դու։

(Ընկնում է հատակին և նստում կիսապառկած, անշարժ աչքերով։ Իշխանը և Անհայտը կանգնած են նրա մոտ)։

ԱՆՀԱՅՏ

Վաղուց եմ ձգտել ես այս վրեժին և ահա այսօր
Իմ նպատակին հասա անձկալից։

ԻՇԽԱՆ

Նա խելագար է... ընդմիշտ բախտավոր...
Իսկ ես հավիտյան զրկված եմ պատվից և խաղաղ կյանքից։

ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԵՐՈՍԸ

Յուրաքանչյուր գրքում նախաբանն առաջին և, դրա հետ մեկտեղ, վերջին բանն է. նախաբանը կա՛ծառայում է որպես երկի նպատակի բացատրություն, կամ որպես արդարացում ու պատասխան քննադատներին։ Բայց սովորաբար ընթերցողները չեն հետաքրքրվում բարոյական նպատակով և ժուռնալային հարձակումներով, ուստի և նրանք նախաբաններ չեն կարդում։ Բայց ափսոս, որ դա այդպես է, մանավանդ մեզ մոտ։ Մեր հասարակությունը դեռ այնքան երիտասարդ է և պարզամիտ, որ առակը չի հասկանում, եթե նրա վերջում բարոյախոսություն չի գտնում։ Նա կատակը չի կռահում, հեգնանքը չի զգում. պարզապես վատ է դաստիարակված։ Նա դեռևս չգիտե, որ կարգին հասարակության մեջ և կարգին գրքում ակներև հայհոյանքը չի կարող տեղ ունենալ, որ ժամանակակից կրթությունը հնարել է ավելի սուր, համարյա անտեսանելի և այնուհանդերձ ոչ-պակաս մահացու մի զենք, որը, շողոքորթության հանդերձի տակ թաքնված, անվանելի և անվրեպ հարված է հասցնում։ Մեր հասարակությունը նման է մի գավառացու, որը, թշնամի արքունիքների պատկանող երկու դիվանագետների խոսակցությունը լսելով, հավատացած կմնար, թե նրանցից ամեն մեկը խաբում է իր կառավարությանը հօգուտ փոխադարձ, ամենաքնքուշ բարեկամության։

Այս գիրքը դեռևս նորերս իր վրա զգաց ու փորձեց ընթերցողներից և մինչև իսկ ժուռնալներից ոմանց դժբախտ վերաբերությունը դեպի բառերի տառացի նշանակությունը։ Ոմանք սոսկալի, և լրջորեն, վիրավորվեցին, որ նրանց իբրև օրինակ ցույց են տալիս այնպիսի մի ամբարոյական մարդու, ինչպես Մեր ժամանակի Հերոսն է։ Ոմանք էլ շատ նրբորեն նկատում էին, որ հեղինակն իր և իր ծանոթների պատկերն է նկարել... Չի՞ն և ողորմելի՞ կատակ։ Բայց երևի Ռուսիան արդեն այնպես է ստեղծված, որ այնտեղ ամեն ինչ նորոգվում է, բացի նման անհեթեթություններից։— Կախարդական հեքիաթներից ամենակախարդականը մեզ մոտ հազի՞վ թե խուսափի անձ վիրավորելու հանցափորձի համար հանդիմանվելուց։

Մեր ժամանակի Հերոսը, ողորմա՛ծ պարոններս, ճիշտ որ պատկեր է, բայց ո՛չ մի մարդու. այդ մի պատկեր է, որ կազմված է մեր ամբողջ սերնդի արատներից՝ իրենց լրիվ զարգացմամբ առած։ Դուք ինձ նորից կասեք, թե մարդը չի կարող այդքան վատ լինել, իսկ ես ձեզ կասեմ, որ, եթե դուք հավատում էիք բոլոր տրագիկ և ռոմանտիկ չարագործների գոյության հնարավորությանը, էլ ինչո՞ւ չեք հավատում Պեչորինի իրական լինելուն։ Եթե դուք զվարճանում էիք շատ ավելի սոսկալի և այլանդակ հորինվածքներով, էլ ինչո՞ւ այս նկարագիրը, անգամ իբրև հորինվածք, ձեր ներողամտությանը չի արժանանում։ Չլինի՞ այն պատճառով, որ նրա մեջ ավելի ճշմարտություն կա, քան դուք այդ կցանկանայիք...

Դուք կասեք, թե բարոյականությունը դրանից չի շահում։ Կներեք։ Մարդկանց բավական կերակրել են քաղցրավենիներով։ Դրանից նրանց ստամոքսը փչացել է, հարկավոր են դառը դեղեր, կծու ճշմարտություններ։ Սակայն սրանից հետո մի կարծեք, թե այս գրքի հեղինակը երբևէ մարդկային արատների ուղղիչ դառնալու հավակնոտ պատրանք է ունեցել։ Աստվա՛ծ ազատի նրան այդպիսի տխմարությունից։ Նրան պարզապես ուրախացնում էր ժամանակակից մարդուն նկարագրելը, ինչպես նա՝ այդ մարդուն հասկանում է և որին, ի դժբախտություն իր և ձեր, խիստ հաճախ է պատահել։ Բավական է և այն, որ հիվանդությունը մատնանշված է, իսկ թե ինչպես պետք է ապաքինել, այդ արդեն աստվա՛ծ գիտե։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

I

ԲԵԼԱ

Ես փոստակառքով գալիս էի Թիֆլիսից։ Իմ սայլակի ամբողջ բեռը մի փոքրիկ ճամպրուկ էր, որի կեսը լի էր Վրաստանին վերաբերող ճամփորդական նոթերով։ Դրանց մեծ մասը, ձեր բախտից, կորել է, իսկ ճամփարկղը, մնացած իրերի հետ, իմ բախտից, մնացել է։

Արևն արդեն սկսում էր թաքնվել ձյունապատ լեռնաշղթայի ետևը, երբ իմ կառքը մտավ Կոյշաուրի հովիտը։ Օտ կառապանն անդադրում քշում էր ձիերը, որպեսզի մինչև գիշեր կարողանա բարձրանալ Կոյշաուրի սարը, և լիակոծոդ երգեր էր երգում։ Հիանալի՜ տեղ է այդ հովիտը։ Սարի բոլոր կողմերում անմատչելի կարմրավուն ժայռեր են, որոնց վրա կախված է կանաչ բաղեղ և որոնց կատարները պսակում են չինարների խմբերը։ Սարի շուրջը դեղին զառիթափներ են, որոնց խազխազել են հեղեղատները, բա՜րձր, բա՜րձր գագաթներին, ձյունների ոսկե ծոփքն է, իսկ ցածրում՝ Արագվան, որ մշուշով լի սև կիրճից աղմուկով դուրս պրծնող մեկ ուրիշ, անանուն գետակի հետ գրկախառնված՝ ձգվում է արծաթե թելի պես և փայլփլում, ինչպես օձն իր մաշկով։

Հասնելով Կոյշաուրի սարի ստորոտին, մենք կանգ առանք գուքանի մոտ։ Այդտեղ խռնված՝ աղմկում էին մի երկու տասնյակ վրացիներ և լեռնցիներ։ Մոտերքում ուղտերի քարավանն էր իջևանել՝ գիշերելու։ Ես պետք է եզներ վարձեի, որպեսզի սայլակս բարձրացնել տամ այդ անիծյալ սարի վրա, որովհետև արդեն աշուն էր և գետինը սառցով պատած, իսկ այդ սարն ունի մոտ երկու վերստ երկարություն։

Ճար չկար. վարձեցի վեց եզ և մի քանի օս։ Սրանցից մեկն իր ուսերին առավ ճամպրուկս, մյուսներն սկսեցին օգնել եզներին համարյա միայն բղավոցով։

Իմ սայլակի հետևից գալիս էր մի ուրիշ սայլակ, որը եզների մի քառյակ այնքան հեշտ էր քաշում, ասես մեջը ոչինչ

չիներ, չնայած որ այդ սայլակը լեփ-լեցուն էր բեռով։ Այս հանգամանքն ինձ զարմացրեց։ Այդ սայլակի հետևից գնում էր նրա տերը՝ իր փոքրիկ, արծաթապատ կաբարդական ծխամորճը ծխելով։ Նրա հագին կար առանց էպոլետների սպայական սերթուկ և գլխին՝ չերքեզի թավամազ գդակ։ Նա մոտ հիսուն տարեկան էր երևում։ Դեմքի թուխ գույնը ցույց էր տալիս, որ այդ դեմքը վաղուց է ծանոթ անդրկովկասյան արևին, իսկ վաղաժամ սպիտակած բեղերը չէին համապատասխանում նրա հաստատուն քայլվածքին ու ժիր տեսքին։ Ես մոտեցա և գլուխ տվի։ Նա լուռ առավ իմ բարևն ու ծխի մի ահագին քուլա բաց թողեց բերանից։

— Մենք կարծեմ ուղեկիցնե՞ր ենք։

Նա լռելյայն նորից գլուխ տվեց։

— Դուք երևի Ստավրոպո՞լ եք գնում։

— Ճիշտ այդպես է... արքունի իրեր ենք տանում։

— Ասացեք, խնդրեմ, այդ ինչի՞ց է, որ ձեր ծանր սայլը չորս եզներ ասես խաղ անելով են քաշում, իսկ իմը, որ դատարկ է, վեց անասուն հազիվ են առաջ շարժում այս օսերի օգնությամբ։

Նա խորամանկորեն ժպտաց և նշանակալից նայեց ինձ։

— Դուք երևի նո՞ր եք Կովկասում։

— Մոտ մի տարի է,— պատասխանեցի ես։

Նա կրկին ժպտաց։

— Իսկ ի՞նչ կա որ։

— Հենց այնպես։ Սարսափելի՜ սատանաներ են այդ ասիացիները։ Դուք կարծում եք, թե նրանք բղավելով օգնում են։ Սատանան գիտե, թե ինչ են բղավում։ Եզները նրանց լավ են հասկանում. թեկուզ քսանը լծեք, նրանք որ իրենց ձևով կանչեն, եզները բնավ տեղից չեն շարժվի... Սարսափելի՜ խարդախներ են։ Իսկ ի՞նչ կարող ես անել... Սիրում են ուղևորներից փող կորզել... Սրիկաներին երես են տվել։ Կտեսնե՛ք. նրանք ձեզնից դեռ արաղի փող էլ կվերցնեն։ Ես նրանց լավ եմ ճանաչում, ինձ չե՞ն խաբի։

— Իսկ վաղո՞ւց է, որ դուք այստեղ եք ծառայում։

— Այո՛, ես Ալեքսեյ Պետրովիչի* օրով արդեն այստեղ էի

* Երմոլովի։ (Սանոթ. Ներմոնտովի)։

ծառայում,— պատասխանեց նա, հպարտ կեցվածք ընդունելով։— Երբ նա պաշտպանության գիծը եկավ, ես պոդպորուչիկ էի,— ավելացրեց նա,— և նրա օրով երկու աստիճան ստացա լեռնցիների դեմ ունեցած կռիվների համար։

— Իսկ հիմա՞ դուք...

— Հիմա երրորդ շարային գումարտակում եմ ծառայում։ Իսկ դո՞ւք, համարձակվում եմ հարցնել...

Ես ասացի։

Խոսակցությունը սրանով վերջացավ, և մենք շարունակեցինք լուռ կողք-կողքի առաջ գնալ։ Սարի գագաթին ձյուն տեսանք։ Արևը մայր մտավ, և գիշերը ցերեկին հաջորդեց առանց ընդմիջումի, ինչպես սովորաբար լինում է հարավում։ Բայց, ձյունների արտափայլի շնորհիվ, մենք հեշտությամբ կարողանում էինք նշմարել ճանապարհը, որը դեռևս լեռնիվեր էր բարձրանում, թեև արդեն ոչ այնքան դիրթ։ Ես կարգադրեցի ճամփարկղս սայլակը դնել, եզները փոխարինել ձիերով և վերջին անգամ նայեցի ցած՝ հովտի կողմը։ Բայց թանձր մառախուղը, որ ալիքներով հորդել էր կիրճերից, բոլորովին ծածկել էր հովիտը, և այնտեղից արդեն ոչ մի հնչյուն չէր հասնում մեր ականջին։ Օսերն աղմկելով շրջապատեցին ինձ և օղու փող էին պահանջում, բայց շտաբս-կապիտանն այնպես սպառնագին բղավեց նրանց վրա, որ նրանք մի ակնթարթում փախան զանազան կողմեր։

— Ի՞նչ ժողովուրդ է,— ասաց նա,— հացի անունն անգամ ռուսերեն չգիտե, բայց սովորել է՝ «աֆիցեր, նա վո՛դկու դայ»*։ Ինձ որ հարցնես, թաթարները սրանցից լավ են. գոնե խմող չեն...

Մինչև կայանը մնում էր մի վերստի չափ։ Շուրջը լուռ էր, այնքան լուռ, որ մոծակի տզզոցին ականջ դնելով՝ կարելի էր որոշել թռիչքի ուղղությունը։ Զախակողմում սևին էր տալիս իսոր կիրճը, նրանից դենը և մեր առջևը, դեռևս վերջալույսի վերջին արտափայլն իր վրան պահած գունատ երկնակամարում գծագրվում էին կնճիռներով ակոսված, ձյան շերտերով ծածկված սարերի մուգ-կապույտ գագաթները։ Մութ երկնքում սկսում էին առկայծել աստղերը և, տարօրինակ բան, ինձ թվաց, թե նրանք շատ ավելի բարձր են, քան մեզ մոտ հյուսիսում։ Ճանապարհի երկու կողմերում ցցված էին մերկ, սև քարեր։ Տեղ-տեղ ձյան տակից թփեր էին դուրս նայում, բայց ոչ մի չոր տերև չէր շրշում, և ուրախալի էր բնության այս մեռելային քնի մթնոլորտում լսել փոստակառքի հոգնած եռյակի փռնչոցն ու ռուսական զանգակի անհավասար ղընգ-ղընգոցը։

— Վաղը հիանալի՞ եղանակ է լինելու,— ասացի ես։ Շտաբս-կապիտանը ոչինչ չպատասխանեց և ինձ մատով ցույց տվեց ուղղակի մեր դիմացը վեր խոյացող բարձր սարը։

— Այդ ի՞նչ է որ,— հարցրի ես։

— Գուդ սարը։

— Է՛, ի՞նչ անենք ո՞ր։

— Տեսե՛ք, ինչպես է ծխում։

Եվ, իրոք, Գուդ սարը ծխում էր. նրա կողերով սողում էին ամպերի թեթև շերտերը, իսկ գագաթին նստած էր սև թուխպ, այնքան սև, որ մութ երկնքում սև բիծ էր թվում։

Մենք արդեն նշմարում էինք փոստակայանը, նրան շրջապատող սակլյաների տանիքները, և մեր առջև երևում էին գրավիչ կրակներ, երբ փչից խոնավ, պաղ քամի, կիրճը դղրդաց և մանրահատիկ անձրև մաղեց։ Ես հագիվ էի այծենակաճն ուսերիս առել, երբ վրա տվեց ձյունը։ Ակնածանքով նայեցի շտաբս-կապիտանին...

— Մենք ստիպված կլինենք այստեղ գիշերել,— ասաց նա տհաճությամբ։— Այս բրին սարերով անցնել չի լինի։ Հը՛, Կրեստովայայից սառցակույտեր թափվո՞ւմ են, թե՞ չէ,— հարցրեց նա կառապանին։

— Չի եղել, պարո՞ն,— պատասխանեց օն կառապանը,— բայց կախված սառցակույտեր շա՜տ, շա՜տ կան։

Կայանում ճամփորդների համար սենյակներ չլինելու պատճառով, մեզ գիշերելու տեղ հատկացրին ծխոտ սակլյայում։ Ես ուղեկցիս հրավիրեցի ինձ հետ մի բաժակ թեյ խմելու, քանի որ հետս ունեի չուգունե թեյաման՝ կովկասյան ճամփորդություններիս ժամանակվա մնակ սփոփանքս։

Սակլյան մի կողքով կպած էր ժայռին. երեք լպրծուն, թաց աստիճաններ տանում էին դեպի դուռը։ Ես շոշափելով ներս մտա և դեմ առա մի կովի (այս մարդկանց մոտ գոմը փոխա-

* Офицер, на водку дай — սպա, օղեղրամ տուր։

բինում է ծառայանոցին)։ Ես չէի իմանում՝ ուր կորչեմ. այստեղ ոչխարներն են մայում, այնտեղ շունն է գոռոում։ Իմ բախտից, մի կողմում աղոտ լույս փայլեց և օգնեց ինձ գտնելու մեկ ուրիշ, դրան նման անցք։ Այստեղ բավական հետաքրքրքրական տեսարան բացվեց։ Լայն սակլյան, որի տանիքը կոթնած էր երկու ծխոտած սյուների, լիքն էր մարդկանցով։ Մեջտեղում ճարճատում էր գետնին վառած կրակը և ծուխը, տանիքի անցքից փչող քամուց ետ մղված՝ փռվում էր շուրջն այնպիսի խիտ շղարշի պես, որ ես երկար ժամանակ չէի կարողանում բան տեսնել։ Կրակի մոտ նստած էին երկու պառավ, բազմաթիվ երեխաներ և մի նիհար վրացի՝ բոլորն էլ ցնցոտիներով պատած։ Ճար չկար. մենք նստեցինք կրակի մոտ, ծխամորճներս վառեցինք, և շուտով թեյամանն անուշ թշշոց արձակեց։

— Ողորմելի՜ մարդիկ են,— ասացի ես շտաբս-կապիտանին, մատնացույց անելով մեր կեղտոտ տանտերերին, որոնք քարացածի պես լուռ մեզ էին նայում։

— Խիստ հիմար ժողովուրդ է,— պատասխանեց նա,— կհավատա՞ք, ձեռքներից ոչի՞նչ չի գալիս, ո՞չ մի կրթության ընդունակ չեն։ Էլի մեր կաբարդացիք կամ չեչենները, թեպետ և ավազակներ են, տկլորներ, բայց գլխից ձեռ քաշած մարդիկ են, իսկ սրանք գենքի սեր-էլ չունեն. շնորհքով դաշույն ոչ մեկի վրա չես տեսնի։ Իսկապե՞ս որ օսեր են։

— Իսկ դուք երկա՞ր ժամանակ եք անցկացրել Ջեչնիայում։

— Այո՛, ես մի տասը տարի բերդապահ եմ եղել այնտեղ իմ վաշտով, Կամեննի Բրոդի մոտ, գիտե՞ք։

— Լսել եմ։

— Հա՛, սաստիկ ձանձրացրել էին մեզ այդ ավազակները։ Հիմա, փառք աստծո, բավական հանգիստ են, իսկ առաջ, մի հարյուր քայլ պարսպաթմբից անցնելիր թե չէ, կտեսնեիր՝ որևէ տեղ թավամազ սատանան նստել, որսի է սպասում։ Հենց որ քիչ անուշադիր լինեիր, մեկ էլ կտեսնեիր կամ օղապարանը վիզդ ընկավ կամ գնդակը ծոծրակդ խրվեց։ Բայց կտրի՜ճ մարդիկ են...

— Երևի ձեզ շատ արկածներ պատահած կլինեն,— ասացի ես, հարցասիրությունից դրդված։

— Ինչպե՞ս չպատահեին. պատահում էին...

Այստեղ նա սկսեց քաշքշել ձախ բեղը, գլուխը կախ դցեց ու մտածմունքի մեջ ընկավ։ Ես անչափ ուզում էի նրա բերանից որևէ պատմություն դուրս քաշել,— մի ցանկություն, որ հատուկ է բոլոր ճամփորդող ու գրի առնող մարդկանց։ Մինչ այդ, թեյը եփվեց։ Ես ճամպրուկից հանեցի երկու ճամփորդական բաժակ, թեյ լցրի ու բաժակներից մեկը դրի նրա առաջ։ Նա մի կում արեց ու ասաց, կարծես ինքն իրեն. «Հա՛, պատահում էին»։ Այս բացականչությունն ինձ մեծ հույսեր տրվեց։ Ես գիտեմ, երկար ժամանակ Կովկասում ապրած մարդիկ սիրում են խոսակցել, պատմել. նրանց այնպե՞ս հաղվադեպ է հաջողվում այդ։ Մարդ կա, որ հինգ տարու չափ որևէ խուլ անկյունում է անցկացնում իր վաշտի հետ, և ամբողջ հինգ տարի նրան՝ ոչ ոք չի ասում բարև (որովհետև ֆելդֆեբելն ասում է. «Ողջույն եմ ցանկանում»)։ Իսկ խոսելու շատ բան կգտնվի. շուրջդ վայրենի, հետաքրքրքական մարդիկ են, ամեն օր վտանգ կա, զարմանահրաշ դեպքեր են պատահում, և այստեղ ակամա ափսոսում ես, որ մեզնում այնպես քիչ են գրի առնում։

— Արդյոք չե՞ք ուզի թեյի մեջ ռոմ ավելացնել,— ասացի ղրուցակցիս։— Թիֆլիսից բերած սպիտակ ռոմ ունեմ. հիմա ցուրտ է։

— Ոչ, շնորհակալ եմ, չեմ խմում։

— Ինչո՞ւ այդպես։

— Հենց այնպես։ Երդվել եմ։ Երբ դեռ պոդպորուչիկ էի, մեկ անգամ, գիտեք, մենք տանեց-տանու քեֆ արինք, իսկ գիշերը տագնապ ընկավ։ Մենք էլ քեֆներս հասած՝ ֆրունտ դուրս եկանք ու ո՞նց հասավ մեզ, երբ Ալեքսեյ Պետրովիչն իմացավ։ Աստված մի արասցե, թե ինչպես բարկացավ. քիչ էր մնացել դատի տա։ Եվ տեղին. երբեմն մի ամբողջ տարի ես ապրում, մարդու երես չես տեսնում։ Դե որ այդտեղ օղի էլ եղավ, կորած ես։

Այս լսելով, ես համարյա հույսս կտրեցի։

— Մ՛յ թեկուզ չերքեզները,— շարունակեց նա,— հենց որ բուզա խմեցին, հարսանիքում կամ մեռելաթաղին, թրատելը կսկսվի։ Մեկ անգամ ես հազիվ գլուխս ազատեցի։ Էն էլ դեռ խաղաղ իշխանի մոտ էի հյուր գնացել։

— Այդ ինչպե՞ս պատահեց։

— Ա՛յ (նա ծխամորճը լցրեց, ծուխը ներս քաշեց և սկսեց պատմել), ա՛յ, ասեմ ձեզ։ Ես այն ժամանակ իմ վաշտով բերդապահ էի Թերեքի մյուս կողմում գտնվող մի բերդում. շուտով հինգ տարին կլրանա։ Մեկ անգամ, աշնանը, եկավ մթերաբեր տրանսպորտը. տրանսպորտում կար մի սպա, քրանանհինգի մոտ մի երիտասարդ։ Նա ներկայացավ ինձ լրիվ զգեստավորված ու հայտարարեց, թե իրեն հրամայված է մնալ ինձ մոտ, բերդում։ Նա այնպես բարալիկն էր, սպիտակ։ Հագի համազգեստն այնպես նորն էր, որ ես իսկույն կռահեցի. նա մեզ մոտ՝ Կովկաս, նոր էր եկել։

— Ձեզ, երևի,— հարցրի ես նրան,— Ռուսաստանի՞ց են այստեղ տեղափոխել։

— Ճիշտ այդպես է, պարոն շտաբս-կապիտան,— պատասխանեց ուրախ։ Ես բռնեցի նրա ձեռքը և ասացի. «Շատ ուրախ եմ, շատ ուրախ։ Ձեզ համար մի քիչ տխուր կլինի... բայց, դե, մենք ձեզ հետ բարեկամաբար կապրենք։ Հա՛, խնդրում եմ, ինձ անվանեցեք պարզապես Մաքսիմ Մաքսիմիչ, և, խնդրեմ, ինչի՞ համար է այդ լրիվ զգեստավորումը. ինձ մոտ եկեք միշտ ֆուրաժկա դրած»։ Նրան բնակարան հատկացրին, և նա բնակվեց բերդում։

— Իսկ նրա անունն ի՞նչ էր,— հարցրի ես Մաքսիմ Մաքսիմիչին։

— Նրա անունն էր... Գրիգորի Ալեքսանդրովիչ Պեչորին։ Հիանալի՛ երիտասարդ էր, համարձակվում եմ հավատացնել ձեզ, միայն մի քիչ տարօրինակն էր։ Ախր, օրինակ՝ անձրևին, ցրտին, ամբողջ օրը որս էր անում։ Բոլորը ցրտից կսառչեին, կհոգնեին, իսկ նրա վեջը չէր։ Երբեմն էլ կնստեր իր սենյակում, թեթև քամի էլ որ փչեր, կհավատացներ, թե մրսեց։ Փեղկը որ թխկար, նա կցնցվեր ու կգունատվեր, բայց ես աչքովս տեսել եմ, որ մեն-մենակ վարազի վրա է գնացել։ Մեկ-մեկ ամբողջ ժամերով մի խոսք չէիր կարողանա բերանից դուրս քաշել, բայց երբեմն էլ որ կսկսեր պատմել, ծիծաղից փորդ կբռնեիր... Այո՛, շատ տարօրինակություններ ուներ և եթևի հարուստ մարդ էր. ինչքա՞ն տեսակ-տեսակ թանկագին իրեղեններ ուներ...

— Իսկ նա երկա՞ր ապրեց ձեզ հետ,— կրկին հարցրի ես։

— Մի տարու չափ։ Բայց հիշատակելի է ինձ համար այդ տարին, հա՛, գլխացավանք տվեց ինձ, հա՛, ականջը վատ չկանչի՛։ Չէ՞ որ էն տեսակ մարդիկ կան, որոնց ճակատին գրված է, թե նրանց հետ զանազան արտասովոր բաներ պետք է պատահեն։

— Արտասովո՞ր,— բացականչեցի ես՝ հարցասիրությամբ բռնվածի տեսք ընդունելով և նրա բաժակը թեյ լցնելով։

— Ա՛յ, պատմեմ։ Բերդից մի վեց վերստ հեռու ապրում էր մի խաղաղ իշխան։ Նրա որդին՝ մոտ տասնհինգ տարեկան մի տղա, սովորություն դարձրեց ձիով մեզ մոտ գալ։ Ամեն օր, պատահում էր, մեկ այս, մեկ այն առիթով գալիս էր։ Ու մենք էլ՝ ես ու Գրիգորի Ալեքսանդրովիչը, երես էինք տվել նրան։ Իսկ ի՞նչ թոկից փախածն էր, ի՞նչ ճարպիկն ամեն բանի մեջ. ձին արագ վազեցնելիս գետնից գդակ վերցնելու թե հրացան կրակելու մեջ։ Մի բան վատ էր. սաստիկ փողասեր էր։ Մեկ անգամ, կատակով, Գրիգորի Ալեքսանդրովիչը խոստացավ նրան մի չերվոնեց տալ, եթե նա իր հայրական հոտից լավագույն այծը գողանա ու մեզ բերի։ Եվ ի՞նչ եք կարծում. մյուս գիշերն ևեթ եղջյուրներից քաշ տալով՝ բերեց։ Իսկ, պատահում էր, մենք սկսում էինք նրան ձեռ առնել, աչքերն արյունով էին լցվում և իսկույն ձեռքը դաշույնին էր գցում. «Է՛յ, Ազամա՛թ, գլուխդ ողջ չես պահի ուսերիդ վրա,— ասում էի ես նրան,— յաման կգա գլխիդ»։

Մեկ անգամ ինքը՝ ծեր իշխանը ձիով գալիս է մեզ հարսանիքի կանչելու։ Նա իր մեծ աղջկան մարդու էր տալիս, իսկ մենք նրա հետ կունակներ էինք, չէր կարելի, գիտեք, հրաժարվել, թեպետև նա թաթար էր։ Գնացինք։ Առլում բազմաթիվ շներ դիմավորեցին մեզ բարձր հաչոցով։ Կանայք, մեզ տեսնելով, թաքնվում էին։ Նրանք, որոնց դեմքերը մենք կարողացանք դիտել, բնավ էլ գեղեցկուհիներ չէին։ «Ես շատ ավելի լավ կարծիքի էի չերքեզուհիների մասին»,— ասաց ինձ Գրիգորի Ալեքսանդրովիչը։ «Սպասեցե՛ք»,— պատասխանեցի ես՝ քմծիծաղ տալով։ Մտքումս իմ իմացածը կար։

Իշխանի մոտ, սակայն, մարդկանց բազմություն էր հավաքվել։ Ասիացիները, գիտեք, սովորություն ունեն ամեն պատահողի հարսանիքի հրավիրել։ Մեզ ընդունեցին բոլոր պատշաճ պատիվներով ու տարան կունականոց։ Ես, սակայն,

չմոռացա նկատել, թե որտեղ կապեցին մեր ձիերը (գիտե՞ք, աննախատեսելի դեպքի համար)։

— Իսկ նրանք հարսանիքի հանդեսն ինչպե՞ս են կատարում,— հարցրի ես շտաբս-կապիտանին։

— Սովորական ձևով։ Սկզբում մոլլան ինչ-որ բան է կարդում Ղուրանից, հետո նվերներ են տալիս ամուսնացողներին ու նրանց բոլոր ազգականներին, ուտում են, բուզա խմում։ Հետո սկսվում է ջիրիդը և միշտ՝ պատառոտած, ճարպոտ հագուստով մեկը մի անպետք, կաղ ձի նստած՝ կոտրատվում է, խեղկատակություն անում, ծիծաղեցնում ազնիվ հասարակությունը։ Հետո, երբ մթնում է, կումականոցում սկսվում է, մեր լեզվով ասած, պարահանդեսը։ Խեղճ ծերուկի մեկը ծնգծնգացնում է եռալար... մոռացա. ինչպե՞ս է նրանց լեզվով... հա՛, մեր բալալայկայի նման մի գործիք։ Աղջիկներն ու ջահել տղերքը երկու շարք են կանգնում, մեկը մյուսի դիմաց, ծափ են տալիս ու երգում։ Ապա մեջտեղ են գալիս մի աղջիկ և մի տղամարդ ու սկսում են երգելով իրար ոտանավորներ ասել, ինչ որ բերանները կգա, իսկ մնացածները խմբովի կրկնում են։ Մենք Պեչորինի հետ նստած էինք պատվավոր տեղում, և ահա Պեչորինին մոտեցավ տանտիրոջ կրտսեր դուստրը՝ մոտ տասնվեց տարեկան մի աղջիկ, ու նրա համար երգեց... ինչպե՞ս ասեմ... կոմպլիմենտի* պես մի բան։

— Իսկ նա ի՞նչ երգեց, չե՞ք հիշում արդյոք։

— Հա՛, կարծեմ այսպես. «Բարեկազմ են մեր երիտասարդ ջիգիթները, և նրանց հագի բաճկոնները արծաթ թելերով են ասեղնագործված, իսկ երիտասարդ ռուս սպան նրանցից բարեկազմ է, և նրա կլապիտոնները** ոսկեղեն են։ Նա ոնց որ բարդին նրանց մեջ։ Միայն թե նա չի աճի, չի ծաղկի մեր այգում»։ Պեչորինը ոտքի ելավ, գլուխ տվեց նրան, ձեռքը տարավ ճակատին ու սրտին, և ինձնից խնդրեց, որ պատասխանեմ այդ աղջկան։ Ես նրանց լեզուն լավ գիտեմ և թարգմանեցի Պեչորինի պատասխանը։

Երբ աղջիկը մեզնից հեռացավ, ես շշնջացի Գրիգորի Ալեքսանդրովիչին. «Հը, ի՞նչ կասես, ո՞նց է»։

* Գովեստ, շոյող խոսք։

** Ոսկեթել կամ արծաթաթել երիզ, որով զարդարում էին զինվորականների հագուստի օձիքը, թևաբերանները և այլն։

— Սքանչելի՞ է,— պատասխանեց Պեչորինը,— իսկ անունն ի՞նչ է։

— Անունը Բելա է,— պատասխանեցի ես։

Եվ ճիշտ որ, նա գեղեցիկ աղջիկ էր, բարձրահասակ, բարակիրան, աչքերը սև՝ լեռնայծյամի աչքերի պես. հենց ձեր հոգու խորքն էին նայում։ Մտասույզ Պեչորինը աչքերը նրանից չէր հեռացնում, աղջիկն էլ հաճախակի հոնքերի տակից նրան էր նայում։ Միայն թե մենակ Պեչորինը չէր հիանում գեղեցիկ իշխանադստրով. սենյակի անկյունից նրան էին նայում երկու ուրիշ աչքեր՝ անշարժ, կրակոտ։ Ես սկսեցի ուշիուշով նայել և ճանաչեցի իմ հին ծանոթ Կազբիչին։ Նա, գիտե՞ք, ոչ էն է՝ խաղաղ էր, ոչ էն է՝ ոչ խաղաղ։ Նրա նկատմամբ շատ կասկածներ կային, թեպետև նա ոչ մի չարագործության մեջ չէր բռնվել։ Պատահում էր, նա մեզ մոտ՝ բերդը, ոչխարներ էր բերում և էժան էր ծախում, միայն թե երբեք չէր սակարկում, ինչ գին պահանջեր, պետք է տայիր։ Որ մորթեիր էլ, չէր զիջի։ Նրա մասին ասում էին, թե սիրում է աբրեքների հետ Կուբանի մյուս ափն անցնել, և, ճիշտն ասած, նրա կերպարանքն ամենաավազակայինն էր՝ մանրոտիկ, ցամաք, լայնաթիկունք... Բայց թե ճարպի՞կ էր, ճարպի՞կ՝ սատանայի պես։ Բեշմեթը միշտ պատռած էր, կարկատած, իսկ զենքը՝ արծաթապատ։ Նրա ձին էլ հո հուչակված էր ողջ Կաբարդայում։ Ճիշտ որ. այդ ձիուց լավ ոչինչ չէր կարելի հորինել։ Ջուր չէր, որ նրան նախանձում էին բոլոր վարպետ ձիավորները և քանիցս փորձել էին գողանալ, միայն թե չէր հաջողվել։ Ասեմ հիմա նայելիս լինեմ այդ ձիուն։ Սևաթույր, ոնց որ ձյութ, ոտքերը՝ լարեր և աչքերն էլ Բելայի աչքերից վատը չէին։ Իսկ ի՞նչ ուժ ուներ. կուզես 50 վերստ սլացիր։ Եվ ինչպե՞ս էր վարժեցրած. շան պես վազում էր տիրոջ ետևից, նույնիսկ նրա ձայնն էր ճանաչում։ Կազբիչը՝ երբեք նրան չէր կապում։ Մի խոսքով՝ ավազակի ձի էր...

Այդ երեկո Կազբիչն ավելի մռայլ էր, քան երբևէ, և ես նկատեցի, որ հագին բեշմեթի տակից օղազրահ կար։ «Այդ օղազրահը նա զուր չի հագել,— մտածեցի ես,— անպատճառ որևէ բան կա մտքում»։

Սակլյայում օդը խեղդում էր, և ես դուրս եկա թարմանա-

լու։ Գիշերն արդեն փռվում էր լեռների վրա, և մառախուղն սկսում էր թափառել կիրճերում։

Մտքովս անցավ գնալ ծածկի տակ, որտեղ մեր ձիերն էին կապած, նայել՝ կեր ունե՞ն արդյոք, բացի դրանից, զգուշությունն էլ երբեք չի խանգարի։ Իսկ իմ ձին սքանչելի ձի էր, ու շատ կաբարդացիներ քաղցր հայացքով էին նայում նրան, ասելով՝ յա՞ֆշի թխե, չո՞ֆ յաֆշի*։

Անցնում եմ ցանկապատի մոտով ու հանկարծ ձայներ եմ լսում։ Այդ ձայներից մեկը ես իսկույն ճանաչեցի։ Դա թոկից փախած Ազամաթն էր, մեր հյուրընկալի որդին։ Մյուսն ավելի սակավ ու ցածրաձայն էր խոսում։ «Սրանք այս ի՞նչի մասին են խոսում,— մտածեցի ես,— չլինի՞ իմ ձիու մասին»։ Նստեցի ցանկապատի մոտ ու ականջ եմ դնում նրանց խոսակցությանը, աշխատելով ոչ մի բառ բաց չթողնել։ Երբեմն երգի՝ ու խոսակցության ձայները՝ սակլյայից դուրս թռչելով, խլացնում էին ինձ հետաքրքրող խոսակցությունը։

— Քո ձին հիանալի ձի է,— ասում էր Ազամաթը,— եթե ես տան մեծը լինեի ու երեք հարյուր զամբիկից բաղկացած երամակ ունենայի, կեսը կտայի քո երիվարի փոխարեն, Կազբի՛չ։

«Ա՜, Կազբիչն է»,— մտածեցի ես և հիշեցի օղագրահը։

— Այո՛,— պատասխանեց Կազբիչը կարճատև լռությունից հետո։— Ամբողջ Կաբարդայում այդպիսին չես գտնի։ Մեկ անգամ,— այդ պատահեց Թերեքի էն ափին,— ես աբրեքների հետ գնացել էի ռուսական երամակներ փախցնելու։ Մեր բախտը չբանեց, և մենք ցրվեցինք՝ ով ուր պատահեց։ Իմ հետևից սրընթաց գալիս էին չորս կազակ։ Արդեն լսում էի իմ թիկունքում գյավուրների կանչերը, ու առջևս էլ խիտ անտառ էր։ Ձիու ականջը մտա, բախտս ալլահի ձեռքը հանձնեցի ու հարված հասցրի։ Թռչունի պես նա սուզվեց ճյուղերի արանքն ու սլացավ։ Սուր փշերը պատռոտում էին իմ հագուստը, թեղու չոր ոստերը զարկում էին երեսիս։ Նժույգս ցատկում էր կոճղերի վրայով, կրծքով ճեղքում էր թփուտը։ Լավ՝ կանեի, որ նրան թողնեի անտառի եզրին ու հետիոտն

* Լավ ձի է, շատ լավը։

անհետանայի անտառում, բայց մեղքս եկավ, չուզեցի ձիուցս բաժանվել։ Եվ մարդարեն ինձ վարձատրեց։ Մի քանի գընդակ բզզալով անցավ գլխիս վրայով։ Արդեն լսում էի, թե ինչպես ձիերից իջած կազակները վազում են ձիուս հետքերով... Հանկարծ իմ առջև երևաց մի խոր փոս. երիվարս մի պահ մտածեց ու ցատկեց։ Նրա ետևի ոտքերի սմբակները պոկվեցին հակառակ ափից, և նա կախվեց առջևի ոտքերի վրա։ Ես բաց թողի սանձափոկերն ու նետվեցի ձորակը։ Դա փրկեց իմ ձիուն. նա դուրս թռավ։ Կազակներն այդ բոլորը տեսնում էին, միայն թե ոչ ոք ցած չիջավ ինձ փնտրելու. երևի մտածում էին, թե ես մահացու կերպով ջարդվել եմ, և ես լսեցի, ինչպես նրանք նետվեցին՝ իմ ձին որսալու։ Սիրտս արյունլվա եղավ։ Խիտ խոտի վրայով սողացի ձորակի երկայնքով։ Տեսնեմ՝ անտառը վերջացավ, մի քանի ձիավոր կազակ այնտեղից բացատ են դուրս գալիս, և ահա ուղղակի նրանց կողմն է դուրս թռչում իմ Ղարագյուզը։ Բոլորը ճիչերով ընկան նրա ետևից։ Երկար, երկար հետապնդեցին, մանավանդ մեկը մի երկու անգամ քիչ մնաց օղապարանը Ղարագյոզի վիզը գցեր։ Ես դողացի, աչքերս ցած գցեցի ու սկսեցի աղոթել։ Մի քանի ակնթարթ անց աչքերս վեր եմ բարձրացնում ու տեսնում՝ իմ Ղարագյոզը, պոչը փռփռացնելով, թռչում է ոնց ազատ քամի, իսկ գյավուրները հեռվում միմյանց հետևից գնում են տափաստանով՝ իրենց ուժասպառ ձիերին նստած։ Վալլա՜հ, սա ճշմարտություն է, իսկապես ճշմարտություն։ Մինչև ուշ գիշեր նստեցի իմ ձորակում։ Հանկարծ, ի՞նչ ես կարծում, Ազամաթ. խավարի մեջ լսում եմ, ձորակի եզրով ձի է վազում, փնչացնում է, խրխնջում և սմբակները գետնին զարկում։ Ճանաչեցի իմ Ղարագյոզի ձայնը. նա՛ էր, իմ ընկերը... Այդ ժամանակից ի վեր մենք չենք բաժանվել իրարից։

Եվ ես լսեցի, ինչպես նա ձեռքի ափով փաղաքշաբար խփում էր իր երիվարի ողորկ պարանոցին, զանազան քնքուշ անուններ տալիս։

— Եթե ես հազար զամբիկից բաղկացած երամակ ունենայի,— ասաց Ազամաթը,— ամբողջ երամակը քեզ կտայի քո Ղարագյոզի համար։

— Յոք*, չեմ ուզում,— անտարբեր պատասխանեց Կազբիչը։

— Լսի՛ր, Կազբիչ,— փաղաքշաբար ասում էր նրան Ազամաթը,— դու բարի մարդ ես, քաջ չիգիթ ես, իսկ իմ հայրը վախենում է ռուսներից և չի թողնում, որ լեռները գնամ։ Քո ձին ինձ տուր, և ես կանեմ քեզ համար, ինչ որ ցանկանաս. հորիցս կգողանամ նրա ամենալավ հրացանը կամ թուրը, որը դու ուզես։ Իսկ նրա թուրն իսկական դուրդա է. բերանը ձեռքիդ դիպցրու, ինքը մարմնիդ մեջը կխրվի։ Իսկ օղազրահը, ինչպիսին քոնն է, նրա հանդեպ ոչինչ է։

Կազբիչը լուռ էր։

— Առաջին անգամ, երբ ես քո ձին տեսա,— շարունակեց Ազամաթը,— երբ նա քո տակին ֆոֆռում էր ու թռչկոտում՝ ոունգերը լայնացնելով, ու կայծքարերը ջրի շիթերի պես թռչում էին նրա սմբակների տակից, իմ հոգու հետ ինչ-որ անհասկանալի բան պատահեց, և այդ ժամանակվանից ես ամեն ինչ ատեցի։ Իմ հոր լավագույն երիվարներին արհամարհանքով էի նայում, ամաչում էի նրանց վրա նստած՝ մարդկանց աչքերին երևալ, ու վիշտը պաշարեց ինձ։ Տխրում էի, ամբողջ օրեր էի անցկացնում ժայռին նստած ու ամեն րոպե մտքերիս մեջ ինձ երևում էր քո սևաթույր երիվարը՝ իր սիգապանծ սլացքով, իր ողորկ, սլաքի պես ուղղաձիգ ողնաշարով։ Նա իր աշխույժ աչքերով նայում էր իմ աչքերի մեջ, կարծես ուզում էր խոսք ասել։ Ես կմեռնեմ, Կազբի՛չ, եթե այդ ձին դու ինձ չծախես,— ասաց Ազամաթը դողդողացող ձայնով։

Ինձ թվաց, թե նա լաց եղավ, իսկ ձեզ պետք է ասեմ, որ Ազամաթը խիստ համառ տղա էր, ու նրա աչքերից արցունք քամել չէր լինում մինչև իսկ այն ժամանակ, երբ նա ավելի փոքր էր։

Ի պատասխան նրա լացին՝ ծիծաղի պես մի բան լսվեց։

— Լսիր,— հաստատուն ձայնով ասաց Ազամաթը,— տեսնում ես, ամեն ինչի պատրաստ եմ։ Ուզո՞ւմ ես, ես քրոջս գողանամ քեզ համար։ Քույրս ինչպե՞ս է պարում, ինչպե՞ս է երգում, իսկ նրա ոսկեթել ասեղնագործը հրաշք բան է։

* Ոչ։

Թուրքի փադիշահն* էլ այդպիսի կին չի ունեցել... Ուզո՞ւմ ես։ Վաղը գիշերն սպասիր ինձ այնտեղ՝ կիրճում, ուր վտակն է վազում. ես քրոջս հետ դրա մոտով հարևան աուլը կերթամ, ու նա քոնը կլինի։ Մի՞թե Բելան քո երիվարին չարժի։

Կազբիչը երկար, երկար լռեց։ Վերջապես, պատասխանի փոխարեն, նա մի հին երգ երգեց կիսաձայն.

Սիրուններ շատ կան մեր աուլներում,
Անտղեր են փայլում սև-սև աչքերում,
Նրանց սիրելը բախտ է ցանկալի,
Բայց ազատ կյանքը վեր է ավելի։
Ոսկով թե ուզես, կգնես չորս կին,
Բայց ձին սրընթաց չունի արժան դին.
Նա ետ չի մնա քամուց էլ ոռեպի,
Չի դավաճանի և քեզ չի խաբի։**

Ազամաթն իջուր էր աղերսում համաձայնել. և՛ լալիս էր, և՛ շողոքորթում, և՛ երդվում։ Վերջապես Կազբիչն անհամբեր ընդհատեց նրան.

— Դեն կորի՛ր, խելացնո՞ր լակոտ։ Դու ինչացո՞ւ ես, որ իմ ձին հեծնես։ Առաջին երեք քայլում նա քեզ ցած կգցի, ու դու ծոծրակդ կջարդես՝ քարերին զարկվելով։

— Ի՞նձ,— ճչաց կատաղած Ազամաթը, և մանկական դաշույնի երկաթը, օղազրահին զարկվելով՝ զնգաց։ Ուժեղ մի ձեռք նրան ետ մղեց, և նա այնպես զարկվեց ցանկապատին, որ սա երերաց։ «Ինչե՞ր է լինելու»,— մտածեցի ես, ախոռ նետվեցի, սանձեցի մեր ձիերը և ետնաբակ տարա։ Երկու րոպեից սակլյայում արդեն սոսկալի աղմուկ-աղաղակ էր բարձրացել։ Ահա թե ինչ էր պատահել։ Ազամաթը պատրաստված բեշմեթով ներս էր վազել, ասելով, թե Կազբիչն ուզում էր իրեն մորթել։ Բոլորը ոտքի էին թռել, հրացաններն առել, ու սկսվե՞լ էր իրարանցումը։ Ճիչ, աղմուկ, կրակոցներ։ Սակայն Կազբիչն արդեն ձիու վրա էր և փողոցում պտտվում էր ամբոխի մեջ դևի պես, թրի հարվածներով պաշտպանվում։ «Գինին խմի Ղազարը, խումար ընկնի Նազարը»,— ասացի

* Թագավորը։

** Ես ներողություն եմ խնդրում ընթերցողներից նրա համար, որ ոտանավորի վերածեցի Կազբիչի երգը, որն ինձ հաղորդել էին, հասկանալի է, արձակի ձևով, բայց սովորությունը երկրորդ բնություն է։ (Մանոր. Լերմոնտովի)։

Գրիգորի Ալեքսանդրովիչին, բռնելով նրա ձեռքը. «Ավելի լավ չէ՞, քանի շուտ է, քաշվենք այստեղից»։

— Է, սպասեցեք, տեսնենք ինչո՞վ է վերջանում։

— Վստահ եղեք, որ վատ է վերջանալու։ Այս ասիացիների մոտ ամեն ինչ այդպես է. գլուխները բուզա կքաշեն, ու կսկսվի՞ կոտորածը։

Մենք ձի նստեցինք ու տուն սլացանք։

— Իսկ Կազբիչն ի՞նչ եղավ,— անհամբեր հարցրի ես շտաբս-կապիտանին։

— Այդ մարդկանց ի՞նչ կպատահի որ,— պատասխանեց նա, խմելով թեյի մնացորդը,— ճողոպրե՞ց, էլի։

— Եվ առանց վիրավորվելո՞ւ,— հարցրի ես։

— Աստված գիտե։ Դիմացկուն են ավազակները։ Ոմանց ես կռվի մեջ եմ տեսել։ Օրինակ. որ նայես, մաղի պես ամբողջ ծակծկոտված է սվիններով, բայց էլի թափահարում է թուրը։— Շտաբս-կապիտանը կարճատև լռությունից հետո շարունակեց, ոտքը գետնին խփելով.

— Երբեք չեմ ների ինձ մի բան։ Ասես սատանան դրդեց՝ բերդ հասնելուց հետո պատմել Գրիգորի Ալեքսանդրովիչին բոլորը, ինչ լսել էի ցանկապատի ետևում նստած ժամանակ։ Նա ծիծաղեց (այնպիսի՞ խորամանկն էր), իսկ մտքում ինչ-որ բան դրեց։

— Իսկ ի՞նչ բան, պատմեցեք, խնդրեմ։

— Է՛հ, էլ ի՞նչ արած, սկսեցի պատմել, պետք է շարունակեմ։

Մի չորս օր անց Ազամաթը ձի նստած բերդ եկավ։ Ըստ սովորականի, այցելեց Գրիգորի Ալեքսանդրովիչին, որը նրան միշտ՝ քաղցրավենիներով էր հյուրասիրում։ Ես այդտեղ էի։ Խոսք բացվեց ձիերի մասին, և Պեչորինն սկսեց գովել Կազբիչի ձին, թե այնքան արագընթաց է, գեղեցիկ, ասես լեռնայծյամ լինի։ Նրա ասելով, ուղղակի դրա նմանը ողջ աշխարհում չկա։

Փայլատակեցին թաթար տղայի աչիկները, իսկ Պեչորինն իբր թե չի նկատում։ Ես ուրիշ բանի մասին եմ խոսք բաց անում, իսկ նա մեկ էլ տեսար իսկույն խոսքը դարձրեց Կազբիչի ձիու վրա։ Այս պատմությունը շարունակվում էր ամեն անգամ, երբ Ազամաթը բերդ էր գալիս։ Մի երեք շաբաթ անց,

ես սկսեցի նկատել, որ Ազամաթը գունատվում է ու ցամաքում, ինչպես վեպերում սիրուց է պատահում։ Ի՞նչ զարմանք...

Հա, գիտե՞ք ինչ, ես վերջն իմացա այս ամբողջ խաղը։ Գրիգորի Ալեքսանդրովիչն այն աստիճան էր գրգռել տղային, որ նա քիչ էր մնում իրեն ջուրը գցի, խեղդվի։ Մեկ անգամ էլ Գրիգորի Ալեքսանդրովիչը չվերցնի ու ասի. «Տեսնում եմ, Ազամաթ, որ քեզ խիստ շատ է դուր եկել այդ ձին, բայց դու նրան չես տեսնի, ինչպես ծոծրակդ չես տեսնում։ Դե, ասա, դու ի՞նչ կտայիր նրան, ով այդ ձին քեզ կնվիրեր»...

— Այն ամենը, ինչ նա ցանկանար,— պատասխանել էր Ազամաթը։

— Այդ դեպքում ես այդ ձին ձեռք կբերեմ քեզ համար, միայն մի պայմանով... Ե՞րդվի՛ր, որ այդ պայմանը կկատարես...

— Երդվում եմ... Դո՛ւ էլ երդվիր։

— Լա՛վ։ Երդվում եմ, դու ձիուն տեր կդառնաս. միայն թե նրա համար դու ինձ պետք է տաս քո քույր Բելային. Ղարագյոզը նրա դալիմը կլինի։ Հուսով եմ, որ քեզ համար ձեռնտու առաջարկ է։

Ազամաթը լռում է։

— Չե՞ս ուզում։ Է՛, ինչպես կուզես։ Ես կարծում էի, թե դու տղամարդ ես, իսկ դու դեռ մանուկ ես, քեզ համար ձի նստելը դեռ վաղ է...

Ազամաթը բռնկվում է.

— Իսկ իմ հա՞յրը,— ասում է նա։

— Մի՞թե նա երբեք որևէ տեղ չի մեկնում։

— Ճիշտ է...

— Համաձա՞յն ես...

— Համաձայն եմ,— շշնջում է Ազամաթը, մահվան պես գունատ։— Ուրեմն՝ ե՞րբ։

— Հենց առաջին անգամ, երբ Կազբիչն այստեղ գա իր ձիով, նա խոստացել է մի տասնյակ ոչխար բերել այստեղ. մնացածը — իմ գործն է։ Տե՛ս, չմոռանաս, հա՞, Ազամա՛թ։

Այսպիսով նրանք սարքում են այդ գործը... Ճշմարիտն ասած՝ դա վա՞տ գործ էր։ Ես հետո այդ բանն ասացի էլ Պեչորինին, բայց նա դրան պատասխանեց, թե վայրենի չերքե-

զուտին պետք է երջանիկ լինի այնպիսի համակրելի ամուսին ունենալու համար, ինչպիսին ինքն է, որովհետև, ըստ նրանց օրենքի, նա, այնուամենայնիվ, Բելայի ամուսինը կլինի, իսկ Կազբիչը ավազակ է, որին պետք է պատժել։ Ինքներդ դատեցեք, դրան ի՞նչ կարող էի պատասխանել... Բայց այն ժամանակ ոչինչ չգիտեի նրանց դավադրության մասին։ Ահա մեկ անգամ գալիս է Կազբիչն ու հարցնում. ոչխար ու մեղր հարկավոր չէ՞։ Ես նրան կարգադրում եմ հաջորդ օրը բերել։ «Ազամաթ,— ասում է Գրիգորի Ալեքսանդրովիչը,— վազը Ղարագյոզն իմ ձեռքին կլինի։ Եթե այս գիշեր Բելան այստեղ չլինի, դու էլ ձի չես տեսնի»...

— Լավ,— ասում է Ազամաթը և աուլ սլանում։

Երեկոյան Գրիգորի Ալեքսանդրովիչը վինվեց ու ձի հեծած՝ բերդից դուրս գնաց։ Թե նրանք ինչպես են սարքում այդ գործը, չգիտեմ, միայն թե գիշերը նրանք երկուսն էլ վերադառնում են, ու ժամապահը տեսնում է, որ Ազամաթի ձիու թամբի վրա պառկեցրած է մի կին, որի ձեռքերն ու ոտքերը կապկըպած են, իսկ գլուխը փաթաթված շադրայով։

— Իսկ ձի՞ն,— հարցրի ես շտաբս-կապիտանին։

— Իսկո՛ւյն, իսկո՛ւյն։ Մյուս օրը վաղ առավոտյան եկավ Կազբիչն ու բերեց ծախելու մի տանջակ ոչխար։ Ձին ցանկապատի մոտ կապելով, նա մտավ իմ սենյակը. ես նրան թեյով հյուրասիրեցի, որովհետև թեպետ նա ավազակ էր, բայց, այնուամենայնիվ, իմ կունակն էր։

Մենք սկսեցինք դեսից-դենից խոսել... Հանկարծ տեսնում եմ՝ Կազբիչը ցնցվեց, դեմքն այլայլվեց ու նետվեց դեպի պատուհանը, բայց պատուհանը, դժբախտաբար, բացվում էր ետնաբակի վրա։

— Քեզ ի՞նչ պատահեց,— հարցրի ես։

— Իմ ձի՞ն... ձի՞ն,— ասաց նա, ազգ մարմնով գոռալով։

Ես, իսկապես, լսեցի սմբակների դոփյուն.

— Երեկ որևէ կազակ եկավ...

— Ո՞չ։ Ռուս յամա՞ն, յամա՞ն,— մռնչաց նա և ամենապարանքով դուրս նետվեց որպես վայրենի հովազ։ Երկու ատյունով հասավ բակ։ Բերդի դարպասի մոտ ժամապահը հրացանով փակեց նրա ճանապարհը։ Նա ցատկեց հրացանի վրայով ու սկսեց վազել ճանապարհով... Հեռվում փոշի էր ոլորվում։ Ազամաթը սուրում էր՝ սրընթաց Ղարագյոզին հեծած։ Վազելիս Կազբիչը ծածկոցի միջից դուրս քաշեց հրացանն ու կրակեց։ Մի րոպեաչափ նա անշարժ մնաց, մինչև համոզվեց, որ վրիպել է, հետո վայնասուն բարձրացրեց, հրացանը քարին զարկեց, փշուր-փշուր արեց, գլորվեց գետին ու մանկան պես հեկեկաց... Ահա բերդից հասարակությունը նրա շուրջը հավաքվեց։ Նա ոչ ոքի չէր նկատում։ Գանգնեցին, խոսեցին ու ետ գնացին։ Ես կարգադրեցի նրա կողքին դնել ոչխարների արժեքը։ Նա այդ փողին ձեռք չտվեց. պառկած էր երեսնիվայր, ասես մեռել։ Կհավատա՞ք, նա այդպես պառկած մնաց մինչև ուշ գիշեր ու ողջ գիշերը... Միայն հետևյալ առավոտյան բերդ եկավ ու սկսեց խնդրել, որ ձին գողացողի անունն ասեն։ Ժամապահը, որը տեսել էր, թե ինչպես Ազամաթն արձակեց ձին ու նրան հեծած՝ սուրաց, հարկ չհամարեց թաքցնել։ Այդ անունը լսելիս Կազբիչի աչքերը փայլատակեցին, և նա գնաց այն աուլը, որտեղ Ազամաթի հայրն էր ապրում։

— Իսկ հայրն ի՞նչ արեց։

— Բանն էլ հենց այդ է, որ Կազբիչը նրան չգտավ. նա մի վեց օրով ինչ-որ տեղ էր գնացել, եթե ոչ, Ազամաթին ինչպե՞ս կհաջողվեր իր քրոջը փախցնել։

Իսկ եթե հայրը վերադարձավ, ո՞չ աղջիկը կաբ, ո՞չ էլ տղան։ Այնպիսի խորամանկն էր. կասեցել էր, որ պլոխը ազգ չի պրծացնի, եթե բռնվի։ Այդպես էլ այդ ժամանակից անհետ կորավ. հավանորեն միացավ աբրեքների սրևէ խմբի ու խենթ գլուխը զոհեց Թերեքի կամ Կուբանի էն ափին։ Եվ տեղն էր դրան...

Խոստովանում եմ, ինձ էլ բավական հասավ։ Հենց որ ես տեղեկացա, որ չերքեզուհին Գրիգորի Ալեքսանդրովիչի մոտ է, էպոլետները դրեցի, սուրը կապեցի ու մոտը գնացի։

Գրիգորի Ալեքսանդրովիչը պառկած էր առաջին սենյակում անկողնու վրա, մի ձեռքը ծոծրակի տակը դրած, իսկ մյուսում հանգած ծխամորճը բռնած։ Երկրորդ սենյակի դուռը փակված էր, և բանալի չկար փականքի մեջ։ Այդ բոլորն իսկույն նկատեցի... Սկսեցի հազալ և կրունկներով թխկացնել շեմքը, բայց նա ձևացնում էր, իբր թե չի լսում։

— Պարոն պրապորշչիկ,— ասացի որքան կարելի է խիստ տոնով։— Մի՞թե դուք չեք տեսնում, որ եկել եմ ձեզ մոտ։

— Ա՛խ, բարև՛ ձեզ, Մաքսիմ Մաքսիմիչ։ Ծխամորճ ծխել չե՞ք ուզում,— պատասխանեց նա, տեղից չբարձրանալով։

— Ներեցե՛ք։ Ես Մաքսիմ Մաքսիմիչ չեմ, շտաբս-կապիտան եմ։

— Այդ միևնույն է։ Արդյոք թեյ չէի՞ք կամենա։ Եթե իմանայիք, թե ինչ հոգս է տանջում ինձ։

— Ես ամեն ինչ գիտեմ,— պատասխանեցի, մահճակալին մոտենալով։

— Ավելի լավ. պատմելու տրամադրություն չունեմ։

— Պարոն պրապորշչիկ, դուք մի հանցանք եք գործել, որի համար ես ևս կարող եմ պատասխանատու լինել։

— Է՜, դուք էլ. ի՞նչ կա որ։ Չէ՞ որ մենք վաղուց ամեն ինչ կես ենք անում։

— Ի՞նչ կատակներ են։ Հաճեցեք ձեր սուրը հանձնել։

— Մի՜տկա, սուրը բե՛ր...

Միտկան բերեց սուրը։ Պարտականությունս կատարելով, ես նստեցի նրա մահճակալին և ասացի. «Լսիր, Գրիգորի Ալեքսանդրովիչ, խոստովանիր, որ լավ չէ»։

— Ի՞նչը լավ չէ։

— Այն, որ դու Բելային փախցրել ես... Ա՛խ, այդ սատանա Ազամաթը... Դե՛, խոստովանիր,— ասացի նրան։

— Իսկ եթե աղջիկն ինձ դո՞ւր է գալիս...

Դե՛, ի՞նչ կհրամայեիք պատասխանել սրան... Ես ապուշ կտրեցի։ Սակայն, կարճատև լռությունից հետո նրան ասացի, որ եթե հայրը Բելային պահանջի, հարկավոր է տալ։

— Բնավ հարկավոր չէ։

— Բայց նա կիմանա, որ աղջիկն այստեղ է։

— Իսկ ինչպե՞ս կիմանա։

Ես նորից ապշահար մնացի։ «Լսեցե՛ք, Մաքսիմ Մաքսիմի՛չ,— ասաց Պեչորինը, կիսով չափ բարձրանալով։— Չէ՞ որ դուք բարի մարդ եք, իսկ եթե աղջկան այդ վայրենուն տալու լինենք, նա կմորթի կամ կծախի։ Գործը կատարված է, միայն թե պետք չէ կամովին փչացնել. աղջկան ինձ մոտ թողեք, իսկ սուրս՝ ձեզ մոտ»...

— Ցույց տվեք ինձ այդ աղջկան,— ասացի ես։

— Աղջիկն այս դռան ետևն է. միայն թե ինքս էլ այսօր իզուր էի ուզում տեսնել. նստած է անկյունում, փաթաթվել է ծածկոցի մեջ, չի խոսում ու չի նայում. խրտչող է, ինչպես վայրի լեռնայծյամ։ Ես վարձել եմ մեր դուքանպանի կնոջը. սա թաթարերեն գիտե, կխնամի աղջկան և կընտելացնի այն մտքին, որ իմն է, որովհետև նա ոչ ոքի չի պատկանելու, բացի ինձանից,— ավելացրեց Պեչորինը, բռունցքը սեղանին խփելով։

Ես դրան էլ համաձայնեցի... Ի՞նչ կհրամայեք անել։ Կան մարդիկ, որոնց ասածին անպայման պետք է համաձայնել։

— Եվ ի՞նչ,— հարցրի ես Մաքսիմ Մաքսիմիչին,— իրո՞ք նա այդ աղջկան ընտելացրեց իրեն, թե՞ Բելան հյուծվեց գերության մեջ, հայրենիքի կարոտից։

— Ի՞նչ եք ասում, ինչո՞ւ հայրենիքի կարոտից։ Բերդից երևում էին նույն սարերը, ինչ և աուլից, իսկ այդ վայրենիներին էլ ուրիշ ոչինչ հարկավոր չէ։ Բացի այդ, Գրիգորի Ալեքսանդրովիչն ամեն օր նրան որևէ բան էր նվիրում. առաջին օրերը Բելան լուռ, գոռոզաբար ետ էր վանում նվերները, որոնք այդ դեպքում բաժին էին ընկնում դուքանպանուհուն և գրգռում նրա պերճախոսությունը։ Ա՛խ, նվերնե՛ր. կինն ի՞նչ չի անի գունավոր լաթի կտորի համար... բայց սա մի կողմ թողնենք... Գրիգորի Ալեքսանդրովիչը երկար ժամանակ գլուխ ցավեցրեց Բելայի պատճառով. մինչև այդ՝ թաթարերեն էր սովորում, և աղջիկն էլ սկսում էր մեր լեզուն հասկանալ։ Սակավ առ սակավ Բելան վարժվեց նայել նրան, սկզբում հոնքերի տակից, շեղակի, շարունակ տխրում էր, կիսաձայն երգում իրենց երգերը, այնպես որ, պատահում էր, ես էլ էի տխրում, երբ հարևան սենյակից լսում էի նրա երգը։ Երբեք չեմ մոռանա մի տեսարան։ Անցնում էի պատուհանի մոտով ու ներս նայեցի։ Բելան նստած էր ռուսական վառարանի վրա, գլուխը կրծքին կախած, իսկ Գրիգորի Ալեքսանդրովիչը կանգնած էր նրա առաջ. «Լսիր, իմ փերի,— ասում էր Պեչորինը,— չէ՞ որ գիտես, որ վաղ թե ուշ դու պետք է իմը լինես, էլ ինչո՞ւ ես միայն տանջում ինձ։ Մի՞թե որևէ չեչենի ես սիրում։ Եթե այդպես է, քեզ իսկույն բաց կթողնեմ՝ ձեր տուն գնաս»։ Բելան հաղիվ նկատելի ցնցվեց ու օրորեց գլուխը։ «Կամ թե,— շարունակեց Պեչորինը,— ես քեզ

բոլորովին ատելի՞ եմ»։ Բելան հառաչեց։ «Թե՞ քո հավատն է քեզ արգելում ինձ սիրել»։ Բելան գունատվեց ու լուռ մնաց։ «Հավատա՛ ինձ, ալլահը բոլոր ցեղերի համար մեկ է և նույնը, և եթե նա ինձ թույլատրում է քեզ սիրել, ինչո՞ւ է արգելլու, որ դու ինձ փոխադարձաբար հատուցես»։ Բելան սևեռուն հայացքով նայեց նրա դեմքին, ասես այդ նոր միտքը նրան ապշեցրեց։ Բելայի աչքերում արտահայտվեց անվստահություն և համոզվելու ցանկություն։ Ի՞նչ աչքեր էին. փայլատակում էին ինչպես երկու բոցավառ ածուխ։

«Լսի՛ր, սիրելի՛, բարի Բելա,— շարունակեց Պեչորինը։— Դու տեսնում ես, ես քեզ ինչպես եմ սիրում. պատրաստ եմ տալ ամեն ինչ՝ քեզ ուրախացնելու համար, ուզում եմ, որ երջանիկ լինես, իսկ եթե էլի տխրես, ես կմեռնեմ։ Ասա, ավելի ուրախ կլինե՞ս»։ Բելան մտածմունքի մեջ ընկավ, չհուսացնելով Պեչորինից իր սև աչքերի հայացքը, հետո փաղաքշաբար ժպտաց ու գլխով համաձայնության նշան արեց։ Պեչորինն իր ձեռքի մեջ առավ նրա ձեռքը և սկսեց համոզել, որ նա իրեն համբուրի։ Բելան թույլ պաշտպանվում էր և կրկնում. «Поджалуста, поджалуста, не нада, не нада». Պեչորինն սկսեց պնդել, Բելան դողդողաց, լաց եղավ։ «Ես քո գերին եմ,— ասում էր Բելան,— քո ստրկուհին. իհարկե, դու կարող ես ինձ ստիպե՛լ»։ Եվ դարձյալ արցունքներ։

Գրիգորի Ալեքսանդրովիչը բռունցքը խփեց իր ճակատին ու դուրս թռավ մյուս սենյակը։ Ես ներս մտա։ Պեչորինը ձեռքերը ծալած՝ մոայլ ետ ու առաջ էր քայլում։ «Հը՛, ի՞նչ կա»,— ասացի նրան։ «Դև է, ո՛չ թե կին,— պատասխանեց Պեչորինը,— սակայն ես ձեզ ազնիվ խոսք եմ տալիս, որ նա իմը կլինի»... Գլուխս օրորեցի։ «Կուզե՞ք գրազ գանք,— ասաց նա,— մի շաբաթից»։ «Համեցե՛ք»։— Ի նշան համաձայնության՝ մենք ձեռք տվինք միմյանց ու բաժանվեցինք։

Հետևյալ օրը Պեչորինն իսկույն հատուկ սուրհանդակ ուղարկեց Ղզլար՝ զանազան գնումներ կատարելու. բերվեցին բազմաթիվ տեսակ-տեսակ պարսկական կտորներ (բոլորի անունը թվելը դժվար է)։

«Ի՞նչ եք կարծում, Մաքսիմ Մաքսիմիչ,— ասաց նա ինձ, նվերները ցույց տալով,— ասիական գեղեցկուհին կդիմանա՞ այսպիսի մարտկոցին»։ «Դուք չերքեզուհիներին չեք ճանաչում,— պատասխանեցի ես,— դրանք բոլորովին այն՝ չեն, ինչ վրացուհիները կամ անդրկովկասյան թաթարուհիները, ամենևին նույնը չեն։ Սրանք իրենց կանոններն ունեն. սրանք այլ կերպ են դաստիարակված»։ Գրիգորի Ալեքսանդրովիչը ժպտաց և սկսեց քայլերդ սուլել։

Ու քանից դուրս եկավ, որ ես իրավացի էի. նվերները միայն կիսով չափ ազդեցին. Բելան ավելի փաղաքուշ դարձավ. ավելի վստահող, և միայն այդքանը։ Այնպես որ Պեչորինը վճռեց դիմել վերջին միջոցին։ Մեկ անգամ, առավոտյան, նա կարգադրեց թամբել ձին, չերքեզական հագուստ հագավ, զինվեց ու մտավ Բելայի սենյակը։ «Բելա՛,— ասաց նա,— դու գիտես, թե քեզ ինչպես եմ սիրում։ Ես վճռեցի քեզ փախցնել, մտածելով, որ դու, երբ ինձ ճանաչես, կսիրես։ Սխալվեցի։ Մնաս բարի՛, մնա այն բոլորի լիակատար տիրուհին, ինչ ես ունեմ։ Եթե կկամենաս, վերադարձիր հորդ մոտ, դու ազատ ես։ Ես մեղավոր եմ քո առաջ և պետք է պատժեմ ինձ։ Մնաս բարով, մեկնում եմ։ Ո՞ւր. ես ի՞նչ գիտեմ։ Գուցե երկար չփնտրեմ գնդակ կամ թրի հարված։ Այն ժամանակ հիշիր ինձ և ներիր»։ Նա երեսը շուռ տվեց և ձեռքը մնաս բարեի մեկնեց Բելային։ Բելան չառավ նրա ձեռքը, լուռ մնաց։ Դռան եզրը կանգնած լինելով, ես կարողացա բանալու անցքով դիտել նրա դեմքը. և նա իմ մեղքը բերեց. այնպիսի մահացու գունատություն էր պատել սիրելի դեմքը։ Պատասխան չսպասելով, Պեչորինը մի քանի քայլ արեց դեպի դուռը. նա դողում էր։ Եվ արդյոք ասե՞մ ձեզ. ես կարծում եմ, որ նա ի վիճակի էր իսկապես կատարելու այն, ինչ կատակով էր անում։ Այդպիսի մարդ էր, աստված գիտե նրան։ Սակայն նա հազիվ էր ձեռք դիպցրել դռանը, երբ Բելան ցատկեց տեղից, հեկեկաց և նրա վզովն ընկավ։ Կհավատա՞ք արդյոք. ես, դռան եզրը կանգնած, նույնպես լաց եղա, այսինքն գիտե՞ք, ոչ թե լաց եղա, այլ այնպե՞ս — հիմարությո՞ւն...

Շտաբս-կապիտանը լռեց։

— Այո՛ խոստովանում եմ,— ասաց նա հետո, ոտքերը ձիգ տալով,— ես դժկամեցի, որ երբեք ոչ մի կին ինձ այդպես չի սիրել։

— Եվ երկարատև՞ եղավ նրանց երջանկությունը,— հարցրի ես։

— Այո՛, Բելան մեզ խոստովանեց, որ այն օրից, երբ տեսել է Պեչորինին, վերջինս հաճախ է երևացել իրեն երազում, և որ ոչ մի տղամարդ երբեք իր վրա այդպիսի տպավորություն չի գործել։ Այո՛, նրանք երջանիկ էին։

— Ի՞նչ ձանձրալի է,— բացականչեցի ես ակամա։ Եվ, իրոք, հանգույցի տրագիկ լուծման էի սպասում, և հանկա՞ծ այդպես անակնկալ ինձ հուսախաբ անել...— Բայց մի՞թե,— շարունակեցի ես,— Բելայի հայրը չկոահեց, որ աղջիկը ձեզ մոտ է, բերդում։

— Այսինքն, կարծեմ, նա կասկածում էր։ Մի քանի օր անց մենք իմացանք, որ ծերուկն սպանվել է։ Ահա թե ինչպես էր պատահել...

Իմ հետաքրքրությունը նորից բորբոքվեց։

— Պետք է ձեզ ասել, որ Կազբիչը ենթադրել էր, թե իբր Ազամաթը հոր համաձայնությամբ է գողացել իր ձին, գոնե ես այդպես եմ ենթադրում։ Եվ ահա մեկ անգամ նա սպասում է ճանապարհի մոտ, մի երեք վերստ աուլից դենը. ծերուկը վերադառնում էր աղջկան ապարդյուն որոնելուց։ Նրա ուղղենները ետ էին մնացել։ Մթնշաղ էր։ Նա մտասույզ առաջ էր ընթանում, երբ հանկարծ Կազբիչը կատվի պես դուրս թռավ թփի ետևից, թռավ ձիու գավակին, դաշույնի հարվածով նրան գետին գլորեց, սանձափոկն իր ձեռքն առավ ու ծը՞լկ. մի քանի ուղղեններ այս բոլորը տեսնում են բլրից. նրանք ընկնում են Կազբիչի ետևից, սակայն չեն հասնում։

— Նա վարձահատույց է եղել իր ձիու կորստի համար ու վրեժ լուծել,— ասացի ես, որպեսզի զրուցակցիս կարծիքն երևան բերեմ։

— Իհարկե, ըստ նրանց,— ասաց շտաբս-կապիտանը,— նա միանգամայն իրավացի էր։

Ինձ ակամա ապշեցրեց ռուս մարդու ունակությունը՝ հարմարվելու այն ժողովուրդների սովորույթներին, որոնց շրջանում նրան վիճակվում է ապրել։ Չգիտեմ, պախարակությա՞ն, թե՞ գովասանքի է արժանի խելքի այս հատկությունը, միայն թե դա ապացուցում է նրա աներևակայելի ճկունությունն ու գոյությունն այն պարզ, առողջ դատողության, որ ներում է չարիքն ամենուր, որտեղ տեսնում է նրա անհրաժեշտությունը կամ նրա ոչնչացման անկարելիությունը։

Մինչ այդ՝ թեյը խմեցինք, պրծանք. վաղուց լծված ձիերը մրսել էին՝ ձյան վրա կանգնելուց. լուսինը դժգունում էր արևմուտքում և արդեն պատրաստ էր սուզվել իր սև թխպերի մեջ, որ կախվել էին հեռավոր գագաթների վերևը, ասես պատրաստած վարագույրի ծվեններ։ Մենք սակլյայից դուրս եկանք։ Հակառակ ուղեկցիս գուշակությանը, եղանակը պարզվեց և մեզ խոստանում էր խաղաղ առավոտ։ Աստղերի խմբերը հեռավոր հորիզոնի վերևում հրաշալի նախշերի ձևով հյուսվում էին միմյանց և մեկը մյուսի ետևից մարում, մինչդեռ արևելքի գունատ արտափայլը փոփոխում — տարածվում էր մութ-մանուշակագույն երկնակամարում, աստիճանաբար լուսավորելով կուսական ձյուներով պատած լեռների գիրթ գագաթները։ Աջից և ձախից սևին էին տալիս մռայլ, խորհրդավոր անդունդները, և մշուշները, քուլա-քուլա բարդվելով ու գալարվելով օձերի պես, հարևան ժայռերի կնճիռներով սահում էին դեպի այդ անդունդները, կարծես նախազգալով ցերեկը և վախենալով նրա մոտենալուց։

Խաղաղ էր ամեն ինչ երկնքում և երկրի վրա, ինչպես մարդու սրտում է լինում առավոտյան աղոթքի րոպեին։ Միայն երբեմն արևելքից վրա էր հասնում զով քամին, բարձրացնելով ձիերի բաշերը, որ եղյամով էին պատած։ Մենք ճանապարհ ընկանք։ Հինգ վիտ ձիուկ դժվարությամբ էին քաշում մեր սայլակները Գուդ սարը տանող ոլորապտույտ ճանապարհով։ Մենք հետիոտն գնում էինք սայլակների ետևից, անիվների տակը քարեր դնելով այն ժամանակ, երբ ձիերն ուժասպառ էին լինում։ Թվում էր, թե ճանապարհը դեպի երկինք է տանում, որովհետև, աչքդ որքան կտրում էր՝ ճանապարհն անվերջ բարձրանում էր ու վերջապես կորչում այն ամպի մեջ, որ դեռ երեկոյից սկսած հանգստանում էր Գուդ սարի գագաթին, ասես որսի սպասող ուրուր։ Ձյունը ճռճռում էր մեր ոտքերի տակ. օդն այնքան նոսրացել էր, որ շնչելիս մեր կուրծքը ցավում էր։ Արյունն ամեն վայրկյան գլուխներս էր խփում։ Այնուհանդերձ, ինչ-որ հաճելի զգացում տարածվում էր իմ բոլոր երակներում, և ես մի տեսակ ուրախ էի, որ աշխարհից այսքան բարձր եմ գտնվում։ Երեխայական զգացում է, չեմ վիճում, բայց հասարակության պայմաններից հեռանալով և բնությանը մոտենալով, մենք ակամա երեխա-

ներ ենք դառնում. բոլոր ձեռք բերածը թոթափվում է հոգուցդ, և նա դառնում է նորից այնպիսին, ինչպիսին եղել է մի ժամանակ և, անշուշտ, երբևէ դարձյալ լինելու է։ Ով ինձ պես առիթ է ունեցել թափառելու անբնակ սարերում, երկար, խորը դիտելու նրանց տարօրինակ պատկերները և ագահաբար ծծելու կիրճերի կենարար օդը, նա, իհարկե, կհասկանա այս կախարդական պատկերները հաղորդելու, պատմելու, նկարելու ցանկությունս։ Ահա, վերջապես, մենք բարձրացանք Գուդ սարը, կանգ առանք և մեր շուրջը նայեցինք։ Սարի գլխին կախված էր մի գորշ ամպ, և նրա սառը շունչը մոտալուտ փոթորկի սպառնալիք էր բովանդակում, բայց արևելքում ամեն ինչ այնպես պարզ ու ոսկեգույն էր, որ մենք, այսինքն՝ ես և շտաբս-կապիտանը, նրա մասին բոլորովին մոռացանք... Այո՛, նաև շտաբս-կապիտանը. պարզ սրտերում բնության գեղեցկության ու վեհության զգացումը հարյուրապատիկ ավելի ուժեղ ու վառ է, քան մեր խոսելով և թղթի վրա ոգևորված գրելով պատմողներիս մեջ։

— Ես կարծում եմ, որ այս վեհապանծ պատկերները ձեզ համար արդեն սովորական են դարձել,— ասացի ես նրան։

— Այո՛, գնդակի սուլոցին էլ կարելի է վարժվել, այսինքն՝ վարժվել սրտի ակամա բաբախումը թաքցնելուն։

— Ես լսել եմ, որ ընդհակառակը, ռազմիկներից ոմանց համար այդ երաժշտությունը նույնիսկ հաճելի է։

— Հասկանալի է, եթե կուզեք, այդ հաճելի էլ է, սակայն դարձյալ այն պատճառով, որ սիրտդ ավելի ուժեղ է բաբախում։ Նայեցեք,— ավելացրեց նա, դեպի արևելք ցույց տալով,— ի՞նչ երկիր է։

Եվ հիրավի. այդպիսի համայնապատկեր հազիվ թե որևէ տեղ ինձ հաջողվի տեսնել։ Ներքևում Գոյշաուրի հովիտն էր փռվել. Արագվան և մեկ ուրիշ գետակ, որպես երկու արծաթե թելեր, հատում էին այդ հովիտը. երկնագույնին տվող մշուշը սահում էր նրա վրայով՝ առավոտյան տաք ճառագայթներից հարևան կիրճերը փախչելով. աջ ու ձախ, մեկը մյուսից բարձր, ոյունով, թփերով ծածկված սարերի կատարները իրար հատում, ձգվում էին դեպի վեր։ Հեռվում նույն սարերն էին, բայց գոնե երկու ժայռ իրար նման լինեին. և բոլոր այդ ձյունները վառվում էին ալ փայլով՝ այնպե՞ս ուրախ, այնպե՞ս պայծառ,

որ թվում էր, թե հենց այստեղ էլ կմնայիր հավերժ ապրելու։ Արևը հազիվ երևաց մուգ-կապույտ սարի ետևից, որը միայն սովոր աչքը կարող էր զանազանել փոթորկաբեր ամպից, բայց արևից վեր կար արնագույն մի շերտ, որի վրա իմ ընկերը հատուկ ուշադրություն դարձրեց. «Ես ձեզ ասացի,— բացականչեց նա,— որ այսօր փոթորիկ է լինելու, հարկավոր է շտապել, ապա թե ոչ, նա թերևս վրա հասնի մեզ Կրեստովայա սարում։ Շտապեցե՛ք»,— բղավեց նա կառապանների վրա։

Արևելակների փոխարեն շղթաներ կապեցին անիվներին, որպեսզի նրանք արագ չգլորվեն, բռնեցին ձիերի սանձը երախակալների մոտից և սկսեցին ցած իջնել։ Աջից մի ժայռ էր, ձախից՝ այնպիսի անդունդ, որ նրա հատակում ապրող օսերի մի ամբողջ գյուղը ծիծեռնակի բույն էր թվում։ Ես սարսռացի, երբ մտածեցի, որ խուլ գիշերին այստեղով, այս ճանապարհով, ուր երկու հանդիպած սայլակ անկարող են իրար կողքով անցնել, հաճախ որևէ սուրհանդակ տարեկան տասն անգամ անցնում է, առանց իր ցնցող կառքից դուրս գալու։ Մեր կառապաններից մեկը յարոսլավցի ռուս գեղջուկ էր, մյուսը՝ օս։ Օսը, երախակալի մոտից սանձը բռնած, առաջ էր քաշում քեղաձիգ ձին բոլոր հնարավոր նախազգուշություններով, վաղորոք արձակելով առջևից լծած ձիերը։ Իսկ մեր անհոգ ռուսը մինչև իսկ իր նստեցից չիջավ։ Երբ ես նրան հիշեցրի, որ նա կարող էր հոգալ գոնե իմ ճամպրուկի մասին, որի ետևից ես բոլորովին չէի ուզի այդ անդունդը իջնել, նա ինձ պատասխանեց. «Է՜, բա՛րին աստուծով, մյուսներից վատ չենք տեղ հասնի, մենք հո խամ չե՞նք»։ Եվ նա իրավացի էր։ Մենք իսկապես որ կարող էինք տեղ չհասնել, բայց և այնպես հասանք։ Եվ եթե բոլոր մարդիկ մի քիչ ավելի խորհրդածեին, կհամոզվեին, որ կյանքն այնքան թանկ չէ, որ նրա մասին այդքան հոգաս...

Բայց գուցե դուք ցանկանում եք Բելայի պատմության վերջավորությունն իմանալ։ Նախ՝ ես վիպակ չեմ գրում, այլ ճամփորդական նոթեր, հետևաբար, չեմ կարող հարկադրել շտաբս-կապիտանին, որ նա ավելի շուտ պատմի, քան նա իրոք սկսեց պատմել։ Ուրեմն՝ սպասեցեք, կամ, եթե ցանկանում եք, մի քանի էջ շուտ տվեք, սակայն ես ձեզ խորհուրդ

չեմ տալիս այդպես անել, որովհետև Կրեստովայա սարով (կամ, ինչպես գիտնական Գամբան* է անվանում՝ le Mont St. Christophe-ով**) անցնելն արժանի է ձեր հետաքրքրասիրությանը։ Այսպես ուրեմն, Գուդ սարից մենք իջնում էինք Չերտովա Դոլինա կոչված հովիտը... Ի՜նչ ռոմանտիկ անուն է։ Դուք արդեն չար ոգու բույնն եք տեսնում անմատչելի ժայռերի միջև, բայց սխալվում եք։ Չերտովա անունը ծագում է «черта» (գիծ, սահմանագիծ) և ոչ թե «чорт» (սատանա) բառից, որովհետև ժամանակով այստեղով էր անցնում Վրաստանի սահմանը։ Այս հովիտը ծածկված էր ձյան շեղջերով, որոնք բավական կենդանի կերպով հիշեցնում էին Սարատովը, Տամբովը և մեր հայրենիքի այլ սիբելի վայրերը։

— Ահա՛ և Կրեստովայան,— ցույց տալով ձյան շերտով ծածկված բլուրը, ասաց շտաբս-կապիտանը, երբ մենք Չերտովա Դոլինա իջանք։ Բլրի գագաթին սևին էր տալիս մի քարե խաչ, իսկ նրա կողքով անցնում էր հազիվ նկատելի մի ճանապարհ, որով կառքերը գնում են միայն այն ժամանակ, երբ զուգընթաց ճանապարհը ծածկված է լինում ձյան շեղջերով։ Մեր կառապանները հայտարարեցին, որ ձնահյուսքեր դեռևս չեն թափվել, և ձիերին խնայելով, մեզ տարան շրջանցիկ ճանապարհով։ Ոլորանին հասնելով, մենք հանդիպեցինք հինգ օսերի։ Նրանք մեզ իրենց ծառայությունն առաջարկեցին և, անիվներից կպչելով, աղաղակով սկսեցին քաշել մեր սայլակը, ապա պահել, որ ցած չգլորվի։ Եվ իսկապես, ճանապարհը վտանգավոր էր. աջից մեր գլուխների վերևը կախված էին ձյան շեղջեր, որոնք կարծես պատրաստ էին քամու առաջին իսկ թափից պոկվել ու կիրճը թափվել։ Նեղ ճանապարհը մասամբ ծածկված էր ձյունով։ Դա որոշ տեղերում այնքան փխրուն էր, որ ոտքերս խրվում էին մեջը, մյուս տեղերում էլ՝ արևի ճառագայթների և գիշերվա սառնամանիքի ազդեցության տակ սառույց էր կտրել։ Այնպես որ մենք ինքներս դժվարությամբ էինք առաջ անցնում, իսկ ձիերն ընկնում էին։ Զախակողմում կար մի խոր փապար, որտեղ թավալվում էր մի վտակ՝ մեկ թաքնվելով սառցե կեղևի տակ, մեկ փրփրած ցատկելով սև քարերի վրայով։ Երկու ժամում մենք հազիվ կարողացանք պտույտ գործել Կրեստովայա սարի շուրջը։ Երկու վերստը երկո՛ւ ժամում։ Մինչ այդ սև ամպերը ցածրացան, տեղաց կարկուտ, ձյուն։ Քամին, ներս խուժելով կիրճերը, ոռնում էր, սուլում, ինչպես Սոլովեյ-Ռազբոյնիկը, և շուտով քարե խաչը ծածկվեց մշուշում, որի ալիքները, մեկը մյուսից թանձր ու թավ, արագ վրա էին տալիս արևելքից... Ի դեպ, այդ խաչի մասին գոյություն ունի տարօրինակ, բայց ընդհանրացած ավանդություն, իբր թե այն կանգնեցրել է Պետրոս I կայսրը Կովկասով անցնելիս։ Բայց, նախ Պետրոսը եղել է միայն Դաղստանում և, երկրորդ՝ խաչի վրա խոշոր տառերով գրված էր, որ այն կանգնեցրել են գեն. Երմոլովի հրամանով, այն էլ 1824 թվին։ Բայց, չնայած մակագրությանը, ավանդությունն այնպես էր արմատացել, որ, ճիշտն ասած, չգիտես ինչին հավատաս, մանավանդ, որ մենք սովոր չենք արձանագրություններին հավատալուն։

Քոբի կայարանին հասնելու համար մենք պետք է իջնեինք ևս մի հինգ վերստ՝ սառցապատ ժայռերով ու փխրուն ձյան վրայով։ Ձիերը հալից ընկել էին, մենք սառել էինք։ Փոթորիկը շաչում էր ավելի ու ավելի ուժգին, ասես մեր հարազատ, հյուսիսային փոթորիկը լիներ, միայն թե սրա վայրենի ձայներն ավելի տխուր, ավելի թախծոտ էին։ «Աքսորակա՛ն,— մտածում էի ես,— դո՞ւ էլ ես լալիս քո լայն, արձակածավալ տափաստանների համար։ Այնտեղ ազատ տեղ կա տարածելու պաղ թևերդ, իսկ այստեղ քեզ համար խեղդոց ու նեղ է, ինչպես վանդակն արծվի համար, որը ճիչով զարկվում է նրա երկաթե ճաղերին»։

— Վա՛տ է,— ասում էր շտաբս-կապիտանը,— նայեցեք. մեր շուրջը ոչի՜նչ չի երևում, միայն մշուշ է ու ձյուն։ Մեկ էլ տեսար՝ անդունդ գլորվեցինք կամ մի խոռոչ ընկանք, իսկ այնտեղ, քիչ ցածում, երևի, Բայդարն այնպես է հորդացել ու կատաղել, որ անցնել էլ չես կարողանա։ Ա՛խ, այս Ասիան։ Ո՛չ մարդկանց կարելի է վստահել, ո՛չ գետակներին։

Կառապանները ճչալով ու հայհոյելով ծեծում էին ձիերին, որոնք փռնչացնում էին, համառում և ոչ մի կերպ չէին ցանկանում տեղից շարժվել, չնայած խարազանների պերճախո-

* Ժան Ֆրանսուա Գամբա (1763—1833)—ֆրանսիացի ճանապարհորդ. մի շարք ճանապարհորդություններ է կատարել Հարավային Ռուսաստանում։ եղել է Թբիլիսիի հյուպատոս։

** Սուրբ Քրիստափորի սար (Ֆր.)։

սությանը։ «Զերդ ազնվություն,— ասաց վերջապես մեկը,— չէ՞ որ մենք այսօր Քոբի չենք հասնի, չե՞ք հրամայի, քանի դեռ կարելի է, ձախակողմ ծռվել։ Հրե՛ն էնտեղ, սարալանջին ինչ-որ բան է սևին տալիս. երևի սակլյաներ են։ Վատ եղանակին ճամփորդները միշտ էնտեղ են իջևանում։ Սրանք ասում են, որ ճամփեն ցույց կտան, եթե արաղի փող տանք»,— հարեց նա, օսերի կողմը ցույց տալով։

— Գիտեմ, եղբայր, առանց քո ասելու էլ գիտեմ,— ասաց շտաբս-կապիտանը,— ա՛խ, այդ սատանաները, պատրաստ են մի պոչ գտնել, որպեսզի օղու փող պոկեն։

— Բայց խոստովանեցեք,— ասացի ես,— որ առանց նրանց մեր բանն ավելի վատ կլիներ։

— Այդ այդպես է, այդպես է,— քրթմնջաց նա,— ա՛խ, այդ ուղեցույցները, հոտառությամբ են իմանում, թե որտեղ կարելի է շահել, կարծես թե առանց նրանց ճանապարհ գտնել չի լինի։

Ահա մենք դեպի ձախ թեքվեցինք և շատ գլխացավանքից հետո հասանք մի աղքատիկ օթևան, որը բաղկացած էր սալերից ու գետաքարից շինած ու նույն այդ նյութերից շարած պատով շրջապատված երկու սակլյայից։ Պատառոտած հագուստներով տնատերերը մեզ ուրախ ընդունեցին։ Ես հետո իմացա, որ կառավարությունը նրանց վճարում է և կերակրում այն պայմանով, որ նրանք ընդունեն փոթորկի տակ ընկած ճանապարհորդներին։ «Ամեն ինչ դեպի լավն է գնում,— ասացի ես, կրակի մոտ նստելով,— այժմ դուք կավարտեք Բելայի պատմությունը. ես հավատացած եմ, որ դրանով չի վերջացել»։

— Իսկ ինչո՞ւ եք այդպես հավատացած,— պատասխանեց ինձ շտաբս-կապիտանը, խորամանկ կերպով ժպտալով և աչքով անելով։

— Այն պատճառով, որ դա կարգից դուրս բան է. այն, ինչ արտասովոր կերպով է սկսվել, նույն կերպով էլ պետք է վերջանա։

— Դուք հո կռահեցիք...

— Շատ ուրախ եմ։

— Ձեզ ի՞նչ. դուք կուրախանաք, իսկ ես, ճիշտ եմ ասում, հենց որ հիշում եմ, տխրում եմ։ Հիանալի աղջիկ էր այդ

Բելան։ Ես նրան վերջապես այնպես ընտելացա, ինչպես դստեր։ Նա էլ ինձ էր սիրում։ Պետք է ձեզ ասեմ, որ ես ընտանիք չունեմ. հորս և մորս մասին մի տասներկու տարի է արդեն, որ տեղեկություն չունեմ, իսկ կնոջով ինձ ապահովել՝ առաջ գլխի չընկա, հիմա էլ, գիտեք, ինձ սազական չէ։ Այդ պատճառով էլ ուրախացա, որ գտա մեկին, ում կարող էի երես տալ։ Մեկ-մեկ նա մեզ համար երգեր էր երգում կամ լեզգինկա պարում։ Իսկ ինչպե՞ս էր պարում։ Տեսել եմ մեր նահանգական օրիորդներին, իսկ մեկ անգամ էլ, սրանից մի քսան տարի առաջ, եղել եմ Մոսկվայի ազնվականների ակումբում։ Բայց նրանք ո՞ւր, սա ո՞ւր. բոլորովի՛ն այն չէ... Գրիգորի Ալեքսանդրովիչը նրան տիկնիկի պես էր զուգում, խընամք էր տանում, գգվում նրան, և նա մեզ մոտ այնպես էր գեղեցկացել, որ մարդ հիանում էր. դեմքից ու ձեռքերից անհետացել էր արևառությունը, այտերին վարդ էր բացվել... Ու երբեմն ինչքա՞ն ուրախ էր լինում, և միշտ չարաճճին ինձ էր կատակի առարկա դարձնում... Աստվա՞ծ թող ների նրան...

— Իսկ ինչպե՞ս ընդունեց, երբ դուք նրան հայտնեցիք իր հոր մահը։

— Մենք երկար ժամանակ այդ թաքցնում էինք, մինչև որ նա ընտելացավ իր դրությանը, իսկ երբ ասացինք, նա մի երկու օր լաց եղավ, իսկ հետո մոռացավ։

Մի չորս ամիս ամեն ինչ ուզածիդ պես լավ էր գնում։ Գրիգորի Ալեքսանդրովիչը, կարծեմ արդեն ասել եմ, թունդ սիրում էր որսորդությունը։ Առաջներում նրան հրապուրում էր անտառը, վարազների կամ այծերի որսը, իսկ հիմա գո՞նե բերդի պարսպաթմբից դենն անցներ։ Բայց և այնպես, մի ժամանակ տեսնեմ սկսել է նորից մտքերի մեջ ընկնել։ Քայլում է սենյակում՝ ձեռքերը մեջքին ծալած։ Հետո մեկ անգամ էլ առանց մեկնումեկին ասելու, որսի գնաց։ Ամբողջ օրը կորավ։ Մեկ օրը երկու դարձավ, ապա՝ ավելի ու ավելի հաճախ... Լավ չի՞, մտածեցի ես. հավանորեն սրանց միջև սև կատու է անցել։

Մի առավոտ մտնում եմ նրանց մոտ։ Ոնց որ հիմա աչքերս առաջը լինի։ Բելան նստած էր մահճակալի վրա սև մետաքսե բեշմեթը հագին, գունատ, այնպես տխուր, որ ես վախեցա։

— Իսկ Պեչորինը որտե՞ղ է,— հարցրեց ես։

— Որսի է՛գնացել։

— Այսո՞ր է գնացել։

Բելան լուռ էր, կարծես թե խոսելը նրա համար դժվար լիներ։

— Ո՛չ, երեկվանից,— վերջապես ասաց նա՝ ծանր հառաչելով։

— Որևէ բան պատահած չլինի՞։

— Ես երեկ ամբողջ օրը մտածում էի, մտածում,— պատասխանեց Բելան՝ արցունքն աչքերին,— մտքովս զանազան դժբախտություններ էին անցնում. մեկ ինձ թվում էր, թե նրան վայրի վարազ է վիրավորել, մեկ՝ չեչեն է սարերը քարշ տվել... Իսկ հիմա ինձ արդեն թվում է, թե նա ինձ չի սիրում։

— Ճիշտն ասած, սիրելիս, դու ավելի վատ բան չէիր կարող հորինել։

Նա լաց եղավ, հետո հպարտությամբ գլուխը բարձրացրեց, արցունքները սրբեց և շարունակեց.

— Եթե նա ինձ չի սիրում, նրան ո՞վ է խանգարում ինձ ետ ուղարկել մեր տունը։ Չեմ հարկադրում։ Իսկ եթե սա այսպես շարունակվի, ինքս կհեռանամ. ես նրա ստրկուհին չեմ. Իշխանի աղջիկ եմ...

Սկսեցի համոզել.

— Լսի՛ր, Բելա, նա հո չի՞ կարող հավիտյան նստել այստեղ, ասես քո շրջազգեստին կարած։ Երիտասարդ մարդ է, սիրում է որսի ետևից ընկնել։ Ման կգա, ման ու ետ կդառնա։ Իսկ եթե դու տխրես, նրան ավելի շուտ կձանձրացնես։

— Ճշմարիտ է, ճշմարիտ,— պատասխանեց Բելան,— ես ինձ ուրախ կպահեմ։— Ու քրքջալով վերցրեց իր դահիրան, սկսեց երգել, պարել ու թռչկոտել ինձ մոտ։ Սակայն այդ էլ երկար չտևեց։ Նորից ընկավ անկողնու վրա ու ձեռքերով ծածկեց դեմքը։

Ի՞նչ անեի։ Ես, գիտե՞ք, երբեք կանանց հետ չեմ շփվել։ Մտածեցի, մտածեցի, թե ինչով նրան սփոփեմ ու ոչինչ չգտա։ Միաժամանակ երկուսս էլ լուռ էինք... Խի՛ստ տրհամ դրություն։

Վերջապես ասացի.

Կուզե՞ս, գնանք պարսպաթմբի վրա զբոսնելու, սքանչելի եղանակ է։

Սեպտեմբերն էր։ Եվ, իսկապես, հիանալի, պայծառ ու ոչ-շոգ օր էր։ Բոլոր սարերը երևում էին՝ ասես ափսեի մեջ դրած։ Մենք գնացինք, լուռ ետ ու առաջ ման եկանք բերդի պարսպաթմբի վրա։ Վերջապես նա նստեց ճմի վրա։ Ես էլ նստեցի մոտը։ Դե, ճիշտն ասեմ, հիշելն էլ ծիծաղելի է. վազում էի ետևից, ոնց որ դայակ։

Մեր բերդը գտնվում էր բարձրադիր տեղում, և պարսպաթմբից սքանչելի տեսարան էր բացվում. մի կողմից մի քանի ձորակներով կտրատվող լայն մարգագետին, որը վերջավորվում էր անտառով, անտառն էլ ձգվում էր մինչև լեռների շղթան. լեռնաշղթայի վրա տեղ-տեղ աուլներից ծուխ էր բարձրանում, երամակներ էին երևում։ Մյուս կողմից վազում էր ծանծաղ մի գետակ, և դրա մոտից սկսվում էր մի խիտ թփուտ, որը ծածկում էր Կովկասի գլխավոր լեռնաշղթային միացող կայծաքարոտ բարձունքները։ Մենք նստած էինք բաստիոնի անկյունում, այնպես որ երկու կողմն էլ կարող էինք ամեն ինչ տեսնել։ Ահա տեսնում եմ. անտառից դուրս է գալիս գորշ ձի նստած մի մարդ, ավելի ու ավելի է մոտենում և, վերջապես, կանգ առնում գետակի մյուս ափին, մեզանից մոտ հարյուր սաժեն հեռավորության վրա, և սկսում է կատաղածի պես շուրջանակի վազեցնել իր ձին։ Այս ի՞նչ օյին է. «Նայի՛ր, Բելա,— ասում եմ ես,— դու ջահել ես, ու աչքերդ՝ սուր. այդ ի՞նչ իգիթ է, եկել է ո՞ւմ զվարճացնելու»...

Նա նայեց ու ճչաց՝ «դա Կազբի՞չն է»...

— Ախ, ավազակ, մեզ վրա ծիծաղելու է եկել, ի՞նչ է.— լավ զննում եմ. ի՛սկ որ Կազբիչն է. նրա թուխ ռեխն է, ինչն էլ գզգզված շորերով, կեղտոտ, ինչպես միշտ։ «Դա իմ հոր ձին է»,— ասաց Բելան, ձեռքս բռնելով։ Նա տերևի պես դողում էր, աչքերը փայլում էին։ «Ըհը՛,— մտածեցի ես,— քո մեջ էլ, հոգյակս, ավազակային արյունը չի՞ լռում»։

— Այստեղ արի,— ասացի ժամապահին,— լավ զննիր հրացանդ ու էն կտրիճին ցած բեր. մի արծաթ մանեթ կքստանաս։ «Լսում եմ, ձերդ գերազնվություն, սակայն նա իր տեղում չի կանգնում»։ «Հրամայիր թող կանգնի,— ծիծաղե-

լով ասացի ես...»... «Է՛յ, սիրելիս,— բղավեց ժամապահը, ձեռքի թափահարումով նրան նշան անելով,— մի քիչ սպասիր, ի՞նչ ես հոլի պես ֆռռում»։ Կազբիչն իրոք կանգ առավ և սկսեց ականջ դնել. երևի կարծում էր, թե իր հետ բանակցություններ են սկսում. ինչպե՞ս չէ... Իմ գրենադերը նշան բռնեց... Թրա՞խկ... վրիպեց, միայն վառոդը խանձացում բռնկվեց։ Կազբիչն ասպանդակեց ձին, և սա մի կողմ ոստնեց։ Կազբիչը կանգնեց ասպանդակներում, իրենց լեզվով ինչ-որ բան բղավեց, մտրակով սպառնաց ու ծը՛լկ։

— Բա չամաչեցի՞ր,— ասացի ժամապահին։

— Ձերդ գերաղնվություն, մեռնելու գնաց,— պատասխանեց նա,— այնպիսի նզովված մարդիկ են, միանգամից չես կարող սպանել։

Քառորդ ժամ անց, Պեչորինը վերադարձավ որսից։ Բելան նրա վզովն ընկավ, և ո՛չ մի գանգատ, ո՛չ մի հանդիմանություն երկարատև բացակայության համար... բայց ես բարկացա Պեչորինի վրա. «Ի՞նչ եք անում,— ասացի ես,— ախր Կազբիչը հենց այս րոպեին գետակի մյուս ափին էր, և մենք նրա վրա կրակեցինք. մեկ էլ տեսար՝ պատահեցիք նրան, գժվա՞ր բան է։ Այդ լեռնցիները վրիժառու մարդիկ են. դուք կարծում եք, թե նա գլխի չի՞ ընկնում, որ մասամբ դուք եք օգնել Ազամաթին։ Իսկ ես գրազ կգամ, որ նա այսօր ճանաչեց Բելային։ Ես գիտեմ, որ մի տարի սրանից առաջ Բելան նրան խիստ դուր էր գալիս, նա ինքն է ինձ ասել, և եթե կարդին գալիմ հավաքելու հույս ունենար, անշուշտ կուզեր Բելային»... Այստեղ Պեչորինը մտքի մեջ ընկավ. «Այո՛,— պատասխանեց նա,— հարկավոր է զգույշ լինել... Բելա՛, այսօրվանից դու այլևս բերդի պարսպաթումբ չպետք է գնաս»։

Երեկոյան ես երկար բացատրություն ունեցա Պեչորինի հետ։ Ինձ համար ծանր էր, որ նա փոխել էր իր վերաբերմունքը դեպի այդ խեղճ աղջիկը։ Բացի այն, որ օրվա կեսը որս անելով էր անցկացնում, նրա վերաբերմունքն էլ սառն էր դարձել, հազվադեպ էր փաղաքշում աղջկան, և Բելան սկսել էր նկատելի կերպով թառամել. գեմքը երկարել էր, մեծ աչքերն աղոտացել էին։ Երբեմն հարցնում էի. «Ինչո՞ւ հոգոց քաշեցիր, Բելա՛, տխո՞ւր ես»։ «Ոչ»։ «Դու որևէ բա՞ն ես ուզում»։ «Ոչ»։ «Հարազատներիդ կարո՞տն ես քաշում»։ «Ես հարազատներ չունեմ»։ Պատահում էր, որ ամբողջ օրերով, բացի «այո»-ից ու «ոչ»-ից նրա բերանից ուրիշ բան չէիր կարող դուրս քաշել։

Ա՛յ, հենց սրա մասին է, որ ես սկսեցի ասել Պեչորինին։ «Լսեցեք, Մաքսիմ Մաքսիմիչ,— պատասխանեց նա,— ես դժբախտ բնավորություն ունեմ. արդյոք դաստիարակությո՞ւնն է ինձ այսպես դարձրել, թե՞ ստված է ինձ այսպես ստեղծել։ Չգիտեմ։ Միայն գիտեմ, որ եթե ես ուրիշների դժբախտության պատճառ եմ, ապա ինքս էլ պակաս դժբախտ չեմ։ Հասկանալի է, որ այս վատ մխիթարանք է նրանց համար, բայց բանն այն է, որ սա այսպես է։ Իմ առաջին երիտասարդության ժամանակ, այն րոպեից, երբ ես հարազատներիս խնամակալության տակից դուրս եկա, սկսեցի խենթորեն վայելել բոլոր հաճույքները, որ կարելի է փողով ձեռք բերել, և, հասկանալի է, այդ հաճույքներն ինձ զզվեցրին։ Հետո ընտիր հասարակություն մտա, և շուտով հասարակությունն էլ ինձ ձանձրացրեց. սիրահարվում էի աշխարհիկ գեղեցկուհիների և սիրվում, բայց նրանց սերը միայն գրգռում էր իմ երևակայությունն ու ինքնասիրությունը, իսկ սիրտս մնում էր դատարկ... Սկսեցի կարդալ, սովորել։ Գիտությունները նույնպես ձանձրացրին. տեսնում էի, որ ո՛չ փառքը, ո՛չ երջանկությունը բնավ կախված չեն դրանցից, որովհետև ամենաերջանիկ մարդիկ տգետներն են, իսկ փառքը բախտի բան է, և այն ձեռք բերելու համար հարկավոր է միայն ճարպիկ լինել։ Այն ժամանակ ձանձրացա։ Շուտով ինձ Կովկաս փոխադրեցին։ Դա իմ կյանքի ամենաերջանիկ ժամանակն էր։ Հույս ունեի, թե ձանձրույթը կյանք չունի չեչենների գնդակների տակ։ Իզո՛ւր. մի ամսից հետո այնպես վարժվեցի նրանց բզզոցին և մահվան մոտիկությանը, որ, ազնիվ խոսք, մոծակների վրա ավելի էի ուշադրություն դարձնում։ Եվ առաջվանից ավելի ձանձրույթ զգացի, որովհետև համարյա վերջին հույսս կորցրի։ Երբ Բելային իմ տանը տեսա, երբ առաջին անգամ, նրան ծնկներիս վրա պահած, համբուրեցի նրա սև խոպոպները, ես՝ հիմարս, մտածեցի, թե նա մի հրեշտակ է, որին կարեկցող բախտն է ինձ ուղարկել... Նորից սխալվեցի. վայրենուհու սերը քիչ բանով է լավ մեծատոհմիկ տիկնոջ սիրուց. մեկի տգիտությունն ու պարզասրտությունը ձանձրաց-

նում են նույնպես, ինչպես և մյուսի կոկետությունը։ Եթե կուզեք, դեռ սիրում եմ նրան, շնորհակալ եմ մի քանի բավական քաղցր բոպեների համար, նրա համար կյանքս կը-տամ, բայց ձանձրանում եմ... Հիմար եմ, թե չարագործ, չգիտեմ, բայց ճիշտ է այն, որ ես ևս խղճահարության շատ եմ արժանի, գուցե ավելի, քան նա։ Բարձր հասարակությունը փչացրել է իմ հոգին, երևակայությունս անհանգիստ է, սիրտս՝ անկուշտ. ինձ ինչ էլ որ տան, քիչ է։ Տխրության նույնքան հեշտ եմ վարժվում, որքան և վայելքի, և կյանքս օր-օրի վրա ավելի դատարկ է թվում։ Ինձ մի միջոց է մնում. ճանապարհորդել։ Հենց որ կարելի լինի, կմեկնեմ, միայն թե ո՛չ Եվրոպա, աստվա՜ծ ազատի, կմեկնեմ Ամերիկա, Արաբիա, Ինդկաստան։ Գուցե որևէ տեղ մեռնեմ ճանապարհին։ Համենայն դեպս, համոզված եմ, որ այս վերջին սփոփանքը շուտ չի սպառվի՝ փոթորիկների և վատ ճանապարհների շնորհիվ»։ Այսպես նա երկար խոսեց, և նրա խոսքերը հիշողությանս մեջ դրոշմվեցին, որովհետև առաջին անգամ էի այդպիսի խոսքեր լսում մի 25 տարեկան մարդուց և, աստված վկա, վերջին անգամ... Զարմանալի՜ բան է։ Ասացե՛ք խնդրեմ,— շարունակեց շտաբս-կապիտանը, ինձ դառնալով,— ա՛յ, դուք կարծեմ եղել եք մայրաքաղաքում, այն էլ մոտ ժամանակներս. մի՞թե այնտեղի ամբողջ երիտասարդությունն է այդպես։

Ես պատասխանեցի, որ շատ մարդիկ կան, որոնք նույն այդ բանն են ասում, որ նրանց մեջ երևի կան և այնպիսիները, որոնք ճիշտ են ասում, սակայն հուսահատությունը, ինչպես բոլոր մոդաները, սկսվելով հասարակության բարձր խավերից, իջել է դեպի ցածր խավերը, և սրանք շարունակում են կրել-մաշել այն, և որ այժմ նրանք, ովքեր ամենից շատ և իսկապես ձանձրանում են, ջանում են թաքցնել այդ դժբախտությունը որպես արատ։ Շտաբս-կապիտանը չհասկացավ այս նրբությունները, օրորեց գլուխը և խորամանկորեն ժպտաց.

— Իսկ ձանձրանալու մոդան էլ երևի ֆրանսիացի՞ք են մտցրել։

— Ո՛չ, անգլիացիները։

— Ըհը՛, ա՛յ թե ինչ...— պատասխանեց նա,— չէ՞ որ նրանք միշտ էլ մոլի հարբեցողներ են եղել...

Ես ակամա հիշեցի մի մոսկվացի տիկնոջ, որը պնդում էր, թե Բայրոնը ոչ այլ ոք է, եթե ոչ մի հարբեցող։ Սակայն շտաբս-կապիտանի դիտողությունն ավելի ներելի էր. գինուց հեռու մնալու համար, նա, իհարկե, ճգնում էր հավատացնել իրեն, որ աշխարհի բոլոր դժբախտությունները հարբեցողությունից են առաջ գալիս։

Ապա նա այսպես շարունակեց իր պատմությունը.

— Կազբիչն այլևս չերևաց։ Սակայն չգիտեմ ինչու, ես չէի կարողանում գլխիցս հանել այն միտքը, որ նա իզուր չէր եկել և ինչ-որ վատ մտադրություն ուներ։

Ահա մեկ անգամ Պեչորինն ինձ համոզում է իր հետ վարազի որսի գնալ։ Ես երկար չեմուշում արի. դե՛, վարազն ինձ համար ի՞նչ մի չտեսնված բան էր որ։ Սակայն նա ինձ, այնուամենայնիվ, հետը քարշ տվեց։ Մենք հետներս վերցրինք մի հինգ զինվոր և վաղ առավոտյան ձիեր նստած՝ գնացինք։ Մինչև ժամը տասը թրև եկանք եղեգներում ու անտառում։ Գազան չկար։ «Է՛յ, ետ չդառնա՞նք, հը՛,— ասացի ես,— ինչո՞ւ համառել։ Երևի թե դժբախտ օր է բացվել»։ Սակայն Գրիգորի Ալեքսանդրովիչը, չնայած շոգին ու հոգնածությանը, չէր ուզում առանց որսի ետ դառնալ... Այդ տեսակ մարդ էր. մտքումը ինչ որ դներ, պետք է կատարեր։ Երևի մանկության տարիներին մայրը երես էր տվել... Վերջապես կեսօրին գըտանք անիծյալ վարազին. գը՜մփ, գը՜մփ... Բան դուրս չեկավ. քաշվեց եղեգների մեջ։ Այդքան դժբա՜խտ օր էր... Մի քիչ հանգստանալով, ուղևորվեցինք տուն։

Մենք գնում էինք կողք-կողքի, լուռ, սանձերը բաց թողած և արդեն համարյա բերդի մոտ էինք. միայն թփուտն էր բերդը ծածկում մեզանից։ Հանկարծ լսվեց մի կրակոց... Մենք դիմեցինք... մեզ շանթահարեց միևնույն կասկածը... Գլխապատառ սուրացինք կրակոցի կողմը։ Տեսնենք՝ պարսպաթմբին զինվորներն իրար գլխի են հավաքվել և դաշտի կողմն են ցույց տալիս, իսկ այնտեղ ամբողջ արագությամբ մի ձիավոր է սուրում՝ ինչ-որ սպիտակ բան թամբի վրա։ Գրիգորի Ալեքսանդրովիչը ծղրտաց ուզածդ չեչենից

ոչ պակաս ուժով, հրացանը հանեց ծածկոցի միջից ու սլացավ դեպի այդ ձիավորը, ես՝ նրա ետևից։

Բարեբախտաբար, անհաջող որսի պատճառով, մեր ձիերը շատ չէին չարչարվել. նրանք թռչում էին և յուրաքանչյուր ակնթարթ մենք ավելի ու ավելի էինք մոտենում մեր հետապընդյալին։ Վերջապես ճանաչեցի Կազբիչին, միայն չկարողացա ջոկել, թե նա ինչ ունի իր առջևը՝ թամբի վրա։ Այդ ժամանակ հավասարվեցի Պեչորինին և ասացի. «Այդ Կազբիչն է»... Նա նայեց ինձ, գլխով արեց ու մտրակեց ձին։

Ահա վերջապես մեզ գնդակը հասնելու չափ մի տարածություն է բաժանում նրանից։ Արդյոք Կազբիչի ձին էր շատ հոգնած, թե՞ մերոնցից վատն էր, միայն թե, չնայած Կազբիչի բոլոր ջանքերին, նրա ձին այնքան էլ առաջ չէր գնում։ Ես կարծում եմ, որ այդ րոպեին նա կհիշեր իր Ղարագյոզին...

Մեկ էլ տեսնեմ Պեչորինը ձին քշած տեղը նշան բռնեց... «Մի՛ կրակեք,— բղավում եմ նրան,— խնայեցեք լիցքը. մենք առանց այդ էլ կհասնենք»։ «Ա՜խ, այդ երիտասարդները, միշտ անտեղի են աաքանում... Բայց կրակոցը հնչեց, և գնդակը շարդեց ձիու ետևի ոտքը. ձին գրգռված ևս մի տասը ոստյուն գործեց, սայթաքեց ու շոքեց։ Կազբիչը թամբից դուրս թռավ, և այն ժամանակ մենք տեսանք, որ նա իր ձեռքերի վրա բռնած ուներ շադրայի մեջ փաթաթված մի կին... Այդ Բելան էր... խե՜ղճ Բելա։ Կազբիչն ինչ-որ բղավեց մեզ իրենց լեզվով և դաշույնը բարձրացրեց Բելայի վրա... Հապաղումն անտեղի էր. ես, իմ հերթին, կրակեցի՝ հույս հաջողության վրա դնելով։ Գնդակը հավանորեն Կազբիչի ուսին դիպավ, որովհետև նա հանկարծ իջեցրեց ձեռքը... Երբ ծուխը ցրվեց, գետնին ընկած էր վիրավոր ձին և նրա մոտ Բելան, իսկ Կազբիչը, հրացանը դեն գցելով, թփուտներով կատվի պես մագլցում էր ժայռն ի վեր։ Ես ուզում էի նրան ցած բերել այնտեղից, սակայն պատրաստի լիցք չկա՜ր։ Մենք ցած թռանք ձիերից և նետվեցինք դեպի Բելան։ Խե՜ղճ կին. նա պառկած էր անշարժ, և արյունը վերքից հոսում էր գետի պես... Ինչպիսի՜ շարագործ, գոնե սրտին խփեր։ Դե, եթե այդպես էր անելու, գոնե միանգամից հաշիվը փակեր, թե չէ թիկունքին խփել... ամենաավազակայի՜ն հարվածն է։ Բելան ուշագնաց էր։ Մենք պատռեցինք շադրան և վերքը որքան

կարելի է պինդ կապեցինք։ Պեչորինն իզուր էր համբուրում նրա պաղ շրթունքները. ոչինչ չէր կարող Բելային ուշքի բերել։

Պեչորինը ձի նստեց։ Ես Բելային գետնից բարձրացրի և մի կերպ Պեչորինի ձիու թամբին նստեցրի։ Պեչորինը մի ձեռքով գրկեց նրան, և մենք ետ դարձանք։ Մի քանի րոպեի լռությունից հետո Գրիգորի Ալեքսանդրովիչն ինձ ասաց. «Լսեցի՛ք, Մաքսիմ Մաքսիմիչ, մենք սրան այս ընթացքով ոչ-առողջ տեղ չենք հասցնի»։ «Ճի՛շտ է»,— ասացի ես, և մենք ձիերի գլուխը բաց թողինք։ Բերդի դռների մոտ մեզ մարդկանց բազմություն էր սպասում։ Վիրավորին զգուշությամբ տարանք Պեչորինի բնակարանը և մարդ ուղարկեցինք բժիշկ կանչելու։ Բժիշկը թեպետև հարբած էր, բայց եկավ, զննեց վերքը և հայտարարեց, որ Բելան մի օրից ավելի չի կարող ապրել։ Սակայն նա սխալվեց...

— Առողջացա՞վ,— հարցրի ես շտաբս-կապիտանին, նրա ձեռքը բռնելով և ակամա ուրախանալով։

— Ո՜չ,— պատասխանեց նա,— սակայն բժիշկը նրանով սխալվեց, որ Բելան երկու օր էլ ապրեց։

— Դե, շուտ բացատրեցեք ինձ, Կազբիչն ինչպե՞ս էր առանձնել նրան։

— Ահա թե ինչպես։ Չնայած Պեչորինի արգելելուն, Բելան բերդից գետակի ափ է դուրս գալիս։ Շատ շոգ էր, գիտեք։ Բելան նստում է քարին և ոտքերը ջուրը կախում։ Ու Կազբիչը գողեգող մոտենում. է, հա՛փ-թա՜փ՝ բռնում է նրան, փակում բերանը ու քարշ տալիս թփուտը, ապա այնտեղ հեծնում է իր ձին ու հայդա՜։ Մինչ այդ, Բելան կարողանում է ճչալ։ Պահակներն իրար են անցնում, կրակում են, բայց վրիպում են։ Այստեղ մենք վրա ենք համնում։

— Բայց Կազբիչն ինչո՞ւ էր ուզում Բելային փախցնել։

— Ի՜նչ եք ասում։ Այդ չերքեզները հայտնի գողեր են. ինչ լավ չի պահված, չեն կարող չթռցնել։ Շատ բան իսկի պետքներն էլ չի, բայց էլի գողանում են... Այդ արդեն նրանց բնավորության գիծն է։ Բացի դրանից, Բելան նրան վաղուց էր դուր գալիս։

— Եվ Բելան մեռա՞վ։

— Մեռավ, միայն թե երկար տանջվեց, ու մենք էլ, նրան խնամելով, բավական տառապեցինք։ Երեկոյան ժամը մոտ տասին ուշքի եկավ։ Մենք նրա անկողնու մոտ նստած էինք։ Հենց որ աչքերը բացեց, սկսեց Պեչորինին կանչել։ «Ես այստեղ եմ, քեզ մոտ, ջանիկս» (այսինքն, մեր լեզվով ասած, հոգյակս),— պատասխանեց Պեչորինը, նրա ձեռքն իր ձեռքերի մեջ առնելով։ «Ես կմեռնեմ»,— ասաց Բելան։ Մենք սկսեցինք սիրտ տալ նրան, ասացինք, որ բժիշկը խոստացել է անպայման բուժել։ Նա գլուխն օրորեց և դեպի պատը շուռ եկավ. նա մեռնել չէ՞ր ուզում...

Գիշերը Բելան սկսեց զառանցել։ Նրա գլուխն այրվում էր, ամբողջ մարմնով երբեմն տենդի դող էր անցնում, անկապ բաներ էր ասում հոր, եղբոր մասին։ Նրա սիրտն ուզում էր իրենց սարերը, տունը... Հետո խոսեց նաև Պեչորինի մասին. զանազան քնքուշ անուններ էր տալիս կամ կշտամբում, որ սառել է դեպի իր ջանիկը...

Պեչորինը լուռ լսում էր՝ գլուխը ձեռքերին խոնարհած, բայց ես ամբողջ ժամանակ ոչ մի կաթիլ արցունք չնկատեցի նրա արտահայտությունների վրա։ Արդյոք նա իսկապե՞ս չէր կարողանում լաց լինել, թե՞ իրեն զսպում էր, չգիտեմ։ Գալով ինձ, պիտի ասեմ, որ ես դրանից ավելի սրտաշարժ բան չեմ տեսել։

Լուսադեմին զառանցանքն անցավ։ Մոտ մի ժամ Բելան պառկած էր՝ անշարժ, գունատ և այնքան ուժասպառ, որ հազիվ կարելի էր նկատել, թե շնչում է։ Հետո իրեն լավ զգաց և սկսեց խոսել, բայց, ի՞նչ-ինչ կարծում, ինչի՞ց... Այդ տեսակ տարօրինակ միտք կգա լոկ մահացողի գլուխը... Նա ցավում էր, որ ինքը քրիստոնյա չէ և որ այն աշխարհում իր հոգին երբեք չի հանդիպի Գրիգորի Ալեքսանդրովիչի հոգուն, որ դրախտում ուրիշ կին կլինի Պեչորինի ընկերուհին։ Իմ գլուխը մի միտք եկավ՝ մահվանից առաջ մկրտել Բելային։ Ես այդ առաջարկեցի հիվանդին. նա անվճռական ինձ նայեց և երկար ժամանակ չէր կարողանում ոչ մի խոսք ասել։ Վերջապես պատասխանեց, որ կմեռնի այն հավատքով, ինչ հավատքով ծնվել է։ Այսպես անցավ մի ամբողջ օր։ Ինչպե՞ս փոխվեց այդ օրվա ընթացքում։ Գունատ այտերը ներս էին ընկել, աչքերը խիստ մեծացել էին, շրթունքներն այրվում էին։ Նա

ներքին ջերմ էր զգում, կարծես կրծքում շիկացած երկաթ կար։

Եկավ մյուս գիշերը։ Մենք աչք չփակեցինք, չհեռացանք անկողնուց։ Նա սարսափելի տանջվում, տնքում էր, և հենց որ ցավն սկսում էր մեղմանալ, ջանում էր հավատացնել Գրիգորի Ալեքսանդրովիչին, թե ինքն իրեն լավ է զգում, համոզում էր, որ գնա քնի, նրա ձեռքն էր համբուրում, իր ձեռքերից բաց չէր թողնում այն։ Առավոտվա դեմ սկսեց մահվան տագնապ զգալ, դեսուդեն նետվել, քանդեց վերքի կապը, և արյունը նորից հոսեց։ Երբ վերքը կապեցինք, նա մի բոպե հանգստացավ և սկսեց խնդրել Պեչորինին, որ իրեն համբուրի։ Պեչորինը չոքեց նրա մահճակալի առաջ, Բելայի գլուխը բարձրացրեց բարձից և իր շրթունքները հպեց նրա սառչող շրթունքներին։ Բելան դողացող ձեռքերով ամուր գրկեց նրա պարանոցը, կարծես այդ համբույրով ցանկանում էր իր հոգին նրան տալ... Չէ՛, նա լավ արեց, որ մեռավ։ Դե, ի՞նչ կլիներ նրա դրությունը, եթե Գրիգորի Ալեքսանդրովիչը նրան լքեր։ Իսկ դա, վաղ թե ուշ, պիտի պատահեր...

Հետևյալ օրվա կեսը նա խաղաղ էր, լռակյաց և հնազանդ՝ որքան էլ մեր բժիշկը նրան շատ էր տանջում խաշիլներով ու հեզուկ դեղով։ «Ներողություն,— ասում էի ես բժշկին,— չէ՞ որ դուք ինքներդ ասացիք, որ նա անպայման կմեռնի, էլ ինչի՞ են պետք ձեր բոլոր դեղամիջոցները»։ «Այնուամենայնիվ, ավելի լավ է, Մաքսիմ Մաքսիմիչ,— պատասխանեց նա,— տալիս եմ, որ խիղճս հանգիստ լինի»։ «Լա՜վ խիղճ է»։ Կեսօրից հետո Բելան սկսեց ծարավից՝ տառապել։ Մենք բաց արինք պատուհանները, բայց դուրսն ավելի շոգ էր, քան սենյակում։ Մահճակալի մոտ սառույց դրինք։ Ոչինչ չէր օգնում։ Ես գիտեի, որ այդ անտանելի ծարավը մոտեցող վախճանի նշան է և այդ ասացի Պեչորինին։ «Ջո՜ւր, ջո՜ւր»...— ասում էր Բելան խռոտած ձայնով, անկողնուց կիսով չափ բարձրանալով։

Պեչորինը գունատվեց, դարձավ քաթանի գույնի, վերցրեց բաժակը, ջուր լցրեց և տվեց։ Ես աչքերս փակեցի և սկսեցի աղոթք անել (չեմ հիշում ինչ աղոթք)... Այո՛, հարգելիս, ես շատ եմ տեսել, թե մարդիկ ինչպես են մեռնում հիվանդանոցներում և կռվի դաշտում, միայն թե այդ բոլորն այն չէ, բոլորովի՛ն այն չէ... Մեկ էլ, խոստովանանք լինի, թե ահա

ինձ ինչն է վշտացնում. մահվանից առաջ նա ոչ մի անգամ ինձ չհիշեց։ Այնինչ, կարծեմ ես նրան հոր պես էի սիրում... է՜, աստված Նրան թող ների... Եվ ճիշտը որ ասենք՝ ես ի՞նչ եմ, որ մահվանից առաջ ինձ հիշեն...

Հենց որ Բելան շուրջ խմեց, իրեն լավ զգաց, իսկ մի երեք րոպե անց՝ վախճանվեց։ Հայելին մոտեցրինք շրթունքներին. վրան ո՞չ մի հետք... Ես սենյակից դուրս տարա Պեչորինին, և մենք գնացինք պարապաթումբը։ Կողք-կողքի երկար ետ ու առաջ քայլեցինք՝ ոչ մի խոսք չասելով, ձեռքներս եռևներս դրած։ Պեչորինի դեմքն առանձին ոչինչ չէր արտահայտում, և ես սրտնեղեցի. որ նրա տեղը լինեի, վշտից կմեռնեի։ Վերջապես նա նստեց գետնին, ստվերում, և սկսեց ավազի վրա ինչ-որ բան գծագրել փայտիկով։ Ես, գիտե՞ք, ավելի շուտ քաղաքավարությունից դրդված, ցանկանում էի մխիթարել։ Սկսեցի խոսել։ Նա գլուխը բարձրացրեց և ծիծաղեց... Փշաքաղվեցի այդ ծիծաղից... Գնացի դադար պատվիրելու։

Խոստովանանք լինի, ես մասամբ մաքերս ցրելու համար դրանով զբաղվեցի։ Մի կտոր տերմալամա ունեի, դրանով պատեցի գագաթը և զարդարեցի չերքեզական արծաթե տրեզներով, որ Գրիգորի Ալեքսանդրովիչն էր գնած եղել Բելայի համար։

Մյուս օրը վաղ առավոտյան մենք Բելային թաղեցինք բերդից դուրս, գետակի մոտ, հենց այն կամրջի մոտ, որտեղ նա վերջին անգամ նստած էր եղել։ Նրա շիրմի շուրջը հիմա աճել են սպիտակ ակացիայի և թանթրվենու թփեր։ Ես ուզում էի խաչ դնել, բայց, գիտեք, անհարմար էր. չէ՞ որ նա քրիստոնյա չէր...

— Իսկ Պեչորինն ի՞նչ եղավ,— հարցրի ես։

— Պեչորինը երկար ժամանակ տկար էր, նիհարել էր խեղճը։ Միայն թե դրանից հետո մենք էլ երբեք չխոսեցինք Բելայի մասին... Տեսնում էի, որ այդ նրան հաճելի չէր լինի. էլ ինչո՞ւ խոսեի։ Մի երեք ամիս անց նրան նշանակեցին Ե... գունդը, և նա Վրաստան մեկնեց։ Այդ ժամանակից ի վեր չենք հանդիպել իրար... Հա՜, հիշում եմ, մոտ ժամանակներս մեկն ինձ ասաց, որ նա Ռուսաստան է վերադարձել, սակայն կորպուսի վերաբերյալ հրամաններում այդ չի եղել։ Առենք, լուրերը մեզպեսներին ուշ են հասնում։

Այստեղ նա երկար դիսերտացիա սկսեց այն մասին, թե որքան տհաճ բան է նորությունները մի տարով ուշ իմանալը, հավանաբար նրա համար, որպեսզի խեղդի տխուր հիշողությունները։

Ես նրան չէի ընդհատում, ոչ էլ լսում էի։

Մեկ ժամից մեկնելը հնարավոր եղավ. փոթորիկը հանդարտվեց, երկինքը պարզեց, և մենք ճանապարհ ընկանք։ Ճանապարհին ակամա նորից խոսակցություն բաց արի Բելայի ու Պեչորինի մասին։

— Իսկ դուք չե՞ք լսել, թե Կազբիչն ի՞նչ եղավ,— հարցրի ես։

— Կազբի՞չը։ Ճիշտն ասած՝ չգիտեմ... Լսել եմ, որ մեր դասավորության աջ թևի կողմերում շապսուգների մեջ ինչ-որ Կազբիչ կա՝ կտրիճի մեկը, որը կարմիր բեշմետը հագին, ձին հեծած՝ շրջում է մեր կրակոցների տակ և ամենաքաջաքավարի ձևով գլուխ տալիս, երբ գնդակն իր մոտով է անցնում բզզալով։ Բայց հազիվ թե դա այն Կազբիչը լինի։

Քոբիում բաժանվեցի Մաքսիմ Մաքսիմիչից. ես փոստային կառքով գնացի, իսկ նա, ծանր բեռ ունենալու պատճառով, չէր կարող ինձ հետևել։ Մենք հույս չունեինք այլևս երբևէ իրար հանդիպելու, սակայն հանդիպեցինք, և, եթե կցանկանաք, կպատմեմ ձեզ. դա մի ամբողջ պատմություն է... Խոստովանեցե՛ք, սակայն, որ Մաքսիմ Մաքսիմիչը հարգանքի արժանի մարդ է... Եթե այդ խոստովանեք, ես լիովին վարձատրված կլինեմ իմ, գուցե խիստ երկար, պատմության համար։

II

ՄԱՔՍԻՄ ՄԱՔՍԻՄԻՉ

Մաքսիմ Մաքսիմիչից բաժանվելով, ես արագ սլացա Թերեքի և Դարյալի կիրճերով, նախաճաշս արեցի Կազբեկում, թեյը խմեցի Լարսում, իսկ ընթրիքին հասա Վլադիկավկազ։ Ձեզ ազատում եմ լեռների նկարագրությունից, բացականչություններից, որոնք ոչինչ չեն արտահայտում, պատկեր-

ներից, որոնք ոչինչ չեն պատկերում, մանավանդ այն մարդկանց համար, ովքեր այդտեղ չեն եղել, և վիճակագրական դիտողություններից, որոնք բացարձակապես ոչ ոք չի կարդա։

Ես իշևանեցի հյուրանոցում, որտեղ իշևանում են բոլոր ճամփորդները, և որտեղ, չնայած դրան, չկա մեկը, որին կարգադրես փասիան տապակել կամ շշի եփել, որովհետև երեք հաշմանդամները, որոնց խնամքին հյուրանոցը հանձնված է, այնքան հիմար են կամ այնքան հարբած, որ նրանցից բան դուրս չի գա։

Ինձ հայտնեցին, որ ես այստեղ պետք է ապրեմ էլի երեք օր, որովհետև «օկազիան»* Եկատերինոդրադից դեռ չէր եկել, ուստի և ետ դառնալ չէր կարող։ Ա՜յ քեզ օկազիա*... Բայց վատ կալամբուրը սփոփանք չէ ռուս մարդու համար, և ես, ժամանակը զուր անցկացրած չլինելու համար, մտածեցի գրի առնել Մաքսիմ Մաքսիմիչի պատմածը Բելայի մասին, չենթադրելով, թե դա վիպակների երկար շղթայի առաջին օղակն է լինելու։ Տեսնո՞ւմ եք, քիչ կարևոր դեպքը երբեմն ինչպիսի՜ դաժան հետևանքներ է ունենում... Իսկ դուք գուցե չգիտեք, թե ինչ է... «օկազիան»։ Այդ պաշտպան զորամաս է, որ բաղկացած է հետևակների կես վաշտից և հրանոթից։ Վլադիկավկազից Եկատերինոդրադ գումակները դրանց պաշտպանության տակ են անցնում Կաբարդայով։

Առաջին օրը շատ տաղտկալի անցկացրի. մյուս օրը, վաղ առավոտյան, տխնեմ՝ բակ է մտնում մի սայլակ... Ա՜, Մաքսիմ Մաքսիմիչ... Մենք հանդիպեցինք իբար որպես հին բարեկամներ։ Ես իմ սենյակն առաջարկեցի։ Նա նազ չարեց, մինչև իսկ ձեռքն ուսիս խփեց և ժպտալու նմանությամբ բերանը ծռմռեց։ Այնպիսի՜ տարօրինակն է...

Մաքսիմ Մաքսիմիչը խորապես գիտակ էր խոհարարական արվեստում. նա զարմանալի լավ տապակեց փասիանը, հաջող կերպով վրան վարունգի աղաջուր լցրեց, և ես պետք է խոստովանեմ, որ առանց նրա ստիպված պետք է լինեի ցամաք կերակրով սնվել։ Կախեթի գինու մի շիշն օգնեց մեզ մոռանալու ճաշատեսակների համեստ քանակը, որ ընդամենը

*Այստեղ բառախաղ է. «օկազիա»—պատահաբար գնացող փոստակառք, և օկազիա—օյին, կատակ։

մեկն էր, և ծխամորճներս կպցնելով, նստեցինք — ես՝ պատուհանի, նա՝ վառած վառարանի մոտ, որովհետև օրը խոնավ էր ու ցուրտ։ Մենք լուռ էինք։ Ինչի՞ մասին պիտի խոսեինք... Նա ինձ իր մասին արդեն պատմել էր այն ամենը, ինչ հետաքրքրական էր, իսկ ես պատմելու բան չունեի։ Պատուհանից դուրս էի նայում։ Հետզհետե ավելի ու ավելի լայն փռվող Թերեքի ափին ցրված բազմաթիվ ցածր տնակները երևում էին ծառերի արանքից, իսկ ավելի հեռվում ժանիքավոր պարսպի պես կապտին էին տալիս լեռները, և նրանց ետևից նայում էր Կազբեկը իր կարդինալական սպիտակ գլուխը։ Ես մտքումս հրաժեշտ էի տալիս նրանց. ափսոսո՜ւմ էի...

Այսպես մենք երկար նստեցինք։ Արևը անցնում էր պաղ գագաթների ետևը, և սպիտակավուն մշուշը սկսում էր տարածվել հովիտներում, երբ փողոցից լսվեց ուղևորի կառքի զանգակի զնգոց և կառապանների կանչ։ Հյուրանոցի բակը մտան կեղտոտ հայերով լի մի քանի սայլակներ և նրանց ետևից՝ դատարկ ճամփորդական կալյասկա։ Սրա թեթև ընթացքը, հարմար կառուցվածքը և պճնատես արտաքինն ինչոր արտասահմանյան կնիք ունեին։ Ետևից գալիս էր մեծ բեղերով, հագին փենգերկա, լաքեյի համար բավական լավ հագուստով մի մարդ։ Նրա կոչման նկատմամբ չէր կարելի սխալվել, երբ տեսնում էիր լոթու շարժուձևերը, որով նա մոխիրը թափ էր տալիս ծխամորճից և բղավում կառապանի վրա։ Ակներև էր, որ նա ծույլ տիրոջ երես տված ծառա էր, ռուս Ֆիգարոյի պես մի բան։ «Ասա, սիրելիս,— հարցրի նրան պատուհանից,— այդ ի՞նչ է՝ օկա՞զիա է եկել»։ Նա բավական հանդուգն նայեց, ուղղեց իր փողկապը և երեսը շուռ տվեց։ Նրա կողքից քայլող հայը ժպտալով պատասխանեց նրա փոխարեն, որ, իսկապես, օկազիա է եկել և վաղն առավոտյան ետ կգնա։ «Փառք աստծու,— ասաց Մաքսիմ Մաքսիմիչը, որ այդ ժամանակ մոտեցել էր պատուհանին։— Ի՞նչ հրաշալի կալյասկա է,— ավելացրեց նա,— հավանորեն որևէ աստիճանավոր հետաքննության է գնում Թիֆլիս։ Երևի ծանոթ չէ՞ մեր սարերին։ Ո՛չ, սխալվում ես, սիրելիս. այդ մեր ճամփաները չե՞ն, կցնցահարեն թեկուզ անգլիական կալյասկան։ Իսկ դա ո՞վ կարող է լինել. մոտ գնանք, տեսնենք

ով է... Մենք միշանցք դուրս եկանք։ Միշանցքի ծայրին բացված էր կողքի սենյակի դուռը։ Լաքեյն ու կառապանը ճամպրուկներն այնտեղ էին տանում։

— Լսիր, ախպեր,— հարցրեց նրան շտաբս-կապիտանը,— այդ հիանալի կալյասկան ո՞ւմն է... հը՞... Սքանչելի՜ կալյասկա է... Լաքեյը, առանց երեսը մեր կողմը դարձնելու, ինչ-որ բան էր քրթմնջում ինքն իրեն, ճամպրուկի կապերն արձակելով։ Մաքսիմ Մաքսիմիչը բարկացավ. նա ցնցեց այդ անքաղաքավարիի ուսը և ասաց։ «Ես քե՛զ եմ ասում, սիրելի՛ս...»

— Ո՞ւմ կալյասկան է... իմ պարոնինը...

— Իսկ ո՞վ է քո պարոնը։

— Պեչորինը...

— Ի՞նչ ես ասում, ի՞նչ ես ասում։ Պեչո՞րին... Ա՜խ, ասա՛վ՛ծ իմ... արդյոք նա Կովկասում չի՞ ծառայել...— բացականչեց Մաքսիմ Մաքսիմիչը, իմ թևքից քաշելով։ Նրա աչքերում ուրախություն էր փայլում։

— Ծառայել է, կարծեմ, բայց ես նոր եմ նրանց մոտ ծառայության մտել։

— Դե՛, իհարկե՛... իհարկե՛... Գրիգորի Ալեքսանդրովիչ... Այսպես է նրա անունը, չէ՞... Ես և քո բարինը մտերիմ ծանոթներ ենք եղել,— ավելացրեց նա, բարեկամաբար խփելով լաքեյի ուսին այնպես, որ նա երերաց...

— Կացեք, պարոն, դուք ինձ խանգարում եք,— ասաց լաքեյը, դեմքը խոժոռելով։

— Ի՞նչ տեսակն ես, տո՛... Բայց դու գիտե՞ս արդյոք, ես և քո բարինը մտերիմ բարեկամներ ենք եղել, միասին ենք ապրել... Իսկ նա ինքը որտե՞ղ մնաց...

Ծառան հայտնեց, որ Պեչորինը մնացել է ընթրելու և գիշերելու գնդապետ Ն-ի մոտ...

— Իսկ Ներեկոյան այս կողմը չի՞ անցնի,— ասաց Մաքսիմ Մաքսիմիչը,— կամ թե դու, սիրելիս, որևէ բանի չե՞ս գնալու նրա մոտ... Թե գնալու լինես, ասա, որ Մաքսիմ Մաքսիմիչն այստեղ է. այդպես էլ ասա... նա արդեն գիտի... Ես քեզ մի հինգ շահանոց արաղի փող կտամ...

Լաքեյն արհամարհական արտահայտություն տվեց դեմքին այդպիսի համեստ խոստում լսելով, սակայն վստահեցրեց

Մաքսիմ Մաքսիմիչին, որ նրա հանձնարարությունը կկատարի։

— Ախր իսկույն վազելով կգա՞...— հաղթական տեսք ընդունելով՝ ասաց ինձ Մաքսիմ Մաքսիմիչը,— գնամ դարպասից դուրս սպասեմ... է՜խ, ափսո՜ս, որ ես Ն-ի հետ ծանոթ չեմ...

Մաքսիմ Մաքսիմիչը նստեց դարպասից դուրս գտնվող նստարանի վրա, իսկ ես գնացի իմ սենյակը։ Խոստովանում եմ, ես ևս որոշ անհամբերությամբ էի սպասում այդ Պեչորինի հայտնվելուն, թեև շտաբս-կապիտանի պատմածների հիման վրա, շատ էլ նպաստավոր կարծիք չէի կազմել նրա մասին, սակայն նրա բնավորության մի քանի գծերն ինձ խիստ ուշագրավ էին թվում։ Մի ժամից հետո հաշմանդամը բերեց եռացող ինքնաեռն ու թեյամանը։ «Մաքսիմ Մաքսիմիչ, թեյ չե՞ք կամենա»,— կանչեցի պատուհանից։

— Շնորհակալ եմ, ախորժակ չունեմ։

— Է՜յ, խմե՛ք։ Տեսեք, չէ՞ որ արդեն ուշ է, ցուրտ։

— Ոչի՛նչ. շնորհակալ եմ...

— Է՜հ, ինչպես ձեզ հաճելի է։— Ես մենակ սկսեցի թեյ խմել. մի տասը բոպեից հետո ներս է մտնում իմ ծերուկը։

— Ախր դուք իրավացի եք. էլի լավ է թեյը խմել։ Բայց ես դեռ սպասում էի... Նրա ծառայողն արդեն վաղուց է մոտը գնացել, բայց երևի որևէ բան ուշացրեց։

Նա շտապով կուլ տվեց մի դավաթ, երկրորդից հրաժարվեց, ու նորից դարպասից դուրս գնաց՝ ինչ-որ անհանգիստ վիճակում. ակներև էր, որ ծերուկին վշտացնում էր Պեչորինի անուշադիր վերաբերմունքը, մանավանդ որ նա քիչ առաջ ինձ պատմել էր իր և Պեչորինի բարեկամության մասին ու դեռ մի ժամ առաջ հավատացած էր, թե նա, հենց որ իր անունը լսի, վազելով կգա։

Արդեն ուշ էր և մութ, երբ ես նորից բացեցի պատուհանը և սկսեցի կանչել Մաքսիմ Մաքսիմիչին, ասելով, որ քնելու ժամանակ է։ Նա ինչ-որ բան քրթմնջաց ատամների արանքից։ Կրկնեցի հրավերը։ Նա ոչինչ չպատասխանեց։

Շինելի մեջ փաթաթվելով և մոմը թախտի վրա թողնելով, ես պառկեցի բազմոցին, շուտով ննջեցի և հանգիստ կքնեի, եթե արդեն շատ ուշ Մաքսիմ Մաքսիմիչը, սենյակ մտնելով, ինձ չզարթեցներ։ Նա ծխամորճը սեղանին նետեց, սկսեց

քայլել սենյակում, վառարանը խառնել, վերջապես պառկեց, բայց երկար ժամանակ հազում, թքում, շուռումուռ էր գալիս...

— Հո փայտոջիլներ չե՞ն կծում ձեզ,— հարցրի ես։

— Հա՛, փայտոջիլներ...— պատասխանեց նա, ծանր հառաչելով։

Մյուս օրն առավոտյան ես վաղ զարթնեցի, բայց Մաքսիմ Մաքսիմիչը կանխել էր ինձ։ Ես նրան գտա դարպասի մոտ, նստարանին նստած։ «Ես պետք է՛ պարետի մոտ գնամ,— ասաց նա,— խնդրում եմ, եթե Պեչորինը գա, մարդ ուղարկեք իմ ետևից»...

Ես խոստացա։ Նա վազեց. կարծես նրա մարմնի անդամները նորից երիտասարդական ուժ և ճկունություն էին ստացել։

Զով և սքանչելի առավոտ էր։ Ոսկե ամպերը բարդվել էին սարերի վրա, որպես օդեղեն սարերի մի նոր շարք։ Դարպասի առաջ տարածվում էր լայն հրապարակ։ Դրանից դենը՝ շուկայում ամբոխ էր խռնվել, որովհետև կիրակի էր։ Բոբիկ օս տղաները, շալակներին հացամեղրի մախաղներ, իմ շուրջն էին պտտվում։ Ես վռնդեցի նրանց. զբաղվելու գլուխ չունեի։ Բարի շտաբս-կապիտանի անհանգստությունն ինձ էլ էր վարակել։

Դեռ մի տասը րոպե էլ չանցած, հրապարակի ծայրին երևաց նա, ում մենք սպասում էինք։ Նա գնդապետ Ն-ի հետ էր, որը, Պեչորինին հյուրանոց հասցնելով, հրաժեշտ տվեց ու ծռվեց դեպի բերդը։ Ես իսկույն հաշմանդամին ուղարկեցի Մաքսիմ Մաքսիմիչի ետևից։

Պեչորինին ընդառաջ դուրս եկավ լաքեյը և զեկուցեց, որ իսկույն կսկսեն լծել, մի տուփով սիգար մատուցեց ու, մի քանի կարգադրություն ստանալով, գնաց հոգալու։ Նրա պարոնը, սիգարը վառելով, մի երկու անգամ հորանջեց, ու նստեց դարպասի մյուս կողմի նստարանի վրա։ Այժմ ես ձեզ համար պետք է նկարեմ նրա պատկերը։

Նա միջահասակ էր։ Բարեկազմ, բարակ իրանը և լայն թիկունքն ապացուցում էին, որ ունի ամուր կազմվածք, որն ընդունակ է դիմանալու քոչվորական կյանքի բոլոր դժվարություններին և կլիմայական փոփոխություններին, մի կազմվածք, որին չէին հաղթել ո՛չ մայրաքաղաքի ցոփ կյանքը, ո՛չ էլ հոգեկան փոթորիկները։ Փոշոտ թավշե սերթուկը, որի միայն ներքևի երկու կոճակներն էին կոճկված, հնարավորություն էր տալիս դիտելու շլացնելու աստիճան մաքուր սպիտակեղենը, որ դրսևորում է կարգին մարդու սովորությունները։ Տեղ-տեղ կեղտոտված ձեռնոցները թվում էին դիտմամբ իր փոքրիկ արիստոկրատիկ ձեռքի չափսով կարած, և երբ նա մի ձեռնոցը հանեց, ինձ զարմացրեց նրա գունատ մատների վտիտությունը։ Նա ուներ ծույլ և անփույթ քայլվածք, բայց նկատեցի, որ ձեռքերը չէր թափահարում (փոքրինչ ծածկամիտ բնավորության ստույգ նշան)։ Սակայն սրանք իմ սեփական ենթադրություններն են, որոնք հիմնված են իմ իսկ դիտողության վրա, և ես բնավ չեմ ցանկանում հարկադրել ձեզ, որ կուրորեն հավատաք դրանց։ Երբ նա նստարանին նստեց, ուղիղ իրանը կռացավ, ասես ողնաշարը ոչ մի ոսկրիկ չուներ։ Ողջ մարմնի դրությունն արտահայտեց ինչ-որ նյարդային թուլություն։ Նա այնպես էր նստած, ինչպես բալզակյան 30-ամյա կոկետուհին էր նստում իր բմբուլե բազկաթոռին՝ հոգնեցուցիչ պարահանդեսից հետո։ Նրա երեսին առաջին հայացքը գցելով, ես կասեի, որ նրա տարիքը 23-ից ավելին չէ, թեպետ հետո պատրաստ էի նրան 30 տարեկան համարել։ Նրա ժպտի մեջ ինչ-որ մանկական բան կար։ Կաշին ուներ ինչ-որ կանացի քնքշություն։ Ի բնե գանգուր, շեկ մազերն այնպես գեղեցիկ էին բոլորում գունատ, ազնվական ճակատը, որի վրա, միայն երկար տնտղելով, կարելի էր նկատել միմյանց հատող և հավանորեն ցասման կամ անհանգիստ հոգեկան կացության րոպեներին շատ ավելի ցայտուն կերպով ուրվագծվող կնճիռների հետքերը։

Չնայած մազերի բաց գույնին, բեղերն ու հոնքերը սև էին, իսկ դա մարդու ազնվացեղ լինելու նշան է, ինչպես սպիտակ ձիու սև բաշն ու սև ագին։ Դիմանկարը լրացնելու համար ես կասեմ, որ նրա քթի ծայրը մի քիչ վեր էր ցցված, ատամները շլացնելու աստիճան սպիտակ էին և աչքերը շագանակագույն։ Աչքերի մասին ես մի քանի խոսք էլ պետք է ասեմ։

Նախ՝ երբ նա ծիծաղում էր, այդ աչքերը չէին ծիծաղում։ Ձեզ չի՞ պատահել որոշ մարդկանց մեջ այսպիսի տարօրի-

նակություն նկատել... Դա կամ չար բնավորության, կամ մշտական խոր վշտի նշան է։ Կիսով չափ վար թողած թարթիչների տակից դրանք փայլում էին ինչ-որ ֆոսֆորային փայլով, եթե կարելի է այսպես արտահայտվել։ Դա հոգեկան կրակի կամ վառ երևակայության ցոլացում չէր։ Դա մի փայլ էր, որ նման էր ողորկ պողպատի փայլի՝ շլացնող, բայց պաղ։ Նրա հայացքը երկարատև չէր, բայց թափանցող էր և ծանր, անհամեստ հարցի տհաճ տպավորություն էր թողնում և կարող էր հանդուգն թվալ, եթե այնքան անտարբեր-հանգիստ չլիներ։ Այս բոլոր դիտողություններն իմ միտքը եկան գուցե միայն այն պատճառով, որ ես գիտեի նրա կյանքի մի քանի մանրամասնությունները և գուցե ուրիշի վրա նրա տեսքը բոլորովին տարբեր տպավորություն գործեր։ Բայց քանի որ դուք նրա մասին ոչ ոքից չեք լսել, բացի ինձանից, ուստի ակամա պետք է բավականանաք այս պատկերացումով։ Ի վերջո կասեմ, որ նա առհասարակ բավական գեղեցիկ էր և ուներ այն յուրահատուկ դեմքերից մեկը, որոնք առանձնապես դուր են գալիս կանանց։

Ձիերն արդեն լծված էին։ Զանգակը մեկ-մեկ զնգում էր անուրի տակ, և լաքեյն արդեն երկու անգամ մոտեցել էր Պեչորինին՝ զեկուցելու, որ ամեն ինչ պատրաստ է, իսկ Մաքսիմ Մաքսիմիչը դեռ չէր հայտնվում։ Բարեբախտաբար, Պեչորինը Կովկասյան լեռնաշղթայի կապույտ ժանիքներին նայելով՝ մտածմունքի մեջ էր ընկղմվել և կարծես բոլորովին չէր շտապում ճանապարհ ընկնել։ Ես մոտեցա նրան. «Եթե դուք կամենայիք մի փոքր էլ սպասել,— ասացի ես,— ապա ձեր հին մտերիմ ծանոթի հետ տեսնվելու բավականությունը կունենայիք»։

— Ա՜խ, ճի՛շտ որ,— արագ պատասխանեց նա,— ինձ երեկ ասացին, բայց որտե՞ղ է նա։— Ես դարձա դեպի հրապարակը և տեսա Մաքսիմ Մաքսիմիչին, որ վազում էր՝ որքան ուժ ուներ... Մի քանի րոպեից նա արդեն մեզ մոտ էր։ Հազիվ էր կարողանում շնչել։ Քրտինքը հեղեղի պես թափվում էր երեսից։ Սպիտակ մազերի թաց փնջիկները, գդակի տակից դուրս պրծնելով, կպել էին ճակատին։ Մենք դողում էին... Նա ուզում էր Պեչորինի վզովն ընկնել, բայց սա բավական սառը, թեպետև բարեհամբույր ժպիտով, ձեռք մեկնեց նրան։

Շտաբս-կապիտանը մի րոպե քարացավ, բայց հետո ագահաբար բռնեց նրա ձեռքն իր երկու ձեռքերով։ Նա դեռ անկարող էր խոսել։

— Որքա՞ն ուրախ եմ, թանկագին Մաքսիմ Մաքսիմիչ։ է՛, ինչպե՞ս եք,— ասաց Պեչորինը։

— Իսկ... դո՞ւ... իսկ դո՞ւք...— արցունքն աչքերին՝ քրթմնջաց ծերուկը...— քանի՞ տարի է... քանի՞ օրեր... իսկ այդ ո՞վքեր...

— Գնում եմ Պարսկաստան և ավելի հեռու...

— Մի՞թե այս րոպեին... Մի կացե՛ք, թանկագի՛ն... Մի՞թե այս րոպեին պիտի բաժանվենք... Ինչքա՞ն ժամանակ է չենք տեսնվել...

— Իմ գնալու ժամը հասել է, Մաքսիմ Մաքսիմիչ,— եղավ նրա պատասխանը։

— Աստվա՜ծ իմ, աստվա՜ծ իմ, այդ ո՞ւր եք այդպես շտապում... Ես այնքա՜ն բան կուզեի ձեզ ասել... այնքա՜ն բան հարցնել... Հը՛, ո՞նց է, պաշտոնաթո՞ղ եք... ինչպե՞ս... ի՞նչ էիք անում...

— Զանձրանում էի,— պատասխանեց Պեչորինը ժպտալով։

— Իսկ հիշո՞ւմ եք մեր օր-ապրուստը բերդում... Որսի համար հիանա՜լի երկիր է... Չէ՞ որ դուք որսի թունդ սիրահար էիք... իսկ Բելա՞ն...

Պեչորինը հազիվ նկատելի դունատվեց ու շրջեց երեսը...

— Այո՛, հիշում եմ,— ասաց նա, համարյա իսկույն շինծու հորանջելով...

Մաքսիմ Մաքսիմիչն սկսեց խնդրել նրան էլի մի երկու ժամ իր հետ մնալ։ «Մենք հիանալի կճաշենք,— ասում էր նա,— ես երկու փասիան ունեմ, իսկ այստեղի Կախեթի գինին սքանչելի է... հասկանալի է, այն չէ, ինչ Վրաստանում, սակայն լավագույն տեսակի է... Մենք կխոսենք... դուք ինձ կպատմեք Պետերբուրգի ձեր կյանքից... հը՞...»։

— Ճշմարիտն ասած, պատմելու բան չունեմ, թանկագին Մաքսիմ Մաքսիմիչ... Սակայն մնաք բարով, իմ գնալու ժամանակն է... ես շտապում եմ...։ Շնորհակալ եմ, որ չեք մոռացել...— ավելացրեց նա՝ Մաքսիմ Մաքսիմիչի ձեռքը բռնելով։

Ծերուկը հոնքերը կիտեց... Նա տխուր էր և բարկացած, թեպետ ջանում էր թաքցնել այդ։ «Մոռանա՞լ,— մրթմրթաց նա,— ե՞ս որ ոչինչ չեմ մոռացել... է՜հ, աստված ձեզ հետ... Ես այսպես չէի ուզում ձեզ հանդիպել...»։

— Դե բա՛վ է, բա՛վ է,— ասաց Պեչորինը, բարեկամաբար գրկախառնվելով նրա հետ,— մի՞թե ես նույնը չեմ... Ի՞նչ արած... Յուրաքանչյուր մարդ իր ճանապարհն ունի... Կհաջողվի՞ արդյոք նորից հանդիպել իրար, աստված գիտե...— այս ասելիս, նա արդեն նստած էր կալյասկայում, և կառապանն սկսել էր երասանները քաշել։

— Կա՛ց, կա՛ց,— բղավեց հանկարծ Մաքսիմ Մաքսիմիչը, ձեռքը գցելով կալյասկայի դռնակին,— քիչ էր մնացել բոլորովին մոռանայի... Ձեր թղթերն ինձ մոտ են մնացել, Գրիգորի Ալեքսանդրովիչ... Ես հետս ման եմ ածում... կարծում էի՝ ձեզ Վրաստանում կգտնեմ, բայց ահա թե որտեղ աստծո կամեցողությամբ պատահեցինք... Այդ թղթերն ի՞նչ անեմ...

— Ինչ որ կամենաք,— պատասխանեց Պեչորինը։— Մնաք բարով...

— Ուրեմն՝ Պարսկաստան ե՞ք գնում... իսկ ե՞րբ կվերադառնաք...— բղավեց նրա ետևից Մաքսիմ Մաքսիմիչը...

Կալյասկան արդեն հեռու էր, բայց Պեչորինը ձեռքով մի նշան արեց, որ հետևյալ կերպ կարելի է թարգմանել՝ հազի՞վ թե ու կարիք էլ չկա...

Արդեն վաղուց էր, որ չէր լսվում ո՛չ զանգակի ձայնը, ո՛չ էլ անիվների թխկոցը կայծքարե ճանապարհին, իսկ խեղճ ծերուկը դեռ կանգնած էր նույն տեղում՝ խոր մտածմունքի մեջ ընկած։

— Հը՛մ,— վերջապես ասաց նա, ջանալով անտարբեր տեսք ընդունել, թեև դժկամության արցունքը ժամանակ առ ժամանակ փայլում էր նրա արտևանունքների վրա,— իհարկե, մենք մտերիմ ծանոթներ էինք, բայց դե մտերիմ ծանոթն ի՞նչ է ներկա դարում... Ես նրա համար ի՞նչ եմ։ Հարուստ չեմ, բարձրաստիճան մարդ չեմ ու հենց տարիքովս էլ բոլորովին նրա զույգը չեմ... Տեսնո՞ւմ ես, ինչ պճնամոլն է դարձել՝ հենց որ նորից է եղել Պետերբուրգում... Ի՞նչ կալյասկա է... ինչքա՞ն ծանրոց կա վրան... ու լաքեյն էլ այնպե՞ս հպարտն է...— Այս խոսքերն արտասանվեցին հեգնական ժպիտով։—

Ասեք,— շարունակեց նա՝ ինձ դառնալով,— ի՞նչ, սրա մասին ի՞նչ կարծիքի եք... Դե, ի՞նչ սատանա է նրան հիմա Պարսկաստան քշում... Ծիծաղելի՞ է, աստված վկա, ծիծաղելի է... Ասենք ես միշտ գիտեի, որ նա թեթևսոլիկ մարդ է, որ վրա չի կարելի հույս դնել... Բայց, ավնիվ խոսք, ափսո՞ս, որ վատ վախճան է ունենալու... Ասենք, ուրիշ կերպ չի էլ կարող լինել... Ես միշտ ասել եմ, որ հին բարեկամներին մոռանալուց օգուտ չկա...— Այստեղ նա երեսը շրջեց, որպեսզի իր հուզմունքը թաքցնի ու սկսեց երթևեկել բակում, իր սայլակի մոտ, ցույց տալով, իբր թե անիվներն է զննում, այնինչ աչքերը բոպե առ բոպե արցունքով էին լցվում։

— Մաքսի՛մ Մաքսիմիչ,— ասացի՝ ես, նրան մոտենալով,— իսկ այդ ի՞նչ թղթեր է ձեզ թողել Պեչորինը։

— Աստվա՛ծ գիտե. ինչ-որ հիշատակարան...

— Դուք դրանք ի՞նչ եք անելու։

— Ի՞նչ։ Ես կկարգադրեմ գործադրել փամփուշտներ շինելո՛ւ համար։

— Ավելի լավ է՝ ինձ տաք։

Նա զարմանքով նայեց ինձ, ինչ-որ բան մրթմրթաց ատամների արանքով և սկսեց փնտրել ճամպրուկում։ Ահա նա մի տետրակ հանեց և արհամարհանքով գետին նետեց, հետո երկրորդը, երրորդը և տասներորդը նույն բախտն ունեցան։ Նրա դժկամության մեջ ինչ-որ մանկական բան կար, որ ինձ թվում էր ծիծաղելի, և ես խղճում էի նրան...

— Ահա՛, այս է բոլորը,— ասաց նա։— Շնորհավորո՞ւմ եմ ձեր գյուտը...

— Եվ ես կարող եմ սրանց հետ վարվել իմ ուզածի պե՞ս։

— Թեկուզ լրագրերում տպեցեք։ Իմ ի՞նչ գործն է... Ի՞նչ է, ես մի՞թե նրա բարեկամն եմ կամ ազգականը... Ճիշտ է, մենք երկար ժամանակ մի ծածկի տակ ենք ապրել... Բայց ես քի՞չ մարդու հետ եմ ապրել։

Ես շտապ վերցրի թղթերը և շուտով ետ դարձա, վախենալով, որ շտաբս-կապիտանը կզղջա։ Շուտով եկան մեզ հայտնելու, որ մի ժամից օկազիան կշարժվի։ Ես կարգադրեցի իմ կառքը լծել։ Շտաբս-կապիտանը սենյակ մտավ այն ժամանակ, երբ ես արդեն գդակս էի ծածկում։ Նա, թվում էր, չէր պատրաստվում մեկնելու. ինչ-որ առհարկի, սառը տեսք ուներ։

— Իսկ դո՞ւք, Մաքսի՛մ Մաքսիմիչ, մի՞թե չեք մեկնում։

— Ո՛չ։

— Այդ ինչո՞ւ։

— Ախր դեռ պարետին չեմ տեսել, այնինչ պետք է մի քանի պետական իրեր հանձնեմ...

— Բայց չէ՞ որ դուք եղաք նրա մոտ։

— Եղա, իհարկե,— ասաց նա, կմկմալով...— բայց նա տանը չէր... իսկ ես չսպասեցի։

Ես նրան հասկացա. խեղճ ծերուկը, թերևս առաջին անգամ իր կյանքում, թողել էր ծառայության գործերը սեփական կարիքների պատճառով, գրագրության լեզվով ասած, և ինչպե՞ս վարձատրվեց դրա համար։

— Շա՜տ ափսոս,— ասացի ես,— շա՜տ ափսոս, Մաքսի՛մ Մաքսիմիչ, որ մենք ժամանակից առաջ ստիպված ենք բաժանվել իրարից։

— Մենք, անկիրթ ծերուկներս, ինչպե՞ս կարող ենք ձեր ետևից հասնել... Դուք բարձր հասարակության պատկանող հպարտ երիտասարդներ եք։ Քանի դեռ շերքեզների գնդակների տակ ենք, դուք էլի ոչինչ... իսկ երբ հետո հանդիպենք, կամաչեք նույնիսկ ձեռք մեկնել մեզպեսներին։

— Ես այդպիսի կշտամբանքների արժանի չեմ, Մաքսի՛մ Մաքսիմիչ։

— Ես, գիտե՞ք, հենց այնպես, խոսք-օրինակ եմ ասում, սակայն ձեզ ցանկանում եմ ամեն երջանկություն և ուրախ ճամփորդություն։

Մենք բավական շոր հրաժեշտ տվինք իրար։ Բարի Մաքսիմ Մաքսիմիչը դարձել էր համառ, քրթմնջացող շտաբսկապիտան։ Եվ ինչո՞ւ։ Որովհետև Պեչորինը՝ ցրվածությունից, թե այլ պատճառով՝ ձեռք մեկնեց նրան այն ժամանակ, երբ նա ցանկանում էր Պեչորինի վզովն ընկնել։ Տխուր բան է, երբ տեսնում ես, որ երիտասարդը կորցնում է իր լավագույն հույսերն ու անուրջները, երբ նրա աչքերի առջևից հետ են քաշում վարդագույն ֆլյորը*, որի միջով էր նա նայում մարդկային գործերին ու զգացմունքներին, թեև հույս կա, որ նա

* Բարակ, թափանցիկ գործվածք։ Փոխաբերական իմաստով՝ խորհրդավորության քող։

հին մոլորությունները կփոխարինի նորերով, որոնք պակաս անցողիկ չեն, բայց դրա փոխարեն պակաս քաղցր էլ չեն... Բայց դրանք ինչո՞վ փոխարինես Մաքսիմ Մաքսիմիչի տարիքում։ Ակամա սիրտդ կչորանա, ու հոգիդ կփակվի...

Ես մենակ ճանապարհվեցի...

ՊԵՉՈՐԻՆԻ ՕՐԱԳԻՐԸ

ԱՌԱՋԱԲԱՆ

Նորերս ես իմացա, որ Պարսկաստանից վերադառնալով, Պեչորինը մեռնում է։ Այդ լուրն ինձ շատ ուրախացրեց, դա ինձ իրավունք է տալիս տպագրելու այս նոթերը, և ես առիթից օգտվեցի իմ անունը դնելու ուրիշի գրվածքի ճակատին։ Տա՜ ասուված, որ ընթերցողները չպատժեն ինձ այսպիսի անմեղ կեղծարարության համար։

Այժմ ես պետք է փոքր-ինչ բացատրեմ այն պատճառները, որոնք ինձ դրդեցին հասարակությանը հանձնել սրտի գաղտնիքները մի մարդու, որին երբեք չեմ ճանաչել։ Ուրիշ բան է, եթե գեթ նրա բարեկամը լինեի. ճշմարիտ բարեկամի նենգ անհամեստությունը հասկանալի է յուրաքանչյուրին։ Բայց ես իմ կյանքում միայն մեկ անգամ եմ նրան տեսել մեծ ճանապարհի վրա, հետևաբար նրա նկատմամբ չեմ կարող տածել այն անբացատրելի ատելությունը, որ բարեկամության դիմակի տակ ծածկվելով, միայն սպասում է սիրելի առարկայի մահվանը կամ դժբախտությանը, որպեսզի հանդիմանությունների, խորհուրդների, ծաղրի և արգահատանքի զգացմունքի տարափ տեղա նրա գլխին։

Վերընթեռնելով այս նոթերը, ես համոզվեցի այն մարդու անկեղծությանը, որ այնպես անողոք ի ցույց էր դնում սեփական թուլություններն ու արատները։ Մարդկային հոգու, թեկուզև ամենամանր հոգու, պատմությունը հազիվ թե ավելի հետաքրքրական և ավելի օգտակար չէ, քան ամբողջ մի ժողովրդի պատմությունը, մանավանդ եթե դա հետևանք է իր իսկ նկատմամբ հասուն ուղեղի կատարած գիտողությունների, և երբ այն գրված չէ կարեկցություն կամ զարմանք ա-

ռաջացնելու սնափառ ցանկությամբ։ Ռուսաստանի «Խոստովանությունն» ունի արդեն այն թերությունը, որ նա այն կարդացել էր իր բարեկամներին։

Այսպես, ուրեմն, միայն օգուտ բերելու ցանկությունն է ինձ դրդել տպագրելու պատահմամբ իմ ձեռքն ընկած այս օրագրի հատվածները։ Թեպետ ես փոփոխել եմ բոլոր հատուկ անունները, բայց այն մարդիկ, ում մասին նրա մեջ խոսվում է, երևի կճանաչեն իրենց և, գուցե, կգտնեն արդարացումն այն արարքների, որոնց մեջ մինչև այժմ մեղադրում էին մի մարդու, որ այսուհետև ընդհանուր ոչինչ չունի այս աշխարհի հետ։ Մենք համարյա միշտ ներում ենք այն, ինչ հասկանում ենք։

Ես այս գրքում զետեղել եմ միայն այն, ինչ վերաբերում է Պեչորինի Կովկասում եղած ժամանակին։ Իմ ձեռքին մնացել է ևս մի հաստ տետրակ, որտեղ նա իր ողջ կյանքն է պատմում։ Մի օր էլ այդ տետրակը կներկայանա հասարակության դատաստանին։ Բայց առայժմ ես չեմ համարձակվում ինձ վրա վերցնել այդ պատասխանատվությունը բազմաթիվ կարևոր պատճառներով։

Գուցե ընթերցողներից ոմանք կցանկանան իմանալ իմ կարծիքը Պեչորինի բնավորության մասին։ Իմ պատասխանը այս գրքի վերնագիրն է։ «Բայց այդ չար հեգնանք է»,— կասեն նրանք։

— Չգիտեմ։

I

ԹԱՄԱՆ

Թամանը Ռուսաստանի բոլոր ծովամերձ քաղաքներից ամենավատն է։ Ես այնտեղ քիչ էր մնացել քաղցից մեռնեի և, կարծես այդ բավական չէր, ինձ ուզում էին դեռ ջրահեղձ էլ անել։ Ես այնտեղ հասա փոստակառքով, ուշ գիշերին։ Կառապանը ձիերի հոգնած եռյակը կանգնեցրեց քաղաքի մուտքի առաջ գտնվող միակ շարաշեն տան դարպասի մոտ։ Ժամապահը, որ մի սևծովյան կազակ էր, զանգակի զնգզնգոց

լսելով, քնաթաթախ բղավեց վայրենի ձայնով։ «Ո՞վ է գալիս»։ Դուրս եկան ուրյադնիկն ու տասնապետը։ Նրանց բացատրեցի, որ սպա եմ, գործող զորաբաժին եմ գնում պաշտոնական գործով և սկսեցի պետական բնակարան պահանջել։ Տասնապետն սկսեց մեզ կառքով ման ածել քաղաքում։ Որ խրճիթին մոտենում էինք, զբաղված էր։ Ցուրտ էր, ես երեք գիշեր չէի քնել, տանջվել էի, ու սկսեցի բարկանալ։ «Ինձ որևէ տեղ տար, ավազա՛կ, թեկուզ սատանայի մոտ, բայց որևէ տեղ»,— բղավեցի ես։ «Մի օթախ էլ կա,— պատասխանեց տասնապետը, ծոծրակը քորելով,— միայն թե ձերդ ազնվությանը դուր չի գա, հալալ տեղ չի»։ Վերջին բառի ճշգրիտ իմաստը չհասկանալով, ես նրան հրամայեցի առաջ գնալ, և կեղտոտ նրբանցքներով երկար թափառելուց հետո (նրբանցքներ, որտեղ երկու կողմերում ես տեսնում էի միմիայն խարխուլ ցանկապատեր) մենք կառքով հասանք հենց ծովի ափին գտնվող մի փոքրիկ խրճիթի։

Լիալուսինն իր լույսը գցել էր իմ նոր բնակարանի եղեգնյա տանիքին և սպիտակ պատերին։ Բակում, որ պարսպապատված էր գետաքարից կառուցված պատով, կար կողքի վրա թեքված մի ուրիշ, ավելի խղճուկ խրճիթ, որ առաջինից փոքր էր ու հին։ Ափը գիրթ իջնում էր դեպի ծով, համարյա այդ խրճիթի պատերի մոտ, և ցածում անընդհատ մրմունջով ճողփում էին մուգ-կապույտ ալիքները։ Լուսինը հանդարտ նայում էր անհանգիստ, բայց իրեն հնազանդ տարերքին, և նրա լույսի տակ ես կարողացա նշմարել ափից հեռու գտնվող երկու նավ, որոնց սև կայմերն ու պարանները, ոստայնի նման անշարժ նկարվում էին երկնակամարի գունատ եղրագծի վրա։ «Նավահանգստում նավեր կան,— մտածեցի ես,— վաղը Գելենջիկ կգնամ»։

Ինձ մոտ սպասյակի պաշտոն էր կատարում պաշտպանողական գծի մի կազակ։ Ես նրան հրամայեցի ցած բերել ճամպրուկը և կառապանի հասանելիքը տալ, իսկ ինքս սկսեցի կանչել տանտիրոջը։ Լուռ են։ Բախում եմ։ Լուռ են... Այս ի՞նչ է։ Վերջապես նախասենյակից դուրս սողաց մոտ տասնըչորս տարեկան մի տղա։

«Տանտերն ո՞ւր է»։ «Չկա»։ «Ինչպե՞ս, ամենևի՞ն չկա»։ «Ամենևին»։ «Իսկ տանտիրուհի՞ն»։ «Գնաց սլոբոդկան»։

«Իսկ դուռն ո՞վ կբացի ինձ համար»,— ասացի ես, ոտքով խփելով դռանը։ Դուռն ինքը բացվեց։ Խրճիթից խոնավության հոտ փչեց։ Ես վառեցի ծծմբե լուցկին ու մոտեցրի տղայի քթին։ Լուցկին լուսավորեց երկու սպիտակ աչք։ Նա կույր էր, բոլորովին կույր ի ծնե։ Նա անշարժ կանգնած էր իմ առաջ, և ես սկսեցի դիտել նրա դիմագծերը։

Խոստովանում եմ, ես ուժեղ նախապաշարմունք ունեմ բոլոր կույրերի, միաչքանիների, խուլերի, համրերի, անոռ, անձեռ մարդկանց, սապատավորների և այլոց հանդեպ։ Ես նկատել եմ, որ միշտ ինչ-որ տարօրինակ հարաբերություն կա մարդու արտաքինի և հոգու միջև. կարծես մարմնի որևէ անդամը կորցնելով, հոգին որևէ մի զգացմունք է կորցնում։

Այսպես, ուրեմն, ես սկսեցի դիտել կույրի դեմքը։ Բայց ի՞նչ կհրամայեք կարդալ մի դեմքի վրա, որ աչքեր չունի... Ես երկար նայում էի նրան՝ ակամա խղճալով, երբ հանկարծ հազիվ նկատելի մի ժպիտ ցոլաց նրա նուրբ շրթունքների վրա, և չգիտեմ ինչու, այդ ժպիտն ինձ վրա ամենատհաճ տպավորությունը թողեց։ Իմ գլխում կասկած ծնվեց, որ այդ կույրն այնքան էլ կույր չէ, ինչպես թվում է։ Ես իզուր էի ջանում համոզել ինձ, որ աչքի փառը կեղծել անհնարին է և ի՞նչ նպատակ կարող է ունենալ։ Բայց ի՞նչ արած, ես հաճախ եմ հակված լինում նախապաշարմունքների...

— «Դու տանտիրո՞ջ տղան ես»,— վերջապես հարցրի նրան։ «Չէ»։ «Հապա ո՞վ ես»։ «Որբ եմ, խեղճ»... «Իսկ տանտիրուհին զավակներ ունի՞»։ «Չէ, մի աղջիկ ուներ, էն էլ մի թաթարի հետ ծովի էն կողմը փախավ»։ «Ի՞նչ թաթար»։ «Սատանա՛ն գիտի... ղրիմցի թաթար էր, Կերչ քաղաքից, նավակավար»։

Ես խրճիթ մտա։ Ողջ կահ-կարասիքն էր՝ երկու նստարան, մի սեղան, մեկ էլ մի ահագին սնդուկ վառարանի մոտ։ Պատին ո՛չ մի սրբապատկեր։ Իսկ դա վա՜տ նշան է։ Կոտրած ապակու միջից ներս էր խուժում ծովային քամին։ Ես ճամպրուկից հանեցի մի մոմի մնացորդ, և, վառելով, սկսեցի դասավորել իրերը։ Թուրս ու հրացանս տնկումը դրեցի, ատրճանակներս՝ սեղանին, այծենակաճս փռեցի նստարանին, կաղակն էլ իրենը, մյուսի վրա։ Տասը րոպեից հետո նա

խոմփացրեց, բայց ես չկարողացա քնել. իմ առջև մութի մեջ միշտ պտտվում էր սպիտակ փառը աչքերին տղան։

Այսպես անցավ մոտ մի ժամ։ Լուսնի լույսն ընկել էր պատուհանին, և ցոլքը խաղում էր խղճիթի հողե հատակին։ Հանկարծ հատակը հատող պայծառ շերտի վրա մի ստվեր երևաց ու իսկույն չքացավ։ Ես տեղիցս փոքր-ինչ բարձրացա և պատուհանից դուրս նայեցի։ Ինչ-որ մեկը երկրորդ անգամ վազելով անցավ պատուհանի մոտով ու անհայտացավ, աստված գիտե, թե որտեղ։ Ես չէի կարող ենթադրել, որ այդ էակը վազեց թեք ծովափով։ Սակայն նա ուրիշ ի՞նչ տեղով կարող էր գնալ։ Ես վեր կացա, հագա բեշմեթս, գոտին և դաշույնը վրաս կապեցի ու կամացուկ խրճիթից դուրս եկա։ Իմ դեմ-հանդիման գալիս էր կույր տղան։ Ես թաքնվեցի ցանկապատի մոտ, և նա հաստատուն, բայց զգույշ քայլվածքով անցավ իմ մոտով։ Թևի տակ ինչ-որ կապոց էր տանում և, դեպի նավահանգիստը ծովելով, սկսեց ցած իջնել նեղ ու թեք շավղով։ «Այն օրվ համրերը կաղաղակեն ու կույրերի աչքերը կբացվեն»,— մտածեցի ես՝ նրա ետևից գնալով այնպիսի հեռավորության վրա, ոչ աչքիցս բաց չթողնեմ։

Մինչ այդ, լուսինն սկսեց սև ամպեր հագնել, և ծովի վրա մառախուղ բարձրացավ։ Մառախուղի միջից հազիվ էր առկայծում մոտիկ նավի հետնամասի լապտերը։ Ծովափի մոտ պսպղում էր փրփուրը ողորկաքարերի, որոնք ամեն րոպե սպառնում էին պոկվել ու ջրասույզ անել նավը։ Դժվարությամբ ցած իջնելով, ես առաջ էի գնում թեք արահետով, և ահա տեսնում եմ կույրը կանգ առավ, ապա ներքևում ծովեզեր դեպի աջ։ Նա ջրին այնքան մոտ էր քայլում, որ թվում էր, թե ալիքը հիմա նրան ծով կքաշի։ Բայց երևի դա նրա առաջին զբոսանքը չէր, դատելով այն վստահությունից, որով նա ոտքերը մի քարից մյուսին էր դնում և խուսափում փոսերից։ Վերջապես նա կանգ առավ՝ ասես ինչ-որ բանի ականջ դնելով, նստեց գետնին և իր մոտ դրեց կապոցը։ Ես հետևում էի նրա շարժումներին, թաքնվելով ծովափի դուրս պրծած ժայռի ետևում։ Մի քանի րոպե անց, հակառակ կողմից երևաց մի սպիտակ կերպարանք։ Նա մոտեցավ կույրին և նստեց կողքին։ Քամին ժամանակ առ ժամանակ ականջիս հասցնում էր նրանց խոսակցությունը։

«Հը՛, կու՞յր,— ասաց մի կանացի ձայն,— ուժեղ փոթորիկ է. Յանկոն չի գա»։ «Յանկոն փոթորկից չի վախենում»,— պատասխանեց կույրը։ «Մառախուղը թանձրանում է»,— նորից առարկեց կանացի ձայնը, որի մեջ կար տխրության արտահայտություն։

— Մառախուղում ավելի հեշտ է պահակ կանգնած նավերի մոտով անցնել,— եղավ կույրի պատասխանը։ «Իսկ եթե նա խեղդվի»։ «Է, ի՞նչ կա որ, կիրակի օրը դու եկեղեցի կգնաս առանց նոր ժապավեն կապելու»։

Հետևեց լռություն, սակայն ինձ զարմացրեց մի բան. կույրն ինձ հետ մալոռուսական բարբառով էր խոսում, իսկ այժմ զուտ ռուսերեն էր արտահայտվում։

— Տեսնու՞մ ես, ես իրավացի եմ,— նորից ասաց կույրը, ծափ տալով։ — Յանկոն չի վախենում ո՛չ ծովից, ո՛չ քամիներից, ո՛չ մառախուղից, ո՛չ մերձափնյա պահակներից։ Մի ակա՛նջ դիր. այդ ջուրը չի՞ ճողփում։ Ինձ չես խաբի. այդ նրա երկար թիերն են։

Կինը նստած տեղից ցատկեց և սկսեց անհանգստություն արտահայտող տեսքով հեռուն նայել։

— Դու զառանցում ես, կո՛ւյր,— ասաց նա.— ես ոչի՛նչ չեմ տեսնում։

Խոստովանում եմ, որքան էլ ես աշխատում էի մակույկ հիշեցնող որևէ բան նշմարել հեռվում, ապարդյուն էր անցնում։ Այդպես անցավ մի տասը րոպե, և ահա ալիքների լեռների միջև երևաց մի սև կետ։ Դա մերթ մեծանում էր, մերթ փոքրանում։ Դանդաղ բարձրանալով ալիքների կատարը, արագությամբ ցած իջնելով, ափին էր մոտենում մի մակույկ։ Խիզախ էր այն լողվորը, որ համարձակվել էր այսպիսի մի գիշեր նեղուցով նավել քսան վերստ տարածություն, և կարևոր պետք է լիներ նրան այդ բանին դրդող պատճառը։ Այսպես մտածելով, սրտի ակամա տրոփյունով ես նայում էի խղճուկ մակույկին, բայց սա, իբրև բաղ, ջուրն էր սուզվում, և ապա թևերի պես արագորեն թափահարելով իր թիերը, դուրս էր թռչում անդունդից՝ փրփուրի ցայտերի մեջ կորած։ Ես կարծում էի, թե նա թափ առնելուց կզարկվի ափին ու փշուր-փշուր կլինի։ Բայց նա ճարպկությամբ կողքը դեպի ափ դարձրեց և անվնաս ներս թռավ փոքրիկ ծովածոցը։ Մակույ-

կի միջից դուրս եկավ միջահասակ մի մարդ, որ գլխին ուներ թաթարական մորթե գդակ։ Նա ձեռքով նշան արեց, և երեքով սկսեցին ինչ-որ բան դուրս քաշել մակույկից։ Բեռն այնքան մեծ էր, որ ես մինչև այժմ էլ չեմ հասկանում, թե ինչպես էր, որ մակույկը չրասույզ չեղավ։ Յուրաքանչյուրը մի կապոց ուսելով՝ նրանք շարժվեցին ափի երկայնքով, և ես շուտով նրանց հետքը կորցրեցի։ Պետք էր տուն դառնալ, բայց, խոստովանում են, այդ բոլոր տարօրինակություններն ինձ անհանգստացնում էին, և ես ծանր գիշեր լուսացրի։

Իմ կազակը շատ զարմացավ, երբ արթնանալով՝ ինձ բոլորովին հագնված տեսավ, սակայն ես պատճառը չասացի։ Մի կարճ ժամանակ պատուհանից հիանալով բաց-կապույտ երկնքով, որ ծածկված էր ծվեն-ծվեն եղած ամպերով, հիանալով Ղրիմի հեռավոր ափով, որը ձգվում է, ինչպես մանուշակագույն մի շերտ և վերջավորվում մի ժայռով, որի կատարին սպիտակին է տալիս փարոսի աշտարակը, ես գնացի Ֆանագորիա բերդը, որպեսզի պարետից իմանամ Գելենջիկ մեկնելու ժամը։

Բայց, ավա՜ղ, պարետը վճռական ոչինչ չկարողացավ ասել ինձ։ Նավահանգստում գտնվող նավերը բոլորն էլ կամ պահակություն անող, կամ առևտրական նավեր էին, որ չէին էլ սկսել բեռնավորվել։ «Գուցե մի երեք-չորս օրից փոստատար նավ գա,— ասաց պարետը,— այն ժամանակ տեսնենք»։ Մռայլ ու բարկացած՝ ես տուն դարձա։ Դռան շեմքին ինձ դիմավորեց իմ կազակը՝ վախեցած դեմքով։

— Բանը վատ է, ձերդ աղնվություն,— ասաց նա ինձ։

— Հա՜, ախպեր, աստված գիտե, թե երբ մենք այստեղից կմեկնենք։

Այս բանի վրա նա է՛լ ավելի անհանգստացավ և իմ կողմը խոնարհվելով՝ շշնջյունով ասաց.

— Հալալ տեղ չի՞ սա։ Ես այսօր պատահեցի սևծովյան մի ուրյադնիկի։ Նա իմ ծանոթն է. անցած տարի մեր զորաբաժնում էր։ Հենց որ նրան ասացի, թե որտեղ ենք իջևանել, նա ինձ, թե՝ «Այդտեղը, ախպեր, հալալ տեղ չէ, ու տան տերերը չար մարդիկ են»... Եվ ճիշտ որ, այդ ի՞նչ կույր է... Ամեն տեղ մենակ է գնում-գալիս, թե՛ շուկա՝ հաց գնելու, թե՛ ջուր բերելու... Երևում է, այստեղ արդեն դրան վարժվել են։

— Բայց ի՞նչ, տանտիրուհին գոնե երևա՞ց...

— Այսօր ձեր բացակայության ժամանակ մի պառավ եկավ, հետը՝ իր աղջիկը։

— Ի՞նչ աղջիկ, նա աղջիկ չունի։

— Աստված գիտե, թե ով է նա, եթե պառավի աղջիկը չի. հրեն պառավը հիմա նստած է իր խրճիթում։

Ես մտա խրճիթը։ Վառարանը թեժ վառված էր, և մեջը եփվում էր չքավորի համար բավական ճոխ ճաշ։ Իմ բոլոր հարցերին պառավը պատասխանում էր, որ ինքը խուլ է, չի լսում։ Ի՞նչ անեի դրա հետ։ Ես դարձա դեպի կույրը, որ նստած էր վառարանի առաջ և ցախ էր ավելացնում կրակին։ «Դե՛, կույր դիվուկ,— ասացի ես, նրա ականջից բռնելով,— ասա՛, գիշերը կապոցն առած ո՞ւր էիր քարշ գալիս, հը՞»։ Հանկարծ կույրս լաց եղավ, ճչաց, «ախ» քաշեց. «Ես ո՞ւր եմ գնացել... ո՛չ մի տեղ էլ չեմ գնացել... Կապոցն առա՞ծ... ի՞նչ կապոց»... Պառավն այս անգամ լսեց ու սկսեց մրթմրթալ. «Ինչե՞ր են հնարում, այն էլ այս խեղճ ու կրակի վրա։ Ինչի՞ համար եք նրան նեղացնում. ձեզ ի՞նչ է արել»։ Այդ ինձ ձանձրացրեց, և ես դուրս եկա, հաստատապես որոշելով գտնել այս հանելուկի լուծման բանալին։

Ես փաթաթվեցի այծենակաճի մեջ ու նստեցի ցանկապատի մոտ, քարի վրա՝ հեռուն նայելով։ Իմ առջև փռվել էր գիշերվա փոթորկից ալեկոծված ծովը, և միօրինակ աղմուկը, քուն մտնող քաղաքի մրմունջի պես, ինձ հիշեցրեց անցած տարիները, իմ մտքերը փոխադրեց հյուսիս, մեր ցուրտ մայրաքաղաքը։ Հուշերն ինձ հուզեցին, ես ինքնամոռացության մեջ ընկա... Այսպես անցավ մի ժամի չափ, գուցե և ավելի... Հանկարծ երգ հիշեցնող ինչ-որ բան հասավ իմ լսողությանը։ Ճիշտ որ այդ երգ էր, և կանացի թարմ ձայն, բայց որտեղի՞ց... Ականջ եմ դնում։ Երգը ներդաշնակ է, մեկ ձգվող ու տխուր, մեկ արագ ու աշխույժ։ Նայում եմ շուրջս, ոչ ոք չկա։ Նորից եմ ականջ դնում։ Հնչյուններն ասես երկնքից են ընկնում։ Ես հայացքս վեր բարձրացրի։ Հյուղի կտրին կանգնած էր շերտավոր շորը հագին, հերաբաց մի աղջիկ՝ իսկական հավերժահարս։ Աչքերը ձեռքի ափով արևի ճառագայթներից պաշտպանելով, նա սևեռուն հայացքով նայում էր

հեռուն, մերթ ծիծաղում ու ինքն իրեն խոսում, մերթ նորից էր երգում։

Ես մտքումս պահեցի այդ երգը բառ առ բառ։

Կանաչ, անծայր ջրերում,
Ծովերում ազատ
Անթիվ նավեր են լողում
Ճերմակառագաստ։
Դրանց մեջ է իմ փոքրիկ
Նավակն հասարակ։
Միայն երկու թի ունի,
Ուրիշ ոչ մի սարք։
Երբ ծովն եռա փոթորկից,
Նավերը այդ հին
Կալանան՝ ուժ տված
Իրենց թևերին։
Կխոնարհվեմ ես ծովին,
Կաղաչեմ այսպես.
«Զար ծով, նավակս այսօր
Դու չխորտակես.
Նավակս թանկ ու ընտիր
Բեռ է ափ տանում...
Խենթ նավարարն ահ չունի
Գիշերվա մթնում»*։

Ակամա մտքովս անցավ, որ գիշերը ես նույն այդ ձայնն եմ լսել։ Մի բոպե մտքի մեջ ընկա, և երբ նորից կտրին նայեցի, աղջիկն այլևս այնտեղ չէր։ Հանկարծ նա վազելով անցավ իմ մոտով, ինչ-որ ուրիշ բան երգելով, և, մատները չրթացնելով, ներս վազեց պառավի մոտ, ու այնտեղ նրանց միջև վեճ սկսվեց։ Պառավը բարկանում էր, աղջիկը բարձրաձայն քրքջում։ Եվ ահա տեսնում եմ, դարձյալ թռչկոտելով վազում է իմ ջրահարսը։ Ինձ հավասարվելով, կանգ առավ և սևեռուն հայացքով աչքերիս մեջ նայեց, ասես իմ ներկայությունից զարմացած, հետո անփույթ շուռ եկավ ու կամացուկ գնաց դեպի նավահանգիստը։ Սրանով չվերջացավ։ Ամբողջ օրը նա պտտվում էր իմ բնակարանի մոտերքը։ Երգն ու թռչկոտելը ոչ մի բոպե չէին դադարում։ Տարօրինա՜կ էակ։ Նրա դեմքի վրա չկար խելագարության ոչ մի նշան. ընդհակառակը, նրա աչքերն աշխույժ խորաթափանցությամբ կանգ էին առնում

* Թարգմ. Գ. Միքայելյանի

ինձ վրա, և այդ աչքերը կարծես օժտված էին ինչ-որ մագնիսական ուժով ու ամեն անգամ կարծես հարցի էին սպասում։ Բայց հենց որ ես սկսում էի խոսել, նա, նենգորեն ժպտալով, փախչում էր։

Կտրականապես հայտարարում եմ. Երբեք նման կին չէի տեսել։ Սա հեռու էր գեղեցկուհի լինելուց, բայց ես իմ նախապաշարումներն ունեմ նաև գեղեցկության նկատմամբ։ Նրա մեջ ազնվատոհմության մեծ արտահայտություն կար... Կանանց, ինչպես և ձիերի ցեղականությունը մեծ բան է. այս գյուտը պատկանում է երիտասարդ Ֆրանսիային։ Նա, այսինքն՝ ցեղականությունը և ոչ թե երիտասարդ Ֆրանսիան, մեծ մասամբ երևում է քայլվածքից, ձեռքերից ու ոտքերից։ Մանավանդ քիթը շատ մեծ նշանակություն ունի։ Կանոնավոր քիթը Ռուսաստանում փոքրիկ ոտքից հազվադեպ է պատահում։ Թվում էր, թե իմ երգչուհին տասնութ տարեկանից մեծ չէ։ Նրա իրանի արտասովոր ճկունությունը, առանձնահատուկ, միայն նրան հատուկ գլխի խոնարհումը, երկար շեկ մազերը, նրա պարանոցի ու ուսերի փոքր-ինչ արևառ մորթի ինչ-որ ոսկուն տվող փայլը և, մանավանդ, կանոնավոր քիթը — այս ամենն ինձ համար հմայիչ էր։ Թեպետև նրա շեղ հայացքներում ես ինչ-որ վայրենի և կասկածելի բան էի կարդում, թեպետ նրա ժպտի մեջ կար ինչ-որ անորոշ բան, բայց այդպես է նախապաշարման ո՞ւժը. կանոնավոր քիթն ինձ խելքից հանեց։ Ես երևակայեցի, թե գտել եմ Գյոթեի Մինյոնին, Գյոթեի գերմանական երևակայության այդ տարօրինակ ծնունդը։ Եվ, իրոք, նրանց միջև շատ նմանություն կար. նույն արագ անցումները մեծագույն անհանգստությունից դեպի կատարյալ անշարժությունը, նույն հանելուկային խոսքերը, նույն ցատկոտումները, տարօրինակ երգերը...

Իրիկնադեմին, նրան շեմքի վրա կանգնեցնելով, ես հետևյալ խոսակցությունը բացեցի.

«Ասա խնդրեմ, գեղեցկուհի,— հարցրի ես,— այսօր դու ի՞նչ էիր անում կտրի վրա»։ «Նայում էի, թե քամին ո՞ր կողմից է փչում»։ «Քո խնչի՞ն է պետք»։ «Որ կողմից քամի, այն կողմից էլ երջանկություն»։ «Եվ ի՞նչ, մի՞թե դու երգով երջանկություն էիր կանչում»։ «Որտեղ երգ է ասվում, այնտեղ էլ բախտ է բացվում»։ «Իսկ եթե հակառակի պես երգովդ

դժբախտությո՞ւն բերես գլխիդ»։ «Դե, ի՞նչ արած, որտեղ ավելի լավ չեղավ, այնտեղ ավելի վատ կլինի, իսկ վատից մինչև լավը նորից հեռու չէ»։ «Իսկ այդ երգը քեզ ո՞վ է սովորեցրել»։ «Ոչ ոք չի սովորեցրել։ Խելքիս փչի, կերգեմ. լսողը կլսի, իսկ ով չլսի, նա չի հասկանա»։ «Իսկ անունդ ի՞նչ է, երգչուհիս»։ «Ով մկրտել է, նա գիտե»։ «Իսկ ո՞վ է մկրտել»։ «Ես ի՞նչ իմանամ»։ «Ի՞նչ ծածկամիտն ես։ Քո մասին որոշ բաներ եմ իմացել» (նրա դեմքի արտահայտությունը չփոխվեց, նա շրթունքները չշարժեց, կարծես խոսքն իր մասին չէր)։ «Ես իմացա, որ դու երեկ գիշեր ծովափ ես գնացել»։ Եվ այստեղ ես շատ ծանրակշիռ ձևով պատմեցի նրան այն ամենը, ինչ տեսել էի, ցանկանալով շփոթեցնել նրան։ Բնա՞վ չշփոթվեց։ Նա կոկորդով մեկ քրքջաց։ «Շատ բան եք տեսել, բայց քիչ բան գիտեք, իսկ ինչ էլ գիտեք, կողպեքի տակ պահեք»։ «Իսկ եթե, օրինակ, խելքիս փչի պարետին հայտնել»,— և այստեղ ես դեմքիս տվի շատ լուրջ, նույնիսկ խիստ արտահայտություն։ Նա հանկարծ թռչկոտեց, երգեց ու չքացավ, ինչպես թփերից խրտնած թռչնիկ։ Իմ վերջին խոսքերը բնավ տեղին չէին. այն ժամանակ ես չէի կռահում դրանց կարևորությունը, բայց հետագայում առիթ ունեցա ասածիս համար զղջալու։

Հենց որ մթնեց, ես կազակիս կարգադրեցի թեյամանը կրակին դնել՝ արշավանքների ժամանակվա պես, վառեցի մոմը և նստեցի սեղանի մոտ, ծխելով ճամփորդական ծխամորճս։ Արդեն վերջացնում էի թեյի երկրորդ բաժակը, երբ հանկարծ դուռը ճռռաց, ետևիցս լսվեց հագուստի և քայլերի թեթև շրշյուն։ Ցնցվեցի ու ետ նայեցի. այդ նա՞ էր, իմ ջրահարսը։ Նա նստեց իմ դիմաց կամացուկ ու լռելյայն և վրաս սևեռեց իր աչքերը։ Չգիտեմ ինչու, բայց այդ հայացքն ինձ թվաց հիասքանչ-քնքուշ։ Դա ինձ հիշեցրեց մեկն այն հայացքներից, որոնք վաղուց անցած տարիներին այնպես ինքնիշխան խաղում էին իմ կյանքի հետ։ Նա, թվում էր, հարցի է սպասում, բայց ես անբացատրելի շփոթմունքով բռնված՝ լուռ էի։ Նրա դեմքը ծածկված էր աղոտ գունատությամբ, որ մատնում էր հոգեկան հուզմունքը։ Ձեռքն աննպատակ շարժվում էր սեղանի վրա, և ես նկատեցի, որ թեթևակի դողդողում է։ Նրա կուրծքը մերթ խիստ վեր էր բարձրանում, մերթ նա կար-

ծես պահում է իր շնչառությունը։ Այդ կոմեդիան սկսում էր ինձ ձանձրացնել, և ես պատրաստ էի խզել լռությունն ամենապրոզայիկ ձևով, այսինքն՝ նրան մի բաժակ թեյ առաջարկել, երբ նա հանկարծ վեր թռավ, գրկեց իմ պարանոցը, խոնավ, բոցեղեն, հնչեղ համբույր դրոշմեց իմ շրթունքներին։ Աչքերս մթնեցին, գլուխս պտույտ եկավ. ես սեղմեցի նրան իմ գրկում երիտասարդական կրքի ամբողջ թափով, բայց նա օձի պես սահեց իմ ձեռքերի միջից, ականջիս շշնջալով. «Այս գիշեր, հենց որ բոլորը քնեն, դուրս արի ծովափ», ու նետի պես դուրս թռավ սենյակից։ Նախասենյակում կպավ ու շտապվեց թեյամանն ու հատակին դրված մոմը։ «Ի՞նչ դև-աղջիկ է»,— գոչեց կազակը, որ տեղավորվել էր ծղոտի վրա և երազում էր տաքանալ թեյի մնացորդով։ Ես միայն այստեղ ուշքի եկա։

Մի երկու ժամ անց, երբ նավահանգստում ամեն ինչ լռեց, արթնացրի իմ կազակին։ «Եթե ատրճանակ կրակեմ,— ասացի նրան,— ծովափ վազիր»։ Նա չռեց աչքերը և մեքենաբար պատասխանեց. «Լսում եմ, ձերդ ազնվություն»։ Ատրճանակը գոտիս խրեցի և սենյակից դուրս գնացի։ Աղջիկն սպասում էր ինձ վայրէջքի ծայրին։ Նրա հագուստն ավելի քան բարակ էր, մի փոքրիկ թաշկինակ գոտևորում էր ճկուն իրանը։

— Եկեք իմ ետևից,— ասաց նա, իմ ձեռքը բռնելով, և մենք սկսեցինք իջնել։ Չեմ հասկանում, թե ինչպես էր, որ ես վիզս չկոտրեցի։ Ցածում մենք թեքվեցինք աջ ու գնացինք հենց նույն ճանապարհով, որով ես երեկ հետևում էի կույրին։ Լուսինը դեռ դուրս չէր եկել, և միայն երկու աստղ էր փայլում մուգ-կապույտ երկնակամարում, ինչպես երկու փրկարար փարոս։ Ծանր ալիքները համաչափ ու հավասար գլորվում էին մեկը մյուսի ետևից՝ հազիվ վեր բարձրացնելով մենավոր մակույկը, որ մոտեցված էր ափին։ «Մակույկ մտնենք»,— ասաց իմ ուղեկցուհին։ Ես տատանվում էի։ Ծովում սենտիմենտալ զբոսանքներ կատարելու սիրահար չեմ, բայց նահանջելու ժամանակ չէր։ Նա մակույկ ցատկեց, ես՝ հետևից, և դեռ ուշքս գլուխս չէի հավաքել, երբ նկատեցի, որ մենք նավարկում ենք. «Այս ի՞նչ է նշանակում»,— ասացի ես բարկացած։ «Այս նշանակում է,— պատասխանեց նա, ինձ նստարանի վրա նստեցնելով և ձեռքերով իրանս գրկելով,— այս նշանակում է, որ ես քեզ սիրում եմ...»։ Ու նրա այտը սեղմվեց իմին, և ես դեմքիս վրա զգացի նրա բոցեղեն շնչառությունը։ Հանկարծ ինչ-որ բան աղմուկով ջուրն ընկավ։ Ես ձեռքս գոտուս տարա. ատրճանակս չկար։ Օ՜, այստեղ սոսկալի կասկած ընկավ իմ սիրտը, արյունը գլխովս խփեց։ Ես նայեցի։ Ափից հիսուն սաժենի վրա էինք, իսկ ես լողալ չգիտեմ։ Ուզում էի նրան ինձնից դեն հրել. բայց նա կատվի պես բռնել էր հագուստիցս, և հանկարծ ուժեղ հրելուց քիչ մնաց՝ ծովն ընկնեի։ Մակույկը երերաց, բայց ես շտկվեցի, և մեր միջև սկսվեց մի կատաղի կռիվ։ Կատաղությունն ինձ ուժ էր տալիս, բայց շուտով նկատեցի, որ ճարպկության մեջ ես զիջում եմ իմ հակառակորդին... «Դու ի՞նչ ես ուզում»,— բղավեցի ես, ամուր հուպ տալով նրա փոքրիկ ձեռքերը։ Նրա մատները ճարճատեցին, բայց նա ձայն չհանեց. նրա օձային էությունը դիմացավ այդ տանջանքին։

— Դու տեսնո՞ւմ ես,— պատասխանեց նա,— կմատնե՞ս,— ու գերբնական ճիգով ինձ տապալեց մակույկի կողքին. մենք երկուսս էլ մինչև գոտկատեղներս ցած էինք կախվել մակույկից. նրա մազերը դիպչում էին ջրին։ Բոպեն վճռական էր։ Ես ծունկս դեմ տվի մակույկի հատակին, մի ձեռքով նրա մազերի հյուսքը բռնեցի, մյուսով՝ կոկորդը։ Նա բաց թողեց իմ հագուստը, և ես վայրկենաբար նրան նետեցի ալիքների մեջ։

Արդեն բավական մութ էր. նրա գլուխը մի երկու անգամ երևաց ծովային փրփուրի մեջ, և այլևս ոչինչ չտեսա...

Մակույկի հատակին գտա հին թիի մի կտոր և մի կերպ, երկար ջանքերից հետո, նավահանգիստ հասա։ Ծովափով դեպի իմ հյուղն ընթանալիս ակամա նայում էի այն կողմը, որտեղ երեկ կույրն սպասում էր գիշերվա լողվորին։ Լուսինն արդեն լողում է երկնքում, ինձ թվաց, թե սպիտակ հագնված մեկը նստած է ծովի ափին։ Հետաքրքրությունից դրդված՝ գաղտագողի մոտեցա և պառկեցի թեք ծովափի խոտերի մեջ։ Գլուխս այնտեղից մի քիչ դուրս հանելով, ես կարողացա ժայռի վրայով շատ լավ տեսնել այն ամենը, ինչ կատարվում էր ցածում, և շատ էլ չզարմացա, այլ համարյա ուրախացա, իմ հավերժահարսին ճանաչելով։ Նա ծովային փրփուրն էր քա-

մում իր երկար մազերից, թաց շապիկը գծագրում էր նրա ճկուն իրանը և բարձր կուրծքը։ Շուտով հեռվում մակույկ երևաց, արագ մոտեցավ, նրա միջից, ինչպես երեկ, դուրս եկավ թաթարական գդակով մի մարդ, բայց նա կազակի խուզվածք ուներ, և փոկե գոտու տակից դուրս էր ցցված մի մեծ դանակ։ «Յա՜նկո,— ասաց աղջիկը,— ամե՜ն ինչ կորած է»։ Հետո նրանց խոսակցությունը շարունակվեց, բայց այնքան կամաց, որ ես ոչինչ չկարողացա լսել։ «Իսկ կույրը ո՞ւր է»,— ասաց վերջապես Յանկոն՝ ձայնը բարձրացնելով։ «Ես նրան ուղարկել եմ»,— եղավ աղջկա պատասխանը։ Մի քանի բոպեից հետո հայտնվեց կույրը, շալակին մի պարկ, որը մակույկ իջեցրին։

«Էսի՜ր, կո՜ւյր,— ասաց Յանկոն,— դու լավ պահպանիր այն հակը... գիտե՞ս մեջը թանկ ապրանք է... ասա (անունը ես չլսեցի), որ ես այլևս նրա ծառան չեմ։ Գործերը վատ են գնում։ Նա՛ ինձ էլ չի տեսնի։ Հիմա վտանգավոր է։ Գնում եմ ուրիշ տեղ աշխատանք փնտրելու, իսկ նա այս տեսակ ղուշաղին էլ չի գտնի։ Համ էլ ասա, որ եթե նա ավելի լավ վճարեր աշխատանքի համար, Յանկոն էլ նրան չէր թողնի, իսկ ինձ համար ամեն տեղ ճանապարհ կա, ուր քամի է փչում ու ծովն աղմկում։ — Կարճատև լռությունից հետո Յանկոն շարունակեց։ — Սա ինձ հետ կգա, սա այստեղ մնալ չի կարող, իսկ պառավին ասա, թե ժամանակն է, որ մեռնի, չափից ավելի է ապրել, նամուսն էլ լավ բան է։ Իսկ մեզ էլ չի տեսնի»։

— Իսկ ե՞ս — ասաց կույրը աղերսալի ձայնով։

— Դու իմ ինչի՞ն ես պետք,— եղավ պատասխանը։

Մինչ այդ իմ ջրահարսը մակույկ ցատկեց և ընկերոջը ձեռքով արեց։ Վերջինս կույրի ձեռքն ինչ-որ բան դրեց, ասելով. «Առ, կարկանդակ գնիր քեզ համար»։ «Միայն այսքա՞նը»,— ասաց կույրը։ «Ահա քեզ էլի»,— ու վայր ընկած դրամը քարին դիպչելով զնգաց։ Կույրը գետնից չվերցրեց դրամը։ Յանկոն մակույկ նստեց։ Քամին ծովափից էր փչում։ Նրանք փոքրիկ առագաստ բարձրացրին և արագ սլացան։ Երկար ժամանակ լուսնի լույսի տակ սպիտակ առագաստը երևում էր մութ ալիքների միջև։ Կույրը շարունակում էր դեռ նստած մնալ ծովափին, և ահա իմ ականջին հասավ հեկեկանքի նման մի բան. կույր տղան ասես լալիս էր, և երկա՜ր, երկա՜ր... Ես տխրեցի։ Եվ ճակատագրի ինչի՞ն էր պետք ինձ գցել ազնիվ մաքսանենգների խաղաղ շրջանը։ Ինչպես անայլայլ ջուրը նետված մի քար, ես վրդովեցի նրանց հանգիստը, և քիչ մնաց, որ ինքս էլ քարի պես հատակը գնայի։

Ես վերադարձա տուն։ Նախասենյակում փայտե ափսեի մեջ ճարճատում էր այրված մոմի մնացորդը, և իմ կազակը, հակառակ հրամանիս, քնած էր խոր քնով, հրացանը երկու ձեռքով բռնած։ Ես նրան հանգիստ թողեցի, վերցրի մոմը և մտա խրճիթը։ Ավա՜ղ, իմ արկղիկը, արծաթապատ թուրս, դաղստանյան դաշույնս, որ բարեկամիս նվերն էր,— բոլորն անհետացել էր։ Այստեղ ահա գլխի ընկա, թե ինչ իրեր էր տանում անիծյալ կույրը։ Կազակին բավական անքաղաքավարի հրելով արթնացրի, հայհոյեցի, բարկացա, բայց ի՞նչ կարելի էր անել։ Եվ ծիծաղելի չէ՞ր լինի գանգատվել իշխանությանը, որ կույր տղան ինձ կողոպտել է, իսկ տասնութ տարեկան աղջիկը քիչ էր մնացել, որ ջրահեղձ անի։ Փա՜ռք աստծո, առավոտյան մեկնելու հնարավորություն ներկայացավ, և ես թողեցի Թամանը։ Ի՞նչ եղան պառավն ու խեղճ կույրը, չգիտեմ։ Եվ ի՜նչ իմ գործն են մարդկային ուրախություններն ու թշվառությունները, ի՛մ թափառող սպային, որ, ի հավելումն դրան, ուղեգիր ունի, թե պաշտոնական գործերով է տեղից-տեղ գնում...

Առաջին մասի վերջ

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

(Պեչորինի օրագրի վերջը)

II

ԻՕԽԱՆԱԳՈՒՍՏՐ ՄԵՐԻ

11-ը մայիսի

Երեկ ես Պյատիգորսկ ժամանեցի, բնակարան վարձեցի քաղաքի ծայրին, ամենաբարձր տեղում՝ Մաշուկի ստորոտի մոտ։ Մրրկի ժամանակ ամպերը կիջնեն մինչև իմ տանիքը։ Այսօր առավոտյան ժամը հինգին, երբ լուսամուտը բացեցի, սենյակս լցվեց ցցապատած համեստ պարտեզի ծաղիկների բույրով։ Մաղկած կեռասենիների ճյուղերը հասնում են պատուհաններիս, և քամին երբեմն իմ գրասեղանը ծածկում է դրանց ծաղիկների սպիտակ թերթիկներով։ Երեք կողմից բնակարանիս առջև բացվում են հիանալի տեսարաններ։ Արևմտյան կողմում հինգգլխանի Բեշտուն է կապտին տալիս, ինչպես «անցած փոթորիկի վերջին սև ամպ»*։ Հյուսիսակողմում բարձրանում է Մաշուկը, որպես պարսկական բրդոտ գդակ, և ծածկում է երկնակամարի այդ ամբողջ մասը։ Դեպի արևելք նայելն ավելի ուրախալի է. ներքևում իմ առջև է խայտաբղետ, մաքուր, նոր գյուղաքաղաքը, աղմկում են բուժիչ աղբյուրները, աղմկում է այլալեզու ամբոխը։ Ավելի դենը ամֆիթատրոնի պես վեր են խոյանում սարերը, որոնք որքան հեռու, այնքան կապույտ ու մառախլապատ են, իսկ հորիզոնի եզրին ձգվում է ձյունապատ գագաթների արծաթե շղթան, սկսվելով Կազբեկով և վերջանալով երկգլխանի Էլբրուսով... Այսպիսով երկրում ապրելն ուրախալի է։ Ինչ-որ խնդության զգացմամբ են լցվել իմ բոլոր երակները։ Օդը մաքուր է ու թարմ, որպես մանկան համբույր, արևը վառ է, երկինքը՝ կապույտ։ Թվում է, թե սրանից ավելի էլ ի՞նչ է հարկավոր։ Այստեղ ինչի՞ են պետք կրքերը, ցանկությունները, ափսոսանքները... Սակայն ժամանակն է։ Գնամ Ելիզավետյան աղբյուրը. այնտեղ, ա-

* Մի տող Պուշկինի «Փոթորիկ» բանաստեղծությունից։

ղում են, առավոտյան հավաքվում է ամբողջ ջրեկ հասարակությունը։

Քաղաքի կենտրոնն իջնելով, ես անցա զբոսայգով։ Հանդիպեցի մի քանի տխուր խմբերի, որոնք դանդաղ սարն էին բարձրանում։ Դրանք մեծ մասամբ տափաստանցի կալվածատերերի ընտանիքներ էին. այդ իսկույն կարելի էր կռահել ամուսինների մաշված հնատարազ սերթուկներից և կանանց ու աղջիկների նուրբ արդուզարդից։ Երևում է, որ ջրեկ բոլոր երիտասարդներին նրանք հականե-հանվանե ճանաչում էին, որովհետև ինձ նայեցին քնքուշ հետաքրքրությամբ, սերթուկիս պետերբուրգյան տարազը նրանց թյուրիմացության մեջ գցեց, բայց շուտով, նկատելով հետևազորայինի էպոլետները, նրանք զայրույթով երեսները շուռ տվին։

Տեղական իշխանավորների կանայք, ջրերի այսպես ասած ռանտիրուհիները, ավելի բարեհաճ էին. նրանք լորնետներ ունեն, պակաս ուշադրություն են դարձնում նշանազգեստի վրա, ընտելացել են համարակալած կոճակի տակ Կովկասում հանդիպել բոցավառ սիրտ և սպիտակ գլխարկի տակ՝ կիրթ ուղեղ։ Այս տիկինները շա՜տ սիրելի են և երկա՜ր ժամանակով սիրելի։ Ամեն տարի նրանց երկրպագուները նորերով են փոխվում, և հենց այն է, թերևս, նրանց անխոնջ սիրալիրության գաղտնիքը։ Նեղ կածանով բարձրանալով դեպի Ելիզավետյան աղբյուրը, ես հասա քաղաքացիական և զինվորական ծառայության մեջ գտնվող տղամարդկանց մի խմբի, որոնք, ինչպես ես հետո իմացա, ջրից բուժում ակընկալող մարդկանց մի առանձին դասակարգ են կազմում. խմում են սակայն ոչ ջուր, քիչ են զբոսնում, հարևանցիորեն են քարշ գալիս կանանց ետևից, թուղթ են խաղում և գանգատվում ձանձրույթից։ Նրանք պենսիոներներ են. իրենց հյուսվածապատ բաժակները թթու ծծմբաջրի հորն իջեցնելով, ակադեմիական* կեցվածքներ են ընդունում։ Քաղաքացիական ծառայության մեջ գտնվողները բաց-երկնագույն փողկապ են կապում, զինվորականներն օձիքի տակից դուրս են թողնում բրիժժի։ Նրանք խոր արհամարհանք են տածում դեպի գավա-

* Այստեղ՝ շատ լուրջ։

ական կանայք և մայրաքաղաքների արիստոկրատական հյուրասիրությունների կարոտն են քաշում, ուր նրանց ներս չեն թողնում։

Վերջապես, ահա և ջրհորը... Կողքի հրապարակում կառուցված է մի տնակ, որի կարմիր տանիքը կախված է վանայի վրա, իսկ փոքր-ինչ հեռու գալերեան է, որտեղ զբոսնում են անձրևի ժամանակ։ Մի քանի վիրավոր սպաներ, հենակները ետ քաշած, նստել էին նստարանին՝ գունատ, տխուր։ Մի քանի տիկին արագ ետ ու առաջ էին քայլում փոքրիկ հրապարակում՝ ջրի ներգործությանն սպասելով։ Նրանց մեջ կային մի քանի դեղեցկադեմներ։ Մաշուկի թեք լանջը ծածկող խաղողի ծառուղիներում երբեմն երևում էր երկուսով առանձնանալու սիրահար որևէ դամայի խայտաբղետ գլխարկ։ Այսպես եմ ասում, որովհետև այդպիսի գլխարկի մոտ ես միշտ նկատել եմ կամ զինվորական գլխարկ կամ անճոռնի, կլոր շլյապա։ Գահավեժ ժայռի վրա, որտեղ կառուցված է Էոլյան տավիղ կոչվող պավիլիոնը, ցցվել էին տեսարանների սիրահարները և հեռադիտակ էին ուղղում դեպի Էլբրուսը։ Սրանց մեջ կային երկու գուվերնյոր իրենց սաների հետ, որոնք եկել էին գեղձախտից բուժվելու։

Շնչասպառ լինելով՝ ես կանգ առա սարի եզրին և, հենվելով տնակի անկյունին, սկսեցի դիտել գեղատեսիլ շրջակայքը, երբ հանկարծ հետևիցս լսեցի մի ծանոթ ձայն.

— Պեշո՛ւրին, վաղու՞ց է արդյոք, ինչ այստեղ ես։

Ես եմ նայում։ Գրուշնի՛ցկին է։ Մենք գրկախառնվեցինք։ Ես նրա հետ ծանոթացել էի գործող զորաբաժնում։ Գնդակը վիրավորել էր նրա ոտքը, և նա ինձանից մոտ մի շաբաթ առաջ էր ջրերը եկել։

Գրուշնիցկին յունկեր է։ Միայն մի տարի է, ինչ նա ծառայության մեջ է։ Հագնում է շարքային զինվորի հաստ շինել։ Դա էլ հատուկ պճնամոլություն է։ Նա ունի Գեորգիի զինվորական խաչ։ Լավ կազմվածքի տեր է, թուխ է և սեահեր. արտաքինին նայելով՝ նրան կարելի է համարել 25 տարեկան, թեպետ նա հազիվ թե 21 տարեկան լինի։ Խոսելիս գլուխը ետ է տանում և անդադար բեղը ոլորում ձախ ձեռքով՝ աջով հենակին կոթնած լինելու պատճառով։ Խոսում է արագ և շինծու ոճով։ Նա այն մարդկանցից է, որոնք կյանքի ամեն

մի դիպվածի համար ունեն պատրաստի ճոխ ֆրազներ, այն մարդկանցից, որոնց սոսկ գեղեցիկը չի հուզում և որոնք մշտապես արտասովոր զգացմունքներ, վեհ տենչեր ու բացառիկ տանջանքներ ունեցողի դիմակ են հագնում։ Տպավորություն գործելը նրանց հաճույք է պատճառում. նրանք խելագարեցնելու աստիճան դուր են գալիս գավառական ռոմանտիկ կանանց։ Սերության մոտենալով՝ դառնում են կամ խաղաղ կալվածատերեր, կամ հարբեցողներ, հրբեմն՝ այս էլ, այն էլ։ Նրանց հոգին ունենում է շատ բարի հատկություններ, բայց ոչ մի գրոշի պոեզիա։ Գրուշնիցկին արտասանելու սիրահար էր։ Հենց որ խոսակցությունը դուրս էր գալիս սովորական հասկացությունների սահմաններից, նա ձեզ խոսքակոխ էր անում։ Ես երբեք չէի կարողանում նրա հետ վիճել։ Նա ձեր առարկություններին չի պատասխանում, ձեզ չի լսում։ Հենց որ դադար եք առնում, նա սկսում է երկար տիրադ, որը, ըստ երևույթին, կապ ունի այն բանի հետ, ինչ դուք ասացիք, բայց, իրոք, միայն շարունակությունն է նրա սեփական ճառի։

Նա բավական սրամիտ է։ Նրա էպիգրամները հաճախ զվարճալի են, բայց երբեք դիպուկ և կծու չեն լինում, նա երբեք որևէ մեկին մի խոսքով չի սպանի։ Նա չի ճանաչում մարդկանց և նրանց թույլ լարերը, որովհետև իր ամբողջ կյանքի ընթացքում զբաղվել է միմիայն իրենով։ Նրա նպատակն է վեպի հերոս դառնալ։ Նա այնքան հաճախ էր աշխատում հավատացնել ուրիշներին, թե ինքն աշխարհի համար ստեղծված էակ չէ և դատապարտված է ինչ-որ գաղտնի տանջանքների, որ ինքն էլ համարյա հավատում էր։ Դրա համար է այնպիսի հպարտությամբ կրում հասարակ զինվորի իր հաստ շինելը։ Ես նրան հասկացա, և այդ պատճառով նա ինձ չի սիրում, թեպետ արտաքուստ ամենաբարեկամական հարաբերությունների մեջ ենք։ Գրուշնիցկին նշանավոր քաջի անուն է հանել. ես նրան տեսել եմ պատերազմում. նա թափահարում է թուրը. բղավում է և առաջ նետվում՝ աչքերը կկոցելով։ Դա ռուսական քաջության նման չէ՞...

Ես էլ նրան չեմ սիրում. զգում եմ, որ երբևէ մենք ընդհարվելու ենք նեղ ճանապարհի վրա. և մեզանից մեկնումեկի բանը վատ է լինելու։

Նրա Կովկաս գալը նույնպես ռոմանտիկական մոլեռանդության հետևանք է։ Ես հավատացած եմ, որ հայրական գյուղից մեկնելու նախօրյակին նա մռայլ տեսքով ասելիս կլիներ որևէ սիրուն հարևանուհու, թե ինքը հենց այնպե՞ս, սոսկ ծառայելու չի գնում, այլ մահ է փնտրում, որովհետև... այստեղ նա երևի, աչքերը ձեռքով ծածկելով, շարունակելիս կլինի այսպես, «Ոչ, դուք (կամ դու) այս չպետք է իմանաք։ Ձեր մաքուր հոգին կսարսռա՞։ Եվ ինչի՞ համար։ Ես ի՞նչ եմ ձեզ համար։ Արդյոք դուք ինձ կհասկանա՞ք»... Եվ այլն։

Նա ինքն էր ինձ ասում, թե այն պատճառը, որը դրդել էր նրան Կ. գունդը մտնել, հավիտենական գաղտնիք կմնա իր և երկնքի միջև։

Սակայն այն բոպեներին, երբ Գրուշնիցկին դեն է նետում տրագիկ մանտիան, նա բավական սիրելի է և զվարճացնող։ Ինձ համար հետաքրքրական է նրան տեսնել կանանց շրջանում. այստեղ, ես կարծում եմ, նա շատ եռանդ է թափում։

Մենք հանդիպեցինք որպես հին բարեկամներ։ Ես սկսեցի հարց ու փորձ անել ջրերում տիրող կենցաղավարության և աչքի ընկնող անձնավորությունների մասին։

— Մենք բավական պրոզայիկ կյանք ենք վարում,— ասաց նա՝ հոգոց քաշելով։ — Առավոտը ջուր խմողները թույլ են, ինչպես բոլոր հիվանդները, իսկ երեկոյան՝ գինի խմողներն անտանելի են, ինչպես բոլոր առողջները։ Կանայք էլ կան, բայց նրանց պատճառած մխիթարությունը փոքր է. նրանք վիստ են խաղում, վատ հագնվում և խոսում են սոսկալի ֆրանսերենով։ Այս տարի Մոսկվայից միմիայն իշխանուհի Լիգովսկայան է եկել իր աղջկա հետ, բայց ես նրանց ծանոթ չեմ։ Հասարակ զինվորի իմ շինելն ասես մերժվածի կնիք լինի։ Նրա առաջ բերած կարեկցությունը ողորմության պես ճնշող է։

Այդ բոպեին մեր կողքով դեպի ջրհոր գնացին երկու դամաներ՝ մեկը տարիքով, մյուսը երիտասարդ, բարեկազմ։ Շլյապաներն ինձ խանգարեցին տեսնել նրանց դեմքերը, բայց նրանք հագնված էին լավագույն ճաշակի խիստ կանոնների համաձայն. ոչ մի ավելորդ բան։ Երկրորդը հագել էր gris de perles* փակօձիք հագուստը։ Մետաքսե թեթև գլխաշորը փաթաթվել էր նրա ճկուն պարանոցի շուրջը։ Couleur puce** կոշիկները կոճերի մոտ այնպես սիրուն էին սեղմել նրա նիհար ոտիկը, որ նույնիսկ գեղեցկության գաղտնիքներին անիրազեկ մարդը նայելիս անպայման թառանչ կարձակեր, թեկուզ հենց զարմանքից։ Նրա թեթև, բայց ազնվական քայլվածքն ուներ ինչ-որ կուսական բան, որ դժվար է բնորոշել, բայց հայացքի համար հասկանալի է։ Երբ նա անցավ մեր մոտով, այնպիսի անբացատրելի բուրմունք սփռեց, ինչպիսին երբեմն արձակում է սիրելի կնոջ երկտողը։

— Ահա իշխանուհի Լիգովսկայան,— ասաց Գրուշնիցկին,— և հետը՝ իր դուստր Մերին, ինչպես իշխանուհին անվանում է նրան անգլիական ձևով։ Միայն երեք օր է, ինչ այստեղ են։

— Սակայն դու արդեն գիտե՞ս նրա անունը։

— Այո՛, պատահմամբ լսեցի,— պատասխանեց Գրուշնիցկին՝ կարմրելով։ — Խոստովանում եմ. չեմ ցանկանում նրանց հետ ծանոթանալ։ Այդ հպարտ մեծատունները մեզ՝ բանակայիններիս վրա նայում են, ինչպես վայրենիների։ Եվ նրանց ի՞նչ գործն է, համարակալված գլխարկի տակ խելք և հաստ շինելի տակ սիրտ կա՞, թե ոչ։

— Խե՜ղճ շինել,— ասացի ես քմծիծաղ տալով։ — Իսկ ո՞վ է այն պարոնը, որ մոտենում է նրանց և պանպես ծառայելու պատրաստ՝ բաժակ է մատուցում նրանց։

— Օ՜, դա մոսկվացի ոգնամոլ Ռևևիշն է։ Նա խաղամոլ է... Այդ իսկույն երևում է ահագին ոսկե շղթայից, որ գալարվում է նրա երկնագույն ժիլետի վրա։ Իսկ ի՞նչ հաստ ձեռնափայտ է. ասես Ռոբինզոն Կրուզոյինը լինի։ Ասենք մորուքն էլ համապատասխան է, սանրվածքն էլ՝ a' la moujik***.

— Դու գաղազած ես ողջ մարդկային ցեղի դեմ։

— Եվ պատճառներ կան։

— Օ՜, իսկապես։

Այդ պահին կանայք հեռացան ջրհորից և հավասարվեցին մեզ։ Մինչ այդ Գրուշնիցկին կարողացավ հենակի օգնությամբ

* Գորշավուն, մարգարտագույն (Ֆր.)։
** Շագանակագույն (Ֆր.)։
*** Մուժիկավարի, գեղջկական (Ֆր.)։

դրամատիկ կեցվածք ընդունել և բարձրաձայն պատասխանեց ինձ ֆրանսերեն.

— Mon cher, je hais les hommes pour ne pas les mépriser, car autrement la vie serait une farce trop degoûtante*.

Սիրունիկ իշխանադուստրը շրջվեց և հետաքրքրվողի խոր հայացք պարգևեց հռետորին։ Այդ հայացքի արտահայտությունը շատ անորոշ էր, բայց ծաղրական չէր, և այդ առթիվ ես ներքուստ ի սրտե շնորհավորեցի Գրուշնիցկուն։

— Այդ իշխանադուստր Մերին շատ լավիկն է,— ասացի ես։ — Նա ունի այնպիսի՜ թավշահայացք աչքեր, իսկ և իսկ՝ թավշահայացք։ Քեզ խուրհուրդ եմ տալիս յուրացնել այս արտահայտությունը, երբ դու նրա աչքերի մասին խոսելու լինես։ Վարի և վերի թերթերունքներն այնքան երկար են, որ արևի ճառագայթները չեն ցոլանում նրա բիբերի մեջ։ Ես սիրում եմ առանց փայլի այդ աչքերը. դրանք այնքա՜ն մեղմ են, ասես շոյում են քեզ... Սակայն, կարծեմ, նրա դեմքի վրա լավը հենց միայն ա՜յդ է... Իսկ ինչպե՞ս է, նրա ատամները սպիտա՜կ են։ Դա շա՜տ կարևոր է, ափսո՜ս, որ քո փարթամ դարձվածքին նա չժպտաց։

— Սիրունիկ կնոջ մասին դու խոսում ես, ինչպես անոլիական ձիու մասին,— զայրույթով ասաց Գրուշնիցկին։

— Mon cher,— պատասխանեցի ես, աշխատելով նմանվել նրա տոնին,— je meprise les femmes pour ne pas les aimer, car autrement la vie serait un melodrame trop ridicule**.

Ես շուտ եկա և հեռացա։ Կես ժամի չափ զբոսնեցի խաղողի ծառուղիներում, կրաքարե ժայռերի և նրանց միջև կախկըխված թփերի մեջ։ Շոգն սկսվում էր։ Տուն շտապեցի։ Ծծմբաթթվի աղբյուրի մոտով անցնելիս, կանգ առա ծածկած գալերեի մոտ, որպեսզի ստվերում շունչ առնեմ, և այդ ինձ առիթ ընձեռեց վկա լինելու բավական հետաքրքրական մի տեսարանի։ Գործող անձինք ահա թե ինչ դիրք ունեին։ Իշխանուհին մոսկվացի պճնամոլի հետ նստած էր ծածկած գալերեում, նստարանին, և երկուսն էլ զբաղված էին, կարծեմ, լուրջ խոսակցությամբ։ Իշխանադուստրը, երևի արդեն վերջին բաժակը խմել, վերջացրել էր՝ ու մտազբաղ անցուդարձ էր անում ջրհորի մոտ։ Գրուշնիցկին կանգնած էր հենց ջրհորի մոտ։ Հրապարակում այլևս ոչ ոք չկար։

Ես մոտ գնացի ու թաքնվեցի գալերեի անկյունի ետևում։ Այդ րոպեին Գրուշնիցկու ձեռքից բաժակն ընկավ գետին, ավազի վրա, և նա ճիգ էր թափում կռանալ՝ բաժակը վերցնելու. վիրավոր ոտքը նրան խանգարում էր։ Խե՜ղճ մարդ, ինչ հնարներ է գործադրում հենակին կոթնած՝ բաժակը վերցնելու, և բոլորն իզուր։ Նրա արտահայտիչ դեմքն իսկապես տանջանք էր արտահայտում։

Իշխանադուստր Մերին այդ բոլորն ինձանից լավ էր տեսնում։

Նա թռչնակից ավելի թեթև մոտ ցատկեց, կռացավ, վերցրեց բաժակը և տվեց մարմնի այնպիսի շարժումով, որ լի էր անասելի գրավչությամբ։ Ապա նա սաստիկ կարմրեց, ետ նայեց գալերեին և համոզվելով, որ իր մայրիկը բան չտեսավ, կարծեմ, իսկույն հանգստացավ... Երբ Գրուշնիցկին բերանը բացեց, որպեսզի նրան շնորհակալություն հայտնի, նա արդեն հեռու էր։ Մի րոպեից հետո աղջիկը դուրս եկավ գալերեից իր մոր և պճնամոլի հետ, բայց Գրուշնիցկու մոտով անցնելիս այնպիսի՜ զուսպ ու լուրջ տեսք ընդունեց. նույնիսկ շուռ չեկավ, նույնիսկ չնկատեց այն կրքոտ հայացքը, որով նա երկար ժամանակ հետևում էր իրեն, մինչև սարից իջնելով, ծածկվեց զբոսայգու լորիների ետևում։ Բայց ահա աղջկա շլյապան երևաց փողոցի մյուս կողմում։ Իշխանադուստրը վազելով գնաց, Պյատիգորսկի լավագույն տներից մեկի դարպասից ներս մտավ։ Նրա հետևից մտավ իշխանուհին և դարպասի մոտ գլխի շարժումով հրաժեշտ տվեց Ռաեվիչին։

Միայն այդ ժամանակ խեղճ կրքավառ յունկերը նկատեց իմ ներկայությունը։

— Դու տեսա՞ր,— ասաց նա, ամուր հուպ տալով իմ ձեռքը,— դա ուղղակի հրեշտակ է։

— Ինչո՞ւ,— հարցրի ես, ամենաիսկական պարզամտի տեսք ընդունելով։

* Սիրելիս, ես ատում եմ մարդկանց, որպեսզի նրանց չարհամարհեմ, որովհետև այլ կերպ կյանքը չափազանց գարշելի մի ֆարս կդառնար (Ֆր.)։

** Սիրելիս, ես արհամարհում եմ կանանց, որպեսզի նրանց չսիրեմ, որովհետև այլ կերպ կյանքը խիստ տարօրինակ մելոդրամա կդառնար (Ֆր.)։

— Մի՞թե դու չտեսար։

— Ո՛չ, տեսա, նա գետնից վերցրեց քո բաժակը։ Եթե այդտեղ պահապան լիներ, նա նույնը կաներ և ավելի փութ՝ օղու փող ստանալու հույսով։ Բայց շատ հասկանալի է, որ իշխանադուստրը խղճաց քեզ. քո դեմքն այնպես սարսափելի ծամածռվեց, երբ դու մարմնիդ ծանրությունը վիրավոր ոտքիդ գրա գցեցիր...

— Եվ դու բոլորովին չհուզվեցի՞ր՝ նայելով նրան այն բոպեին, երբ հոգին շողում էր դեմքին...

— Ո՛չ։

Ես ստում էի, բայց ուզում էի նրան կատաղեցնել։ Ես ունեմ հակառակ ընթանալու բնածին հակում. իմ ամբողջ կյանքը սրտին և բանականությանը հակասելու տխուր և անհաջող ճիգերի մի շղթա էր լոկ։ Էնտուզիաստի ներկայությունը ջրօրհնեքի ցրտի ազդեցություն է գործում ինձ վրա, և ես կարծում եմ, որ հաճախակի շփումը տարտամ ֆլեգմատիկի հետ ինձ կդարձներ թունդ երազող։ Մի բան էլ եմ խոստովանում. այդ պահին մի տհաճ, բայց ծանոթ զգացում թեթևակի անցավ իմ սրտով։ Այդ զգացումը նախանձն էր։ Հարմարձակ ասում եմ՝ «նախանձ», որովհետև սովոր եմ ամեն ինչ խոստովանել ինքս ինձ։ Եվ հազիվ թե գտնվի մի երիտասարդ, որը, հանդիպելով մի սիրուն կնոջ, որն իր վրա է բևեռել նրա պարապ ուշադրությունը, հանկարծ նրա ներկայությամբ ակնհայտ կերպով նախապատվություն տա իրեն նույնպես անծանոթ մեկ ուրիշին։ Հազիվ թե, ասում եմ, գտնվի մի երիտասարդ (հասկանալի է, ընտիր հասարակության մեջ ապրած և իր ինքնասիրությանը երես տալու սովոր երիտասարդ), որին տհաճորեն չապշեցնի այդ։

Ես ու Գրուշնիցկին լուռ իջանք սարից և անցանք զբոսայգով, այն տան պատուհանների մոտով, որտեղ մտել էր մեր գեղեցկուհին։ Նա նստած էր պատուհանի առաջ։ Գրուշնիցկին, իմ ձեռքը քաշելով, աղջկան հառեց մեկն այն պղտոր-քնքուշ հայացքներից, որոնք այնքան քիչ են ազդում կանանց վրա։ Ես լոռնետս ուղղեցի դեպի այդ աղջիկը և նկատեցի, որ նա ժպտաց Գրուշնիցկու հայացքից և որ իմ հանդուգն լոռնետը բավական բարկացրեց նրան։ Եվ, իրոք, կովկասյան բանակային ինչպե՞ս է համարձակվում ապակի ուղղել դեպի մոսկվացի իշխանադուստրը...

13-ը մայիսի

Այսօր առավոտյան դեմ ինձ այցելեց մի բժիշկ։ Անունը Վերներ է, բայց ռուս է։ Այստեղ զարմանալու ի՞նչ կա։ Ես ճանաչում էի մի Իվանովի, որը գերմանացի էր։

Վերները երևելի մարդ է շատ պատճառներով։ Սկեպտիկ է և մատերիալիստ, ինչպես համարյա բոլոր բժիշկները, իսկ դրա հետ միևնույն ժամանակ պոետ, և լրջորեն. գործո՞վ պոետ՝ միշտ, իսկ խոսքով՝ հաճախ, թեպետ իր կյանքում երկու ոտանավոր էլ չի գրել։ Նա ուսումնասիրում էր մարդկային սրտի բոլոր կենդանի լարերը, ինչպես ուսումնասիրում են դիակի երակները, բայց երբեք չէր կարողանում իր գիտությունից օգտվել։ Այսպես, երբեմն հիանալի անատոմիկը չի կարողանում աենդ բուժել։ Սովորաբար Վերները գաղտագողի ծաղրում էր իր հիվանդներին, բայց ես մի անգամ տեսա, թե նա ինչպես էր լաց լինում մեռնող զինվորի վրա... Նա աղքատ էր, միլիոններ էր երազում, իսկ փողի համար ավելորդ մի քայլ էլ չէր անի։ Մի անգամ ինձ ասաց, թե ավելի շուտ շնորհ կանի թշնամուն, քան բարեկամին, որովհետև այդ կնշանակեր ծախել իր քարեգործությունը, մինչդեռ ապիլությունը միայն կուժեղանա հակառակորդի մեծահոգությանը համապատասխան։ Զար լեզու ուներ. նրա էպիգրամի ցուցանակի տակ շատ բարի մարդիկ գռեհիկ հիմարի անուն են հանել։ Ախոյանները՝ հանքային ջրերի նախանձոտ բժիշկները, լուր էին տարածել, թե իբր նա իր հիվանդների ծաղրանկարներն է նկարում։ Հիվանդները փրփրել էին, համարյա բոլորը հրաժարվել էին նրա մոտ բուժվելուց։ Նրա բարեկամները, այսինքն՝ Կովկասում ծառայած բոլոր խսկապես կարգին մարդիկ, խզուր էին ջանում վերականգնել նրա ընկած վարկը։

Նրա արտաքինն այնպիսիներից էր, որոնք առաջին հայացքից տհաճ կերպով զարմացնում են, բայց դուր են գալիս հետագայում, երբ աչքը սովորում է անկանոն գծերի մեջ կարդալ փորձված և բարձր հոգու դրոշմը։ Դեպքեր են եղել, որ կանայք խելագարության աստիճան սիրահարվել են այսպիսի մարդկանց և չէին ցանկանա նրանց այլանդակությունը փո-

խել ամենաթարմ և վարդագույն էնդիմիոնների* գեղեցկության հետ։ Հարկավոր է ընդունել կանանց արդարացի լինելը։ Նրանք ունեն հոգեկան գեղեցկությունը ճանաչելու բնազդ։ Գուցե դրանից է, որ Վերների նման մարդիկ այնքան սատ-կորեն են սիրում կանանց։

Վերները կարճահասակ էր և նիհար ու թույլ, ինչպես երեխա։ Նրա մի ոտքը, Բայրոնի ոտքի պես, կարճ էր մյուսից։ Մարմնի հետ համեմատած, գլուխն ահագին էր թվում։ Մազերը կարճ էր խուզել տալիս, և նրա գանգի անհարթությունները, որոնք այսպիսով մերկանում էին, կապշեցնեին ֆրենոլոգին հակասական հակումների տարօրինակ միահյուսումով։ Փոքրիկ սև աչքերը, որոնք միշտ անհանգիստ էին, աշխատում էին թափանցել ձեր մտքերի մեջ։ Հագուստի մեջ նկատելի էր ճաշակ և մաքրասիրություն։ Վտիտ, ջղուտ և փոքրիկ ձեռքերը գեղեցիկ էին բաց-դեղին ձեռնոցներում։ Սերթուկը, փողկապը, և ժիլետը միշտ սև գույնի էին։ Երիտասարդությունը նրան անվանել էր Մեֆիստոֆել։ Նա այնպես էր ցույց տալիս, թե բարկանում է այդ մականվան համար, բայց դա, իրոք, շոյում էր նրա ինքնասիրությունը։ Մենք միմյանց շուտով հասկացանք և մոտիկ ծանոթներ դարձանք, որովհետև ես բարեկամության ընդունակ չեմ. երկու բարեկամներից մեկը միշտ մյուսի ստրուկն է, թեպետ հաճախ նրանցից ոչ մեկն էլ այդ չի խոստովանում։ Ստրուկ լինել ես չեմ կարող, իսկ հրամայելն այս դեպքում հոգնեցնող աշխատանք է, որովհետև դրա հետ մեկտեղ հարկավոր է նաև խաբել. բացի դրանից, ես ունեմ թե՛ լաքեյներ, թե՛ փող։ Ահա թե ինչպես մենք մոտիկ ծանոթներ դարձանք. Վերներին հանդիպեցի Ս.-ում, բազմաթիվ և աղմկող երիտասարդության շրջանում։ Երեկոյի վերջում խոսակցությունն ընդունեց փիլիսոփայական-մետաֆիզիկական ուղղություն. խոսում էին համոզմունքների մասին։ Ամեն մեկը համոզված էր մի բանում։

— Ինչ վերաբերում է ինձ, ապա ես համոզված եմ միայն մի բանում...— ասաց բժիշկը։

* Էնդիմիոնը հեթանոս հույների աստվածահայր Զևսի որդին էր, գեղեցկության և երիտասարդության մարմնացում։

— Այդ ինչո՞ւմ,— հարցրի ես, ցանկանալով իմանալ կարծիքը մի մարդու, որը մինչ այդ լուռ էր։

— Նրանում,— պատասխանեց նա,— որ վաղ թե ուշ, մի գեղեցիկ առավոտ ես կմեռնեմ։

— Ես ձեզանից հարուստ եմ,— ասացի ես,— բացի դրանից, ունեմ ևս մի համոզմունք. հենց այն, որ մի ամենագարշելի երեկո դժբախտություն եմ ունեցել ծնվելու։

Բոլորը գտան, որ մենք դատարկ բան ենք ասում, բայց հավատացնում եմ, ոչ մեկն ավելի խելոք բան չասաց։ Այս բոպեից սկսած, մենք ամբոխի մեջ զանազանեցինք միմյանց։ Հաճախ էինք հանդիպում իրար ու երկուսով շատ լուրջ խոսում վերացական նյութերի մասին, մինչև երկուսս էլ նկատում էինք, որ իրար ձեռ ենք առնում։ Այն ժամանակ, նշանակալից նայելով միմյանց աչքերի մեջ, ինչպես, Ցիցերոնի ասելով, հռոմեական ավգուրներն էին անում, մենք սկսում էինք քրքջալ և կուշտ քրքջալուց հետո մեր երեկոյից գոհ՝ բաժանվում իրարից։

Ես պառկած էի բազմոցի վրա՝ աչքերս առաստաղին ուղղած և ձեռքերս ծոծրակիս տակ դրած, երբ իմ սենյակը մտավ Վերները։ Նա նստեց բազկաթոռի վրա, ձեռնափայտն անկյունը դրեց, հորանջեց և հայտարարեց, որ դրսում շոգն սկսվում է։ Ես պատասխանեցի, որ ինձ ճանճերն են անհանգստացնում, և երկուսս էլ լռեցինք։

— Նկատեցեք, սիրելի բժիշկ,— ասացի ես,— որ առանց հիմարների, աշխարհում շատ ձանձրալի կլիներ... Տեսե՛ք, ահա մենք երկուսս էլ խելոք մարդիկ ենք, մենք վաղօրոք գիտենք, որ ամեն ինչի մասին կարելի է անվերջ վիճել, ուստի և չենք վիճում։ Գիտենք միմյանց համարյա բոլոր գաղտնի մտքերը. մի խոսք մեզ համար մի ամբողջ պատմություն է, մեր յուրաքանչյուր զգացման միջուկը տեսնում ենք երեքտակ կեղևի տակից։ Տխուրը մեզ համար ծիծաղելի է, ծիծաղելին՝ տխուր, իսկ առհասարակ, ճիշտը որ ասենք, մենք բավական անտարբեր ենք դեպի ամեն ինչ, բացի մեզանից։ Այսպես, ուրեմն, զգացումների և մտքերի փոխանակություն մեր միջև չի կարող լինել. մենք միմյանց մասին գիտենք բոլորը, ինչ ցանկանում ենք իմանալ, և այլևս ավելին իմանալ չենք ու-

ղում։ Մնում է մի միջոց. նորություններ պատմել։ Դե, որևէ նորություն ասեք ինձ։

Երկար խոսքից հոգնած, ես աչքերս փակեցի ու հորանջեցի։

Նա պատասխանեց փոքր-ինչ մտածելուց հետո.

— Բայց ձեր բանդագուշանքի մեջ մի իդեա կա։

— Երկուսը,— պատասխանեցի ես։

— Ասեք ինձ մեկը, ես ձեզ կասեմ մյուսը։

— Լա՜վ, սկսեցեք,— ասացի ես, շարունակելով դիտել առաստաղը և ներքուստ ժպտալով։

— Դուք ուզում եք որևէ մանրամասնություն իմանալ հանքային ջրերը ժամանած մեկնումեկի մասին, և ես արդեն կռահում եմ, թե ո՞ր մեկի մասին է ձեր ուզածը, որովհետև ձեր մասին այնտեղ արդեն հարցրել են։

— Բժի՛շկ, ուղղակի մեծ անկարող ենք խոսակցել. կարդում ենք միմյանց հոգին։

— Հիմա մյուսը...

— Մյուս իդեան այս է. ես ուզում էի հարկադրել ձեզ որևէ բան պատմելու, նախ այն պատճառով, որ լսելը նվազ հոգնեցուցիչ է. երկրորդ, անկարելի է բերնից բան թոցնել. երրորդ, կարելի է իմանալ ուրիշի գաղտնիքը. չորրորդ, այն պատճառով, որ այնպիսի խելոք մարդիկ, ինչպես դուք եք, ունկնդիրներին ավելի են սիրում, քան պատմողներին։ Այժմ ի գործ. իշխանուհի Լիգովսկայան ձեզ ի՞նչ ասաց իմ մասին։

— Դուք շա՞տ եք հավատացած, որ այդ իշխանուհին էր... և ոչ թե իշխանադուստրը։...

— Միանգամայն համոզված եմ։

— Ինչո՞ւ։

— Որովհետև իշխանադուստրը Գրուշնիցկու մասին է հարցրել։

— Դուք գլխի ընկնելու մեծ շնորհք ունեք։ Իշխանադուստրն ասաց, թե ինքը հավատացած է, որ զինվորի շինել հագած այդ երիտասարդին աստիճանազուրկ են արել և զինվոր դարձրել մենամարտի պատճառով։

— Հուսով եմ, որ դուք նրան թողեցիք այդ հաճելի մոլորության մեջ։

— Հասկանալի է...

— Հանգույցը կա,— բացականչեցի հիացած։ — Այդ կոմեդիայի հանգույցի լուծման համար մենք ջանք կթափենք։ Ակներևաբար բախտը հոգ է տանում, որ ես չձանձրանամ։

— Նախազգում եմ,— ասաց բժիշկը,— որ խեղճ Գրուշնիցկին ձեր զոհն է լինելու...

— Շարունակեցեք, բժիշկ...

— Իշխանուհին ասաց, որ ձեր դեմքն իրեն ծանոթ է։ Ես կարծիք հայտնեցի, որ, հավանաբար, նա ձեզ հանդիպել է Պետերբուրգում, որևէ տեղ բարձր դասին պատկանող հասարակության մեջ... Ասացի ձեր անունը։ Այդ նրան ծանոթ էր։ Կարծեմ այնտեղ ձեր գլխին եկածը մեծ աղմուկ է հանած եղել... Իշխանուհին սկսեց պատմել ձեր արկածների մասին, երևի հասարակության մեջ եղած բամբասանքներին ավելացնելով իր դիտողությունները։ Աղջիկը հետաքրքրությամբ լսում էր։ Նրա երևակայության մեջ դուք դարձաք նոր ճաշակի վեպի հերոս... Ես չհակաճառեցի իշխանուհուն, թեև գիտեի, որ դատարկ բան է ասում։

— Արժանավո՞ր բարեկամս,— ասացի ես՝ ձեռքս նրան մեկնելով։ Բժիշկն զգացված սեղմեց այն և շարունակեց։

— Եթե կամենաք, ես ձեզ կներկայացնեմ։

— Ի՞նչ եք ասում,— ասացի ես՝ ձեռքերս իրար զարկելով,— մի՞թե հերոսներին ներկայացնում են։ Նրանք այլ կերպ չեն ծանոթանում, քան անխուսափելի մահից բռնեց սիրեցյալին փրկելով։

— Եվ դուք իսկապե՞ս ցանկանում եք քարշ գալ իշխանադստեր ետևից։

— Ընդհակառակը՝, միանգամայն հակառակը... Բժիշկ, վերջապես ես հաղթանակեցի. դուք ինձ չհասկացա՞ք։ Ասենք, այդ ինձ վշտացնում է, բժիշկ,— շարունակեցի բոպեական լռությունից հետո։ — Ես երբեք ինքս բաց չեմ անում իմ գաղտնիքները, այլ անչափ սիրում եմ, որ գուշակեն, որովհետև այդպիսով միշտ կարող եմ առիթը եկած դեպքում ժխտել։ Սակայն դուք պետք է նկարագրեք ինձ մայրիկին և իր աղջկան։ Ի՞նչ մարդիկ են նրանք։

— Նախ իշխանուհին մոտ 45 տարեկան կին է,— պատասխանեց Վերները,— նրա ստամոքսը հիանալի վիճակում է, բայց արյունը փչացած է. այտերին կարմիր բծեր կան։ Իր

կյանքի վերջին կեսը նա Մոսկվայում է անցկացրել և այդտեղ հանգստավետ ապրելուց հաստացել է։ Նա սիրում է գայթակղիչ անեկտոդներ և ինքն էլ երբեմն անվայելուչ բաներ է ասում, երբ աղջիկը սենյակում չի լինում։ Նա ինձ հայտարարեց, որ աղջիկը աղավնու պես անմեղ է։ Իմ ի՞նչ գործն է... Ես ուզում էի պատասխանել, որպեսզի նա հանգիստ լինի, որ այդ ոչ ոքի չեմ ասի։ Իշխանուհին բուժվում է ռևմատիզմից, իսկ աղջիկը՝ աստված գիտե, թե ինչից։ Երկուսին էլ կարգադրեցի օրական երկուական բաժակ ծծմբաթթու ջուր խմել և շաբաթը երկու անգամ լողանալ հանքաջրին հասարակ ջուր խառնած վաննայում։ Իշխանուհին կարծեմ հրամայելու սովոր չէ. նա հարգանք է տածում իր աղջկա խելքին ու գիտելիքներին, աղջիկ, որն անգլերեն է կարդացել Բայրոն ու հանրահաշիվ գիտե։ Մոսկվայում, ինչպես երևում է, օրիորդները գիտության են ձգտում և լավ էլ անում են, ազնի՞վ խոսք։ Մեր տղամարդիկ առհասարակ այնպես անսիրալիր են, որ նրանց հետ կոկետություն անելը խելոք կնոջ համար պետք է որ անտանելի լինի։ Իշխանուհին շատ է սիրում երիտասարդ տղամարդկանց, իսկ իշխանադուստրը որոշ արհամարհանքով է նայում սրանց. մոսկովյան սովորություն է։ Նրանք Մոսկվայում մի՞միայն քառասնամյա սրախոսներով են սնվում։

— Իսկ դուք Մոսկվայում եղե՞լ եք, բժիշկ։

— Այո՛, ես այնտեղ որոշ պրակտիկա եմ ունեցել։

— Շարունակեցեք։

— Ես կարծեմ բոլորն ասացի։ Հա՛, ևս մի բան. իշխանադուստրը, կարծեմ, սիրում է դատողություններ անել զգացմունքների, կրքերի մասին և այլն... Նա մի ձմեռ եղել է Պետերբուրգում, և Պետերբուրգը նրան դուր չի եկել, մանավանդ՝ Պետերբուրգի հասարակությունը. երևի սառն են ընդունել։

— Դուք այսօր նրանց մոտ ոչ ոքի չտեսա՞ք։

— Ընդհակառակը. կար մի համհարզ, մի ձգված գվարդիական և ինչ-որ նորեկ տիկին, որ իշխանուհու ամուսնու աղգականուհին՝ շատ սիրունիկ, բայց, կարծեմ, շատ հիվանդ մի կին։ Արդյոք ջրհորի մոտ չհանդիպեցի՞ք. նա միջահասակ է, խարտյաշ, կանոնավոր դիմագծերով, երեսի գույնը թոքախտավորի է, իսկ աչ այտին խալ ունի։ Նրա դեմքն ինձ զարմացրեց իր արտահայտությամբ։

— Խա՛լ,— շշնջացի ես ատամներիս արանքից...— Մի՞թե։

Բժիշկը նայեց ինձ և ձեռքը սրտիս դնելով, հանդիսավոր ասաց. «Դուք ծանոթ եք նրան»... Իմ սիրտը ճիշտ որ սովորականից ուժեղ էր բաբախում։

— Հիմա հաղթանակող հանդիսանալու հերթը ձերն է,— ասացի ես,— բայց վստահ եմ ձեր վերաբերմամբ. դուք ինձ չեք դավաճանի։ Ես նրան դեռ չեմ տեսել, բայց հավատացած եմ, որ ձեր նկարագրածով կճանաչեմ մի կնոջ, որին անցյալում սիրել եմ։ Նրան իմ մասին ոչ մի խոսք չասեք։ Եթե հարցնելու լինի, իմ մասին վատ արտահայտվեցեք։

— Խնդրեմ,— ասաց Վերները՝ ուսերը թոթվելով։

Երբ նա գնաց, սոսկալի մի վիշտ նեղեց իմ սիրտը։ Արդյոք ճակատագի՞րն է նորից հանդիպեցնում մեզ Կովկասում, թե նա դիտմամբ է այստեղ ֆկել, իմանալով, որ ինձ կհանդիպի... Եվ ինչպե՞ս կհանդիպենք մենք... և ապա... արդյո՞ք այդ նա է... Իմ նախազգացումներն ինձ երբեք չեն խաբել։ Աշխարհում չկա մի մարդ, որի վրա անցյալն այնպիսի իշխանություն ձեռք բերած լինի, ինչպես ինձ վրա։ Անցած տխրության կամ ուրախության ամեն մի հիշեցում ցավագին զարկում է իմ հոգուն և նրանից կորզում նախկին հնչյունները։ Ես հիմար ձևով եմ ստեղծված. ոչի՞նչ չեմ մոռանում, ոչի՞նչ։

Ճաշից հետո ժամը մոտավորապես վեցին ես գնացի զբոսայգի։ Այնտեղ բազմություն էր հավաքվել։ Իշխանուհին իր աղջկա հետ նստած էր նստարանին։ Նրանց շրջապատել էր երիտասարդությունը, որն անընդհատ սիրալիր զրույցով էր զբաղեցնում նրանց։ Ես տեղավորվեցի փոքր-ինչ հեռու գտնվող մի նստարանի վրա, կանգնեցրի երկու ծանոթ Դ... սպաների և սկսեցի նրանց ինչ-որ բան պատմել։ Երևի պատմածս ծիծաղելի բան էր, որովհետև սպաները խենթի պես քրքջում էին։ Հետաքրքրությունն իմ կողմը գրավեց իշխանադուստրը շրջապատողներից մի քանիսին։ Կամաց-կամաց բոլորն էլ թողեցին նրան ու միացան իմ խմբակին։ Ես չէի լռում, իմ անեկդոտները հիմար լինելու աստիճան խելացի էին, իմ ծաղրը մեր առջևով անցնող ինքնատիպ մարդկանց նկատմամբ՝ մոլեգնության աստիճան չար... Ես շարունակեցի ուրախացնել հասարակությանը մինչև մայրամուտ։ Իշխանա-

դուստրը, մորը թեանցուկ արած, մի քանի անգամ անցավ իմ մոտով, ինչ-որ կաղ ծերուկի ուղեկցությամբ։ Իշխանադուստր հայացքը, ինձ վրա ընկնելով, մի քանի անգամ դժգոհություն արտահայտեց, ջանալով անտարբեր ձևանալ։

— Նա ձեզ ի՞նչ էր պատմում,— հարցրեց նա այն երիտասարդներից մեկին, որ քաղաքավարությունից դրդված՝ իր մոտ էր վերադարձել.— երևի շատ զվարճալի պատմություն, իր մարտական քաջագործությունները։ — Նա բավական բարձրաձայն ասաց այդ և, երևի, ինձ խայթելու միտումով։ «Էհ՛,— մտածեցի ես,— դուք լրջորեն բարկանում եք, սիրելի իշխանադուստր։ Սպասեցե՛ք. դեռ ինչե՞ր են լինելու»։

Գրուշնիցկին նրան հետևում էր գիշատիչ գազանի պես և աչքերը չէր հեռացնում։ Գրազ եմ գալիս, որ վաղը նա կխնդրի, որպեսզի մեկնումեկն իրեն ներկայացնի իշխանուհուն։ Իշխանուհին շատ ուրախ կլինի, որովհետև ձանձրանում է։

16-ի մայիսի

Երկու օրվա ընթացքում իմ գործերը սաստիկ առաջ են գնացել։ Իշխանադուստրն ատելով ատում է ինձ։ Արդեն պատմել են իմ հասցեին ուղղած երկու-երեք էպիգրամի բովանդակությունը, էպիգրամներ, որոնք բավականաչափ խայթիչ են, բայց միաժամանակ ինքնասիրություն շոյող։ Նրա համար շատ տարօրինակ է, որ ես սովոր լինելով լավ հասարակության, մոտիկից ծանոթ լինելով իր պետերբուրգյան հորեղբոր ու մորաքրոջ աղջիկներին և մորաքույրներին, չեմ աշխատում իր հետ ծանոթանալ։ Մենք ամեն օր հանդիպում ենք իրար ջրհորի մոտ, զբոսայգում, ես իմ բոլոր ուժերը գործ եմ դնում, որպեսզի նրանից խլեմ իր երկրպագուներին, փայլուն համհարզներին, դալուկ մոսկվացիներին և ուրիշներին, և ինձ համարյա միշտ հաջողվում է։ Ես միշտ ատել եմ ինձ մոտ հյուրեր ունենալը։ Այժմ իմ տունն ամեն օր լիքն է. ճաշում են, ընթրում, թուղթ խաղում, և, ավա՜ղ, դուրս է գալիս, որ իմ շամպայնը նրա աչկների մագնիսական ուժից զորեղ է։

Երեկ նրան հանդիպեցի Զելախովի խանութում. նա մի հիանալի պարսկական գորգ էր սակարկում։ Իշխանադուստրն աղաչում էր մայրիկին ժլատություն չանել. այդ գորգն այնպե՞ս կզարդարեր իր առանձնասենյակը... Ես 40 ռուբլի ավելի վճարեցի և գնեցի գորգը։ Դրա համար նա վարձահատույց եղավ մի հայացքով, որի մեջ փայլում էր ամենասքանչելի կատաղությունը։ Ճաշի մոտերքը ես կարգադրեցի դիտմամբ նրա պատուհանների մոտով անցկացնել այդ գորգով ծածկած իմ չերքեզական ձին։ Վերներն այդ միջոցին նրանց մոտ էր եղել և ինձ ասում էր, որ այդ տեսարանը խիստ դրամատիկ տպավորություն է առաջացրել։ Իշխանադուստրն ուզում է աշխարհազոր հանել իմ դեմ։ Նույնիսկ նկատել եմ, որ արդեն երկու համհարզ նրա ներկայությամբ ինձ շատ չոր են բարևում, սակայն ամեն օր ինձ մոտ են ճաշում։

Գրուշնիցկին խորհրդավոր տեսք է ընդունել, շրջում է՝ ձեռքերը ետևը դրած ու ոչ ոքի ծանոթություն չի տալիս։ Նրա ոտքն անակնկալ կերպով առողջացել է. հազիվ է կաղում։ Նա առիթ է գտել խոսակցության բռնվելու իշխանուհու հետ և ինչ-որ կոմպիլմենտ ասելու իշխանադստերը։ Իշխանուհին, ինչպես երևում է, շատ էլ բծախնդիր չէ, որովհետև դրանից հետո Գրուշնիցկու բարևին պատասխանում է ամենասիրալիր ժպիտով։

— Դու բացարձակապես չե՞ս ուզում ծանոթանալ Լիգովսկայաների հետ,— ասաց նա ինձ երեկ։

— Բացարձակապես։

— Ի՞նչ ես ասում. ամենահաճելի տունն է այս ջրերում։ Այստեղի ողջ լավագույն հասարակությունը...

— Բարեկա՛մս, ինձ ոչ-այստեղինն էլ սոսկալի ձանձրացրել է։ Իսկ դու նրանց մոտ լինու՞մ ես։

— Դեռևս ոչ. մի երկու անգամ խուսել եմ իշխանադստեր հետ, ոչ ավելի։ Գիտես, երեսի զոռով մարդու տուն ընկնելն անհարմար է, թեպետ դա այստեղ կիրառվում է։ Ուրիշ բան է, եթե ես էպոլետներ ունենայի։

— Ի՞նչ ես ասում. դու այսպես շա՜տ ավելի հետաքրքրական ես։ Դու պարզապես չես կարողանում օգտվել քո շահեկան դրությունից... Զինվորի շինելը հերոս և տառապյալ է դարձնում քեզ ամեն մի զգայուն օրիորդի աչքում։

Գրուշնիցկին ինքնաբավական ժպտաց։

— Դատարկ բան ես ասում,— ասաց նա։

— Հավատացած եմ,— շարունակեցի ես,— որ իշխանադուստրն արդեն իսկ սիրահարված է քեզ։

Նա մինչև ականջները կարմրեց ու փքվեց։

Օ՜, ինքնասիրություն, դու այն լծակն ես, որով Արքիմեդը կամենում էր երկրագունդը բարձրացնել...

— Դու միշտ կատակում ես,— ասաց նա, ցույց տալով, իբր թե բարկանում է,— նախ՝ նա դեռ ինձ այնքան քիչ է ճանաչում...

— Կանայք սիրում են միայն նրանց, ում չեն ճանաչում։

— Նրան դուր գալու հավակնություն բնավ էլ չունեմ. պարզապես ուզում եմ ծանոթանալ հաճելի տան հետ, և շատ ծիծաղելի կլիներ, եթե որևէ հույս ունենայի... Ա՛յ, դուք, օրինակ, ուրի՞շ. դուք՝ պետերբուրգյան հաղթողներդ, նայում եք թե չէ, կանայք հալչում են... Իսկ գիտե՞ս, Պեչորին, թե իշխանադուստրը քո մասին ինչ է ասել...

— Ինչպե՞ս, նա քեզ հետ արդեն խոսե՞լ է իմ մասին...

— Բայց մի՛ ուրախանա։ Ես մեկ անգամ պատահմամբ խոսակցության մեջ մտա նրա հետ ջրհորի մոտ։ Նրա երրորդ խոսքը եղավ. «Ո՞վ է այդ պարոնը, որ այդպիսի տհաճ, ծանր հայացք ունի. նա ձեզ հետ էր այն ժամանակ...»։ Նա կարմրեց և չէր ուզում տալ այն օրվա անունը, հիշելով իր սիրալիր վարմունքը։ Կարիք չկա, որ դուք օրն ասեք,— պատասխանեցի ես նրան,— այդ օրը հավերժ հիշելի կլինի ինձ համար... Բարեկա՛մս, Պեչո՛րին, ես քեզ չեմ շնորհավորում. դու նրա մոտ վատ համարում ունես... Բայց ափսո՛ս, որովհետև Մերին շա՛տ սիրելի է։

Հարկավոր է նկատել, որ Գրուշնիցկին այն մարդկանցից է, որոնք, խոսելով մի կնոջ մասին, որին հպիվ ծանոթ են, անվանում են նրան իմ Մերի, իմ Sophie!, եթե սա բախտ է ունեցել նրանց դուր գալու։

Ես լուրջ տեսք ընդունեցի և պատասխանեցի.

— Այո՛, նա տգեղ չէ։ Միայն թե զգուշացի՛ր, Գրուշնիցկի։ Ռուս օրիորդները մեծ մասամբ պլատոնական սիրով են սնվում, առանց ամուսնության միտք խառնելու դրան, իսկ պլատոնական սերն ամենաանհանգիստն է։ Իշխանադուստրը կարծեմ այն կանանցից է, ովքեր ցանկանում են, որ իրենց զվարճացնեն։ Եթե երկու բոպե իրար վրա նա քեզ մոտ ձանձրանա, դու անդարձ կորած ես։ Քո լռությունը պետք է գրգռի նրա հետաքրքրությունը, քո խոսակցությունը երբեք չպետք է լիովին բավարարի այդ հարցասիրությունը, դու պետք է

ամեն բոպե անհանգստացնես նրան։ Նա հրապարակով քեզ համար տասն անգամ կարհամարհի կարծիքները և այդ զոհաբերություն կանվանի ու դրա փոխարեն իրեն վարձատրելու համար, կսկսի քեզ տանջել, իսկ հետո պարզապես կասի, թե ինքը քեզ հիմա տանել չի կարող։ Եթե դու իշխանություն ձեռք չբերես նրա նկատմամբ, ապա նրա առաջին համբույրն անգամ երկրորդի իրավունք չի տա քեզ. նա քեզ հետ սիրուն ուզածի չափով կոկետություն կանի, իսկ մի-երկու տարուց հետո, մայրիկին հնազանդ լինելու հետևանքով, կամուսնանա որևէ այլանդակի հետ և կսկսի քեզ հավատացնել, թե ինքը դժբախտ է, թե ինքը միայն մի մարդու է սիրել, այսինքն՝ քեզ, բայց երկինքը չի կամեցել իրեն միացնել այդ մարդու հետ, որովհետև նրա հագին գորշ շինել է եղել, թեպետ այդ հաստ գորշ շինելի տակ տրոփել է մի կրքոտ և ազնիվ սիրտ...

Գրուշնիցկին բռունցքը խփեց սեղանին և սկսեց ետ ու առաջ քայլել սենյակում։

Ես ներքուստ քրքջում էի, և նույնիսկ երկու անգամ ժպտացի, բայց նա, բարեբախտաբար, այդ չնկատեց։ Ակնհայտ է, որ նա սիրահարված է, որովհետև առաջվանից ավելի դյուրահավատ է դարձել։ Նրա մատին մինչևիսկ արծաթե մատանի է երևացել՝ այստեղ շինված, սևով գրված մատանի, որ ինձ կասկածելի թվաց... Ես սկսեցի տնտղել այդ մատանին, և ի՞նչ... Մերի անունը փոքր տառերով քանդակված էր նրա ներսի կողմում և դրա կողքին՝ այն օրվա թիվը, երբ Մերին գետնից վերցրեց նշանավոր բաժակը։ Ես թաքցրի իմ գյուտը. չեմ ուզում նրա բերանից զոռով խոստովանություն կորզել։ Ուզում եմ, որ նա ինքն ինձ իր հավատարմատարն ընտրի։ Ահա այդտեղ է, որ ես կհրճվեմ...

Այսօր ուշ վերկացա։ Գալիս եմ ջրհորի մոտ։ Արդեն ոչ ոք չկա։ Շոգն սկսվում էր։ Սպիտակ բրդոտ ամպերն արագ փախչում էին ձյունապատ սարերից՝ խոստանալով մրրիկ։ Մաշուկի գլուխը ծխում էր, ինչպես հանգցրած ջահ։ Նրա շուրջը ոլորվում և օձերի պես սողում էին ամպերի գորշ պատառները, որոնց ընթացքը կասեցրել էին և որոնք կարծես նկել էին Մաշուկի փշոտ թփերից։ Օդը հագեցած էր էլեկտրականությամբ։ Ես մտա խաղողի ծառուղու խորքը, ծառու-

զի, որ տանում է դեպի քարանձավը։ Տխուր էի։ Մտածում էի այտին խալ ունեցող այն երիտասարդ կնոջ մասին, որի մասին ինձ պատմել էր բժիշկը։ Ինչո՞ւ է նա այստեղ։ Եվ նա՞ է արդյոք։ Եվ ինչո՞ւ եմ կարծում, թե նա է, և ինչո՞ւ նույնիսկ այսքան հավացատած եմ։ Այտերին խալեր ունեցող քի՞չ կանայք կան։ Այսպես խորհրդածելով, մոտեցա բուն քարանձավին։ Տեսնեմ կամարի զովարար ստվերում, քարե նստարանի վրա նստած է մի կին՝ ծղոտե շլյապան դրած, սև շալով փաթաթված գլուխը կրծքին կախած։ Շլյապան ծածկում էր նրա դեմքը։ Ուզում էի արդեն ետ դառնալ, որպեսզի չխանգարեմ նրա անրջանքը, երբ նա ինձ նայեց։

— Վերա՜,— ակամա բացականչեցի ես։

Նա ցնցվեց ու գունատվեց։ «Գիտեի, որ այստեղ եք»,— ասաց նա։ Ես նստեցի նրա մոտ և բռնեցի ձեռքը։ Այդ սիրելի ձայնի հնչյունը լսելով՝ վաղուց մոռացված սարսուռն անցավ իմ երակներով։ Նա իմ աչքերի մեջ նայեց իր խոր և հանգիստ աչքերով։ Դրանց մեջ կար անվստահության և հանդիմանության նման մի արտահայտություն։

— Վաղուց է, որ մենք չենք տեսնվել,— ասացի ես։

— Վաղուց, և երկուսս էլ շա՜տ բանով ենք փոխվել։

— Ուրեմն՝ դու այլևս ինձ չե՞ս սիրում։

— Ես ամուսնացած եմ...— ասաց նա։

— Դարձյա՞լ։ Սակայն մի քանի տարի առաջ այդ պատճառն էլի գոյություն ուներ, այնինչ...

Նա իր ձեռքը դուրս քաշեց իմ ձեռքից, և նրա այտերը բռնկվեցին...

— Դուցե դու սիրու՞մ ես քո երկրորդ ամուսնուն...

Նա չպատասխանեց և երեսը շուռ տվեց։

— Թե՞ նա շատ խանդոտն է։

Լռություն։

— Ի՞նչ։ Նա երիտասարդ է, գեղեցիկ, մանավանդ երևի հարուստ, և դու վախենում ես...— Ես նայեցի նրան ու վախեցա։ Նրա դեմքն արտահայտում էր խոր հուսահատություն, աչքերում արցունքներ էին փայլում։

— Ասա՛, ինձ,— վերջապես շշնջաց նա,— քեզ շա՞տ է ուրախացնում ինձ տանջելը։ Ես պետք է ատեի քեզ։ Այն օրից, ինչ մենք իրար ճանաչում ենք, դու ինձ տանջանքներից

բացի, ոչինչ չես տվել...— Նրա ձայնը դողում էր, նա թեքվեց իմ կողմը և գլուխը խոնարհեց կրծքիս։

«Գուցե,— մտածեցի ես,— դու հենց դրա համար էլ սիրել ես ինձ. ուրախությունները մոռացվում են, իսկ վշտերը՝ երբեք»...

Ես ամուր գրկեցի նրան, և մենք այդպես երկար մնացինք։ Վերջապես մեր շրթունքները մոտեցան և միացան բոցավառ, արբեցնող համբույրով։ Նրա ձեռքերը սառցի պես սառն էին, գլուխն այրվում էր։ Այստեղ մեր միջև սկսվեց մեկն այն խոսակցություններից, որ թղթի վրա առնվելով՝ իմաստ չեն ունենում, որ չի կարելի կրկնել և չի կարելի մինչև իսկ մտքում պահել։ Հնչյունների նշանակությունը փոխարինում է բառերին և լրացնում դրանց իմաստը, ինչպես իտալական օպերայում։

Նա բացարձակապես չի ուզում, որ ես ծանոթանամ իր ամուսնու հետ, այն կաղ ծերուկի, որին ես հարևանցիորեն տեսա զբոսայգում. Վերան ամուսնացել էր դրա հետ իր որդու համար։ Վերայի ամուսինը հարուստ է և ռևմատիզմով հիվանդ։ Ես ոչ մի ծաղր թույլ չտվի նրա հասցեին. Վերան հարգում է նրան հոր պես և խաբելու է ամուսնու պես... Տարօրինա՜կ բան է մարդկային սիրտն ընդհանրապես և կնոջը՝ մանավանդ։

Վերայի ամուսինը՝ Սեմյոն Վասիլևիչ Գ...վը, իշխանուհի Լիգովսկայայի հեռավոր ազգականն է։ Նա ապրում է իշխանուհու հարևանությամբ։ Վերան հաճախ է լինում իշխանուհու մոտ. ես խոսք տվի Վերային ծանոթանալ Լիգովսկայայի հետ և քարշ գալ իշխանադստեր հետևից, որպեսզի ամուսնու ուշադրությունը հեռացնեմ Վերայից։ Այսպիսով, իմ ծրագրերը բոլորովին չխախտվեցին, և ես ուրախ ժամանակ կանցկացնեմ...

Ուրա՜խ... Այո՛, արդեն անցել եմ հոգեկան կյանքի այն շրջանը, երբ միայն երջանկություն են փնտրում, երբ սիրտը մեկնումեկին ուժեղ ու կրքոտ կերպով սիրելու անհրաժեշտություն է զգում։ Այժմ ես միայն ցանկանում եմ սիրված լինել, այն էլ շատ քչերի կողմից, մինչև անգամ ինձ թվում է, մի մնայուն կապն իսկ ինձ համար բավական-կլիներ։ Սրտի մի ողորմելի սովորություն...

Մի բան, սակայն, ինձ միշտ տարօրինակ էր թվում։ Ես երբեք սիրածս կնոջ ստրուկը չէի դառնում։ Ընդհակառակը, միշտ անհաղթահարելի իշխանություն էի ձեռք բերում նրանց կամքի և սրտի վրա, դրա համար բոլորովին հոգ տարած չլինելով։ Ինչի՞ց է այդ. արդյոք նրանի՞ց, որ ես երբեք ոչ մի բան շատ չեմ ափսոսում, և որ նրանք ամեն րոպե վախենում էին ինձ ձեռքից բաց թողնել, թե՞ դա ուժեղ օրգանիզմի մագնիսական ազդեցություն է։ Թե՞ ինձ ուղղակի չի հաջողվել համառ կամքի տեր կնոջ հանդիպել։

Պետք է խոստովանել, որ ես, իսկապես, չեմ սիրում ուժեղ բնավորության տեր կանանց. ի՞նչ նրանց բանն է այդ ուժեղ բնավորությունը...

Ճիշտ է, հիմա հիշեցի։ Մի անգամ, միայն մի անգամ եմ սիրել ուժեղ կամք ունեցող մի կնոջ, որին երբեք չեմ կարողացել հաղթել... Մենք բաժանվել ենք որպես թշնամիներ, այն էլ, եթե ես նրան մի հինգ տարի ուշ պատահեի, մենք այլ կերպ կբաժանվեինք...

Վերան հիվանդ է, շատ հիվանդ, թեպետ այդ չի խոստովանում։ Վախենում եմ, որ նրա հիվանդությունը թոքախտ լինի կամ այն հիվանդությունը, որ անվանում են fievre lente*, մի հիվանդություն, որ բոլորովին ռուսական չէ և որ մեր լեզվում իր ունունը չունի։

Փոթորիկը վրա հասավ այն ժամանակ, երբ մենք քարանձավում էինք, և մի կես ժամով ավելի պահեց մեզ այնտեղ։ Վերան ինձ չհարկադրեց երդվել, որ հավատարիմ կմնամ իրեն, չհարցրեց, արդյոք մեր բաժանվելուց հետո ուրիշներին սիրե՞լ եմ, թե՞ ոչ... Նա նորից անձնատուր եղավ ինձ նախկին անհոգությամբ, և ես նրան չեմ խաբի։ Նա աշխարհում միակ կինն է, որին անկարող կլինեի խաբել։ Գիտեմ, մենք շուտով նորից կբաժանվենք և, գուցե, առհավետ։ Երկուսս էլ տարբեր ճանապարհներով կգնանք մինչև գերեզման, բայց նրա հիշատակն անձեռնմխելի կմնա իմ հոգում։ Ես սա միշտ կրկնել եմ նրա ներկայությամբ, և նա ինձ հավատում է, թեպետև հակառակն է ասում։

* Հյուծող տենդ (ֆր.)։

Վերջապես մենք բաժանվեցինք։ Ես երկար հետևեցի նրան հայացքով, մինչև որ նրա շլյապան ծածկվեց թփերի և ժայռերի ետևում։ Իմ սիրտը ցավագին սեղմվեց, ինչպես առաջին բաժանման ժամանակ։ Օ՜, ինչպես ուրախացա այս զգացմունքի համար։ Չլինի՞, թե երիտասարդությունս է ուզում վերադառնալ իր բարերար փոթորիկներով, թե՞ այդ լոկ նրա հրաժեշտի հայացքն է, վերջի՜ն նվերը՝ ի հիշատակ... Բայց ծիծաղելի է մտածել, որ արտաքուստ ես դեռ մանուկ եմ. դեմքս թեև գունատ է, սակայն դարձյալ թարմ է, մարմնիս անդամները ճկուն են և բարեկազմ, խիտ գանգուրներս ոլորուն են, աչքերս բոցավառ, արյունս եռ է գալիս...

Տուն վերադառնալով, ձի նստեցի և տափաստան սլացա։ Սիրում եմ, կրակոտ ձի նստած, սուրալ բարձր խոտի միջով, անապատային քամու դիմաց։ Ագահությամբ կուլ եմ տալիս բուրումնալից օդը, և հայացքս ուղղում կապույտ հեռվին՝ ջանալով որսալ առարկաների մշուշապատ ուրվագծերը, որոնք ավելի ու ավելի են պարզվում։ Ինչ վիշտ էլ ծանրացած լինի սրտիս, ինչ անհանգստություն էլ չարչարելիս լինի միտքս, բոլորը րոպեապես ցնդում է. հոգիս թեթևանում է, մարմնիս հոգնածությունը հաղթում է մտքիս անհանգստությանը։ Չկա կանացի հայացք, որ ես չմոռանամ՝ հարավային արևով լուսազարդված գանգուր սարեր, կապույտ երկինք տեսնելիս կամ ժայռից-ժայռ թավալվող վտակի աղմուկին ունկնդրելիս։

Ես կարծում եմ, որ իրենց աշտարակներում հորանջող կազակները, ինձ առանց անհրաժեշտության և առանց նպատակի սուրալիս տեսնելով, երկար կտանջվեն այդ հանելուկից, որովհետև հավանորեն հագուստիցս ինձ չերքեզի տեղ դրին։ Ինձ, իրոք, ասում էին, որ չերքեզական հագուստով ձի նստած ժամանակ ես ավելի եմ նման կաբարդացու, քան կաբարդացիներից շատերը։ Եվ ճիշտ որ, ինչ վերաբերում է այդ ազնիվ մարտական հագուստին, ես կատարյալ դենդի եմ. ոչ մի ավելորդ տրեզ. թանկարժեք զենքս ունի պարզ զարդարանք, գոգակիս մորթու մազը ո՜չ շատ երկար է, ո՜չ շատ կարճ, սոնապաններս և քոշերս կարված են ճիշտ և ճիշտ իմ ոտքերի չափով, բեշմեթս սպիտակ է, չերքեզիս՝ մուգ գորշագույն։ Ես երկար եմ ուսումնասիրել լեռնցիների կեցվածքը ձիու վրա։ Ոչ մի բանով իմ ինքնասիրությունն այնպես չեք

շոյի, ինչպես կովկասյան ձևով ձի քշելու իմ վարպետությունն ընդունելով։ Ես չորս ձի եմ պահում. մեկն ինձ համար, երեքը՝ բարեկամներիս, որպեսզի դաշտերով քարշ գալս ձանձրալի չլինի։ Նրանք հաճույքով են վերցնում իմ ձիերը և երբեք ինձ հետ միատեղ չեն քշում։

Արդեն երեկոյան ժամը վեցն էր, երբ հիշեցի, որ ճաշելու ժամանակ է։ Ձիս հոգնել էր։ Դուրս եկա այն ճանապարհը, որ Պյատիգորսկից տանում է դեպի գերմանական գաղութը, ուր հանքաջրերի հասարակությունը հաճախ գնում է en piquenique*։ Ճանապարհը գալարվում է թփերի միջով, իջնելով փոքրիկ ձորակներ, որտեղ բարձր խոտերի հովանու տակ աղմկոտ գետակներ են հոսում։ Շուրջը ամֆիթատրոնի ձևով բարձրանում են Բեշտու, Օձասար, Երկաթասար և Ճաղատ սարերի կապույտ հսկա զանգվածները։ Այստեղի բարբառով բալկա կոչվող այդպիսի ձորակներից մեկն իջնելով, ես կանգ առա՝ ձին ջրելու։ Այդ պահին ճանապարհին երևաց աղմկոտ և փայլուն մի կավալկադ — կանայք սև՝ ու երկնագույն ամազոնեներով, տղամարդիկ շերեզականի և Նիժնի-Նովգորոդի հագուստների խառնուրդ հանդիսացող զգեստներով։ Առջևից ձիով գնում էր Գրուշնիցկին՝ իշխանադուստր Մերիի հետ։

Հանքային ջրեր եկող կանայք դեռևս հավատում են, թե չերքեզներն օրը ցերեկով հարձակումներ են գործում։ Երևի այդ պատճառով է, որ Գրուշնիցկին իր շարքային զինվորի շինելի վրայից թուր և մի զույգ էլ ատրճանակ է կապել։ Նա բավական ծիծաղելի էր իր այդ հերոսական հանդերձավորմամբ։ Բարձր թուփը ծածկում էր ինձ, բայց թփի տերևների միջից ես կարողացա տեսնել ամեն ինչ և նրանց դեմքի արտահայտությունից գուշակել, որ խոսակցությունը սենտիմենտալ բնույթ ունի։ Վերջապես նրանք մոտեցան վայրէջքին։ Գրուշնիցկին իր ձեռքն առավ իշխանադստեր ձիու սանձը, և այն ժամանակ ես լսեցի նրանց խոսակցության վերջը.

— Եվ դուք ձեր ամբողջ կյանքն ուզում եք անցկացնել Կովկասում՝,— ասաց իշխանադուստրը։

* Զվարճալի խմբական զբոսանք և նախաճաշ քաղաքից դուրս (Ֆր.)։

— Ռուսաստանն ի՞նչ է ինձ համար,— պատասխանեց նրա կավալերը,— մի երկիր, որտեղ հազարավոր մարդիկ արհամարհանքով պիտի նայեն ինձ վրա, որովհետև իրենք ինձնից հարուստ են, մինչդեռ այստեղ... այստեղ այս հաստ շինելը չխանգարեց, որ ես ծանոթանամ ձեզ հետ...

— Ընդհակառակը...— ասաց իշխանադուստրը՝ կարմրելով։

Գրուշնիցկու դեմքը հաճույք արտահայտեց։ Նա շարունակեց։

— Այստեղ իմ կյանքն աղմկոտ, աննկատելի և արագ կանցնի վայրենիների գնդակների տակ, և եթե աստված ամեն տարի ինձ ուղարկի մի պայծառ կանացի հայացք, մեկը՝ նման այն հայացքին...

Այդ պահին նրանք հավասարվեցին ինձ. ես մտրակեցի ձիս և դուրս եկա ետևից...

— Mon dieu, un circassien...*— բացականչեց սարսափած իշխանադուստրը։

Նրան բոլորովին հակառակն ապացուցելու համար, ես ֆրանսերեն պատասխանեցի, թեթևակի կռանալով.

— Ne craignez rien, madame, je ne suis pas plus dangereux que votre cavalier**.

Իշխանադուստրը շփոթվեց, բայց ինչի՞ց՝ իր սխալի՞ց, թե՞ այն բանից, որ իմ պատասխանը հանդուգն թվաց։ Ես կուզեի, որ իմ վերջին ենթադրությունը ճիշտ լիներ։ Գրուշնիցկին դժգոհ հայացք գցեց վրաս։

Ուշ երեկոյան, այսինքն՝ ժամը մոտ տասնմեկին, գնացի լորինների ծառուղում զբոսնելու։ Քաղաքը քնած էր, միայն մի քանի պատուհաններից էր լույս երևում։ Երեք կողմից սևին էին տալիս ժայռերի կատարները, Մաշուկի ճյուղավորումները, որի գագաթին չարագույժ ամպ կար. արևելքում բարձրանում էր լուսինը. հեռվում արծաթե ծոպերի պես շողում էին ձյունապատ սարերը։ Ժամապահների կանչերը և գիշերը բաց թողած տաք աղբյուրների ջրի աղմուկը հաջորդում էին իրար։ Երբեմն փողոցներում լսվում էր ձիու ոտքերի

* Աստվա՞ծ իմ, չերքեզը (ր.)։

** Մի՛ վախեցեք, տիրուհի, ես ավելի վտանգավոր չեմ, քան ձեր կավալերը։

հնչեղ դուփյուն, որին ուղեկցում էր նոգայական սայլի ճռռոցը և թաթարական թախծոտ երգի կրկներգը։ Ես նստեցի նստարանին և մտքի մեջ ընկա... Անհրաժեշտություն էի զգում մտքերս արտահայտելու բարեկամական մի խոսակցության մեջ... բայց ո՞ւմ հետ... Հիմա ի՞նչ է անում Վերան,— մտածում էի ես... Ես թանկ կվճարեի, եթե կարողանայի այս րոպեին սեղմել նրա ձեռքը։

Հանկարծ լսում եմ արագ և անհավասար քայլերի ձայն... Երևի Գրուշնիցկին է... Այդ է որ կա։

— Որտեղի՞ց։

— Իշխանուհի Լիգովսկայայի մոտից,— ասաց նա խիստ ծանրակշիռ տոնով։ — Ինչպե՞ս է երգում Մերին...

— Գիտե՞ս ինչ,— ասացի նրան,— գրազ եմ գալիս, որ նա չգիտե, թե դու յունկեր ես. կարծում է, թե սպայական աստիճանից ես զրկված...

— Կարող է պատահել։ Ինձ ի՞նչ...— ցրված ասաց նա։

— Հենց այնպես եմ ասում...

— Իսկ գիտե՞ս, որ դու այսօր նրան սաստիկ բարկացրիր։ Նա գտավ, որ այդ չլսված հանդգնություն է։ Հազիվ կարողացա համոզել, որ դու այնքան լավ ես դաստիարակված և այնպես լավ ես ճանաչում բարձր հասարակությունը, որ նրան վիրավորելու մտադրություն ունենալ չէիր կարող։ Նա ասում է, թե դու լկտի հայացք ունես, թե դու երևի ամենաբարձր կարծիքի ես քո մասին։

— Նա չի սխալվում... Իսկ դու չե՞ս կամենում արդյոք նրան պաշտպանել։

— Ես ափսոսում եմ, որ դեռ այդ իրավունքը չունեմ...

«Օհո՜,— մտածեցի ես,— սա, երևի, արդեն հույսեր ունի»...

— Սակայն ավելի վատ քեզ համար,— շարունակեց Գրուշնիցկին,— հիմա քեզ համար դժվար է նրանց հետ ծանոթանալ, — բայց ափսո՜ս. ինձ ծանոթ բոլոր տներից սա ամենահաճելին է...

Ես ներքուստ ժպտացի։

— Ինձ համար ամենահաճելի տունը հիմա իմն է,— ասացի ես՝ հորանջելով ու ոտքի ելա, որպեսզի գնամ։

— Բայց խոստովանիր, որ զղջում ես։

— Ի՞նչ անհեթեթություն, եթե ցանկանամ, վաղը երեկոյան ևեթ կլինեմ իշխանուհու մոտ...

— Կտեսնե՞նք...

— Մինչևիսկ քեզ հաճույք պատճառելու համար կսկսեմ քարշ գալ իշխանադստեր ետևից...

— Հա՜, եթե նա ցանկանա քեզ հետ խոսել...

— Ես կսպասեմ միայն այն րոպեին, երբ քո խոսակցությունը նրան կձանձրացնի... Ցտեսությո՜ւն...

— Իսկ ես կգնամ թափառելու. հիմա քնել բնավ չեմ կարող... Լսիր, ավելի լավ է, արի գնանք ռեստորացիա, այնտեղ թուղթ են խաղում... Այժմ ինձ ուժեղ զգացողություններ են հարկավոր։

— Ցանկանում եմ՝ տանուլ տաս...

Ես տուն գնացի։

21-ը մայիսի

Համարյա մի շաբաթ է անցել, իսկ ես դեռ չեմ ծանոթացել Լիգովսկայաների հետ։ Հարմար առիթի եմ սպասում։ Գրուշնիցկին ստվերի պես ամենուրեք հետևում է իշխանադստերը։ Նրանց խոսակցություններն անվերջ են։ Գրուշնիցկին ե՞րբ է վերջապես ձանձրացնելու նրան... Մայրը դրա վրա ուշադրություն չի դարձնում, որովհետև Գրուշնիցկին փեսացու չէ։ Ահա՜ մայրերի տրամաբանությունը։ Ես նկատել եմ երկու, երեք քնքուշ հայացք. պետք է դրան վերջ դնել։

Երեկ առաջին անգամ ջրհորի մոտ երևաց Վերան... Այն օրից, ինչ մենք հանդիպեցինք քարանձավում, նա տնից դուրս չի եկել։ Մենք միաժամանակ ցած իջեցրինք բաժակներս և կռանալիս նա շշնջաց.

— Դու չե՞ս ուզում ծանոթանալ Լիգովսկայաների հետ... Մենք միայն այնտեղ կարող ենք տեսնվել...

Կշտամբանք... Զանձրալի է։ Բայց ես արժանի եմ դրան...

Ի դեպ, վաղը նախապես ցուցակագրված մարդկանց պարահանդես է ռեստորացիայի դահլիճում, և ես մազուրկա եմ պարելու իշխանադստեր հետ։

22-ը մայիսի

Ռեստորացիայի դահլիճը վերածվել է ազնվականների ժողովարանի դահլիճի։ Ժամը 9-ին բոլորը հավաքվեցին։ Իշ-

խանումին իր աղջկա հետ վերջին եկողներից էր։ Շատ կանայք նախանձով ու չարակամությամբ նայեցին նրան, որովհետև իշխանադուստր Մերին ճաշակով է հագնվում։ Նրանք, ովքեր իրենց այստեղի արիստոկրատներ են համարում, նախանձը թաքցնելով, նրան հարեցին։ Ի՞նչ անել։ Այնտեղ, ուր կա կանանց հասարակություն, այնտեղ իսկույն հանդես կգան բարձր և ցածր շրջաններ։ Պատուհանի տակ խոնված հասարակության մեջ կանգնած էր Գրուշնիցկին՝ երեսն ապակուն սեղմած և հայացքն իր դիցուհուց չհեռացնելով։ Վերջինս, նրա մոտով անցնելիս, հազիվ նկատելի բարևեց։ Գրուշնիցկին արևի պես փայլեց... Պարերն սկսվեցին լեհական պարով, ապա վալս նվագեցին։ Խթանները զնգզնգացին, քղանցքները բարձրացան ու ծածանվեցին։

Ես կանգնած էի վարդագույն փետուրներով հովանավորված մի հաստ կնոջ ետևում։ Նրա հագուստի ճոխությունը հիշեցնում էր ֆիժմերի* ժամանակները, իսկ նրա անհարթ մաշկի խայտաբղետությունը՝ սև տաֆտայից պատրաստվող մուշկաների** երջանիկ դարաշրջանը։ Նրա պարանոցի ամենամեծ գորտնուկը ծածկված էր մանյակի ճարմանդով։ Նա ասում էր իր կավալերին՝ դրագունի կապիտանին։

— Այդ իշխանադուստր Լիգովսկայան անտանելի աղջիկ մեկն է. երևակայեցեք, հրեց ինձ, ներողություն չխնդրեց և դեռ ետ դարձավ ու լորնետով նայեց վրաս... C'est impayable!...***։ Եվ ինչո՞վ է հպարտանում։ Արժեր դրան խրատել...

— Այդ դժվար բան չէ,— պատասխանեց հաճոյակատար կապիտանը և գնաց մյուս սենյակը։

Ես իսկույն մոտեցա իշխանադստերը և հրավիրեցի վալս պարելու, օգտվելով այստեղի սովորությունների՝ ազատությունից, որոնք թույլ են տալիս անծանոթ կանանց հետ պարել։

Նա հազիվ կարողացավ հարկադրել իրեն չժպտալ և թաքցնել իր հրճվանքը, սակայն նրան բավական շուտ հաջողվեց

* XVII դարում մոդա դարձած լայն շրջազգեստ։
** Մուշկա—բառացի՝ ճանճիկ, կանանց դեմքի կեղծ խալ։
*** Սա զվարճալի է (ֆր.)։

ընդունել միանգամայն անտարբեր և մինչևիսկ խիստ տեսք։ Նա անփութորեն ձեռքն իջեցրեց իմ ուսին, գլուխը փոքր-ինչ մի կողմ խոնարհեց, և մենք սկսեցինք։ Ավելի հեշտալիր ու ճկուն իրան ես չեմ տեսել։ Նրա թարմ շունչն առնում էր իմ երեսին, երբեմն վալսի փոթորկում իր ընկերներից բաժանված մի խոպոպ սահում էր իմ այրվող այտի վրայով... Ես կատարեցի երեք տուր։ (Նա զարմանալի լավ է վալս պարում)։ Նա հևում էր, աչքերը մթնել էին. կիսաբաց շրթունքները հազիվ կարողացան շշնջալ անհրաժեշտ՝ «merci monsieur»-ն*։

Մի քանի րոպե տևող լռությունից հետո ես ասացի նրան՝ ամենահնազանդ տեսք ընդունելով.

— Ես լսել եմ, իշխանադուստր, որ ձեզ բոլորովին անծանոթ լինելով, արդեն դժբախտություն եմ ունեցել ձեր անբարեհաճությանն արժանանալու... որ դուք ինձ հանդուգն եք համարել... Մի՞թե այդ ճիշտ է...

— Եվ դուք հիմա կուզենայիք, որ այդ կարծիքը հաստատվի՞ իմ մեջ,— պատասխանեց նա հեգնական ծամածռությամբ, որ սակայն շատ է սազում նրա շարժուն դեմքին։

— Եթե ես հանդգնություն եմ ունեցել որևէ բանով վիրավորելու, ապա թույլ տվեք ինձ ձեզնից ներողություն խնդրելու ավելի մեծ հանդգնությունն ունենալ... Եվ անկեղծ եմ ասում. շատ կուզենայի ապացուցել ձեզ, որ դուք իմ նկատմամբ սխալված եք եղել...

— Ձեզ համար դա բավական դժվար կլինի...

— Ինչո՞ւ...

— Որովհետև դուք մեզ մոտ չեք լինում, իսկ այս պարահանդեսները երևի հաճախ չեն կրկնվի։

Այդ նշանակում է, մտածեցի ես, որ նրանց դռներն առհավետ փակ են լինելու ինձ համար։

— Գիտեք, իշխանադուստր,— ասացի ես որոշ դժկամությամբ,— երբեք չպետք է մերժել մեզա եկող հանցավորին. հուսահատությունից նա կարող է կրկնակի հանցագործ դառնալ... և այն ժամանակ...

* Շնորհակալություն, պարոն (ֆր.)։

Մեզ շրջապատողների քրքիջն ու քչփչոցը հարկադրեցին ինձ շրջվել և ընդհատել իմ ֆրազը։ Ինձանից մի քանի քայլ հեռու կանգնած էին մի խումբ տղամարդիկ, և նրանց թվում դրագունի կապիտանը, որը թշնամական մտադրություններ էր հայտնել իշխանադստեր դեմ։ Նա, ճիշտ ասած, ինչ-որ բանից շատ էր գոհ. ձեռքերն էր շփում, քրքջում էր և ակնարկներ փոխանակում ընկերների հետ։ Հանկարծ նրանց շրջանից բաժանվեց ֆրակը հագին մի՛ պարոն՝ երկար բեղերով, կարմիր քիթումռութով և իր անհաստատ քայլերն ուղղեց ուղղակի իշխանադստեր կողմը։ Նա հարբած էր։ Շփոթված իշխանադստեր դիմացը կանգ առնելով և ձեռքերը ետևը դրած, նա աղջկան հառեց իր պղտոր-գորշ աչքերի հայացքը և խոպոտ դիսկանտով արտասանեց.

— Պերմետե*... է՛հ, էլ ի՞նչ եմ... պարզապես հրավիրում եմ ձեզ մազուրկա պարել ինձ հետ...

— Ի՞նչ եք կամենում,— արտասանեց իշխանադուստրը դողդոջ ձայնով, շուրջը աղերսող հայացք գցելով։ Ավա՜ղ, նրա մայրը հեռու էր, իսկ իր մոտ իր ծանոթ կավալերներից ոչ ոք չկար. միայն համհարզն էր, կարծեմ, այս բոլորը տեսնում, բայց նա էլ ամբոխի ետևն էր թաքնվել, որպեսզի իրեն տհաճ պատմության մեջ չխառնեն։

— Հը՞,— ասաց հարբած պարոնը, աչքով անելով դրագունի կապիտանին, որը նշաններով խրախուսում էր նրան,— մի՞թե ձեզ հաճելի չէ՞... Ես դարձյալ պատիվ ունեմ հրավիրելու ձեզ pour mazure**... Դուք, գուցե, կարծում եք, թե ես հարբա՞ծ եմ։ Այդ ոչի՞նչ... Ավելի ազատ կարող ենք զգալ մեզ, կարող եմ վստահեցնել ձեզ...

Ես տեսնում էի, որ իշխանադուստրը վախից ու զայրույթից քիչ է մնում ուշաթափվի։

Ես մոտեցա հարբած պարոնին, բավական ամուր բռնեցի նրա ձեռքերը և, շեշտակի նրա աչքերին նայելով, խնդրեցի հեռանալ.

— Որովհետև,— ավելացրի ես,— իշխանադուստրը վաղուց արդեն խոստացել է մազուրկան ինձ հետ պարել։

* (Ֆրանս. permetter-ից՝ թույլ տվեք...)
** Մազուրկա պարելու (Ֆր.)։

— Է՛հ, ի՞նչ արած... Մեկ ուրի՞շ անգամ,— ասաց նա ծիծաղելով և հեռացավ դեպի իր ամոթահար եղած ընկերները, որոնք իսկույն նրան տարան մյուս սենյակը։

Ես վարձատրվեցի խոր, սքանչելի հայացքով։

Իշխանադուստրը մոտեցավ իր մորը և բոլորը պատմեց։ Մայրը գտավ ինձ ամբոխի մեջ և շնորհակալություն հայտնեց։ Նա հայտարարեց ինձ, որ ճանաչելիս է եղել մորս և բարեկամական հարաբերությունների մեջ է մտել կես դյուժին մորաքույր-հորաքույրներիս հետ։

— Ես չգիտեմ, ինչպես է պատահել, որ մենք մինչև այժմ ձեզ հետ ծանոթ չենք,— ավելացրեց նա,— բայց խոստովանեցեք, այս բանում միակ մեղավորը դուք եք. այնպես եք խրտնում բոլորից, որ անթույլատրելի է։ Ես հուսով եմ, որ իմ հյուրասրահի օդը կցրի ձեր սպլինը... Այնպես չէ՞։

Ես ասացի նրան մնկն այն ֆրազներից, որ ամեն ոք պատրաստ պիտի ունենա նման դեպքի համար։

Կադրիլները սոսկալի երկար տևեցին։

Վերջապես երաժիշտների դասից դղրդոցով հնչեց մազուրկան, ես և իշխանադուստրը նստեցինք։

Ես ոչ մի անգամ ակնարկ չարեցի ո՛չ հարբած պարոնի, ո՛չ իմ առաջվա վարմունքի, ո՛չ էլ Գրուշնիցկու մասին։ Տրհաճ տեսարանի գործած տպավորությունը հետզհետե ցրվեց, նրա փոքրիկ դեմքը փթթեց, նա շատ սիրելի ձևով էր կատակում։ Խոսակցությունը սուր էր՝ առանց սրամտության հավակնության, աշխույժ էր և ազատ, դիտողությունները երբեմն խորն են... Շատ խճճված ֆրազով ես զգալ տվեցի, որ ինքը վաղուց դուր է գալիս ինձ։ Նա գլուխը խոնարհեց և թեթևակի կարմրեց։

— Դուք տարօրինա՜կ մարդ եք,— ասաց նա դրանից հետո, իր թավշե հայացքը վրաս բարձրացնելով և բռնազբոսիկ ծիծաղելով։

— Ես չէի ուզում ձեզ հետ ծանոթանալ,— շարունակեցի ես,— որովհետև ձեզ շրջապատում է երկրպագուների շատ հոծ բազմություն, և ես վախենում էի բոլորովին կորչել այդ ամբոխի մեջ։

— Դուք իզուր էիք վախենում։ Նրանք բոլորն էլ խիստ ձանձրալի են...

— Բոլո՞ր։ Մի՞թե բոլորը։

Նա շեշտակի նայեց, իբր թե ջանալով ինչ-որ բան վերհիշել, հետո նորից կարմրեց և վերջապես վճռաբար արտասանեց.

— Բոլորը։

— Անգամ իմ բարեկամ Գրուշնի՞ցկին։

— Իսկ նա ձեր բարեկա՞մն է,— ասաց Մերին, որոշ կասկած ցույց տալով։

— Այո՛։

— Նա, իհարկե, ձանձրալիների կարգին չի պատկանում...

— Բայց անբախտների կարգին պատկանում է,— ասացի ես ծիծաղելով։

— Իհարկե։ Իսկ ձեզ համար ծիծաղելի՞ է։ Ես կցանկանայի, որ դուք նրա տեղը լինեիք...

— Ի՞նչ կա որ, մի ժամանակ ինքս էլ յունկեր եմ եղել և, ճիշտն ասած, այդ իմ կյանքի ամենալավ ժամանակն է եղել։

— Իսկ նա մի՞թե յունկեր է...— ասաց նա արագ ու հետո ավելացրեց.— իսկ ես կարծում էի...

— Դուք ի՞նչ էիք կարծում...

— Ոչինչ... Ո՞վ է այդ կինը։

Այստեղ խոսակցությունը փոխեց իր ուղղությունը, և այդ նյութին այլևս չվերադարձավ։

Ահա մազուրկան վերջացավ, և մենք բաժանվեցինք՝ մինչև նոր տեսակցություն։ Կանայք գնացին իրենց տները... Ես գնացի ընթրելու և հանդիպեցի Վերներին։

— Ըհը՛,— ասաց նա,— դուք այդպիսն եք, հա՞։ Դեռ ուզում էիք ծանոթանալ իշխանադստեր հետ ոչ այլ կերպ, բայց եթե անխուսափելի մահից նրան փրկելուց հետո։

— Ես ավելի՞ լավ բան արեցի,— պատասխանեցի նրան,— փրկեցի պարահանդեսում ուշաթափվելուց....

— Ինչպե՞ս թե, պատմեցեք...

— Ոչ, կռահեցեք, օ՜, դո՛ւք, աշխարհիս երեսին ամեն ինչ կռահողդ։

Մոտավորապես երեկոյան ժամը յոթին ես զբոսնում էի բուլվարում։ Գրուշնիցկին, ինձ հեռվից տեսնելով, մոտեցավ։ Ինչ-որ ծիծաղելի հրճվանք էր փայլում նրա աչքերում։ Նա ամուր սեղմեց իմ ձեռքը և տրագիկ ձայնով ասաց.

— Շնորհակա՞լ եմ քեզանից, Պեչորին... Դու ինձ հասկանո՞ւմ ես...

— Ո՛չ, բայց համենայն դեպս, չարժե,— պատասխանեցի ես, խղճի մտոք՝ ոչ մի բարերարություն արած չլինելով։

— Ինչպե՞ս, իսկ երե՞կ, դու մի՞թե մոռացել ես... Մերին ինձ ամեն ինչ պատմեց...

— Ի՞նչ է որ... մի՞թե ձեզ համար հիմա արդեն ամեն ինչ ընդհանուր է, նաև շնորհակալությո՞ւնը...

— Լսի՛ր,— ասաց Գրուշնիցկին շատ ծանրակշիռ տոնով,— խնդրում եմ, իմ սերը կատակի մի ենթարկի, եթե ցանկանում ես իմ բարեկամը մնալ... Տեսնում ես, ես խելագարության աստիճան սիրում եմ նրան... և կարծում եմ, հուսով եմ, նա նույնպես սիրում է ինձ... քեզնից մի խնդիրք ունեմ։ Այսօր երեկոյան դու նրանց մոտ ես լինելու։ Խոստացիր ինձ ամեն ինչ նկատել. գիտեմ, դու այդ բաներում փորձված ես, ինձանից ավելի լավ ես ճանաչում կանանց... Կանա՛յք, կանա՛յք, ո՞վ նրանց կհասկանա։ Նրանց ժպիտները հակասում են հայացքներին, խոսքերը խոստանում են և հրապուրում, կանչում, իսկ ձայնի հնչյունը վանում է... Մեկ նրանք բոպեապես թափանցում են և կոահում մեր ամենագաղտնի միտքը, մեկ չեն հասկանում ամենապարզ ակնարկները... Ա՛յ, թեկուզ իշխանադուստրը. երեկ նրա աչքերը կրքոտ էին վառվում ինձ վրա կանգ առնելիս, այսօր դրանք աղոտ են և դրանց հայացքը՝ պաղ...

— Այդ, գուցե, ջրերի ներգործության հետևանք է,— պատասխանեցի ես։

— Դու ամեն ինչում վատ կողմն ես տեսնում... նյութապաշտ ես,— ավելացրեց նա արհամարհանքով։ — Սակայն նյութը փոխենք,— և վատ կալամբուրից գոհ՝ ուրախացավ։

Ժամը ութն անց էր, երբ մենք միասին գնացինք իշխանուհու մոտ։

Վերայի պատուհանների մոտով անցնելիս, ես նրան տեսա պատուհանի մոտ։ Մենք թոուցիկ հայացք նետեցինք միմյանց։ Մեզանից քիչ հետո նա մտավ Լիգովսկայաների հյուրասենյակը։ Իշխանուհին ինձ ներկայացրեց Վերային, որպես իր ազգականուհու։ Թեյ էինք խմում. շատ հյուրեր կային. խոսակցությունն ընդհանուր էր։ Ես աշխատում էի դուր գալ իշխանուհուն, կատակում էի, հարկադրեցի նրան մի քանի անգամ ի սրտե ծիծաղել. իշխանադուստրը ևս քանիցս ուզում էր քրքջալ, բայց իրեն զսպում էր՝ իր դերից դուրս չգալու համար. նա գտնում է, որ խոնջությունն իրեն սազում է և, գուցե, չի սխալվում։ Գրուշնիցկին կարծեմ շատ ուրախ է, որ իմ ուրախությունը Մերիին չի վարակում։

Թեյից հետո բոլորը գնացին դահլիճ։

— Արդյո՞ք դու իմ հնազանդությունից գոհ ես, Վե՛րա,— ասացի ես նրա մոտով անցնելիս։

Նա ինձ նետեց մի հայացք, որ լի էր սիրով ու շնորհակալությամբ։ Ես սովորել եմ այդ հայացքներին, բայց մի ժամանակ դրանք իմ երանությունն էին։ Իշխանուհին աղջկան նստեցրեց դանշամուր նվագելու։ Բոլորը խնդրեցին իշխանադստերը որևէ բան երգել։ Ես լուռ էի և, իրարանցումից օգտվելով, դեպի լուսամուտը քաշվեցի Վերայի հետ, որը երկուսիս համար էլ շատ կարևոր բան էր ուզում ասել ինձ... Դուրս եկավ, որ դատարկ բան էր...

Մինչդեռ իշխանադուստրին դժգոհություն էր պատճառում իմ անտարբերությունը, ինչպես ես կարողացա գլխի ընկնել նրա մի բարկացած փայլարձակ հայացքից... Օ՜, ես զարմանալի լավ եմ հասկանում այդ խոսակցությունը, որը համր է, բայց արտահայտիչ, կարճ, բայց ազդու...

Նա սկսեց երգել։ Ձայնը վատը չէ, բայց վատ է երգում... Ասենք, ես չէի լսում։ Բայց դրա փոխարեն Գրուշնիցկին, նրա դիմաց, դաշնամուրին կոթնած, աչքերով լափում էր նրան և՝ ամեն րոպե ասում կիսաձայն՝ «charmant! delicieux!»*

— Լսի՛ր,— ասում էր ինձ Վերան,— ես չեմ ուզում, որ ծանոթանաս իմ ամուսնու հետ, բայց պետք է անպայման դուր գաս իշխանուհուն։ Քեզ համար այդ հեշտ է. դու կարող

* Հիանալի է, սքանչելի (ֆր.)։

ես անել ամենը, ինչ ցանկանում ես։ Մենք այստեղ միայն տեսնվելու ենք...

— Միա՞յն...

Նա կարմրեց և շարունակեց.

— Դու գիտես, որ ես քո ստրուկն եմ. ես երբեք չեմ կարողացել քեզ հակառակվել... և դրա համար պատժվելու եմ. դու կդադարես ինձ սիրելուց։ Ես ուզում եմ գոնե վարկս պահպանել... ո՛չ ինձ համար, դու այդ շա՜տ լավ գիտես... Օ՜, ես խնդրում եմ քեզնից՝ առաջվա պես ինձ մի՛ տանջիր դատարկ կասկածներով ու կեղծ սառնությամբ։ Ես գուցե շուտով մեռնեմ. զգում եմ, որ օրավուր թուլանում եմ... և չնայած դրան, ես չեմ կարող մտածել ապագա կյանքի մասին, մտածում եմ միայն քո մասին... Դուք՝ տղամարդիկդ, չեք հասկանում հայացքի, ձեռք սեղմելու պատճառած հաճույքը... Իսկ ես, երդվում եմ քեզ, քո ձայնին ունկնդրելով, այնպիսի խոր, տարօրինակ երանություն եմ զգում, որ ամենաայրող համբույրները չեն կարող դրան փոխարինել։

Մինչ այդ, իշխանադուստր Մերին դադարեց երգել։ Գովեստների շշուկ լսվեց նրա շուրջը. ես ամենից վերջը մոտեցա նրան և բավական անփույթ կերպով ինչ-որ բան ասացի նրա ձայնի մասին։

Նա ծամածռեց դեմքը, ներքևի շրթունքն առաջ մղելով և շատ ծաղրալի ձևով ծունկ խոնարհելով։

— Այդ ինձ համար է՛լ ավելի շոյիչ է,— ասաց նա,— որովհետև դուք ինձ բոլորովին չէիք լսում։ Բայց դուք, գուցե, երաժշտություն չեք սիրում...

— Ընդհակառակը... մանավանդ ճաշից հետո։

— Գրուշնիցկին իրավացի է, երբ ասում է, որ դուք ունեք խիստ պրոզայիկ ճաշակ... և ես տեսնում եմ, որ դուք երաժշտությունը սիրում եք գաստրոնոմիական տեսակետից...

— Դուք դարձյալ սխալվում եք. ես ամենևին գաստրոնոմ չեմ։ Ես գարշելի մարսողություն ունեմ։ Բայց երաժշտությունը ճաշից հետո ենթեցնում է, իսկ ճաշից հետո քնելն առողջարար է։ Հետևաբար, ես երաժշտությունը սիրում եմ բժշկական տեսակետից։ Իսկ նրեկոյան, ընդհակառակը, երաժշտությունը սաստիկ զրդռում է ներվերս. կամ խիստ շատ եմ

տխրում, կամ խիստ ուրախանում։ Թե՛ մեկը և թե՛ մյուսը հոգնեցուցիչ է, երբ չկա տխրելու կամ ուրախանալու դրական պատճառ, մանավանդ, որ տխրությունը հասարակության մեջ ծիծաղելի է, իսկ չափից շատ ուրախությունը՝ անքաղաքավարություն։

Նա մինչև վերջը լսեց, հեռացավ ինձանից, նստեց Գրուշնիցկու մոտ, և նրանց միջև սկսվեց ինչ-որ սենտիմենտալ խոսակցություն։ Կարծեմ իշխանադուստրը նրա իմաստուն դարձվածքներին բավական ցրված և անհաջող էր պատասխանում, թեպետ ջանում էր ցույց տալ, թե ուշադիր լսում է։ Այս եզրակացության եկա այն հիման վրա, որ Գրուշնիցկին երբեմն զարմանքով էր նայում նրան՝ ջանալով կռահել պատճառն այն ներքին հուզմունքի, որ երբեմն արտահայտվում էր իշխանադստեր անհանգիստ հայացքում։

Բայց ես ճանաչեցի ձեզ, սիրելի իշխանադուստր, զգուշացե՛ք։ Դուք ցանկանում եք ինձ վճարել նույն դրամով, դիպչել իմ ինքնասիրությանը։ Ձեզ չի՛ հաջողվի, և եթե դուք ինձ պատերազմ հայտարարեք, ապա ես անողոք կլինեմ։

Երեկոյի ընթացքում ես մի քանի անգամ դիտմամբ աշխատեցի խառնվել նրանց խոսակցությանը, բայց իշխանադուստրը բավական չոր էր ընդունում իմ դիտողությունները, և ես կեղծ դժգոհությամբ վերջապես հեռացա։ Իշխանադուստրը հրճվում էր. Գրուշնիցկին նույնպես։ Հրճվեցե՛ք, իմ բարեկամնե՛ր, շտապեցե՛ք... Ձեր հրճվանքը երկար չի՛ տևի... Ինչպե՞ս վարվել։ Ես նախազգացում ունեմ... Կնոջ հետ ծանոթանալիս, ես միշտ անսխալ գուշակել եմ, սիրելու է նա ինձ, թե՞ ոչ...

Երեկոյի մնացած մասը անցկացրի Վերայի կողքին և կուշտ խոսակցեցի անցած-գնացածի մասին... Ինչի՞ համար է նա ինձ այդպես սիրում, ճիշտն ասած՝ չգիտե՛մ։ Մանավանդ որ դա միակ կինն է, որն ինձ հասկացել է լիովին՝ իմ բոլոր մանր թուլություններով, իմ վատ կրքերով հանդերձ...։ Մի՞թե չարն այդքան գրավիչ է...

Ես դուրս եկա Գրուշնիցկու հետ։ Փողոցում նա ինձ թևանցուկ արեց և երկար լռությունից հետո ասաց.

— Հը, ի՞նչ կասես։

«Դու հիմար ես»,— ուզում էի պատասխանել նրան, բայց զսպեցի ինձ և միայն ուսերս թոթվեցի։

29-ը մայիսի

Բոլոր այդ օրերին ես ոչ մի անգամ իմ սիստեմից չնահանջեցի։ Իշխանադստերն իմ զրույցն սկսում է դուր գալ։ Պատմեցի իմ կյանքի մի քանի տարօրինակ դեպքերը, և նա սկսում է արտասովոր մարդ տեսնել իմ մեջ։ Ես ծիծաղում եմ աշխարհի ամեն բանի վրա, մանավանդ զգացմունքների. սա սկսում է վախեցնել նրան։ Իմ ներկայությամբ չի համարձակվում սենտիմենտալ վիճաբանություններ բացել Գրուշնիցկու հետ, և արդեն՝ մի քանի անգամ ծաղրական ժպիտով է պատասխանել նրա վարմունքին, բայց ամեն անգամ, երբ Գրուշնիցկին մոտենում է, ես՝ հեզ մարդու տեսք եմ ընդունում և երկուսին միասին եմ թողնում։ Առաջին անգամ դա ուրախացրեց իշխանադստերը կամ նա ինքն աշխատեց այդպես ձևացնել, երկրորդ անգամ բարկացավ ինձ վրա, երրորդ անգամ՝ Գրուշնիցկու։

— Դուք շատ քիչ ինքնասիրություն ունեք,— ասաց նա ինձ երեկ,— ինչո՞ւ եք կարծում, թե ես Գրուշնիցկու հետ ավելի ուրախ եմ լինում։

Ես պատասխանեցի, որ բերկամիս երջանկությանը զոհում եմ իմ հաճույքը...

— Եվ իմը,— ավելացրեց իշխանադուստրը։

Ես սեռուն հայացքով նայեցի նրան և լուրջ տեսք ընդունեցի։ Հետս ամբողջ օրը նրա հետ ո՛չ մի խոսք չխոսեցի... Երեկոյան իշխանադուստրը մտախոհ էր, այսօր առավոտյան, ջրհորի մոտ՝ ավելի մտախոհ։ Երբ ես մոտեցա, նա մտացիր լսում էր Գրուշնիցկուն, որը, կարծեմ, բնությամբ էր հիանում։ Բայց իշխանադուստրն ինձ տեսավ թե չէ, սկսեց քրքջալ (շատ անտեղի), ցույց տալով, իբր թե ինձ չի նկատում։ Ես փոքր-ինչ հեռու գնացի և սկսեցի գաղտագողի հետևել։ Իշխանադուստրը երեսը շուռ տվեց իր զրուցակցից և մի երկու անգամ հորանջեց։ Գրուշնիցկին ուղղակի ձանձրացրել է նրան։ Դեռ երկու օր էլ նրա հետ չպետք է խոսեմ։

Ես հաճախ եմ հարցնում ինձ, ինչո՞ւ եմ այդպես համառորեն ձգտում երիտասարդ աղջկա սիրուն, որին գայթակղել չեմ ցանկանում և որի հետ երբեք չեմ ամուսնանա։ Ինչի՞ համար է այս կանացի կոկետությունը։ Վերան ինձ ավելի է սիրում, քան իշխանադուստր Մերին երբևէ կսիրի։ Եթե նա ինձ անհաղթելի գեղեցկուհի թվար, ապա գուցե թե ինձ հրապուրեր ձեռնարկման դժվարությունը...

Բայց բնա՞վ էլ այդպես չէ։ Հետևաբար, սա ոչ թե սիրո այն անհանգիստ պահանջն է, որ մեզ տանջում է երիտասարդության առաջին տարիներին, մի կնոջից դեպի մյուս կինը նետում, մինչև որ մենք կգտնենք մի այնպիսին, որը մեզ տանել չի կարող, այստեղ կսկսվի մեր հաստատակամությունը՝ իսկական, անսահման կիրքը, որ մաթեմատիկորեն կարելի է արտահայտել որպես տվյալ կետից դեպի տարածություն իջնող գիծ։ Այդ անսահմանության գաղտնիքն այն է միայն, որ նպատակի, այսինքն՝ վախճանի հասնելն անհնարին է։

Հապա էլ ինչո՞ւ եմ գլուխ ցավեցնում։ Գրուշնիցկու նկատմամբ տածած նախանձի՞ց։ Խե՜ղճ մարդ, նա բոլորովին արժանի չէ դրան։ Թե՞ դա հետևանք է այն վատ, բայց անհաղթելի զգացմունքի, որ հարկադրում է մեզ ոչնչացնել մեր մերձավոր քաղցր մոլորությունները, որպեսզի, երբ որ նա հուսահատ հարցնի, թե ինչի՞ն պետք է հավատա, մանր հաճույք ունենանք ասելու.

— Բարեկա՜մս, ինձ հետ նույնն է պատահել, բայց դու տեսնում ես, որ ես ճաշում, ընթրում և ամենայն հանգստությամբ քնում եմ ու հուսով եմ, որ կկարողանամ մեռնել առանց ճիչի ու արցունքների։

Բայց չէ՞ որ անսահման հաճույք կա երիտասարդ, հազիվ նորափթիթ հոգուն տիրապետելու մեջ։ Նա նման է մի ծաղկի, որի լավագույն բուրմունքը շոգիանում է՝ դիմավորելով արևի առաջին ճառագայթին։ Ծաղիկը պետք է քաղել այդ խսկ բոպեին և, կուշտ ծծելով նրա բույրը, գցել ճանապարհի վրա. գուցե մեկնումեկը գետնից վերցնի։ Ես զգում եմ իմ մեջ

այդ անհագուրդ ագահությունը, որ կլանում է այն ամենը, ինչ պատահում է իր ճանապարհին։ Ուրիշների տառապանքներին և ուրախություններին ես նայում եմ, մեկնակետ ընդունելով միայն իմ անձը, որպես մի կերակուրի, որ պահպանում է իմ հոգեկան ուժերը։ Ես ինքս այլևս անընդունակ եմ կրքի ազդեցության տակ խենթանալու։ Հանգամանքները ճնշել են իմ փառասիրությունը, բայց դա արտահայտվել է ուրիշ ձևով, որովհետև փառասիրությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ իշխանության ծարավ, իսկ իմ առաջին բավականությունն է՝ իմ կամքին ենթարկել այն ամենը, ինչ շրջապատում է ինձ, սիրո, նվիրվածության և ահի զգացմունք զարթեցնել դեպի իմ անձը։ Արդյոք՝ սա իշխանության առաջին հատկանիշն ու մեծագույն հաղթանակը չէ՞։ Մեկնումեկի համար տառապանքների և ուրախությունների պատճառ լինել, այդ բանի համար ոչ մի դրական իրավունք չունենալով — արդյոք սա մեր հպարտության ամենաքաղցր սնունդը չէ՞։ Իսկ ի՞նչ է երջանկությունը։ Հպարտության հագեցում։ Եթե ես բոլորից լավ, հզոր համարեի ինձ աշխարհիս երեսին, երջանիկ կլինեի։ Եթե բոլորն ինձ սիրեին, ես մեջս սիրո անսպառ աղբյուրներ կգտնեի։ Չարը չարություն է ծնում. առաջին տառապանքը հասկացողություն է տալիս ուրիշին տանջելու հաճույքի մասին. չարի գաղափարը չի կարող՝ մարդու գլուխը մտնել առանց այն բանի, որ նա չցանկանա կիրառել այն իրականության նկատմամբ. գաղափարները օրգանական ստեղծվածքներ են, ասել է մի մարդ. նրանց ծնունդն արդեն իսկ ձև է տալիս նրանց, և այդ ձևը գործողություն է. ում գլխում ավելի շատ գաղափարներ են ծնվում, նա ուրիշներից ավելի է գործում. այդ պատճառով չինովնիկական սեղանին գամված հանճարը պետք է մեռնի կամ խելագարվի, ճիշտ այնպես, ինչպես հզոր կազմվածք ունեցող մարդը նստակյաց կյանք և համեստ կենցաղ վտրելիս մեռնում է կաթվածից։

Կրքերը ոչ այլ ինչ են, եթե ոչ իրենց առաջին զարգացման փուլն ապրող գաղափարները։ Դրանք սրտի երիտասարդության պատկանելիքն են, և հիմար է նա, ով մտածում է իր ամբողջ կյանքում դրանցով հուզվել. շատ հանգիստ գետեր սկսվում են որպես աղմկող ջրվեժներ, բայց ոչ մեկը չի ցատ-

կոտրում ու փրփրում մինչև ծով։ Սակայն այդ հանգստությունը հաճախ նշան է մեծ, թեպետև թաքնված ուժի. զգացմունքների և մտքերի լեցունությունն ու խորությունն անհամատեղելի են կատաղի պոռթկումների հետ։ Տառապելով ու հաճույք վայելելով, հոգին ամեն ինչի նկատմամբ հաշիվ է տալիս իրեն և համոզվում է, որ այդպես պետք է լինի. գիտե, որ եթե փոթորիկներ չլինեն, արևի մշտական տապը կչորացնի իրեն։ Հոգին տոգորվում է իր սեփական կյանքով, գուրգուրում և պատժում է իրեն, որպես սիրելի մանկան։ Միայն ինքնաճանաչողության այս բարձր վիճակում մարդը կարող է գնահատել աստծո արդարադատությունը։

Այս էջը վերընթեռնելով, ես նկատում եմ, որ շատ եմ շեղվել իմ առարկայից... Բայց ի՞նչ վնաս... Չէ՞ որ այս օրագիրն ինձ համար եմ գրում և, հետևապես, բոլորը, ինչ կնետեմ այնտեղ, ժամանակին թանկագին հիշողություն կդառնա ինձ համար։

. . . . . .

Եկավ Գրուշնիցկին և վզովս ընկավ։ Նրան սպայի աստիճան են տվել։ Մենք շամպայն խմեցինք։ Բժիշկ Վերները ներս մտավ նրանից անմիջապես հետո։

— Ես ձեզ չեմ շնորհավորում,— ասաց նա Գրուշնիցկուն։

— Ինչո՞ւ։

— Որովհետև հասարակ զինվորի շինելը ձեզ շատ է սազում և, խոստովանեցեք, որ այստեղ հանքային ջրերում կարված հետևազորի նշանագգեստը ձեզ ոչ մի հետաքրքրություն չի տա... գիտե՞ք ինչ, դուք մինչև այժմ բացառություն էիք, իսկ հիմա ընդհանուր կանոնի տակ կընկնեք։

— Ճառեցե՛ք, ճառեցե՛ք, բժի՛շկ. դուք չեք խանգարիլ որ ուրախանամ։ Նա չգիտե,— ավելացրեց Գրուշնիցկին՝ ամանջիս շշնջալով,— թե ինչքան հույսեր տվին ինձ այս էպոլետները... Օ՜, էպոլետնե՛ր, էպոլետնե՛ր, ձեր աստղիկները ուղեցույց աստղիկներ են... Ո՜չ, ես հիմա կատարելապես երջանիկ եմ։

— Դու մեզ հետ գալի՞ս ես խորխորատի մոտ զբոսնելու,— հարցրի ես նրան։

— Ե՞ս. ոչ մի գնով չեմ երևա իշխանադատերը, մինչև նշանագգեստս պատրաստ չլինի։

— Կհրամայե՞ս հայտնել նրան քո ուրախության մասին...

— Ոչ, խնդրում եմ չասես... Ուզում եմ նրան զարմացնել...

— Բայց ասա ինձ, գործերդ նրա հետ ինչպե՞ս են։

Նա շփոթվեց և մտածմունքի մեջ ընկավ։ Ուզում էր պարծենալ, ստել բայց ամաչում էր։ Միաժամանակ ամոթ էր և ճշմարտություն խոստովանելը։

— Ի՞նչ ես կարծում, նա քեզ սիրու՞մ է...

— Սիրո՞ւմ է արդյոք։ Լսիր, Պեչորին, այդ ի՞նչ հասկացողություններ տեր ես... Ինչպե՞ս կարելի է այսպես շուտ... Եթե մինչև անգամ սիրում էլ է, կարգին՝ կինը հո այդ չի ասի...

— Լա՛վ։ Եվ երևի, քո կարծիքով, կարգին մարդը նույնպես պետք է լռի՞ իր զգացմունքի մասին...

— Է՛, ախպերս, ամեն բան իր հանգն ունի, շատ բան չի ասվում, այլ կռահվում է...

— Այդ ճշմարիտ է... Միայն թե, այն սերը, որ մենք կարդում ենք կնոջ աչքերում, նրան ո՛չ մի բանի չի պարտավորեցնում, այնինչ խոսքերը... Զգուշացի՛ր, Գրուշնիցկի. նա քեզ խաբում է...

— Նա՞...— պատասխանեց Գրուշնիցկին, աչքերը երկինք բարձրացնելով և ինքնաբավական ժպտալով,— ես քեզ խղճում եմ, Պեչորին...

Գրուշնիցկին գնաց։

Երեկոյան բազմամարդ հասարակությունը ոտքով դեպի խորխորատ գնաց։

Այստեղի գիտնականների կարծիքով՝ այդ խորխորատը ոչ այլ ինչ է, եթե ոչ հանգած հրաբխի խառնարան։ Մաշուկի զառիվայրին է, քաղաքից մի վերստ հեռավորության վրա։ Այդ կողմն է տանում թփերի և ժայռերի միջով անցնող մի նեղ կածան։ Սար բարձրանալիս, ես թևս տվի իշխանադատերը, և նա բաց չթողեց ամբողջ զբոսանքի ընթացքում։

Մեր խոսակցությունն սկսվեց չարախոսությամբ։ Սկսեցի հերթով հիշատակել մեր բոլոր ներկա և բացակա ծանոթներին, սկզբում ցույց էի տալիս նրանց ծիծաղելի, ապա՝ վատ կողմերը։ Իմ մաղձը բորբոքվեց. սկսեցի կատակով ու վեր-

ջացրի անկեղծ շարությամբ։ Սկզբում դա նրան զվարճացնում էր, իսկ հետո վախեցրեց։

— Դուք վտանգավոր մարդ եք,— ասաց ինձ,— ես ավելի լավ կհամարեի անտառում մարդասպանի դանակի հարվածի հանդիպել, քան ձեր լեզվի խայթոցին... Ձեզ լրջորեն խնդրում եմ. երբ ձեր մտքով կանցնի իմ մասին վատ խոսել, ավելի լավ կանեք դանակը վերցնեք և ինձ մորթեք։ Ես կարծում եմ, այդ ձեզ համար շատ դժվար չի լինի։

— Մի՞թե ես նման եմ մարդասպանի...

— Դուք ավելի վատթարն եք...

Ես մի բոպե մտքով տարվեցի և ապա խորապես զգացված տեսք ընդունելով՝ ասացի.

— Այո՛, այդպես է եղել իմ բախտը, բուն մանկությունից սկսած։ Բոլորն իմ դեմքի վրա կարդում էին գոյություն չունեցող, բայց ենթադրվող վատ հատկությունների նշաններ, և դրանք ծնվեցին։ Ես համեստ էի. ինձ մեղադրում էին խորամանկության մեջ, և ես ծածկամիտ դարձա։ Խորապես զգում էի բարին ու չարը. ոչ ոք ինձ չէր փաղաքշում, բոլորը վիրավորում էին, և ես չարահուշ դարձա։ Մռայլ էի, մյուս երեխաները՝ ուրախ ու շատախոս։ Զգում էի, որ նրանցից բարձր եմ, իսկ ինձ նրանցից ցածր էին դասում։ Նախանձոտ դարձա։ Ես պատրաստ էի ողջ աշխարհը սիրել. ինձ ոչ ոք չհասկացավ։ Եվ ես ատել սովորեցի։ Իմ անգույն երիտասարդությունն անցավ իմ դեմ և հասարակության դեմ եղած պայքարով։ Ծաղրից վախենալով, իմ լավագույն զգացմունքները թաղում էի սրտիս խորքում։ Դրանք այնտեղ էլ մեռան։ Ճշմարտությունն էի ասում, ինձ չէին հավատում։ Սկսեցի խաբել հասարակությանը և նրա զսպանակներին լավ ծանոթանալով, վարպետացա կյանքի գիտության մեջ և տեսնում էի, թե ինչպես ուրիշները երջանիկ են առանց արվեստի օգնությանը դիմելու, ձրիաբար օգտվելով այն առավելություններից, որոնց ես այնպես անդուլ կերպով ձգտում էի։ Եվ այն ժամանակ իմ սրտում ծնունդ առավ հուսահատությունը, ոչ այն հուսահատությունը, որ բժշկում են ատրճանակի փողաբերանով, այլ պաղարյուն անզոր հուսահատության, սքողված սիրալիրությամբ ու բարեհոգի ժպիտով։ Ես բարոյական հաշմանդամ դարձա։ Իմ հոգու մեկ կեսը գոյություն չուներ. ցաքեց, շոգիացավ, մեռավ, ես այն կտրեցի ու դեն գցեցի, մինչդեռ մյուսը շարժվում և ապրում էր՝ պատրաստ սպասավորելու ամեն մեկին։ Այդ ես ոչ ոք չնկատեց, որովհետև կործանված կեսի գոյության մասին ոչ ոք չգիտեր։ Բայց դուք հիմա իմ մեջ արթնացրիք դրա հուշը, և ես կարդացի ձեզ համար նրա տապանագիրը։ Շատերին առհասարակ բոլոր տապանագրերը ծիծաղելի են թվում, բայց ինձ՝ ոչ, մանավանդ երբ հիշում եմ, թե դրանց տակ ինչ է հանգչում։ Սակայն ձեզ չեմ խնդրում իմ կարծիքին համամիտ լինել։ Երբեմն իմ այս արարքը ծիծաղելի է թվում, խնդրեմ, ծիծաղեցե՛ք։ Նախազգուշացնում եմ ձեզ, որ դա ինձ բնավ չի վշտացնի։

Այդ բոպեին իմ աչքն ընկավ նրա աչքերին, որոնց մեջ արցունքներ էին վազում։ Իմ ձեռքին հպված նրա ձեռքը դողում էր, այտերը վառվում էին։ Նա խղճո՞ւմ էր ինձ։ Կարեկցությունը (մի զգացմունք, որին այնպես հեշտ հնազանդվում են բոլոր կանայք) իր մագիլները խրեց նրա անփորձ սրտի մեջ։ Զբոսանքի ամբողջ ընթացքում նա ցրված էր, ոչ ոքի հետ կոկետություն չէր անում, իսկ այդ մեծարժեք նշան է։

Մենք հասանք խորխորատին։ Կանայք թողեցին իրենց կավալերներին, բայց նա իմ թևը բաց չթողեց։ Տեղական դենդիների սրախոսությունները նրան չէին ծիծաղեցնում, խիստ զառիվայրությունը վիհի, որի առաջ նա կանգնած էր, նրան չէր վախեցնում, մինչդեռ մնացած օրիորդները ծղրտում և փակում էին իրենց աչքերը։

Վերադարձին ես շնորհեցի մեր տխուր խոսակցությունը. բայց իմ դատարկ հարցերին և կատակներին նա պատասխանում էր կարճ ու մտացիր։

— Դուք երբևէ սիրե՞լ եք արդյոք,— վերջապես հարցրի նրան։

Նա սևեռուն հայացքով նայեց ինձ, գլուխը տարուբերեց ու նորից մտախոհ դարձավ։ Պարզ էր, որ նա ինչ-որ բան է ուզում ասել, բայց չգիտեր, թե ինչից սկսի։ Նրա կուրծքն ալեկոծվում էր... Ի՞նչ անել. մարմաշե զգեստի թևքը թույլ պաշտպանություն է, և էլեկտրական կայծն իմ ձեռքից հոսեց, անցավ նրա ձեռքին։ Համարյա սիրո բոլոր զգացմունքներն այսպես են սկսվում, և մենք ինքներս հաճախ ենք խաբում մեզ, կարծելով, թե կինը մեզ սիրում է մեր ֆիզիկական կամ

բարոյական արժանիքների համար։ Իհարկե, դրանք նախապատրաստում, տրամադրում են նրա սիրտը՝ սրբազան կրակն ընդունելու, բայց, այնուամենայնիվ, առաջին շփումն է գործը վճռում։

— Ես այսօր շատ սիրալիր էի, այնպես չէ՞,— ասաց ինձ իշխանադուստրը բոնազբոսիկ ժպիտով, երբ մենք զբոսանքից վերադարձանք։

Մենք հրաժեշտ տվինք իրար։

Նա դժգոհ է իրենից. իրեն մեղադրում է սառնության մեջ... Օ՜, դա առաջին, գլխավոր հաղթանակն է։ Վաղը նա կցանկանա ինձ վարձատրել։ Ես այդ բոլորն արդեն անգիր գիտեմ. ահա թե ինչն է ձանձրալի։

4-ը Ռուսիսի

Այսօր ես տեսա Վերային։ Նա ինձ տանջեց իր խանդով։ Կարծեմ իշխանադստեր խելքին փչել է վստահել նրան իր սրտի գաղտնիքները։ Պետք է խոստովանել. հաջո՞ղ ընտրություն է։

— Ես կռահում եմ, թե այս բոլորը դեպի ինչ է տանում,— ասում էր ինձ Վերան,— ավելի լավ կանես՝ պարզ ասես ինձ հիմա, որ դու նրան սիրում ես։

— Իսկ եթե ես նրան չե՞մ սիրում։

— Հապա էլ ի՞նչ կարիք կա նրան հետապնդել, անհանգստացնել, բորբոքել երևակայությունը... Օ՜, ես քեզ լավ եմ ճանաչում։ Լսի՛ր, եթե դու ուզում ես, որ քեզ հավատամ, ապա մի շաբաթից հետո եկ Կիսլովոդսկ. վաղը չէ մյուս օրը մենք այնտեղ ենք փոխադրվում։ Իշխանուհին ավելի երկար է մնալու այստեղ։ Բնակարան վարձիր մեր կողքին. մենք բնակվելու ենք աղբյուրի մոտ գտնվող մեծ տան մեզոնինում։ Մեր տակի հարկում իշխանուհի Լիգովսկայան է, իսկ նրա կողքին նույն տանտերը ունի մի տուն, որ դեռ զբաղեցրած չէ... Կգա՞ս...

Ես խոստացա և նույն օրը մարդ ուղարկեցի այդ բնակարանը վարձելու։

Գրուշնիցկին եկավ ինձ մոտ երեկոյան ժամը վեցին և հայտնեց, որ վաղն իր նշանազգեստը պատրաստ կլինի ու հենց պարահանդեսին կհասնի։

— Վերջապես ես ամբողջ երեկոն նրա հետ կպարեմ... Ա՜յ թե կուշտ կխոսեմ,— ավելացրեց նա։

— Իսկ պարահանդեսը ե՞րբ է։

— Վաղը. մի՞թե չգիտես։ Մեծ տոն է, և այստեղի իշխանությունը ինքն է հանձն առել սարքել այն...

— Գնանք բուլվա՛ր...

— Ո՛չ մի դեպքում՝ այս գարշելի շինելը հագիս...

— Ինչպե՞ս, դու դադարեցիր դրան սիրե՞լ...

Ես մենակ գնացի և իշխանադուստր Մերիին հանդիպելով՝ մազուրկայի հրավիրեցի։ Նա զարմացած և ուրախացած էր թվում։

— Ես կարծում էի, թե դուք միայն անհրաժեշտությունից դրդված եք պարում, ինչպես անցյալ անգամ,— ասաց նա՝ շատ սիրալիր ժպիտով։

Նա, կարծեմ, բնավ չի նկատում Գրուշնիցկու բացակայությունը։

— Վաղը ձեզ մի բան հաճելի զարմանք կպատճառի,— ասացի նրան։

— Ի՞նչ բան...

— Այդ գաղտնիք է... պարահանդեսում ինքներդ կկռահեք։

Երեկոն վերջացրի Իշխանուհու մոտ։ Հյուրեր չկային, բացի Վերայից և մի շատ զվարճալի ծերուկից։ Տրամադրությունս տեղն էր, իմպրովիզացիա արեցի զանազան արտասովոր պատմություններ։ Իշխանադուստրը նստած էր դիմացս և իմ դատարկախոսությունն այնպիսի խոր, լարված, նույնիսկ քնքուշ ուշադրությամբ էր լսում, որ խիղճս տանջեց։ Ո՞ւր մնացին նրա աշխուժությունը, կոկետությունը, քմահաճությունները, դեմքի հանդուգն արտահայտությունը, արհամարհական ժպիտը, ցրված հայացքը...

Վերան այդ բոլորը նկատեց. նրա հիվանդոտ դեմքի վրա խոր տխրություն էր պատկերացած։ Լայն բազկաթոռի գիրկն ընկղմված՝ նա նստել էր պատուհանի մոտ, ստվերում... Ես խղճացի նրան...

Այն ժամանակ ես պատմեցի իմ և Վերայի ծանոթության, մեր սիրո ամբողջ դրամատիկ պատմությունը, հասկանալի է, այդ բոլորը սքողելով հորինված անուններով։

Ես այնպես կենդանի պատկերացրի իմ քնքշանքը, իմ անհանգստությունը, հրճվանքները, այնպիսի շահեկան լույսով ցուցադրեցի նրա վարմունքը, քնավորությունը, որ նա ակամա պետք է ներեր ինձ իմ կոկետությունն իշխանադստեր հետ։

Նա վեր կացավ, մեզ մոտ նստեց, աշխուժացավ... և մենք միայն գիշերվա ժամը երկուսին հիշեցինք, որ բժիշկները կարգադրել են տասնմեկին պառկել քնելու։

5-ը Հուլիսի

Պարահանդեսից կես ժամ առաջ Գրուշնիցկին եկավ ինձ մոտ՝ հետևազորային նշանագնդեստի ողջ փայլով։

Երրորդ կոճակից կախված էր բրոնզե փոքրիկ շղթա, իսկ դրանից՝ կրկնակ լորնետ. արտասովոր մեծության էպոլետների կողքերը վեր էին ծռված, ինչպես ամուրի թևիկներ. կոշիկները ճռճռում էին, ձախ ձեռքին բռնած ուներ դարչնագույն լայքե ձեռնոցները և գլխարկը, իսկ աջ ձեռքով ամեն րոպե վեր էր բարձրացնում սլորած և մանր գանգուրների վերածած մազերի փունջը։ Դեմքի վրա պատկերանում էին ինքնաբավականություն և միաժամանակ որոշ անվստահություն։ Նրա տոնական արտաքինը, հպարտ քայլվածքը ինձ կհարկադրեին քրքջալ, եթե այդ համապատասխաներ իմ մտադրություններին։

Նա գլխարկը ձեռնոցների հետ մեկտեղ սեղանին նետեց ու սկսեց ձգել իր փեշերը և իրեն կարգի բերել հայելու առաջ։ Ահագին սև թաշկինակը, որ նա փաթաթել էր շափազանց բարձր ենթափողկապին, որի խոզանին էր կոթնած նրա կզակը, կես մատնաչափ դուրս էր պրծել օձիքի տակից։ Դա քիչ թվաց, նա այդ թաշկինակը վեր քաշեց մինչև ականջները։ Այս դժվար աշխատանքից (նշանագգեստի օձիքը շատ էր նեղ և անհանգստացնող) արյունը նրա դեմքին տվեց։

— Դու, ասում են, այս օրերը սոսկալի քարշ ես տկել իմ իշխանադստեր ետևից,— ասաց նա բավական անփույթ և առանց ինձ նայելու։

— Մեզ՝ հիմարներիս, ո՞վ է այնքան շնորհք տվել, որ կարողանանք թեյ խմել,— պատասխանեցի, կրկնելով անցյալ

ժամանակի ամենաճարպիկ զվարճասերներից մեկի սիրած ասացվածքը, զվարճասեր, որին իր ժամանակ Պուշկինն է գովերգել։

— Ասա տեսնեմ, նշանագգեստը վրաս լավ նստու՞մ է... Օ՜ֆ, անիծված ջհուդ... Թևատակերս ինչպե՞ս են կտրում... Օծանելիք չունե՞ս։

— Աստված իմ, էլի՞ ես ուզում. քեզանից առանց այդ էլ վարդե շրթնաներկի հոտ է փչում...

— Ոչինչ։ Մի այստեղ տուր...

Նա մի կես բաժակ լցրեց իր փողկապի տակը, թաշկինակին, թևքերին։

— Դու պարելո՞ւ ես,— հարցրեց նա։

— Չեմ կարծում։

— Ես վախենում եմ, որ ստիպված լինեմ իշխանադստեր հետ սկսել մազուրկան. համարյա ոչ մի ֆիգուր չգիտեմ...

— Իսկ դու նրան մազուրկայի հրավիրե՞լ ես։

— Դեռ ոչ...

— Տե՜ս, քեզ կանխած չլինեն...

— Իսկապե՞ս,— ասաց նա, ձեռքով իր ճակատին խփելով։ — Ցտեսություն... գնամ շքադռան մոտ սպասեմ...

Նա արագ վերցրեց գլխարկն ու դուրս վազեց։

Կես ժամից հետո ես էլ գնացի։ Փողոցը մութ էր և դատարկ. ժողովարանի կամ պանդոկի շուրջը, ինչպես կուզեք անվանեք, հասարակություն էր խռնված. պատուհանները լուսավորված էին. գնդի երաժշտության հնչյուններն ականջիս էր հասցնում երեկոյան քամին։ Ես դանդաղ գնում էի։ Տխուր էի... Մի՞թե, մտածում էի ես, երկրի վրա իմ միակ դերն է կործանել ուրիշների հույսերը։ Այն ժամանակից, ինչ ես ապրում ու գործում եմ, բախտն ինձ միշտ հասցրել է ուրիշների դրամաների լուծման, կարծես թե առանց ինձ ոչ ոք չէր կարող ո՛չ մեռնել, ո՛չ հուսահատության հասնել։ Ես հինգերորդ գործողության անհրաժեշտ անձն եմ եղել. ակամա խաղացել եմ դահճի կամ դավաճանի ողորմելի դեր։ Դրանով ի՞նչ նպատակի է ձգտել բախտս։ Չլինի՞ նա ինձ ընտանեկան ռոմանների քաղքենիական ողբերգությունների հորինող է կարգել կամ, օրինակ, «Библиотека для чте-

ния»-ի համար վիպակներ մատակարարողի աշխատանքից... Ի՞նչ իմանաս... Քի՞չ մարդիկ կան, որոնք իրենց կյանքն սկսելիս՝ ուզում են վերջացնել այն որպես Մեծն Ալեքսանդր կամ լորդ Բայրոն, մինչդեռ իրենց ամբողջ կյանքում մնում են տիտղոսավոր խորհրդական...

Դահլիճ մտնելով, ես թաքնվեցի տղամարդկանց ամբոխի մեջ և սկսեցի դիտել նրանց։ Գրուշնիցկին կանգնած էր իշխանադստեր մոտ և մեծ ոգևորությամբ ինչ-որ բան էր ասում։ Իշխանադուստրը նրան ցրված էր լսում, այս ու այն կողմ նայում՝ հովհարը շրթունքներին դրած։ Դեմքին անհամբերություն կար, աչքերն ինչ-որ մեկին էին փնտրում իր շուրջը։ Ես կամացուկ մոտեցա նրանց ետևից, որպեսզի ծածուկ լսեմ նրանց խոսակցությունը։

— Դուք ինձ տանջում եք, իշխանադո՛ստր,— ասում էր Գրուշնիցկին,— դուք սաստիկ փոխվել եք այն օրից, ինչ ես ձեզ չեմ տեսել...

— Դուք էլ եք փոխվել,— պատասխանեց իշխանադուստրը, նրան նետելով մի արագ հայացք, որի մեջ Գրուշնիցկին չկարողացավ նկատել գաղտնի ծաղրը։

— Ե՞ս, ես փոխվե՞լ եմ... Օ՜, երբե՞ք։ Դուք գիտեք, որ այդ անհնարին է։ Ով ձեզ մեկ անգամ տեսել է, նա հավետ հետը կտանի ձեր աստվածային պատկերը...

— Դադարեցե՛ք...

— Իսկ ինչո՞ւ դուք այժմ չեք կամենում լսել այն, ինչ որ նորերս, և այնպես հաճախ, ունկնդրում էիք բարեհաճ կերպով...

— Որովհետև ես կրկնություններ չեմ սիրում,— պատասխանեց իշխանադուստրը ծիծաղելով...

— Օ՜, ես շարաչար սխալվել եմ... Ես, խելագարս, կարծում էի, թե գոնե այս ուսադիրներն իրավունք կտան ինձ հուսալու... Ո՜չ, ավելի լավ էր հավետ մնայի այն ատելի շարքային շինելով. գուցե նրան էի պարտական ձեր ուշադրության համար...

— Իսկապես, շինելը ձեզ ավելի է սազում...

Այդ պահին ես մոտեցա և բարևեցի իշխանադստերը։ Սա մի քիչ կարմրեց և արագ ասաց.

— Ճիշտ չէ՞ մսյո* Պեչորին, որ գորշ շինելը շատ ավելի է սազում մսյո Գրուշնիցկուն։

— Ես ձեզ հետ համաձայն չեմ,— պատասխանեցի ես։ — Նշանալգեստով նա է՛լ ավելի երիտասարդ է երևում։

Գրուշնիցկին չդիմացավ այս հարվածին։ Ինչպես բոլոր երեխաները, նա ծեր լինելու հավակնություն ունի. կարծում է, թե կրքերի խոր հետքերը, որոնք նկատվում են իր դեմքի վրա, փոխարինում են տարիների կնիքին։ Նա կատաղի հայացք նետեց ինձ վրա, ոտքը գետնին խփեց ու հեռացավ մեզանից։

— Խոստովանեցե՛ք,— ասացի ես իշխանադստերը,— որ թեպետ նա միշտ էլ շատ ծիծաղելի է եղել, բայց դեռ նորերս ձեզ հետաքրքրական էր թվում... իր գորշ շինելով...

Նա աչքերը կախեց և չպատասխանեց...

Գրուշնիցկին ամբողջ երեկոյի ընթացքում հետապնդում էր իշխանադստերը. պարում էր կամ նրա հետ, կամ նրան vis-a-vis։ Նա աչքերով ուտում էր իշխանադստերը, «ախ» էր քաշում և նրա գլուխը տանում էր իր աղերսանքով ու հանդիմանություններով։ Երրորդ կադրիլից հետո իշխանադուստրն արդեն ատում էր նրան։

— Ես այդ չէի սպասում քեզանից,— ասաց նա, մոտենալով ինձ և ձեռքս բռնելով։

— Ի՞նչ։

— Դու նրա հետ մազուրկա ես պարեցո՞ւ,— հարցրեց նա հանդիսավոր ձայնով,— նա ինձ խոստովանել է...

— Է՛, ի՞նչ կա որ։ Իսկ մի՞թե դա գաղտնիք է։

— Իհարկե... Ես պետք է այդ բանն սպասեի այդ անպիտան աղջկանից... այդ պլրուհուց... Բայց ես վրեժը կհանե՛մ։

— Գանգատվիր քո շինելից կամ քո ուսադիրներից, իսկ նրան ինչո՞ւ ես մեղադրում։ Նա ինչո՞վ է մեղավոր, որ այլևս դուր չես գալիս...

— Իսկ ինչո՞ւ էր հույսեր տալիս։

— Իսկ ինչո՞ւ էիր հույս դնում։ Ցանկալ և ձգտել որևէ բանի,— ես հասկանում եմ, բայց ո՞վ է հույս դնում։

* Պարոն (ֆր.)։

— Դու գրագը տարար, միայն թե ո՞չ բոլորովին,— ասաց նա, չարությամբ ժպտալով։

Մազուրկան սկսվեց։ Գրուշնիցկին ընտրում էր միայն իշխանադստերը։ Մյուս պարողներն էլ ամեն բոպե նրան էին ընտրում։ Դա ակներև դավադրություն էր իմ դեմ։ Ավելի լավ։ Իշխանադուստրը ցանկանում է խոսել ինձ հետ, նրան խանգարում են, նա կրկնապատիկ ավելի կցանկանա։

Ես մի երկու անգամ սեղմեցի իշխանադստեր ձեռքը։ Երկրորդ անգամ նա իր ձեռքը դուրս քաշեց՝ առանց մի խոսք անգամ ասելու։

— Ես այս գիշեր վատ կքնեմ,— ասաց նա ինձ, երբ մազուրկան վերջացավ։

— Դրա մեղքը Գրուշնիցկունն է։

— Օ՜, ո՜չ։ — Եվ նրա դեմքն այնպես մտածկոտ դարձավ, այնպես տխուր, որ ես խոսք տվի ինձ այդ երեկո անպայման համբուրել նրա ձեռքը։

Սկսեցին ցրվել։ Իշխանադստերը կառեթ նստեցնելիս ես արագորեն շրթունքներիս սեղմեցի նրա փոքրիկ ձեռքը։ Մութ էր, ու ոչ ոք չէր կարող այդ տեսնել։

Ես դահլիճ վերադարձա՝ ինքս ինձանից շատ գոհ։

Մեծ սեղանի շուրջը ընթրում էր երիտասարդությունը։ Այստեղ էր նաև Գրուշնիցկին։ Երբ ներս մտա, բոլորը լռեցին։ Երևում էր, որ իմ մասին էին խոսում։ Անցյալ պարահանդեսից իվեր շատերն են ինձանից դժգոհ, մանավանդ դրագուն կապիտանը, իսկ հիմա, կարծեմ, բացարձակապես թշնամական խումբ է կազմակերպվում իմ դեմ՝ Գրուշնիցկու հրամանատարությամբ։ Նա այնպիսի հպարտ և քաջարի մարդու տեսք ունի...

Շատ ուրախ եմ. ես սիրում եմ թշնամիներին, թեպետ ոչ քրիստոնեաբար։ Նրանք ինձ զվարճացնում են, գրգռում արյունս։ Միշտ զգաստ լինել, որսալ ամեն հայացք, ամեն մի բառի նշանակություն, կռահել հակառակորդի մտադրությունը, քանդել դավադրությունները, խաբված ձևանալ և հանկարծ մի հարվածով խորտակել խորամանկություններից ու դիտավորություններից կառուցված ահագին և մեծ աշխատանքով ստեղծված ողջ շենքը,— ահա թե ինչն եմ կյանք անվանում։

Ընթրիքի ընթացքում Գրուշնիցկին քշփշում և ակնարկներ էր փոխանակում դրագուն կապիտանի հետ։

6-ը Հունիսի

Այսօր առավոտյան Վերան իր ամուսնու հետ Կիսլովոդսկ մեկնեց։ Ես հանդիպեցի նրանց կառեթին, երբ գնում էի իշխանուհի Լիգովսկայայի մոտ։ Վերան ինձ գլխով արեց։ Նրա հայացքի մեջ կշտամբանք կար։

Իսկ ո՞վ է մեղավոր. ինչո՞ւ չի ուզում առանձնության մեջ իր հետ տեսնվելու հնարավորություն տալ ինձ։ Սերը կրակի նման է. սնունդ չստանալիս մարում է։ Գուցե խանդն անի այն, ինչ չկարողացավ անել իմ խնդրանքը։

Ես մի ամբողջ ժամ նստեցի իշխանուհու մոտ։ Մերին դուրս չեկավ, հիվանդ է։ Երեկոյան նա զբոսանքի չեկավ։ Նոր կազմված խումբը, որի անդամները զինված էին լոռնետներով, իրոք, ահեղ տեսք էր ընդունել։ Ես ուրախ եմ, որ իշխանադուստրը հիվանդ է. սրանք որևէ հանդգնություն թույլ կտային նրա նկատմամբ։ Գրուշնիցկու սանրվածքն անխնամ է. հուսահատի տեսք ունի։ Նա, կարծեմ, իրոք վշտացած է, մանավանդ նրա ինքնասիրությունն է վիրավորված։ Բայց կան մարդիկ, որոնց մեջ հուսահատությունն անգամ զվարճալի է։

Տուն դառնալով, ես նկատեցի, որ ինձ ինչ-որ բան է պակասում։ Ես իշխանադստերը չտեսա։ Նա հիվանդ է։ Չլինի՞ թե ես իրոք սիրահարված եմ... ի՜նչ անհեթեթություն։

7-ը Հունիսի

Առավոտյան ժամը 11-ին (այն ժամանակ, երբ իշխանուհի Լիգովսկայան սովորաբար լքրտնում է Երմոլովյան վանայում) ես անցնում էի նրա տան մոտով։ Իշխանադուստրը մտախոհ նստած էր պատուհանի մոտ. ինձ տեսնելով, արագ ոտքի կանգնեց։

Ես նախասենյակ մտա։ Ոչ ոք չկար, և ես առանց զեկուցման, այստեղի բարքերի ազատությունից օգտվելով, հյուրասենյակ անցա։

Աղոտ դալկություն էր պատել իշխանադստեր հաճելի դեմքին։ Նա կանգնած էր դաշնամուրի մոտ, մի ձեռքով բազկա-

թոռի թիկունքին կռթնած։ Այդ ձեռքը հազիվ նկատելի դողում էր։ Ես կամացուկ մոտեցա և ասացի.

— Դուք ինձանից նեղացե՞լ եք։

Նա ինձ վրա բարձրացրեց մի հոգնատանջ, խոր հայացք և գլուխն օրորեց։ Նրա շրթունքներն ուզում էին ինչ-որ բան ասել և չկարողացան։ Աչքերն արցունքով լցվեցին։ Նա թույլ-թույլ իջավ բազկաթոռին ու ձեռքերով ծածկեց դեմքը։

— Ձեզ ի՞նչ պատահեց,— ասացի ես՝ նրա ձեռքը բռնելով։

— Դուք ինձ չեք հարգում... Օ՜, թողե՛ք ինձ...

Ես մի քանի քայլ արեցի... Նա շտկվեց բազկաթոռում, նրա աչքերը փայլատակեցին...

Դռան ունկը բռնելով՝ ես կանգ առա և ասացի.

— Ներեցեք ինձ, իշխանադուստր։ Ես խելացնորի պես վարվեցի... Մյուս անգամ այսպիսի բան չի պատահի. ես իմ միջոցները ձեռք կառնեմ... Ձեր ինչի՞ն է պետք իմանալ այն, ինչ մինչև այժմ կատարվել է իմ հոգում։ Դուք այդ երբեք չեք իմանա, և ավելի լավ ձեզ համար։ Մնաք բարով։

Երբ ես հեռանում էի, ինձ թվում էր, թե լսեցի, որ նա լալիս է։

Ես մինչև երեկո ոտքով թափառեցի Մաշուկի շրջակայքում, սոսկալի հոգնեցի և, տուն գալով, բոլորովին ուժասպառ ընկա անկողնու վրա։

Ինձ այցելեց Վերները։

— Արդյո՞ք ճիշտ է,— հարցրեց նա,— որ դուք ամուսնանում եք իշխանադուստր Լիգովսկայայի հետ։

— Ի՞նչ կա որ։

— Ամբողջ քաղաքն է ասում. իմ բոլոր հիվանդներն զբաղված են այդ լուրով, իսկ հիվանդներն արդեն հայտնի է, թե ինչ մարդիկ են. ամեն ինչ գիտեն։

«Դա Գրուշնիցկու սարքածն է»,— մտածեցի ես։

— Որպեսզի ապացուցեմ ձեզ, բժիշկ, այդ լուրերի ստությունը, գաղտնաբար հայտնում եմ ձեզ, որ վաղը ես Կիսլովոդսկ եմ փոխադրվում...

— Եվ իշխանադուստրը նույնպե՞ս...

— Ոչ նա դեռ մի շաբաթ էլ մնալու է այստեղ...

— Ուրեմն դուք չե՞ք ամուսնանում...

— Բժի՛շկ, բժի՛շկ, հապա ինձ նայեցե՛ք. մի՞թե ես նման եմ փեսացուի կամ որևէ նման բանի։

— Ես այդպիսի բան չեմ ասում... Բայց գիտե՞ք, կան դեպքեր...— ավելացրեց նա, խորամանկ ժպտալով,— երբ ազնիվ մարդը պարտավոր է ամուսնանալ, և կան մայրիկներ, որոնք գոնե չեն կանխում այդ դեպքերը... Այսպես, ուրեմն, ես, որպես ձեր մտերիմ ծանոթը, խորհուրդ եմ տալիս ձեզ՝ ավելի զգույշ լինել... Այստեղ, ջրերում օդը չափազանց վտանգավոր է, քանի-քանի սքանչելի երիտասարդներ եմ տեսել ես, որոնք արժանի էին լավագույն վիճակի, բայց այստեղից ուղղակի պսակվելու են մեկնել... Նույնիսկ, կհավատա՞ք, ի՞նձ են ցանկացել ամուսնացնել։ Այդ մի գավառական մայրիկ էր, որի աղջիկը շատ գունատ էր։ Ես դժբախտություն ունեցա ասելու, որ դեմքի գույնը կվերադառնա հարսանիքից հետո։ Այն ժամանակ նա շնորհակալության արցունքներն աչքերին առաջարկեց ինձ իր աղջկա ձեռքը և իր ամբողջ կարողությունը՝ հիսուն շունչ, կարծեմ։ Բայց ես պատասխանեցի, որ դրան անընդունակ եմ...

Վերները գնաց՝ լիովին համոզված լինելով, որ ինձ նախազգուշացրեց։

Նրա խոսքերից ես նկատեցի, որ իմ և իշխանադստեր մասին քաղաքում արդեն զանազան վատ լուրեր են տարածել։ Դա Գրուշնիցկուն էժան չի նստի։

10-ը Հունիսի

Արդեն երեք օր է, ինչ ես Կիսլովոդսկում եմ։ Ամեն օր Վերային տեսնում եմ, ջրհորի մոտ և զբոսավայրում։ Առավոտյան արթնանում եմ, նստում պատուհանի մոտ և լոնետս նրա պատշգամբի կողմն ուղղում։ Նա վաղուց արդեն հագնված է և սպասում է պայմանական նշանին։ Հանդիպում ենք, իբր թե պատահաբար, այն այգում, որը մեր տների մոտից ձգվում է դեպի ցած, ուր ջրհորն է։ Կենարար լեռնային օդը վերադարձրել է նրա դեմքի գույնը և ուժերը։ Զուր չէ, որ նարզանը դյուցազնական աղբյուր է կոչվում։ Այստեղի բնակիչները պնդում են, թե Կիսլովոդսկի օդը սիրելու է տրամադրում, թե

այստեղ լուծում են ստանում բոլոր այն սիրավեպերը, որոնք երբևէ սկսված են եղել Մաշուկի ստորոտում։ Եվ, իսկապես, այստեղ ամեն ինչ առանձնության բույր ունի, ամեն ինչ խորհրդավոր է՝ թե՛ լորիների ծառուղիների խիտ հովանիները, որոնք խոնարհվում են հեղեղատի վրա, որ աղմուկով ու փրփրաղեղ, սալաքարից-սալաքար գահավիժելով, ճանապարհ է բացում իր համար կանաչ սարերի միջև, թե՛ կիրճերը, որոնք լի են մշուշով ու լռությամբ և որոնց ճյուղավորումներն այստեղից տարածվում են բոլոր կողմերը, թե՛ թարմությունը բուրումնալից օդի, որը ծանրացած է հարավային բարձր խոտերի և սպիտակ ակացիայի արձակած արտաշնչումներով, թե՛ մշտական, քաղցրօրոր աղմուկը սառնորակ վտակների, որոնք, հովտի ծայրին միմյանց հանդիպելով, աշխույժ վազում են՝ առաջկտրուկի անելով, և, վերջապես, Պոդկումոկի մեջ նետվելով։ Այս կողմից կիրճն ավելի լայն է և դառնում է մի կանաչ լեռնագոգ. այստեղով է ոլորվում փոշոտ ճանապարհը։ Ամեն անգամ, երբ նայում եմ այդ ճանապարհին, ինձ թվում է, թե այնտեղով կառեթ է գալիս, իսկ կառեթի պատուհանից դուրս է նայում վարդագույն մի դեմք։ Արդեն շատ կառեթներ են անցել այդ ճանապարհով, իսկ նա դեռ չկա։ Սլոբոդկան, որ բերդի ետևն է, մարդաբնակ է դարձել։ Իմ բնակարանից մի քանի քայլ հեռավորության վրա, բլրի վրա կառուցված ճաշարանում երեկոներն սկսում են կրակներ ածկայծել բարդիների կրկնակի շարքերի միջով։ Բաժակների աղմուկն ու չխկոցը լսվում է մինչև ուշ գիշեր։

Ոչ մի տեղ այնքան շատ Կախեթի գինի և հանքային ջուր չեն խմում, որքան այստեղ։

Բայց արհեստն այս երկու շա՜տ շատերը, գիտեմ,
Շփոթում են, խառնում։ Ես այդ մարդկանցից չեմ։

Գրուշնիցկին իր խմբով ամեն օր պանդոկում աղմկում է և համարյա չի բարևում ինձ։

Նա միայն երեկ է եկել, այնինչ արդեն կուվել է երեք ծեր մարդկանց հետ, որոնք իրենից առաջ են ցանկացել վանա մտնել։ Բացարձակապես կարելի է ասել. դժբախտությունները նրա մեջ մարտական ոգի են զարգացնում։

Վերջապես նրանք եկան։ Ես նստած էի պատուհանի մոտ, երբ լսեցի նրանց կառեթի թխկթխկոցը։ Սիրտս տրոփեց... Այս ի՞նչ բան է։ Մի՞թե սիրահարված եմ։ Ես այնպես հիմար ձևով եմ ստեղծված, որ այդ ինձանից կարելի է սպասել։

Ես նրանց մոտ ճաշեցի։ Իշխանուհին ինձ շատ քնքուշ է նայում և չի հեռանում աղջկանից... Այդ վատ է։ Բայց դրա փոխարեն Վերան խանդում է ինձ իշխանադստեր նկատմամբ։ Ի՞նչ բարեկեցություն եմ ձեռք բերել։ Կինն ի՞նչ չի անի՝ իր ախոյանին վշտացնելու համար։ Ես հիշում եմ մի կին ինձ սիրեց այն պատճառով, որ ես մեկ ուրիշին էի սիրում։ Կնոջ խելքից ավելի պարադոքսալ բան չկա։ Կանանց որևէ բանում համոզելը դժվար է, պետք է նրանց մինչև այն տեղը հասցնել, որ նրանք իրենք համոզեն իրենց։ Ապացույցների կարգը, որոնցով նրանք ոչնչացնում են իրենց կանխակալ կարծիքները, շատ յուրահատուկ է։ Նրանց դիալեկտիկան սովորելու համար հարկավոր է սեփական ուղեղում շուռ տալ տրամաբանության բոլոր դպրոցական կանոնները։ Օրինակ, վերցնենք մի սովորական մտածելակերպ։

Այս մարդը սիրում է ինձ, բայց ես մարդու գնացած կին եմ. հետևաբար, նրան չպետք է սիրեմ։

Կանանց հատուկ եղանակն է։

Ես նրան չպետք է սիրեմ, որովհետև ես ամուսնացած կին եմ։ Բայց նա ինձ սիրում է, հետևաբար...

Այստեղ մի քանի կետ, որովհետև բանականությունն այլևս ոչինչ չի ասում, այլ մեծ մասամբ խոսում են՝ լեզուն, աչքերը և, դրանց հետևից, սիրտը, եթե այն գոյություն ունի։

Ի՞նչ կպատահի, եթե այս օրագիրը որևէ կնոջ աչքին ընկնի։ «Զրպարտությո՞ւն»— կգոչի նա զայրույթով։

Այն օրից, ինչ բանաստեղծները գրում են, և կանայք նրանց գրածը կարդում (որի համար ամենախորին շնորհակալություն), նրանց այնքան են հյուծեցրել անվանել, որ, իրոք, իրենց պարզամտության շնորհիվ, հավատացել են այդ կոմպլիմենտին, մոռանալով, որ նույն բանաստեղծները փողի համար Ներոնին մեծարելիս կիսաստված էին կոչում...

Ինձ չէր վայելի նրանց մասին այսպիսի շարությամբ խոսել, ի՛նձ, որ բացի նրանցից, ոչինչ չի սիրում աշխարհում, ի՛նձ, որ միշտ պատրաստ է եղել նրանց համար զոհաբերելու իր հանգիստը, փառասիրությունը, կյանքը... Բայց չէ՞ որ ես դժգոհության ու վիրավորված ինքնասիրության բռնկման րոպեին չէ, որ ջանում եմ նրանց դեմքից ետ քաշել այն կախարդական քողը, որի միջով միայն սովոր հայացքն է թափանցում։ Ո՛չ, այն բոլորը, որ ես ասում եմ նրանց մասին, հետևանք է միայն՝

Կատաղության սառն հայեցման և սրտի դառն ապրումների։*

Կանայք պետք է ցանկանան, որ բոլոր տղամարդիկն էլ իրենց նույնքան լավ ճանաչեն, ինչքան ես եմ ճանաչում, որովհետև՝ ես նրանց հարյուրապատիկ ավելի եմ սիրում այն ժամանակից ի վեր, ինչ նրանցից չեմ վախենում և թափանցել ու ճանաչել եմ նրանց մանր թուլությունները։

Ի դեպ, Վերները մի քանի օր առաջ կանանց համեմատում էր այն կախարդված անտառի հետ, որի մասին պատմում է Տասսոն իր «Ազատագրված Երուսաղեմ»-ում. «Բավական է, որ մոտենաս,— ասում էր նա,— բոլոր կողմերից վրադ կթափվեն այնպիսի սարսափներ, որ ասված ազատի՝ պարտականություն, հպարտություն, քաղաքավարություն, ընդհանուր կարծիք, ծաղր, արհամարհանք... Միայն թե պետք է դրանց չնայես, աչլ ուղղագիծ առաջ գնաս։ Այդ դեպքում փոքր առ փոքր հրեշները կանհետանան, և քո առաջ կբացվի խաղաղ ու լուսավոր մի բացատ, որտեղ կանաչ մրտենին է ծաղկում։ Բայց վայը եկել տարել է քեզ, եթե հակառակի պես առաջին քայլափոխիդ սիրտդ դողա ու ետ նայես»։

12-ը Ռուսիսի

Այսօրվա երեկոն առնատ էր պատահարներով։ Կիսլովոդսկից մոտ երեք վերստ հեռավորության վրա, կիրճում, որտեղ Պոդկումոկ գետակն է հոսում, կա մի ժայռ, որ Կոլցո է կոչվում։ Դա մի դուռ է, որ բնությունն է գոյացրել։ Այդ դուռը գտնվում է բարձր բլրի վրա, և մայր մտնող արևը նրա միջով իր վերջին, բոցավառ հայացքն է գցում աշխարհի վրա։ Բազմամարդ կավալկադը գնում էր այդտեղ՝ քարե պատուհանի միջով արևի մայրամուտը դիտելու։ Ճիշտն ասած, նրանցից ոչ ոք արևի մասին չէր մտածում։ Ես և իշխանադուստրը գնում էինք կողք-կողքի։ Տուն վերադառնալիս պիտի անցնենք Պոդկումոկը։ Ամենասակավաջուր լեռնային գետակները վտանգավոր են, մանավանդ, որ նրանց հատակը կատարյալ կալեյդոսկոպ է. ալիքների ճնշումից ամեն օր փոխվում է. այնտեղ, որտեղ երեկ քար էր, այսօր փոս է։ Ես բռնեցի իշխանադստեր ձիու սանձը և ձին քաշեցի դեպի ջուրը, որը ծնկներից վեր չէր։ Մենք կամացուկ սկսեցինք շեղակի առաջ շարժվել հոսանքի դեմ։ Հայտնի է, որ արագահոս գետակներ անցնելիս՝ ջրին չպետք է նայել, որովհետև իսկույն գլուխներդ կպտտվի։ Ես մոռացա այս մասին նախազգուշացնել իշխանադուստր Մերիին։

Մենք արդեն գետի մեջտեղին էինք հասել, ամենասրընթաց տեղին, երբ իշխանադուստրը հանկարծ օրորվեց թամբի վրա։ «Ուշքս գնո՞ւմ է»,— արտասանեց նա թույլ ձայնով...։ Ես արագ կռացա նրա կողմը, ձեռքով օղակեցի նրա ճկուն իրանը։

— Վերև նայեցեք,— շշնջացի նրան,— այդ ոչինչ, միայն թե մի՛ վախեցե՛ք. ես ձեզ հետ եմ։

Նա սկսեց իրեն լավ զգալ։ Ուզում էր ազատվել իմ ձեռքից, բայց ես ավելի ամուր օղակեցի նրա քնքուշ, փափուկ իրանը։ Իմ այտը համարյա քսվում էր նրա այտին. նա ասես թե բոց էր շնչում։

— Այդ ի՞նչ եք անում... աստվա՞ծ իմ...

Ես ուշադրություն չէի դարձնում նրա դողալուն ու շփոթմունքին և, շրթունքներս դիպան նրա քնքուշ այտին։ Նա ցնցվեց, բայց ոչինչ չասաց։ Մենք գնում էինք մյուսների ետևից. այդ ոչ ոք չտեսավ։ Երբ ափ դուրս եկանք, բոլորն էլ արագ քշեցին ձիերը։ Իշխանադուստրն իր ձին ետ պահեց։ Ես մնացի նրա կողքին։ Երևում էր, որ իմ լռությունը նրան անհանգստացնում է, բայց ես երդվեցի, հետաքրքրությունից դրդված, ոչ մի խոսք չասել։ Ուզում էի տեսնել, թե նա ինչպես է դուրս գալու այդ դժվար դրությունից։

— Դուք կամ արհամարհում եք ինձ, կամ շատ եք սիրում,— վերջապես ասաց նա լացակումած։ — Գուցե ուզում եք ինձ ձեռք առնել, հուզել իմ հոգին ու հետո թողնել...։ Դա

* Երկտողը բերված է Պուշկինի «Եվգենի Օնեգինից»։

այնքան անարգ, սոսոր բան կլիներ, որ լոկ այդպիսի են-թադրությունը... Օ՜, ո՜չ, այնպես չէ՞,— ավելացրեց նա քնքուշ վստահություն արտահայտող ձայնով,— այնպես չէ՞, իմ մեջ ոչ մի այնպիսի բան չկա, որը բացառեր հարգանքը։ Ձեր հանդուգն վարմունքը... ես պե՛տք է, պե՛տք է ներեմ, որովհետև թույլ տվեցի։ Պատասխանեցե՛ք, դե՛ խոսեք, ես ուզում եմ լսել ձեր ձայնը։

Վերջին խոսքերում կար այնպիսի կանացի անհամբերություն, որ ես ակամա ժպտացի։ Բարեբախտաբար մութն ընկնում էր... Ես ոչինչ չպատասխանեցի։

— Դուք լռո՞ւմ եք,— շարունակեց նա,— գուցե ուզո՞ւմ եք, որպեսզի ես առաջինն ասեմ, որ սիրում եմ ձեզ...

Ես լուռ էի...

— Արդյոք ուզո՞ւմ եք այդ,— շարունակեց նա, արագ շուռ գալով իմ կողմը։ Նրա հայացքի և ձայնի վճռականության մեջ ինչ-որ սարսափելի բան կար...

— Ինչի՞ համար,— պատասխանեցի ես՝ ուսերս թոթվելով։

Նա մտրակեց իր ձին և ամբողջ թափով առաջ սլացավ նեղ, վտանգավոր ճանապարհով։ Դա այնպես արագ կատարվեց, որ ես հազիվ կարողացա հասնել, այն էլ այն ժամանակ, երբ նա արդեն միացել էր մնացած հասարակությանը։ Մինչև տուն հասնելը նա շարունակ խոսում և ծիծաղում էր։ Նրա շարժումների մեջ ինչ-որ տենդային բան կար։ Ոչ մի անգամ վրաս չնայեց։ Բոլորը նկատեցին այդ արտասովոր ուրախությունը։ Եվ իշխանուհին ներքուստ ուրախանում էր՝ իր աղջկան նայելով։ Իսկ աղջիկը պարզապես շղային տագնապի մեջ էր։ Նա գիշերն անքուն է անցկացնելու և լաց է լինելու։ Այս միտքն ինձ անսահման հաճույք է պատճառում։ Կան րոպեներ, երբ ես հասկանում եմ Վամպիրին։ Եվ դեռ բարի մարդու անուն ունեմ ու ձգտում եմ այդ անվան։

Ձիերից իջնելով, կանայք մտան իշխանուհու տունը։ Ես հուզված էի ու սլացա սարերը՝ գլխումս խռնված մտքերը քամուն տալու։ Ցողաթաթախ երեկոն արբեցնող զովություն էր շնչում։ Լուսինը բարձրանում էր մութ գագաթների ետևից։ Իմ չպայտած ձիու ամեն մի քայլը խուլ հնչյուն էր արձակում կիրճերի լռության մեջ։ Ջրվեժի մոտ ջրեցի ձիս, մի երկու

անգամ ագահ-ագահ ներս ծծեցի հարավային գիշերվա թարմ օդը և բռնեցի վերադարձի ճանապարհը։ Ես գնում էի սլոբոդկայով։ Կրակները պատուհաններում սկսում էին մարել, բերդի պարսպաթմբի ժամապահները և մերձակա պահակակետերի պահակ կազակները երկար ու ձիգ ձայն էին տալիս իրար։

Ջորաբերանին կառուցված սլոբոդկայի տներից մեկում ես նկատեցի արտակարգ լուսավորություն։ Ժամանակ առ ժամանակ հնչում էին աններդաշնակ խոսակցություն և կանչեր, որոնք մատնում էին զինվորական քեֆի գոյությունը։ Ես իջա ձիուց և գաղտագողի մոտեցա պատուհանին։ Փեղկը, որ լրիվ չէր ծածկված, ինձ հնարավորություն տվեց տեսնելու քեֆ անողներին և լսելու նրանց խոսքերը։ Խոսում էին իմ մասին։

Դրագուն կապիտանը, գինուց տաքացած, բռունցքը խփեց սեղանին՝ ուշադրություն պահանջելով.

— Պարոնա՜յք,— ասաց նա,— անհանդուրժելի է. Պեչորինին պետք է խրատել։ Այդ պետերբուրգցի դեղնակտուցները միշտ մեծամտանում են, մինչև որ նրանց քթին խփես։ Նա կարծում է, թե միայն ինքն է ընտիր հասարակության մեջ ապրել, որովհետև միշտ մաքուր ձեռնոցներ ու սրբած կոշիկներ է հագնում։

— Եվ ի՞նչ գոռոզ ժպիտ ունի։ Այնինչ ես հավատացած եմ, որ նա վախկոտ է, այո՛, վախկոտ։

— Ես նույնն եմ կարծում,— ասաց Գրուշնիցկին,— նա սիրում է կատակի տալով օձիքն ազատել։ Ես մի անգամ նրան այնպիսի բաներ ասացի, որ եթե ուրիշը լիներ, ինձ տեղնուտեղը կտոր-կտոր կաներ, իսկ Պեչորինը բոլորը կատակի տվեց։ Ես, հասկանալի է, իրեն չհրավիրեցի, որովհետև այդ նրա գործն էր։ Ասե՞նք, հետը գլուխ դնել էլ չէի ցանկանում...

— Գրուշնիցկին շարացած է Պեչորինի վրա այն պատճառով, որ նա իշխանադստերը խլել է սրա ձեռքից,— ասաց ինչ-որ մեկը։

— Ինչե՞ր եք հնարում։ Ես, արդարև, մի քիչ քարշ էի գալիս իշխանադստեր ետևից, բայց իսկույն պոկ եկա, որովհետև ամուսնանալ չեմ ուզում, իսկ աղջիկ վարկաբեկելու սովորություն չունեմ։

— Այո՛, ես ձեզ հավատացնում եմ, որ նա առաջնագույն վնասկոտն է, այսինքն՝ Պեչորինը և ոչ թե Գրուշնիցկին, իսկ Գրուշնիցկին կտրիճ է և միաժամանակ իմ անկեղծ բարեկամը,— ասաց դարձյալ դրագուն կապիտանը։ — Պարոնա՛յք, այստեղ նրան ոչ ոք չի՞ պաշտպանում։ Ոչ ո՞ք. ավելի՞ լավ։ Ուզո՞ւմ եք նրա քաջությունը փորձել։ Այդ ձեզ կզվարճացնի...

— Ցանկանում ենք. միայն թե ինչպե՞ս։

— Ա՛յ, լսեցե՛ք։ Գրուշնիցկին նրանից առանձնապես նեղացած է։ Առաջին դերը՝ նրան։ Նա որևէ հիմար բան պատրաստակ կբռնի ու Պեչորինին մենամարտի կկանչի... Սպասեցե՛ք, բանը հենց այս է... Մենամարտի կկանչի. լա՛վ։ Այս բոլորը մենամարտի կանչելը, պատրաստությունները, պայմանները, որքան կարելի է հանդիսավոր ու սարսափելի կլինեն։ Ես կձեռնարկեմ այս գործը. ես քո մարտավկան կլինեմ, իմ խե՛ղճ բարեկամ։ Լա՛վ։ Սակայն ահա թե ինչ խորամանկություն կբանեցնենք. ատրճանակների մեջ մենք գնդակ չենք դնի։ Գլխովս պատասխանատու եմ, որ Պեչորինը կվախենան վեց քայլի վրա կկանգնեցնեմ սրանց իրար դեմ, սատանա՞ն տանի։ Համաձա՞յն եք, պարոննե՛ր։

— Հիանալի՞ է մտածված... համաձայն ենք... ինչո՞ւ չհամաձայնենք,— լսվեց բոլոր կողմերից։

— Իսկ դո՞ւ, Գրուշնիցկի։

Ես սրտի թրթիռով էի սպասում Գրուշնիցկու պատասխանին։ Սառը չարություն պատեց ինձ, երբ մտածեցի, որ եթե չլիներ այս դիպվածը, ապա այս հիմարները կարող էին ծաղր ու ծանակի առարկա դարձնել ինձ։ Եթե Գրուշնիցկին չհամաձայներ, ես նրա վզովը կընկնեի։ Բայց կարճատև լռությունից հետո նա վեր կացավ իր տեղից, ձեռքը մեկնեց կապիտանին և շատ ծանրակշիռ տոնով ասաց. «Լա՛վ, ես համաձայն եմ»։

Դժվար է նկարագրել այդ ամբողջ արգո խմբի հրճվանքը։ Ես տուն դարձա։ Ինձ փոթորկում էին երկու տարբեր զգացմունքներ։ Առաջինը տխրությունն էր։ Դրանք բոլորն ինչո՞ւ են ինձ ատում,— մտածում էի ես։ Ինչի՞ համար։ Արդյո՞ք վիրավորել եմ մեկնումեկին։ Ո՛չ։ Մի՞թե ես պատկանում եմ այն մարդկանց թվին, որոնց լոկ տեսքն անբարյացակամություն է առաջ բերում։ Եվ զգում էի, որ թունալի չարությունը կամաց-կամաց լցնում է իմ հոգին։ Զգուշացե՛ք, պարոն Գրուշնիցկի,— ասում էի ես, ետ ու առաջ քայլելով սենյակում։ Ինձ հետ այդպես կատակել չի՞ կարելի։ Դուք կարող եք թանկ վճարել ձեր հիմար ընկերների հավանությանն արժանանալու համար։ Ինձ խաղալիք չկարծե՛ք։

Ողջ գիշեր չքնեցի։ Առավոտյան դեմ նարնջի պես դեղնած էի։

Առավոտը ջրհորի մոտ հանդիպեցի իշխանադստերը։

— Դուք հիվա՞նդ եք,— ասաց նա՝ սևեռուն հայացքով ինձ նայելով։

— Գիշերը չեմ քնել։

— Ես նույնպես... ձեզ էի մեղադրում... գուցե անտեղի՞։ Բայց բացատրվեցեք. կարող եմ ամեն ինչ ներել ձեզ։

— Արդյո՞ք ամեն ինչ...

— Ամե՞ն ինչ... միայն թե ճշմարտությունն ասեք... միա՞յն թե շուտով... Գիտեք, ես շատ եմ մտածել, ջանալով բացատրել, արդարացնել ձեր վարմունքը. գուցե դուք երկյո՞ղ եք կրում արգելքներից, որոնք կարող են հարուցվել իմ հարազատների կողմից... Այդ ոչի՞նչ. երբ նրանք իմանան... (նրա ձայնը դողաց) ես կխնդրեմ, կստանամ նրանց համաձայնությունը։ Թե՞ ձեր սեփական դրությունը... Բայց իմացած եղե՛ք. ես ամեն ինչ կարող եմ զոհաբերել նրան, ում սիրում եմ... Օ՜, շու՛տ պատասխանեցե՛ք, խղճացե՛ք... Դուք ինձ չե՞ք արհամարհում, այնպես չէ՞։

Նա բռնեց իմ ձեռքը։

Իշխանուհին Վերայի ամուսնու հետ գնում էր մեր առջևից և ոչինչ չտեսավ, բայց մեզ կարող էին տեսնել զբոսնող հիվանդները՝ բոլոր հետաքրքրասերների մեջ ամենից շատ հետաքրքրվող այդ բամբասողները։ Եվ ես արագ ազատեցի իմ ձեռքը նրա կրքոտ սեղմումից։

— Ես ձեզ կասեմ ամբողջ ճշմարտությունը,— պատասխանեցի իշխանադստերը,— չեմ աշխատի արդարանալ, ոչ էլ վարմունքս բացատրել։ Ես ձեզ չեմ սիրում։

Նրա շրթունքները թեթևակի գունատվեցին...

— Թողե՛ք ինձ,— ասաց նա հազիվ լսելի ձայնով։

Ես թոթվեցի ուսերս, շուռ եկա և գնացի։

14-ը Ռուգիսի

Ես երբեմն արհամարհում եմ ինձ... դրանից չի՞ արդյոք, որ արհամարհում եմ նաև ուրիշներին... Ես անընդունակ եմ դարձել ազնիվ մղումների, վախենում եմ ինքս իմ աչքում ծիծաղելի թվալ։ Իմ տեղ ուրիշը՝ իշխանադստերը կառաջարկեր son coeur et sa fortune*, բայց ամուսնանալ բառն ինչ-որ խորհրդավոր իշխանություն ունի ինձ վրա. ես որքան էլ բուռն սիրեմ որևէ կնոջ, եթե նա լոկ զգալ տա ինձ, որ պետք է հետը ամուսնանամ — մնա՞ս բարով, սե՛ր։ Սիրտս քար կկտրի, և նրան այլևս ոչինչ նորից չի տաքացնի։ Ես պատրաստ եմ բոլոր զոհողություններին, բացի սրանից։ Քսան անգամ կյանքս, մինչև անգամ պատիվս, վտանգի կենթարկեմ... բայց ազատությունս չեմ ծախի։ Ինչո՞ւ եմ այսպես թանկ գնահատում այդ ազատությունը. ինչի՞ս է պետք. ինչի՞ եմ պատրաստում ինքս ինձ, ի՞նչ եմ սպասում ապագայից... Ճիշտն ասած, ուղղակի ոչինչ։ Դա ինչ-որ բնածին ահ է, մի անմեկնելի նախազգացում... Չէ՞ որ կան մարդիկ, որոնք, առանց գիտակցելու, թե ինչո՞ւ, վախենում են սարդերից, բողոքներից, մկներից... Խոստովանե՞մ... Երբ ես մանուկ էի, մի պառավ կին մորս համար գուշակեց իմ բախտը։ Նա ինձ գուշակեց մահ՝ չար կնոջ երեսից։ Այն ժամանակ այդ ինձ խորապես զարմացրեց. իմ հոգում ծնունդ առավ մի անհաղթահարելի զզվանք դեպի ամուսնությունը... Մինչդեռ ինչ-որ բան ինձ ասում է, թե նրա գուշակությունն իրականանալու է. գոնե ջանք կթափեմ, որ դա, որքան կարելի է, ուշ իրականանա։

15-ը Ռուգիսի

Երեկ այստեղ եկավ ձեռնածու Ափֆելբաումը։ Ճաշարանի դռների վրա երևաց մի երկար աֆիշ, որն ամենապատվելի հասարակությանն ազդարարում էր, թե վերոհիշյալ զարմանալի ձեռնածուն, լարախաղացը, քիմիկոսը և տեսագետը (օպտիկ) պատիվ կունենա այսօր երեկոյան ժամը 8-ին շքեղ ներկայացում տալու ազնվականների ժողովարանի դահլիճում (այլ խոքսով՝ ճաշարանում)։ Տոմսերի գները՝ երկու և կես ռուբլի։

Բոլորը պատրաստվում են գնալ զարմանալի ձեռնածուին տեսնելու, մինչևիսկ իշխանուհի Լիգովսկայան։ Ջնայած աղջիկը հիվանդ է, իր համար տոմս է վերցրել։

Այսօր ճաշից հետո ես անցնում էի Վերայի պատուհանների մոտով։ Նա մենակ նստած էր պատշգամբում։ Իմ ոտքերի տակ ընկավ մի երկտող.

«Այսօր երեկոյան ժամը տասին ինձ մոտ եկ մեծ սանդուղքով։ Ամուսինս Պյատիգորսկ է մեկնել և կվերադառնա միայն վաղը առավոտյան։ Իմ սպասավոր-սպասուհիները տանը չեն լինի. ես նրանց բոլորին տոմսեր եմ բաժանել, նույնպես և իշխանուհու ծառաներին։ Ես սպասում եմ քեզ, անպայման եկ»։

— Ըհը՛,— մտածեցի ես,— վերջապես իմ ասածը եղավ։

Ժամը ութին գնացի ձեռնածուին տեսնելու։ Հասարակությունը հավաքվեց մոտ ժամը իններին։ Ներկայացումն սկսվեց։ Աթոռների վերջին շարքերում ես ճանաչեցի Վերայի և իշխանուհու լաքեյներին ու սպասուհիներին։ Առանց բացառության բոլորն այնտեղ էին։ Գրուշնիցկին լոռնետով նստել էր առաջին շարքում։ Ձեռնածուն նրան էր դիմում ամեն անգամ, երբ իրեն թաշկինակ, ժամացույց, մատանի և այլ բան էր պետք։

Արդեն մի քանի ժամանակ է, ինչ Գրուշնիցկին ինձ չի բարևում, իսկ այսօր երկու անգամ բավական հանդգնորեն նայեց։ Այս բոլորը նրա միտքը կգցեմ, երբ հաշիվներս մաքրելիս կլինենք։

Ժամը տասին մոտ էր, երբ ես վեր կացա ու դուրս գնացի։

Դուրսն այնքան մութ էր, որ մատդ մարդու աչք կոխեիր, չէր տեսնի։ Ծանր, ցրտաշունչ ամպեր էին դիզված շրջակա սարերի գագաթներին։ Միայն երբեմն-երբեմն մեռնող քամին խշխշացնում էր ճաշարանը շրջապատող բարդիների կատարները։ Ճաշարանի պատուհանների մոտ բազմություն էր խռնված։ Ես իջա սարից և, դեպի դարպասը ծովելով, արագացրի քայլերս։ Հանկարծ ինձ թվաց, թե մեկը գալիս է իմ ետևից։ Կանգ առա և շուրջս նայեցի։ Մթնում ոչինչ չէր կարելի ջոկել։ Սակայն զգուշության համար պտտվեցի տան շուրջը, իբր թե զբոսնում եմ։ Իշխանադստեր պատուհանների

* Իր սիրտը և կարողությունը (ամուսնանալու փոխաբերական առաջարկություն) (Ֆր.)։

մոտով անցնելիս ետևից նորից ոտնաձայներ լսեցի։ Շինելի մեջ փաթաթված մի մարդ վազելով անցավ իմ կողքով։ Դա ինձ անհանգստացրեց, սակայն ես գաղտագողի մոտեցա մուտքին և վազելով բարձրացա մութ սանդուղքն ի վեր։ Դուռը բացվեց, մի փոքրիկ ձեռք բռնեց իմ ձեռքը... .

— Քեզ ոչ ոք չտեսա՞վ,— շշնջաց Վերան՝ ինձ սեղմվելով։

— Ոչ ոք։

— Հիմա հավատո՞ւմ ես արդյոք, որ քեզ սիրում եմ։ Օ՜, երկար ժամանակ տատանվում էի, երկար տանջվեցի... Բայց դու ինձ դարձնում ես այն, ինչ ցանկանում ես։

Նրա սիրտն ուժգին բաբախում էր, ձեռքերը սառն էին, ինչպես սառույց։ Սկսվեցին խանդից առաջացող կշտամբանքները, գանգատները։ Նա ինձանից պահանջում էր, որ ես ամեն ինչ խոստովանեմ իրեն, ասելով, որ ինքը հնազանդությամբ կտանի իմ դավաճանությունը, որովհետև իր միակ ուզածն իմ երջանկությունն է։ Ես դրան հավատում էի ոչ լիովին, բայց հանգստացրի երդումներով, խոստումներով և այլն։

— Ուրեմն՝ չե՞ս ամուսնանում Մերիի հետ, նրան չե՞ս սիրում... Իսկ նա կարծում է... գիտե՞ս արդյոք, նա խելագարության աստիճան սիրահարված է քեզ։ Խե՜ղճ աղջիկ...

* * * * * * * * * * * * * * * * * * * *

* * * * * * * * * * * * * * * * * * * *

Գիշերվա ժամը երկուսին մոտ էր, երբ ես բացեցի պատուհանը և, երկու գլխաշոր իրար կապելով, վերին պատշգամբից ցածինն իջա՝ սյունից բռնելով։ Իշխանադստեր սենյակում լույսը դեռ վառվում էր։ Մի բան մղեց ինձ դեպի այդ լուսամուտը։ Վարագույրն իջեցրած էր ոչ ամբողջովին, և ես կարողացա հետաքրքրվողի հայացք գցել սենյակի ներսը։ Մերին նստած էր իր անկողնու վրա՝ ձեռքերը խաչաձև ծալած ծունկներին. նրա խիտ մազերը հավաքված էին գիշերվա գլխանոցում, որի շուրջը ժանյակ էր կարված. մեծ վառ-կարմիր գլխաշորը ծածկում էր նրա սպիտակ ուսերը, իսկ փոքրիկ ոտիկը թաքնված էր խայտաբղետ պարսկական քոշի մեջ։ Նա նստած էր անշարժ, գլուխը կրծքին խոնարհած. նրա առջև փոքրիկ սեղանի վրա մի բաց գիրք կար, բայց նրա անբացատրելի վշտով լի և անշարժ աչքերը, թվում էր, թե հարյուրերորդ անգամ միևնույն էջն էին կարդում, մինչդեռ մտքերը հեռու էին...

Այդ րոպեին թփի ետևում ինչ-որ մարդ շարժվեց։ Ես պատշգամբից ցատկեցի ճիմի վրա։ Անտես մի ձեռք բռնեց իմ ուսը։ «Հը՛,— ասաց մի կոպիտ ձայն.— բռնվեցի՛ր... գիշերներն իշխանադստեր մոտ գնա՞լ ցույց կտամ քեզ...»։

— Պի՛նդ բռնիր դրան,— բղավեց անկյունի ետևից դուրս պրծնող մեկ ուրիշը։

Այդ Գրուշնիցկին և դրագուն կապիտանն էին։

Ես բռունցքով հասցրի վերջինիս գլխին, ցած գլորեցի և նետվեցի դեպի թփերը։ Մեր տների առջև փռվող զառիթափը ծածկող այգու բոլոր կածաններն ինձ ծանոթ էին։

— Դողե՛ր, օգնեցե՛ք...— կանչում էին նրանք։

Լսվեց հրացանի կրակոց, ծխացող փուրծն ընկավ համարյա իմ ոտքերի մոտ։

Մի րոպե անց՝ ես արդեն սենյակումս էի։ Շորերս հանեցի և պառկեցի։ Իմ լաքեյը հազիվ էր դուռը կողպել, երբ դուռս թակել սկսեցին Գրուշնիցկին և կապիտանը։

— Պեչո՛րին, դուք քնա՞ծ եք, դուք տա՞նն եք...— կանչեց կապիտանը։

— Քնած եմ,— բարկացած պատասխանեցի ես։

— Վե՛ր կացեք, գողեր... չերքեզներ են երևացել...

— Ես հարբուխ ունեմ,— պատասխանեցի,— վախենում եմ մրսեմ։

Նրանք գնացին։ Ես իզուր պատասխանեցի. նրանց կանչին. նրանք դեռ մի ժամի չափ էլ ինձ կփնտրեին պարտեզում։ Այնինչ տագնապը սոսկալի դարձավ։ Բերդից շտապով ձիավոր կազակ եկավ։ Բոլորը շարժվեցին տեղերից. սկսեցին չերքեզներ փնտրել բոլոր թփերի տակ և, հասկանալի է, ոչինչ չգտան։ Բայց շատերը, հավանորեն, մնացին այն հաստատ համոզմունքին, որ եթե կայազորը ցույց տար ավելի մեծ քաջություն և փութաջանություն, գոնե մի երկու տասնյակ գիշատիչ գետին կփռվեին։

16-ը Ռուսիսի

Այսօր առավոտյան ջրհորի մոտ խոսակցության միակ առարկան չերքեզների գիշերվա հարձակումն էր։ Սահմանված

քանակությամբ նարդան խմելուց, մի տասն անգամ լորիների երկար ծառուղիներով ետ ու առաջ քայլելուց հետո ես հանդիպեցի Վերայի ամուսնուն, որ հենց նոր էր եկել Պյատիգորսկից։ Նա ինձ թանցուկ արեց, և մենք ճաշարան գնացինք՝ նախաճաշելու։ Նա սոսկալի անհանգստանում էր իր կնոջ համար։ «Վերան ինչպե՞ս է վախեցել այս դիշեր,— ասում է նա,— կարծես հակառակի պես այդ բանը պետք է պատահեր հենց այն ժամանակ, երբ ես բացակայում էի»։

Մենք նախաճաշելու նստեցինք այն դռան մոտ, որը տանում էր դեպի ճաշարանի անկյունի սենյակը։ Այնտեղ կային մոտ տասը երիտասարդ, այդ թվում նաև Գրուշնիցկին։ Բախտը երկրորդ անգամ ինձ առիթ ընձեռեց ծածկաբար լսելու մի խոսակցություն, որը պետք է վճռեր Գրուշնիցկու բախտը։ Նա ինձ չէր տեսնում և, հետևաբար, ես չէի կարող կասկածել, թե նա հետին մտքով է այդ անում, բայց դա ավելացնում էր նրա մեղքն իմ աչքում։

— Բայց մի՞թե իսկապես դրանք չերքեզներ էին,— ասաց մի մարդ,— մեկնումեկը նրանց տեսե՞լ է։

— Ես ձեզ կպատմեմ ամբողջ ճշմարտությունը,— պատասխանեց Գրուշնիցկին,— միայն թե, խնդրում եմ, ինձ չմատնեք։ Ահա թե բանն ինչպես է պատահել։ Երեկ մի մարդ, որի անունը ես ձեզ չեմ ասի, գալիս է ինձ մոտ և պատմում, որ երեկոյան ժամը տասին տեսել է, թե ինչպես մեկը գաղտագողի թափանցել է Լիգովսկայաների տունը։ Պետք է նկատի առնեք, որ իշխանուհին այստեղ էր, իսկ իշխանադուստրը՝ տանը։ Ահա ես և սա գնացինք պատուհանների մոտ, որպեսզի երջանիկին բռնենք։

Խոստովանում եմ, ես վախեցա, թեպետ իմ զրուցակիցը շատ էր զբաղված իր նախաճաշով. նա կարող էր իր համար բավական անախորժ բաներ լսել, եթե հանկարծ Գրուշնիցկին կռահած լիներ ճշմարտությունը։ Բայց, խանդից կուրացած՝ նա այդ ճշմարտության գոյությունն իսկ չէր երևակայում։

— Այդպես, ուրեմն,— շարունակեց Գրուշնիցկին,— մենք գնացինք, հետևելով սնամեջ փամփուշտ լցրած հրացան. հենց այնպես, վախեցնելու համար։ Մինչև ժամը երկուսը սպասեցինք պարտեզում։ Վերջապես նա հայտնվեց,

ստված գիտե, թե որտեղից, միայն թե ոչ լուսամուտից, որովհետև այն չէր էլ բացվել, այլ հավանաբար սյունի ետևը գտնվող ապակե դռնով դուրս գալով։ Վերջապես, տեսնում ենք, որ մեկն իջնում է պատշգամբից... Ո՞նցն է իշխանադուստրը, հը՞։ Ա՜յ թե արարածներ են այդ մոսկվացի օրիորդները, հա՜։ Սրանից հետո էլ ինչի՞ կարելի է հավատալ։ Մենք ուզում էինք այդ մարդուն բռնել, բայց նա դուրս պրծավ մեր ձեռքից ու նմպաստակի պես դեպի թփերը նետվեց։ Այստեղ ես կրակեցի նրա վրա։

Գրուշնիցկու շուրջը լսվեց անվստահություն արտահայտող շնչյուն։

— Դուք չե՞ք հավատում,— շարունակեց նա,— պատվո, ազնվության խոսք եմ տալիս ձեզ, որ այս բոլորը զուտ ճշմարտություն է և որպես դրա ապացույց, ես, ինչ արած, կտամ այդ պարոնի անունը։

— Ասա՛, ասա՛, ո՞վ է նա,— լսվեց բոլոր կողմերից։

— Պեչորինը,— պատասխանեց Գրուշնիցկին։

Այս րոպեին նա բարձրացրեց իր հայացքը։ Ես կանգնած էի դռան շեմքին, իր դիմաց։ Նա սոսկալի կարմրեց։ Մոտեցա և ասացի դանդաղ ու պարզ.

— Ես շատ եմ ափսոսում, որ ներս մտա այն բանից հետո, երբ դուք ազնիվ խոսք տվիք՝ հաստատելու ամենանողկալի զրպարտությունը։ Իմ ներկայությունը ձեզ կազատեր ավելորդ ստորությունից։

Գրուշնիցկին ցատկեց իր տեղից և ուզեց տաքանալ։

— Խնդրում եմ ձեզ,— շարունակեցի նույն տոնով.— խնդրում եմ այս իսկ րոպեին հրաժարվել ձեր խոսքերից. դուք շատ լավ գիտեք, որ դա հերյուրանք է։ Ես չեմ կարծում, թե կնոջ անտարբերությունը դեպի ձեր փայլուն արժանիքներն արժանի է այդպիսի սոսկալի վրեժի։ Լա՜վ մտածեցեք. ձեր կարծիքը պաշտպանելով, դուք կորցնում եք ազնիվ մարդու անուն կրելու իրավունքը և վտանգի եք ենթարկում ձեր կյանքը։

Գրուշնիցկին կանգնած էր իմ առաջ՝ հայացքը խոնարհած, խիստ հուզված վիճակում։ Բայց խղճի պայքարն ինքնասիրության դեմ կարճատև եղավ։ Նրա մոտ նստած դրագուն

կապիտանն արմունկով հրեց։ Գրուշնիցկին ցնցվեց և առանց հայացքը վեր բարձրացնելու, արագ պատասխանեց ինձ.

— Հարգելի՛ պարոն, երբ ես որևէ բան ասում եմ, այդպես էլ մտածում եմ ու պատրաստ եմ կրկնելու... Ես ձեր սպառնալիքներից չեմ վախենում և պատրաստ եմ ամեն ինչի։

— Վերջինը գուք արդեն ապացուցեցիք,— պատասխանեցի նրան սառնությամբ և, դրագուն կապիտանին թևանցուկ անելով, սենյակից դուրս եկա։

— Ի՞նչ եք կամենում,— հարցրեց կապիտանը։

— Դուք Գրուշնիցկու մտերիմ ծանոթն եք և, հավանաբար, նրա մարտավկան կլինե՞ք։

Կապիտանը շատ ծանրակշիռ գլուխ տվեց ինձ։

— Դուք կռահեցիք,— պատասխանեց նա,— ես նույնիսկ պարտավոր եմ նրա մարտավկան լինել, որովհետև նրան հասցրած վիրավորանքն ինձ էլ է վերաբերում. երեկ գիշեր ես նրա հետ էի,— ավելացրեց կապիտանը, շտկելով իր փոքր-ինչ կոր իրանը։

— Ա՛, ուրեմն, ձե՞ր գլխին խփեցի այնպես անհարմար...

Նա դեղնեց, կապտեց, թաքցրած չարսրտություն պատկերացավ դեմքին։

— Ես պատիվ կունենամ այսօր իմ մարտավկային ուղարկելու ձեզ մոտ,— ավելացրի ես, ի նշան հրաժեշտի շատ քաղաքավարի գլուխ տվի և ձևացրի, իբր թե ուշադրություն չեմ դարձնում նրա կատաղության վրա։

Ճաշարանի մուտքի մոտ հանդիպեցի Վերայի ամուսնուն։ Կարծեմ նա ինձ էր սպասում։

Նա արագ բռնեց իմ ձեռքը մի զգացմունքով, որ հիացմունքի էր նման։

— Ազնի՛վ երիտասարդ,— ասաց նա, արցունքն աչքերին,— ես բոլորը լսեցի։ Ի՞նչ գարշելին էր, անշնորհակալը... Դե եկ ու սրանից հետո դրանց կարգին տուն ընդունիր։ Փա՜ռք աստծո, ես աղջիկներ չունեմ։ Բայց ձեզ կպարգևատրի նա, ում համար ձեր կյանքն եք վտանգի ենթարկում։ Վստահ եղեք, որ իմ համեստությունն էլ չափ ու սահման ունի,— շարունակեց նա։— Ես ինքս էլ երիտասարդ եղել եմ և զինվորական ծառայության մեջ գտնվել. գիտեմ, որ այդ գործերին չպետք է խառնվել։ Ցտեսությո՛ւն։

Խե՜ղճ մարդ, ուրախանում է, որ աղջիկներ չունի...

Ես գնացի ուղղակի Վերների մոտ, նրան տանը գտա և պատմեցի բոլորը — իմ հարաբերությունները Վերայի ու իշխանադստեր հետ և իմ լսած խոսակցությունը, որից իմացա այդ պարոնների մտադրությունը՝ ինձ հիմարացնել, ստիպելով սնամեջ գնդակ լցրած ատրճանակով մենամարտել։ Բայց այժմ գործը կատակի սահմաններից դուրս էր գալիս. նրանք, հավանաբար, հանգույցի այսպիսի լուծման չէին սպասում։

Բժիշկը համաձայնեց իմ մարտավկան լինել։ Ես նրան մի քանի խրատ տվի մենամարտի պայմանների վերաբերմամբ։ Նա պետք է պնդեր, որ գործը որքան կարելի է գաղտնի մնա, որովհետև ես թեպետև ամեն ժամանակ պատրաստ եմ ինձ մահվան ենթարկել, բայց բնավ տրամադիր չեմ առմիշտ փչացնել իմ ապագան այս աշխարհում։

Դրանից հետո ես տուն գնացի։ Մի ժամից բժիշկը վերադարձավ իր արշավանքից։

— Ձեր դեմ, իսկապես, դավադրություն կա,— ասաց նա։ — Գրուշնիցկու մոտ ես տեսա դրագուն կապիտանին և էլի մի պարոնի, որի ազգանունը չեմ հիշում։ Ես մի բոպե կանգ առա նախասենյակում, որպեսզի կրկնակոշիկներս հանեմ։ Նրանց մոտ սոսկալի աղմուկ և վեճ կար...

«Ոչ մի գնով չեմ համաձայնի,— ասում էր Գրուշնիցկին։— Նա ինձ հրապարակով է վիրավորել։ Այն ժամանակ բոլորովին ուրիշ բան էր»... «Քո ի՞նչ բանն է,— պատասխանեց կապիտանը,— ես բոլորն ինձ վրա եմ վերցնում։ Ես հինգ մենամարտում վկա եմ եղել և արդեն գիտեմ, այդ ինչպես սարքել։ Ես բոլորը մտածել ու գտել եմ։ Խնդրում եմ, միայն ինձ մի խանգարիր։ Մի քիչ վախեցնելը վատ չէ։ Իսկ ինչո՞ւ քեզ վտանգի ենթարկես, եթե կարելի է ազատվել»... Այդ բոպեին ես ներս մտա։ Նրանք հանկարծ լռեցին։ Մեր բանակցությունները բավական երկար տևեցին։ Վերջապես, ահա թե ինչ որոշեցինք։ Այստեղից մոտ հինգ վերստ հեռավորության վրա մի խուլ կիրճ կա. նրանք այնտեղ կգնան, առավոտյան ժամը չորսին, իսկ մենք նրանցից մի կես ժամ ուշ դուրս կգանք. իրար վրա կկրակեք վեց քայլ հեռավորությունից (ինքը Գրուշնիցկին պահանջեց այդ)։ Սպանվածին չերքեզների հաշվին կգրենք։ Հիմա ես ահա թե ինչ կասկածներ ու-

նեմ։ Նրանք, այսինքն, մարտավարները, հավանորեն փոքրինչ փոխել են իրենց նախկին պլանը, և ուզում են գնդակ դնել միմիայն Գրուշնիցկու ատրճանակի մեջ։ Սա մի քիչ նման է սպանության, բայց պատերազմի՝ ժամանակ, մանավանդ ասիական պատերազմում, խորամանկությունները թույլատրվում են. միայն թե Գրուշնիցկին, կարծեմ, իր ընկերներից ազնիվ է։ Ի՞նչ եք կարծում, մենք պե՞տք է ցույց տանք նրանց, որ գլխի ենք ընկել։

— Ո՛չ մի դեպքում, բժիշկ. դուք հանգիստ եղեք, ես նրանց խաբկանքին չեմ ենթարկվի։

— Իսկ ի՞նչ եք ուզում անել։

— Այդ իմ գաղտնիքն է։

— Տեսե՛ք, ծուղակ չընկնե՛ք... Ախր կրակելու եք վե՞ց քայլ հեռավորությունից։

— Բժի՛շկ, ես ձեզ սպասում եմ վաղը ժամը չորսին. ձիերը պատրաստ կլինեն... Ցտեսությո՛ւն։

Ես մինչև երեկո տանը նստեցի՝ սենյակումս փակվելով։ Իշխանուհու լաքեյը եկավ ինձ նրա մոտ կանչելու։ Ես կարգադրեցի ասել, որ հիվանդ եմ։

. . . . . .

Գիշերվա ժամը երկուսն է... քունս չի տանում... իսկ քնել հարկավոր է, որպեսզի վաղը ձեռքս չդողա։ Ասենք վեց քայլի վրա դժվար է վրիպել։ Ա՛, պարոն Գրուշնի՛ցկի, ձեր միստիֆիկացիան չի հաջողվի... մենք դերերս կփոխենք։ Այժմ ես պետք է ստիպված լինեմ ձեր գունատ դեմքի վրա գաղտնի ահի նշաններ փնտրել։ Ինչո՞ւ դուք՝ինքներդ նշանակեցիք այդ ճակատագրական վեց քայլը։ Դուք կարծու՞մ եք, թե ես առանց վիճելու գնդակի առաջ կդնեմ իմ ճակատը... Բայց մենք վիճա՞կ կհանենք... և այն ժամանակ... այն ժամանակ... իսկ եթե՞ նրա բախտի նժարը ծանր լինի, եթե իմ աստղը վերջապես դավաճանի՞ ինձ... Եվ զարմանալի էլ չէ. այդ աստղն այնպես երկար է հպվատարմությամբ ծառայել իմ քմահաճույքներին։

Ի՞նչ արած. եթե մեռնելու ենք, կմեռնե՞նք. աշխարհի համար մեծ կորուստ չէ։ Ասենք, ինքս էլ արդեն բավական ձանձրացել եմ։ Ես նման եմ պարահանդեսում հորանջող

մարդու, որ քնելու չի գնում միայն այն պատճառով, որ իր կառեթը դեռ չի եկել։ Բայց կառեթը պատրաստ է... մնաք բարո՞վ...

Հիշողությանս մեջ թերթում եմ իմ ամբողջ անցյալը և ակամա հարցնում ինքս ինձ՝ ինչո՞ւ եմ ապրել, ի՞նչ նպատակի համար եմ ծնվել... Իսկ նպատակ, հավանորեն, եղել է, և, հավանորեն, ինձ բարձր կոչում է վիճակված եղել, որովհետև հոգուս մեջ անընդգրկելի ուժեր եմ զգում... Բայց ես չկռահեցի այդ կոչումը, տարվեցի դատարկ և ոչ ազնիվ զգացմունքների հրապույրներով։ Դրանց բովից դուրս եկա ամուր և սառը, ինչպես երկաթ, բայց առհավետ կորցրի ազնիվ ձգտումների բուռն ցանկությունը՝ կյանքի լավագույն ծաղիկը։ Եվ այդ ժամանակից ի վեր քանիցս ես կացնի դեր եմ կատարել բախտի ձեռքին։ Որպես մահապատժի դեղնք, իջել եմ դատապարտված զոհերի գլխին, հաճախ առանց չարամտության, միշտ առանց ափսոսանքի... Իմ սերը ոչ ոքի երջանկություն չի բերել, որովհետև ես ոչինչ չեմ զոհաբերել նրա՛նց համար, ում սիրել եմ. սիրել եմ ի՛նձ համար, իմ սեփական բավականության համար, միայն բավարարել եմ սրտիս տաբրիինակ պահանջը, ագահությամբ կլանելով նրանց զգացմունքները, քնքշանքը, ուրախությունն - ու տանջանքները և երբեք չեմ կարողացել հագենալ։ Այդպես քաղցից տառապողն ուժասպառ քնում է և իր առաջ տեսնում է ճոխ ուտելիքներ ու փրփրալից գինիներ։ Նա հրճվանքով լափում է երևակայության օդեղեն պարգևները և թեթևություն է զգում, բայց հենց որ արթնանա, երազը կանհետանա... կմնա կրկնապատկած քաղցը և հուսահատությունը։

Եվ գուցե ես վաղը մեռնե՞մ... ու երկրի վրա չմնա ինձ լիովին հասկացող ո՛չ մի էակ։ Ոմանք ինձ ավելի վատ են համարում, մյուսներն ավելի լավ, քան ես, իրոք, կամ... Ոմանք կասեն. «Նա բարի մարդու մեկն էր», մյուսները՝ «Սրիկա էր»։ Թե՛ մեկը, թե՛ մյուսը սխալ կլինի։ Սրանից հետո արժե՞ արդյոք ջանք թափել ապրելու համար։ Իսկ ապրում ես հետաքրքրությունից դրդված, ինչ-որ նոր բանի ես սպասում... Ծիծաղելի է և ցավալի։

Արդեն մեկ և կես ամիս է, ինչ ես N ամրոցումն եմ։ Մաքսիմ Մաքսիմիչը որսի է գնացել... Ես մենակ եմ։ Նստած եմ պատուհանի մոտ։ Գորշ ամպերը ծածկել են լեռները՝ մինչև նրանց ստորոտը. մշուշի միջից արևը դեղին բիծ է թվում։ Ցուրտ է. քամին սուլում է և տարուբերում փեղկերը... Զանձրալի՜ է... Շարունակեմ օրագիրս, որ ընդհատվեց այնքան տարօրինակ անցքերի պատճառով։

Վերընթեռնում եմ վերջին էջը։ Ծիծաղելի՜ է։ Ես մտադիր էի մեռնել։ Դա անկարելի էր. ես դեռ չէի քամել տառապանքների բաժակը, և այժմ զգում եմ, որ դեռ երկար եմ ապրելու։

Ողջ անցյալն ինչպե՞ս պարզ և որոշակի է ձուլվել իմ հիշողության մեջ։ Ժամանակը չի ջնջել ո՛չ մի գիծ, ո՛չ մի երանգ։

Հիշում եմ, որ մենամարտին նախորդող գիշերը ոչ մի րոպե չքնեցի։ Երկար ժամանակ գրել չէի կարողանում։ Մի գաղտնի անհանգստություն էր տիրել ինձ։ Մոտ մի ժամ երթևեկում էի սենյակում, հետո նստեցի և բացեցի սեղանիս վրա դրված վեպը. Վալտեր Սկոտտի «Շոտլանդական պուրիտանները» գիրքն էր։ Սկզբում ճիգով էի կարդում, հետո կախարդական հորինվածքով տարված մոռացության մեջ ընկա...

Վերջապես լուսացավ։ Նյարդերս հանգստացան։ Հայելուն նայեցի. աղոտ գունատությունը ծածկում էր տանջող անքնության հետքերն իր վրա պահած երեսս, բայց աչքերս, թեպետև դարշնագույն ստվերով շրջապատված, փայլում էին հպարտ ու անողոք փայլով։ Ինձանից գոհ մնացի։

Կարգադրելով ձիերը թամբել, հագնվեցի ու վազեցի դեպի լողարանը։ Նարզանի եռացող սառը ջրի մեջ ընկղմվելով, զգում էի, թե ինչպես մարմնական և հոգեկան ուժերս վերադառնում են։ Վաննայից դուրս եկա թարմ ու առույգ, ասես պատրաստվում էի պարահանդես գնալ։ Սրանից հետո ասացե՛ք, թե հոգին մարմնից կախված չէ...

Վերադառնալով, բժշկին գտա իմ բնակարանում։ Նա հագել էր գորշ ռեյտուզ, արխալուղ և չերքեզական գդակ։ Ես զրրջացի՝ այդ փոքրիկ կերպարանքն ահագին բրդոտ գդակի տակ տեսնելով. նրա դեմքը բնավ ռազմատենչ մարդու դեմք չէ, իսկ այն անգամ սովորականից ավելի երկարուկ էր։

— Ինչո՞ւ եք այդպես տխուր, բժի՛շկ,— ասացի նրան։— Մի՞թե դուք հարյուր անգամ մարդ չեք ուղարկել այն աշխարհը մեծագույն անտարբերությամբ։ Երևակայեցեք, թե ես մաղձատենդ ունեմ. կարող եմ առողջանալ, կարող եմ և մեռնել։ Թե՛ մեկը, թե՛ մյուսը բնական է։ Աշխատեցեք նայել ինձ որպես մի հիվանդի, որը տառապում է դեռևս ձեզ անծանոթ ախտով, և այն ժամանակ ձեր հետաքրքրությունը վերին աստիճանի կբորբոքվի։ Այժմ կարող եք ինձ վրա մի քանի կարևոր ֆիզիոլոգիական դիտողություն անել... Բռնի մահվան սպասումն իսկական հիվանդություն չէ՞ արդյոք։

Այս միտքն ապշեցրեց բժշկին, և նա աշխուժացավ։

Մենք ձի նստեցինք։ Վերները երկու ձեռքով պինդ բռնեց սանձը, և մենք սուրացինք, մի ակնթարթում բերդի մոտով անցանք սլոբոդկայով ու մտանք կիրճը, որտեղ ոլորվում էր կիսով չափ բարձր խոտով ծածկված ճանապարհը։ Այդ ճանապարհն ամեն րոպե կտրում էր աղմկալի մի գետակ, որի միջով պետք էր անցնել, ի մեծ հուսահատություն բժշկի, որովհետև նրա ձին ամեն անգամ ջուր մտնելիս կանգ էր առնում։

Ավելի երկնագույն ու թարմ առավոտ չեմ հիշում։ Արևը հազիվ էր երևացել կանաչ գագաթների ետևից, և ճառագայթների առաջին տաքության միաձուլվելը գիշերվա մեռնող զովությանը բոլոր զգացմունքների վրա ինչ-որ քաղցր խռնջանք էր բերում. նորածագ արևի ուրախ ճառագայթը դեռ չէր թափանցել կիրճը, ոսկեզօծվում էր երկու կողմից մեր գլխին կախված ժայռերի վերին մասերը միայն. խոր ճեղքվածքներում բուսած տերևախիտ թփերը քամու ամենաթեթև շնչից արծաթի անձրև էին շաղ տալիս մեզ վրա։ Հիշում եմ. այդ անգամ բնությունն ավելի էի սիրում, քան երբևէ առաջ։ Ի՞նչ հետաքրքրությամբ էի նայում խաղողի լայն տերևի վրա դողացող և միլիոնավոր ծիածանագույն ճառագայթներ արտացոլող յուրաքանչյուր ցողիկի։ Հայացքս ի՞նչ ագահությամբ էր ջանում թափանցել ծխապարար հեռաստանի խորքը։ Այնտեղ ուղին ավելի ու ավելի էր նեղանում, ժայռերն ավելի ու ավելի կապույտ և ահավոր էին դառնում և, վերջապես, թվում էր, թե դրանք միանում, անթափանցելի պարիսպ են կազմում։ Մենք լուռ առաջ էինք գնում։

— Ձեր կտակը գրեցի՞ք արդյոք,— հանկարծ հարցրեց Վերները։

— Ո՛չ։

— Իսկ եթե սպանվե՞ք...

— Ժառանգներն իրենք հրապարակ կգան։

— Մի՞թե դուք չունեք այնպիսի մտերիմներ, որոնց կամենայիք ձեր վերջին հրաժեշտն ուղարկել...

Ես օրորեցի գլուխս։

— Մի՞թե աշխարհիս երեսին չկա մի կին, որին դուք կամենայիք որևէ բան հիշատակ թողնել։

— Արդյոք ցանկանո՞ւմ եք, բժիշկ,— պատասխանեցի նրան,— որ ես բացեմ ձեր առաջ իմ հոգին... Գիտեք, անցել է իմ այն տարիքը, երբ մեռնում են՝ իրենց սիրածի անունն արտասանելով և իրենց բարեկամին կտակելով օծանելիք քսած կամ չքսած մազերի մի փնջիկ։ Մոտալուտ և հնարավոր մահվան մասին մտածելիս ես միմիայն իմ մասին եմ մտածում։ Ոմանք այս էլ չեն անում։ — Մտերիմներ, որոնք վաղն իսկ ինձ կմոռանան կամ, ավելի վատ, ինձ վրա, աստված գիտե, ինչ չեղած բաներ կբարդեն, կանայք, որոնք ուրիշին գրկելիս՝ կծիծաղեն ինձ վրա, որպեսզի նրա մեջ խանդ չզարթեցնեն դեպի հանգուցյալը. (աստվա՜ծ դրանց հետ)։ Կյանքի փոթորկից ես դուրս եմ բերել միայն մի քանի գաղափար և ո՛չ մի զգացմունք։ Վաղուց է, ինչ ապրում եմ ոչ թե սրտով, այլ գլխով։ Ես կշռում, քննում եմ սեփական զգացմունքներն ու վարմունքները խստագին հետաքրքրությամբ, բայց առանց կարեկցության։ Իմ մեջ երկու մարդ կա. մեկն ապրում է այս բառի լրիվ իմաստով, մյուսը խորհում և դատում է նրան։ Առաջինը գուցե մի ժամից հետո հավիտենապես հրաժեշտ տա ձեզ և աշխարհին, իսկ երկրորդը... երկրո՞ր-դը... Նայեցե՛ք, բժի՛շկ, տեսնո՞ւմ եք, ժայռի վրա, աջ կողմում, սևին են տալիս երեք կերպարանք։ Այդ, կարծեմ, մեր հակառակորդներն են...

Մենք սլացանք։

Ժայռի ստորոտի մոտ, թփերում, կապված էին երեք ձի։ Մենք մեր ձիերը նույն այդ տեղում կապեցինք, իսկ ինքներս նեղ կածանով բարձրացանք փոքրիկ հրապարակը, որտեղ մեզ սպասում էր Գրուշնիցկին՝ դրագուն կապիտանի և իր մյուս

մարտավկայի հետ, որի անունն Իվան Իգնատևիչ էր։ Ազգանունը երբեք չեմ լսել։

— Վաղուց է, ինչ մենք սպասում ենք ձեզ,— ասաց դրագուն կապիտանը հեգնական ժպիտով։

Ես հանեցի ժամացույցս և ցույց տվի։

Նա ներողություն խնդրեց, ասելով, որ իր ժամացույցն առաջ է վազում։

Մի քանի րոպե շարունակվեց դժվարին կացություն արտահայտող լռությունը։ Վերջապես բժիշկն ընդհատեց այն, Գրուշնիցկուն դիմելով.

— Ինձ թվում է,— ասաց նա,— որ դուք երկուսդ էլ մենամարտելու պատրաստակամություն ցույց տալով և դրանով պատվի պայմաններին ձեր պարտքը հատուցելով, կարող էիք, պարոնայք, բացատրվել և այդ գործը փոխադարձ համաձայնությամբ վերջացնել։

— Ես պատրաստ եմ,— ասացի ես։

Կապիտանն աչքով արեց Գրուշնիցկուն, և սա, կարծելով, թե ես վախենում եմ, հպարտ տեսք ընդունեց, թեպետ մինչ այդ աղոտ գունատություն էր ծածկում նրա այտերը։ Մեր գալուց հետո՝ նա առաջին անգամ հայացքն ինձ վրա բարձրացրեց, բայց նրա հայացքում ինչ-որ անհանգստություն կար, որ մատնում էր նրա ներքին պայքարը։

— Բացատրեցեք ձեր պայմանները,— ասաց նա,— և այն ամենը, որ ես կարող եմ անել ձեզ համար, հավատացած եղեք...

— Ահա իմ պայմանները. դուք այսօր ևեթ հրապարակավ կհրաժարվեք ձեր զրպարտությունից և ինձանից ներողություն կխնդրեք...

— Հարգե՛լի պարոն, ես զարմանում եմ, թե դուք ինչպես եք համարձակվում այդպիսի բաներ առաջարկել ինձ...

— Սրանից բացի ուրիշ էլ ի՞նչ կարող էի առաջարկել ձեզ...

— Կրակե՛նք միմյանց վրա։

Ես թոթվեցի ուսերս։

— Խնդրեմ, միայն մտածեցեք, որ մեզանից մեկնումեկն անպայման կսպանվի։

— Ես ցանկանում եմ, որ այդ դուք լինեք...

— Իսկ ես այնպես համոզված եմ, որ հակառակն է լինելու...

Նա շփոթվեց, կարմրեց, հետո բռնազբոսիկ քրքջաց։

Կապիտանը նրան թևանցուկ արեց և մի կողմ տարավ։ Նրանք երկար քշփշում էին։ Ես այստեղ եկա բավական խաղաղասեր տրամադրությամբ, բայց այս բոլորն սկսում էր ինձ կատաղեցնել։

Բժիշկն ինձ մոտեցավ։

— Լսե՛ք,— ասաց նա ակներև անհանգստությամբ,— դուք երևի մոռացե՞լ եք նրանց դավադրության մասին... Ես ատրճանակ լցնել չգիտեմ, բայց այս դեպքում... Դուք տարօրինա՜կ մարդ եք։ Ասացեք նրանց, որ գուք գիտեք նրանց դիտավորությունը, և նրանք չեն համարձակվի... Ի՞նչ հաճույք է. ձեզ թուլունի պես կգնդակահարեն...

— Խնդրում եմ մի՛ անհանգստացեք, բժիշկ, և համբերեցե՛ք... Ես ամեն ինչ այնպես կսարքեմ, որ նրանց կողմը ոչ մի առավելություն չի լինի։ Թողեք քշփշան...

— Պարոնա՛յք, այդ սկսում է ձանձրալի դառնալ,— բարձրաձայն ասացի ես նրանց։— Եթե մենամարտում ենք, եկեք մենամարտենք. դուք երեկ կուշտ խոսելու ժամանակ ունեիք...

— Մենք պատրաստ ենք,— պատասխանեց կապիտանը։— Ձեր տեղերը բռնեցեք, պարոնա՛յք... Բժի՛շկ, հաճեցեք վեց քայլ չափել...

— Տեղներդ գրավեցե՛ք,— կրկնեց Իվան Իգնատևիչը ճղճղան ձայնով։

— Սպասեցե՛ք,— ասացի ես,— ևս մի պայման։ Քանի որ սա կենաց և մահու կռիվ է, ուստի պարտավոր ենք անել բոլոր հնարավորը, որպեսզի սա գաղտնիք մնա, և որպեսզի մեր մարտավկաները պատասխանատու չդառնան։ Արդյոք համաձա՞յն եք...

— Միանգամայն համաձայն ենք։

— Այսպես, ուրեմն, ահա թե ինչ եմ մտածել ես։ Այն ուղղահայաց ժայռի կատարին, աջ կողմում, տեսնո՞ւմ եք նեղլիկ հարթակը։ Այնտեղից մինչև գետին մոտ երեսուն սաժեն կլինի, եթե ոչ ավելի։ Ցածում սուր քարեր են։ Երկուսս էլ կկանգնենք հարթակի բուն եզրին։ Այդպիսով՝ ինքդամ թեթև վերքը մահացու կլինի։ Սա պետք է որ համապատասխանի ձեր ցանկությանը, որովհետև դուք ինքներդ եք վեց քայլը նշանակել։ Վիրավորվողն անպայման ցած կգլորվի և ջարդուփշուր կլինի։ Գնդակը բժիշկը կհանի, և այն ժամանակ այս արագահաս մահը կարելի կլինի բացատրել նրանով, որ մեռածը ցատկելու անհաջող փորձ է արել։ Մենք վիճակ կգցենք, թե առաջինն ով պետք է կրակի։ Ի վերջո հայտարարեմ ձեզ, որ այլ կերպ ես չեմ մենամարտի։

— Համեցեք,— ասաց կապիտանը արտահայտիչ հայացքով նայելով Գրուշնիցկուն, որը, ի նշան համաձայնության՝ գլխով արեց։ Նրա դեմքի արտահայտությունն ամեն րոպե փոխվում էր։ Ես նրան դժվարին կացության մեջ դրեցի։ Սովորական պայմաններում կրակելիս նա կարող էր նշան բռնել իմ ոտքին, ինձ թեթևակի վիրավորել և այդպիսով բավարարել իր վրեժը, շատ չծանրաբեռնելով իր խիղճը, բայց հիմա նա կամ պետք է օդի մեջ կրակեր, կամ մարդասպան դառնար, կամ, վերջապես, թողներ իր ստոր մտադրությունը և ինձ հետ հավասար վտանգի ենթարկվեր։

Այս րոպեին ես չէի ցանկանա նրա տեղը լինել։ Նա կապիտանին մի կողմ տարավ և սկսեց մեծ եռանդով ինչ-որ բան ասել։ Տեսնում էի, թե նրա կապտած շրթունքներն ինչպես են դողում, բայց կապիտանն արհամարհական ժպիտով երես դարձրեց նրանից։ «Դու հիմար ես,— ասաց նա Գրուշնիցկուն բավական բարձր ձայնով,— ոչի՞նչ չես հասկանում... Դե՛ գնանք, պարոնայք»։

Նեղ կածանը թփերի միջով տանում էր դեպի զառիթափը։ Ժայռերի բեկորներն այս բնական սանդուղքի երերուն աստիճաններն էին կազմում։ Թփերից բռնելով, սկսեցինք մագլցել։ Գրուշնիցկին առջևից էր գնում, նրա հետևից՝ իր մարտավկաները, իսկ հետո ես և բժիշկը։

— Ես զարմացած եմ ձեզ վրա,— ասաց բժիշկը, պինդ սեղմելով իմ ձեռքը։ — Տվեք ձեր զարկերակը տեսնեմ... Օհո՛։ Տենդայի՞ն է... բայց ձեր դեմքին ոչինչ չի նկատվում... Միայն ձեր աչքերն են սովորականից պայծառ փայլում։

Հանկարծ մանր քարերն աղմուկով գլորվեցին մեր ոտքերի տակ։ Այս ի՞նչ է։ Գրուշնիցկին սայթաքեց։ Այն ճյուղը, որին նա ձեռքն էր գցել, կոտրվեց, և Գրուշնիցկին ցած կգլորվեր մեջքի վրա, եթե նրա մարտավկաները չբռնեին։

— Զգուշացե՛ք,— բղավեցի ես նրան,— վաղաժամ մի՛ ընկեք. դա վատ նշան է։ Հուլիոս Կեսարին հիշեցեք։

Ահա բարձրացանք դուրս պրծած ժայռի կատարը։ Հարթակը ծածկված էր մանր ավազով, ասես դիտմամբ՝ մենամարտի համար։ Շուրջը, վաղորդյան ոսկի մշուշում կորչելով, իրար էին սեղմվում լեռների գագաթները, իբրև անթիվ անասունների հոտ, և Էլբրուսը հարավում ցցվում էր հսկայական սպիտակ զանգվածի պես, վերջափակելով սառցապատ գագաթների շղթան, որոնց միջև արդեն թափառում էին արևելքից եկած թել-թել ամպերը։ Ես մոտեցա հարթակի եզրին և ցած նայեցի։ Քիչ մնաց գլուխս պտտվեր։ Թվում էր, թե այնտեղ, ներքևում, գերեզմանի պես մութն է և ցուրտ։ Մամռապատ ատամները ժայռերի, որոնց ցած էին գցել փոթորիկն ու ժամանակը, իրենց որսին էին սպասում։

Հարթակը, որտեղ մենք պետք է մենամարտեինք, հիշեցնում էր համարյա ուղիղ եռանկյունի։ Դուրս պրծած անկյունից հաշվեցինք վեց քայլ և որոշեցինք, որ նա, ում կվիճակվի առաջին հերթին դիմավորել թշնամու կրակը, կկանգնի բուն անկյունում՝ թիկունքով դեպի անդունդը. եթե նա չսպանվի, հակառակորդները միմյանց հետ կփոխեն իրենց տեղերը։

Ես վճռեցի բոլոր առավելությունները տրամադրել Գրուշնիցկուն։ Ուզում էի փորձել. նրա հոգու մեջ կարող էր մեծահոգության կայծ զարթնել, և այն ժամանակ գործը կարող էր լավագույն վախճան ունենալ, բայց ինքնասիրությունը և կամքի թուլությունը պետք է հաղթանակեին... Ուզում էի լիակատար իրավունք տալ ինձ՝ չխնայելու նրան, եթե բախտը ողորմած լիներ իմ նկատմամբ։ Այսպիսի պայմաններ ո՞վ չի կնքել իր խղճի հետ։

— Վիճա՛կ գցեք, բժիշկ,— ասաց կապիտանը։

Բժիշկն իր գրպանից հանեց մի արծաթե դրամ և վեր բարձրացրեց։

— Գի՛ր,— բղավեց Գրուշնիցկին շտապով, բարեկամական մղումից հանկարծ սթափված մարդու նման։

— Արծի՛վ,— ասացի ես։

Դրամը վեր սլացավ ու ընկավ՝ զնգալով բոլորս նետվեցինք դեպի դրամը։

— Դուք բախտավոր եք,— ասացի Գրուշնիցկուն,— առաջինը դուք եք կրակելու։ Բայց հիշեցեք, որ եթե դուք ինձ չսպանեք, ապա ես չեմ վրիպի, աղնիվ խոսք եմ տալիս ձեզ։

Նա կարմրեց. ամաչում էր անզեն մարդ սպանելուց։ Ես սևեռուն հայացքով նրան էի նայում։ Մոտ մի րոպե ինձ թվում էր, թե նա իմ ոտքերը կընկնի թողություն խնդրելու։ Բայց մարդն ինչպե՞ս խոստովանի, որ այդպիսի ստոր միտում է ունեցել։ Նրան մի միջոց էր մնում — օդի մեջ կրակել։ Ես հավատացած էի, որ նա օդի մեջ կկրակի։ Մի բան կարող էր խանգարել— այն միտքը, որ ես երկրորդ մենամարտ կպահանջեմ։

— Ժամանակն է,— շշնջաց բժիշկն իմ ականջին, թևքս քաշելով։ — Եթե դուք հիմա չասեք, որ մենք գիտենք նրանց մտադրությունը, ապա ամեն ինչ կորած է։ Նայեցե՛ք, նա արդեն լցնում է... եթե դուք ոչինչ չասեք, ապա ես ինքս...

— Ո՛չ մի դեպքում, բժի՛շկ,— պատասխանեցի ես, նրա ձեռքից բռնելով և ետ պահելով։ — Դուք ամեն ինչ կփչացնեք. դուք ինձ խոսք տվիք չխանգարել... Ձեր ի՞նչ գործն է։ Գուցե ես ցանկանում եմ սպանվել...

Նա զարմանքով նայեց ինձ։

— Օ՜, այդ ուրիշ բան է... միայն թե այն աշխարհում ինձանից չգանգատվե՛ք...

Մինչ այդ՝ կապիտանը լցրեց ատրճանակները, մեկը տվեց Գրուշնիցկուն՝ ժպիտը դեմքին ինչ-որ բան շշնջալով նրան, մյուսը՝ ինձ։

Ես կանգնեցի հարթակի անկյունում, ձախ ոտքս ամուր հենելով քարի և մի քիչ առաջ կռանալով, որպեսզի թեթև վերք ստանալու դեպքում ետ չընկնեմ։

Գրուշնիցկին կանգնեց իմ դիմաց և, տրված նշանի համաձայն, սկսեց ատրճանակը բարձրացնել։ Նրա ծնկները դողում էին։ Նա նշան էր բռնել ուղիղ իմ ճակատին...

Անբացատրելի կատաղություն փրփրեց իմ կրծքում։

Հանկարծ նա ցած իջեցրեց ատրճանակի փողաբերանը և, սիրթնելով ինչպես քաթան, շուռ եկավ դեպի իր մարտավարկան։

— Ձե՛մ կարող,— ասաց նա խուլ ձայնով։

— Վախկո՛տ,— պատասխանեց կապիտանը։

Հնչեց կրակոցը։ Գնդակը քերծեց իմ ծունկը։ Ես ակամա մի քանի քայլ առաջ եկա, որպեսզի շուտով հեռանամ եզրից։

— Է՛, եղբայր Գրուշնի՛ցկի, ափսո՛ս, որ վրիպեցիր,— ասաց կապիտանը,— հիմա քո հերթն է, տեղդ գրավիր։ Նախ գրկիր ինձ, մենք այլևս չենք տեսնվի։ — Նրանք գրկախառնվեցին, կապիտանը հազիվ էր կարողանում իր ծիծաղը զսպել։ — Մի՛ վախենա,— ավելացրեց նա, խորամանկորեն նայելով Գրուշնիցկուն։ — Աշխարհում ամեն ինչ դատարկ բան է... Բնությունը հիմար է, բախտը՝ հնդուհավ, իսկ կյանքը՝ կոպեկանոց։

Պատշաճ ծանրակշռությամբ ասված այս տրագիկ դարձվածքից հետո նա ետ քաշվեց իր տեղը։ Իվան Իգնատևիչը, արցունքն աչքերին՝ նույնպես գրկեց Գրուշնիցկուն, և ահա նա մենակ մնաց իմ դիմաց։

Ես մինչև հիմա աշխատում եմ բացատրել ինձ, թե այն ժամանակ ինչ զգացմունք էր եռում իմ մեջ։ Այդ թե՛ վիրավորված ինքնասիրության դժկամություն էր, թե՛ արհամարհանք, թե՛ չարություն, որ ծնվում էր իմ մեջ, երբ մտածում էի, որ այդ մարդը, որ հիմա այդպես վստահ, այդպիսի հանգիստ հանդգնությամբ է նայում ինձ, երկու րոպե՞ առաջ իրեն ո՛չ մի վտանգի չենթարկելով ուզում էր շան պես սպանել ինձ, որովհետև եթե մի քիչ ավելի ծանր վիրավորվեի ոտքիցս, անպայման կգոլորվեի ժայռից։

Մի քանի րոպե սևեռուն հայացքով նրա երեսին նայեցի, ջանալով զղջման գեթ թեթև նշան նկատել։ Բայց ինձ թվաց, թե նա զսպում է իր ժպիտը։

Այն ժամանակ նրան ասացի.

— Ես ձեզ խորհուրդ եմ տալիս ձեր մահից առաջ աղոթել աստծուն։

— Իմ հոգու մասին ավելի հոգ մի՛ տարեք, քան ձեր սեփականի մասին։ Ձեզ մի բան եմ խնդրում՝ շուտ կրակեցե՛ք։

— Եվ դուք չե՞ք հրաժարվում ձեր զրպարտությունից. ինձանից ներողություն չե՞ք խնդրում... Լա՛վ մտածեցեք. ձեր խիղճը ձեզ որևէ բան չի՞ ասում։

— Պարոն Պեչորին,— բղավեց դրագուն կապիտանը,— դուք այստեղ նրա համար չեք եկել, որ խոստովանեցնեք,

թույլ տվեք նկատել ձեզ... Շուտ վերջացնենք. հանկարծ մեկնումեկը կանցնի կիրճով և մեզ կտեսնի։

— Լա՛վ։ Բժի՛շկ, մոտ եկեք։

Բժիշկը մոտ եկավ։ Խե՜ղճ բժիշկ. նա ավելի գունատ էր, քան Գրուշնիցկին մի տասը րոպե առաջ։

Հետևյալ բառերը ես դիտմամբ արտասանեցի հատ-հատ, բարձրաձայն և պարզորոշ, ինչպես մահվան դատավճիռն են կարդում։

— Բժի՛շկ, այս պարոնները, հավանաբար շտապելուց, մոռացել են գնդակ դնել իմ ատրճանակի մեջ. խնդրում եմ ձեզ նորից լցնել ատրճանակը և լա՛վ լցնել։

— Չի՛ կարող պատահել,— բղավեց կապիտանը, չի՛ կարող պատահել. ես երկու ատրճանակն էլ լցրեցի, գուցե ձեր ատրճանակից գնդակն ընկել է. դա իմ մեղքը չէ՛։ — Իսկ դուք վերստին լցնելու իրավունք չունեք... ո՛չ մի իրավունք... Դա բոլորովին հակառակ է կանոններին. ես թույլ չե՞մ տալիս...

— Լա՛վ,— ասացի ես կապիտանին,— եթե այդպես է, ապա ես և դուք կմենամարտենք միևնույն պայմաններով...

Նա շփոթվեց։

Գրուշնիցկին կանգնած էր գլուխը կրծքին խոնարհած, շփոթված ու մռայլ։

— Թո՛ղ նրանց,— վերջապես ասաց նա կապիտանին, որ ուզում էր խլել իմ ատրճանակը բժշկի ձեռքից... Չէ՞ որ ինքդ էլ գիտես, որ նրանք իրավացի են։

Կապիտանն իզուր էր նրան զանազան նշաններ անում։ Գրուշնիցկին նայել էլ չէր ուզում։

Մինչ այդ բժիշկը լցրեց ատրճանակը և ինձ տվեց։

Այս տեսնելով, կապիտանը թքեց և ոտքը գետնին զարկեց։ «Հիմա՛րն ես դու, ախպերս,— ասաց նա,— տափակ հիմար... Քանի որ վստահել ես ինձ, ամեն ինչում ինձ լսիր... Տե՛ղն է, սատկի՛ր, ճանճի պես»... Նա երեսը շուռ տվեց և, հեռանալով, քրթմնջաց. «Այնուամենայնիվ դա միանգամայն դեմ է կանոններին»։

— Գրուշնի՛ցկի,— ասացի ես,— դեռ ժամանակ կա. հրաժարվիր քո զրպարտությունից, և ես քեզ ամեն ինչ կներեմ։ Քեզ չհաջողվեց ինձ հիմարացնել, և իմ ինքնասիրությունը

բավարարված է։ Վերհիշի՛ր. մենք մի ժամանակ բարեկամներ ենք եղել...

Նրա դեմքը կարմրատակեց, աչքերը փայլեցին։

— Կրակեցե՛ք,— պատասխանեց նա,— ես ինձ արհամարհում եմ, իսկ ձեզ ատում։ Եթե դուք ինձ չսպանեք, ես ձեզ գիշերով գաղտագողի կմորթեմ։ Երկրի վրա մեր երկուսի համար տեղ չկա...

Ես կրակեցի։

Երբ ծուխը ցրվեց, հրապարակի վրա Գրուշնիցկին չկար։ Միայն փոշին էր թեթև սյան պես դեռ ոլորվում զառիթափի եզրին։

Բոլորը միաբերան ճիչ արձակեցին։

— Fintia la comedia!*.— ասացի ես բժշկին։

Նա չպատասխանեց և սոսկումով երեսը շուռ տվեց։

Ես ուսերս թոթվեցի և գլխարկ հանելով՝ հրաժեշտ տվի Գրուշնիցկու վկաներին։

Կածանով ցած իջնելով, ժայռերի ճեղքերում ես նկատեցի Գրուշնիցկու արյունաթաթախ դիակը։ Ակամա փակեցի աչքերս...

Ձիս արձակելով՝ ես դանդաղ շարժվեցի դեպի տուն։ Սրտիս վրա քար էր ծանրացել։ Արևը աղոտ էր թվում, նրա ճառագայթներն ինձ չէին տաքացնում։

Սլոբոդկային հասած՝ դեպի աջ դարձրի ձին և գնացի կիրճով։ Մարդու կերպարանք տեսնելն ինձ համար ծանր էր. ուզում էի մենակ մնալ։ Սանձը բաց թողած, գլուխս կրծքիս խոնարհած՝ երկար գնացի, վերջապես տեսա, որ ընկել եմ ինձ բոլորովին անծանոթ մի տեղ, շուռ տվի ձիուս գլուխը և սկսեցի ճանապարհ փնտրել։ Արևն արդեն մայր էր մտնում, երբ տանջված ձիով, ինքս էլ տանջված, մոտեցա Կիսլովոդսկին։

Իմ լաքեյն ինձ ասաց, որ այցելության է եկել Վերները, և տվեց ինձ երկու գրություն՝ մեկը Վերներից, մյուսը ... Վերայից։

Ես բաց արի առաջինը։ Դա հետևյալ բովանդակությունն ուներ.

---

* Կատակերգությունը վերջացած է (իտալ.)։

«Ամեն ինչ որքան կարելի է լավ է սարքված. մարմինն այլակերպված են բերել, գնդակը կրծքից հանված է։ Բոլորը հավատացած են, որ մահվան պատճառը դժբախտ պատահար է, միայն պարետը, որին, հավանորեն, հայտնի է ձեր մենամարտը, օրորեց գլուխը, բայց ոչինչ չասաց։ Ոչ մի ապացույց չկա ձեր դեմ, և դուք կարող եք հանգիստ քնել... եթե կարող եք... Ցտեսությո՛ւն»...

Ես երկար ժամանակ չէի համարձակվում բացել երկրորդ գրությունը... Վերան ի՞նչ կարող էր գրած լինել... Ծանր նախազգացումն ալեկոծում էր իմ հոգին։

Ահա այդ նամակը, որի ամեն մի բառն անջնջելի դրոշմվել է իմ հիշողության մեջ.

«Ես գրում եմ քեզ՝ լիովին հավատացած լինելով, որ մենք այլևս չենք տեսնվի։ Մի քանի տարի առաջ, քեզնից բաժանվելիս, ես նույնն էի մտածում, բայց երկնքին հաճելի էր երկրորդ անգամ փորձել ինձ։ Ես չդիմացա այդ փորձությանը, իմ թույլ սիրտը նորից հնազանդվեց ծանոթ ձայնին... դու ինձ դրա համար չե՞ս արհամարհի, այնպես չէ՞։ Այս նամակը միաժամանակ լինելու է հրաժեշտ և խոստովանություն։ Ես պարտավոր եմ ասել քեզ բոլորը, ինչ կուտակվել է իմ սրտում այն օրից, ինչ նա քեզ սիրում է։ Քեզ չեմ մեղադրի. դու ինձ հետ վարվեցիր, ինչպես կվարվեր ամեն մի ուրիշ տղամարդ։ Դու ինձ սիրում էիր որպես սեփականություն, որպես փոխադարձաբար իրար հաջորդող հաճույքների, տագնապների և տխրությունների աղբյուր, առանց որոնց կյանքը ձանձրալի է և միօրինակ։ Ես այդ հասկացա սկզբից ևեթ... Բայց դու դժբախտ էիր, և ես ինձ զոհաբերեցի, հուսալով, որ երբևէ կգնահատես իմ զոհաբերությունը, երբևէ կհասկանաս իմ խոր քնքշանքը, որ ոչ մի պայմանից կախված չէ։ Դրանից հետո շատ ժամանակ անցավ։ Ես թափանցեցի քո հոգու բոլոր գաղտնիքների մեջ... և համոզվեցի, որ այն զուր հույս էր։ Դա՞ն էր ինձ համար։ Բայց իմ սերը հյուսվել էր իմ հոգուն. մթնեց, սակայն չմարեց։

Մենք բաժանվում ենք առհավետ. սակայն կարող ես հավատացած լինել, որ ես երբեք ուրիշին չեմ սիրի. իմ հոգին քեզ վրա սպառեց իր բոլոր գանձերը, իր արցունքներն ու

հույսերը։ Ով մեկ անգամ քեզ սիրեց, էլ չի կարող առանց որոշ արհամարհանքի նայել մյուս տղամարդկանց. ո՛չ այն պատճառով, որ դու նրանցից լավն ես։ Օ՜, ո՛չ, բայց քո բնության մեջ կա ինչ-որ առանձնահատուկ, միայն քեզ հատուկ, ինչ-որ հպարտ ու խորհրդավոր բան, քո ձայնի մեջ՝ ինչ էլ որ ասելիս լինես, կա անհաղթահարելի իշխանություն։ Ոչ ոք չի կարողանում այդպես միշտ ցանկալի սիրված լինել, ոչ ոքի մեջ չարն այդպես գրավիչ չի լինում, ոչ ոքի հայացքն այդքան երանություն չի խոստանում, ոչ ոք չի կարողանում ավելի լավ օգտվել իր առավելություններից, և ոչ ոք չի կարող այնպես ճշմարիտ դժբախտ լինել, ինչպես դու, որովհետև ոչ ոք այնքան չի աշխատում դրա հակառակը համոզել իրեն։

Այժմ ես պետք է բացատրեմ քեզ իմ շտապ մեկնումի պատճառը։ Դա կարող է քեզ անկարևոր թվալ, որովհետև միայն ինձ է վերաբերում։

Այսօր առավոտյան իմ ամուսինը մտավ ինձ մոտ և պատմեց ինձ քո ընդհարումը Գրուշնիցկու հետ։ Երևի իմ դեմքի արտահայտությունը շատ փոխվեց, որովհետև նա երկար և սևեռուն հայացքով նայեց աչքերիս մեջ։ Ես հազիվ ուշաթափ վայր չընկա, երբ մտածեցի, որ դու այսօր պետք է մենամարտես և որ դրա պատճառը ես եմ։ Ինձ թվում էր, թե ես կխելագարվեմ... Բայց այժմ, երբ կարող եմ դատել, հավատացած եմ, որ դու կենդանի կմնաս. անհնար է, որ դու առանց ինձ մեռնես, անհնա՛ր։ Իմ ամուսինը երկար քայլում էր սենյակում։ Չգիտեմ, թե նա ինձ ինչ էր ասում, չեմ հիշում, թե ես նրան ինչ եմ պատասխանել... Հավանաբար, ասել եմ, որ սիրում եմ քեզ։ Հիշում եմ միայն, որ մեր խոսակցության վերջում նա ինձ վիրավորեց սոսկալի խոսքով ու դուրս գնաց։ Լսեցի, թե ինչպես նա կարգադրեց կառեթը լծել... Ահա երեք ժամ է, որ ես պատուհանի մոտ նստած՝ քո վերադարձին եմ սպասում... Բայց դու կենդանի ես, դու չե՞ս կարող մեռնել... կառեթը համարյա պատրաստ է... Մնաս բարո՛վ, մնաս բարո՛վ... Ես կորած եմ, բայց ի՞նչ փույթ... Ո՞ւր էր, թե կարողանայի հավատացած լինել, որ դու ինձ միշտ կհիշես, էլ չեմ ասում՝ կսիրես։ Ո՜չ, միայն կհիշես... Մնաս բարո՛վ, գալիս են... պետք է թաքնվել նամակը...

Դու չե՞ս սիրում Մերիին, նրա հետ չես ամուսնանա, այնպես չէ՞։ Լսի՛ր, այդ զոհաբերությունը պետք է անես ինձ համար. ես քեզ համար ամեն ինչ կորցրի աշխարհում»...

Ես խելագարի պես դուրս թռա տնից, շտապ նստեցի իմ Զերքեզ ձին, որին ման էին ածում բակում, և ամբողջ ուժով սլացա Պյատիգորսկ տանող ճանապարհով։ Ես անողոքաբար քշում էի իմ հոգնաբեկ ձիուն, որ փնչացնելով և փրփրի մեջ կորած՝ ինձ սլացնում էր քարոտ ճանապարհով։

Արևն արդեն թաքնվել էր արևմտյան սարերի ողնաշարին հանգստացող սև ամպի մեջ։ Կիրճում մութ ու խոնավ էր։ Պոդկումոկը, քարերի վրայով անցնելով, խուլ ու միօրինակ մռնչում էր։ Ես սրարշավ առաջ էի գնում՝ անհամբերությունից շնչահեղձ լինելով։ Այն միտքը, որ կարող եմ նրան Պյատիգորսկում չհասնել, մուրճի պես հարվածում էր իմ սրտին։ Մի րոպե, ևս մի րոպե տեսնել նրան, հրաժեշտ տալ, սեղմել ձեռքը... Աղոթում էի, անիծում, լալիս, ծիծաղում... Ո՜չ, ո՜չ մի բան չի արտահայտի իմ անհանգստությունը, հուսահատությունը... Վերջին առհավետ կորցնելու հնարավորությունը նրան աշխարհումս ամեն ինչից թանկ դարձրեց ինձ համար՝ կյանքից, պատվից, երջանկությունի՞ց թանկ։ Աստված գիտե, թե ի՞նչ տարօրինակ, ի՞նչ կատաղի մտքեր էին խոնվում իմ գլխում... Եվ սակայն անընդհատ առաջ էի սլանում, անողոք քշելով ձին։ Եվ ահա, սկսեցի նկատել, որ ձիս սկսում է ավելի ծանր շնչել. նա արդեն մի երկու անգամ սայթաքել էր հարթ տեղում... Մնում էր հինգ վերստ մինչև Նսհնտուկին՝ կազակաբնակ այդ ստանիցան, որտեղ կարող էի ուրիշ ձի վերցնել։

Ամեն ինչ փրկված կլիներ, եթե իմ ձիու ուժերը բավականանային։ Ես մի տասը րոպե։ Բայց հանկարծ մի փոքր փոսից վեր բարձրանալով, լեռներից, դուրս բերող թեք ոլորանում նա գետին փռվեց։ Արագ ցած թռա թամբից, ուզեցի տեղից բարձրացնել, սանձից ձգեցի։ Իզո՜ւր. հազիվ լսելի թառանչ դուրս պրծավ նրա սեղմած ատամների արանքից։ Մի քանի րոպեից հետո նա սատկեց։ Ես տափաստանում մենակ մնացի՝ վերջին հույսս կորցնելով։ Փորձեցի հետիոտն գնալ. ծնկներս ծալվեցին։ Օրվա անհանգստությունից ու ան-

քնությունից հոգնաբեկ՝ ընկա թաց խոտի վրա և երեխայի պես լաց եղա։

Եվ ես երկար ժամանակ պառկած էի անշարժ ու դառնորեն լալիս էի, շաշխատելով զսպել արցունքներս ու հեկեկանքս։ Կարծում էի, թե կուրծքս կպատռվի, իմ ամբողջ ամրությունը, ամբողջ սառնասրտությունը ծխի պես չքացան։ Հոգիս ուժասպառ եղավ, բանականությունս լռեց, և եթե այս րոպեիս մեկնումեկն ինձ տեսներ, արհամարհանքով երես կդարձներ։

Երբ գիշերվա ցողը և լեռնային քամին թարմացրին իմ այրվող գլուխը, և մտքերս սովորական կարգի եկան, հասկացա, որ խորտակված երջանկության ետևից վազելն անօգուտ և անմիտ բան է։ Էլ ի՞նչ է հարկավոր ինձ. նրան տեսնե՞լ։ Ինչո՞ւ. մի՞թե մեր առջև ամեն ինչ վերջացած չէ՞։ Մի դառը հրաժեշտի համբույրը չի հարստացնի իմ հիշողությունները, իսկ այդ համբույրից հետո մենք միայն ավելի դժվարությամբ կբաժանվենք իրարից։

Սակայն ինձ հաճելի է, որ ես կարողանում եմ լաց լինել։ Ասենք, գուցե դրա պատճառը խանգարված ջղերս են, անքուն անցկացրած գիշերը, երկու բոպե ատրճանակի փողաբերանի առաջ կանգնելս ու դատարկ ստամոքսս։

Ավելի լա՜վ։ Այս նոր տանջանքը, զինվորական ոճով ասած, իմ մեջ երջանիկ փոփոխություն առաջ բերեց։ Լաց լինելն առողջարար է, և հետո, երևի, եթե ես ձիով ճամփորդած չլինեի ու ստիպված չլինեի վերադարձին տասնհինգ վերստ ոտքով քայլել, ապա այս գիշեր էլ քունն աչքերս չէր փակի։

Ես Կիսլովոդսկ վերադարձա առավոտյան ժամը հինգին, ընկա անկողնուս վրա և քնեցի, ինչպես Նապոլեոնը Վաթերլոոյից հետո։

Երբ արթնացա, դուրսն, արդեն մութ էր։ Նստեցի բաց պատուհանի առաջ, արձակեցի արխալուղիս կոճակները, և լեռնային քամին զովացրեց իմ կուրծքը, որի հոգնածությունը դեռևս չէր անցել ծանր քնից հետո։ Հեռվում, գետի մյուս ափին, գետին հովանի անող լորիների խիտ գագաթների միջով առկայծում էին քերդի և սլոբոդկայի շենքերի կրակները։ Մեր բակում ամեն ինչ խաղաղվել էր։ Իշխանուհու տունը մութն էր։

Ներս մտավ բժիշկը։ Ճակատը կնճռոտվել էր, սովորականի հակառակ նա ինձ ձեռք չմեկնեց։

— Որտեղի՞ց եք գալիս, բժի՜շկ։

— Իշխանուհի Լիգովսկայայի մոտից, նրա աղջիկը հիվանդ է, ջղերի թուլացում ունի... Բայց բանն այդ չէ, այլ ահա թե ինչը. իշխանությունը գլխի է ընկնում, և թեպետ բացարձակապես ոչինչ չի կարելի ապացուցել, սակայն ես ձեզ խորհուրդ եմ տալիս զգույշ լինել։ Իշխանուհին այսօր ինձ ասաց, թե ինքը գիտե, որ դուք իր աղջկա համար եք մենամարտել։ Նրան ամեն ինչ այդ ծերուկն է պատմել... Ի՞նչպես է նրա անունը։ Նա վկա է եղել ձեր և Գրուշնիցկու ընդհարմանը Ճաշարանում։ Ես եկա ձեզ նախազգուշացնելու։ Մնաք բարով։ Գուցե մենք այլևս չտեսնվենք, ձեզ այստեղից որևէ տեղ կփոխադրեն։

Շեմքի վրա նա կանգ առավ, ուզում էր իմ ձեռքը սեղմել... և եթե ես ցույց տայի, որ թեկուզ ամենափոքր ցանկություն ունեմ այդ բանն անելու, նա իմ վզովը կընկներ, բայց ես քարի պես սառը մնացի, և նա դուրս գնաց։

Զարմանալի՜ մարդիկ են։ Բոլորն են այդպես. վաղօրոք գիտեն վարմունքի բոլոր վատ կողմերը, օգնում, խորհուրդ են տալիս, մինչևիսկ հավանություն, ուրիշ միջոցի անհնարինությունը տեսնելով, իսկ հետո ձեռքերը լվանում են և զայրույթով երես դարձնում նրանից, ով համարձակություն է ունենում իր վրա վերցնելու պատասխանատվության ամբողջ ծանրությունը։ Բոլորն էլ այդպես են, մինչևիսկ ամենաբարիները, ամենախելոքները...

Մյուս օրն առավոտյան, բերդ մեկնելու հրաման ստանալով բարձր իշխանությունից, ես մտա իշխանուհու մոտ՝ հրաժեշտ տալու։

Նա զարմացավ, երբ իր հարցին՝ արդյոք իրեն որևէ հատկապես կարևոր բան ունեմ ասելու, թե ոչ, ես պատասխանեցի, որ երջանկություն եմ ցանկանում իրեն և այլն։

— Իսկ ես կուզենայի ձեզ հետ շատ լուրջ խոսել։

Ես լուռ նստեցի։

Ակներև էր, որ նա չգիտե, թե ինչից սկսի։ Դեմքը կատարմիր էր կորել, փափլիկ մատներով սեղանն էր թմբկահարում։ Վերջապես նա ընդհատվող ձայնով այսպես սկսեց.

— Լսեցե՛ք, մսյո Պեշորին. կարծում եմ, որ դուք ազնիվ մարդ եք։

Ես գլուխ տվեցի։

— Ես մինչևիսկ հավատացած եմ՝ դրանում,— շարունակեց նա,— թեպետև ձեր վարմունքը փոքր-ինչ կասկածելի է, բայց դուք կարող եք ունենալ պատճառներ, որոնք ես չգիտեմ, և այդ պատճառներն են, որ դուք հիմա պետք է վստահեք ինձ։ Դուք պաշտպանեցիք իմ աղջկան զրպարտությունից, նրա համար մենամարտեցիք, հետևաբար, ձեր կյանքը վտանգի ենթարկեցիք... Մի՛ պատասխանեք. գիտեմ, որ դուք այդ չեք խոստովանի, որովհետև Գրուշնիցկին սպանված է (նա խաչակնքեց իր երեսը)։ Աստված թողություն կտա նրան և, հուսով եմ, ձեզ նույնպես... Այդ ինձ չի վերաբերում... Ես չեմ համարձակվի ձեզ դատապարտել, որովհետև իմ աղջիկը, թեպետև անմեղ տեղը, բայց դրա պատճառն է եղել։ Նա ինձ բոլորն ասել է... ես կարծում եմ՝ բոլորը. դուք ձեր սերն եք խոստովանել նրան... նա իր սերն է խոստովանել ձեզ (այստեղ իշխանուհին ծանր հոգոց հանեց)։ Բայց նա հիվանդ է, և ես հավատացած եմ, որ դա հասարակ հիվանդություն չէ։ Գաղտնի վիշտն սպանում է նրան. չի խոստովանում, բայց ես հավատացած եմ, որ դուք եք դրա պատճառը... Լսեցե՛ք. գուցե կարծում եք, թե ես ահագին հարստություն եմ փնտրում, բարձրաստիճան մարդ։ Դեն նետեք այդ կարծիքը։ Ես միայն աղջկաս երջանկությունն եմ ցանկանում։ Ձեր այժմյան դրությունն աննախանձելի է, բայց կարող է լավանալ. դուք կարողության տեր եք, ձեզ սիրում է իմ աղջիկը։ Նա այնպես է դաստիարակված, որ ամուսնուն կերջանկացնի։ Ես հարուստ եմ, նա իմ միակ զավակն է... Ասե՛ք, ի՞նչն է ձեզ ետ պահում... Տեսնում եք, այս բոլորը ես չպետք է ասեի ձեզ, բայց վստահում եմ ձեր սրտին, ձեր ազնվությանը։ Հիշեցե՛ք, ես մի՛ աղջիկ ունեմ... մի՛ հատիկ...

Նա լաց եղավ։

— Իշխանուհի՛,— ասացի ես,— ես անկարող եմ պատասխանել ձեզ. թույլ տվեք առանձին խոսել ձեր աղջկա հետ...

— Երբե՛ք,— բացականչեց նա, խիստ հուզված վեր կենալով աթոռից։

— Ինչպես կկամենաք,— պատասխանեցի ես, պատրաստվելով հեռանալ։

Նա խորհեց, ձեռքով ինձ նշան արեց, որ սպասեմ, ու դուրս գնաց։

Անցավ մի հինգ րոպե։ Սիրտս ուժգին բաբախում էր, բայց մտքերս հանգիստ էին, գլուխս՝ սառը։ Որքան էլ ես կրծքումս որոնում էի սիրո գեթ մի կայծ դեպի հաճելի Մերին, բայց իմ ջանքերն ապարդյուն էին։

Ահա դուռը բացվեց, և նա ներս մտավ։ Աստվա՜ծ իմ, ինչպես էր փոխվել վերջին անգամ տեսնելուց հետո,— իսկ շա՞տ ժամանակ էր անցել։

Սենյակի մեջտեղը հասնելով նա երերաց։ Ես ցատկեցի տեղիցս, ձեռքս տվի նրան և հասցրի բազկաթոռին։

Ես կանգնած էի նրա դիմաց։ Երկար ժամանակ մենք լուռ էինք։ Անբացատրելի թախիծով լի նրա մեծ աչքերը կարծես իմ աչքերի մեջ հույս հիշեցնող որևէ բան էին փնտրում։ Գունատ շրթունքներն իզուր էին ջանում ժպտալ։ Քնքուշ ձեռքերը, որ դրել էր ծնկներին, այնքան վտիտ էի ու թափանցիկ, որ խղճացի։

— Իշխանադո՛ստր,— ասացի ես,— դուք գիտե՞ք, որ ես ծիծաղում էի ձեզ վրա... Դուք պետք է արհամարհեք ինձ։

Նրա այտերի վրա հիվանդոտ կարմրություն երևաց։

Ես շարունակեցի։

— Հետևապես, դուք ինձ սիրել չեք կարող...

Նա շուռ եկավ, սեղանին հենվելով՝ ձեռքով ծածկեց աչքերը, և ինձ թվաց, թե աչքերի մեջ արցունքներ փայլեցին։

— Աստվա՜ծ իմ,— արտասանեց նա հազիվ լսելի ձայնով։

Այդ անտանելի էր դառնում. ես մի րոպե, և ես նրա ոտքերը կընկնեի։

— Այսպես, ուրեմն, ինքներդ տեսնում եք,— ասացի ես, որքան կարող էի հաստատ ձայնով ու շինծու ժպիտով,— ինքներդ եք տեսնում, որ ես չեմ կարող ձեզ հետ ամուսնանալ։ Եթե այժմ դա ցանկանայիք, շուտով կզղջայիք։ Իմ խոստովանությունը ձեր մայրիկի հետ հարկադրեց ինձ այսպես անկեղծ ու կոպիտ բացատրվել ձեզ հետ։ Հուսով եմ, որ նա մոլորության մեջ է։ Դուք հեշտությամբ կարող եք հակառակի

համոզել։ Դուք տեսնում եք, ձեր իսկ աչքերում ես ամենաողորմելի և գարշելի դերն եմ խաղում և մինչև անգամ խոստովանում եմ այդ։ Ահա այն բոլորը, որ ես կարող եմ անել ձեզ համար։ Ինչպիսի վատ կարծիք էլ ունենաք իմ մասին, վաղորոք հնազանդվում եմ... Ես ձեզ համար ստոր մարդ եմ, չէ՞։ Եթե դուք ինձ մինչև իսկ սիրում էիք, ապա այս բոպեից արհամարհում եք ինձ, այնպես չէ՞...

Նա երեսը դարձրեց իմ կողմը. մարմարի պես գունատ էր, միայն աչքերն էին հրաշալի կերպով շողշողում։

— Ես ատում եմ ձեզ...— ասաց նա։

Ես շնորհակալություն հայտնեցի, հարգանքով գլուխ տվի ու դուրս գնացի։

Մի ժամից հետո ճեպընթաց եռաձի կառքը սլանում — տանում էր ինձ Կիսլովոդսկից։ Եսենտուկիից մի քանի վերստ հեռավորության վրա ես տեսա իմ քաջարշավ ձիու դիակը։ Թամբը հանել էին. երևի որևէ անցորդ կազակ։ Թամբի փոխարեն նրա մեջքին երկու ագռավ էին նստած։ Ես հառաչեցի ու երեսս շուռ տվի...

Եվ հիմա այստեղ, այս ձանձրալի բերդում, մտքով անցյալը թերթելով՝ ես հաճախ հարցնում եմ ինձ. ինչո՞ւ չցանկացա ոտք դնել այն ուղին, որ բախտը բացել էր իմ առաջ և որտեղ ինձ սպասում էին խաղաղ ուրախություններ ու հոգեկան անդորրություն... Ո՛չ, ես այդ վիճակը չէի տանի։ Ես նման եմ ծովահենային նավի տախտակամածի վրա ծնված ու մեծացած նավաստու։ Նրա հոգին ընտելացել է մրրիկներին ու մարտերին և, ափ նետվելով, նա կձանձրանա ու կտառապի, որքան էլ նրան հրապուրի ստվերաշատ պուրակը, որքան էլ նրա համար շողա խաղաղ արևը։ Նա ամբողջ օրը կշրջի մերձափնյա ավազի վրա, ականջ կդնի դեպի ափ վազող ալիքների միօրինակ ճողփյունին և հայացքը կհառի մշուշոտ հեռվին, թե կապույտ հորձանուտը գորշ ամպերից բաժանող այն գունատ սահմանագծի վրա չի՞ երևա արդյոք ցանկալի առագաստ, որ սկզբում նման լինի ծովային ճայի թևի, բայց փոքր առ փոքր բաժանվի փրփուրից և հավասար վազքով մոտենա ամայի նավահանգստին...

Այնպես պատահեց, որ ես մի անգամ երկու շաբաթ ապրեցի կազակական մի ստանիցայում, որ գտնվում էր ռազմագծի ձախ թևում։ Այդտեղ կար նաև հետևակային մի գումարտակ։ Սպաները հերթով միմյանց մոտ էին հավաքվում, երեկոները թուղթ խաղում։

Մի անգամ, բոստոնից ձանձրանալով ու խաղաթղթերը սեղանի տակ շպրտելով, մենք շատ երկար նստեցինք մայոր Ս.-ի մոտ։ Խոսակցությունը, սովորականի հակառակ, զբաղեցնող էր։ Խոսում էինք այն մասին, որ մահմեդականների այն հավատալիքը, թե իբր մարդու ճակատագիրը գրված է երկնքում, մեր շրջանում էլ շատ երկրպագուներ է գտնում. ամեն մեկն այս կամ այն արտասովոր դեպքն էր պատմում pro կամ contra*.

— Այդ բոլորը, պարոնայք, ոչինչ չի ապացուցում,— ասաց ծեր մայորը.— չէ՞ որ ձեզանից ոչ ոք ականատես չի եղել այն տարօրինակ դեպքերին, որոնցով դուք հաստատում եք ձեր կարծիքները։

— Իհարկե, ո՛չ ոք,— ասացին շատերը,— բայց մենք լսել ենք վստահելի մարդկանցից...

— Այդ բոլորը դատարկ բան է,— ասաց մեկը։ — Ովքե՞ր են այդ վստահելի մարդիկ, որոնք տեսել են այն ցուցակը, որտեղ նշանակված է մեր մահվան ժամը... Եվ եթե, իրոք, կա նախախնամությունը, ապա էլ ինչո՞ւ է մեզ տրված կամքը, բանականությունը։ Մենք ինչո՞ւ պետք է հաշիվ տանք մեր արարքների համար։

Այդ ժամանակ մի սպա, որ նստած էր սենյակի անկյունում, վեր կացավ և, դանդաղ մոտենալով սեղանին, հանգիստ ու հանդիսավոր հայացքով դիտեց բոլորին։ Նա ծագումով սերբ էր, ինչպես նրա անունից էր երևում։

Պորուչիկ Վուլիչի արտաքինը լիովին համապատասխանում էր նրա բնավորությանը։ Բարձր հասակը և դեմքի թուխ գույնը, սև մազերը, սև, թափանցող հայացքը, մեծ, բայց

* Թեր կամ դեմ (լատին.)։

կանոնավոր քիթը, որ նրա ազգի պատկանելիքն է, տխուր և սառը ժպիտը, որ մշտապես խաղում էր նրա շրթունքներին,— այս բոլորը կարծես ներդաշնակ էր, որպեսզի նրան տա առանձնահատուկ էակի տեսք, որն անընդունակ է իր մտքերին և տենչերին բաժանորդ դարձնել այն մարդկանց, որոնք ճակատագրի կամքով ընկեր էին դարձել իրեն։

Նա քաջ էր, խոսում էր քիչ, բայց կտրուկ. ոչ ոքի չէր հայտնում իր հոգեկան և ընտանեկան գաղտնիքները. գինի համարյա չէր խմում. երիտասարդ կազակուհիների հետևից, որոնց հրապույրը դժվար է ըմբռնել առանց նրանց տեսնելու, նա երբեք քարշ չէր գալիս։ Սակայն ասում էին, թե գնդապետի կինն անտարբեր չէ դեպի նրա արտահայտիչ աչքերը։ Վուլիչը լրջորեն բարկանում էր, երբ այդ ակնարկում էին։

Կար միայն մի կիրք, որ նա չէր թաքցնում՝ թղթախաղի կիրքը։ Կանաչ սեղան նստելիս նա մոռանում էր ամեն ինչ և սովորաբար տանուլ էր տալիս, բայց մշտական անհաջողությունները միայն գրգռում էին նրա համառությունը։ Պատմում էին, որ մի անգամ, արշավանքի ժամանակ, գիշերը նա բարձի վրա բանկ էր բռնում։ Բախտը բանում էր։ Հանկարծ կրակոցներ լսվեցին, տագնապ հնչեցրին, բոլորը ոտքի թռան ու դեպի զենք նետվեցին։ «Վա-բա՛նկ գնա*,— գոչեց Վուլիչն առանց տեղից վեր կենալու՝ ամենաթունդ խաղացողներից մեկին»։— Իմը յոթնոց է,— պատասխանեց վերջինս, դուրս վազելով։ Չնայած ընդհանուր իրարանցումին, Վուլիչը մինչև վերջ հասցրեց խաղը... դուրս գնացողի թուղթը տարավ։

Երբ Վուլիչը զորաշղթա հասավ, այնտեղ արդեն երկուստեք ուժեղ հրաձգություն էր բացվել։ Վուլիչի հոգը չէին ո՛չ գնդակները, ո՛չ էլ չեչենների թրերը։ Նա փնտրում էր իր բանկի դեմ գնացող բախտավոր խաղացողին։

— Յոթնոցը տարավ,— բղավեց նա, վերջապես տեսնելով այդ մարդուն առաջամարտիկների շղթայում, որոնք սկսում էին անտառից դուրս մղել թշնամուն, մոտ գնալով, հանեց իր քսակն ու դրամապանակը և դրանք տվեց բախտավորին, շնա-

* Բանկի ամբողջ գումարը։

ված վճարման անտեղիության մասին արվող առարկություններին։ Այդ տհաճ պարտականությունը կատարելուց հետո Վուլիչն առաջ նետվեց, իր հետևից տարավ զինվորներին ու մինչև կռվի վերջն ամենայն սառնասրտությամբ կրակով պատասխանեց չեչենների կրակոցին։

Երբ պորուչիկ Վուլիչը սեղանին մոտեցավ, բոլորը լռեցին, նրանից որևէ օրիգինալ արարք սպասելով։

— Պարոնայք,— ասաց նա (նրա ձայնը հանգիստ էր, թեպետև սովորականից մի աստիճան ցածր),— պարոնայք, ինչի՞ համար են դատարկ վեճերը։ Դուք ապացույցնե՞ր եք ուզում։ Ես առաջարկում եմ մեզ վրա՛ փորձել. կարո՞ղ է արդյոք մարդ ինքնակամ տնօրինել իր կյանքը, եթե մեզանից ամեն մեկի համար վաղորոք նշանակված է ճակատագրական րոպեն... Ո՞վ է ցանկանում։

— Ո՛չ ես, ո՛չ ես,— լսվեց բոլոր կողմերից։— Ա՛յ քեզ տարօրինակ մարդ, ի՞նչ է խելքին փչել...

— Առաջարկում եմ գրազ գալ,— ասացի ես կատակով։

— Ինչի՞ վրա։

— Պնդում եմ, որ նախասահմանություն չկա,— ասացի ես, սեղանին թափելով մի երկու տասնյակ ոսկի տասը ռուբլիանոց,— այն բոլորը, որ կար իմ գրպանում։

— Ընդունում եմ,— պատասխանեց Վուլիչը խուլ ձայնով։— Մայո՛ր, դուք մեր դատավորը կլինեք։ Ահա տասնհինգ հատ տասանոց. մնացած հինգը դուք ինձ պարտք եք և բարի կլինեք՝ ավելացնելու սրանց։

— Լա՛վ,— ասաց մայորը,— միայն թե, ճիշտն ասած, ես չեմ հասկանում, բանն ինչու՞մն է և ինչպե՞ս եք լուծելու այս վեճը...

Վուլիչը լռելյայն գնաց մայորի ննջարանը։ Մենք հետևեցինք նրան։ Նա մոտեցավ այն պատին, որից զենքեր էին կախված, և առանց ընտրություն անելու՝ տարբեր մեծության ատրճանակներից մեկը ցած բերեց մեխից։ Մենք դեռևս չէինք հասկանում նրա մտադրությունը, բայց երբ նա ատրճանակի շնիկը քաշեց և վառոդի տեղը վառոդ լցրեց, շատերն ակամա ճիչ արձակելով բռնեցին նրա ձեռքերը։

— Ի՞նչ ես ուզում անել։ Լսի՛ր, դա խելագարությո՛ւն է,— գոռացին նրանք։

— Պարոնա՛յք,— ասաց նա դանդաղ, իր ձեռքը դուրս քաշելով նրանց ձեռքերից,— ո՞վ է ցանկանում քսան տասանոց գին տալ ինձ։ — Բոլորը լռեցին ու հեռացան։

Վուլիչը գնաց մյուս սենյակն ու նստեց սեղանի մոտ։ Բոլորը գնացին նրա հետևից։ Նա նշանացի հրավիրեց մեզ իր շուրջը նստել։ Լռելյայն հնազանդվեցինք. այս րոպեին նա ինչ-որ խորհրդավոր ուժ էր ձեռք բերել մեզ վրա։ Ես սեռուն հայացքով նրա աչքերի մեջ նայեցի, բայց նա իմ փորձող հայացքին պատասխանեց հանգիստ ու անշարժ հայացքով, և նրա դալուկ շրթունքները ժպտացին։ Սակայն, չնայած նրա պաղարյունությանը, ինձ թվում էր, թե ես մահվան կնիք էի տեսնում նրա գունատ դեմքին։ Նկատեցի (և հին ռազմիկներից շատերը հաստատում էին իմ դիտողությունը), որ հաճախ այն մարդու դեմքին, որը մի քանի ժամից հետո պետք է մեռնի, անխուսափելի ճակատագրի ինչ-որ տարօրինակ դրոշմ է լինում, այնպես որ սովոր աչքերը դժվար թե սխալվեն։

— Դուք այսօր մեռնելո՞ւ եք,— ասացի նրան։

Նա արագ դարձավ իմ կողմը, բայց դանդաղ ու հանգիստ պատասխանեց։

— Գուցե այո՛, գուցե ո՛չ...

Ապա դառնալով մայորին, հարցրեց.

— Ատրճանակը լի՞քն է արդյոք։ — Մայորը շփոթմունքից լավ չէր հիշում։

— Դե՛, բավական է, Վո՛ւլիչ,— գոչեց ներկաներից մեկը,— անշո՛ւշտ, լիքը կլինի, եթե գլխավերևում էր կախած, այդ ի՞նչ կատակ է...

— Հիմա՛ր կատակ է,— վրա բերեց մեկ ուրիշը։

— Դրազ եմ գալիս հիսուն ռուբլի հինգի դեմ, որ ատրճանակը լցված չէ,— գոչեց երրորդը։

Ուրիշներն էլ գրազ եկան։

Ինձ ձանձրացրեց այդ երկար պատմությունը։ «Լսե՛ք,— ասացի ես,— կամ ինքնասպան եղեք կամ ատրճանակը առաջվա տեղը կախեք, ու գնանք քնելու»։

— Իհա՛րկե,— բացականչեցին շատերը,— գնանք քնելու։

— Պարոնա՛յք, ես ձեզ խնդրում եմ տեղներիցդ չշարժվեք,— ասաց Վուլիչը՝ ատրճանակի փողաբերանը ճակատին դեմ անելով։

Բոլորը կարծես քարացան։

— Պարոն Պեչորին,— հարեց նա,— մի խաղաթուղթ վերցրեք ու վերև գցեք։

Ինչպես այժմ հիշում եմ, ես սեղանից վերցրի փոսիկի մեկնոցն ու վերև նետեցի։ Բոլորը շունչները պահեցին։ Բոլոր աչքերն ահ ու ինչ-որ անորոշ հետաքրքրություն արտահայտելով, ատրճանակից արագորեն դեպի ճակատագրական մեկնոցն էին դառնում, որը, օդում թրթռալով, դանդաղ ցած էր իջնում։ Այն րոպեին, երբ մեկնոցը սեղանին հասավ, Վուլիչը սեղմեց շնիկը... փուստ անցավ։

— Փա՛ռք աստծո,— կանչեցին շատերը,— լիքը չէ։

— Տեսնե՛նք, տեսնե՛նք,— ասաց Վուլիչը։ Նա նորից քաշեց, նշան բռնեց պատուհանի վերևը կախված գլխարկին։ Լսվեց կրակոցը, և ծուխը լցրեց սենյակը։ Երբ ծուխը ցրվեց, գլխարկը ցած բերին. գլխարկը ծակված էր ուղիղ մեջտեղից, և գնդակը խորը մտել էր պատի մեջ։

Մի երեք բոպե ոչ ոք չկարողացավ ոչ մի բառ արտասանել։ Վուլիչն ամենայն հանգստությամբ իր քսակը լցրեց իմ ոսկի տասանոցները։

Խոսակցություն բացվեց այն մասին, թե ատրճանակն ինչո՞ւ առաջին անգամը չկրակեց։ Ոմանք պնդում էին, թե երեք վառոդատեղն է աղտոտված, մյուսները շշնջոցով ասում էին, որ առաջ վառոդը խոնավ էր և որ Վուլիչը հետո թարմ վառոդ ավելացրեց. բայց ես պնդում էի, որ վերջին ենթադրությունն անարդարացի է, որովհետև ամբողջ ժամանակ ես աչքերս ատրճանակից չէի հեռացնում։

— Խաղի մեջ դուք բախտավոր եք,— ասացի ես Վուլիչին...

— Ծնվածս օրից առաջին անգամն է,— պատասխանեց նա, ինքնագոհ ժպտալով,— սա բանկից ու շտոսից* լավ է։

— Բայց փոխարենը՝ մի քիչ ավելի վտանգավոր է։

— Հը՞։ Դուք սկսեցի՞ք հավատալ նախասահմանությանը։

* Թղթախաղ։

— Հավատում եմ. միայն թե հիմա չեմ հասկանում. ինչո՞ւ էր ինձ թվում, իբր թե դուք այսօր անպատճառ պետք է մեռնեք...

Սակայն այն մարդը, որ քիչ առաջ ամենայն հանգստությամբ նշան էր բռնել իր ճակատին, այժմ հանկարծ բռնկվեց ու շփոթվեց։

— Դե, բավակա՞ն է,— ասաց նա, ոտքի ելնելով,— մեր գրազը վերջացավ և հիմա ձեր նկատողությունները, ինձ թվում է, տեղին չեն...— նա գդակն առավ ու գնաց։ Այդ ինձ տարօրինակ թվաց և իզուր չէր։

Շուտով բոլորն իրենց տները ցրվեցին, տարբեր կերպով խոսելով Վուլիչի տարօրինակությունների մասին և, երևի, միաբերան ինձ եսամոլ անվանելով, որովհետև ես գրազ բռնեցի մի մարդու դեմ, որը ցանկանում էր ինքնասպան լինել. կարծես ես որ չլինեի, նա չէ՞ր կարող հարմար առիթ գտնել։

Ես տուն էի դառնում ստանիցայի դատարկ նրբափողոցներով։ Լուսինը՝ լրման հասած ու կարմիր, ինչպես հրդեհի շառայլ, սկսեց երևալ տների ատամնավոր հորիզոնից. աստղերը խաղաղ պսպղում էին մուգ-երկնագույն երկնակամարում, և ինձ ծիծաղ պատճառեց, երբ ես վերհիշեցի, որ մի ժամանակ եղել են իմաստնագույն մարդիկ, որոնք կարծել են, թե երկնային լուսատուները մասնակցում են հողի մի կտորի կամ ինչ-որ հնարովի իրավունքների համար մեր բացած վեճերին։ Եվ ի՞նչ։ Այդ կանթեղները, որ, նրանց կարծիքով, վառված են միմիայն նրա համար, որպեսզի լուսավորեն իրենց մարտերն ու տոնախմբությունները, վառվում են նախկին փայլով, իսկ այդ մարդկանց տենչերն ու հույսերը նրանց հետ միասին վաղուց մարել են, ինչպես անտառի եզրին անհոգ թափառականի վառած կրակ։ Բայց կամքի ի՞նչ ուժ էր տալիս նրանց հավատը, թե ողջ երկինքը, իր անթիվ բնակիչների հետ, իրենց է նայում՝ թեպետև համր, բայց անփոփոխ կաթեկցությամբ... Իսկ մենք՝ նրանց ողորմելի հետնորդներս, որ թափառում ենք երկրի երեսին առանց համոզումների ու հպարտության, առանց վայելքի ու ահի, բացի այն ակամա երկյուղից, որ սեղմում է սրտներս անխուսափելի վախճանի մասին մտածելիս։ Մենք այլևս անընդունակ ենք ո՛չ մարդ-

կության բարօրության համար, ո՛չ էլ մինչև անգամ մեր սեփական բախտավորության համար մեծ զոհաբերություններ անելու, որովհետև գիտենք նրա անկարելիությունը և անտարբեր՝ կասկածից-կասկած ենք անցնում, ինչպես մեր նախնիները մի մոլորությունից դեպի մյուսն էին նետվում, մենք, որ չունենք ո՛չ նրանց հույսերը, ո՛չ էլ նույնիսկ այն անորոշ, թեպետև ուժեղ հաճույքը, որ գտնում է հոգին մարդկանց կամ ճակատագրի դեմ եղած ամեն մի պայքարում...

Եվ շատ նման մտքեր էին ծագում իմ գլխում։ Ես դրանք մտքումս չէի պահում, որովհետև չեմ սիրում որևէ վերացական մտքի վրա կանգ առնել. և ինչի՞ է պետք...

Իմ երիտասարդության առաջին շրջանում ես երազող էի. սիրում էի փայփայել մերթ մռայլ, մերթ վարդագույն պատկերները, որ նկարում էր անհանգիստ ու ագահ երևակայությունս։ Բայց ինձ դրանից ի՞նչ մնաց. միայն հոգնածություն, որ նման է ուրվականի հետ ունեցած գիշերվա կռվի առաջացրած հոգնածության, և ափսոսանքով լի մի աղոտ հուշ։ Այդ ապարդյուն կռվում ես սպառեցի թե՛ հոգուս կրակը, թե՛ կամքիս անհողդողդությունը, որ անհրաժեշտ է իրական կյանքի համար։ Ես ոտք դրի այս կյանքը, մտովին արդեն ապրած-վերջացրած լինելով այն, և ես ձանձրացա ու գարշանք զգացի, ինչպես այն կզգա մի մարդ՝ իրեն վաղուց ծանոթ մի գրքի վատ նմանությունը կարդալիս։

Այս երեկոյի դեպքը բավական խոր տպավորություն գործեց ինձ վրա և գրգռեց ջղերս։ Վստահաբար չգիտեմ, արդյոք այժմ հավատո՞ւմ եմ նախասահմանությանը, թե՞ ոչ, բայց այդ երեկո ես դրան հաստատ հավատում էի. ապացույցն ապշեցուցիչ էր, և ես, չնայած այն բանին, որ ծիծաղեցի մեր նախնիների և նրանց ծառայություն մատուցելու պատրաստ աստղագուշակության վրա, ակամա նրանց շավիղը բռնեցի։ Բայց ես ինձ ժամանակին կանգնեցրի այդ վտանգավոր ճանապարհին և, կանոն ունենալով բացարձակապես ոչինչ չժխտել և կուրորեն ոչնչի չհավատալ, մետաֆիզիկան մի կողմ նետեցի և սկսեցի ոտքերիս տակ նայել։ Նման նախազգուշությունը շատ տեղին էր, ես քիչ մնաց վայր ընկնեի, դիպչելով ինչ-որ մի հաստ և փափուկ, բայց, ըստ երևույթին, ոչ կենդանի բանի։ Կռացա (լուսինն արդեն իր լույսը գցել

էր ուղղակի ճանապարհին) և ի՞նչ. իմ առջև ընկած էր թրով մեջտեղից կիսած մի խոզ... Ես հազիվ էի լավ դիտել խոզը, որ քայլերի աղմուկ լսեցի։ Երկու կազակ վազում էին նրբանցքով։ Մեկը մոտեցավ ինձ և հարցրեց՝ արդյո՞ք խոզ հալածող հարբած կազակ չեմ տեսել։ Ես հայտնեցի, որ կազակի չեմ հանդիպել ու ցույց տվի նրա անզուսպ քաջության դժբախտ զոհը։

— Ի՞նչ ավազակն է,— ասաց երկրորդ կազակը,— հենց որ չիխիր է խմում, սկսում է կտոր-կտոր անել այն ամենը, ինչ պատահում է։ Գնանք դրան գտնենք, Երեմեյիչ, հարկավոր է նրան կապել, թե չէ...

Նրանք հեռացան, իսկ ես շարունակեցի ճանապարհս է՛լ ավելի մեծ զգուշավորությամբ ու, վերջապես, բարեհաջող հասա բնակարանս։

Ես ապրում էի մի ծեր ուրյադնիկի մոտ, որին սիրում էի իր բարության և մանավանդ սիրունիկ աղջկա՝ Նաստյայի պատճառով։

Նաստյան, ըստ սովորականի, ինձ սպասում էր դռնակի մոտ, մուշտակի մեջ փաթաթված։ Լուսինը լուսավորում էր նրա սիրելի շրթունքները, որ գիշերվա ցրտից կապտել էին։ Ինձ ճանաչելով, նա ժպտաց, բայց ես նրանով զբաղվելու տրամադրություն չունեի։ «Ցտեսություն, Նաստյա»,— ասացի ես, նրա կողքով անցնելով։ Նա ուզում էր ինչ-որ պատասխան տալ, բայց միայն հոգոց հանեց։

Իմ սենյակը մտնելով, ես դուռը ծածկեցի, մոմը վառեցի ու ընկա անկողնուս վրա։ Սակայն քունն այս անգամ ստիպեց սովորականից ավելի երկար սպասել իրեն։ Արևելքն արդեն սկսում էր գունատվել, երբ քնեցի, բայց, երևի, երկնքում գրված էր, որ այդ գիշեր պետք է քունս չառնեմ։ Առավոտյան ժամը չորսին երկու բռունցք թակեցին իմ պատուհանը։ Ես վեր ցատկեցի,— ի՞նչ է պատահել... «Վեր կաց, հագնվիր»,— կանչում էին ինձ մի քանի ձայներ։ Ես շտապով հագնվեցի և դուրս գնացի։ «Գիտես, ի՞նչ է պատահել»,— միաբերան ասացին ինձ երեք սպաներ, որոնք իմ ետևից էին եկել. նրանք մահվան պես գունատ էին։

— Ի՞նչ։

—Վուլիչն-սպանված է։

Ես քար կտրեցի։

— Այո՛, սպանված է,— շարունակեցին նրանք,— շուտ գնանք։

— Ախր ո՞ւր, է՞։

— Ճանապարհին կիմանաս։

Գնացինք։ Նրանք պատմեցին ինձ ամենը, ինչ պատահել էր՝ դրան խառնելով զանազան դիտողություններ այն տարօրինակ նախասահմանության մասին, որը մահվանից կես ժամ առաջ նրան փրկեց անխուսափելի մահից։ Վուլիչը մենակ գնալիս է լինում մութ փողոցով. նրան դեմ է գալիս խոզին թրով կտրող հարբած կազակը, որ գուցե և նրա մոտով անցներ՝ առանց նրան նկատելու, եթե Վուլիչը, հանկարծ կանգ առնելով, չասեր. «Է՛յ, ախպերացո՛ւ, ո՞ւմն ես փնտրում»։ «Քե՛զ»— պատասխանում է կազակը, թրով հարվածում և ուսից համարյա մինչև սիրտը կտրում... Ինձ հանդիպող և մարդասպանի հետևից գնացող երկու կազակները վրա են հասնում, բարձրացնում վիրավորին, բայց նա արդեն վերջին շունչը փչելու վրա է լինում, և ասում է միայն երեք բառ. «Նա իրավացի է»։ Միայն ես էի հասկանում այդ բառերի մութ իմաստը. դրանք ինձ էին վերաբերում։ Ես ակամա նախազգուշակել էի խեղճի ճակատագիրը։ Իմ բնազդն ինձ չէր խաբել. ես կարծես կարդացել էի նրա՝ այլափոխված դեմքին մոտալուտ վախճանի կնիքը։

Մարդասպանին փակել էին ստանիցայի ծայրին գտնվող դատարկ խրճիթում։ Մենք այնտեղ էինք գնում։ Բազմաթիվ կանայք, լաց լինելով՝ նույն այդ կողմն էին վազում։ Երբեմն-երբեմն ուշացած մի կազակ փողոց էր դուրս թռչում, շտապ-շտապ դաշույնը կապելով և վազելով՝ մեզնից առաջ էր անցնում։ Սոսկալի իրարանցում էր։

Ահա վերջապես մենք տեղ հասանք։ Տեսնում ենք. խրճիթի շուրջը, որի դռներն ու փեղկերը ներսից փակված են, ամբոխ էր կանգնել։ Սպաներն ու կազակները իրար հետ տաք խոսակցության են բռնված։ Կանայք ոռնում են, սուգ ու շիվան անում։ Նրանց մեջ աչքովս ընկավ մի պառավի նշանավոր դեմք, որ անհուն անհուսություն էր արտահայտում։ Նա նստած էր հաստ գերանի վրա, արմունկները հենած ծնկներին, իսկ գլուխը՝ ձեռքերին։ Դա մարդասպանի մայրն էր։

Նրա շրթունքները ժամանակ առ ժամանակ շարժվում էին... Արդյո՞ք աղոթք էին մրմնջում, թե՞ անեծք։

Այնինչ հարկավոր էր որևէ վճռական քայլ անել և բռնել հանցագործին։ Սակայն ոչ ոք չէր համարձակվում առաջինը նետվել։

Ես մոտեցա պատուհանին և փեղկի արանքից ներս նայեցի։ Նա դժգույն պառկած էր հատակին, ատրճանակն աջ ձեռքին բռնած։ Արյունոտ թուրն ընկած էր նրա կողքին։ Նրա արտահայտիչ աչքերը սարսափելի կերպով պտույտ էին գալիս։ Երբեմն նա ցնցվում էր ու ձեռքերով գլուխը բռնում. կարծես աղոտ կերպով մտաբերելով երեկվա պատահածը։ Ես մեծ վճռականություն չկարդացի այդ անհանգիստ հայացքի մեջ և ասացի մայորին, թե նա իզուր չի հրամայել կազակներին դուռը ջարդել և այնտեղ նետվել, որովհետև ավելի լավ է այդ անել հիմա, քան հետո, երբ նա բոլորովին ուշքի եկած կլինի։

Այդ միջոցին ծեր եսաուլը մոտեցավ դռանը և տվեց մարդասպանի անունը։ Նա պատասխանեց։

— Մեղք ես գործել, եղբա՛յր Եֆիմիչ,— ասաց եսաուլը,— է՜հ, էլ ի՞նչ կարող ես անել, հնազանդվի՛ր։

— Չե՛մ հնազանդվի,— պատասխանեց կազակը։

— Աստծուց վախեցի՛ր, դու հո նզովյալ չեչեն չե՞ս, այլ ազնիվ քրիստոնյա։ Չէ՞որ մեղքը քեզ իր ցանցն է գցել, ճար չկա. ճակատագրիցդ չես փախչի։

— Չե՛մ հնազանդվի,— բղավեց կազակն ահեղաբար, և լսվեց, թե ինչպես շրթաց ատրճանակի շնիկը։

— Է՜յ, մորաքո՛ւր,— ասաց եսաուլը պառավին,— խոսիր որդուդ հետ, գուցե քեզ լսի... Ախր սա կնշանակի՝ աստծուն զայրացնել։ Մեկ էլ, տե՛ս, ա՛յ, պարոններն էլ արդեն մի երկու ժամ է, ինչ սպասում են։

Պառավը սևեռուն հայացքով նրան նայեց ու գլուխն օրորեց։

— Վասիլի Պետրովիչ,— ասաց եսաուլը՝ մայորին մոտենալով,— նա անձնատուր չի լինի. ես նրան ճանաչում եմ։ Իսկ եթե դուռը ջարդելու լինենք, մերոնցից շատ մարդ կկոտորի։ Ավելի լավ չի՞ արդյոք հրամայել նրան սպանել, փեղկի ճեղքը լայն է։

Այդ րոպեին իմ գլխով մի տարօրինակ միտք անցավ։ Վուլիչի պես, ես էլ մտածեցի բախտս փորձել։

— Սասսեցե՛ք,— ասացի մայորին,— ես նրան ողջ-ողջ կբռնեմ։

Եսաուլին կարգադրեցի, որ նրա հետ խոսակցություն բացանի, դռների մոտ կանգնեցրի երեք կազակ, որոնք պատրաստ պետք է լինեին դուռը ջարդելու և ինձ օգնության նետվելու, հենց որ նշան տայի, ապա ինքս պտտվեցի խրճիթի շուրջը և մոտեցա ճակատագրական պատուհանին։ Սիրտս ուժգին բաբախում էր։

— Ախ դո՜ւ նզովյալ,— գոչում էր եսաուլը,— դու մեզ վրա ծիծաղում ես, ի՞նչ է։ Թե՞ կարծում ես, որ չենք կարող հախիցդ գալ։ — Նա սկսեց ամբողջ ուժով բախել դուռը... ես, աչքս ճեղքին դեմ արած, հետևում էի կազակի շարժումներին. կազակն այս կողմից հարձակման չէր սպասում։ Ես հանկարծ պոկեցի փեղկը և պատուհանից գլխիվայր ներս նետվեցի։ Պայթյունը հնչեց հենց ականջիս տակ, գնդակը պոկեց ուսադիրս. բայց ծուխը, որ լցվել էր սենյակը, խանգարեց իմ հակառակորդին՝ գտնելու իր կողքին ընկած թուրը։ Ես բռնեցի նրա ձեռքերը։ Կազակները ներս թափվեցին, և մի երեք րոպե չանցած՝ հանցագործին արդեն կապկպել էինք և ուղեկցորդով տարել։ Ժողովուրդը ցրվեց, սպաներն ինձ շնորհավորեցին (և, իսկապես, արժեր շնորհավորել)։

Այս բոլորից հետո, ասում ես, մարդ ինչպե՞ս ֆատալիստ չդառնա։ Բայց ո՞վ ստույգ գիտե, նա որևէ բանի համոզվա՞ծ է, թե՞ ոչ... Եվ ի՞նչ. հաճախ մենք համոզման տեղ ենք ընդունում զգացմունքների խաբկանքը կամ բանականության վրիպումը... Ես սիրում եմ կասկածի ենթարկել ամեն ինչ։ Այս տրամադրությունը չի խանգարում բնավորության վճռականությանը. ընդհակառակը, իմ վերաբերյալ պետք է ասեմ, որ ես միշտ ավելի համարձակ եմ առաջ գնում, երբ չգիտեմ, թե ինձ ինչ է սպասում։ Չէ՞ որ մահից վատ ոչինչ չի պատահի, իսկ մահից չես խուսափի։

Բերդ վերադառնալով, ես պատմեցի Մաքսիմ Մաքսիմիչին այն ամենը, ինչ պատահել էր ինձ և ինչին ականատես էի եղել, ու ցանկացա իմանալ նրա կարծիքը նախասահմանության մասին։ Նա սկզբում չէր հասկանում այդ բառը, բայց

ես բացատրեցի այն, ինչպես կարող էի, և այն ժամանակ նա ասաց, մեծանշանակ կերպով գլուխն օրորելով։

— Այո՛, իհա՛րկե։ Դա բավակա՞ն բարդ բան է։ Բայց հրազենի այդ ասիական շնիկները հաճախ են փուստ տալիս, եթե վատ են յուղված կամ երբ մատով բավականաչափ ամուր չես սեղմում։ Խոստովանում եմ, ես չերքեզական հրացաններն էլ չեմ սիրում։ Դրանք մի տեսակ վայել չեն մեզ. կոթը կարճ է, մեկ էլ տեսար՝ վառոդը քիթդ վառեց... Իսկ նրանց թրերն ուղղակի հիանալի են։

Ապա, փոքր-ինչ մտածելուց հետո, նա ասաց.

— Հա՛, խե՜ղճ մարդ... Սատանան դրդեց նրան հարբածի հետ գիշերով խոսելու... Բայց ի՞նչ եմ ասում. երևի նրա ճակատին էլ այդ է գրված եղել...

Այլևս ոչինչ չկարողացա դուրս քաշել նրա բերանից. նա առհասարակ մետաֆիզիկական բանավեճեր չի սիրում։

1839—1841

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մ. Յու. Լերմոնտով — Էդ. Զրբաշյան 5

Բանաստեղծություններ

1837—1841

1837

Պուշկինի մահը — թարգմ. Հ. Մազմանյան 28
Բորոդինո — թարգմ. Ն. Զարյան 30
Պաղեստինի ոստը — թարգմ. Գ. Բանդուրյան 33
Կալանավորը — թարգմ. Վ. Գևորգյան 34
Հարևան — թարգմ. Վ. Գևորգյան 35
Երբ ոսկեշող արտն է անրջօրոր ծփում — թարգմ. Վ. Գևորգյան . 36
Աղոթք (Ո՜վ սուրբ աստվածամայր, այժմ այս աղոթքով) — թարգմ. Վ. Գևորգյան 37
Մենք բաժանվեցինք, բայց նկարը քո — թարգմ. Գ. Սևակ . . 37
Ո՜չ, չեմ ցանկանում աշխարհին հայտնել — թարգմ. Վ. Գևորգյան . 37
Ոչ ոք չի լսի խոսքերն իմ գիտեմ... Միայնակ եմ ես — թարգմ. Վ. Դավթյան 38
Դու մի՛ ծիծաղիր իմ թախծի վրա մարգարեական — թարգմ. Վ. Դավթյան 38
Հարավի այս տաք, օտար եզերքից — թարգմ. Գ. Էմին . . . 39

1837—1838

Դաշույնը — թարգմ. Գ. Սարյան 41
Ես երկյուղով եմ նայում գալիքին — թարգմ. Դ. Էմին . . . 41
Հենց լսում եմ թովիչ — թարգմ. Վ. Գևորգյան 42
Երկնքի պես քո հայացքն է փայլում — թարգմ. Վ. Բաբայան . . 42
Երգում է նա, և հնչյուններն են հալվում — թարգմ. Գ. Սևակ . . 43

1838

Խոհ — թարգմ. Վ. Գևորգյան 44
Բանաստեղծը — թարգմ. Գ. Էմին 45

1839

Մնունդն այս քնքուշ ութերեքի մանկան — թարգմ. Վ. Դավթյան . 48
Մի՛ հավատա դու քեզ — թարգմ. Վ. Գևորգյան 48
Երեք արմավենի — թարգմ. Ս. Վահունի 50
Աղոթք (Կյանքիս ծանր րոպեին) — թարգմ. Վ. Գևորգյան . . 52
Թերեքի նվերները — թարգմ. Գ. Բանդուրյան 52
Ա. Ի. Օդոևսկու հիշատակին — թարգմ. Վ. Գևորգյան . . . 55
Նա նստած էր մտախոհ աղմկահույզ խնջույքում — թարգմ. Վ. Գևորգյան 57
Է. Կ. Մուսինա-Պուշկինային — թարգմ. Գ. Սևակ 57

1840

1-ը հունվարի — թարգմ. Վ. Դավթյան 58
Ե՛վ տխուր է, և՛ ձանձրալի — թարգմ. Գ. Սևակ 59
Կազակական օրորոցային — թարգմ. Վ. Գևորգյան 60
(Մ. Ա. Շչերբատովային) — թարգմ. Գ. Էմին 61
Խոսքեր կան՝ իմաստով — թարգմ. Վ. Գևորգյան 62
Հարևանուհիս — թարգմ. Աղավնի 63
Գերված ասպետը — թարգմ. Վ. Դավթյան 64

Ժուռնալիստը, ընթերցողը և գրողը — թարգմ. Վ. Գևորգյան . 65
(Մ. Պ. Սոլոմիրսկայային) — թարգմ. Վ. Դավթյան . . . 70
Ինչի՞ց է — թարգմ. Պ. Սևակ 71
Շնորհակալություն — թարգմ. Վ. Գևորգյան 71
Գյոթեից — թարգմ. Վ. Գևորգյան 72
Մանկանը — թարգմ. Գ. Վիրապյան 72
Ա. Օ. Սմիռնովային — թարգմ. Ն. Ջարյան 73
Դիմանկարին — թարգմ. Պ. Սևակ 73
Ամպեր — թարգմ. Վ. Գևորգյան 74
Վալերիկ — թարգմ. Վ. Գևորգյան 74
Կտակ (Կուզեի, եղբայր, քեզ հետ զրուցել) — թարգմ. Գ. Էմին . 82

1841

Արդարացում — թարգմ. Վ. Գևորգյան 84
Հայրենիք — թարգմ. Պ. Սևակ 84
Մեռյալի սերը — թարգմ. Վ. Գևորգյան 85
Վերջին տունմտեք — թարգմ. Վ. Դավթյան 87
Սառն ու խորհրդավոր քո դիմակի տակից — թարգմ. Վ. Գևորգյան . 89
(Ս. Ն. Կարամզինայի ալբոմից) — թարգմ. Վ. Գևորգյան . 89
(Կոմսուհի Ռաստոպչինային) — թարգմ. Վ. Գևորգյան . . . 90
Դաշնագիր — թարգմ. Գ. Էմին 91
Մնաս բարո՞վ դու, անլվա՜ Ռուսիա — թարգմ. Վ. Գևորգյան . 92
Ժայռը (առաջին տարբերակ) — թարգմ. Վ. Գևորգյան . . . 92
Ժայռը (երկրորդ տարբերակ) — թարգմ. Վ. Գևորգյան . . . 92
Վեճ — թարգմ. Վ. Գևորգյան 93
Երազ — թարգմ. Ա. Մնացականյան 95
Մի՛ լար, մի՛ լար, ի՛մ երեխա — թարգմ. Շ. Թորոսյան . . . 96
Շատ էին սիրում նրանք մեկմեկու քնքուշ ու երկար — թարգմ. Պ. Սևակ 97
Թամարը — թարգմ. Ս. Վահունի 97
Ժամադրություն — թարգմ. Վ. Դավթյան 99
Տերևը — թարգմ. Վ. Գևորգյան 102
Ո՞չ, այդ քեզ չէ, որ ես սիրում եմ բուռն այդքան — թարգմ. Վ. Գևորգյան 103
Ես դուրս եմ ելնում, մենակ, ճանապարհ — թարգմ. Ավ. Իսահակյան 103
Ծովի արքայադուստրը — թարգմ. Վ. Գևորգյան 104
Մարգարե — թարգմ. Վ. Գևորգյան 105

1829—1836

1829

Թուրքի գանգատը — թարգմ. Շ. Թորոսյան 107
Իմ Դևը — թարգմ. Վ. Գևորգյան 107
Մենախոսություն — թարգմ. Շ. Թորոսյան 108
Բալլադ — թարգմ. Հ. Պողոսյան 108

1830

Սատանաներ (Սիրում եմ, երբ մաքառելով) — թարգմ. Վ. Գևորգյան 110
Գիշեր. II — թարգմ. Վ. Գևորգյան 110
Ամպրոպ — թարգմ. Վ. Դավթյան 112
Հրեական մեղեդի — թարգմ. Վ. Դավթյան 113
Եբեկոն անձրևից հետո — թարգմ. Մի՛ք. Հարությունյան . . . 113
Կավկասին — թարգմ. Վ. Գևորգյան 114
Հատված — թարգմ. Վ. Գևորգյան 114
...-ին (Մի՛ կարծիր, թե արժանի եմ կարեկցանքի) — թարգմ. Շ. Թորոսյան 117
Կանխագուշակում — թարգմ. Ա. Պողոսյան 118
1830 թ. հուլիսի 15 — թարգմ. Վ. Դավթյան 118
Մուրացկանը — թարգմ. Շ. Թորոսյան 119
30-ը հուլիսի (Փարիզ) 1830 թիվ — թարգմ. Գ. Սարյան . . 120
Մարտիկի դերեզմանը — թարգմ. Ա. Պողոսյան 121

1831

1831-ի հունվարին — թարգմ. Հ. Հակոբյան 123
1831-ի հունիսի 11-ին — թարգմ. Վ. Դավթյան 123
...-ին (Բարձրյալն արքակեց իր վճիռն արդեն) — թարգմ. Վ. Բաբայան 133
Տենչանք — թարգմ. Վ. Կարեցց 134
Կյանքի թասը — թարգմ. Վ. Գևորգյան 134
Լ-ին (Բայրոնի նմանությամբ) — թարգմ. Հ. Հակոբյան . . 135
Հիասքանչ եք դուք, հայրենի երկրի դաշտեր անսահման — թարգմ. Վ. Դավթյան 135
Բուքն է աղմկում ու ծլունը՝ տեղում — թարգմ. Հ. Հակոբյան . 136
Հրեշտակ — թարգմ. Վ. Գևորգյան 136
Օ՜, դաժան էր բախտը և՛ հոր, և՛ որդու — թարգմ. Վ. Հովակիմյան 137
Դ-ին... (Եղի՛ր ինձ հետ, ինչպես եղել ես դու հնում) — թարգմ. Հ. Հակոբյան 138

1830—1831

...-ին (Անառակությունն այս որքա՜ն դեռ հանդուրժենք) — թարգմ Վ. Գևորգյան 139
Իմ տունը — թարգմ. Գ. Բոյան 140
Մահը (Շոյված ծաղկալի երազանքներով) — թարգմ. Վ. Դավթյան 140
Թող ամբաստանի բանաստեղծին — թարգմ. Գ. Վիրապյան . 141
Թեպետ վաղուց է բերիրանքն ինձ դավել — թարգմ. Շ. Թորոսյան . 144
Իմ Դևը — թարգմ. Վ. Գևորգյան 145

1832

Սիրում եմ կասկածը լեռնապարը վեհ — թարգմ. Վ. Գևորգյան . 147
Ընկնող աստղի պես ավելորդ եմ ես — թարգմ. Գ. Էմին . . . 148
...-ին (Ո՛չ, ես քո առջև չեմ ստորանա) — թարգմ. Շ. Թորոսյան . 149
Այգալույսի պես, լեռի վարդերի — թարգմ. Վ. Հովակիմյան . . 150
Ո՛չ, ես Բայրոն չեմ, ուրիշ եմ, այլ — թարգմ. Վ. Գևորգյան . 150
Ապրել եմ ուզում, ուզում եմ վիշտ — թարգմ. Վ. Գևորգյան . 151
Ցանկություն — թարգմ. Վ. Գևորգյան 151
Այո՜, խենթ եմ ես, դուք ճիշտ եք ասել — թարգմ. Գ. Էմին . 152
Նա գերում է ոչ գեղեցկությամբ սեգ — թարգմ. Վ. Բաբայան . 153
Եղեգ — թարգմ. Վ. Գևորգյան 153
Մակույկ (Կամքով զորության մի հրաշագործ) — թարգմ. Վ. Գևորգյան 155
Նա ծնվել էր հույսի, երջանկության համար — թարգմ. Վ. Գևորգյան 155
Առագաստ — թարգմ. Վ. Գևորգյան 156

1833—1834

Խրատներին այս արծաթաթույր — թարգմ. Աղավնի . . . 157
Խրիվ շարքերով մենք կանգնել անձայն — թարգմ. Աղավնի . . 157

1836

Ջրահարսը — թարգմ. Վ. Դավթյան 158
Մեռնող գլադիատորը — թարգմ. Վ. Գևորգյան 160

Գոնմներ

Երգ Իվան Վասիլևիչ թագավորի, երիտասարդ թիկնապահի և խիզախ վաճառական Կալաշնիկովի մասին — թարգմ. Հ. Շիրազ . . 162
Տամբովի գանձատիրուհին — թարգմ. Ա. Պողոսյան . . . 180
Փախստականը — թարգմ. Վ. Գևորգյան 205
Մծիրի — թարգմ. Հ. Թումանյան 210
Դև — թարգմ. Պ. Սևակ 232
Հեքիաթ երեխաների համար — թարգմ. Վ. Գևորգյան . . . 266
ԴԻՄԱԿՀԱՆԴԵՍ — թարգմ. Վ. Հովակիմյան 277
ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԵՐՈՍԸ — թարգմ. Ա. Խոնդկարյան . . . 400

Միխայիլ Յուրևիչ Լերմոնտով

ԸՆՏԻՐ ԵՐԿԵՐ

Михаил Юрьевич Лермонтов. ИЗБРАННЫЕ ПРОИЗВЕДЕНИЯ. (На армянском языке). Издательство «Советакан грох». Ереван, 1983.

Խմբագիր՝ Գ. Գ. Սարգսյան, Նկարիչ՝ Ռ. Ջուլֆաքյան, Գեղ. խմբագիր՝ Վ. Ա. Հարությունյան, Տեխ. խմբագիր՝ Ա. Յ. Կովկասյան, Վերջնական սրբագրիչ՝ Ս. Մ. Ցուպարյան

ИБ—№ 3913.

Հանձնված է շարվածքի 27. 07. 82։ Ստորագրված է տպագրության 30. 11. 82։ Ֆորմատ՝ 84×108¹/₃₂։ Թուղթ՝ տպագր. № 2։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրությունը՝ բարձր. 25,0 հրատ. մամ. 30,24 պայմ. տպ. մամ.։ Տպաքանակ՝ 50000։ Պատվեր՝ 1244։ Գինը՝ 2 ռ. 30 կոպ.։

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Советакан грох». Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։

Полиграфкомбинат им. А. Мегапарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван-9, ул. Теряна, 91.